



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material





1198

674

100 10  
100

162.

աշխարհե  
համայնք

օսման պարս

թաթար պարս

յափ սունդ էլջազ

յափ Հայոց !

Յունաստան պահան թիւ աշխարհ

պահան պահան

թիւ աշխարհ

Յայլ սարգիս հայուս

Յայլ պատմութեայուս

Յայլ հարություն կամ կամ

սուլթան յարութեայուս Յայլ

սուլթան յարութեայուս կամ

սուլթան Յայլ

ծաղկացան

իսրայել յարութեայուս

յարութեայուս

իսրայել յարութեայուս



ՀԵՐԵՎԱՆ

ՄԻՏՈՎԱԼԻԹԻՒԴԻՆԵՐ

ՏԱՐԻՆ ԱՄԵՆ ՄԵԿ ՕՐՈՒՅՆ

ՎՐԲԱՑՈՂԱԿՑՆԵՐՈՒՆ ՀԱՊԵՏՈՒՐ

ԸՆՈՒԹՅՈՒՆ, ՀԵՐԵՎԱՆ

ՀՀ ԱՐԴՅՈՒՆՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՈՍՏԱԴԻՎՈՒԹՈՒՆ

Ի ՏՊՐԵՐՆ ։ Ն ։ ՏԵՇ ՎԵՐԹՈՅՆ

Ի ԶԱՎԹԱՆ

1847

1869

1X/18

“Որքան կլսիրեմ քու օրէնքդ, ան է ամեն  
օր իմ մտածութիւնս” : Առաջ. Ռ. 97 :

# ՅԱԽԵՎՈՒՅՔ

1

Ինտո՞ր բան է ձեր կեանքը, ինչու որ շո-  
դիի նման էք, որ քիչ մը ատեն կ'երեւայ՝  
եւ կ'ոչնչանայ։ Յակ., Դ. 14։

ԱՍՏՈՒՐՈՒՅ Խօսքը այսպէս կը ստորա-  
գրէ մարդոյս կեանքը, եւ երբոր խորհինք կը  
տեսնենք որ ճիշտ ասանկ է։ Ահա տարիին  
մէկն ալ գնաց, եւ ինչ շուտ անցաւ։ Աս  
նոյն արագութիւնով մեր մնացած տարինե-  
րը ու օրերն ալ պիտի անցնին երթան։ Եւ  
երբոր մահուան անկողինին վրայ պառկած  
աչքերնիս դէպի մեր անցեալ օրերուն դար-  
ձունենք, արդարեւ անոնք մեզի շոգիի նը-  
մանապիտի երեւան։ Կեանքերնիս որչափ եր-  
կան որ ըլլայ, մահուան ատեննիս՝ որ ալ  
յաւիտենականութեան մէջ պիտի մտնենք,  
ըոսէի մը չափ պիտի երեւի։ Եւ աս կեան-  
քիս երկայնութիւնը չէ թէ միայն կարճու-

1

թիւն է, այլ նաեւ անոր հատնելու բռպէն  
ալ յայտնի չէ : Կարելի է թէ աս տարի կամ  
աս շարժու, ասօր կամ աս ժամուս մեր երկ-  
րաւոր կեանքը վերջանայ ու աս աշխարհէս  
ելլանք : Բայց մեր յաւիտենական կեանքը  
աս կարծը ու անստոյդ կեանքերնէս կախ-  
ուած է : Վիայն աս կարծը կեանքերնուս  
մէջ կընանք մեղքերնուս թողութիւն գրտ-  
նել եւ երկինքը երթալու պատրաստուիլ :  
Աւստի հոգիներնուս փրկութեանը համար  
մեծ ջանքով ու եռանդով աշխատելու ենք,  
որ չըլայ թէ զեռ աս մեծ գործը չ'կատարած  
յանկարծ կանչուինք : Խնչ մեծ յիմարու-  
թիւն է սրտերնիս ու մտքերնիս աշխարհա-  
յին բաներուն տալ, որոնք շուտով պիտի  
ձգենք, եւ գալու աշխարհին անվախճան կե-  
նացը համար պատրաստութիւն տեսնալը  
զանց ընել :

Պռւ խօսքդ իմ ոտքերուս ճրադն է, ու  
իմ շաւիղիս լոյսն է : Ստում. Ռ.Յ.Թ. 105 :

Արդարեւ խաւար տեղ մը պիտի ըլլար

աշխարհս, թէ որ Աստուծոյ խօսքէն մեղի  
 ճառագայթած լոյսը չըլլար: «Քանզի մըտ-  
 քերնիս անանկ խաւարած են մեղքով, որ  
 բնական օրէնքով հաղիւ կրնանք դէշը ա-  
 ղէկէն զատել. ու մեր մեղքերուն թողու-  
 թիւն ըլլալուն, եւ սրբութեան ու երջան-  
 կութեան հասնելուն, եւ աս աշխարհէս ետ-  
 քը մեզի պատահելութաներուն վրայով բո-  
 լորովին տգէտ ենք: Իսայց Աստուծած իր ո-  
 ղորմութիւնովը մեզի Աստուածաշունչ Սուրբ  
 Գիրքը տուաւ, որ անոր լուսովը կրնանք մեր  
 պարտաւորութիւնները տեսնելեւ երջան-  
 կութեան ճամբան դտնել: Անոր լուսովը  
 կրնանք տեսնել թէ Աստուած ինչպէս կըր-  
 նայ արդար ըլլալ եւ միանդամայն բոլոր մեղ-  
 քերնուս թողութիւն տալ: Անոր լուսովը  
 կըսորովինք թէ ինտոր կրնանք մեղաց գե-  
 րութենէն աղատիլ եւ Աստուծոյ որդոցը  
 աղատութիւնը վայելել: «Ա, եւ աս օրհ-  
 նեալ Գիրքը գերեզմանին մթութիւնը կը-  
 փարատէ, եւ կըցուցունէ մեզի անդիի աշ-  
 խարհքը, ճշմարտապէս «Քրիստոսի հետե-  
 ւողներուն համար պատրաստուած երջան-  
 կութեան բնակարանները ու նաեւ կըցու-  
 ցունէ ան խաւար թշուառութեան աշխար-  
 հը, ուր որ աս աշխարհիս մէջ իրենց մեղ-

քերէն ճշմարտապէս չապաշխարողները ,  
եւ փրկուելու համար յոյսերնին ՞Քրիստո-  
սի վրայ չ'դնողները յաւիտեան պիտի մնան :  
Օրհնեալ է Աստուած որ աս պատուական  
Գիրքը մեղի տուաւ : Երանի՛ թէ անիկայ  
մեր ամեն օրուան ուսմունքը ըլլար . երա-  
նի՛ թէ անոր լուսովը քալեինք , ու անոր  
խոստմունքները սրտերնուս ցնծութիւն  
տային :

## 3

Խ՞նչ կը շահի մարդ մը՝ թէ որ բոլոր աշ-  
խարհ վաստըկի , եւ իր անձը վնասէ . կամ  
իր անձին համար՝ ի՞նչ ազատչէք պիտի տայ  
մարդ : Անդրէն . ձ.ջ. . 26 :

Երբոր աս կեանքը վերջանայ , հոգին  
յաւիտեանս կ'ապրի . հազարաւոր տարի-  
ներ անցնին ալ նէ , տակաւին հոգին կ'ապ-  
րի՝ կը խորհի՛ կը դգայ եւ կը դործէ : Մի-  
լինաւոր դարեր ալ անցնին՝ տակաւին հո-  
գին պիտի մնայ , թէ երջանկութեան մէջ  
ըլլայ ան եւ թէ թշուառութեան . եւ մէկ  
ատեն մը չ'կայ որ անոր էութիւնը վերջա-

նայ : Աւստի ի՞նչ կայ անմահ հոգիին հետ  
 հաւասար արժէք ունեցող : Ըսենք թէ մարդ  
 մը խելքը միտքը աշխարհային երջանկու-  
 թիւններ՝ հարստութիւն եւ պատիւ գտնե-  
 լու տայ . Եւ մարդուս վայելելու կարող ե-  
 ղածին չափ հարստութիւն՝ զօրութիւն եւ  
 պատիւ ստանայ . Եւ ըսենք թէ հարիւր տա-  
 րի ալ ապրի, ի՞նչ կը շահի : Հարիւր տա-  
 րին շուտ մը կ'անցնի, ու ան ատենը իր հո-  
 գին, որուն երջանկութեանը համար երբէք  
 չաշխատեցաւ, խեղճութիւնով ու թշուա-  
 ռութիւնով եւ ամեն բանէ զրկուած իր յա-  
 փիտենական բնակութեանը պիտի երթայ :  
 Ի՞նչպէս պիտի տրտմի ու ցաւի աշխարհիս  
 բարութիւնները շահելու համար իր վատ-  
 նած կեանքին վրայ, որոնք հիմա յափիտե-  
 նական կորուստով կորսուեցան . Եւ որ բը-  
 նաւ չ' մումտաց իր անմահ հոգոյն վրայ, ու  
 հիմա խաւարին մթութեանը մէջ իր յի-  
 մարութեան պտուղները յափիտեան պիտի  
 հնձէ : Արանի՛ թէ իմ ամեն օրուան գործս  
 ըլլար հոգոյս փրկութեանը համար աշխա-  
 տիլ . ու երբոր աշխարհային սիրոյ եւ Աստ-  
 ուած մոռնալու փորձութեանց մէջ իյնամ,  
 երանի՛ թէ միշտ միտքս գար ան խորհուրդը,  
 թէ իմ հոգիս յափիտեան պիտի ապրի :

Բայց քու պատուիրանքդ շատ ընդարձակէ: Ասով, ՌՃ. 96:

Վարդոց օրէնքները միայն արտաքին  
դործքերու համար են, բայց Աստուծոյ օ-  
րէնքը շատ ընդարձակ է եւ սրտին խոր-  
հուրդներուն եւ դիտաւորութիւններուն  
համար ալ է: Վպանութիւն մի՛ ըները Աս-  
տուծոյ օրէնքն ալ կը պատուիրէ՝ մարդոց  
օրէնքն ալ: Վարդոց օրէնքին նայելով աս  
պատուիրանքը անատենը կ'աւրուի, երբոր  
իրօք մարդասպանութիւն մը ըլլայ. բայց  
Աստուծոյ առջեւը՝ տաելութիւնը (Ա. Յոհ.  
գ. 15) կամ պարապ տեղը բարկանալը  
(Վատ. Ե. 22) աս պատուէրին դէմ մե-  
ղանչել է: Ասանկ ալ տասնարաննեայ օրէն-  
քին միւս պատուիրանքները: «Քրիստոս  
մեկնեց աս պատուիրանքները եւ ցուցուց  
թէ անոնք սրտին խորունկ տեղերը կը տա-  
րածին: Անզի հրամայուած է աղօթք ը-  
նել, բայց պէտք է որ սրբանը ընենք. մեզի  
հրամայուած է որ հաւատանք, բայց պէտք  
է որ բոլոր սրբաննեն հաւատանք: Անզի հր-  
ամայուած է որ Աստուծոյ երկրագու-

թիւն ընենք, բայց պէտք է որ հագիսն եւ  
ծշաբառալւեամբ ընենք։ Արդ՝ եթէ Աստու-  
ծոյ օրէնքները ասանկ սրտի մաքրութիւն  
կը պահանջեն, ալ ո՞րչափ մեղաւոր եմ ես  
իր առջին. Աստուած՝ ներէ ինձի մեղաւո-  
րիս։

---

## 5

Ես քու վրայովդ ականջէ իմանալով լը-  
սեր էի, բայց հիմա իմ աչքերս քեզ կը-  
տեսնայ, վասնորոյ կը դարշիմ ինքզինքէս,  
եւ հողով ու մոխիրով կ'ապաշխարեմ։  
Յով. Խո. 5, 6։

Արբոր Հովը իր բարեկամներուն նա-  
խատանացը դէմ ինքզինքը կ'արդարացու-  
նէր, կընար իր անխարդախ շխտակութիւ-  
նը ու մարդասիրութիւնը անոնց պատմել։  
բայց երբոր Աստուած ինքզինքը անորյայտ-  
նեց իրեւ իր դատաւորը, անատենը միայն  
ասիկայ կրցաւ ըսել, “Թէ կը դարշիմ ինք-  
զինքէս եւ հողով ու մոխիրով կ'ապաշխա-  
րեմ”։ Ասանկ ալ հիմա, երբոր մէկը ինք-  
զինքը իր ընկերին հետ կը բաղդատէ, դու-

ցէ պիտի կարծէ թէ իր աղէկութեանը վը-  
րայ կրնայ պարծենալ . բայց երբոր Առւրբ  
Նոգին կը յայտնէ իրեն Աստուծոյ սրբու-  
թիւնը , անատենը կ'աղաղակէ՝ “ պիղծ եւ  
մեղաւոր եմ ես ” : Աստուած անանկ սուրբ  
է , որ մինչեւ անդամ հրեշտակները անոր  
առջեւը երեսնին կը ծածկեն , մեղաց խոր-  
հուրդը անդամ անոր աչքին առջեւը պըղ-  
ծութիւն է : Այսպիսի աս ամենասուրբ Աստ-  
ուածը շարունակ մեր ամենածածուկ խոր-  
հուրդներուն եւ զգացումներուն կը նայի .  
Եւ ի՞նչ կը տեսնէ արդեօք . ի՞նքը Ասղմո-  
սին Ճ.Դ. դլաւուն Զ եւ Յ համարներուն մեջ  
մեղի կը պատմէ : Արտերնիս մեր ընկերին  
բանալու կը սարսափինք . ուրեմն ի՞նչպէս  
պիտի դողանք ու սարսափինք , երբոր խոր-  
հինք թէ մէկ գաղտնի մեղք մը կամ մէկ  
պիղծ երեւակայութիւն մը ծածկուած չէ  
մեղքը ատող Աստուծմէն , ինտո՞ր դատաս-  
տանի պիտի կայնինք Անոր առջեւը , ինտո՞ր  
կրնանք արդարանալ :

---

Ու անոր Որդոյն Յիսուսի արիւնը մեզ  
ամեն մեղքերէն կը սրբէ : Ա . Հ ա վ Հ . Ա . 7 :

Խ՞նչ ուրախալից լուր է ասիկայ մեղի մե-  
ղաւորներուս . թէպէտեւ հոգիներնիս բո-  
լորովին մեղքով պղծեալ են , սակայն ահա  
աւաղան մը , ուր որ կրնանք լուացուիլ ու  
սրբուիլ : Վ մենէն մեծ յանցաւորը կրնայ  
հոս ներում գտնել . հոս ամենուն ալ յոյս  
կայ : Չ'կայ անանկ մեղաւոր մը , որուն մեղ-  
քերը ՞րիստոսի արիւնը չ'կրնար քաւել :  
Որովհետեւ Վ ստուծոյ սիրելի Որդին իր  
արիւնը մեզի համար թափեց , որովհետեւ  
ինքը օրէնքին անէծքը իր վրան առաւ՝ որ  
մենք անոր անէծքէն ազատինք , վասնորոյ  
թէ որ ապաշխարենք մեղքերնիս եւ անոնք  
ատենք ու Վ ստուծոյ երթանք ու ՞րիստո-  
սի անունովը ներում խնդրենք , Վ ստուծ  
մեզի թողութիւն կուտայ , եւ իր Ա ուրը  
Հոգին կը խրկէ՝ որ մաքրէ սրտերնիս , ու  
պատրաստ ըլլանք իր երկնային թագաւո-  
րութեանը :

Ուստի սիրելիներ առոնց սպասելով ջանացէք, որ ան ձեզ անրիծ ու անարատ գտնէ խաղաղութիւնով։ Ա. Պէտք. Գ. 14։

Խ՞նչ են ան բաները որոնց կը սպասենք։  
 Կը սպասենք ան ժամանակին մօտենալուն,  
 երբոր մնաք բարեաւ պիտի ըսենք մեր բարեկամներուն մեր ստացուածքներուն եւ աշխարհիս մէջ մեզի սիրելի եղած ամեն բաներուն։ որ ալ անատենը մեր մարմինները գերեզմանը պիտի դրուին եւ մեր հոգիները Ա. ստուծոյ՝ մեր դատաւորին առջեւը պիտի երթան։ Կը սպասենք ան ժամանակին՝ երբոր Ա. ստուծոյ փողը պիտի չալուի, ու բոլոր մարդինկ դատաստանի կանչէ, երբոր աշխարհիս բոլոր իր մէջը եղածներովը պիտի այրի, եւ դատաւորը իր աթոռը պիտի նըստի, եւ բոլոր մեռեալները մէծ ու պղտիկ իր առջեւը պիտի կային։ Կը սպասենք ներկայ գտնուիլ ան տեղ, ուր որ Ա. ստուծոյ թշնամինները եւ բարեկամները իրարմէ պիտի դատուին։ եւ մեր վերջին դատաւորին բերնէն աս խօսքերը անոնց պիտի ելլան թէ “ եկէք իմ Հօրս օրհնածները ”, եւ թէ

“մէկ դի դացեք ինծմէ անիծեալներ” : Կը-  
սպասենք ան ժամանակին՝ թէ որ ճշմար-  
տապէս ՚Քրիստոսի աշակերտներն ենք ,  
երբոր իր քովը պիտի ընդունէ մեզ ու ալ  
յաւիտեան իրմէն պիտի չ'զատուինք . եր-  
բոր հրեշտակներուն եւ փառաւոր սուրբե-  
րուն ընկերութեանը պիտի խառնուինք ,  
յաւիտեան առանց մեղաց Աստուծոյ ծա-  
ռայելու : Աքդ՝ եթէ մենք ասանկ բաներու  
կը սպասենք , ուրեմն ինտո՞ր արթնութեան  
մէջ ըլլալու ենք եւ միշտ աղօթելու ենք՝  
բոլոր մեր կեանքին մէջ Տէրոջը գալուն ըս-  
պասելով :

## 8

Աս խօսքը ճշմարիտ է՝ ու բոլորովին ըն-  
դունելութեան արժանի . որ ՚Քրիստոս Հի-  
սուս աշխարհք եկաւ մեղաւորները փրկե-  
լու : Ա.Տէմ. Ա. 15 :

**Պ**ատ խօսքեր կան որ ականջնիս կը-  
հասնին , որոնց շատ քիչ կամ ընաւ մը-  
տադրութիւն չենք ըներ . կամ անոնց ճըշ-  
մարիտ ըլլալուն վրոյ կ'երկրայինք , կամ

թէ անօգուտ բաներ են, եւ կամ մեղի չեն  
վերաբերիր: Ի՞սպան Առաքը և ողիին շուն-  
չովը խօսուած մէկ խօսք մը կայ, որ հաւա-  
տարիմ է եւ ծշմարիտ: Եւ արժանի է ա-  
ղէկ մըտիկ ընելու, եւ ամեն անիկայ լսող-  
ներուն շատ օգտակար է: Ասիկայ շատ ըս-  
քանչելի խօսք մըն է. Ծխուս Քրիստոս՝  
Աստուծոյ յաւիտենական Որդին, իր երկ-  
նային աթոռը ձգեց եւ աս խաւարին աշ-  
խարհքը իջաւ փրկելու: Եւ ո՞վ . . . Ֆո-  
թշուառ մեղաւորներս: Խւսակայն աս խօս-  
քը լսողներուն շատերը անիկայ կ'արհա-  
մարհեն կամ բոլորովին զանց կ'ընեն: Ի՞սպա-  
թող իմ ամեն օրուան ջանքս ըլլայ աս զար-  
մանալի խօսքերուն միտքը հասկընալ: Ե-  
րանի՛ թէ բոլոր հոգիովս անիկայ սիրեմ,  
որ իր ողորմութիւնովը մեղաւորները փրկ-  
ելու համար աս աշխարհս եկաւ:

Եւ դուք որ ձեր մեղքերուն ու յան-  
ցանքներուն մէջ մեռած էիք՝ ինքը ձեղ կեն-  
դանացուց: Ե՞կե՞ս, Բ. 1:

Աւելքի մէջ մեռածները անոնք են, որ  
Վատուծոյ Հոգիովը նոր կեանք մը չեն վա-  
րեր: Խնչպէս որ բնական մահով մեռեալը  
իր բոլորտիքը եղած բնութեան գեղեցկու-  
թիւններէն բան մը չիմանար, եւ ամենա-  
քաղցր նուագարաններուն ձայնը չ'լսեր.  
Եւ սիրոյ ձայները զինքը չեն շարժեր. ա-  
սանկ ալ հոգիով մեռեալը սրբութեան գե-  
ղեցկութիւնները չիմանար, Վրիստոսի ո-  
ղորմութեան անուշ ձայնը չ'լսեր, եւ Փրկ-  
չին անձառելի սէրը զինքը չ'շարժեր: Վ-  
տեն մը ես ալ աս վիճակին մէջն էի. եւ թէ  
որ Վատուծոյ շնորհօքը կենդանացայ, իմ  
ամեն օրուան գործքերուս մէջ ցուցունելու  
եմ իմ մէջս եղած հոգեւոր կենդանութեան  
կարողութիւնները: Խւ իմ ամեն գործքերս  
միշտ անոր աղղեցութեամբը ընելովս պէտք  
է որ ցուցունեմ թէ յաւիտենական ճըշ-  
մարտութեան զօրութիւնը կը զգամ. ես  
ինքզինքս՝ հոգիովս եւ մարմնովս Վատուծոյ  
կենդանի պատարագ ընելու եմ:

Զեզի կ'ըսեմ որ ան օրը Առդոմացոց  
դատաստանը էւել դիւրին պիտի ըլլայ՝ քան  
թէ ան քաղաքին : Դ ունք . ձ . 12 :

Առդոմ այնչափ չարութիւնով լեցուած  
քաղաք մըն էր՝ որ Աստուած ալ անոր մը-  
նալը չուզեց, ու երկինքէն կրակ թափի լով  
անիկայ կործանեց : Եւ սակայն անանկ մե-  
ղաւորներ կան, որոնց դատաստանին օրը  
ընդունելու դատապարտութիւնը, Առդո-  
մացիներուն դատապարտութենէն առաւել  
սոսկալի պիտի ըլլայ : Ասոնք ան մարդիկ-  
ներն են, որոնք Քրիստոսի պատմութիւ-  
նը եւ անոր ըրածները ու մեղաւորները  
փրկելու համար անոր քաշած չարչարանք-  
ները կը լսեն, որոնք Քրիստոսով ողոր-  
մութիւն ընդունելու կը կանչուին, ու չեն  
ատեր իրենց մեղքերը, եւ փրկուելու համար  
յոյսերնին Քրիստոսի վրայ չեն դներ : Ա-  
նոնք Աստուծոյ սէրը վար կը ղարնեն եւ ա-  
նոր սիրելի Որդոյն պատարագը կ'արհա-  
մարհեն : Աստուծոյ առջեւը ասկէց ատելի  
մեղք չկայ : Ո՛վ Տէր աս մեծ յանցանքէն  
իմ հոգիս փրկէ :

• Քու խօսքդ շատ մաքրուած է . անոր հա-  
մար քու ծառադ անիկայ կը սիրէ : Ատղմ .  
Ռ. Ճ. Թ. 140 :

18  
 Աստուածաշունչին ամենէն երեւելի  
յատկութիւնը իր սրբութիւնն է . մեղքը  
ատող սուրբ Աստուածոյ մը վրայօք կը խօսի .  
բոլոր իր վարդապետութիւնները եւ պատ-  
ուիրանքները սուրբ Են : Վարդոցմէ կը պա-  
հանջէ որ թէ գործքովլ' թէ խօսքովլ' եւ թէ  
խորհրդով եղած ամեն մեղքերէն ետ կե-  
նան . եւ սուրբ ըլլան ինչպէս որ Աստուած  
սուրբ է : Աստուածաշունչին բուն աս յատ-  
կութիւնն է որ չարերը իրեն թշնամի կը-  
նէ : Վնոնք մեղք գործել կ'ուզեն , չեն ու-  
զեր չար կիրքերնին սանձել . եւ երբ կը-  
տեսնեն որ աս Գիրքը ամենակարող Աս-  
տուածոյ մը անէծքը կը սպառնայ մեղք գոր-  
ծողներուն վրայ , ատելի կուզայ իրենց ու  
անիկայ մէկ զի կը նետեն , եւ չեն ուզեր  
որ անոր հաւատան : Բայց երբոր Աստու-  
ածոյ զաւկըններէն մէկը աս Գիրքը կարդայ ,  
անոր սրբութիւնը իրեն մեծ ուրախութիւն  
է . կը խնդայ որ տիեզերքին վրայ թագա-

ւորողը ասանկ մէկ բարի Աստուած մըն է .  
կուրախանայ որ բոլոր անոր պահանջ -  
մունքները ասանկ սրբութիւն ունին . կու-  
րախանայ որ իրմէն սրտի մաքրութիւն կը-  
պահանջէ . կը ցնծայ որ սուրբ Երկինք մը  
կայ, ուր որ կը յուսայ երթալ, եւ ուր որ  
պիտի ազատ ըլլայ ամեն մեղքերէ : Աս-  
տուծոյ խօսքին մէջ դտածները բոլոր ա-  
սոնք են, եւ անոր համար անիկայ կը սիրէ :

## 12

Խնչու որ Քրիստոս Յիսուսի քով ոչ  
թլիատութիւնը բան մը կընայ, ոչ ալ  
անթլիատութիւնը . հապա հաւատքը որ  
սիրով կը յաջողի : Գառն . 17 . 6 :

Անձ օրհնութիւն մըն է քրիստոնեայ  
ծնողքներէ ծնանիլը, քրիստոնէից հետ  
համրուիլը, եւ անոնց երեւելի արտօնու-  
թիւնները վայելելը : Հայց այսչափը մեզ  
չ'կրնար փրկել : Աստուած մէկը երկինքը  
չընդուներ, անոր աս աշխարհիս մէջ քրիս-  
տոնեայ ըսուելուն համար, ոչ, ան օրհնեալ  
թագաւորութեանը տանողը միայն հաւատ-

քըն է, այսինքն Տէր Յիսուսի վրայ եղած  
ան կենդանի հաւատքը՝ որ սիրով կը յաջո-  
ղի, ու Փրկչին վրայ դրուած ան յոյսը, որ  
Վրիստոսի մեր վրայ ունեցած անձառելի  
սիրոյն վերաբերեալ ան ամեն յայտնուած  
բաները կ'ընդունէ, որ անոր գեմ դործած  
բոլոր մեղքերնուս համար մեր սիրտը կը-  
կոտրէ. եւ երախտագիտութիւնով ու իր  
փառքին եւ պատուոյն համար ապրելու մեծ  
փոփաքով մը անիկայ կը լեցունէ: Ճաէ որ  
Վրիստոսի վրայ հաւատք ունինք, զի՞նքը  
պի տի սիրենք, եւ իր մեղի ըրածներուն հա-  
մար մեծ եռանդով պիտի փափաքինք՝ սուրբ  
Հնազանդութեան կեանք մը վարելով մեր  
երախտագիտութիւնը ցուցունելու:

## 13

Եսոր համար կ'ըսեմ քեզի, ներուած ըե-  
ւայ ասոր իր շատ մեղքերը, ինչու որ շատ  
սիրեց, վասն զի որին որ մէկը շատ կը թո-  
ղու՝ շատ կը սիրէ. եւ որին որ քիչ՝ քիչ:  
Դաւի. 1: 47:

Անոնք որ մեղքին գէշութիւնը ու դար-

Նութիւնը բնաւ զգացած չեն, եւ որ իրենց  
անձին արդարութեանը կ'ապաւինին, Փրկ-  
չին վրայով բոլորովին անհոգ կը կենան, եւ  
անոր մեղի համար ըրածները չեն իմանար:  
Իսայց երբոր Աստուծոյ հոգին մարդուս միտ-  
քը կը լուսաւորէ, որ իմանայ թէ ինչպէս  
զզուելի բան է մեղքը եւ թէ ինքը Աստու-  
ծոյ առջին որչափ յանցաւոր է, եւ իր կոտ-  
րած օրէնքին անէծքովը բեռնաւորուած,  
ան ատենը Փրկչին պատուականութիւնը կը  
զգայ, որ իր տեղը օրէնքին անէծքը կրեց:  
Ան ատենը Քրիստոսի սէրը սսանկ մեղա-  
ւոր արարածներու յայտնուելուն՝ ինքը  
զարմանքով կը լեցուի, ու իր սիրաը սիրով  
եւ իր բերանը փառարանութիւնով կը լեց-  
ուի: Աը զգայ թէ յաւիտենականութիւնը  
ասսանկ մեծ մեղաւոր մը Փրկող շնորհքը  
փառարանելու բաւական չէ: Ըստ կը սի-  
րէ, ինչու որ շատ թողութիւն դատաւ:

Յիսուս աս խօսքը ըստած ատենը իր Հօ-  
րը աջ կողմը բարձրացած էր, ու ալ աշ-  
խարհիս փրայ ան ցած վիճակին մեջ չէր  
որ թշնամիները կարող ըլլային անոր մար-  
մինը չարչարել: Ուրեմն ինչո՞ւ համար Սա-  
ւուղին կ'ըսէ թէ “ինչո՞ւ զիս կը հալածես”:  
Անոր համար որ ինքը եւ իրեն հետեւողները  
մէկ են: Եւ երբոք Սաւուղ անոնք չարչա-  
րել եւ մեռցունել կ'ուղէր, ինքը զգաց թէ  
ասիկայ իրեն ընել էր: Վնպատմելի մսի-  
թարութիւն մըն է առ հալածումի մեջ եղող  
Ճշմարիտ քրիստոնէին: Ինքը չէ միայն ան-  
նեղութիւնը քաշողը, հապա Քրիստոս ալ  
իր հետը, ցաւակից է իրեն հետ բոլոր իր  
քաշածներուն մեջ, եւ պիտի չ'թողու ա-  
նոր թշնամիին որ վերջապէս անիկայ յաղ-  
թէ: Վսիկայ նաեւ խրատ մըն է անոնց, որ  
Քրիստոսի խօնարհ հետեւողներուն անու-  
նը կ'աւրեն ու անոնց ինչ եւ իցէ կերպով  
վնասներ կը հասցունեն: Քրիստոս ան ա-  
մենը իրեն եղածի պէս կը սեպէ, եւ ինչ-  
պէս իր առջեւը պիտի կայնին դատաստա-  
նին օրը եւ աս խօսքերը մտիկ ընեն, թէ “ու-  
բովհետեւ աս եղբայրներուս պինտ պղտիկ-  
ներէն մէկին ըրիք, ինձի ըրիք”: Անդիւ-  
թէ, 40:

Ու դողլըղալով եւ շունչը կտրելով ը-  
սաւ, Տէր իս ի՞նչ կ'ուզես ընել: Գաբր-  
թ. 6:

**Պ**օղոս առաքեալը քիչ մը առաջ մեծ  
ատելութիւնով կ'ատէր Եազովրեցի ՚Քը-  
րիստոսը ու անոր աշակերտները, եւ ձեռ-  
քէն և կածը կ'ընէր աշխարհիս մէջէն անոնք  
լնաջինջ ընելու: Հիմա իր յանցանքին մե-  
ծութիւնը տեսնելով կը դողսյ, եւ կ'ըսէ ան-  
նոյն Հիսուսին “Տէր իս ի՞նչ կ'ուզես ը-  
նել”: Իր սաստիկ թշնամութենէն դարձաւ,  
ու խօնարհ եւ հնազանդ ծառայ մը եղաւ:   
Աս իր ներսի դին եղած փոփոխութիւնը  
Սուրբ Հոգիին հզօր կարողութիւնովն էր,  
ան նոյն կարողութիւնը՝ որ ՚Քրիստոս Հի-  
սուսով նոր արարածներ եղողներուն սրբ-  
տերը կը փոխէ: Վեղաւորները դարձի բե-  
րող Աստուծոյ շնորհքը ամենակարող է:  
Չկայ այնչափ հզօր եւ զօրաւոր հալածիչ  
մը, որ շնորհքը անիկայ չկարենայ յաղ-  
թել: Ուրեմն մեծ քաջալերութիւն ունինք  
աղօթելու Պօղոսի պէս հալածիչներուն եւ  
հայհոյիչներուն համար, որ նոր արարած-

Ներ ըլլան . եւ անոր պէս աշխատին ատեն  
մը կործանելու աշխատած հաւատքնին տա-  
րածելու :

## 16

Եւ ըստ Յիսուս . Հայր՝ Թողութիւն  
տուր ատոնց . ինչու որ չեն գիտեր ինչ կ'ը-  
նեն : « Դ ս-կ , իզ , 34 :

Երբոր Յիսուս խաչին առնջանքները  
կը քաշէր եւ աշխարհի մեղացը համար ար-  
ժան եղած անէծքը կը կրէք , իր տանջա-  
նացը մէջ կը խորհէր զինքը սպաննողնե-  
րուն վրայ . անոնց գործած ան մեծ յան-  
ցանքին վրայ , եւ իրենց գալու թշուառու-  
թիւններուն վրայ . եւ գթալով անոնց վր-  
այ կ'աղաղակէ առ Եստուած որ անոնց  
թողութիւն տայ : Ո՞րչափ սքանչելի է մեր  
Փրկչին ողորմութիւնը եւ համբերութիւ-  
նը : Ենչնարին բան է որ աս մահկանացու  
լեզուովեիս կարող ըլլանք պէտք եղածին  
պէս իր վրայօք խօսիլ : « Եաւս պէտք է որ  
երկնացին լիզուն սորվինք՝ որ կարող ըլլանք  
մէկ վայելուչ կերպով մը փառաբանութիւն

տալ իրեն։ Արկինքին մէջ մեր Փրկչին ուղորմութեանը եւ սիրոյն վրայ երդելը յաւիտեան մեր ուրախութիւնը պիտի ըլլայ։ Բայց քանի որ աշխարհիս վրայ ենք ջանք ընենք անոր օրինակին հետեւիլ։ Որ ատեն որ բարկանալու կամ ներողամիտ չըլլալու փորձութեան մէջ լյնանք, մեր Փրկչին մեռած բոպէին զինքը սպաննողներուն համար ըրած աղօթքը յիշենք։

## 17

Որ ամենուն առատապէս կուտայ՝ ու չընախատեր։ Համար 5։

Աս համարը աղէկ հասկընալու համար պէտք է որ մարդոց ըրածները Աստուծոյ ըրածներուն հետ բաղդատենք։ Կիցուք թէ աշակերտ մը ոյնչափ բթամիտ ըլլայ որ իր համարը տասը անգամ մեկնուելէն ետեւ նորէն առջի հասկըցածէն եւ ել բան մը չըհասկընայ, մետասաներորդ անգամ հարցունելուն՝ արդեօք վարժապետին բերնէն նախատական խօսք մը չելլեր։ Կամ դիցուք թէ տղայ մը հօրմէն ստակ առնէ հաց

գնելու համար ու կօրսնցունէ . նորէն առնէ ու կրկին կօրսնցունէ . քանի անդամ կրնայ ստակ ուղել իր հօրը համբերութիւնը չ'հատած : Եւ կամ դիցուք թէ բարեկամ մը ունիս , որմէն շատ անդամ խրատ ուղեցիր ու առած խրատդ չ'բռնեցիր . երբ որ նեղութեան մէջ կրկին երթաս խրատ ուղես , առանց նախատական կերպով մը առջնները յիշելու կամ առանց յանդիմանութեան խօսք մը բերնէն հանելունորէն անդամ մըն ալ քեզի խրատ կուտայ : չէ , մարդս ասանկ ըներ : Ի՞այց թէեւ հազարաւոր անդամ մի եւ նոյն խնդրուածքները Աստուծոյ մատուցած ըլլաս , թէեւ արդէն իրմէն ընդունած շնորհքներդ կորսընցուցած եւարհամարհած ըլլաս , ու թէեւ չ'կրնատ իրեն հաւտացունել թէ ան նոյն յիմարութիւնովը կրկին անդամ յանցաւոր պիտի չ'գտնուիս , տակաւին կրնատ իրեն երթալ քու բոլոր կարօտութիւններովդ , եւ անիկայ քեզ "չ'նախատեր" : Ի՞նչ ուրախալից խոստմունք է . երբոր մեր ըրած մեղքերուն յիշատակութիւնովը պաշարուած կը դողանք որ չըլլոյ թէ յաւիտեանս մէջ Աստուծմէ հեռացունէ , ան ատենը մեղի քաջալերութիւն ըլլալու համար

աս խօսքը որչափի հարկաւոր է։ Եւ իր բարութիւնը ու ներելու պատրաստ ըլլալուն խորհուրդները մեծ զգուշութիւնով ու ազօթասիրութիւնով մեղ կը լեցունեն որ իւրեն դէմ մեղք չ'գործենք։

## 18

Որ շնորհքով արդարացած՝ յաւիտենական կեանքին յուսովը ժառանգ ըլլանք Տէպ. Գ. 7 :

Խ՞նչ, Պողոս՝ ան երեւելի առաքեալը միայն շնորհքով արդարացաւ։ Ան որ կը սար ըսել իր անձին համար թէ “ես մէկ բանով մը պակաս չեմ երեւելի առաքեալներէն”։ Ի. Կաքնէ. Ժ. 1. 5 : Որ շարունակ կը ջանար մաքուր խղճմուանք ունենալ Աստուծոյ առջեւը ու մարդոց առջեւը։ Գարծ. Բ. 16 : Որ իր գարձի գալէն ետեւ իր բոլը կեանքը Աստուծոյ փառքին եւ մարդոց օգտին համար անցուց։ որ ինքզինքը Վ. ըրիստոսի գործերուն նուիրած ըլլալուն համար հալած մունքներ քաշեց, բանտարգունցաւ՝ սաստիկ ծեծեր կերաւ, որ շատ ան-

դամ մահուան դուռը հասաւ, արդեօք չէ՞ր  
կրնար իր բարի գործքերովը արդարութիւն  
պահանջել: Վեսյն շնորհքո՞վ փրկուե-  
ցաւ: Այս՝ միայն շնորհքով: Ան ինքզին-  
քը մեղաւորներուն գլուխը կը կոչէ, եւ մի-  
այն Քրիստոսի խաչովը կը պարծի: Տայց  
թէ որ իր արժանաւորութեամբը պիտի  
չ'փրկուէր, ինչո՞ւ համար այնչափ բարի  
գործքեր ըրաւ: Իր պատասխանը աս է,  
“Քրիստոսի սէրը կը պատիպէ մեղ”:  
Քր-  
իստոս Հիսուսով նոր արարած մը եղած  
էր, կը տեսնէր անոր պատուականութիւնը  
եւ սէրը, եւ իր սրտին մեծ փափաքը իր  
կեանքը անոր համար անցունել էր, որ ի-  
րեն համար մեռաւ ու յարութիւն առաւ:

## 19

Դաք Աստուծմէ էք ո՛րդեակներ, ու ա-  
նոնց յաղթեցիք. ինչու որ մեծ է անիկայ որ  
ձեր մէջն է, քան անիկայ որ աշխարհիտ  
մէջն է: Ե. Հ. Ա. 4:

Պարզապէս նայելով՝ բոլոր մարդկային  
աեռը Աստուծմէ է, ինչու որ ինքը ստեղ-

ծեց մարմիննիս ու հոգինիս։ Բայց յատկապէս հաւատացեալները Աստուծմէ են։ Քանզի անո՞ք իր շնորհքին կանչուած ու անով փրկուածներն են։ Ենոնք նոր արարածներ են, որ Արարիչին համար եղան։ Բայց քանի որ աշխարհիս մէջ են զօրաւոր թշնամիներ ունին պատերազմելու, որո՞ք են աշխարհս մարմինը ու սատանան։ Ուրեմն ինչպէս կ'ըլլայ որ “յաղթեցիք” կ'ըսոի։ Քանզի իրենց յաղթութիւնը անշուշտ պիտի ըլլայ, Աստուածաշունչը շատ անգամ ըլլալու բանի մը վրայ եղածի պէս կը խօսի։ Բայց ինչո՞ւ համար հաւատացելոց յաղթութիւնը այսչափ հաստատուն է։ Ծէ թէ իրենց անձնական զօրութեանը եւ բարութեանը համար, հապաւմենէն զօրաւոր մէ կը իրենց օդնական ունենալնուն համար։ Անոք եւելօք կը յաղթենք անոնք՝ որ սէրեց մէկ։ Ուստի ահա կը տեսնենք թէ մեղքէ աղատուելնուսու Քրիստոսի թագաւորութեանը մէջ մտնելնուս փառքը որի տալու ենք։ Որչափ երախտադիտութիւնցուցունելու ենք անոր, որ չէ թէ միայն մեղքի փրկութիւն ծախուառաւ, հապաւմիշտ իր շնորհքը մեղք կը պաշտպանէ։

20

Ուառաւ հացը՝ դոհացաւ, կտրեց եւ տուաւ անոնց՝ ու ըսաւ. Աս է իմ մարմինս որ շատւորներուն համար կը տրուի. ասիկայ իս յիշելու համար ըսէք: Պէտք. Ի՞նչ. 19:

Ո՞րչափ մեծ էր մար Տէր Հիսուս Քը բիստոսի սէրը, որ իր մատնուած գիշերը բոլոր քաշելու չարչարանքները իր առջեւը ըլլալով՝ գալու դարերուն մեջ իր աշակերտներուն մխիթարութիւն ըլլալու համար աս խորհուրդը հաստատեց զինքը յիշելու համար կատարելու: Եւ երբոր աս խորհուրդը կը կատարենք, պէտք է որ զինքը յիշենք: Պէտք է որ բոլոր մեզի համար ըրածները ու քաշածները միտքերնիս բերենք. թէ ինչպէս մեր յանցանքներուն համար վիրաւորուեցաւ եւ մեր անօրէնութիւններուն համար պատժուեցաւ եւ մահ ճաշակեց, որ մենք ապրինք: Պէտք է որ յիշենք թէ յարութիւն առաւ մեղ արդարացունելու համար, եւ հիմա Աստուծոյ աջ կողմն է, եւ մեղի համար միջնորդութիւն կ'ընէ: Պէտք է որ յիշենք թէ ան նոյն փրկիչը ներկայ է հիմա ու կը դիտէ մեղ թէ ինչ

խորհուրդներով եւ ինչ սրտի զգացումներով իր մահուան ժամանակը ցուցուցած սէրը կը յիշենք։ Եւ զի՞նքը յիշած ատենախս պէտք է որ մեր սրտերը սիրով՝ երախտադիտութեամբ եւ հնազանդութեան նոր դիտաւորութիւններով լեցուին։

## 21

Գ զւրերու առուներ կ'իջնան իմ աչքերէս, ինչու որ քու օրէնքդ չ'պահեցին։ Առողջ ՌՃԹ. 136։

Հիմարները մեղքը ծաղը կ'ընեն. բայց երբոր Աստուծոյ որդիներէն մէկը կը տեսնէ իր Երկնաւոր Հօրը օրէնքը կոտրուած ունանոր անունը անարդուած, ցաւը սրտին կը զարնէ. ճիշտ ինչպէս որ իր ծնողացը վրայ սիրով լեցուած տղայ մը կը վիրաւորուի երբոր անօնց անունին նախառուիլը կը լսէ։ Ասիկայ ճշմարիտ քրիստոնեայները աս աշխարհիս մարդոցմէն որոշելու նշան մըն է։ Աս աշխարհիս մարդիկը կարելի է թէ իրենց ընկերին աչքին ատելի երեւցած մեղքէն ետ կենան, եւ ուրիշի մը ձեռքով

ըրած ան սոսկալի չարութիւնները ատեն;  
 որոնք ընկերութեան վնասակար են : Ըայց  
 քրիստոնեայները կ'ողբան իրենց եւ ուրիշ-  
 ներուն վրայ տեսած մեղքերնուն վրայ : Կը-  
 տեսնեն որ Աստուծոյ հրամանները արդար  
 սուրբ ու բարի են, եւ կուլան երբոր մարդիկ  
 անոնք կ'արհամարհեն : Ա' իմանան թէ մեղ-  
 քը մեծ չարիք մըն է, վասնորոյ կը փափա-  
 քին որ բոլոր մարդիկ անկէց ետ կենան :  
 Անոնք կը սիրեն զԱստուած, անոր համար  
 ամեն բանեն եւել կ'ուղին որ ամեն մարդ  
 անիկայ սիրէ ու պատուէ :

## 22

Ինչու որ շատ սխալմունքներ կ'ընենք  
 ամենքս ալ : Յակ, զ. 2:

Թէ որ մէկ մարդ մը նորեն ծնած է եւ  
 սրտով Աստուած կը սիրէ, թէ որ իր ըն-  
 կերին հետը արդարութեամբ կը վարուի եւ  
 իր լեզուն միայն ճշմարտութիւն կը խօսի,  
 թէ որ կրօնական բոլոր արտաքին պարտա-  
 ւորութիւնները կը կատարէ, Աստուծոյ  
 դեմ ալ անիկայ յանցաւո՞ր է : Իր անձին

արդարութիւնը փնտռող ամբարտաւան  
փարիսեցին կ'ըսէ՛ թէ չէ ։ բայց առաքեալը  
կ'ըսէ՛, այո՛ ամենքս ալ սխալմունքներ կ'ը-  
նենք : Եւ թէ որ Ճշմարիտ եւ հոգիով նո-  
րոգուած քրիստոնէի մը հարցունես, պիտի  
խոստովանի տրտմութեամբ թէ ամեն օր  
մեղք կը գործէ : Որչափ ցուրտ է մեր սէրը  
Փրկչին վրայ, իր սիրոյն հետ բաղդատե-  
լով : Անը ըրած պաշտամունքները որչափ  
անդամ տկար ու միայն ցուցունելու հա-  
մար են : Անը սէրը ո՞րչափ նուաղ է, եւ ո՞ր-  
չափ անդամ ժամանակներնուս բոլորը Աս-  
տուծոյ ծառայելու չենք տար : Ո՞րչափ ան-  
դամ անհնազանդ կը գտնուինք անոր մեղ-  
վշտացունելու համար խրկած նախախնա-  
մական գործքերուն : Ո՞րչափ անդամ մեր  
բերաններէն անդգոյշ խօսքեր կը հանենք:  
Եւ թէ որ արթնութեամբ սրտելնիս դի-  
տենք, եւ անոնք Աստուծոյ սուրբ ու անա-  
րատ խօսքին հետ բաղդատենք, կրնանք իմա-  
նալ թէ ուրիշ քանի քանի կերպերով կը-  
մեղանչենք :

---

Դառք երկրին աղն էք : Անգլ . 15 . 13 :

Աղին մասնաւոր յատկութիւնը մէկ բան  
մը ապականութենէ պահելն է : Աստուծոյ  
որդիքը երկրիս աղն են, ինչու որ անիկայ  
բարոյական ապականութեան դառնալէն  
ու կործանուելէն բոլորովին կը պահեն . ու  
բովիշետեւ Աստուած անոնց համար մեծ եր-  
կայնմտութիւնով աշխարհիս մեղքերուն  
կը համբերէ : Այս երկրիս աղն էր ջրհեղե-  
ղէն առաջ . երբոր մարդոց շարութիւնը  
այնչափ շատցաւ, որ ալ Աստուած միտքը  
դրաւ երկրիս երեսէն անոնք բնաջինջ ընել .  
բայց համբերեց մինչեւ որ տապանը շինուե-  
ցաւ ու Այս անոր մէջը ապահով եղաւ :  
Առվտ Ասդոմի աղն էր, եւ ան շարութեան  
քաղաքը չ'կործանեցաւ մինչեւ որ Առվտ  
դուրս ելաւ : Ուէ որ Ասդոմի մէջ տասը ար-  
դար գտնուէր, բոլոր քաղաքը կործանու-  
մէ պաշտպանուելու համար հոն բաւական  
երկրի աղ գտնուած կ'ըլլար : Արովիշետեւ  
Աստուած Արքահամին ըստ որ եթէ հոն  
տասը արդար գտնուէր՝ պիտի չ'կործաներ:  
Արդեօք Քրիստոսի խոնարհ աշակերտնե-

ըլ ատող եւ հալածող ամբարտաւան մարդոց մոքերէն կ'անցնի, թէ ան անարդուած մարդոց աղօթքովը ու Ծատուածպաշտութիւնովը իրենքը Ծատուծմէ որչափ ողորմութիւններ կ'ընդունին:

## 24

Հապա թէ որ աղը իր համը կորսնցունէ, ինքը ի՞նչով պիտի աղուի. անկէ ետեւ բանի մը չ'գար, միայն թէ դուքս ձգուելու եւ մարդկանց ոտքին տակը կոխուելու: Վատթ. 1. 13:

Առէկ անձ մը կամ եկեղեցի մը լոկ քըրիստոնեայ անունով երկրիս աղը չ'կրնար ըլլու: Թէ որ ճշմարիտ կրօնքին ոգին չըկայ, թէ որ սիրտը հոգեւոր բաներու վրայ պաղէ, թէ որ հաւատքին ան կենդանի սկզբունքը չ'կայ, որ սիրով կը յաջողի, ան ատենը ան մարդը կտմ ան եկեղեցին աշխարհիս միւս մարդոցը պէս մեղքի մէջ մեռած եւ բռոր անօրէնութիւն գործողներուն կործանմանը ենթակայ է: Հրէայները՝ Ծատուծոյ ընտրեալ ժողովուրդը, երկ-

քիս աղն էին . բայց ՚Պ.քիստոսի եկած ժամանակը թէպէտ մեծ զգուշութեամբ իրենց կրօնքին ծէսերը եւ արարողութիւնները կը պահէին, սակայն հոգիով չէր . ու իրենց վարքն ալ անանկ գէշ էր որ ՚Պ.քիստոս անոնք իժերու ծնունդ կը կոչէ , այսինքն թէ որու հետ որ հաղորդակցութիւն ընեն անոնք կը թիւնաւորեն : Աս ժողովուրդը ուրիշները կործանուելէ պահելու տեղը, ինք-զինքը սոսկալի կործանումով մը կործանեց :

## 25

Տէրոջը խօսքերը փորձուած են : Ատռ .  
Ժ.Բ . 30 :

Աստուծոյ խօսքին զօրութիւնը շատ անգամ փորձեցին իր թշնամիները . անոր դէմ ելան իրեւեւ թէ անիկայ երկրիս երեսէն բնաջինջ ընելու : Անհաւասները բոլոր իրենց կեանքը անիկայ սուտ հանելու աշխատելով , եւ անոր մարդոց սրտերուն վրայ ունեցած իշխանութիւնը կործանելու ջանալով անցուցին : Հայց բոլոր իրենց աշխատութիւններն ու ջանքերը Աս-

տուծոյ խօսքին զօրութիւնը յայտնեցին .  
ցուցունելով թէ աշխարհիս եւ դժոխքին  
բոլոր զօրութիւնները կարող չեն անիկայ  
յաղթել : Աստուծոյ սպառնալիքներուն  
Ճշմարտութիւնը անոնք փորձեցին , որ ծաղը  
կ'ընէին ըսելով , “Ո՞ւր է իր գալուն խոստ-  
մունքը ” . (Տ . ՊԵՊ . Գ . 4 .) Եւ ահա յան-  
կարծ կործանումներ վրանին հասաւ ու տե-  
սան թէ Աստուծոյ խօսքը յաւիտենական  
Ճշմարտութիւն է : Աստուծոյ խոստմունք-  
ներուն Ճշմարտութիւնը անոնք փորձեցին՝  
որ յոյսերնին ան խոստմունքներուն վրայ  
դրին : Խւ ի՞նչ անուշ իմացան անոնց հս-  
ւատարիմ խոստմունքներ ըլլալը : Խրենց  
ամեն նեղութիւններուն մէջ Աստուծոյ .  
խոստմունքները իրենք պահեց եւ միսիթա-  
րեց . եւ գերեզմանը իջած ժամանակնին  
իրենց լոյս եւ ցնծութիւն եղաւ : Խմ բո-  
լոր յոյսս Աստուծոյ խօսքին վրայ պիտի  
դնեմ :

Բաղրամունքը Աստուծոյ են,  
 քանզի անոնք իր ձեռքին դործքերն են:  
 Ապրդիկ երբեմն կը կարծեն թէ որչափ աղ-  
 քատ որ ըլլան, գոնէ իրենց անձը իրենցն է.  
 ձեռքերնին ոտքերնին մարմիննին իրենցն  
 է, եւ անոնցմով ուղածնին կրնան ընել:  
 Բայց ասանկ չէ, անոնք Աստուծոյ են, եւ  
 իրաւունք չունին իրենց մարմնոյն կամ  
 մտքին կարողութիւններէն մէկը անոր ար-  
 դիլած կերպերովը գործածել: Եւ յատ-  
 կապէս քրիստոնեայները իրենց անձեր-  
 ուն տէրը չեն: Աստուծած անոնք չէ թէ  
 միայն ստեղծեց, հապա անհուն գնով մը  
 յաւիտենական մահուանէ ազատեց: Ու-  
 րեմն իրաւունք չունինք մեղի համար ապ-  
 րելու, միայն մեր փառքը կամ մեր երջան-  
 կութիւնը փնտոելու, հապա ամեն բանի  
 մէջ անոր ուղածին պէս ընելու ենք, որուն  
 որ ստեղծուածներն ենք: Բաղրամ մեր խոր-  
 հուրդներուն եւ գործքերուն մէջ յիշելու  
 ենք, թէ մենք մեր անձին տէրը չենք: Բա-  
 լոր մեր ունեցածները եւ անձերը անոր ծա-  
 ռայելու են, որ մեզ իր արիւնովը ծախու-  
 առաւ:

---

Երբոր կը տկարանամ, ան ատենը կը զօ-  
րանամ։ Ը կազմ. ձ. 10։

Արդուն իշնալէն ետքը բոլոր մարդիկ  
հոգեւորապէս տկար են։ Բայց միայն Առւրբ  
Հոգիով լուսաւորուած հոգին կ'իմանայ  
իր տկարութիւնը։ Ճշմարիտ քրիստոնեայն  
կրնայ տեսնել թէ իր հոգին մեղքով ո՞ր-  
շափ ապականեալ է, եւ կը զգայ թէ պէտք  
եղածին պէս չ'կրնար կատարել իր պարտ-  
քերը։ Աստուծոյ օրհնեալ օրէնքը սրտի  
եւ կենաց կատարեալ սրբութիւն կը պահն-  
ջէ, բայց ինքը շարունակ մեղք գործելու յօ-  
ժար է, իր ուղածին պէս չ'կրնար ընել։ Հա-  
ստ. 1. 15, 19։ Կը սիրէ Աստուծոյ օրէնքը  
ու անոր կատարեալ հնազանդութիւն ունե-  
նալու կը փափաքի, բայց երբոր բարին ը-  
նելը կը կամենայ չարը իր քովին է։ Հաստ.  
1. 21։ Ամենէն թեթեւ պարտաւորութիւ-  
նը չ'կրնար տեղնի տեղօքը կատարել, քան-  
դի չար շարժառիթ մը կամ զգացում մը կը-  
գտնէ բոլոր իր ըրածներուն հետ խառնուած։  
Բայց երբոր աս տկարութիւնը կը զգայ ան ա-  
տենը զօրաւոր կ'ըլլայ։ Աստենը շատ արթ-

Նութեամբ կը դիտէ իր սիրտը ու վարմունքը անատենը շատ աղօթք կ'ընէ Աստուածային պաշտպանութիւնը խնդրելով : Անատենը մեծ վստահութեամբ ինքզինքը Փրկչին ուաքը կը ձգէ որ զինքը պահէ : Այս Տէր Հիսուս Քրիստոս երբոր կը տեսնէ իր տը կարութիւնը զգացող եւ իր յոյսը Աստուածային կարողութեանը լրայ դնող մարդը, անիկայ իր շնորհքը կը լեցունէ : Անատենը ան քրիստոնեայն Տէրոջմով ու անոր տուած զօրութիւնովը կը զօրանայի Անատենը բոլը իր հոգեւոր թշնամիները մեծ յաղթութիւնով կը յաղթէ : Հայով . թ . 37 :

## 28

Աւ եւելի աղէկ ստացուածքներ ունիք ձեզի երկինքը, ուր կը կենան ու կը մնան : ԵՅՅ . Ժ . 34 :

Աստուծոյ որդիքը շատ անդամաս աշխարհիս մէջ աղքատ ու անարգուած են : Այս երբեմն Քրիստոսի ճշմարիտ հետեւողները ըլլալնուն համար է որ աղքատութեան եւ նեղութեան մէջ կ'իյնան : Բայց Պօղոս իր ժամանակը գտնուող նեղեալներուն համար կ'ըսէ թէ, ուրախութեամբ կը եցին իւ

բենց ստացուածքներուն կողոպտուիլը։ Եթէ  
Ժ. 34։ Այսպէս քրիստոնեայները իրենց  
ընտրած բաժինը աչքերնուն առջին ունե-  
նալով՝ իրենց երկրաւոր ինչ եւ իցէ վիճա-  
կին մէջը միշտ կրնան ուրախ ըլլալ։ Իրենց  
ընակութիւնը երկինքն է. ան օրհնեալ աշ-  
խարհին մէջն է իրենց բաժինը, ուր մեղք  
չ'կայ, եւ իրենց Փրկիչը հոն է, ու միայն  
սրբութիւն եւ սէր կայ։ Եւ աս աշխարհիս  
մարդոցը վայլած ինչ եւ իցէ բաժինէն ա-  
ւելի աղեկ է։ Քանզի ան բաժինը հոգիին  
ընութեանը կատարեալ յարմարութիւն  
ունի, եւ ամեն փափաքները բոլորովին կր-  
լեցունէ։ Այսց ընդհակառակն աս աշխարհիս  
վայելցութիւնները չեն կրնար սիրտը կշտա-  
ցունել։ Այեւ աս ստացուածքը կը կենայ  
ու կը մնայ։ Երբոր կեանքերնիս կը վեր-  
ջանայ, աս աշխարհիս բարիքներէն մէկը  
մեզի չ'մնար եւ մինչեւ ան ատենը անգամ  
շատ քիչերը կը մնան։ Այսց քրիստոնէին  
ընտրած բաժինը հոգիին հետ մէկ տեղ կայ  
ու կը մնայ։ Անիկայ յաւիտենական ժա-  
ռանգութիւն մըն է։

---

Եւ ահա ամեն օր ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վերջը։ Անոթ. 13. 20։

Երբոր Տէր Յիսուս Քրիստոս երկինքը իր ծօրը ելլելու վրայ էր, իր աշակերտներուն հրաման ըրաւ որ բոլոր աշխարհք երթան իր աւետարանը քարոզեն։ Ենոնք աղքատ եւ անարգուած մարդիկ էին, եւ իրենց երկրին զօրաւորները դեռ իրենց Տէրը նոր խաչեր էին. սակայն հրաման եղաւ իրենց ամեն տեղ աս նոյն խաչեալ Յիսուսը քարոզել։ Կարելի էր թէ աս գործին մեծութենէն եւ վտանգներէն փախչէին. բայց Քրիստոս խոստմանք մը ըրաւ անոնց՝ որ իրենք պաշտպանելու եւ քաջալերելու բաւական էր. “Ձ ահա ամեն օր ձեզի հետ եմ” ըստ, մինչեւ աշխարհիս վերջը”։ Ինքը զերենք պաշտպանելէն և առաջնորդելէն ետեւ ալ ի՞նչ վախի տեղ ունէին։ Ես խոստմունքը մինչեւ աշխարհիս վերջը Քրիստոսի բոլոր ճշմարիտ աշակերտներուն արուածէ։ Անոնք մեզի յանձնուած մեծ գործ մը ունինք. պէտք է որ մեղքին հոգիներնուս մէջ ունեցած զօրութիւնը բոլորովին կոր-

ծանենք . եւ ուրիշները՝ Քրիստոսի թագաւորութեանը առաջնորդելու եւ իր աւետարանը բոլոր աշխարհք տարածելու համար ձեռքերնութ եկածը ընելու ենք : “Եւեւ զօրաւոր թշնամիներ ալ ունինք , որոնք են աշխարհա մարմինը ու սատանան , որոնց հետ միշտ պատերազմելու ենք . բայց մեր ամենակարող Փրկիչը միշտ հետերնիս ըլլալէն ետեւ , ալ վախի բան մը չունինք : Օրհնեալ է իր անունը , որ մեղի աս պատռական խոսամունքը տուաւ :

## 30

Եւ անոր անունովը մեղաց ապաշխարութիւն եւ թողութիւն քարոզուիլ բոլոր աղդերուն մէջ՝ Արօւսաղէմէն սկսուած : Դ ունի . ԲԴ . 47 :

Քրիստոսի մէկ պատուէրը ասիկայ էր թէ “Աիրեցէք ձեր թշնամիները ” . անանկ պատռէր մը որ առաջուց անոր վրայ երբէք մէկը խորհած չէր : Ան պատռէրին օրինակը ցուցուց ինքը սպաննողներուն համար խաշին վրայ աղօթք ընելովը : Եւ հիմա ալ որ աշխարհէս հեռանալու վրայ էր , ան

նոյն ողիովը կը հրամայէ որ իր օրհնեալ  
աւետարանը առաջ Խրուսաղէմ քարոզուին  
Հոն ինքը մատնուեցաւ՝ նախատուեցաւ՝  
ծեծուեցաւ ու խաչը ելաւ։ Հոն էին աւ-  
նոնք որ “Խաչը հանէ ատիկայ Խաչը հա-  
նէ ատիկայ” կանչեցին։ Հոն էին իր  
ձեռքերուն ու ոտքերուն գամեր զարնող-  
ները, եւ իր քաշած վիշտերը ծաղրընելով  
խմելու համար լողիով քացախ տուողները,  
ու գերեզմանին քարին կնիք զարնողները։  
Վաւետարանին առաջին քարոզութիւնը  
պէտք էր որ անոնց եւ անոնց նմաններուն  
ըլլուեր։ Ենոնց ըսուելու էր որ “Ձեր թա-  
փած արիւնը մինչեւ անդամ ձեր մեղքերն  
ալ քաւեց, եկէք ան նոյն հիսուսին, ու  
յաւիտենական կեանկը ընդունեցէք”։ Սկսյ  
անանկ մեծ մեղք մը որ Քրիստոսի արիւնը  
կարող չըլլայ անիկայ սրբելու։ Սկսյ այն-  
չափ մեղաւոր հոգի մը որ ապաշխարէ ու իր  
փրկութեան յոյսը միայն Քրիստոսի վրայ  
դնէ, ու չկրնայ մեղաց թողութիւն գտնել

անով Աստուծոյ փառքին մեր ձեռքովը  
կ'ըլլայ Ամէն : Ի Աղջնը . Ա . 20 :

Աստուած շատ մեծ եւ պատուական  
խոստմօւնքներ ըրաւ, եւ անոնց ամենը Քը-  
րիստոսով են : Ուշ որ Ճշմարտապէս Քը-  
րիստոսի մէջն ենք, աս խոստմօւնքները  
մերն են : Խնք մեր տեղը անէծքը կրեց որ  
մենք օրհնութիւն ընդունինք : Վենք անոր  
հետ մէկ ենք, անոր համար այրը սիրով  
մեր վրայ կը նայի . Ե . մեզի տմեն շնորհք  
եւ փառք կը խուտան այ : Աս խոստմօւնք-  
ներուն ամենը հաւատարիմ եւ Ճշմարիտ  
են . անով այս են ու անով Ամէն : Վար-  
դիկ մեզ կը խաբեն, բայց Աստուած մարդ  
չէ որ սուտ զրուցէ, ու մարդոյ որդի չէ որ  
իր խոստմօւնքն դառնայ : Ուռա . ԻԳ . 19 :  
Որչափ որ մեծ ըլլան խոստմօւնքները եւ  
որշափ որ արժանաւորութիւն չունենանք,  
թէ որ Քրիստոսի մէջն ենք ամենը մերն  
են : Արնանք վստահիլ Տէրոջը խօսածնե-  
րուն վրայ . ան խոստմօւնքներուն ամենքն  
ալ Աստուծոյ փառքին համար են : Անոնք  
իր շնորհքը կը փառաւորեն . քանզի ար-  
ժանաւորութիւն չունեցողներու ընծայու-  
ած ամենամեծ պարգևներ են : Անոնք իր

Ճշմարտութիւնը կը փառաւորեն, ինչու որ  
անոնց ամենուն ալ ճշմարիտ ըլլալը պիտի  
տեսնուի եւ բոլոր երկինք փառաբանու-  
թիւն պիտի կարդայ ըսելով՝ “Քու ճամ-  
բայներդ արդար եւ ճշմարիտ են ովք Խա-  
ղաւոր ամեն աղղերուն”։ Հայոց ։ ձ.ւ. ։ Յ.։

---

# ՓԵՏՐԱԽԵՐ

## 1

Խնչու որ Արդին մարդոյ եկաւ՝ կորսու-  
ածները ապրեցունելու։ Անտվ. յ.թ. 11.

«Ք» ԲԻՍՏՈՍԻ ՓՐԿԻՆ կանչելովնիս կը-  
ցուցունենք թէ մենք կորսուած մեղաւոր-  
ներ ենք : Ծաշոր մեր մ.ջը բարի բան մը ու-  
նինք, անով Աստուծոյ ընդունելի ըլլալու .  
թէ որ կարողութիւն ունինք մենք մեզմէ մեր  
փրկութիւնը ձեռք բերելու . թէ որ իրա-  
ւունք կրնանք ունենալ մեր բարի գործ-  
քերովը երկինքը մտնալու, ան ատենը ա-  
նոնցմէ չենք, որոնք փրկելու համար Վը-  
րիստոս աշխարհնեկաւ : Բայց թէ որ աեւս-  
նենք թէ ինքիրեննիս կորսուած ենք, թէ  
Աստուծոյ օրենքը կոտրած ենք ու մեր մե-  
ղացը համար բնաւ չենք կրնար քաւու-  
թիւն մը ընել, հապա յաւիտեան իր բար-  
կութեանը արժանի ենք . թէ որ զգանք

թէ հոդինիս անանկ պղծեալ է մեղքով որ  
Վստուծոյ ընդունելի գործք մը խօսք մը  
կամ խորհուրդ մը չենք կրնար ընել. թէ  
բոլորովին անօգնական ենք ու յաւիտեանս  
պիտի կորսուինք թէ որ միայն իր գթու-  
թիւնովը մեզ չ'փրկէ. ան ատենը փրկու-  
ելնուս յոյս կայ: Խնչու որ Քրիստոս աշ-  
խարհք եկաւ, ճիշտ ասանկ էորթուած մե-  
ղաւորները փրկելու:

## 2

Վենք ինտո՞ր պիտի խալսինք՝ [թէ որ ան-  
հոգ ըլլանք անանկ փրկութենէն: Եբք.  
Բ. 3:]

Վեզ փրկելը Վստուծոյ գործքերուն  
ամենէն մեծն է: Օարմանալի կերպով մը  
մեղի փրկութիւն պատրաստեց: Բալոր եր-  
կինք շարժեցաւ երբոր Քրիստոս աշխարհք  
եկաւ մեղաւորները փրկելու: Աս մեծ  
գործքին գաղտնիքը հրեշտակները կը ցան-  
կային տեսնալ: Ա. ՊԵՊ. Ա. 12: Բայց թէ  
որ աշխարհիս ունայնութիւններէն խար-  
ուելով մեղի հաւար աս պատրաստու-

ած փրկութեանը բնաւ չ'նայինք ու թէ որ  
անիկոյ զանց ընենք ու վար զարնենք . մենք  
աս իրմէծ գործքը եւ սքանչելի սէրը արհա-  
մարհելնուս համար Աստուծոյ բարկութե-  
նէն ինտո՞ր պիտի խալսինք : Անը հոգինե-  
րը կորսուելու վրայ են . մեղանչեցինք եւ  
Աստուծոյ անէծքը վանիս եկաւ, ու յա-  
ւիտենական մահուան դատապարտութեան  
տակը ինկանք : Ճամբայ մը կայ՝ եւ միայն  
մէկ ճամբայ մը կայ, որով կրնանք աս ա-  
հարկու անէծքէն խալսիլ . այսինքն Վրիս-  
տոսի երթալով ու իրմէն փրկութիւն խընդ-  
րելով : Իայց թէ որ խելքերնիս աս աշ-  
խարհիս բաներուն տանք եւ Վրիստոսի կա-  
տարած ան մէծ փրկութիւնը թողունք,  
թէ որ իր ողորմութեանը չլինանք, մեր  
մէջքերուն արժան եղած պատիժէն ինտո՞ր  
կրնանք խալսիլ :

## 3

Արդոց սահմանուած է մէկ անգամ մը  
մեռնիլ : ԵՅՅ . թ . 27 :

Կ ատերը աս աշխարհիս մէջ իրենց

բնակարանին պէս կ'ապրին : Անանկ եռանշով մը իրենց շահը փնտոելու զքօսանքի եւ պատիւ գտնելու ետեւէ կ'ըլլան, որ իրրեւ թէ յաւիտեան հոս պիտի ապրին : Գալիք ները կը հաշուեն, իրրեւ թէ ապրելնին շատ աղէկ գիտեն, եւ այնչափ յաջողութիւնով հաղարտացած են, ու այնչափ ալ նեղութիւններու մէջ կը մտնեն՝ որ կարծես թէ հաղարտաւորդարեր անոնց արդիւնքները պիտի վայելեն : Վաքերնուն չեն անցուներ որ Վատուծոյ խօսքը կ'ըսէ թէ պիտի մեռնիք, թէ եւ աս խօսքը ամենուն համար ալ է : Եւ չ թէ միայն ամենքն ալ պիտի մեռնին, հապա յայտնի ալ չէ թէ որ ըսպէին պիտի մեռնին : Մէկն ալ չ'գիտեր մինչեւ հետեւեալ օրը, կամ մինչեւ յաջորդ ժամը՝ ապրիլը. կեանքին որ եւ իցէ միջոցին մէջն ալ մահուանէ ապահովութիւն չ'կոյ: Տղաքներուն երիտասարդներուն՝ շափահաս մարդիկներուն եւ ծերերուն ալ գլխուն վրայ է մահը: Արուսարը եւ աղքատը, իմաստունը ու աղէտը, պատուառը ու նուաստը, ամենքն ալ նոյնպէս օր մը պիտի մեռնին: Ուրիմն ի՞նչ, մեծ յիմարութիւն է երկրաւոր բաներու եռեւէ իյնալը, քանզի չենք գիտեր թէ մէկ օր մը պիտի կընանք անոնք վայելել:

Ու անկեց ետքը դատաստան։ ԵՅԻ ։  
թ. 27։

Ո՞ւ որ մահէն անգին ուրիշ կեանք մը  
ըլլար, բոլորովին աշխարհային բաներով  
յափշտակուելնիս այնչափ մեծ յիմարու-  
թիւն մը պիտի չ'սեպուէր։ Քայց տես որ  
մահէն ետեւ դատաստան ալ կայ, ան ա-  
տենը Աստուծոյ առջին պիտի կայնինք դա-  
տուելու։ Անը գործքերուն պէս պիտի դա-  
տուինք, մեր կեանքին մէջ բոլոր ըրած  
գործքերնիս եւ բոլոր ունեցած դիտաւորու-  
թիւննիս պիտի դատուին։ Ան ատենը պի-  
տի յայտնի ըլլայ թէ արդեօք աշխարհային  
բաներով զբաղեցանք, եթէ աշխատեցանք  
որ Աստուծոյ հնազանդինք։ Ո՞ւ արդեօք  
մեղքերնիս ապաշխարեցինք ու հաստատ  
դիտաւորութիւնով անոնք ձգեցինք, եթէ  
մեղքը սիրեցինք ու Փրկիչը ատեցինք եւ  
Աստուծ մոռցանք, ասոնք ամենքը ան ա-  
տենը յայտնի պիտի երեւին։ Հոն կեղ-  
ծաւորութիւն ու խաթէութիւն չ'բանիր։  
Աստուծ ած ամենուն սիրութիրքննէ, ու խոր-  
հուրդ մը եւ զգացում մը իր աչքէն ծած-

կուիլ հնար չէ : Աստուած արդար դատաւորէ, եւ հոն մեծի ու պղտիկի նայիլ չ'կայ : Ան օրուան վճիռները վերջին վրձիռներ են, Ադամին ամեն մեկ զաւկըներուն կամ յաւիտենական կեանքը կամ յաւիտենական մահ պիտի տրուի :

## 5

Ու իր մէջը գտնուիմ . չէ թէ օրէնքէ եղած իմ արդարութիւնս ունենամ, հապա՞րիստոսի հաւասաքովը ան արդարութիւնը՝ որ Աստուծմէն է : Փէլք . գ. . 9 :

Երբոր Աստուծոյ առջեւը դատաստանի կայնինք ; ինքզինքնիս արդարացունելու համար պիտի չուզենք մեր արդարութիւնը ցուցունել : Ան ատենը պիտի տեսնենք թէ որչափ սուրբ է եղեր Աստուծոյ օրէնքը, եւ անոր պահանջմունքներէն ո՛րչափ պակաս գտնուեր ենք : Ան ատենը պիտի տեսնենք թէ մեր աղօթքները՝ ողորմութիւնները եւ մեր ամենէն աղեկ գործքերուն ամենն ալ իրենց մէջ խառնուած մեղքերուն համար թողութեան կարօտ են : Ի՞սյց թէ

որ Քրիստոսի մէջն ըլլանք, անոր արդարութիւնը ունենալովնիս ան օրը պիտի արդարանանք, եւ երկնից թագաւորութիւնը պիտի ընդունինք: Պողոսի մեծ աշխատութիւնը Քրիստոսի մէջը գտնուին էր, եւ իր բոլոր ջանքերը առ նպատակիս կը նային: Անք ալ առ բանին համար աշխատելու ենք: Ան օրը մի միայն Քրիստոսի արդարութիւնը պիտի մնայ. թէ որ առ արդարութիւնը մերն ըլլայ, ալ վախնալու բան մը չունինք: Աւ թէ որ մեղքերնիս ապաշխարենք եւ հոգինիս իր ողորմութեանը ձգենք, անշուշտ պիտի ընդունէ եւ իր արդարութիւնովը մեղ հագուեցունէ:

Աւ անոնք պիտի երթան յաւիտնական տանջանքնն: Անգլ. 11. 46.

Աներ Տէրը խօսեցաւ մեղի դատաստանին եւ ան երկու վիթուներուն վրայօք, որ կամ մէկին կամ միւսին տակը պիտի իյնայ ամեն մարդ: Անգը Դատաւորին ձախ կողմը եղողները պիտի դատուին երթան յա-

փառանս տանջուելու : Եւ ո՞ւսկէց պիտի  
զատուին . բոլոր աշխարհային երջանկու-  
թիւններէն , եւ բոլոր մարդկուցին ցեղին  
բարիներէն : Հրեշտակներէն՝ սյսինքն ան  
հոգիներէն , որոնք շատ կը սիրեն աս աշ-  
խարհիս մեջը գանուող սուրբերուն սպա-  
սաւորութիւն ընել : Առարք Հոգիէն՝ որ  
միսիթարիչ է բոլոր Վատուծոյ ժողովրդոցը:  
Ան Փրկիչէն՝ որ այնչափ սիրեց իրենք որ  
իրենց համար մեռաւ : Հօր Վատուծմեն որ  
ամեն ողորմութիւններուն պարդեւողը եւ  
ամեն երջանկութիւններուն աղբիւրն է :  
Կան ինչպէս որ ներկայ վայելութիւննե-  
րէն զատուած գացին , անանկ ալ գալու յոյշ-  
րէն ալ պիտի զատուին , ինչու որ իրենց  
պատիժը յափտենական է : Իրենց պատիժը  
գոնէ ըստէ մը պակսած տեսնելու կարող  
պիտի չըլլան : Գարեր դարերու վրայ պի-  
տի անցնին ու տակաւին սատանային եւ  
անոր հրեշտակներուն հետ յաւիտեանս  
յաւիտենից Վատուծոյ բարկութիւնը պի-  
տի կրեն : Խղճմանընին ալ պիտի զրուցէ ի-  
րենց թէ աս իրենց քաշած պատիժը արդար  
է : Ո՞չ երանի թէ ազատ մնայի աս սոսկա-  
լի դատապարատութենէն : Օքհնեալ է Վա-  
տուած որ մեղի փրկութեան ճամբայ մը կոչ :

Ու ալ մահ չ'կայ: Յայտ . Ի՛ւ . 4:

Վահը մեղաւորները սոսկացունող  
թագաւոր է: Ճնականաբար ամեն մարդ կր-  
վախնայ անկեց, եւ բոլոր իր ունեցածները  
կը զոհէ թէ որ աղատիլ հնար ըլլայ: Աա-  
կայն անհնար է որ անոր ձեռքէն փախչինք.  
միշտ վրանիս է մեր սիրելիները կը յափրշ-  
տակէ կը տանի: Եւ իր մեզի երբ դալը ամե-  
նեւին չենք դիտեր. մէկ բոպէ մը ապա-  
հով չենք իր զօրութենէն: Ենոր ծառայ-  
ները հիւանդութիւններ ու ցաւեր են, եւ  
ան ընակարանը ուր որ մեզ կը տանի մութ  
գերեզմանն է, ուր ապականութեան պիտի  
դառնանք, որդերը մեր մարմիններովը պի-  
տի կերակրին: Բայց վերի ընակարանները  
որ Վրիստոս պատրաստեց իրեն հետեւող-  
ներուն համար, աղատ են մահուան զօրու-  
թենէն: Ո՞չ որ մահէն վախնալով բոլոր  
իրենց կեանքը գերութիւնով անոր իշխա-  
նութեան տակը անցունողները, ո՞րչափ  
պիտի ուրախանան երբ որ տեսնեն թէ մա-  
հը ալ յաւիտեան իրենց վրայ իշխանու-  
թիւն չունի: Ուրեմն վախնալու չենք թէ

մահը պիտի գայ ու մեր ուրախութիւնները  
վերջացունէ եւ մեզ մեր սիրելիններէն զատէ,  
ու առնէ տանի ան մութ գերեզմանին մէջ  
դոցելու : Չէ, ինչու որ մեր կեանքը ան ա-  
տենը յաւիտենական կեանք պիտի ըլլայ:

## 8

Ոչ սուգ՝ եւ ոչ աղաղակ, ոչ ցաւեր եւ  
ոչ աշխատանք՝ ալ մէյ մընալ չ'կայ : Յայտ  
իւ . 4 :

Կանի որ աս մարմնոյ՝ մէջն ենք եր-  
կինքի երջանկութեանը վրայ ճիշտ գաղա-  
փար մը չենք կրնար ունենալ : Իայց Աս-  
տուած մէկ քանի բաներ ըստ, որ երկին-  
քին մէջ չ'կան, եւ ուր տեղ որ անոնք չըլ-  
լան հոն երջանկութիւն կայ : Աս աշ-  
խարհ.քս տրտմութիւնով լեցուն է . Ամար-  
դիկներուն անդգամութիւնը ու չարութիւ-  
նը մեզի նեղութիւն կուտան : Աս կեան-  
քիս մէջի նեղութիւններուն կէսը մարդիկ  
մէկզմէկէ կը կրեն : Աղքատութիւնն ալ եւ  
անօր հետ ընկերացած գէշութիւնները մեղ  
կընեղեն : Իարեկամներնուս մեռնիլը մեղի  
ցաւ է, ու նաեւ հիւանդութիւններէ ու

ցաւերէ շատ նեղութիւն կը քաշենք : Երբոր հիւանդանանք, ան ատենը կ'իմանանք թէ առողջութիւնը ինչ մեծ օրհնութիւն է : Աստուծոյ իր սիրելիներուն համար պատրաստած թագաւորութեանը մէջ ոչ մահկայ, ոչ տրտմութիւն եւ ոչ ցաւ : Թէ որ անանկ տեղ մը երկրիս վրայ ըլլար ուր որ աս նեղութիւնները չըլլային, ո՞րչափ անթիւ մարդիկներ շուտով հոն պիտի վազէին բնակելու : Ալ ո՞րչափ փափաքելու ենք երկինքին մէջ բնակելու, ինչու որ հոն չէ թէ միայն մահուանէ՝ ցաւէ ու արցունքներէ աղատ պիտի ըլլանք, հապայաւիտենական երջանկութիւն պիտի վայելնք :

Թէ որ մէկ մարդ մը նորէն չ'ծնի՝ չ'կըսնար Աստուծոյ թագաւորութիւնը տեսնել : Յուշ . գ . 3 :

Աստուծած թագաւորութիւն մը պատրաստեց, ուր մարդոց օրդիները պիտի ընդունի, բայց հարկաւոր պատրաստութիւն

մը կայ ընելու որ առանց անոր մէկը չ'կրնար  
ընդունուիլ։ Վա թագաւորութիւնը աշ-  
խարհի թագաւորութիւններէ շատ տար-  
բեր է, եւ ան պատրաստութիւնը այսինքն  
փոփոխութիւնը՝ որ մարդիկ հոն մանելէն  
առաջ ունենալուն, այնչափ մեծ է որ նո-  
րէն ծնանիլ կամ նորէն ստեղծուիլ կը կոչ-  
ուի։ Եւ ասիկայ կատարող ան հզօր Եակը  
Առորբ Հոգին է։ Վասիկայ միայն արտաքին  
փոփոխութիւն մը չէ, հապա նոր սիրտ մը  
նոր փափաքներ եւ նոր սկզբունքներ ու-  
նենալ է։ Մարդիկ նորէն ծնելէն առաջ  
ինքզինքնին ամենէն եւել կը սիրեն, ասանկ  
ալ մեղքը եւ աշխարհիս հեշտութիւնները  
կը սիրեն։ Բայց նորէն ծնելէն ետեւ Վա-  
տուած կը սիրեն հոգիով, եւ իրենց մեծ ու-  
րախութիւնը անոր կամքը գիտնալ ու ը-  
նելն է։ Կատեն մելքը եւ կը ցանկան ան-  
կեց ազատ ըլլալ. Երկնային բաներու ետ-  
նեւէ կը ըլլան, եւ կը ջանան ամեն բանի մէջ  
Վարիատոսի օրինակին հետեւիլ։ Իմ հոգիս  
ու անանկ նորէն ստեղծուեցաւ։ Ո՛Լ Տէր  
գում գիտես :

Եւ սրբութեան, որ առանց ասոր մէկը  
չ'կրնար տեսնել Տէրը : Ե. Է. Ճ. 14:

Աս աշխարհքես զատուելնուս ետեւ  
ամենքս ալ Աստուծոյ հետըլլալու յոյս ու-  
նինք . բայց մէկ բան մը կայ, որ առա-  
քեալը Հոգով Արրով կ'ըսէ: Թէ առանց  
անոր չենք կրնար Տէրը տեսնել: Աս բանը  
սրբութիւն է, որ է սրտին Աստուծոյ սուրբ  
օրէնքին հետ միանալը: Աստուծած այնչափ  
կը սիրէ իր զաւկըները որ թող չ'տար պիղծ  
հոգիներուն դալ ու անոնց երջանկութիւ-  
նը աւրել: Եւ թէ որ հեարաւոր ալ ըլլար  
մեղաւորներուն ան սուրբ աշխարհը մտնել,  
հոն իրենց հաճելի բան մը պիտի չ'գտնէին  
Երկինքին մէջը եղող սուրբերուն երջան-  
կութիւնը Աստուծոյ վրայ ունեցած սէրեր-  
նուն ու Փրկչին ներկայ ըլլալէն յառաջ  
կուգայ: Անոնց ուրախութիւնը Աստուծած  
փառաբանել ու իր կամքը ընելն է: Անոնք  
Աստուծոյ եւ ան աշխարհին բոլոր ժա-  
ռանգներուն սրբութիւնովը կը պուարձա-  
նան: Բայց չ'նորողուած մեղաւոր մը ասանկ  
բաներէ երջանկութիւն չ'կրնար քաղել:

Աս աշխարհքիս մեջ Աստուած չ'փնտը-  
ռեր, ու հոն ալ անոր մշտնջենաւոր ներ  
կայութեանը չ'կրնար դիմանալ: Անդքը  
կը սիրէ եւ երկնից սրբութիւնը դժոխքէն  
ահարկու պիտի ըլլայ իրեն: Ուրեմն մեղա-  
ւոր մը ի՞նչպէս պիտի կրնոյ երկինքը մըտ-  
նալու յարմարութիւն ունենալ: Միայն իր  
մեղքերը Վրիստոսի արիւնովը մաքրուե-  
լով եւ իր սիրալ Առւրբ Հոգիէն նորոգ-  
ուելով:

## 11

Ամեն ատեն Տէրը իմ առջիս դրի, ո-  
րովհետեւիմ աջ կողմն է, պիտի չ'սասա-  
նիմ: Առաջ + ձօ. 8:

Աստուած ամեն ատեն մեր բոլորտիքն  
է. բայց մենք միայն հաւատոյ աչք կրնանք  
տեսնել զինքը: Աղեկ կ'ըլլայ որ միշտ ըդ-  
դանք իր ներկայութիւնը, իրեննայինք հա-  
ւատքով, եւ ամեն ատեն առջեւնիս ունե-  
նանք: Անիկայ մեր պաշտպանն է, ալ ինչ-  
կայ վախնալու: Դաւիթ կ'ըսէ թէ, “ (1-  
րովհետեւ իմ աջ կողմն է, պիտի չը-

սասանիմ։ Անիկայ մեր առաջնորդն է .  
մենք տկար ու տգետ ենք , և մեր ճամ-  
բայները շատ անդամ վտանգաւոր եւ դրժ-  
ուարին են : Իսյց թէ որ մեր ամեն ճամ-  
բայներուն մէջ զինքը ճանչնանք , թէ որ  
զինքը մեր առաջնորդը սեպելով շարու-  
նակ իրեն նայինք , մեր ճամբայները մեր  
առջին պիտի ուղղէ : Կնքը մեր մեծ օրի-  
նակն է . կը հրամայէ մեզի իրեն պէս սուրբ  
եւ ողորմած ըլլալ : Պատէ . օ . 36 : Ա. Պէտք .  
Ա . 15, 16 : Թէ որ նորոգուած ենք՝ իր  
պատկերին պէս ենք , եւ երբոր իր նմանու-  
թիւնովը արթննանք իր առջին կենալու-  
յարմար պիտի ըլլանք : Այսեւ ինքը շա-  
րունակ մեր խորհուրդները խօսքերը եւ  
ճամբայները կը քննէ . թէ որ ասիկայ միշտ  
մոքերնիս ըլլայ՝ մեղաց դէմ եւս առաւել  
զգուշութիւն կ'ընենք , աւելի մեծ եռանդով  
Աստուծոյ կը ծառայենք , մեր պաշտամունք-  
ները աւելի ջերմեռանդութեամբ կ'ընենք,  
եւ մեծ փափաքով սրբութեան ետեւէ կ'ըլ-  
լանք : Ո՞չ թէ ջանայի աս ճշմարտութիւնը  
միշտ աչքիս առջեւը ունենալ : Տէր դուն  
իս կը տեսնես :

Ուր ոչ հրեան է, ոչ ալ հեթանոսը,  
թլփատութիւնը, ու անթլփատութիւնը,  
բարբարոսը, սկիւթացին, ծառան, աղատը,  
հապա Ք.րիստոս է ամենը՝ եւ ամենուն մէջը:  
Կո՞ւ. Դ. 11:

Առաքեալը կ'ըսէ թէ անոնք որ հին  
մարդը վրաներնուն կը հանեն ու Ք.րիստո-  
սի հետ մէկ կ'ըլլան, իրենց առաջուց ու-  
նեցած աղգային որոշումները ու ատելու-  
թիւնները բոլորովին կը վերնան. որոնց ա-  
մեն մէկուն Ք.րիստոս կ'ըլլայ ամենը եւ ա-  
մենուն մէջը: Ետեն մը հրեայները ինք-  
զինքնին Աստուծոյ սեպհական ժողովուրդը  
կը սեպէին եւ բոլոր ուրիշները կ'ատէին:  
Յոյները իրենց ուսումնականութեանը եւ  
քաղաքավարութեանը վրայ պարծենալով  
բոլոր ուրիշ աղգերը բարբարոս կը կանչէ-  
ին: Խայց հիմա ամեն անոնք, որ Ք.րիս-  
տոսի հոգին կ'ընդունին բոլոր աս որոշում-  
ները կը վերցունեն. Ք.րիստոս անոնց ամե-  
նը եւ ամենուն մէջը կ'ըլլայ, եւ բոլոր Ք.րիս-  
տոսով եղաղները իրարու հետ մէկ եւ իրա-  
րու եղբայրներ կ'ըլլան: Աւ անկէց ետքը

աշխարհիս վրայ մի միայն աս մեծ որոշումը  
կը մնայ , որ Տէր Յիսուս Քրիստոսը իրենց  
Փրկիչը ընդունողներն ու չընդունողները  
իրենց մէջը ունին : Ուշ որ իմ Փրկիչս իմ  
ընկերներուս մէկը կ'ընդունի եւ կը սի-  
րէ , անիկայ ինչ անուն որ ունենայ եւ  
ինչ աղգէ որ ըլլայ ես ալ ընդունելու եւ  
սիրելու եմ : Ուշ որ մէկը կը սիրէ Տէր Յի-  
սուսը եւ անոր կը ծառայէ , ան մարդը իմ  
եղբայրս է :

## 43

Ուշ որ մէկը Քրիստոսի հոգին չունի՝  
անիկայ անորը չէ : Հայությ . 1 . 9 :

Այս հոս մէկ փորձ մը կայ , որով կը ք-  
նակը գիտնալ թէ արդեօք մենք Քրիս-  
տոսինն ենք , ու յաւիտենական կենաց ալ  
ժառանգ : Ուշ որ քրիստոնեայ ենք , ու-  
րեմն նորոգուած ենք Քրիստոսի նմանու-  
թեանը պէս : Ասիկայ թէ քիչ եւ թէ շատ  
ամեն Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն  
ալ ունին . բայց իրաւ է թէ քանի որ աս  
աշխարհիս վրայ ենք մեր ունեցած նմանու-

Թիւնը անկատար է : Ծաէ որ իր Հոգին  
չունինք , անորը չենք : Քրիստոսի Հոգին  
ունենալը ի՞նչ է : Իրեն աշխարհիս վրայ  
եղած ատենները ինչ դիտաւորութիւններ  
դգացումներ ու ջանքեր ուներ : Ինչ էր ան  
Հոգին որ զինքը երկինքէն երկիրս իջեցուց:  
Իր յատուկ փափաքները Աստուծոյ փառ  
քին յայտնուիլը ու մարդոց Հոգիններուն  
փրկուէլը էին : Իր կերակուրը ան էր որ  
զինքը Խրկողին կամքը ըներ եւ անոր գործ  
քը կատարէր : Յաէ . Դ . 34 : Եւ կը պը-  
տրտէր մարդոց մարմիններուն եւ Հոգիննե-  
րուն բարիք ընելու : Գործ . Ճ . 38 : Եւ  
երբոր աս գործերը կ'ընէր կը Հոգնէր եւ  
ցուրտէ ու անօթութենէ ալ նեղութիւն  
կը քաշէր . եւ մինչեւ անդամ իր կեանքը  
տուաւ , որ անանկով Աստուծոյ օրէնքը պա-  
տուէ եւ մեղաւորներուն փրկութեան ճամ-  
բայ մը բանայ : Եւ Հիմա՝ արդեօք ես Քր-  
իստոսի Հոգին ունիմ . արդեօք իմ յատուկ  
փափաքս Աստուծած փառաւորելնէ . կը փա-  
փաքիմ որ իմ ընկերներս փրկուին : Աս-  
տուծոյ փառքին համար որչափ ծանր աշ-  
խատութիւն ըլլայ նէ քաշելու յօժարու-  
թիւն ունիմ : Ծաէ որ աշխատելովս եւ նե-  
ղութիւն քաշելովս պիտի կընամ Հոգիննե-

բուն փրկութեանը միջոց մը ըլլալ, արգեղօք պատրաստ եմ իմ անձս առելով բոլոր աս բաները ընելու:

## 14

Խնչպէս որ մէկ հայր մը իր դժոյիր զաւկըներուն վրայ, անանկ ալ ջէրը կը դժոյիրմէն վախցողներուն վրայ: Այսու. ռ. 13:

Վստուած մեծ էակ մընէ. ինքը սաեղծեց աս աշխարհքը եւ բոլոր միւս աշխարհներն ալ. բոլոր արտրածներուն կեանքը իր ձեռքն է: Հրեշտակներ եւ հրեշտակապետներ իր բոլորահիքը առած են, որոնք միշտ իրեն երկրպագութիւն եւ սպասուածութիւնները կ'ընեն: Վրդ՝ աս մեծ Վստուածը կրնայ այնչափ խօնարհիլ մեր կարօտութիւնները հոգալու համար, որ իր առջեւը մենք որդերու պէս ենք: Վայո՛ թէպէտեւ այսչափ բարձր է, սակայն բոլոր իրմէն վախցողներուն վրայ հայրական գութով կը նոյի: Երբոր տղայ մը ցաւ մը կամ տըրտմութիւն մը կ'ունենայ, կատարեալ վստահութիւնով կը վաղէ իր հօրը կ'երթայ իր

Նեղութիւնները անոր զրուցելու . գիտնա-  
լով թէ անիկայ ցաւակից պիտի ըլլայ եւ  
իրեն մսիթարութիւն մը պիտի տայ : Ա-  
սանկ ալ մենք կընանք բոլոր մեր տրտմու-  
թիւններովը Աստուծոյ երթալ ու ինքը  
Հայրական սիրով պիտի գթայ մեր վրայ  
եւ մեղ մսիթարէ : Տղայ մը թէ որ չարու-  
թիւն մը ընելով պատիժի արժանի ըլլայ,  
իր բարերար Հայրը սիրով ու կարեկցու-  
թիւնով շարժուած անոր պէտք եղած պա-  
տիժը կուտայ : Ասանկ ալ մեր Արկնաւոր  
Հայրը յօժարութիւնով մեղ նեղութեան  
եւ թշուառութեան մ.ջ չ'ձգեր , հապա  
մեր օգուտին Համար մեղ կըչեխէ որ իր  
սրբութեանը մասնակից ըլլանք : Ուէ որ իր  
Հօրը անհնազանդութիւն ընող տղայ մը  
զղջալով երթայ եւ թողութիւն խնդրէ , իր  
Հայրը ուրախ երեսով զինքը կ'ընդունի եւ  
անոր վրայ կ'ուրախանայ : Ասանկ ալ մեր  
Արկնաւոր Հայրը ամեն ապաշխարող եւ  
դարձի եկող մեղաւորները կ'ընդունի :

Որ ինքը ահա աղօթք կ'ընէ : Պարծ .  
թ . 11 :

Աղոս արդեօք առաջ աղօթք չեր ըներ .  
ինք մեզի կ'ըսէ՛ թէ՛ իր օրէնքին պինտ  
ստոյգ կարգին պէս Փարիսեցի կեցեր է :  
Պարծ . 19 . 5 : Փարիսեցիներն իրենց կրօն-  
քին բոլոր արտաքին կանոնները շատ ճշ-  
դութեամբ կը պահէին , եւ յատկապէս շատ  
երկան աղօթքներ կ'ընէին : Բայց հիմա  
Աղոս անանկ կերպով մը աղօթք կ'ընէր ,  
որ առաջուց բնաւ ան կերպովը ըրած չու-  
նէր : Աս իր ըրած աղօթքը խոնարհութիւ-  
նով եւ զղջումով , եւ իրրեւ կորսուած մե-  
ղաւոր մը Տէր Հիսուս Քրիստոսի ապա-  
ւինելով կ'ընէր . բայց առաջ հպարտու-  
թիւնով լեցուն սրտով մը եւ ինքզինքը  
արդար սեպելով աղօթք կ'ընէր : Ան ա-  
ղօթքները Աստուծոյ առջեւը գարշելի էին ,  
բայց հիմա իր աղօթքները լսուեցան եւ ա-  
նոնց պատասխանը ընդունեց : “ Ահա ին-  
քը աղօթք կ'ընէ ” խօսքը կըցուցունէ թէ  
ալ անիկայ արիւնահեղ հալածիչ մը չէ ,  
հապա Քրիստոսի խոնարհ հաւատացեալ :

Ներէն է : Աս խօսքը Աստուծոյ ամեն որ-  
գոցը համար կրնանք ըսել թէ “Ահա ա-  
զօթք կ'ընէ” . այսինքն զղջումով եւ հա-  
ւատքով լեցուն սրտով մը կ'աղօթէ . ինչու  
որ միայն ան տեսակ աղօթքը Աստուծոյ  
ընդունելի է : Ու Տէր Յիսուս Քրիստոսի  
անունով աղօթք կ'ընէ , ինչու որ մի մի-  
այն անոր միջնորդութիւնովը կրնանք Հօրը  
մօտենալ : Ոտէպ աղօթք կ'ընէ , ինչու որ  
Աստուածաշունչին հրամանը աս է , թէ  
“Անդադար աղօթք ըրէք” : Ա. Թէս . Ե . 17 :

## 16

Հապա դուք որ չար էք , ձեր զաւակնե-  
րուն աղէկ ընծայներ տալ դիտէք . որչափ  
աւելի ձեր Հայրը՝ որ երկինքն է , բարի բա-  
ներ պիտի տայ անոնց՝ որ իրմէն կը խնդրեն :  
Անդը . Ե . 11 :

Աստուծոյ մեզի խոնարհիլը շատ զարմա-  
նալի է . կը հրաւիրէ մեզի եւ կը հրամայէ  
որ բոլոր մեր կարօտութիւններովը իրեն  
երթանք , եւ ամեն պէտք եղած օրհնու-

Թիւնները իրմէն խնդրենք : Ի՞սյց ինքը գիտէ թէ մենք թշուառ մեղաւորներս որչափի թերեհաւատ ու վախկոտ ենք, եւ ինքզինքը իբրեւ հայրցուցունելով մեզ կը քաջալերէ : Եւ չար մարդոց իրենց որդոցը վրայ ունեցած զգացումները մեզի օրինակ կը բերէ . որ մենք հաւտանք թէ ինքը որ անանկ բարի է ու սիրով լեցուն, պատրաստ է մեզի բարի բաներ տալու թէ որ իրմէն խնդրենք : Ասկէց աւելի ալ ինչի կարօտ ենք . Աստուծոյ հարստութեանը բոլոր դուռները մեզի բաց են . եւ մենք հրաւիրուած ենք ինչ որ կուզենք խնդրել ու առնել : Կատարեալ վրատահութիւն կրնանք ունենալ թէ Տէրը մեր խնդրած բաները մեզմէ ետ չ'պահեր, երբ կը տեսնայ որ անոնք մեզի ազէկ են : Ինքը շատ աղէկ զիտէ թէ որ բանը մեզի օդտակար է, եւ կը գթայ մեր վրայ ինչպէս որ մէկ հայր մը կը գթայ իր որդոցը վրայ . եւ ամեն բան մեզի տալու ինքը կարողութիւն ունի : Ուրեմն մեր բոլոր փափաքները Վատուծոյ թողունք, եւ ինքզինքնիս իր ձեռքը ձգենք ոչ վախ եւ ոչ հոգ մը ունենալով, ինչու որ իր խօսքը ճշմարիտ է :

Հապա թէ դուք՝ որ չար էք, դիտէք  
աղէկ պարգեւներ տալ ձեր որդոցը, որ  
չափ ալ աւելի ձեր հայրը երկինքէն բա-  
րիքներ<sup>1</sup> կուտայ անոնց, որ իրմէն կը խնդւ-  
րեն։ Դ ու ։ Ճ. ։ 13։

Աւետարանը հոս մեզի կը զբուցէ թէ  
մեր փնտուելու բարիքներուն ամենէն մեծը  
որն է, այսինքն թէ Առւրբ հոգին։ Ասի-  
կայ է փրկութեան ամենէն մեծ շնորհքը  
որ առանց ասոր բնաւ մեղաւոր մը պիտի  
չ'փրկուի։ Ուէ որ Առւրբ հոգին միտքեր-  
նիս չ'լուսաւորէր որ մեղքին չարութիւնը  
տեսնայինք, մենք ինչպէս մեր մեղքերը պի-  
տի ապաշխարէինք։ Ուէ որ Առւրբ հոգին  
մեր կարծրացած սիրտերը չ'խոնարհեցու-  
նէր, մենք մեր Փրկիչը ինչպէս պիտի սի-  
րէինք։ Աւ թէ որ Առւրբ հոգին մեր սիր-

(1) Առ բառով Յանձնաբեն բնագրին Ա-ը  
“Առաջն հոգին” է։

աերուն մէջը բնակելու չ'խոնարհէր, մենք  
հիմա ինչպէս պիտի կրնայինք մեր վրայ ե-  
կած փորձութիւններէն անվտանգ աղատիլ  
եւ Կրիստոսը ուրանալէն ետ կենալ: Ծաէ  
որ Առւրբ Հոգին մեր տկարութիւններուն  
օգնութիւն չ'հասնէր, մենք ինչպէս կրնա-  
յինք մէկ ընդունելի աղօթք մը մատուցա-  
նել: Ծաէ որ Առւրբ Հոգին մեր մխիթա-  
րիչը չըլար, նեղութեան ժամանակնիս ինչ  
բանով կրնայինք մխիթարուիլ: Ծաէ որ  
Առւրբ Հոգին մեզ չ'սրբէր մենք ինչպէս  
կրնայինք մեղքին իշխանութենէն աղատիլ:  
Եւ աս օրհնեալ Հոգին պիտի գայ եւ մեր  
մէջը բնակի, թէ որ զինքը աղօթքով խընդ-  
րենք: Պատուական խոստմունք: Երանի  
թէ ես ամեն օր հաւատքով աղօթելով՝ աս  
խոստմունքին ճշմարտութիւնը փորձով ի-  
մանայի:

Ու մաքսաւորը մէկ կողմը կայներ էր՝  
ու չեր ուղեր աշքը երկինքը վերցունել.  
Հապա իր կուրծքը կը ծեծէր ու կ'ըսէր,

Վատուած՝ ներէ ինծի մեղաւորիս։ Պատ։  
Ժ. 13։

Վահկայ ընդունելի աղօթքի մը օրինակ  
է, որ Վ.րիստոս մեղի տուաւ։ Ինչ էին աս  
աղօթքին նշանաւոր յատկութիւնները։  
Վաղօթող մարդը մեղաւոր էր եւ իր մեղա-  
ւոր ըլլալը իմացեր էր։ Եւ իր յանցաւոք  
ըլլալը այնչափ զգացած էր, որ մինչեւ ան-  
գամ իր աչքերը չէր ուզեր վերցունել։  
Իր մեղքերուն համար տրտմութիւնով լից-  
ուած էր, ինչպէս որ կուրծքը ծեծելէն կը-  
տեսնուի։ Ո՞իպէն ողորմութիւն կըխընդ-  
քէր. ինքը Վատուծմէ բան մը չ'պահանջեց  
իր բարի գործքերուն իրբեւ հատուցում  
մը ըլլալու. չաշխատեցաւ ինքիրմէն ար-  
դարութիւն մը գործելու, հապա ինքզինքը  
Վատուծոյ ողորմութեանը ձգեց. եւ խոս-  
տովանեցաւ թէ միայն մեղաւոր էր, ու  
ասանկ Վատուծոյ գնաց։ Վատուած մեղա-  
ւորները արդարացունելու ճամբայ ունի,  
եւ մաքսաւորը արդարացաւ։ Ո՞եր Փրկիչը  
ասանկ մարդուն վրայով կ'ըսէ, թէ "Վն որ  
ինքզինքը կըխոնարհեցունէ պիտի բարձ-  
բանայ"։ Պատ։ Ժ. 11։

ՃՇմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ  
իմ անունովս ինչ որ ուզէք իմ Հօրմես՝  
կուտայ ձեզի: Յահան. ձ.օ. 23:

Անք մեղաւոր ենք, բայց Աստուած  
սուրբ է. ուրեմն ինչպէս կլնանք իր դի-  
մացը ելլել եւ մեր խնդրուածքները իրեն  
մատուցանել: Աս հարցումէն պիտի սար-  
սափէինք թէ որ բարեկամ մը ունեցած  
չըլլայինք, որուն անունովը կարող ենք Աս-  
տուծոյ երթալ: Ան բարեկամը Աստուծոյ  
սիրելի Որդին է, որուն միշտ Հայրը մտիկ  
կ'ընէ: Կաեւ ան մեր Փրկիչը ու Տէրն է  
եւ մենք իրենն ենք: Ան իր արիւնովը մեղ-  
ծախու առաւ ու մեզի իրենները՝ ու իր բա-  
րեկամները եւ իր եղբայրները կը կանչէ,  
Անդը. ԴԱ. 40: Իրեն հետ ազգակա-  
նութիւն ունենալովեիս, Հայրը մեզ ալ  
կը սիրէ: ՃՇմարիտ է թէ մենք մեզմէ ար-  
ժանաւորութիւն մը չունինք, անով Աս-  
տուծոյ մօտենալու, բայց մենք չենք եր-  
թար ու մեր անունովը Աստուծմէ օրհնու-  
թիւններ խնդրեր, հապա Քրիստոսի ա-  
նունովը կերթանք, որ անոր ունեցած ար-

Ժանաւորութիւնը անհօւն է : Ճշմարիտ է  
թէ Եստուծոյ բարկութեանը արժանի ենք,  
բայց Քրիստոս մեր տեղը անէծք կրեց :  
Աւստի ինչ կարօտութիւն որ ունենանք,  
թէ որ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ եղած  
հաւատքովը երթանք եւ անոր անունովը  
մեր խնդրուածքները Եստուծոյ մատուցա-  
նենք, ամեն պէտք եղած բարիքները պիտի  
ընդունինք : Աս անունը ամենայաղթ է, եւ  
թէ որ անիկայ ճշմարտապէս մեր Փրկիչն  
է, ամեն բան մերն է :

## 20

Եւ առտուանց լրւսցածին պէս ելլալով՝  
ելաւ եւ դնաց անապատ տեղ մը, ու հոն  
աղօթք կ'ըներ : Առջի . 1. . 35 :

Յիսուս երբոր հրապարակաւ քարոզու-  
թիւն ընել սկսեց՝ ասդին անդին կը պտը-  
տէր եւ բարեգործութիւն կ'ըներ, եւ իր բո-  
լոր ժամանակը ասանկով կ'անցունէր ;  
Վարդիկ միշտ իր բոլորտիքը կը ժողվուէ-  
ին իր խօսածները մտիկ ընելու կամ իր  
հրաշքները տեսնելու, կամ իրենց հիւսն-

գութիւններէն բժշկուելու։ Ըստ անդամ  
միայն գիշերը կրնար առանձնանալ. բայց  
աղօթքը չէր կրնար ձգել. ուստի առտու-  
անց շատ կանուխ ելաւ առանձին տեղ մը  
գնաց եւ հոն աղօթքը ըրաւ։ Ենիկայ մեղք  
չուներ խոստովանելու եւ թողութեան կա-  
րօտ չէր, բայց իր ծօրը հետ հաղորդա-  
կցութիւն ունենալը կը սիրէր։ Երդ՝ ան որ  
Քրիստոսի հոգին չունի անորը չէ։ Ո՞ենք  
ու թէ որ ճշմարիտ քրիստոնեայ ենք ա-  
ղօթքը կերակուրէ եւ հանգստութենէ ա-  
ւելի պիտի սիրենք։ Երդեօք մէկը կրնայ  
Եստուած սիրել ու անոր հետ հաղորդա-  
կցութիւն ընելու չ'փափաքիլ։ Կրնա՞լլալ  
որ մէկը իր մեղքերը ապաշխարէ ու անոնք  
Եստուծոյ չ'խոստովանի։ Կրնայ մէկը Քր-  
իստոսի սէրը յարգել ու ինքը չ'փառաբա-  
նել։ Երդեօք կրնայ լլալ որ մէկը իր տկար-  
ութիւնը եւ Եստուծմէ կախում ունենալը  
իմանայ, ու անկէց պաշտպանութիւն չ'խընդ-  
րէ։ Կրնայ մէկը Եստուծոյ խոստմունքնե-  
րուն հաւաալ ու անոր խոստացած օրհնու-  
թիւնները չ'խնդրել։ Երդարեւ թէ որ  
Եստուած աղօթք ընելու արժօնութիւնը  
մեզի չ'տար, մենք թշուառ էակներ պիտի  
ըլլուինք։ (Կհնեալ ըլլայ իր անունը, որ

Հրաման ունինք մեր աղաչանքները իրեն  
մատուցանելու:

## 21

Ու անոր անունը Յիսուս դնես, որ ա-  
նիկայ իր ժողովուրդը իրենց մեղքերէն պի-  
տի խալսէ: Անդը . Ա . 21 :

Երբոր Աստուծոյ որդին մարդոց փըր-  
կութեան գործին ձեռք զարկաւ, իր դիտա-  
ւորութիւնը միայն մեղաց թողութիւն պատ-  
րաստել չէր: Արդարեւ ասիկայ մէկ մեծ  
գործ մըն էր ու յաւիտենական երախտա-  
գիտութեան արժանի, բայց անիկայ ասկէց  
մեծ ուրիշ դիտաւորութիւն մըն ալ ունէր  
թէ որ մարդիկ իրենց յանցանքներուն թո-  
ղութիւն գտնէին ու աակաւին մեղքը սի-  
րէին, իրենց թշուառութենէն պիտի չա-  
զատէին. վասն զի չար սրտով մարդս եր-  
ջանիկ չկրնար ըլլալ, մինչեւ անդամ թէ  
որ Աստուած իր օրէնքին անէծքը վերցու-  
նէ ալ նէ: Բայց Քրիստոս աշխարհք եւ  
կաւ չէ թէ միայն մեզ մեղքին պատիժէն  
խալսելու, հապա նաեւ մեղ անոր իշխաւ-

նութենէն ալ ազատելու : Խր դիտաւորութիւնը բոլոր իրեն եկողներուն սիրտերը մաքրել է, եւ անոնք Աստուծոյ պատկերին պէս նորոգել, ու վերջապէս ամրիծ եւ անարատ անոնք իր թագաւորութեանը տանիլ : Խնքը մեր յանցանքներուն եւ մեղքերուն մէջ մեր անօգնական ըլլալը դիտէ, ու մեղ կը հրաւիրէ իրեն երթալ եւ թողութիւն գտնել . մեր մեղքով հիւանդացած հոգիները իրեն ձգել, ու ինք անոնց հոգեւոր առողջութիւն պիտի տայ : Ա յանիս փաթուած շղթայները կը քակէ, եւ կը հրամայէ մեզի Աստուծոյ որդոցը աղատութիւնովը պտըտիլ : Խնքը մեզի սրբացունող Առւրը Հոգին կուտայ, որ հոգինիս մեղաց ամեն արատներէն մաքրէ : Խնտոր երախտագէտ ըլլալու ենք իրմէն, որ մեզի համար այսքան մեծ բաներ ըրաւ :

Երանի անոնց՝ որ անօթի ու ծարաւ են արդարութեան, ինչու որ անոնք պիտի կշտանան : Անդը . Ե . 6 :

Անօթութեան ու ծարւութեան զգացումները մեր բնութեան ամենէն զօրաւոր զգացումներն են. ու թէ որ անոնց պէտքերը չ'հոգանք կը մարինք եւ կը մեռնինք: Աս բառերը զօրաւոր փափաք ցուցունելու համար Առւրբ գրոց մէջ շատ անդամ կը դործածուին: Քրիստոնեան արդարութեան անօթի ու ծարաւ խօսքին նշանակութիւնը աղեկ կը հասկընայ. շատ անդամ անանկ զօրաւոր սրբութեան փափաք մը կըզգայ որ աշխարհային բաներէն մէկն ալ չ'կրնար անիկայ կշտացունել: Անեղքին չարութիւնը կը տեսնայ ու անոր ինչ զգուելի եւ հոգին կորսնցունող բան ըլլալը կ'իմանայ: Փըրկչին ստորոգելիքները կը տեսնայ ու անոնց գերազանցութեանը վրայ կը զարմանայ. անոր կատարեալ սրբութիւնը կը սիրէ, եւ անոր պատկերին փոխուելու կը փափաքի: Իսայց երբոր իրեն: Վրայ կը նայի ու մեղքով ապականուած ըլլալը կը տեսնայ. երբոր իր տկարութիւնը կ'իմանայ ու իր բարի դիտաւորութիւններուն գէմ շատ անդամ մեղքի մէջ իշնալը կը տեսնայ. գրեթէ կը վախնայ թէ իր փափաքները բնաւ պիտի չըլեցուին, եւ թէ բնաւ կատարեալ սրբութիւն պիտի չ'գտնայ: Աս վիճակին մէջ

Փրկչին աս պատուական խոստմունքը՝ թէ  
“Ե՞նոնք պիտի կշտանան”, կատարեալ յոյս  
եւ միտիթարութիւն է իրեն, թէ աս իր փա-  
փաքները առատօրէն պիտի լեցուին :

## 23

Խնծի տրուած Աստուծոյ շնորհքովը առ  
կ'ըսեմ բոլոր ձեր մէջը եղողներուն, որ ար-  
ժանի եղածը մտմտալէն աւելի բան չ'մրտ-  
մտաք, հապա զգաստ կենալու մտմտացէք  
ինչպէս որ Աստուած ամեն մէկուն բաժ-  
նեց հաւատքին չափը։ Հառաջմ. ձ. Բ. 3:

Առաքեալին զրուցած աս խօսքը ճշմա-  
րիտ խօնարհութեան կատարեալ մէկնու-  
թիւն մը կրնանք սեպել։ Խնդղինքնիս շատ  
քարձր սեպելու չենք, կամ իրօք ինչ որ  
ենք՝ մեր վրայ անկէց եւել համտրում ու-  
նենալու չենք։ Պէտք է որ ինքզինքնիս Աս-  
տուծոյ օրէնքին հետ բաղդատենք, եւ տես-  
նանք թէ ան կատարեալ կշիռովը դատ-  
ուինք նէ ինչ աստիճանի մէջ կ'ըլլանք։  
Պէտք է որ մեր ստացուածքներուն մեր վի-  
ճակին եւ մը ունեցած միտքին վրայ խոր-

Հինք, թէ արդեօք ասոնք մեր արժանաւ-  
ռոր ըլլալուն համար մեզի տրուեր են թէ  
մեր Արկնաւոր Աայրը անոնք մեզի ձրի պար-  
գեւեր է. որով զինքը սիրելու եւ իրեն հը-  
նազանդելու աւելի մեծ պարտաւորութեան  
տակ ինկած ենք: Պէտք է որ խորհինք թէ  
քանի քանի անդամ Աստուծոյ դէմ մե-  
զանչեցինք, ու թէ իր առջեւը ինչ բարք  
ունեցանք: Աներ անձերուն վրայ ունեցած  
համարումնիս պէտք է որ մեր հաւատքին  
չափովը ըլլայ: Աներ ունեցած մեղքերուն  
նայելով արդեօք մեր ըրած ապաշխարու-  
թիւնը բաւական է: Արդեօք մեր Փրկիչը  
իր արժանաւորութեանը չափ կը սիրենք.  
պէտք եղածին պէս Աստուծոյ ճշմարտու-  
թեանը ապաւիներ ենք: Աներ ունեցած քը-  
րիստոնէական զգացումները արդեօք բուն  
մեր սրտերէն առաջ եկած են թէ Առքը  
Նոգիին ներգործութիւնովն են:

Իր անձը արդար սեպողին շատ դժուար կուգայ Առաքեալին աս հրամանը կատարել. բայց Քրիստոսի խօնարհ աշակերտին՝ որ սորված է իր անձին վրայ պէտք եղածէն եւել համարում չունենալ, շատ դիւրին է։ Իր սրտին մեղքերը տւելի աղէկ կ'իմանսյ, քան թէ ուրիշներունը. եւ կը խորհի թէ յիրաւի ուրիշ մէկը երբէք իրեն պէս մեղք գործած չէ։ Երբ որ կը տեսնայ թէ ուրիշները իր ըրածներէն շատ մեծ չարութիւններ կը գործեն, կը խորհի թէ ինք անոնցմէ եւել շնորհքներ ընդունած է, թէ ինքը Աստուծոյ եւ Քրիստոսի վրայ անոնցմէ եւել տեղեկութիւն ունի, եւ հետեւապէս իր գործած յանցանքները անոնց յանցանքներէն մեծ են։ Կը խորհի իր վայլած արտօնութիւններուն վրայ, թէ ինչպէս Առաք Հոգին իրեն հետ աշխատեցաւ ինքը ապաշխարութեան բերելու։ Կը խորհի Աստուծոյ ողորմութեանը ու Քրիստոսի իրեն ցուցուցած սիրոյն վրայ, եւ անանկ կը սեպէ թէ իրեն պէս մեղաւոր չ'կայ։ Կը խորհի թէ մեծ երջանկութիւն պիտի ըլլայ յաւիտենականութեան մէջ ան շնորհքը փառաբանել, որ կարող է իրեն պէս մեծ մեղաւոր մը վրկել։

Այեր անձը Տէրոջը կը սպասէ, մեր օդականը եւ մեր վահանը անիկայէ : Ատուլ .  
19. + 20 :

Հաւատացեալները կը զգան թէ Տէրն  
է գերագոյն բարին՝ կենաց աղբիւրը՝ իրենց  
մեծ ցնծութիւնը՝ իրենց ամենը եւ ամեն-  
ուն մէջը : Կող . Դ . 11 : Ասիկոյ զգալով  
իրենց փափաքները լեցունելու համար աշ-  
խարհային բաներ չեն փնտոներ, հապա Տէր-  
ոջը կը սպասեն : Այեծ փափաքով Աստու-  
ծոյ կը սպասեն, եւ իրենց յոյսը անոր ո-  
ղորմութեանը վրայ է : Իրենց աշքերը միշտ  
անոր վրայ են . ձախորդութեան օրերը համ-  
րերութեամբ իրեն կը սպասեն, մինչեւ որ ա-  
նոր երեսին լըսոր վրանին ծաղէ եւ իրենք ու-  
րախութիւնով լեցունէ . նեղութեան օրերը  
չեն տրտնջար, ինչու որ Տէրոջը ապաւի-  
նած են : Հաւատացեալներուն Տէրոջը ըս-  
պասելով ունեցած քաջալերութիւնները  
“Խաւիթ մեղի կը ցուցունէ, ըսելով “Այեր  
օդնականը եւ մեր վահանը անիկայէ” : Ա-  
նոնք օդնութեան կարօտ են թէ իրենց  
պարտաւորութիւնները կատարելու համար

թէ երբոր նեղութիւններու տակ են եւ  
թէ երբ մահուան շուքին մութ ձորէն պի-  
տի անցնին : « Աաեւ զօրաւոր եւ արթուն  
թշնամիներ ունենալնուն համար պաշտպա-  
նի մը կարօտութիւն ունին . ամեն պէտք  
եղած ատեն իրենց օգնականը Տէրն է . եւ  
թշնամիներնուն ամեն նետերէն իրենք պա-  
հելու համար իրենց վահանը ան է :

## 26

Ես պառկեցայ ու քնացայ , արթնցայ՝ վա-  
սըն զի Տէրը իս պաշտպանեց : Ասոյ . 4 . 5 :

Կ ատերը կան որ կ' արթնան իրենց ան-  
կողիններէն կ' ելնեն ու իրենց ամեն օրուան  
գործքերուն ետեւէն կ' իյնան , եւ ամենեւին  
մաքերնուն չեն անցուներ թէ ամեն բանէն  
առաջ Աստուծոյ դոհութիւն մատուցանե-  
լու պարտաւորութիւն մը ունին : « Դաւիթ  
ասանկ չեր ըներ , իր քնացած ատենը զին-  
քը պահպանող ձեռքը կը ճանչնար եւ զի-  
տէր որ Տէրոջը պահպանութիւնովը նորէն  
արթնցաւ : Վունը մահուան պատկերն է ,  
քնացած ատեննիս մեր բոլրափները ե-

դաճներէն բան մը չենք զգար եւ մեր անձեր-  
ուն ամենեւին չենք կրնար հոգ տանիլ։ Ուէ  
որ հաղարաւոր վտանգներ ալ մեր վրայ դան  
մենք ոչ կ'իմանանք եւ ոչ ալ անոնք մեզ-  
մէ հեռացունելու բան մը կրնանք ընել։  
Կարելի է որ մահը մեղի մօտենայ ու  
մենք չիմանանք։ բայց մէկ աչք մը կայ որ  
ոչ կը մրափիէ ու ոչ ալ կը քնանայ։ Ստով.  
ՃՎ. 4։ Տէրը միշտ մեր քովնէ։ ինչպէս  
մեր արթուն եղած ատենը անանկ ալ մեր  
քնացած ատենը կեանքերնիս կը պահէ։  
Երբոր քնանալու համար կը պառկինք ինք-  
զինքնիս անոր պահպանութեանը յանձ-  
նելու ենք, զիտնալով թէ մեղ ապահով  
պահողը միայն Տէրն է, եւ անատենը խա-  
ղաղութեամբ կրնանք քնանալ։ Եւ երբոր  
գիշերուան քունովը զօրացած առտուանց  
կ'ելլենք ան օրուան գործքերը ընելու,  
պէտք է որ մեր առաջին գործը ըլլայ մեր  
Հմենակարող Պաշտպանին գոհութիւն մա-  
տուցանել։

շիւ պիտի տայ իր անձին համար : Համար  
Ճ.Դ. 12 :

Աստուած մեզ բանական էակներ ստեղծեց  
ու աս բարիքներով լեցուն աշխարհս դրաւ՝  
որ ան բարութիւնները չէ մեր հապա իր  
կամքին պէս գործածենք, ինչու որ օր մը մեզ  
հաշիւի պիտի կանչէ: Ան վերջին օրը մէկն ալ  
պիտի զանց շառնուի : “Անզմէ ամեն մէկը”  
հոն պիտի գտնուի եւ ամեն մարդ իր անձ  
ին համար հաշիւ պիտի տայ : Առ կրնանք  
բարեպաշտ բարեկամներ ունենալ որ մը  
փրկութեանը համար շատ աղօթք ընեն,  
բայց հոն թէ որ մեզի համար աղաչելու ըլլան  
ձայներնին մտիկ ընող չկայ : Առ քը-  
րիստոնեայ վարժապետներ կրնանք ունե-  
նալ, որոնց վրայ վստահութիւն ունենանք.  
բայց հոն անոնք մեզի համար հաշիւ չեն  
կրնար տալ : Առ թէեւ չար ընկերներ մեզ  
մոլորցունեն, եւ կամ մենք կուրութեամք  
գէշ վարժապետներու հետեւինք, սակայն  
հոն մեր անձերուն հաշիւը միայն մենք պիտի  
տանք: Եւ թէպէտ սս աշխարհիս վրայ մեղ-  
աց ճամբաներուն մէջ բազմութեամբ կըքա-  
լենք, սակայն երկնաւոր Կատաւորին առջին  
ամեն մէկերնիս իր անձին համար հաշիւ պի-

տի տայ, իբրեւ թէ բոլոր աշխարհիս վրայ  
մի միայն մեղաւորը ինք էր: Վրդ մեր անձ-  
երուն համար հաշիւ տալու թէ որ առջեւ-  
նիս ասանկ ահեղ օր մը կայ, ուրեմն շատ  
անգամ մտմտալու ենք թէ ան օրուանը  
ինչպէս պիտի պատրաստուինք: Շատ ան-  
գամ պէտք է որ հոգինիս հաշիւի կանչենք,  
ու ան վերջին սոսկալի օրուանը նայելով  
մեր անձերը քննենք:

---

## 28

**Պատուական է Տէրոջը առջին իր սուրբ-  
երուն մահը: Առաջ. Ծ. 15:**

Երբոր քրիստոնեայ մը կը մեռնի շատ  
անգամ անոր մեզմէ զատուելու ն. վրայ կը-  
ցաւինք, եւ անանկ կը տրտմինք եւ կուլանք,  
իբրեւ թէ անակնկալ եւ շատ մեծ թշուառ-  
ութիւն մը գլխունուս եկաւ: Իայց Տէրո-  
ջը առջին անոր մահը պատուական է: Վստ-  
ուած իր փառքին համար անոր մեռնելուն  
բոլոր պարագաները անանկ կերպով մը կը-  
կարդաղըէ որ անիկոյ թէ հրաժարող հոգ-  
ին երջանկութեանը եւ թէ իրմէն ետքը

մնացող քրիստոնէից մեծ օդտին համար  
եղած կ'ըլլայ: Ար հետեւութիւններուն  
նայելով ասիկայ պատռական դիպուած  
մըն է: Տերը բոլոր աս հետեւութիւնները  
առաջուց կը տեսնէ, ու ասոր համար քը-  
րիստոնեայներուն մահը իրեն շատ պատ-  
ռական է: Արբոց մահը իրենց մեղքի հետ  
ունեցած պատերազմը եւ իրենց բոլոր նե-  
ղութիւնները կը վերջացունէ: Եւ իրենք  
կատարեալ երջանկութեան եւ սրբութեան  
վիճակի մը կը փոխէ: Վեկուն մահովը եր-  
կինքը փառաբանութիւն ընողներուն եւ  
Վստուծոյ կամքը կատարողներուն թիւը կ'ե-  
ւելնայ: Վս մահը իր բոլոր հետեւութիւն-  
ներովը մեռնողէն ետքը մնացող քրիստոնեայ  
բարեկամներուն ալ պատռական է: ինչու  
որ ասիկայ անոնց գեղի երկինքը ունեցած  
ճամբորդութեանը մէջ աղէկ առաջ երթա-  
լու, եւ իրենց երկնային ժառանգութեանը  
վրայ եւելք խորհելու ու անոր հասնելու  
փափաքնին եւելնալու պատճառ մը կ'ըլլայ:  
Ուստի սրբոց մահը ինչպէս որ Տէրոջը առ-  
ջին պատռական է, անանկ ալ թող մեղի  
պատռական ըլլայ ու անոր վրայ բնաւ շը-  
տրտմինք:

## ՄԱՐՏ

## 1

Երկու կողմանէ ալ նեղութիւն ունիմ .  
Ելլալու ու ՚Քրիստոսի հետ ըլլալու փափա-  
քիլը եւելօք աղէկ կը սեպեմ : Փէջով. 1. 23:

ՊՈՎՈՍ առաքեալը կըցուցունէ հոսթէ  
երկու բանի կը փափաքի եւ չ'դիտեր թէ  
անոնցմէ որը առաւել ընտրէ : Ռայց աս եր-  
կու բաները ի՞նչ էին, որ մինչեւ անգամ  
առաքեալին միտքը տարակուսանքի մէջ ձը-  
գեցին : Ենոնք մահ եւ կեանք էին . եւ աս  
երկուքին որը ընտրելս չեմ դիտեր՝ կ'ըսէ :  
Վայրելու փափաքը ունէր, որ մարդուս բը-  
նական է . շատ սիրելի բարեկամներ ունէր,  
որոնցմէ զատուիլը քիչ մը դժուարին էր .  
եւ սակայն հրաժարելու փափաք ալ ունէր :  
Ռայց ի՞նչ էր աս փափաքին պատճառը .  
իր դարձի դալէն ետքը կեանքը աշխատու-  
թիւնով ու նեղութիւնով եւ հալածանք

քաշելով անցուցեր էր։ Իր քաշածները եւ  
աշխատութիւնները ։ Կորնթացոց ձ.Ա.  
դլիսուն մէջ կը պատմէ որ անոնց պատճառ-  
ովը կրնար աշխարհէս ելլալու փափա-  
քիլ։ ուրեմն իր հրաժարելու փափաքին  
պատճառը ասիկայ էր, այսինքն թէ ասնե-  
ղութիւններէն ազատի։ Զէ. ինքը կ'ըսէ,  
Վրիստոսի հետ ըլլալու փափաքն էր հր-  
բաժարիլ ուղելուն պատճառը։ Իր Փրկչին  
քովը երթալու եւ անոր պատկերին կեր-  
պարանակից ըլլալու կը ցանկար։ Իր ամե-  
նէն մեծ փափաքը Վրիստոսի հետ ըլլուն էր։

## 2

Ինչու որ ինձի կեանք Վրիստոսն է, ու  
մեռնիլը օգուտ։ Փէլքու. Ե. 21։

Պօղոսի ապրիլ ուղելուն պատճառը  
հոս կը տեսնենք որ Վրիստոսի համար աշ-  
խատիլն է։ Հատ կորսուած մեղաւորներու  
Վրիստոսի անունը եւ սէրը յայտնելու  
դործիք եղաւ։ Եւ ան օրհնեալ զործքին  
մէջ մնալու կը փափաքէր։ Իր Տէրը կը սի-  
րէր, եւ ամեն բանէ եւել կ'ուղէր որ մարդ-

իկ անիկայ ճանչնան անոր անունը պատուեն ու անոր հնազանդին . եւ կրցածին շափ ապրիլ ու Տէրոջը անունը տարածելը իրեն մեծ արտօնութիւն կը սեպէր : Եւ սակայն գիտէր թէ մեռնիլը օդտակար է իրեն . Աստուծոյ խոստմունքներուն վրայ անանկ զօրաւոր հաւատք ունէր որ իր երկնային ժառանգութեանը վրայ երկբայութիւն մը չունէր : Գիտէր թէ երբոր ասաշխարհէս հրաժարի Վրիստոսի քով պիտի երթայ , թէ ալ յաւիտեանս անոր քով պիտի մնայ եւ ալ բնաւ մեղք պիտի չ'զործէ : Պօղոս մեղի պէս կիրքի տակ ինկած մարդ մըն էր . (Յակ . 1 ; 17 .) բայց Տէր Յիսուս Վրիստոսի հաւատարիմ մեկ ծառան էր , եւ իր Տէրոջը հոգիկն շատ ունէր : Արդեօք մենք ալ անոր պէս կրնանք ըսել , թէ Անդի կեանք Վրիստոսն է , ու մեռնիլը օգուտ : Ունէ որ ճշմարիտ քրիստոնեայ ենք պարտաւոր ենք աս բանը գիտեալ եւ միշտ զգալ :

---

Ո՞ւր է ով մահ քու յաղթութիւնդ։  
ո՞ւր է ով գերեզման քու կծելու։ Ա. Առնել.  
Ժ. 55։

Ա մահին կծելու մեղքն է։ մարդ մը եթէ  
դիտնայ թէ արդար եւ բարի Աստուծոյ  
բարկութիւնը շարժելու բան մը չէ ըրեր,  
անոր դիմացը ելլելու պիտի չ' վախնայ։ Ան-  
հը մարդոց այնչափ սոսկալի ցուցունողը մի  
միայն մեռնելու ցաւը չէ, հապա խղճմը-  
տանքը իրենց կ' իմացունէ թէ մեղանչեցին,  
եւ թէ Աստուած բարկացած է իրենց,  
ասոր համար մեռնելէն եւ դատաստանի եր-  
թալէն կը վախնան։ Բայց Հիսուսի հաւա-  
տացողներուն՝ մահը կծել չունի։ Անոնց  
մեղքերը Քրիստոս իր վրան առաւ եւ ա-  
նէծքը անոնց վրայէն վերցուց։ «Քրիս-  
տոս անոնց համար մահ ճաշակեց, եւ անոր  
վախերէն ալ չեն սոսկար։ Ան մութ ձու-  
րին մէջ քալած ժամանակնին Քրիստոս  
անոնց առաջնորդն է, եւ մահը իրենց վրայ  
իշխանութիւն չունի։ Գերեզմանն ալ ի-  
րենց վրայ յաղթութիւն չունի։ իրենց  
մարմինները թէպէտ ատեն մը գերեզմա-

նին մէջը կը պահուին, բայց նորէն յարութիւն պիտի առնեն։ Ապականութիւնով ցանուած մարմինը անապական յարութիւն պիտի առնէ. մահկանացուն անմահութիւն պիտի հագնի։ Գոհութիւն Վատուծոյ, որ Տէր Յիսուս Քրիստոսով մեղի յաղթութիւն կուտայ։

## 4

Ուստի կը համարձակինք՝ եւ եւելօք ալ կ'ուզենք աս մարմինէն ելլալ, ու Վատուծոյ քով մտնալ։ Ը Արքնին. Ե. 8:

Երբոր բարի տղայ մը իր սիրելի ընտանիքն զատուած հեռու դպրատան մը մէջ կը բնակի, անոր միտքը շատ անդամ իր ծընողացը՝ քոյրերուն եւ եղբայրներուն վրայ կը լսայ թէ երբ պիտի երթայ եւ կրկին անոնք տեսնայ։ Ու երբոր իր տուն երթալու ժամանակը կը մօտենայ, ինքը մեծ փափաքով անոր կը սպասէ։ Քնէպէտ դպրատանիք մէջ սիրելի բարեկամներ եւ ընկերներ կ'ունենայ, որոնցմէ զատուիլը իրեն ցաւ է, բայց իր սիրելի ընտանիքը տեսնալու յոյսը

թող կուտայ որ ան ընկերները ձգէ։ Ուէ  
որ ճշմարիտ քրիստոնեայ ենք, երկինքը  
մեր ընակարանն է, եւ քանի որ աս աշ-  
խարհիս մէջն ենք, մեր ընակարանէն շատ  
հեռու ենք։ Աահը մեր երկինաւոր օրմէն  
խրկուած դեսպանի մը պէս կուգայ մեզ  
տուներնիս հրաւիրելու, ինչո՞ւ համար աս  
հրաւէրքէն վախնանք։ Արդարեւ մահը մեզ  
ժամանակ մը մեր սիրելիներէն կը բաժնէ,  
բայց անիկայ չէ՞ որ մեզ երկինքին մէջ մէկ  
օրհնեալ ընկերութեան մը պիտի տանի։  
Ամեն դարի մէջ Քրիստոսի հաւտացող  
բարի մարդիկը հոն են. հոն մեղմէ առաջ  
դացած շատ սիրելի բարեկամներ ունինք,  
եւ մանաւանդ Հիսուս մեր Փրկիչը հոն է։  
Աւստի ալ պիտի չուղե՞նք աս մարմնոյս  
մէջ կենալէն աւելի Տէրոջը հետ ըլլալ։

## 5

Աւսկից որ բոլոր նահապետութիւնները  
երկինքի մէջ ու երկրի վրայ անուն կ'առ-  
նեն։ Եժեւ. գ. 15 :

Հիսուս Քրիստոս Եկեղեցին գլուխն

է, ամեն Ճշխարիտ հաւատացեալներ անոր  
անդամներն են, անոնք ամենը իրենց գըլ-  
խուն հետ սիրով միացած եւ մէկզմէկու  
հետ սիրով կապուած մէկ ընտանիք մըն  
են: Ես ընտանիքին մէկ մասը երկինքն է,  
եւ մէկ մասը աշխարհիս վրան է, անոնք  
երկինքը աշխարհէս բաժնող վարագուրո-  
վը մէկզմէկէ զատուած են, բայց Քրիս-  
տոսով միացած են: Ենով երկինքին մէջ  
եղողները եւ երկրիս վրայ գտնուողները  
մէկ են: Երբոր մահը կուգայ քրիստոնեայ  
բարեկամներնուս մէկը կը տանի, անիկայ  
չկորսուիր, միայն թէ Քրիստոսի Եկեղե-  
ցին աշխարհիս մէջը գտնուող ժողովուր-  
դէն կ'ելայ ու երկինքը եղած ժողովուր-  
դին հետ կը միանայ: Եաւ ակտք չէ որ  
անոր վրայ ողբանիք, ինչու որ անիկայ Քը-  
րիստոսի մէծ ընտանիքովը տակաւին մեղի  
հետ միացած է, ան մեզմէ քիչ մը առաջ  
գնաց, մենք ալ շուտով իրեն քով պիտի  
երթանք: Եւ փրկուածներուն բոլոր ընտա-  
նիքը շուտով հօն պիտի երթան, երգելով  
եւ սրտերնին յաւիտենական ցնծութիւ-  
նով լեցուած:

Հանդստութեան օրը միտքդ բնը՝ անհեկայ սուրբ պահելու համար։ Եւնց. 1. 8 :

Առլոր Աստուծոյ պատուիրանքները ինչպէս որ իր փառքին համար անանկ ալ մեր մեծ օգուտին համար են։ Այն արտօնութիւն մըն է մեղի բոլոր մեր աշխարհային հոգերը եւ դործքերը մէկ դի ձգած, եօմը օրին մէկը մեր երկնաւոր Նօրը եւ Փրկչին հետ հաղորդակցութիւն ընելով անցունել, եւ աղօմքով հոգիներնիս երկինքի յաւիտենական հանդստութեանը համար պատրաստել։ Աստուած գիտեր թէ մարդիկ ինչպէս աշխարհասիրութեան պիտի իյնան, թէ ինչպէս խելքերնին մտքերնին հարստութեան եւ զբօսանաց ետեւէ պիտի ըլլայ, եւ այսպէս Աստուած եւ իրենց անմահ հոգիները պիտի մոռնան, ասոր համար սրբեց եօմը օրերուն մէկը որ անօրը իրեն ծառայեն։ Կայծակներով ու վախերով պատած Ամենալեռնէն աս պատուիրանքը կրկնեց, եւ իր մատովը քարէ տախտակներուն վրայ դրեց, որ չըլլայ թէ մարդիկ երբէք մոռնան։ “Այն սպանաներ” օ-

բէնքը կոտրելը որչափ որ մեղք է, շարաթօ-  
րը սուրբ պահելու օրէնքը կոտրելն ալ Վա-  
տուծոյ առջեւը նոյնչափ մեղք է: Շարաթ  
օրը աշխարհային գործքերով անցունելը  
Վատուծմէ գողութիւնընել է, որովհետեւ  
Շարաթը իրեն օրն է:

## 7

Ուէ որ Շարաթը՝ իմ սուրբ օրս քու  
կամքդ ընելէն ստքդ գարձունես, ու շարա-  
թին քու զուարճութիւնդ, ու Տէրոջը նու-  
իրածին սուրբ ըսես ու անիկայ պատուես.  
Քու Ճամբայներուդ չ'հետեւիս կամքդ չը-  
կատարես ու գէշ խօսք չ'խօսիս, Տէրոջ-  
մով պիտի ուրախանաս եւ քեզ երկրիս  
բարձր տեղերը պիտի հանեմ եւ քեզի հօ-  
քըդ Հակոբինժառանգութիւնը պիտի կեր-  
ցունեմ, քանզի Տէրոջը քերանը խօսեցաւ:  
Եսայ. օ.թ. 13, 14:

Վա տեղս կը սորովինք թէ Վատուած ի՞նչ  
պէս կ'ուղէ որ մենք իր սուրբ օրը պահենք.  
մենք մեր կամքը ընելու եւ մեր հաճու-  
թիւնները կատարելու չենք: Ու նաև աս

օրը Աստուծոյ նուիրելը ծանրութիւն մը ի-  
մանալու չենք . մեր սրտերը պէտք է ա-  
նանկ վիճակի մը մէջ ըլլան, որ Վիրակին  
ուրախութիւն գայ մեղի: Թէ որ բարի որ-  
դիի մը հրաման ըլլայ իր օրական աշխա-  
տութիւնը ժամ մը ձգել ու ան ատենը իր  
իմաստուն եւ բարերար հօրը հետ անուշ  
խօսակցութիւններ ընելով անցունել, ան  
ժամը իրեն շատ հաճելի պիտի գայ: Ա-  
սանկ ալ թէ որ սրտերնիս Աստուծոյ առ-  
ջեւը շիտակ է, իրեն հետ հաղորդակցու-  
թիւն ընելու համար ընտրուած աս օրը մե-  
զի ուրախութիւն տուող օր մը պիտի ըլ-  
լայ: Կ արաթ օրը իրենց գործքերը եւ զու-  
արձութիւնները ձգելով, ուրախ սրտով  
անիկայ Աստուծոյ նուիրողներուն ֆէրը հոս  
յատուկ պարդեւներ կը խոստանայ: Եւ  
Աստուած ինչպէս որ իր ամեն խօստմունք-  
ներուն վրայ անանկ ալ աս խօստմունքին  
վրայ հաւատարիմ է, ու նաեւ աս օրը աւ-  
րողներուն դէմ յատուկ բարկութիւն կը-  
ցուցունէ: Եւ Ճ. Ճ. 17, 18: Երանիթէ  
միշտ Կարաթը իմ հոգիիս սուրբ զուար-  
ճութեան օր մը ըլլար:

Հարաթը մարդուն համար եղաւ, ու չէ  
թէ մարդը շարաթին համար։ Անըն. բ. 27:

Հրեաներուն շարաթը պահելու սովորութեանը նայելով անանկ պիտի կարծէինք թէ առաջ շարաթը ստեղծուեցաւ եւ ետքը շարաթը պատուելու համար մարդիկ ստեղծուեցան : Ինայց անանկ չէ , առաջ մարդս ստեղծուեցաւ եւ ետքը շարաթը իրեն տրուեցաւ որ անիկայ միայն իր օգտին համար գործածէ : Պարզասէր Արարիւը անիկայ իրբեւ գերազանց պարզեւ մը մեր մէծ օգտին համար մեղի տուաւ : Ասիկայ մեղի տրուեցաւ որ մեր մարմինները զօրանալու համար աս անհանդիստ աշխարհիս աշխատանքներէն ու հոգերէն հանդչինք , եւ մեր հոգինները կենդանացունելու համար Աւետարանի մխիթարութիւնները վնտըռունք : Աւստի ինչո՞ւ համար ևս ան օրը ծուլութիւնով յիմարութիւնով եւ խաղով վասնեմ , անիկայ իմ ամենէն շատ աշխատելու եւ հոգեւոր օգուտներ քաղելու օրս է , իմ ամենին սուս և ամենին օգտակար ժամանակ է : Կայ դիմում :

դոց հետ տեսութիւն ընելու երթամու չէ  
թէ աս օրս : Հիմա արտօնութիւն ունիմ  
օրհնութիւններ խնդրելու անկեց, որուն  
շնորհքը կեանք է եւ որուն սէրը կեանքէ  
ալ եւելի, եւ ինչո՞ւ համար աս արտօնու-  
թիւնը զանց ընեմ : Խմ բարերար երկնա-  
ւոր Հայրս իս իրեն մօտենալու եւ իրեն  
հետ հաղորդակցութիւն ընելու եւ իրեն  
Հայրական օրհնութիւնը ընդունելու կր-  
հրաւիրէ, եւ ինչո՞ւ համար ետ քաջուիմ :  
Ես հիմա պատեհութիւն ունիմ իմ միտ-  
քըս ամիսով տալ անապական ժառանգու-  
թիւն մը ստանալու, եւ ինչո՞ւ համար յա-  
ւիտեան խեղճութեան եւ թշուառութեան  
մէջ մնամ : Ենմահ պատիւններ գտնելու  
պատեհութիւն ունիմ, ինչո՞ւ համար ձեռ-  
քէս փախցունեմ : Ուէ որ մարմնաւոր բա-  
ներու մէջ ասանկ պատեհութիւնները ձեռ-  
քէս փախցունեմ, մարդիկ ինծի յիմար  
պիտի կանչեն . եւ արդեօք յաւիտենական  
բաները մարմնաւոր բաներու չափ օգտա-  
կար չե՞ն, այս՝ եւ անկեց ալ աւելի : (Օրհ-  
նեալ է Եստուած որ ինծի համար շաբա-  
թը հաստատեց, եւ կրնամ անիկայ յաւի-  
տենական օգտիս համար գործածել :

Իրենց ժողովարաններէն ձեզ պիտի  
դռւրս հանեն . ու ժամանակ ալ պիտի դայ՝  
որ ամեն ով որ ձեզ մեռցունէ , անանկ պի-  
տի սեպէ որ՝ Աստուծոյ պաշտօն կը մա-  
տուցանէ : Է՞սթէ . Ժ.Օ. Զ:

Վրիստոսի իր աշակերտաներուն ըրած  
խոստմունքները սուտ կրօնքներ հաստա-  
տող մարդոց իրենց հետեւողներուն ըրած  
խոստմունքներէն որչափ տարբեր են : Ա-  
նոնք հարստութիւն կամ պատիւ կամ զօ-  
րութիւն եւ կամ մարմնաւոր հեշտութիւն-  
ներ կը խոստանան , բայց Վրիստոս ատե-  
լութիւն հալածմունք եւ մահ ալ կը-  
խոստանայ : Աներ Փրկիչը աս խօսքերը զը-  
րուցած ժամանակը բանտարգուելու ծա-  
ղը ըլլալու ծեծուելու եւ անարդ մահ-  
ուամը մը մեռնելու վրայ էր : Խմացուց իր  
աշակերտներուն որ իրենք ալ ասանկ բա-  
ներու ենթակայ պիտի ըլլան , եւ իր խօս-  
քերը ճշմարիտ ելան : Արդարեւ անոնք  
զօրաւոր եւ չար մարդիկներէն շատ ատե-  
լութիւններ՝ արհամարհանք եւ անդժու-  
թիւններ քաշեցին . եւ սակայն հաւատք-

Ներնուն վրայ հաստատ կեցան, եւ իրենց  
թիւը կը շատնար: Ասիկայ աշխարհիս մար-  
դոց առջեւը զարմանալի բան մըն էր: Խեղձ  
ու անարգուած՝ Աաղովրեցին մեսցուցին,  
եւ իրեն հետեւողները կ'ատէին ու կը հա-  
լածէին, բայց անոնք ալ կը շատնային: Ա. Հ-  
խարհիս մէջ դանուող թագաւորութիւն-  
ներուն ամենէն զօրաւորը իր բոլոր կարող-  
ութիւնովը քրիստոնէութեան դէմ կե-  
ցաւ, բայց չ'կըցաւ անիկայ յաղթել: Ա. Ս  
տարօրինակ բանը ինտո՞ր հասկընալու է.  
ան անարգուած՝ Աաղովրեցին Աստուծոյ  
Որդին էր, եւ այնչափ զօրաւոր՝ որ երկիր  
եւ դժոխք զինքը յաղթահարելու կարող  
չէին:

## 10

Վեղի դէմ շինուած զէնքերէն բնաւ մէ-  
կը պիտի չ'յաջողի, եւ քու վրադ դատաս-  
տանի ելլող ամեն լեզու պիտի դատապար-  
տուի, Տէրոջը ծառայներուն ժառանգու-  
թիւնը ասիկայ է, ու իրենց արդարութիւ-  
նը ինձմէ է կ'ըսէ Տէրը: Եսայ. օ՛Դ. 17:

Ա. Ս Խօնքերը՝ որ մարդարէն Աստուծոյ

Ժողովուրդին համար խօսեցաւ, մարդոց  
առջեւը գրեթէ միշտ անկարելի երեւցան։  
Վանդի Աստուծոյ ժողովուրդը միւսնե-  
րուն հետ բաղդատելով ամեն ատեն քիչ-  
ուոր եւ տկար էին, ու իրենց թշնամինե-  
րը զօրաւոր։ Հատ անդամ “Երկրի թա-  
գաւորները ինքզինքնին հաստատեցին եւ  
իշխանները իրարու հետ խորհուրդ ըրին”  
որ անոնք երկրիս երեսէն բնաջինջ ընեն։  
Դայց սակայն Աստուծոյ խոստմունքը ճըշ-  
մարիտ ելաւ, եւ անոնց դէմ շինուած զէնք-  
երէն բնաւ մէկը չ'յաջողեցաւ։ Իրենց  
քաշած ան սոսկալի հալածանքները միշտ  
հաւատքնին եւ վրանին եղած Աստուծոյ  
շնորհքը աւելի յայտնի ցուցուցին, որով  
տեսնողներն ալ համոզուեցան թէ Տէրը  
անոնց հետ էր։ Այսպէս ուրիշներն ալ հա-  
ւատքի եկան եւ իրենց համրանքը եւել-  
ցաւ ան նոյն միջոցով, որով կը ջանային ի-  
րենք կորսնցունելու։ Խւ միշտ ասանկ պի-  
տի ըլլայ։ Տէրը թշնամիներուն բոլոր ջան-  
քերէն իր ժողովուրդը պիտի պաշտպանէ։  
Աստուծոյ ընտրեալ ժողովրդոցը մէջ դըտ-  
նուիլը մէծ երանութիւն է։ Խմ ժառանգ-  
ութիւնս հիմա ալ ու յաւիտեան անոնց  
հետ թող ըլլայ։

Երկինքը ձայն մը եղաւ որ կ'ըսէր, բոլոր աշխարհին թագաւորութիւնը մեր Տէրոջը ու իր Հիսուս Քրիստոսինը եղաւ, եւ ինքը պիտի թագաւորէ ամենուն վրայ յափտեանս յաւիտենից: Հայոց մ.թ. 15:

Աս աշխարհքը՝ Աստուած ստեղծեց եւ անոր ամեն բնակիչները պէտք է որ անոր հնազանդին: Ի՞նչ մարդիկ անոր դէմ ապրատամբեցան. | Աստուծոյ Որդին աշխարհք եկաւ եւ անոնք փրկելու համար մեռաւ, բայց տակաւին մեղքերնին չ'ձգեցին եւ իրեն չ'հնազանդեցան: Աշխարհիս մեծ մասը մինչեւ անգամ իր անունը լսած չէ, եւ իրեն վրայօք լսողներէն շատերը ինքը կ'ատեն, ու մինչեւ անգամ իրեն վրայ հաւատք ունենալ խօստովանողներէն շատքիւրը գործքով եւ ճշմարտութեամբ իւրեն կը հետեւին: Ի՞նչ միշտ ասանկ պիտի չ'մնայ, քանզի ահա ան ժամանակը կուգայ որ ատեն հեթանոսները իրենց կուռքերը խլուրդներուն եւ ջղջիկներուն պիտի նետեն, (Եսայ. 1. 20.) եւ բոլոր աշխարհք Տէրոջը փառքովը պիտի լեցուի. (Թագ. մ.թ.

21.) Տերը խոստացաւ եւ անշուշտ պիտի  
կատարէ: Բայց իր խորհուրդները մարդ-  
իկներուն միջոցով կը կատարէ: Վեետա-  
րանը բոլոր աղքերուն պիտի քարոզուի.  
աս փառաւոր գործը կատարելու մէջ ա-  
մեննիս ալ բաժին ունինք: Պէտք է որ  
Քրիստոսի հետ գործակից ըլլանք ու բո-  
լոր մարդիկ իր թագաւորութեանը առաջ-  
նորդելու աշխատինք: Եւ պէտք է որ միշտ  
աղօթքը ընենք ըսելով, “Քու թագաւոր-  
ութիւնդ դայ”:

---

## 12

Բայց անոր համար ողորմութիւն գտայ,  
որ պինտ առաջ Հիսուս Քրիստոս իմ վր-  
բաս ցուցունէ բոլոր համբերութիւնը, օրի-  
նակ ըլլալու անոնց որ պիտի հաւտային իւ-  
րեն՝ յաւիտենական կեանքին համար: Ա.  
Տէմ. ւ. 16:

Տարսոնացի Աօղոսը Քրիստոսի աշա-  
կերտներուն դառն եւ զօրաւոր մէկ թշնաւ-  
մին էր, որ անոնք մինչեւ անդամ մահու-  
չափ կը հալածէր: Բայց Քրիստոս աս

թշնամին ի՞նչ ըրաւ. ինքը կրնար անիշ-  
կայ թող տալ որ իր մեղքերուն մէջը մեռ-  
նի ու յաւիտեան կորսուի, բայց անանկ  
չըրաւ. հապա մեղաւոր ըլլալը իրեն իմա-  
ցունելով իրմէն ողորմութիւն խնդրել  
տուաւ, ու ան ատենը բոլոր իր մեղքերուն  
թողութիւն շնորհեց: Ասիկայ անանկ մեկ  
զարմանալի գթութիւն մըն է, որ բնաւ  
ուրիշ էակ մը կարող չէ ցուցունել: Աս  
ողորմութիւնը որ Սողոսին եղաւ, Քրիս-  
տոսի ամենակարող շնորհացը յայտնի վը-  
կայութիւնն էր թէ ան դարին մարդոցը եւ  
թէ մինչեւ աշխարհիս վերջը դալու բոլոր  
մարդիկներուն, ու նաեւ պատճառ մը պի-  
տի ըլլայ որ երկինքին մէջը յաւիտեան  
Աստուծոյ փառարանութեան երգեր կար-  
դացուին: Աս օրինակը ամեն դարերու մե-  
ղաւորներուն քաջալերութիւն տուաւ. Քը-  
րիստոսի ողորմութեանը տպաւինելու, ա-  
սիկայ կը ցուցունէ թէ Քրիստոս մեղա-  
ւորներուն դլուխը անգամ կրնայ փրկել:  
Աաեւ կը ցուցունէ մեղի իր շնորհքին ա-  
մենակարող զօրութիւնը որ ասանկ թշնա-  
մի մը կրնայ խօնարհ աշակերտի մը փոխել:  
Աս օրինակը պէտք է որ մեզ Քրիստո-  
սի բոլոր հակառակորդներուն համար ա-

Դոթք ընելու առաջնորդէ . քանզի ան որ  
Տարածնացի Աօղոսին սիրտը փոխեց , կըր-  
նայ հիմա ալ բոլոր իր ամբարտաւան թշ-  
նամիները յաղթել :

## 13

Գիտենք որ երր անիկայ յայտնուի ա-  
նոր պէս պիտի ըլլանք . վասն զի անիկայ  
պիտի տեսնանք ինչպէս որ է : Ա. Յովել, Վ. Զ:

Քրիստոնէին աչքին առջեւը փառա-  
ւոր բաներ կան , որոնք հաւատքին աչքովը  
յայտնի կը տեսնէ , եւ որոնց մէջ անստու-  
գութիւն չ'կայ : Աս աշխարհիս մէջ ամեն  
գալիքներն անստոյդ են . հաստատուն յոյ-  
սեր եւ եռանգուն փափաքներ կ'ունենանք ,  
սակայն հաղարաւոր անակնկալ դիպուած-  
ներ կը հանդիպին եւ յոյսերնուս հասնելէն  
մեզ կ'արդիլն : Իսյց քրիստոնէից երկ-  
նային ժառանգութիւնը ասանկ չէ . առա-  
քեալը կ'ըսէ , թէ գէտէնք . չէ թէ լոկ կը-  
հաւատնք կամ լոկ կը յուսանք , հապա  
գէտէնք : Անը երկնային ժառանգութեա-  
նը վերաբերեալ քանի մը բաներ կան որ

չենք դիտեր եւ քանի որ աս մարմնոյս մէջն  
ենք չենք կրնար դիտնալ . չենք կրնար դիտ-  
նալ թէ հոն ինտոր եւ որչափ երջանիկ պի-  
տի ըլլանք . բայց դիտենք որ Քրիստոսի  
նման պիտի ըլլանք : Խսիկայ պիտի ըլլայ  
քրիստոնէից ամենէն հաստատուն յոյսե-  
րուն կատարելութիւնը : Հոս մեղքը քրիս-  
տոնէին մէծ նեղութիւնն է, բայց երկին-  
քին մէջ իր Փրկչին նման առանց մեղաց  
եւ կատարեալ սուրբ պիտի ըլլայ . մենք  
պիտի տեսնենք զինքը ինչպէս որ է : Հոս  
Քրիստոսի ստորոգելեացը վրայ ունեցած  
դաղափարնիս անկատար են, եւ մեղքերնիս  
շատ անգամ ամպի պէս զինքը աչքերնուս  
կը ծածկեն . բայց հոն անանկ չէ : Իր քո-  
վը պիտի երթանք, պիտի տեսնենք զինքը  
ինչպէս որ է, եւ իրեն նման պիտի ըլլանք :  
Երկինքին մէջը մեր ունենալու երջանկու-  
թիւնը ասիկայ է :

Եւ ամեն ով որ աս յոյսը իր անձին մէ-  
ջը ունի՝ ինքզինքը կը մաքրէ, ինչպէս որ ա-  
նիկայ մաքուր է : Ա. Հովհաննես. Գ. Յ. Յ.

Անոնք որ երկինքը երթալու յոյս ունին, պէտք է որ ան սուրբ տեղին ընկերութեանը մէջ մտնելու պատրաստութիւն տեսնեն: Ուէ որ մէկը կ'ուզէ եւ կը յուսայ իր թագաւորին առջեւը ելլալ եւ անոր բոլորտիքը առած ընկերութեանը մէջ մտնել, կ'աշխատի ինքզինքը անոնց վարքին նմանցունել որ անոնց աչքին հաճելի երեւնայ: Ալ ո՞րչափ առաւել պարտաւոր ենք Ռուտուծոյ աչքին հաճելի վարք մը ունենալ թէ որ յոյս ունինք իր աթոռին բոլորտիքը եղող ընկերութեանը հետ խառնուելու: Առաքեալը կ'ըսէ թէ քրիստոնէին յոյսին արդիւնքը աս պիտի ըլլայ: Ուէ որ Հիսուսը տեսնելու եւ ասկէց ետեւ անոր նման ըլլալու կը սպասենք, հիմակուընէ իւրեն նման ըլլալու աշխատելու ենք: Ուէ որ կը յուսանք յաւիտեան ան աշխարհին մէջ ապրիլ ուր որ մեղք չ'մտնար, չենք կրնար հոս մեղքը սիրել: Ուէ որ մէկը մեռնելէն ետեւ երկինքը երթալու կը յուսայ, ու տակաւին մեղքը կը սիրէ եւ սրտի ու էենաց մաքրութիւն չունի, ան մարդուն յոյսը ոչինչ է: Խնքը կը ցուցունէ թէ բնաւ նորէն ծնած չէ, եւ քրիստոս անանկ մարդուն համար կ'ըսէ թէ չ'կրնար Աստուծոյ

թագաւորութիւնը տեսնել։ «Քրիստոնէին յուսացած բաներուն վրայ որչափ որ մտածենք, եւ երկինքի երջանկութիւններուն ինչ ըլալը որչափ որ իմանանք, այնչափ առաւել ասոնց զօրութիւնովը սրտով պիտի մաքրուինք։

## 15

Օրհնեալ է Աստուած՝ ու մեր Տէր Յիսուս Քրիստոսի այրը, գթութիւններուն այրը եւ ամեն միաիթարութեան Աստուածը։ Ի կողնեւ, Ե. Յ. :

Աւաքեալը հոս Աստուածոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի օրը մէկ քանի գեղեցիկ յատկութիւնները կը ցուցունէ։ Անիկայ իր Արդին մեր մեղացը համար մեռնելու տուառ որ իրմով փրկութիւն գտնանք։ Անիկայ գթութիւններուն այրն է։ մեր կեանիքերը անոր գթութիւններովը լեցուն են։ մենք մահուան արժանի ենք, բայց տակաւին կենդանութիւն կը վայելենք։ Առողջութիւն՝ բարեկամներ՝ հանգիստ բնակարան՝ կերակուր ու հանգերձ ունինք, թէ-

պէտեւ մեր մեղքերովը միայն յաւիտենական թշուառութեան արժանի ենք . ասոնց , մէ զատ ալ մեր աչքերուն առջեւը յաւիտենական կենաց յոյսերը ունինք : Իոլոր աս օրհնութիւնները , որոնց մէկուն ալ արժանաւորութիւն չունինք , Աստուծմէ զըթութիւններուն Հօրմէն են . անիկայ ամեն մխիթարութիւններուն Հայրն է : Վարդիկ պարապ տեղը առանց Աստուծց ինչ եւից բանի մէջ ճշմարիտ երջանկութիւն կրփիստուեն : Են է մեր վայլած օրհնութիւններուն երջանկութիւն տալու զօրութիւն տուողը , ան է մեր հոգինները բարութիւնով կշտացունողը : Փորձութեան եւնեղութեան մէջ անիկայ միայն կրնայ սրտերնիս մխիթարել . ան կրնայ վերցունել մեղսաւեց խղճմառնեքին խայթոցը եւ մեր մեղքերուն թողութիւն տալով սրտերնիս ուրախութիւնով լեցունել : “ Ենոր ցռւողը ու դաւաղանը մահուան շուքին մէջը մեղ պիտի մխիթարեն ” եւ ինքը յաւիտեան մեր բաժինը պիտի ըլլայ :

Ան մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, եւ մեր անօրէնութիւններուն համար պատժուեցաւ. մեր խաղաղութեան պատիժը անոր վրայ եղաւ, եւ իր վէրքերովը մենք բժշկուեցանք: Եսայ . օգ. . 5:

Ան երեւելի մարդարէութիւնը որուն մէկ մասն է ասիկայ, Քրիստոսի աշխարհք գալէն քանի մը հարիւր տարի առաջ գըրուեցաւ, բայց ան դիպուածը ըլլալէն ետեւ զրուած պատմութեան մը պէս անոր չարչարանքները եւ մահը կատարեալ կը ստորագրէ: Անրդարէն աս տեղս Քրիստոսի քաշած չարչարանքներուն պատճառն ալ կը պատմէ: Անիկայ յանցանք չուներ, ու օրը սիրելի որդին էր. եւ սակայն “ Տէրը կամեցաւ անիկայ հարուածքի ու ցաւոց մատնել ”: Եսայ . օգ. . 10: Անդաւորններուն տեղը անցաւ մեր անօրէնութիւնները կը բեց, եւ աս պատճառաւ չարչարուեցաւ ու մեռաւ: Անը վրայ նայեցաւ որ մեղքի եւ թշուառութեան մէջ թաղուած ենք, եւ իր գութը շարժեցաւ. ինքզինքը մեզի համար փրկանք մատուց, եւ “ Տէրը ամենուս մեղքը

անոր վրայ դրաւ” : Եշտայ . օգ . 6 : Ո՛չ  
ասիկայ ինչ մեծ սէր եւ ողորմութիւն է ,  
մենք իրեն ինտոր սէր եւ երախտագիտու-  
թիւն ցուցունելու ենք : Անոր դէմ մե-  
ղանչեցինք , ու մեր անձերը կործանումի  
մէջ ձգեցինք , եւ յաւիտենական մահուան  
անէծը մեր վրայ բերինք , բայց ինքը ձեռք  
զարկաւ մեր փրկութեանը : Գիտէր որ մեր  
փրկանքին գինը իր արիւնը պիտի ըլլայ ,  
բայց ետ չ'կեցաւ . իր սէրը զինքը յառաջ  
վարեց , մեր տեղը չարչարանք քաշեց որ  
մենք ապրինք : Արդարեւ հիմա իրեն հա-  
մար եւ միայն իրեն համար ապրելու ենք ,  
թէպէտեւ դէպի իրեն ունեցած երախտա-  
գիտութեան պարտաւորութիւններնիս վր-  
չարելու կարող չենք :

## 17

Վարմնաւոր խորհուրդը Աստուծոյ դէմ  
թշնամութիւն է : Հառով . թ . 7 :

Վարմնաւոր խորհուրդը սիրտն է իր  
բնական վիճակին մէջ , որ Աստուծոյ հո-  
գիով նորոգուած չէ : Ուրեմն առաքեալը

կըհաստատէ թէ ամեն չնորոգուած սիրտեր .  
 Վստուծոյ դէմ թշնամի են . ասանկ ալ  
 նաեւ յայտնի շարութիւն ընողները եւ  
 անառակները , ու ամեն մարմնաւոր խոր-  
 հուրդներ ունեցողները : Արդ մը շատքաղ-  
 ցըր եւ իր ընկերներուն բարի օրինակ կր-  
 նայ ըլլալ , բայց մէնչեւ որ Քրիստոս Հի-  
 սուսով նոր ստեղծուած մը չըլլայ Վստուծոյ  
 թշնամին է : Սուրբ Հոգիէն շարժուած ա-  
 ռաքեալին մարդոց համար տուած վկայու-  
 թիւնը աս է : Եւ թէ մեր վրայ թէ ուրիշնե-  
 րուն վրայ եղած փորձներէն աս վկայութեան  
 ճշմարիտ ըլլալը արդեօք մենք ալ իմացած  
 ենք , այս՝ անշուշտ իմացեր ենք : Խշնամու-  
 թիւնէն զատ ուրիշ ի՞նչ բան կայ որ պատճառ  
 կ'ըլլայ մարդուս Վստուած բոլորովին մոռ-  
 նալու , եւ ամեն օր այսչափ օրհնութիւն-  
 ներ ընդունելու առանց մէկ երախտագի-  
 տութիւն մը զգալով , եւ մեղի կենաց առաջ-  
 նորդ ըլլալու համար տրուած ան Սուրբ  
 Քիրքը զանց ընելու , ու միշտ իր հրամաննե-  
 րուն չնազանդելու , իրեն դէմ անխիղջ մեղք  
 գործելու , եւ բոլորովին անհոգ ըլլալու ան  
 սիրոյն վրայ որ մեղի ցուցուց իր Որդին մե-  
 ղաւորիներուն համար մեռնելու տակովը :  
 Եթաքեւ զարմանալ : Քո ի՞ւ առ իս ու

Քը ըսելը "Յօհէոր մէկ մարդ մը նորէն չծնի  
չ'կրնար Աստուծոյ թագաւորութիւնը տես-  
նալ" : ԸստՀ. Գ. Յ. Յ. :

## 18

Յօհէ որ ձեզմէ երկուք միաբանին երկրի  
վրայ՝ ամեն ինչ բանի համար, ինչ որ խնդ-  
րեն պիտի ըլլայ անոնց իմ հօրմէս՝ որ եր-  
կինքն է, Անտիկ. Ժ. Բ. 19:

Աստուած մեղ ընկերական ստեղծեց, ըն-  
կերութիւնով մեր ամեն երջանկութիւննե-  
րը կ'եւելնան : Յօհէ որ Աստուած կը սիրենք  
աւրիշ զինքը սիրողներու հետ իր փառքերուն  
վրայօք խօսակցիլը մեզի զուարձալի կուգայ :  
Յօհէ որ աղօթք ընել կըսիրենք, աս պարա-  
աւորութիւնը ուրիշներուն հետ մէկտեղ  
կատարելն ալ պիտի սիրենք : Յօհէ որ մէկ  
օրհնութեան մը հասնելու փափաքներ ու-  
նինք, ուրիշներուն ալ նոյն փափաքները  
ունենալը տեսնալով կուրախանանք, եւ կը-  
սիրենք միաբանութեամբ ան փափաքնիս  
անոր մատուցանել, որ ինքը միայն կարող  
է անոնք լեցունել : Ընկերական միաբանու-

թեամբ մատուցուած աղօթքը Ք.րիստոսի  
չէ թէ միայն հաճելի է, հապա յատուկ  
խոստմունք ըրաւ երբոր երկու հոգի մէկ  
տեղ աղօթք ընեն : Աստուածաշունչին մէջ  
միաբան աղօթքներու եւ անոնց տրուած  
բարեշնորհ պատասխաններու շատ օրինակ-  
ներ ունինք : Երբոր Առորք Հոգին Պէտ-  
տէկոստէին օրը աշակերտներուն վրայի-  
ջաւ, անոնք ամենը միաբան աղօթք կ'ընե-  
ին : Երբոր Հերովդէս բանտարգեց Պէտ-  
րոսի, Եկեղեցին իրեն համար անդադար  
աղօթք կ'ըներ, եւ երբոր շատերը մէկտեղ  
եկան աղօթք ընելու, անիկայ հրեշտակին  
ձեռքովը ազատուած մէջերնին եկաւ : Ք.ա-  
նի որ աս շարութիւններու մէջ թաղուած  
աշխարհիս վրայ ենք շատ օրհնութիւն-  
ներ ունինք Աստուծմէ խնդրելու : Աւստի-  
թող քրիստոնեայները աս օրհնութիւն-  
ները Աստուծմէ խնդրելու միաբանին, եւ  
թէ որ պէտք եղածին պէս խնդրեն Ք.ր-  
իստոսի աս խոստմունքին ճշմարիտ ուսու-  
լը պիտի տեսնեն :

Եշ Աամուել անոր ամեն բան ըստ եւ  
անկէց բան մը չ'ծածկեց։ Ու ան ըստ, ա-  
նիկայ Տէրն է, թող ընէ ինչ որ աչքին  
բարի կ'երեւնայ։ Ե. Թագ. Գ. 18։

Այս մարդը որուն որ Աամուել խօսեցաւ  
Նեղին Վահանապետն էր։ Աամուելին  
ձեռքովը Նեղիին եկած պատգամը ահար-  
կու պատգամ մըն էր, որ իրենց մեղքեր-  
ուն համար իր տանը վրայ գալու սաստիկ  
պատիժները կ'իմացունէր։ Երբոր ասիկայ  
Նեղիին ականջը հաստ անիկայ դէմ չը-  
կեցաւ, դիտէր որ Տէրոջը խօսքն էր ան,  
ու ըստ թող ընէ ինչ որ աչքին բարի կ'ե-  
րեւնայ։ Նեղիին հնազանդութեան հոգին  
մեղի աղէկ օրինակ մըն է. անիկայ Աստու-  
ծոյ որդիներուն անոր նախախնամութեա-  
նը բոլոր տնօրէնութիւններուն ցուցուցած  
հնազանդութիւնն է։ Երբոր նեղութիւն-  
ննը եւ տառապանք գլխունուս կուգան,  
դիտենք որ դիպուածով չեն հապա Աստու-  
ծոյ տնօրէնութիւնովը, եւ իրմէն եկած ըլ-  
լալնուն համար յօժարութեամբ հնազան-  
դելու ենք։ Աստուծմէ ինչ որ գայ բա-

ըի է, որովհետեւ ինքը իմաստուն՝ հզօր եւ  
բարի է, անոր համար անիրաւ բան մը չը-  
ներ: Ուշ որ փորձանքի մէջ դժկամակու-  
թիւն ցուցունենք, մեր կամքը Աստուծոյ  
կամքին դէմ հանած եւ ինքինքնիս իրմէն  
իմաստուն սեպած կ'ըլլանք: Բայց յատ-  
կապէս մեղաւոր ըլլալնուս համար հան-  
դարտութեամբ Աստուծոյ հնազանդելու  
ենք: Աստուծոյ աս կեանքերնուս մէջը մեզի  
խրկած տրտմութիւնները միշտ մեր արժա-  
նի եղածէն քիչ են: Ուշ որ աշխարհիս  
վրայ մեր ունեցած բարութիւնները մեզմէ  
առնէ ու Աւետարանին պարզեւները տա-  
կաւին վայելենք, պարտաւոր ենք իր ողոր-  
մութիւնը բարձրաձայն փառաբանելու:

## 20

Դուն ատ բանին մէջը մասն ու բաժին  
չունիս, ինչու որ քու սիրտդ Աստուծոյ առ-  
ջեւը շիտակ չէ: Գործ. 1. 21:

Աս խօսքերը Պետրոս Ախմոն մոդին զր-  
բուցեց. Ախմոն Ծխուս Քրիստոսի հա-  
ւատքը դաւանեցաւ. առաքեալները մկր-

տեղին զինքը եւ իրենց ձեռքով եղածնը՝  
շանները ու հրաշքները տեսնալով անոնց  
հետ կը պտըտէր։ Վրիստոսի վրայ ճշմա-  
րիտ հաւատք ունեցող կ'երեւար մարդոց,  
որոնք միայն արտաքին երեւոյթքին կը նա-  
յին. բայց երբոր իր շահախնդրութեանը  
վերաբերեալ բան գտաւ, անատենը յայտ-  
նի եղաւ իր բնաւորութիւնը։ Յուցուց թէ  
արծաթսիրութիւնը դեռ կը թագաւորէր իր  
սրտին մէջ, եւ թէ շատ նուաստ ու անարգ  
խորհուրդներ ունէր Աստուծոյ շնորհացը  
վրայ. թէ ուղիղ հոգեւոր իմացումներ չու-  
նէր, թէ ան բանին մէջ մասն ու բաժին  
չունէր։ Աս պատմութիւնը մեզի շատ օգ-  
տակար բաներ կը սորվեցունէ. ասկէց կը-  
սորվինք թէ մկրտութիւնով եւ տեսանե-  
լի եկեղեցիին հետ կապուելով փրկութիւն  
ըռլար. ինչու որ Ախմօն մկրտուեցաւ ա-  
ռաքեալներուն մէկէն, եւ սակայն “Աղջի  
լեղութեան եւ անիրաւութեան կապերու  
մէջ” էր։ Կատ պատճառներ կան որոնց  
համար մարդիկ ինքզինքնին քրիստոնեայ  
կը կոչեն. եւ քրիստոնէի մը արտաքին ե-  
րեւոյթքը երկան ատեն կրնան պահել.  
Բայց թէ կանուխ եւ թէ ուշ իրենց ճշմա-  
րիտ բնաւորութիւնը կը յայտնուի։ Աստ

ուած չեն կրնար խաբել ինչու որ ան սիրտ  
երը կընայի . եւ թէ որ սրտերնին իր առ-  
ջեւը շիտակ չէ , ան մարդիկը մասն ու բա-  
ժին չունին ան բանին մէջ :

---

## 21

Եւ մեծ ուրախութիւն եղաւ քաղաքին  
մէջը : Վարձ . 1 . 8 :

Ան քաղաքը Աամարիան էր . եւ իրենց  
ուրախութիւնին պատճառը Փիլիպպոսի հոն  
երթալն ու Աւետարանը անոնց քարոզելն  
էր . եւ անոնք ամենը մէկէն Փիլիպպոսին ը-  
սած խօսքերուն ականջ դրին : Ուր որ  
Քրիստոսի Աւետարանը կը քարոզուի ու  
կ'ընդունուի հոն մեծ ուրախութիւն կ'ըլ-  
լայ : Աեղքի գերի եղած եւ յանցանքներ-  
ով բեռնաւորուած մեղաւորները կը լսեն  
թէ մէկ անանկ Փրկիչ մը կայ եղեր որ  
կրնայ զիրենք մեղքին անէծքէն եւ իշխա-  
նութենէն աղատել , եւ իրեն հաւտալով  
սրտերնին անպատմելի ուրախութիւնով  
կը լեցուի : Կը տեսնեն որ իրենց բարեկամ-  
ներն ու ընկերներն ալ ան նոյն Փրկիչը

աւրով կ'ընդունին, եւ անոնց վրայ կ'ուշ  
բախսանան։ Երբոր Վահարանը ընդուն-  
ուի ատելութիւնը հակառակութիւնները  
ու կոխուները կըդաղըին, եւ ամեն սիրտ  
Վատուծոյ ու մարգոց վրայ սիրով կըլեց-  
ուի, ու աս ալ մեծ ուրախութեան պատ-  
ճառ կ'ըլլայ։ Օրհնեալ է Վատուած որ  
Վահարանը մեզի ճանչցոց, որ աս եր-  
ջանկութիւններուն աղքիւրն է։ ահա ան-  
ժամանակը կուգայ որ ատեն բոլոր աշ-  
խարհիք Վահատոսի անունը պիտի լսէ ու  
անոր հաւտայ։ Վահատենը ոչ պատերազմ  
պիտի ըլլայ եւ ոչ արիւնչեղութիւն, ոչ  
գողութիւն եւ ոչ աւաղակութիւն, ոչ անձ-  
նասիրութիւնով էր անձին շահը փնտուել  
ուրիշնեն վեաս հասցունելով, եւ ոչ ալ ա-  
տելութեան դործքեր ու խօսքեր, հապա-  
խաղաղութիւն եւ սէր պիտի թագաւորէ  
ամեն սրտերու մէջ։ Վահատենը բոլոր աշ-  
խարհիս վրայ մեծ ցնծութիւն պիտի ըլլայ։

**Դ**շմարիտ հաւատացեալները մեծ յար-  
դութիւն կուտան ՚Քրիստոսի . անիկայի-  
բենց “Ամենը ու ամենուն մէջն է” : Կող-  
զ. 11: Անիկայի իրենց աշխարհային բարե-  
կամներէ կամ ինչ եւ իցէ երկրային վայել-  
չութիւններէ եւ կեանքէ ալ եւելի է : Եր-  
բոր իր բնութեանը վրայ կը մտածեն իրենց  
“Տասը հաղարներէն երեւելի” (Երգ. 1. 10)  
կերեւայ, երբոր երկինքին վրայ կը խորհին,  
ան աշխարհքին իրենց պարգեւած մեծ ու-  
րախութիւնը ՚Քրիստոսի հետ եւ անորնման  
ըլլալնին է : Եւ քրիստոնեաները Տէր Շի-  
սուս ՚Քրիստոսը ամեն արարածներէն եւել  
յարգելու են : Երդարեւ պատուական է ին-  
քը անոնց ըրած բաներուն եւ պարգեւած շո-  
նորհքներուն համար, բոլոր յուսացած օրհ-  
նութիւններնին իրմովկ'ընդունին : (Օրէնք-  
ին անէծքէն իրենք խալսեց, ինքը անոնց հա-  
մար անէծք ըլլալով . կը հագուեցունէ ի-  
րենք իր արդարութիւնովը որ Աստուծոյ  
առջեւը արդարութիւն դանեն : Աստուծոյ  
աջ կողմը նստած է անոնց համար բարե-  
խօսութիւն ընելու, անոնց համար բնակա-  
րաններ պատրաստելու գնաց, եւ պիտի գայ-  
ու անոնք իր քովը առնէ : Խոլոր յոյսերնին  
անոր վրայ է . ինքը կուտայ անոնց զօրու-

թիւն աս աշխարհիթ մէջ զլխունուն եկած  
փորձութիւնները յաղթելու, նեղութեան  
ժամերնուն մէջ ինքը միսիթարութիւն կու-  
տայ : Ինքը կը զօրացունէ անոնք մահուան  
ժամերնուն եւ ինքը պիտի բանայ անօնց  
երկինքին դօւռները :

## 23

Աճեցէք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս  
Վրիստոսի շնորհքովը ու գիտութիւնովը:  
Ե Պէտք . գ . 18 :

Արքոր մէկ մարդ մը նորէն կը ծնի , որը-  
րութեան գործը իր մէջը կատարեալ չէ , ան  
տաենը հոգեւոր բաններու մէջ դեռ տղայ  
է : Իայց շնորհքով պիտի աճի . հոգեւոր  
կերանքի մէջ օրէ օր պիտի զօրանայ մինչեւ  
որ Վրիստոս Հիսուսով կատարեալ մարդ  
ըլլայ : Պէտք է որ իր հաւատքը աճի , ու իր  
մեղաւոր ըլլալը աղեկ տեսնայ , եւ իր ասլաշ-  
խարութիւնը կատարեալ ըլլայ ու իր Աս-  
տուծոյն եւ Փրկչին վրայ ունեցած սէրը օրէ  
օր բորբոքի : Աչկ խօսքով պէտք է ոգ օր  
ըստ օրէ բոլոր քրիստոնէական շնորհքները

իր վրայ երեւան, եւ Յիսուս Քրիստոսի  
պատուականութեանը վրայ առելի տեղե-  
կութիւն ունենայ, շնորհքի մէջ ասանկ ա-  
ճելու համար պէտք է որ յարմար միջոցներ  
գործածէ: Պէտք է որ Աստուծոյ խօսքը շատ  
կարդայ եւ անոր վրայ մտածէ, պէտք է որ  
Աստուծածաշունչին մէջ ցուցուած Քրիս-  
տոսի բնութեանը վրայ շատ խորհի: Պէտք  
է որ միշտ արթուն կենայ ու աղօթք ընէ,  
եւ Առողք ողին խնդրէ, որ անէ միայն զին-  
քը սրբացունողը . եւ պէտք է որ մեղքի դէմ  
արթուն կենայ, որ չըլլայ թէ աս օրհնեալ  
ողին տրտմեցունէ ու ան իր սրտէն հեռա-  
նայ: Արդեօք ես շնորհաց մէջ կաճի՞մ, թէ  
որ չէ՝ վախնալու եմ որ բնաւ նորէն ծնած  
չեմ:

## 24

Իսն մը մի հոգաք, հապա աղօթքով ու  
խնդրուածքով՝ գոհութիւնով, ձեր խընդ-  
րուածքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Փի-  
լառ, Դ, 6:

Աս աշխարհս տրտմութիւնով եւ ան-

ստուգութիւնով լեցուն է . աս օրուան վայ-  
լածնիս վաղը ձեռքերնուս կ'երթայ, ու չենք  
գիտեր թէ դլխունուս ինչ նեղութիւններ  
պիտի գան : Եւ սակայն բնաւ նեղութիւն  
մը ունենալու չենք ապառնիին վրայ . քան-  
զի բոլոր դիպուածները կառավարողը եւ  
կարգադրողը մեր երկնաւոր այրն է : Փոք-  
րիկ տղայ մը՝ իր հօրը տունը եղած ժամա-  
նակը ամենեւին չ'հոգար թէ ինչ պիտի ու-  
տէ կամ ինչ պիտի խմէ, քանզի գիտէ թէ  
իր ծնողքը զինքը կը նային . եւ ոչ ալ կը-  
վախնայ թէ իր խաղալիքները ձեռքէն  
կ'առնեն ու զինքը կը շարչը կեն : Արյնպէս  
եւ մենք պարտինք Վատուծոյ խոստմունք-  
ներուն վրայ փոքրիկ տղու մը ունեցած  
վստահութեանը պէս վստահութիւնով  
ապաւինիլ, թէ բոլոր մեզի պէտք եղած-  
ները պիտի տայ, եւ թէ մեզի բնաւ նեղու-  
թիւն մը պիտի չ'տայ, բայց միայն թէ որ  
մեք օգտին համար ըլլայ : Վզօթքով Վա-  
տուծոյ կը նանք երթաւ եւ մեր ամեն խընդ-  
րուածքները իրեն յայտնել . եւ ալ ուրիշ  
հոգ ունենալու չենք, ինչու որ եթէ ուզած  
բաներնիս մեզի օդտակար են Վատուած  
անոնք կուտայ . եւ թէ որ չ'տայ հանդիսա-  
ըլլալու ենք դիտնալով թէ անիկայ ինչ

որ մեզի աղեկ է կ'ընէ : Ազօթքներնուա հետ  
գոհութիւն ալ ըլլալու է . ուրիշ օրհնու-  
թիւններ խնդրած ժամանակնիս Աստու-  
ծոյ արդէն պարզեւած անհամար օրհնու-  
թիւնները մոռնալու չենք :

## 25

Ամենքն ալ կանչուըուտեցին, եւ ըսին . Ա-  
տիկայ չէ, հապա Բաբաբբան : Յանձն .  
Ժ. Պ. . 40 :

Երբոր Յիսուս Քրիստոս Շռովմայեցի  
դատաւորին առջեւը դատաստանի հանե-  
ցին, չեին կրնար յանցանք մը ցուցունել  
անոք վրայ : Պիղատոս ինքը ըսաւ . ես ա-  
տոր վրայ մէկ յանցանք մը չեմ դտեար :  
Պ. Պ. . Ե. Պ. . Կ. : Օ ինքը հոն բերողներն ալ  
գիտէին թէ անմեղ էր . գիտէին թէ իր  
կեանքը անդադար բարերարութիւն ընե-  
լով անցուց . կոյրերուն աչքերը եւ խուլ-  
երուն ականջները բացաւ, կաղերը քալե-  
ցուց, անօթիները կշտացուց, հիւանդները  
բժշկեց, մեռելներուն յարաւթիւն տուաւ  
եւ սակայն աղաղակեցին ըսելով, Աս մար-

դը չէ, հապա Բարաբբան : Բարաբբան աւազակ ու մարդասպան էր . ասանկ մարդու մը ազատութիւն գտնելովը ժողովրդոց ըստացուածքը ու կեանքը վտանգի մէջ կիյնար . բայց եւ այնպէս քահանայապետները եւ ծերերը անոր կեանքը ազատել կ'ուզէին ու չէ թէ հեղ ու բարերար Յիսուսին : Պիղատոս աղէկ հարցուց թէ “Ինչո՞ւ համար, ի՞նչ չար ըրաւ” : Անիկայ մարդիկներուն Աստուծոյ օրէնքին սրբութիւնը ու մաքրութիւնը ճանչցուցեր էր . բարձր տեղերը համարձակութեամբ չարութիւնը յանդիմաններ էր, ճշմարիտ արդարութեան կենդանի օրինակ մը եղեր էր, եւ այսպէս ինքզինքնին արդար սեպող Փարիսեցիններուն կեղծաւորութիւնը ու չարութիւնը երեւան հաներ էր: Անիկայ աշխարհիս լոյս բերեր էր, բայց մարդիկ խաւարը լոյսէն եւել սիրեցին, ինչու որ իրենց գործքերը չար էին . անոր համար աղաղակեցին . Ատիկայ չէ, հապա Բարաբբան :

աւին, հապա որ զատիկը ուտեն: Յնձն ։  
Ժ.Բ. ։ 28:

Ասկէց կը սորվինք թէ ինտոր արդարութիւն էր կարդացողներուն ու Փարիսեցիներուն արդարութիւնը: Անոնք կաշառակրծութիւնով կարող եղան Յիսուսը ձեռքերնին անցունել: Արտերնին չարութիւնով ու ատելութիւնով լեցուած էր Աստուծոյ Որդիին վրայ. իմափաքելով կը միափաքէին անոր սպանման գործը կատարելու. վկայներ հանեցին անոր դէմ սուտ վկայութիւն տալու: Կոլոր աս չարութիւնները առանց խղճի կ'ընէին, եւ սակայն երբոր իրենց բանտարգեալը Հռովմայեցի դատաւորին առջեւը հանեցին, պալատը չ'մտան որ չ'ըլլայ թէ պղծուին, հապա որ զատիկը ուտեն: Վրիստոս աղէկ ըստ անոնց, “Այ ձեզի կեղծաւոր կարդացողներ եւ Փարիսեցիներ..... որ դուքսի կողմէն մարդոց արդար կ'երեւաք, ու ներսի կողմէն կեղծաւորութիւնով ու անօրէնութիւնով լեցուն էք”: Անդւ. Խ. ։ 27, 28: Ամեն մարդ կընայ հիմա տեսնել, թէ ինչ զգուելի բան էր ան չար մարդոց ըրած կեղծաւորութիւնը. բայց մենք պարտաւոր ենք

մեր սրտերը աղէկ քննել, որ չըլայ թէ  
կարդացողները ու Փարիսեցիները դատա-  
պարտած ատեննիս, մենք ալ նոյն դատա-  
պարտութեանը մէջ գտնուինք : Ուշ որ կը-  
յուսանք արտաքին արարողութիւնով Աս-  
տուծոյ հաճոյ ըլլալ, թէ որ առաւել ջերմ-  
եռանդութիւն կը ցուցունենք կրօնքին ա-  
րարողութիւններուն եւ ծէսերուն քան թէ  
մեր ներսը ճշմարիտ սրբութիւն ունենալուն,  
թէ որ մեր արտաքին գործքերուն աղէկ  
կը նայինք եւ սրտերնուս մէջ շարութիւն  
եւ ատելութիւն կը պահենք, մէկ խօսքով  
թէ որ մեր կրօնքը սրտերնիս մաքուր չ'պա-  
հեր, մեր բնութիւնն ալ ճիշտ անոնց պէս  
է ու անոնց տրուած վայր մեզի ալ է :

## 27

Ու ըսաւ . Ի՞նչ կը կամիք տալ ինձի, եւ  
ես անիկայ մատնեմ ձեզի . ու անոնք երե-  
սուն կտոր արծաթիրեն կը ուեցին : Անդը .  
Էօ . 15 :

Քուղան Յիսուսի աշակերտներէն մէկն  
էր ու անոր հետ շատ տեղեր պտըտած եւ

անոր բարերարութիւնները ու սուրբ եւ  
ածարտա վարքը տեսած էր ։ Անոր մարդ-  
ոց վրայ ինտոր սէր ունենալը գիտէք եւ  
անշուշտ ինքն ալ անկէց բարերարութիւն-  
ներ ընդուներ էր ։ բայց իր սրտին մէջ զօ-  
րաւոր արծաթսիրութիւն մը տիրած էր  
եւ անիկայ լեցունելու համար իր Տէրը  
եւ Ա արդապետը մատնեց ։ Քահանայ-  
ապետներուն ու կարդացողներուն Քր-  
իստոսի վրայ ունեցած անհաշտելի ատե-  
լութիւնը գիտէր, գիտէր թէ երբոր անիկայ  
անոնց ձեռքը մատնուի պիտի չարչարեն ու  
մոցունեն, բայց արծաթը կը սիրէր եւ մի-  
այն երեսուն կտոր անարդ արծաթի համար  
օրհնեալ Փրկիչը իր թշնամիներուն ձեռքը  
մատնեց ։ Ո՞չ ինչ ապականեալ սրտի տէր  
մարդը լըլալու է որ ասանկ բան մը ընէ ։ բայց  
ասիկայ ընողը մի միայն Յուղան չէ ։ ան  
մարդը որ քրիստոնեայ կը կոչուի, ու մաս-  
տակի համար Քրիստոսի օրէնքներուն ար-  
դիլած մեղքերը կը գործէ, ինչպէս խորա-  
մանկութիւն խարէութիւն արծաթսիրու-  
թիւն ։ ու ամենուն առջեւը Քրիստոսի ան-  
ուանը ու գործին նախատինք կը բերէ,  
Յուղային պէս իր Տէրը թշնամիներուն  
մատնած կ'ըլայ ։ Արծաթը Յուղայի նը-

ման՝ Վրիստոսէն աւելի սիրող կը համար-  
ուի ան մարդը, որ բարի գործքերու համար  
իր հարստութենէն օդնութիւն չըներ :

## 28

Վնիկայ չարչարանք քաշեց, բոյց սպան-  
դանոցը տարուող ոչխարին պէս բերանը  
չ'բացաւ, ու կտրողներուն առջեւը կայնող  
անմռունչ որոջին պէս բերանը չ'բացաւ:  
Եսոյ . օգ. . 7:

Վրիստոսի մեռնելու ատենըցուցուցած  
հեղութիւնը շատ սքանչելի էր, բոլոր ան  
նախատինքները ու չարչարանքները քաշեց.  
Երբոր ինքը կը բամբասէին ինքն ալ փոխա-  
րէնը չեր բամբասեր : Վնիկայ ծաղը ըրին  
ծեծեցին ու երեսը թուքին, եւիր դառն չար-  
չարանքներուն մէջը իր վրայ կը ծիծաղէին  
թէ իրենց թագաւորը ոլիաի ըլլար, բայց  
բոլոր ասոնց մէջ բարկութիւն կամ նա-  
խատանաց խօսք մը բերնէն չ'հանեց : Երբոր  
Գետրոս անիկայ սուրով ազատելուզեց հը-  
րամայեց որ իր սուրը տեղը դնէ, եւ իր թշ-  
նամիներէն մէկուն ընդունած վէրքը բժըշ-

կեց : Յիսուս մեղի մեծ օրինակ մըն է . թէ  
որ Աստուած մեր վրայ նեղութիւն մը բերէ  
պէտք չէ որ դանգտինք . թէ որ մեր ընկերա-  
ները մեղ բամբասեն ու չարչարեն , պէտք չէ  
որ չարին փոխարէն չար հատուցանենք :  
Բամբասանքի դէմ բամբասանք ընելու  
չենք , հապա պէտք է որ հեղութիւնովքա-  
շենք ան վնասները որոնցմէ չենք կրնար  
փախչիլ , միայն Աստուծոյ ապաւինելով որ  
մեղ պաշտպանէ ու միսիթարէ :

## 29

Աը կարծես թէ չէ՞մ կրնար իմ օրս ա-  
ղաչել , եւ հիմա հոս հասցունէ ինծի տասն-  
երկու գունդէն եւել հրեշտակ : Առաջն.  
իօ . 53 :

Յիսուս ինքզինքը պաշտպանելու կարող-  
ութիւն չունենալուն համար չէր որ անանկ  
հեղութեամբ թշնամիին նախատինքները  
կրեց : Իր ամենակարող ըլլալը իր ըրած  
համբերութիւնը շատ առաւելսքանչելի կր-  
ցուցունէ . կարող էր մէկ խօսքով մը անոնք  
ամենը յաւիտենական մահով սպաննել ,

Քանզի երկինքին ու երկրին բոլոր զօրու-  
թիւնները իրենն էր : Օյնքը սպաննողնե-  
րը անարգանօք կը ստիպէին որ ինքիրենը  
խաչէն վար իջնալովիր Անսիանը լլալըցու-  
ցունէ . աս բանը կընար ցուցունել երկին-  
քէն կրակ իջեցունելով որ անոնք լափէ,  
քայց իրեն ամեն տուած նեղութիւննին լո-  
ռութեամբ քաշեց : Եւ ասիկայ ինչու հա-  
մար էր , անոր համար որ մարդիկներուն  
փրկութեանը ձեռք զարկած էր ու մեր աւ-  
բած օրէնքին անէծքը կը կրէր եւ չէր ու-  
զեր կենալ մինչեւ որ անիկայ կատարէ : Անոր  
համար որ Առւրը Վիրքերը կատարուին , ո-  
րոնք աս բաները առաջուցըսին : Ո՞րչափ բան  
քաշեց մեր Փրկիչը մեզի համար , իրեն ո՞ր-  
չափ սէր եւ երախտագիտութիւն ցուցու-  
նելու ենք :

Յիսուս երբոր քացախը լեղիին հետ ա-  
ռաւ , ըսաւ . Ամեն բան կատարուեցաւ . ու  
գլուխը ծռելով հոգին աւանդեց : Յովէ .  
Ժ.Յ. . Յ0 :

Անչ մէկ մեծ գործ մը կատարեցաւ ան առ  
տենը, մէկ գործ մը որ աշխարհիս ստեղծա  
ռւիլէն ալ մեծ էր. մէկ գործ մը որ երկնից  
խորհրդականները միտքերնին դրեր էին եւ  
չորս հաղար տարիէն իվեր զանազան կերպ-  
երով մարդոց ըսուեցաւ. մէկ գործ մը ո-  
րուն նշանակն էր հրէից կրօնքին բոլոր ա-  
րարողութիւնները, եւ բոլոր մարդարէնե-  
րուն եղած յայտնութիւններուն նպատակը  
ասիկայ էր: Անանկ գործ մըն էր որ Առ-  
տուծոյ յաւիտենական Արդիէն զատ ուրիշ  
էակ մը կարող չէր կատարել. եւ անհնար-  
բան էր որ ուրիշ վճարքով մը ըլլար, այլ  
միայն անոր պատուական արիւնովը: Առ-  
տուծոյ օրէնքին բոլոր պահանջածը Հիսուս  
հիմա կատարեց եւ արդարութեան բոլոր  
պահանջածներն ալ քաշեց. քաւութիւնը  
հիմա կատարեցաւու դլուխը ծոելով հոգին  
աւանդեց: Աս մեծ գործը երկինքը զար-  
մանքով եւ փառաբանութիւնով լեցուց,  
աշխարհիս վրայ եղած բոլոր երջանկու-  
թիւններուն պատճառ եղաւ, եւ բոլոր յա-  
ւիտենականութեան մէջ երկինքը փրկու-  
ածներուն երգը պիտի ըլլայ ան: Օրող ես  
շատ խորհիմ աս մեծ գործին վրայ, եւ ե-  
րանի՛ թէ Առւրբ Առգին իմ միտքս լուսա-

Հոգէր, որ Վրիստոսի զարմանալի սէրը քիչ  
մը իմանայի :

## 31

Յիսուս երբոք տեսաւ իր մայրը եւ ան աւ-  
շակերտը՝ որ կը սիրէր, որ մօտը կայներ  
էր, ըստ մօրը . Ա՞վ կին ահա քու որդիդ :  
Ետքը ըստ աշակերտին Ահա քու մայրդ :  
ՀՅԱԼ . Ժ.Թ. . 26 . 27 :

Յիսուս թէպէտեւ մեծ չարչարանքի  
մէջ էր, բայց իր մայրը չ'մոռցաւ . տակա-  
ւին ծնողաէր որդիի մը բոլոր կարեկցու-  
թիւնները զգաց եւ ցուցուց : Իր տանջանք-  
ին սաստկութեանը մէջ խղճալով անիկայ  
իր սիրելի աշակերտին յանձնեց, “ Եւ ան-  
կէց ետեւ աշակերտը անիկայ իր քովը ա-  
ռաւ ” : Խնչ մեծ մխիթարութիւն գտած պի-  
տի ըլլայ իր մօրը վիրաւորեալ սիրտը ասանկ  
ժամու մը մէջ ասանկ որդի մը զինքը յի-  
շելովը : Յիսուս Վրիստոս կատարելապէս  
հնազանդեցաւ Աստուծոյ օրէնքին, որ կ'ը-  
սէ “ Վռու հայրդ եւ մայրդ պատուէ ” : Ա-  
մենքս ալ աս նոյն հոգին ունենալու ենք .  
պինտ սաստիկ նեղութիւնը անդամ չ'կըր-

Նար մեր ծնողքները սիրելու պարտականութիւններն ու մեջիւններնուս մեզ արձրկել։ Միշտ ջանալու ենք սիրոյ գործքերով սրտերնին ու բախացունել։ ան որ իր ծնողքը չ'սիրել։ Քրիստոսի հոգին չունի։

---

## ԵՊՐԻԼ.

## 1

Ա ասն զի անոր շնորհքովը փրկուած էք  
դուք հաւատքով. եւ աս չէ թէ ձեզմէ է,  
հապա Աստուծոյ պարգեւն է : Եղիշա, Բ., 8:

Ա եր փրկութիւնը միայն շնորհքով է .  
Աստուած բուն իր ողորմութիւնովը ճամ-  
բայ մը պատրաստեց, որ մեղաւորները փր-  
կուին . մեղ մեղքի մէջ մեռած տեսաւ եւ իր  
Առուրբ Հոգին խրկեց որ մեղ կենդանա-  
ցունէ : Յօէ որ մեր մէջը սրբութիւն մը ու-  
նինք անիկայ Աստուծոյ ձրի շնորհքովը մեր  
նոր արարածներ ըլլալէն ու մեր մէջը Տէր  
Հիսուս Քրիստոսի վրայ հաւատք հաս-  
տատուած ըլլալէն առաջ եկած է : Յօէ որ  
հաւատքի մէջ հաստատ մնանք , պատճառը  
իրեն մեղ պահելը եւ փորձութեան դէմ  
կենալու համար մեղի զօրութիւն տալն է :  
Եթէ ըլլայ որ արքայութիւն երթանք , ա-

Նիկայ միայն Աստուծոյ ձրի շնորհացը տալու ենք, ու չէ թէ մեր ըրած արդարութեան գործքերուն։ Յաւիտենականութեան մէջ մեր ուրախութիւնը մեղի պէս մեղաւորները փրկող ան մեծ շնորհքը փառաբանելը պիտի ըլլայ. “Չէ թէ մեղի՝ ով Տէր, չէ թէ մեղի, հապաքու անունիդ փառք տուր”։ Ասով. ռժէ. 1:

## 2

Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարդարէները աւրելու. չեկայ աւրելու, հապակատարելու։ Անդը. 1. 17:

Ձեւպետեւ Յիսուս Քրիստոս Աստուծոյ օրէնքին անէծքէն մեղ խալսեց, սակայն օրէնքին հնազանգելու պարտաւորութէնէն մեզ ազատ չըրաւ։ Մեղանչեցինք եւ մեր արժանաւորութիւնովը բնաւ կարող չենք փրկուիլ. ու թէ որ փրկուինք՝ բոլորովին Քրիստոսի ըրած քաւութիւնովը պիտի փրկուինք. բայց սակայն միշտ Աստուծոյ բոլոր պատուիրանքները պահելու պարտականութեան տակ ենք։ թէ որ մարդ մը մեռնելու արժանի յանցանքով մը

բռնուի ու իր Տէրութեան օրէնքներովը մահուան գատապարտուի, բայց թագաւորը իր գթութիւնովը անոր յանցանքը ներելու ճամբայ մը գտնայ, ան մարդը լոկ թագաւորին ողորմութիւնովը ազատուծ կ'ըլլայ ու չէ թէ իր բարի գործքերովը . ինչու որ իր գործքերը զինքը մահուան գատապարտեր էին : Խայց ասանկուլ միթէ իր Տէրութեանը օրէնքները կատարելու պարտաւորութենէն ազատ կ'ըլլայ . ու թէ որ ալ անկէց ետեւ աղէկ մարդ ըլլայ եւ օրէնքներուն գէմ փոքր յանցանք մը անգամ չ'գործէ, կրնայ ըսել թէ իր աղէկութիւնովը ազատեցաւ . ամենեւին չէ : Անիկայ մահուան գատապարտուելու արժանի գործ մը ըրեր էր, եւ չէր կրնար անգործը ետ գարձունել, ու անկէց ետեւ ցուցուցած բարի վարքը միայն իր պարտաւորութիւնը կատարել էր եւ չէ թէ աւելի բան մը, ասոր համար պէտք է որ միշտ խոստովանի թէ միայն թագաւորին ողորմութիւնովը իրեն արժան եղած մահէն ուղաւտեցաւ : Ասանկ ալ մենք թէ որ առկէց ետեւ Աստուծոյ պատուիրանքները կատարեալ պահէնք՝ միայն մեր պարտաւորութիւնը կատարած կ'ըլլանք : Անցած մեղ

Քերնուս համար օրէնքին անէծքը տակաւ  
ւին մեր վրայ է . եւ թէ որ փրկուինք միա  
սյն շնորհքով պիտի փրկուինք :

## 3

**Հաւատքով մաքրելով անոնց սիրտը :**  
Կարծ . ձև . 9 :

Արբոր մարդ մը իր հոգիին փրկութեաւ  
նը համար Տէր Յիսուս Քրիստոսի կը հաւ  
տայ , ջանք կ'ընէ Աստուծոյ պատուիրանք  
ները պահելու , չէ թէ միայն որ կը զգայ  
թէ միշտ պարտական է անոնք կատարել ,  
հապա որ ալ կը սիրէ անոնք : Ան կենդաւ  
նի հաւատքը որ Ճիւղին որթին վրայ կապ  
ուած ըլլալուն պէս զինքը Քրիստոսի կը  
կապէ՝ իր սիրտը կը մաքրէ . առջի պէս ալ  
մեղքը չ'սիրեր : Առաջ Աստուծոյ պատուի  
րանքները իրեն ծանր կուգային , եւ շատ  
կ'ուրախանար երբոր գիտնար թէ առանց  
դատապարտութեան կրնայ մեղք գործել .  
բայց հիմա Աստուծոյ օրէնքը կը սիրէ , բան  
պէտի առաջնորդներ : Կը տեսնէ թէ մեղքը շատ  
շար ու դառն բան մըն է անոր համար անիկայ

կ'ատէ . դիտէ որ իր բարի գործքերովը աւ  
մենեւին չ'կընար փրկուիլ . սակայն կ'աշ-  
խատի Աստուծոյ օրէնքին համաձայն գըտ-  
նուելու , եւ կ'ողբայ որ անոր մէջ այնչափ  
պակաս կը գտնուի : Ա երստին ծնած է ին-  
քը Հոգիով . Յիսուս Քրիստոսով նոր ա-  
րարած մըն է :

## 4

Ա ասն զի . Քրիստոսի սէրը մեղ կը ստի-  
պէ : Ու Առնել . Ե . 14:

**Ճ**մարիտ հաւատացեալը մեղաց դէմ  
պատերազմելու եւ սրբութեան ետեւէ ըլ-  
լալու շարժող ամենէն զօրաւոր շարժառի-  
թը Քրիստոսի սէրն է : Երբոր մեղք գոր-  
ծելու փորձութեան մէջ կ'ինասյ , զինքը  
մեղքին անէծքէն եւ իշխանութէնէն աղա-  
տելու համար Քրիստոսի բոլոր ըրածնե-  
րը եւ քաշածները միտքը կը բերէ : Ուստի  
ան բանը որ Աստուծոյ Որդիին մահուանը  
պատճառ եղաւ , պէ՞տք է որ ինք սիրէ . ա-  
նիկայ պէ՞տք է որ Փրկիչը վշտացունելու  
բան մըլընէ , որ զինքը այնչափ սիրեց : Երբ-

որ կը խորհի իր ներքին եւ արտաքին մեղք-  
երուն վրայ, որոնց մէջ ամեն օր կ'իյնայ,   
«Քրիստոսի իրեն վրայ ունեցած ան մեծ  
սիրոյն մտածութիւնը խորունկ զղջումով  
իրեն ապաշխարել կուտայ: Կիտէ որ «Քր-  
իստոս աշխարհք նկաւ ու մեռաւ որ զին-  
քը եւ բոլոր աշխարհք Աստուծոյ հնազան-  
դելու եւ երջանկութիւն դանելու առաջ-  
նօրդէ. ուստի ինքն ալ «Քրիստոսի սիրո-  
վը ստիպուած իր կենացը զլխաւոր նպա-  
տակը տսիկայ կ'ընէ: Ա'աշխատի օրէ օր  
ինքը աւելի սուրբ քլալու եւ կրցածին չափ  
ալ ու բիշները համոզելու, որ մեղքերնին ա-  
պաշխարեն եւ «Քրիստոսի գան ու անօր  
ապաւինին որ փրկուին:

## 5

Խնչու որ ես միտքս չ'որի ձեր մէջը ու-  
րիշ բան մը զիսնալ, միայն թէ Հիսուս  
«Քրիստոսը, ու ան խաչը ելած: Ա Կո՞նկ՞լ.  
Ե. 2:

Պօղոս երբոր Աւետարանը քարոզելու  
ընտրուեցաւ, աղէկ հասկըցաւ իր Աստ-

ուածային Ա արդապետէն ընդունած պաշտօնը . զիտէր որ Վ.ւետարանը մեղաւորաներուն քաղցր աւետիսներ կուտայ , ցուցունելով թէ փրկութեան ճամբայ մը կայ , եւ թէ ան փրկութիւնը խաչեալ Փրկիչի մը ձեռքովը կ'ըլլայ : Աւրեմն աս պիտի ըլլար իր քարոզութեան մեծ նիւթը , թէ Հիսուս Քրիստոս մեռաւ մեղաւորները փրկելու համար : Վ.ս բանը անանկ հարկաւոր կ'երեւար իր աչքին եւ այնչափ ալ կը քարոզէր , որ կարծես թէ ուրիշ բան չէր զիտեր : Պազոս բոլոր Վ.ւետարանը քարոզողներուն օրինակ մըն է . անոնք ալ պէտք է որ աս նոյն խօսքը քարոզեն եւ նոյն ուրախութիւն տուող լուրերը հրատարակեն : Անչափէս որ անատենը անանկ ալ հիմա աշխարհս մեղաւորներով լեցուն է , եւ անշուշտ ուրիշ քարոզութիւն մը այնչափ ընդունելի չէ իրենց որչափ ան որ կ'իմացունէ անոնց թէ փրկիչ մը կայ , որ օրէնքին անէծքը իրենց տեղը կրեց : Երբոր աս մեծ Ճշմարտութիւնը հաւատարմութեամբ եւ խոնարհութեամբ կը քարոզուի , անատենը Վ.ստուած կ'օրհնէ իրենց քարոզութիւնները ու մեղաւորները դարձի կուգան : Աէկ քանի քարոզիչներ կրինլանտիսիսի և թա-

Նոսներուն Աստուծոյ էութեանը եւ դեպի  
անոր ունեցած պարտաւորութիւններուն  
վրայ քսան տարիի չափ քարոզութիւն ը-  
րին, բայց մէկ յաջողութիւն մը չ'տեսան:  
Ետքը Յիսուսը անոնց քարոզեցին որ մե-  
ղաւորներուն համար մեռաւ, խեղճ ձե-  
ժանոսները տեսան որ աս է Ճիշդ իրենց  
ուղած Փրկիչը, ապաշխարեցին ու հաւ-  
տացին:

## 6

Որ ձեղի արուեցաւ Քրիստոսի համար՝  
չէ թէ միայն անոր հաւտալ, հապա ա-  
նոր համար չարչարուիլ ալ: Փիլիպ. Ի. 29:

Երբոր առաքեալները շրեից ատեանը  
կանչուեցան ու Յիսուսը քարոզելնուն հա-  
մար ծեծ կերան, խնդացին որ իր անունին  
համար անարդանքի արժան սեպուեցան:  
Պօղոս ալ Փիլիպեցիներուն ունեցած ար-  
տօնութիւններուն մէկը կը սեպէ անոնց  
Քրիստոսի համար նեղութիւն քաշելը: Ա-  
սիկայ աշխարհիս մարդոցը ականջին նոր  
բան մը կուգայ, մարդիկ նեղութիւն քա-

շելը բնաւ չեն սիրեք . ուրեմն ինչո՞ւ համար առաքեալները ասանկ խօսք մը խօսեցան . արդեօք կը յուսային թէ նեղութիւնքաշելով փրկուելու արժանաւորութիւն պիտի ունենան . չէ , չնորհքով փրկուելէն զատ բռը ուրիշ խորհուրդները կը հերքէին : Անոնք ստիպողը Վրիստոսի սէրն էր , ու երբոր աս սէրը ցուցունելու համար ինչեւ իցէ բան մը կամ նեղութիւն մը կը քաշէին շատ կ'ուրախանային : Ալ խնդային որ իրեն հետեւողներուն համրանքին մէջն են . Վը բիստոս ըսաւ , “ Ձեւ որ աշխարհ ձեղ ատէ , դիանաք որ առաջ իս ատեց ” . եւ կուրախանային որ անոր հետ իր քաշած նեղութիւններուն մէջ ընկեր եղան : “ Սաեւ աս նեղութիւնները քաշելովնին իրենց հաւատքին զօրութիւնը ու Վրիստոսի վրայ ունեցած սէրը աշխարհիս կը ցուցունէին , եւ ասանկով չհաւտացողներուն առջեւը զի՞նքը կը պատուէին , ու կ'ուրախանային երբոր աս բանները ընելու պատեհութիւն կը գտնէին : Սաեւ աս նեղութիւնները իրենց բան մը չէր երեւար , ինչու որ աչքերնին միշտ իւրենց համար պատրաստուած անյաւիտենական փառքին մեծութեանը վրայ էր :

Բայց ես եւ իմտունս՝ Տէրը պիտի պաշտենք : ՅԵԱ . ԲԴ . 15 .

Խսրայէլացիները միշտ կռապաշտութիւն ընելու յօժար էին . եւ Յեսու անոնց հետ իր վերջին խօսակցութեան ատենը հրամայեց անոնց որ ընտրեն թէ որ Աստուծոյ պիտի ծառայեն . եւ նոյն ժամանակը ցուցուց թէ ինքը Տէրը պաշտելու հաստատ դիտաւորութիւն ունի : Աս ընտրութիւնը չէ թէ միայն իրեն համար էր հապա իր տանը համար ալ . ինչպէս որ ԵէՀովան իրեն Աստուած ընտրեր էր անանկ ալ իր ընտանիքին համար Աստուած ընտրեց : Երբոր մէկ մարդ մը ինքզինքը Աստուծոյ ծառայութեանը կռւտայ , պարտական է որ իր ընտանիքն ալ նոյնպէս անոր նուիրէ : Արդարեւ չկրնար իր զաւկըներուն սիրազ փոխել ու անոնք Յիսուս Քրիստոսով նոր արարածներ ընել , բայց կրնայ “Անոնք մեծցունել Տէրոջը խրատովը ու վարժութիւնովը” : Եժկեա . Զ . 4 : Ամեն օր կրնայ սորվեցունել անոնց Աստուծոյ խօսքին ճշմարտութիւնները , եւ կրնայ աշխատիլ անոնց մտքին մէջ տպա-

ւորելու Աստուծոյ զաւկըներուն պէս վար-  
ուելուն հարկաւորութիւնը : Արնայ Փրկչին  
սիրոյն վրայ անոնց խօսիլ եւ աշխատիլ որ  
անոնց ցուցունէ թէ պարտական են “ Իրենց  
անձերնուն կենդանի չըլլալ , հապա անոր  
որ ինքը անոնց մըրայ մեռաւ ” : Տ Արքնէ .  
Ն . 15 : Իր ամեն օրուան վարքովը կրնայ  
ցուցունել անոնց թէ ինքը առաւել անոնց  
հոգիներուն փրկութեանը կը փափաքի , ու  
չէ թէ աշխարհային հարստութիւններ ու  
պատիւ ունենալնուն : Արնայ ամեն օր ա-  
ղօթքով անոնք Աստուծոյ յանձնել , եւ  
Սուրբ Հոգիին ազդեցութիւնները անոնց  
համար խնդրել : Ամեն քրիստոնեայ իր զաւ-  
կըներուն վրայ այսչափ պարտականութիւն-  
ներ ունի , եւ թէ որ հաւատարմութեամբ ա-  
սոնք կատարէ կրնայ յոյս ունենալ թէ Աստ-  
ուած իր տունը պիտի օրհնէ :

Ինչու որ մարդոց փառքը Աստուծոյ  
փառքէն աւելի սիրեցին : Յովէ . Ճ.Բ. 43 :

Թէ որ մէկը Քրիստոսի աշխարհիս վրայ  
10

Եղած ատենը անոր աշակերտ ըլլալ ուղեր՝  
ինքզինքը ծաղը ըլլալու նախատինք ու հա-  
լածանք քաշելու տակ կը ձգեր . ասոր հա-  
մար շատերը թէպէտ անոր պահանջմունք-  
ներուն ու վարդապետութիւններուն ճըշ-  
մարիտ ըլլալու տէին բայց անոր աշակերտ-  
ները չեին ըլլար . առաւել կը վախնային  
մարդոց առջին առջեւը անհաճոյ գտնուե-  
լին քան թէ Աստուծոյ : Եւ իրենց վարձը  
կ'ընդունէին , աշխարհիս վրայ անցունելու  
կարծը կեանքերնուն մէջ մարդիկներէն  
գովութիւններ կառնէին , եւ անկէց ետեւ  
դատաստանի գացին անոր դիմացը որ ըստ ,  
“ Ով որ մարդոց առջեւիս կուրանայ ես ալ  
անինայ կուրանամ իմ ծօրս առջեւը որ եր-  
կինքն է ” : Առաջ . ձ . 33 : Հիմա ալ՝ Փրկ-  
չին ջնրմեռանդ ու հաստատուն հետեւող-  
ները շատ անգամ խայտառակ ըլլալու եւ  
անարդանքի տակ կիյնան . եւ աս բանը շատ-  
երը Քրիստոսի ճշմարիտ աշակերտ ըլլալին  
կարդիլէ : Բայց ո՞րը առաւել աղէկ է , աս  
աշխարհիս մէջ ժամանակաւոր նախատինք-  
ներ ատելութիւններ եւ հալածանքներ քա-  
շելը՝ թէ յաւիտեանս Աստուծոյ բարկու-  
թիւնը կրելը : Օսղ մարդիկ մեղ գովին կամ  
արհամարհն , ասիկայ միայն քիչ ժամա-

Նակ կը տեւէ , բայց Աստուծոյ հաճութիւնը  
կամ բարկութիւնը մեղ կամ յաւիտեան  
պիտի երջանկացունէ եւ կամ յաւիտեան  
թշուառութեան մեջ պիտի ձգէ : Ճաէ որ  
Հիսուս անգամ մը իս ընդունէ , ալ անկէց  
ետեւ “Պիտի չվախնամ մարդը ինծի ինչ  
կընայ ընել” : Ատղմ .օ.օ. 11 :

## 9

Հիսուսի նայինք մեր հաւատքին առաջ  
նորդին ու կատարողին : ԵՅՅ . Ժ.Յ . 2 :

Աշխարհիս վրայ ունեցած կեանքերնուզ  
մեջ մեր աչքերը պէտք է որ Հիսուսի վրայ  
հաստատուած ըլլան . պէտք է որ Հիսուսի  
նայինք իրբեւ մեր օրինակին , եւ միշտ անոր  
նման ըլլալու աշխատինք : Իր բնութիւնը  
սորվելու ենք , ինտոր որ յայտնուած է Աստ-  
ուածաշունչին մեջ , որ իմանանք թէ ինչ  
պարտաւոր ենք ընել : “Եաեւ Հիսուսի  
կրնանք նայիլ իրբեւ բարեկամ կարեկից ,  
ինքը մեր բնութիւնը հագաւ , եւ “Կարող է  
մեր տկարութեանը հետ մէկ տեղ չարչար-  
ուիլ : ” ԵՅՅ . Դ . 15 : “Եեղութեան մեջ

իրեն նայելու ենք որ մեզի միսիթարութիւն տայ, եւ ինքը մեզի հրամայեր է որ բոլոր մեր տրտմութիւնները իրեն տանինք. ու թէ որ միայն անոր ապաւինինք. ինքը կարող է եւ կամեցող սրտերնուս խաղաղութիւն տալ: Պէտք է որ փորձութեան ժամանակ իրեն նայինք, որ մեզի օդնութեան հասնի ու զօրութիւն տայ. “ Խնքը ամեն կերպով փորձը առած է մեզի նման, բայց առանց մեղքի”, (Ե.Է. Դ. 15) “ ու կրնայ փորձանաւորներուն ալ օդնական ըլլալ ” Ե.Է. Դ. 18: Պէտք է որ ամեն ատեն իրեն նայինք որ մեզի թողութիւն տայ, անիկայ մեր մեղքերը խաչափայտին վրայ կրեց, անոր համար միայն իրմէն կը յուսանք թողութիւն դտնել: Պէտք է որ իրեն նայինք իբրեւ մեր միջնորդը եւ բարեխօսը Հօր Աստուծոյ, քանզի միայն անոր ձեռքովը կրնանք ընդունուելու յուսով Աստուծոյ երթալ: Հիսուս մեր ամենը եւ ամենուն մշջն է, եւ թէ որ իրեն նայինք պիտի փրկուինք:

առւսի ձեռքով, որ ան մեղի Աստուծմէ իւ-  
մաստութիւն՝ արդարութիւն՝ ու սրբութիւն՝  
եւ փրկութիւն եղաւ: Ա. Կոչնի. Ա. 30:

Աստուծածային բաներու մէջ բնակա-  
նաբար մենք տգէտ ենք, ու նաեւ ապական-  
ուած ենք ու յաւիտենական մահով դատ-  
ապարտուած. բայց մեր ասանկ տրտում եւ  
անօդնական վիճակին մէջ Յիսուս Ք. րիս-  
տոս իր ձեռքը բոլոր մեղի պէտք եղածնեւ-  
րով լեցուն կուգայ: Ան մեղի Աստուծմէ  
իմաստութիւն եղաւ. ինքը կըլուսաւորէ  
մտքերնիս. ինքը մեղի կուտայ որ Աստու-  
ծոյ բնութեանը եւ սրբութեանը ու մեր  
պարտաւորութիւններուն եւ գալու վիճա-  
կին վրայ քիչ մը բան գիտնանք: Ա, աեւ ար-  
դարութիւն եղաւ մեղի, մեր տեղը կայնե-  
ցաւ. մեր բնութիւնը առաւ ու Աստուծոյ  
օրէնքին կատարեալ հնապանդեցաւ, եւ մեր  
մեղքերուն արժան եղած անէծքը կրեց, եւ  
հիմա մեղ իր արդարութիւնովով պիտի հագ-  
ուեցունէ, որ Աստուծոյ առջին արդարու-  
թիւն գտնենք: Ա, աեւ մեղի սրբութիւն ե-  
ղաւ. իր միաքը դրաւ որ չէ թէ միայն իր  
ժողովուրդը դատապարտութենէ ազատէ  
հապա անոնք նաեւ սուրբ ընէ: Եւ բոլոր

իր ընտրածները պիտի սրբէ , որ անոնք Աստուծոյ աթոռին առջեւը անմեղ երեցունէ : Ենքը մեր փրկութիւնը եղաւ , աս դործը որ սկսեց պիտի կատարէ . մեղ ապահով աս աշխարհէս պիտի անցունէ , եւ զինքը սիրող ներուն համար պատրաստած օժեւանները պիտի տանի , ուր տեղ յաւիտեանս իրեն երկրպագութիւն պիտի ընենք իբրեւ մեր Փրկիչը , ճանչնալով որ մեր փրկութիւնը բոլորովին իրմէն է :

## 11

Ուստի ամեն բան որ կ'ուղէք թէ մարդիկ ձեզի ընեն , դուք ալ անոնց անսնկ ըրէք . ինչու որ՝ աս է օրէնքը ու մարդարէութիւնները : Առաջ . 12 :

Աս է մեր ընկերին հետ վարուելու կանոննիս որ Կրիստոս մեզի տուաւ եւ շատ սքանչելի կանոն մըն է . կարծ է , սակայն իր հեղինակին իմաստութիւնը եւ սէրը կըցուցունէ : Կանի մը խօսքերով անանկ կանոն մը կըցուցունէ որ մարդոց ամեն հաղորդակցութիւնները ամեն տեղ եւ ամեն

ատեն կառավարելու յարմարութիւն ու  
նի : Ուշ որ միայն աս օրէնքը պահուէր,  
մարդոց հաստատած ամեն օրէնքները պա-  
րապը կ'ելլէին : Անատենը ոչ խարէու-  
թիւն կ'ըլլար՝ ոչ զրկանք՝ ոչ գողութիւն  
եւ ոչ ուրիշ մեղք մը, հապա ընդհանուր  
խաղաղութիւն կը թագաւորէր ամեն տեղ,  
ու բանտեր բնաւ պէտք չէին ըլլար : Աս  
օրէնքը շատ պարզ է, դիւրաւ կը յիշուի  
ու կը գործածուի . փոքրիկ տղայ մը կընայ  
անիկայ յիշել, եւ իր գործքերը անոր հետ  
բաղդատել : Դէպի մեր ընկերներնուս ու-  
նեցած մէկ պարտաւորութեան մը վրայ թէ  
որ տարակոյս մը ունենանք թէ ինտոր պէտք  
է որ ընենք, անատենը միայն սա հար-  
ցունելու ենք թէ ան նոյն բանը ինտոր պի-  
տի ուղէինք որ անոնք մեղի ընէին : Ուշ որ  
աս կանոնիս հնաղանդուէր, աս կեանքիս  
թշուառութիւններէն շատերը չէին ըլլար :  
Ասիկայ Քրիստոսի բոլոր օրէնքներուն նը-  
ման աշխարհի վրայ խաղաղութիւն ու մար-  
դիկներուն հաճութիւն կուտայ եւ կը ցու-  
ցունէ թէ Քրիստոս ինչպէս որ իմաստուն  
է այնպէս ալ բարի է : Աղեկ ըսին իրեն  
համար, երբոր դեռ աշխարհիս վրայ էր,  
թէ “ Անաւ մէկ մարդ մը անանկ խօսած չէ

ինչպէս որ ան մարդը": Ծագւ. կ. 46:

## 12

Եւ եղաւ որ ինքը անոնք օրհնելու ա-  
տենը՝ զատուեցաւ իրենցմէ ու վեր կ'ել-  
լար դէպի երկինքը: Պատկ. ԵՊ. 51:

Քիսուս աշխարհիս վրայ իր ունեցած  
գործը ալ լմնցուցած էր. իր սգաւոր աշա-  
կերտներուն սիրտը միսիթարեց. մտքեր-  
նին բացաւ որ Առւրբ Գիլքը հասկընան,  
որ կըցուցունէր թէ պէտք է իրեն որ ա-  
սանկ չարչարուի: Առւրբ Հոգին անոնց  
խոստացաւ եւ իր վերջին հրամանը տու-  
աւ, ու ետքը ձեռքերը վեր առաւ եւ ա-  
նոնք օրհնեց ու ասանկ զատուեցաւ անոնց-  
մէ ու վեր ելաւ երկինքը: Իր աշակերտնե-  
րը օրհնելով վեր ելաւ, եւ մինչեւ հիմա  
աս օրհնութեան գործը շատ հաճելի է ի-  
րեն: Վշխարհիս վրայ ըրած աս իր վերջին  
գործը, որ երկինքը ելլալու ատենն ալ ը-  
րաւ, մինչեւ հիմա կը գործէ: Թէպէտեւ  
Վստուծոյ աջ կողմը բարձրացաւ, բայց  
մարդոց մէջը անանկ խեղճ ու անարդուած

մէկը չ'կայ, որ եթէ ապաշխարող եւ հաւատացով սրտով մը իրեն մօտենայ, ինքը անոր չ'նայի ու անիկայ չօրհնէ: Իր անձը տալով մարդոց որդիներուն համար ամենամեծ օրհնութիւններ ծախու առաւ, ու ասոնք ձրի եւ շաբունակ բոլոր զինքը սիրողներուն կը պարզեւէ:

## 13

Ինչու որ հաւատքով կ'երթանք մենք, ու չէ թէ կարծիքով: Տ. Աստված. Ե. 7:

Վրիստոնեային իր առջեւը ունեցած նպատակները տեսնուելուն պատակներ չեն: Իրեն դիտաւորութիւնները անանկ բայներու վրայով են, որոնք միայն Աստուծոյ իրեն յայտնելովը ընդունած է: Իր ունեցած յոյսերուն ու վախերուն ամենքն աւաներեւոյթ բաներու կը վերաբերին: բայց հաւատքը քիչ շատ ան բաները տեսած ըլլալու չափ զօրութիւն կուտայ: Կը հաւատայ որ երջանկութեան արքայութիւն մը ու թշուառութեան դժոխք մը կայ, որ մարդը մեռնելէն ետեւ անոնց երկուքին մէ-

կուն մէջ պիտի երթայ, եւ կ'աշխատի առանկ ճամբով մը երթալու որ մէկուն հասնի ու մէկալէն ետ կենայ: Աըհաւտայ որ իր հոգին յաւիտեան պիտի ապրի, եւ աս ճշմարտութեանը հաւտալով կարող կ'ըլլայ բոլորտիքը գտնուող զգալի բաներէն յառաջ եկած փորձութիւններուն դէմ կենալու: Աըհաւտայ որ սուրբ Աստուած մը միշտ իր վրան կը նայի, եւ քիչ շատ անանկ կերպով մը կը շարժի որ իբր թէ Աստուծոյ աչքը իր վրայ հաստատուած կը տեսնէ: Աըհաւտայ որ Հիսուս Քրիստոս զինքը փրկելու համար մեռաւ, եւ աս ճշմարտութեանը հաւտալով, աչքովը անիկայ խաչափայտին վրայ տեսածի պէս սիրտը կը շարժի: Հաւատքնիս որչափ որ զօրաւոր ըլլայ հոգեւոր բաներու վրայ ըրած խորհրդածութիւններնիս այնչափ պայծառ եւ վարքերնիս ալ այնչափ սուրբ կ'ըլլայ: Ազօթենք աշակերտներուն հետ ըսելով, Տէր՝ աճեցուր մեր հաւտաքը:

Չարերուն խաղաղութիւն չ'կայ կ'ըսէ Տէրը: Եսայ, Խր., 22:

Վարդիկ մեղանչելով խաղաղութիւն-  
նին կը կորսնցունեն . կրնայ ըլլալ որ մեղ-  
սալից կեանքի մը մէջ անանկ ատեններ  
ըլլայ որ զուարձանան եւ երբեմն քիչ մը  
տաեն շատ երջանկութիւն ունենան , բայց  
հաստատուն խաղաղութիւն մը չունին :  
Խղճմտանքնին իրենք կը նեղէ եւ գործած  
մեղքերնին իրենց կ'իմացունէ , եւ աս բա-  
նը իրենք թշուառութեան մէջ կը ձգէ :  
Վահուան խորհուրդը ամենէն երջանիկ  
ժամերնին կ'աւրէ , եւ երբոր Աստուծոյ  
առջեւը դատաստանի ելլալնին կը մտմտան  
վախով ու գողով կը լեցուին : Իրենց չար  
կիրքերն ալ՝ որ կը գործածեն , իրենք թըշ-  
ուառութեան մէջ կը ձգէ : Տէրն է՝ “Զարե-  
րուն խաղաղութիւն չ'կայ” , ըսողը , եւ ա-  
մեն մարդ իր փորձառութիւնովը կը տեսնէ  
որ Տէրոջը աս խօսքը ճշմարիտ է : Խնտո՞ր  
խաղաղութեան մէջ կրնայ ըլլալ ան մարդը ,  
որ մեղքով լեցուն խղճմտանքի մը տուած-  
տանջանքները կը քաշէ եւ Աստուծոյ բար-  
կութիւնը իր վրան է : Միայն մէկ ճամբայ  
մը կայ , որով մեղաւորը ճշմարիտ եւ հաս-  
տատուն խաղաղութիւն կրնայ դանել , եւ  
անիկայ Քրիստոսի հաւտալն է : Ուէ որ  
մեղաց համար անոր ըրած քաւութեանը ա-

պաւինինք, խիղճերնիս մեզ տանջելէն կը-  
դաղրի: Ուշ որ անոր արդարութիւնովը  
հագուինք, Հայրը մեզի հետ կը հաշտուի  
եւ սթաերնուև խաղաղութիւն կուտայ: Ուշ  
որ իրեն հաւտանիք, ինքը կը խոստանայ որ  
մեզի յաղթութիւն պիտի տայ մահուան վը-  
րայ, անանկ ոք մահը ալ մեզի վախ մը չը-  
կրնայ տալ: Ուշ ոք սրտնրնիս իրեն մօտե-  
ցունենք, բժլոր պիղծ կիրքերնիս պիտի  
սանձէ, որ մեր ներսիդին խաղաղութիւն  
կ'ունենանք:

## 15

Ահով ու գողով անձերնուդ փրկու-  
թիւնը գործեցէք. ինչու որ Աստուած է՝  
որ ձեզ մէջը կը յաջողէ կամքը ու ընելը  
իր հաճութեանը համար: Փելք. բ. 12, 13:

Աս գործը՝ որ հրաման եղած է մեզի, մեղ-  
քերնուած համար քաւութիւն ընել չէ, ին-  
չու որ աս բանը՝ Քրիստոս մեզի համար ը-  
քեր է: Ասիկայ մեր բարի գործքերովը  
արքայութեան աթժանաւորութիւն մը ու-  
նինալը փնտուել չէ, քանզի ըսուած է մե-

զի որ “Օրէնքին գործքերովը մէկ մարմին  
մը պիտի չարդարանայ”։ Բայց մեր գործը  
Աստուծոյ ուղածին պէս տրամութիւնով  
մեղքերնիս զղջալ է։ Քրիստոս մի միայն  
Փրկիչ հաւատալ է։ Խեղճ ու թշուառ  
մեղաւորներ ըլլանիս զգալով, անձերնուև  
վրայ ամենեւին յոս մը չ' դնել է, եւ փըր-  
կութեան համար մի միայն Քրիստոսի ա-  
պաւինիլ է։ Ա արքի հնազանդութիւնով  
մեր հաւատքին ճշմարիտ ըլլալը ցուցունել  
է։ սրտերնուև մէջն եղած բոլոր մեղքերը  
յաղթելու աշխատիլ է, եւ մեր Փրկչին նը-  
ման ըլլալ է։ Ասիկայ մէկ մեծ գործ մըն  
է որ ահով ու դողով ընելու ենք։ ինչու  
որ մեղանչական ու խաթեբայ սրտեր ունինք,  
որոնք միշտ մեղ մոլորցունելը կը նային։  
ու նաեւ աս աշխարհիս մէջ Աստանան եւ  
ուրիշ թշնամիներ ալ կան որոնք միշտ մեղ  
կորսնցունելու կ' աշխատին։ Բայց աս ծանր  
գործիս մէջ աս քաջալերութիւնը ունինք  
որ Աստուած կը յաջողէ մեր մէջը կամելը  
ու ընելը իր հաճութիւնովը։ Ուէ որ Ճըշ-  
մարտապէս իր զաւկըներն ենք, մեր սրբ-  
տերուն մէջ սկսած գործը չ' ձգեր որ մենք  
կատարենք, հապա ինքը առաջ պիտի տա-  
նի իր սկսածը։ Կնքը կատարելապէս մե-

զաց իշխանութենէն եւ անէծքէն մեղ պիտի ազատէ, եւ մենք միայն շնորհքով եղած փրկութիւնը յաւիտեան պիտի երգենք:

16

թէ որ մէկը կ'ուղէ անոր կամքը ընել,  
պիտի գիտնայ աս վարդապետութեանս հա-  
մար՝ թէ Աստուծմէ է իրաւցունէ, թէ եւ  
ինքիրմէս կը խօսիմ։ Յովն. 1. 17:

Աս աշխարհիս մէջ շատ անհաւատներ  
կան, բայց իրենց անհաւատութեանը մեծ  
պատճառը “Անոր կամքը ընել” չուզելնին  
է: Աստուածաշունչը մարդոցմէ կը պահան-  
ջէ որ մեղքը ատեն եւ սուրբ ըլլան, բայց  
անոնք մեղքը կը սիրեն եւ կ'ուզեն միշտ  
գործել. ուստի չեն ուզեր հաւտալ թէ  
Աստուածաշունչը Աստուծոյ հրամանովը  
գրուած է: Բայց թէ որ մարդ մը Աստ-  
ուածաշունչը կը կարդայ սրտանց անոր  
Ճշմարտութիւնը գիտնալու եւ անոր հե-  
տեւելու փափաքով մը, անատենը անոր  
Աստուծմէն ըլլալը շուտով պիտի իմանայ:

Պիտի գտնայ որ մարդուս բնաւորութեանը  
վրայ հոն ինչ որ ըսուած է կատարեալ շի-  
տակ է . պիտի իմանայ թէ ինքն է աննոյն  
մեղաւորը որ հոն ստորագրուած է : Պիտի  
իմանայ թէ փրկութեան խորհուրդը ճիշտ  
իրեն կարօտ եղածին պէս է , ու թէ ան է-  
ութիւնը հնարեր է աս ճամբան որ մարդ-  
ուն ներսիդին ինչ կենալը աղէկ գիտէ:  
Ֆակ որ ապաշխարէ իր մեղքերը եւ Քը-  
րիստոսի հաւտայ , հաւտացեալներուն  
տրուած խաղաղութեան խոստմունքին ճըշ-  
մարտութիւնը պիտի իմանայ : Աստուծոյ  
եւ սուրբերուն հետ եղած հաղորդա-  
կցութեան վարդապետութիւնը պիտի հաս-  
կընայ , ինչու որ աս բանը նաեւ բուն իր  
վրայ փորձով ալ պիտի իմանայ : Ֆակ որ  
անկեղծութեամբ աղօթէ Աստուծոյ . ա-  
ղօթք լսելուն եւ աղօթքի պատասխանել-  
ուն վարդապետութեան ճշմարտութիւնը  
պիտի սորվի : Ա արդապետութիւններու  
վրայ եղած մարդուս բոլոր տարակուսանք-  
ները պարզապէս Աստուծածաշունչին պատ-  
ուէրներուն հնազանդելով կը լուծուին :

Եւ ամենուն կ'ըսէր, թէ որ մէկը կ'ուղէ իմ ետեւէս գալ, իր անձը թող ուրանայ՝ եւ ամեն իժիր իր խաչը առնէ, ու գայ իմ ետեւէս։ Պահէ։ թ., 23։

Թէ որ քրիստոնէութիւնը առջի բերանը աշխարհս մտած ժամանակը ուրիշ սուտ կրօնքներէն առաւել մեծ զօրութիւն չունենար, անիկայ հաստատողը աս վերի պահանջմունքները ընելուն համար ամենեւին պիտի չ'տարածուէր։ Եւ թէ որ Աստուած Ճշմարտութեան զօրութիւն չ'տար, մինչեւ աս օրս Տէր Յիսուս Քրիստոսի անկեղծութեամբ եւ զերմեռանդութեամբ հետեւող մը պիտի չ'գտնուէր։ ինչու որ մարդիկ տակաւին ընութեամբ անձնուրացութեան կեանք վարելու բոլորովին հակառակ են։ Բայց ի՞նչ է Քրիստոսի պահանջած անձնուրացութիւնը։ Աստուծոյ օրէնքին հակառակ գտնուած ամեն փափաքներնիս մէկ դի ձգել է։ մեր կամքը բոլորովին Աստուծոյ կամքին հնազանդեցունել է։ մինչեւ անդամ խորհրդով գործուած մեղքերուդէմ կենալ է։ Աստուծոյ մեղմէ պահան-

ջած բոլոր բաները ընել է, մինչեւ անդամ  
թէ որ աս պատճառովք բոլոր մեր բարե-  
կամները ու ճանչուորները մեզ ծաղը ընեն  
եւ ատեն : Վեր զուարձութիւնները կամ  
մեր շահը չ'նայիլ է, երբոր ասանկով կըր-  
նանք ուրիշներուն օգուտ մը ընել, կամ  
Քրիստոսի ճշմարտութիւնը տարածել : Եւ  
վերջապէս անձերնուս վրայ ամենեւին յոյս  
մը չ'դնել է, դիտնալով թէ մեզմէ ամեն-  
եւին արժանաւորութիւն մը չունինք . եւ  
փրկութիւնը իբրեւ պարզեւ մը ընդունիլ  
է՝ Քրիստոսի արիւնովք մեզի համար ծա-  
խու առնուած :

18

Խսկ ես արդարութիւնով պիտի տես-  
նամ քու երեսդ . երբոր արթնեամ քու  
գէմքէդ պիտի կշտանամ : Այով . ձ.կ. . 15:

Ամեն մարդ երջանեկութեան մեծ փափաք  
ունի, որ անիկայ երկրաւոր բաներէն ըը-  
նաւ մէկը չ'կրնար լեցունել : Քրիստոնեան  
եւելի մեծ փափաքներ ունի եւ դիտէ որ ա-  
նոնց կատարեալ լեցուելու ժամանակը կը-

11

մօտենայ : Աստուծոյ ամեն ճշմարիտ զաւ-  
կըները կրնան ըսել “Դաւիթ մարդարէին  
հետ , “Երբոր արթննամ քու դէմքէդ պի-  
տի կշտանամ” : Վարդս առաջ Աստուծոյ  
պատկերին պէս ստեղծուեցաւ . բայց աս  
կերպարանքը մեղքով աւրուեցաւ . ճշմա-  
րիտ քրիստոնէին ամենէն մեծ փափաքը աս  
կերպարանքը նորէն ունենալ է : Փափաք-  
ելով կը փափաքին մեղքէ աղատ ըլլալու ,  
որ իրենք Աստուծոյ աննման կ'ընէ : Կ'ու-  
զեն որ ըոլոր իրենց փափաքները անոր ու-  
նեցած փափաքներուն պէս ըլլան , եւ ի-  
րենց կամքը ըոլորովին անոր կամքին հա-  
մաձայն : Աըցանկան որ իրեն պէս սուրբ  
ըլլան . եւ աս իրենց փափաքները պիտի  
կատարուին : Առաքեալը կ'ըսէ , թէ “Եղբ  
անիկայ յայտնուի , անոր պէս պիտի ըլ-  
լանք , վասն զի անիկայ պիտի տեսնենք ինչ-  
պէս որ է” : ( Հ . Յ . Ա . Պ . 2 : ) Օրհնեալ յոյս .  
շարունակենք մեղաց դէմ ունեցած պատե-  
րազմիս , գիտնալով որ ասոր վախճանը աս  
յոյսն է . խնդալով քնանանք մահուան  
քունք , գիտնալով որ իր նմանութիւնովը  
պիտի արթննանք :

Եւ հաւատացեալներուն բազմութիւնը  
մէկ սիրտ ու մէկ անձ էին։ Գործ. Դ. 32։

Վրիստոս աղօթքը ըրաւ որ իր աշակերտ-  
ները մէկ ըլլան եւ առաջին հաւատացեալ-  
ները մէկ սիրտ ու մէկ անձ էին։ Անոնք  
Վրիստոսի վրայ ունեցած սէրերնին անոր  
տուած փորձովը կը ցուցունէին։ այսինքն  
թէ “Ասով ամենը պիտի գիտնան թէ իմ  
աշակերտներս էք, թէ որ մէկզմէկ սիրէք”։  
Յոթ. Ճ.Գ. 35։ Տայց որչափ փոխուած  
է հիմա աս բանը։ Քրիստոնեայ կանչուող-  
ներէն քանի քանիները մէկզմէկ սիրելնուն  
տեղը իրարու ատելութիւն կը ցուցունեն։  
արդեօք ասանկները ճշմարտապէս Վրիս-  
տոսի հետեւողներ են։ Շատերը կան որ  
միայն իրենց լշկեղեցինն անդամ եղողնե-  
րը կը սիրեն, ու բոլոր ուրիշներուն վրայ  
թէ որ թշնամութեամբ ալ չէ, բայց ցըր-  
տութիւնով մը ու կասկած ունենալով կը-  
նային։ ասանկ բաներ ըլլալու չեն։ Ամեն  
հաւատացեալներ Վրիստոսի հետ մէկ են,  
ան որթն է անոնք ալ ճուղերն են, ուստի  
պէտք չէ որ մէկզմէկու հետ ալ մէկ ըլլան։  
Ես արինովը փրկուած են եւ ամենն ալ

Նոյն արքայութեանը մէջ բնակիլ կը յուսան, ուստի պէտք է որ աշխարհիս մէջ մէկղմէկ ատեն։ Աստուած սէր է, եւ բռլոր Աստուծմէ ծնածները մէկղմէկ սիրելու են։

## 20

Ուշ որ սրտիս մէջը մեղք տեսնայի, Տէրը պիտի չ'լսէր։ Առաջ. Կօ. 18։

Աստուած աղօթքի համար մեղի շատ եւ պատուական խոստմունքներ ըրաւ, բայց չէ թէ առանց պայմանի. պէտք է որ շիտակ կերպով աղօթենք, սյսինքն իրեն կամքին համաձայն բաներ խնդրենք, եւ ան ալ Վը ըրիստոսի անունովը։ Աստուած սիրտերնիս կը քննէ ըրած խնդիրքներնուս դիտաւորութիւնները տեսնելու համար, եւ թէ որ հոն անօրէնութիւն տեսնէ, մեղի պիտի չ'լսէ։ Աստուծոյ կամքին դէմքան խնդրելու շենք. թէ որ աշխարհային օրհնութիւններ խընդրենք, ու ինքը խնդրածնիս շտալը աղէկ սեալէ, պատրաստ գտնուելու ենք ուրախութեամբ իրեն հնազանդելու։ Չենք կրնար անանկ շնորհք մը խնդրել, որ միայն կամ դըւ-

Խաւորապէս մեր օգտին համարը լլայ, հապա  
բոլոր վայլելու ուզած բաներնուս վախճանը  
Աստուծոյ փառքին համար պէտք է ըլլայ:  
Քայ որ հոգեւոր օրհնութիւններ խնդրենք,  
անտարակոյս Աստուած մեղի պիտի տայ թէ  
որ շիտակ կերպով խնդրենք . բայց նայել-  
ու ենք որ անկեղծութիւնով եւ ջերմե-  
ռանդութիւնով աղօթենք: Այսելու ենք որ  
չոկ մեր հպարտութեանը փափաքները լե-  
ցունելու եւ մեր վրայ ունեցած վստահու-  
թիւննիս զօրացունելու համար չըլլայ: Ո՛հ  
որչափ կարօտ ենք Սուրբ Հոգիին օգնու-  
թեանը որ մեզ կարողացունէ շիտակ կերպ-  
ով աղօթելու:

## 21

Ա. ասկէ ետեւ ծառայ չես, հապա որ-  
դի . եւ թէ որ որդի՝ ալ Աստուծոյ ժա-  
ռանդը: Գառն. Դ. 7 :

Անչ զարմանալի ճշմարտութիւններ կան  
Աստուածաշունչին մէջ . եւ ամենէն զար-  
մանալիներէն մէկն ալ աս է, որ մեղաւոր  
մարդիկ Աստուծոյ որդի եւ ժառանդ կըր-

նան ըլլալ։ Յմէ որ մէկը աս բարձր պատիւր պահանջելու ըլլար, շատ մեծ յանդը նութիւն ըրած պիտի սեպէինք։ բայց Աստուած ինքը կ'ըսէ թէ աս բանը կրնայ ըլլալ։ Եւ իր սուրբ խօսքին մէջ ալ ասանկ գրուած է։ Այսուհետեւ մէկը միայն որդեր ենք, թէպէտեւ յանցանքով բեռնաւորուած մեղաւորներ ենք, մեր յանցանքներովը կորսուած եւ անօդնական, սակայն կրնանք Ամենակարող Աստուծոյ որդիները ու աղջիկները ըլլալ։ ունաեւ ժառանդ ալ, որովհետեւ երկնային թագաւորութեան բոլոր փառքերը մեր ժառանդութիւնն են։ Վրիստոսով մինչեւ աս աստիճանը կրնանք բարձրանալ։ մեղմէ մէկ արժանաւորութիւն մը ունենալնուս համար չէ, քաւ լիցի։ Հապա իր արիւնը թափելուն համար որ մեր մեղքերը քաւէ, եւ անոր համար որ եթէ ապաշխարենք եւ իրեն հաւտանք, մեղ իր արդարութիւնովը պիտի հագուեցունէ եւ այսպէս իր ծօրը աթուոին առջին մեղ անմեղ պիտի երեւցունէ։ Ասիկայ բոլորովին Վրիստոսով է։ (Օրհնեալ Փրկիչ, քու անձառելի սիրոյդ դէմինչ պարտաւորութեան տակ ենք։

Չեր ամեն հոգը անոր ձգեցէք, ինչու որ  
անիկայ է որ ձեզի համար կը հոգայ: Ե. ՊԵտք,  
Ե. 7:

«Քրիստոնեաները աշխարհային բանեւ-  
րու համար նեղութիւն քաշելու պատճառ  
չունին: Ինչ պիտի ուտենք, ինչ պիտի  
խմենք, եւ ինչ պիտի հագնինք խօսքերը  
միայն աս աշխարհիս համար ապրող եւ  
Քրիստոսով Աստուծոյ հետ չ'հաշտուող  
մարդոց նեղութիւն տուող հարցմունքներ  
են: Բայց անոնք որ Աստուծոյ կը նային  
իրեւ հաշտուած Նօր մը, հանգիստ ըլա-  
լու են՝ հաւտալով որ բոլոր պէտք եղած-  
ները իրենց պիտի տայ: Եւ ոչ ալ մեծ հոգ  
տանելու են իրենց զաւկըներուն կամ բա-  
րեկամներուն եւ կամ դալու նեղութեան  
վրայ: Աստուած իրենք կը հոգայ, եւ այս-  
չափը բաւական է. Աստուածաշունչն է ա-  
սիկայ հաստատողը, որ նաեւ կ'ըսէ թէ մեր  
ամեն հոգը իրեն ձգենք, աս իկայ Աստու-  
ծոյ կողմէն մեզի մեծ շնորհը մըն է, բայց ո-  
րովհետեւ իր խօսքն է անիկայ հաստատողը,  
ուստի անկէց առաջ եկած բոլոր միսիթարու-

Թիւնները կրնանք վայլել : Աստուած է  
որ մեղ կը հոգայ, ուրեմն մենք հանդիսա  
ընենք : Տոլոր մեր նեղութիւնները ապա-  
հովութեամբ իրեն կրնանք յանձնել եւ ին-  
քը մեղ կը հոգայ :

---

## 23

Եր ականջը օրէնքին մտիկ ընելէն մէկդի  
դարձունողին աղօթքը անգամ պղծութիւն  
է : Աստակ, Եր, 9 :

**Ա**ստուած կը հրամայէ բոլոր մարդոց որ  
աղօթք ընեն, ու սուրբ եւ կոտրած սրտով  
իրեն եկողներուն աղօթքը անոր շատ հաճոյ  
է : Տայց մարդիկ ասիկայ չարաչար կեր-  
պով կը գործածեն, քանզի կը կարծեն թէ  
շատ ու երկան աղօթքներ ընելով կրնան  
Աստուծոյ ընդունելի ըլլալ, թէ եւ իրենց  
կենցաղավարութիւնը դէշ ըլլայ : Կրնան  
գուցէ բոլոր օրը խարէութիւնով եւ ըն-  
կերնին զրկելով անցունել, կրնան Աս-  
տուծոյ օրէնքին արդիլած բոլոր մեղքերը  
գործել . կրնան բոլոր օրը Աստուած միտ-  
քերնուն շանցուցած անցունել, եւ թէ որ

իրիկունը արտաքին կերպով աղօթքնին՝ մատուցանեն, կը կարծեն թէ ասանկ պռկունքով ծառայելնին անոր հաճելի բան մըն է, կամ բոլոր շաբաթը մեղքով կ'անցունեն, ու երբոր Կիրակի օրը կուգայ, Եկեղեցին կ'երթան իրը թէ իրենց անցած մեղքերը քաւելու համար։ Ըստ Աստուած ասանկ զոհերը կ'ատէ։ անիկայ սրտին կը նայի, եւ անզեղջ սրտերուն մատուցած աղօթքը իրեն անհաճոյ է, որոնք կրկին իրենց մեղքերուն կը դառնան, անիկայ չ'խաբուիր ու ծաղը չըլլար։ Ոչ թէ շնորհէր ինծի Տէրը որ հաւատքով եւ ապաշխարութիւնով աղօթք մատուցանէի, իրեն հնազանդելու հաստատուն դիտաւորութիւնն ունենալով։

## Զե

Որ մեղ խալսեց խաւարին իշխանութենէն, ու մեղ իր սիրելի Արդի՛ն թագաւորութեանը փոխեց։ Կող. Ա. 13 :

Երբոր մէկ մարդ մը կ'ապաշխարէ ու Քրիստոսի կը հաւասայ, մէծ փոփոխութիւն մը կ'ըլլայ իր վիճակին եւ վարքին

մէջ : Ան մարդը առաջ խաւարին իշխանութեանը տակն էր, իր միտքը խաւարած էր, անոր համար չէր կրնար ճշմարտութիւնը իմանալ, ու պարապ եւ խարէական մոլորութիւններու ետեւէ կ'երթար, չարը բարիի ու բարին չարի տեղ առնելով : Եթ վրայ տիրողը խաւարին իշխանն էր, որ իրմէն բռնուած էր իր կամքին ծառայելու . (Տ. Տէ. Բ. 26.) իր աչքին առջեւը ունեցած բոլոր ժառանգութիւնը խաւարին մըսութիւնն էր : Իսպայ հիմա աս խաւարին թագաւորութենէն Քրիստոսի թագաւորութեանը բերուեցաւ, իր միտքը լուսաւորուած է ու կրնայ տեսնել Աստուծոյ ճշմարտութիւնը, եւ անոր լուսովը ուրախութեամբ կըքալէ : Ալ գերութիւն ընել տուող կիրքերու ենթակայ չէ, հապա իր սիրտը նորոգուած է, ու բարին կըսիրէ եւ բարի բաներու կը հետեւի : Հիմա Աստուծոյ որդիներուն ազատութիւնը կըվայլէ, կրնայ Աստուծոյ նայիլ իրրեւ իր Հօրը, Հիսուս Քրիստոս իր Տէրը ու Ասրդապեան է եւ ուրախութեամբ կ'երթայ ուր որ զինքը առաջնորդէ : Աստուծոյ ժողովուրդին հետընկերութիւն ունի, եւ կրնայ նայիլ ան ժամանակին երբոր լոյսի մէջ ընակող սուրբերուն

վիճակին մասնակից պիտի ըլլայ: Առև. Ե. 13:  
Երդեօք աս մեծ փոփոխութիւնը իմ վրաս  
եղաւ: Ամեն օր քննեմ իմ սիրտս, որ չըլ-  
լայ թէ ասանեկ մեծ բանի մը մէջ խարուած  
գտնուիմ:

## 25

Բայց ես իմ անձս մէկ բանով մը պատ-  
ուական չեմ սեպեր, միայն թէ իմ ընթաց-  
քըս ուրախութեամբ լմնցունեմ: «Կարծո-  
ւ. 24:

Պօղոս գիտէր թէ իր առջեւը կապեր եւ  
նեղութիւններ կային. արդէն Քրիստոսի  
համար շատ նեղութիւն քաշած էր, եւ դի-  
տէր թէ մինչեւ իր կեանքին վախճանը խա-  
ղաղութիւն ու հանգիստ պիտի չ'կրնար  
գտնել: Բայց աս բաներէն մէկը զինքը  
չէր շարժեր. երբոր փորձութեան մը մէջ  
կ'կյնար ուրիշ մարդոց պէս նեղութիւն կը-  
քաշէր. բայց առջեւի եղածներուն կը նա-  
յէր, ու իր ճամբուն մէջ պատահած բանե-  
րուն մտիկ չէր ըներ: Աստուած ինչ որ

գլխունքերէր կ'ուզէր ընդունիլ, անանկ որ  
հաստատ մնայ մինչեւ վերջը եւ իր ըն-  
թացքը ուրախութեամբ լմնցունէ : Պօղոս  
խելացութիւնով աս Ճամբան բռնեց . որ-  
չափնեղութիւն որ քաշէ աս աշխարհիս մէջ  
միայն քիչ մը ատեն կը տեւէ, եւ անա-  
տենը վախճանը յաւիտենական ուրախու-  
թիւն պիտի ըլլայ : Վ՞ենք ալ միշտ մեր ըն-  
թացքին վախճանին նայելու ենք . բոլոր մեր  
դիտաւորութիւններուն ու զբաղմունքներ-  
ուն համար, ու բոլոր մեր զուարձութիւն-  
ներուն եւ ջանքերուն համար մենք մեղի  
հարցունելու ենք թէ աս բանը՝ ո-  
րուն որ ձեռք պիտի զարնեմ, արդեօք իմ  
ընթացքս ուրախութեամբ լմնցունելուս  
կ'ոդնէ : Հոգչէ ինչ որ գլխունուս գայ աս  
կարճը կեանքերնուս մէջ, բայց առջեւնիս  
եղած յաւիտենականութեանը նայինք, որ  
հոներջանկութիւն գտնալու համար աշխա-  
տիլը ամեն բանէն եւել օգտակարէ :

չու որ աս է Աստուծոյ կամքը Քրիստոս  
Ծիստսով ձեր վրայ : Ե. ԹԱՅԻ. Ե. 18 :

Եւ ինչ, միթէ ամեն պարագաներու  
մէջ գոհութիւն տալու ենք, երբորստաց-  
ուածքներնիս կորսնցունենք ու աղքատ-  
ութեան եւ կարօտութեան մէջ իշխանիք,  
երբոր հիւանդութիւն գայ վրանիս ու ցա-  
ւերով տանջուինք, երբոր մահք գայ ու ա-  
մենէն սիրելի բարեկամներնիս առնէ տանի,  
միթէ անատենն ալ գոհութիւն տալու ենք:  
Այս, որովհետեւ ան խոստմունքը ունինք  
թէ ամեն ըան Աստուած սիրողներուն ո-  
գուտին համարէ, եւ հաստատ զիտենք թէ  
անիկայ մեր օգուտին համար մեղ կը յան-  
դիմանէ, որ անոր սրբութեանը հաղորդ ըլ-  
լանք . (Ե. Բ. Ճ. 10:) ուստի մեծ պար-  
տականութիւն ունինք Աստուած օրհնելու  
մինչեւ անդամ մեր պինտ ծանր նեղու-  
թիւններնուս մէջ : Ասկէց զատ ինչ եւ ի-  
ցէ փորձութեան մէջ որ իշխանք տակաւին  
մենք անարժաններս շատ օրհնութիւններ  
կը վայլենք, որոնց համար պարտաւոր ենք  
գոհութիւն տալ : Ասոնցմէ եւել՝ թէ որ յոյս  
ունինք թէ մեղքերնիս ներուած է, եւ թէ  
Քրիստոսով ընդունուած ենք, թէ որ յոյս

ունինք թէ երկինքին մէջը յաւիտեան երածանկութիւն պիտի վայլենք, անատենը թէ եւ բոլոր մարմնաւոր հանգստութիւններանուսզրկուինք ալ տակաւին Աստուծոյ շատ գոհութիւն տալու ենք: Երբոր խորհինք Աստուծոյ ան մեծ սիրոյն վրայ, որով մեղ սիրեց մինչեւ անդամ իր Արդին մեղի համար մեռնելու տալովը, պէտք է որ փառաբանութիւն տալու համար մեր սրտեցը միշտ վասին ու մեր լեզուներն ալ բնաւ չ'դադրին:

## 27

Ուրախ եղիք Տէրով ամեն ատեն, նորէն կը լսեմ՝ Ուրախ եղիք: Փէլքո, Դ. 4:

Առջի բերանը դժուար կ'երեւի ամեն ատեն աս հրամանին հնազանդիլը, մեր սիրելի բարեկամներնուս մէկ քանին մեռնելուն համար, կամ գլխունուս եկած մէկ թշուառութեան մը համար, եւ յատկապէս մեղքերնուս ծանրութիւնը իմանալով՝ երրոր մեծ տրտմութեան մէջ կ'իյնանք, դժուարին գործ մը կ'երեւի մեղի “Ամեն ատեն ուրախ եղիք” հրամանին հնազանդիլը: Եւ իրաւ-

ցունէդժուարբան կ'ըլլար թէ որ աս ուրա-  
խութիւնը մեր մէջը փնտուելու ըլլայինք :  
բայց ասանկ չէ, հապա մեզի հրամայուած  
է որ՝ Տէրով ուրախ ըլլանք : Ինքը ամեն  
ատերն նոյն է եւ իրմով կրնանք միշտ ուրա-  
խանալ : Ուրախ ըլլալու ենք որ Տէրը կը-  
թագաւորէ, եւ թէ տիեզերքին կառավա-  
րութիւնը ասանկ սուրբ էակի մը ձեռքն է:  
Ուրախ ըլլալու ենք որ ինքը իր բոլոր կա-  
տարելութիւններովը այնչափ փառաւոր է,  
թէ ինքը արդար՝ սուրբ եւ բարի է, թէ մեղ-  
քը առանց պատիժի պիտի չ'թողու : Ու-  
րախ ըլլալու ենք որ մենք ու մեր ամեն բա-  
ները իրեն ձեռքն են, եւ թէ մեր ու բոլոր իր  
արարածներուն վրայ շատ իմաստութիւն-  
ով ու բարութիւնով կը տիրէ : Ուրախ ըլ-  
լալու ենք իրմով, որ ինքն է Տէր Հիսուս  
Քրիստոսի այրը, եւ անոր միջնորդու-  
թիւնովը ինքը ողորմութիւններուն այրը  
եւ ամեն շնորհքներուն Կատուածն է : Կ-  
մեն ատեն մարդարէին հետ ըսելու ենք “ինէ  
եւ թուղին ծառը ծաղիկ շտայ, եւ որթե-  
րուն վրայ պտուղ չոլլայ . ձիթենիին գոր-  
ծը պարապը երթայ, ու արտերը կերա-  
կուր շտան . փարախսէն ոչխարները հատնին  
ու ախոռը խաշինք շմայ, ես Տէրով պիտի

ուրախանամ , իմ փրկութեան Աստուծովս  
պիտի ցնծամ” : Ահք . գ . 17,18 :

## 28

Ա ասն զի ես գիտեմ իմ անօրէնու-  
թիւնս , ու իմ մեղքս միշտ իմ առջիս է :  
• Քեզի , մինակ քեզի մեղանչեցի , ու քու-  
աչքերուդ առջեւը չարութիւն ըրի : Առաջ .  
օդ . 3,4 :

**Դ**ժմարիտ ապաշխարութեան խօսքերը  
ասոնք են , ան մարդը որ մեղաց համար ի-  
րօք կը տրտմի , իր յանցանքները Աստուծոյ  
կը զբուցէ : Իր մեղքերը ծածկել չուզեր ,  
հապա իր բոլոր ըրածները Աստուծոյ առ-  
ջին կը խոստովանի : Եւ չէ թէ միայն այս-  
չափ , հապա ինքիրենը շատ կը խորհի ա-  
նոր վրայ ու կ'ողբայ : Վիրտը կը վիրաւորուի  
տեսնելով որ այնչափ մեղանչեր է անանկ  
բարի եւ սուրբ Աստուծոյ մը դէմ , եւ ասինկայ  
մոքէն չելւեր : Ծիրաւի կրնայ ըսել “ Ամ  
մեղքս միշտ իմ առջիս է ” : Կաւիթ աս սաղ-  
մոսը դրած ժամանակը Աւրիային դէմ շատ  
մեծ մեղքեր դրծած էր , բայց երբոր ա-

նոնց վրայ խորհեցաւ, իր մեղքերը իրեն  
այնչափ սոսկալի երեւցան, որ իբր թէ ուղա-  
ղակի Աստուծոյ դէմ գործեր էր, ինչու որ  
կ'ըսէ, Վ.եղի, մինակ քեզի մեղանչեցի: Ա-  
մեն գործած մեղքերնիս Աստուծոյ դէմ են.  
թէ որ մեր ընկերներուն նենգութիւն մը  
կամ խարէութիւն մը ընենք, կամ մէկ վը-  
նաս մը հասցունենք անոնց թէ խօսքով  
եւ թէ գործքով, Աստուծոյ դէմ մեղք  
է, ինչու որ ինքը կը հրամայէ մեզի որ ըն-  
կերնիս անձերնուս պէս սիրենք: Ծնկեր-  
ներնուս վրայ ունեցած ամեն չար զգացում-  
ներնուս վրայ Աստուծոյ առջին ողբալու-  
ենք, ինչպէս որ կ'ողբանք երբոր զինքը մոռ-  
նանք ու աշխարհքը սիրենք եւ իր ուրիշ  
պատուիրանքները կոտրենք:

## 29

Ինչու որ ան իր ականջը ինծի խոնարհե-  
ցուց, ու իմ օրերուս մէջ անոր պիտի կան-  
չեմ: Ասով. Շժ. 2:

Ոժէ որ երկրաւոր բարեկամէ մը բա-  
րերարութիւն մը խնդրենք, ու անիկայ մեր  
12

խնդրածը մեղի տայ , շուտով երկրորդ անգամ նոյն բանը խնդրելու չենք համարձակիր , որ ըլլայ թէ ձանձրանալով ըրած խնդիրքնիս չ'կատարէ : Քայց երբոր Աստուծմէ բարերարութիւններ ընդունինք ասանել ընելու չենք . ինչու որ մեր իրմէն ընդունածները մեղի քաջալերութիւն կուտան ալ աւելի մեծ օրհնութիւններ խընդրելու : Չենք կրնար Աստուծոյ շնորհաց հարստութիւնները հատցունել եւ կամ զինքը ձանձրացունել : Անիկայ կ'ուղէ եւ մեղի կը հրամայէ ալ որ պէտք եղած օրհնութիւնները միշտ իրմէն խնդրենք : Երբոր Աստուծած մարդասիրութեամբ մեր աղօթքներուն կը պատասխանէ եւ խնդրած բաներնիս կուտայ , անով աւելի մեծ շնորհքներ խնդրելու համարձակութիւն ունենալու ենք եւ աւելի հաստատուն հաւատքով աղօթելու ենք : Դաւիթ երբոր իր աղաւանիքներուն պատասխանը ընդունեց , քաջալերութիւն առաւ իր բոլոր կեանքին մեջը Աստուծոյ դիմելու : Պէտք է որ խընդրած օրհնութիւններնիս ընդունելու սպասենք , եւ անոր հաւատարմութեանը ապաւինելով մոքերնիս դնենք միշտ աղօթքը ընելու : Անաւենը մեր փորձառութիւնովը

պիտի գիտնանք թէ Աստուած աղօթքի կը-  
լսէ ու կը պատասխանէ :

## 30

Ուստի Պետրոս բանտին մէջը պահուած-  
էր, բայց անդադար եկեղեցին աղօթք կը-  
նէր Աստուծոյ անոր Համար : Կարծ . ձ. Բ . 5 :

Աս ատենս Եկեղեցին մէծ նեղութեան  
մէջ էր, հալածմունքը իրեն վրայ սաստկա-  
ցաւ, իրեն առաջնորդներէն մէկը՝ որ երե-  
ւելի առաքեալներէն էր, սպաննուեցաւ. Եւ  
հիմա ուրիշ մէկն ալ բանտն էր, որ անոր  
նման մահուան մը կը սպասէր : Չէին գի-  
տեր թէ առոր վախճանը ուր պիտի երթայ,  
կամ թէ իրենցմէ ովլ թշնամիին կատա-  
ղութենէն ազատ պիտի մնայ : Բայց արգեօք  
յուսահատեցան ու բան մը չըրի՞ն, եւ կամ  
թէ իրենք ասանկ ատելի ընող ճշմարտու-  
թիւնը ձգեցի՞ն . չէ՝ գիտէին որ յու-  
սահատելու բան մը չ'կար, թէ իրենց  
կողմէն եղողը բոլոր թշնամիներէն շատ  
աւելի զօրութեան տէր է, եւ անոր գա-  
ցին ու իրմէն ողորմութիւն խնդրեցին :

Անիկայ խոստացեր էր որ աղօթքներնուն  
պիտի լսէ եւ անդադար աղօթեցին, ու ըրած  
աղօթքնին պարապը չ'գնաց : Քրիստոսի  
եկեղեցին միշտ շատ թշնամիներ ունեցաւ,  
եւ ասոնք երբեմն ալ շատ կը զօրանան, բայց  
ամենեւին յուսահատելու բան մը չ'կսց : Ինչ  
որ Աստուած մեր կողմն է, թէ եւ աշխարհը  
մեզի դէմ ըլլայ վերջապէս յաղթող պիտի  
դտնուինք : Ո՞ւր ամենէն մեծ նեղութեան  
ատենները պէտք է որ միայն անդադար ա-  
ղօթք ընենք, եւ վստահ ըլլանք թէ Աստ-  
ուած մեզի պիտի լսէ ու աղատէ :

---

## ՄԵԾԻՍ

1

Հաւտան Տէր Յիսուս Քրիստոսի, ու  
պիտի փրկուիս գուն՝ եւ քու բոլոր տունդ:  
Կարծ ։ Ժ. 31։

Ա. Ո. Յ. Յ. Ա. Յ. Բանտապետին տուած պա-  
տասխանը աս էր, որ իմանալով իր մեղա-  
ւոր ըլլալը, դողալով հարցուց թէ “Ի՞նչ  
ընեմ որ փրկուիմ”: Պօղոս չըսաւ իրեն որ  
իր բարի գործքերովը փրկուելու ջանք ը-  
նէ: Աս բանը չէր կընար ըլլալ, վասն զի  
անիկայ մեղաւոր էր ու իրեն հիմակուան  
վարքը որչափ մաքուր ալ ըլլար՝ իրեն ան-  
ցած մեղքերը սրբուելու օգուտ մը չունէր:  
Կաեւ չըսաւ թէ զոհերով կամ ինքզինքը  
տանջելով իր մեղքերը քաւելու ջանք ը-  
նէ: Չէ, վասն զի ինտոր կընայ մեղաւոր  
մը ան սուրբ օրէնքին դէմ գործած յան-  
ցանքները քաւել, որուն դէմ գործուած

ամենափոքր մեղքին պատիժը յաւիտենական մահ է։ Ասիկայ էր Առաքեալին ցուցուցած պարզ ճամբան, թէ “Հաւտամ Տէր Հիսուս Քրիստոսի”, ու ետքն ալ ան ձրի խոստմունքը “ու պիտի փրկուիս”։ Ի՞անտապետը ինչ ճամբով որ փրկուեցաւ մենք ալ նոյն ճամբովը պիտի փրկուինք, այսինքն Քրիստոսի Հաւտալով։ Անոր Հաւտալու ենք իրրեւ մեղաւորներուն մի միայն Փրկիչը, եւ մեր գործքերովը երկինքը արժանաւորութիւն մը ունենալու յուսալու չենք։ Խրեն նայելու ենք որ մեղաւորներուն համար մեռաւ, եւ իր արիւնին ապաւինելու ենք որ մեղքերնում քաւութիւն առնենք։ Խրեն Հաւտալու ենք իրրեւ մեր արդարութիւնը եւ Աստուծոյ առջեւը միայն իր արժանաւորութիւնովը արդարանալու յուսալու ենք։ Օմէ որ իրեն ասանկ Հաւտանք, պիտի աշխատինք իր կամքը կատարելով իրեն վրայ ունեցած սէրերնիս ցուցունելու։

Ղօթք կ'ընէին եւ Աստուած կ'օրհնէին, ու  
քանտարգեալներն ալ մտիկ կ'ընէին իրենց:  
Պարզ. ձ.օ. 25:

Ըստ մարդ պիտի կարծէ թէ Պօղոս  
եւ Ծիղա փառաբանութեան երգեր երդե-  
լու վիճակի մէջ չէին: Առջի օրը բազ-  
մութիւնը վրանին յարձակեցան եւ իրենք  
սաստիկ ծեծեցին ու ներքին բանտը նետ-  
եցին, եւ քանտապետին յատուկ պատուէր  
տուին որ անոնք աղէկ պահէ: Հիմա ոտք-  
երնին փայտի մէջ ամուրցած էին, եւ  
դուցէ անանկ մէկ դիրքով մը որ ցաւէն չէ-  
ին կրնար քնանալ. բայց ժամանակնին չե-  
ծութիւններով եւ պարապ տեղը ողբալով  
չանցուցին, հագա աղօթք ըրին: Իրենց  
կատաղի թշնամիներուն ձեռքն էին, բայց  
գիտէին որ Աստուած կարող էր իրենք ա-  
ղատել եւ իրենց աղաջնիքները անոր մա-  
տուցին: Աստուած մինչեւ անգամ իր թըշ-  
նամիներուն բարկութենէն փառաբանու-  
թիւն կ'ընդունի, (Սաղմ. ձ.օ. 10,) եւ Աս-  
տուծոյ ժողովուրդը ամեն իժիր աղօթք ը-  
նելով կը զօրանայ: Անատենը անոնք Ամեն-  
ակարող զօրութիւն մը կ'ունենան իրենց  
կողմը, եւ թշնամի մը կարող չէ անոնք

յաղթել։ Ի՞այց Պօղոս եւ Շիղա չէ թէ  
միայն աղօթք կ'ընէին, հապա օրհնու-  
թիւն ալ կ'երդէին։ Յժէպէտեւ մեծ նե-  
ղութեան մէջ ինկած էին, սակայն Աս-  
տուծոյ փառաբանութիւն տալու պատճառ  
ունէին։ գուցէ գոհութիւն կուտային որ  
Քրիստոսի համար նեղութիւն քաշելու  
արժանի եղան։ Կարելի է որ միշտ կը սպա-  
սէին թէ իրենք պիտի մեռցունեն, եւ գոհ-  
ութիւն կուտային իրեն որ եթէ մեռնին ալ  
յաւիտեան Քրիստոսի հետ ապրելու յոյս  
ունին։ Քրիստոսի ամեն ճշմարիտ հետե-  
ւողները ամեն ատեն պատճառ ունին Աստ-  
ուած փառաբանելու։

---

## 3

Ամբարիշտը Թող իր ճամբաները ձգէ,  
ու անօրէնը իր խորհուրդները, եւ Թող  
Տէրոջը դառնայ որ իրեն ողորմութիւն ը-  
նէ, եւ մեր Աստուծոյն որ առատ թողու-  
թիւն կուտայ։ Լուսայ։ Օ.Ե. 7։

Փրկութեան պայմաններուն մէկը ա-  
պաշխարութիւնն է։ Քրիստոս ըսաւ, “ Յժէ

որ չապաշխարէք, ամենքդ ալ անանկ պիտի կորսուիք": ՚Ն առև . ժ. Գ. . Յ, 5: Շայց մէկ ապաշխարութիւն մըն ալ կայ որ կեանքի չ'տանիր: Հուղան ապաշխարեց, եւ սակայն գնաց ինքզինքը կախեց ու բուն իր տեղը գնաց. ուստի շատ օդտակար բան է ճշմարիտ ապաշխարութեան ինչ ըլլալը գիտնալ: Վարդարէն անոր արդիւնքները կը ստորագրէ, ան մարդը որ իր մեղքերուն վրայ Աստուծոյ ուղածին պէս կը տըրտմի, իր չար ճամբայները եւ անօրէն խորհուրդները կը ձգէ. կ'ողբայ որ Աստուծոյ պէս բարի եւ սուրբ էակի մը դէմ մեղանչեց. մեղքը կ'ատէ, անիկայ չար եւ գարշելի բան մը սեպելով. եւ ասանկ զդացումներ ունենալով չ'կընար կամաւ մեղք գործել. կ'աշխատի անկէց ետ կենալու, անիկայ շատ մեծ չարիք մը սեպելով: Վինչեւ անգամ թէ որ մեղաց համար պատիժ ալ չըլլար, ճշմարիտ ապաշխարողը տակաւին անկէց զզուելով պիտի փախչէր անիկայ ինքիրմէն գարշելի բան մը եւ Աստուծոյ դէմ թշնամութիւն սեպելով: Ճշմարիտ ապաշխարողը լալով ու կոտրած սրտով Տէրոջը կը դառնայ, եւ կ'աշխատի Աստուծոյ պատուիրանքներուն ցուցուցած ճամ-

բայներուն մէջ քալել, որ չըլայ թէ առ  
նոր պատուիրանքները ոտքի տակ առնէ ու  
կրկին անդամ անիկայ բարկացունէ :

## 4

Ծայց ես՝ քաւ լիցի, որ պարծենամ. Հա-  
պա միայն թէ մեր Տէր Յիսուս Քրիս-  
տոսի խաչովը. որ անով աշխարհ ինձի  
խաչը ելած է, ես ալ աշխարհի : Պատու-  
ք. 14:

Խաչի վրայ մեռնիլը, պինտ խայտառակ  
պատիժ մըն էր, սակայն Պօղոս խաչով  
միայն կը պարծենայ : Արնար իր Ա արդա-  
պետին՝ Յիսուսի մեծութիւնովը պարծե-  
նալ՝ որ Աստուծոյ Որդին էր, կամ անոր  
Ամենակարող Օքրութիւնովը՝ որ աշխարհ-  
իս Ա տեղծողն էր, բայց խաչին կը փաթ-  
տուի իրբեւ իր պարծանքին պինտ մեծ  
պատճառը : Աւ ասիկայ ինչու համար էր.  
Նախ եւ առաջ որ իրեն եւ մեր ընդունած  
քոլոր օրհնութիւնները Քրիստոսի մեզի  
համար մեռնելովը մեզի տրուած են : Յա-  
ւիտենականութեան յոյս մը չէինք կրնար

ունենալ, թէ որ «Քրիստոս իր կեանքը մեզի համար չ'տար որ մենք ապրինք»։ Խաչին վրայ մեղքերնուա քաւութիւնը եղաւ, որով մեզի փառքի պատիւի եւ անմահութեան ճամբայ բացուեցաւ։ Բայց խաչը չէ թէ միայն մեզի յոյսի պատճառ մընէ, հապա անիկոյ Աստուծոյ փառքին պինտ երեւելի յայտնուած տեղնէ։ Աստուծոյ արդարութիւնը հոն երեւցաւ որ իր Որդին մեղաւորներուն տեղը մեռնելու տուաւ, ու չ'թողուց որ իր օրէնքը ոտքի տակ առնուելով աւրուի։ Եր սէքն ու ողորմութիւնն ալ հոն երեւցաւ որ ասանկ անհուն գինով մը մեղաւորներուն փրկութեան ճամբայ մը պատրաստեց։ Հիրաւի միայն «Քրիստոսի խաչը թող մեր պարծանքը ըլլայ»։

## 5

Եւ անոնք քու զաւկըներուդ կրկին եւ կրկին սորվեցունես, եւ տունը նստած ատենը, ու ճամբայ քալած ատենդ, եւ պարկած ատենդ, ու ելած ատենդ անոնց վրայով խօսիս։ Տ. (Ծբ. Զ. 7:

Ասիկայ է Անվակսին Աստուծոյ օրէնքին խօսքերուն վրայով Խարայէլացիներուն ըրած պատուէրը, որն որ ինքը անոնց տուաւ: Անք անոնց ունեցած Աստուծոյ կամքին յայտնութենէն աւելի կատարեալ յայտնութիւն մը ունինք, ուստի աւելի մեծ պարտականութեան տակ ենք իր խօսքերը յարդելու եւ անոնք քննելու: Եւ չէ թէ միայն անոնց վրայ խորհրդածութիւն ընելու ենք, հապա մեզի հետ հաղորդակցութիւն ունեցողներուն հետ անոնց վրայօք խօսելու ենք: Աստուծոյ խօսքը ասանկ գործածելնիս շատ մեղքերու մէջ իյնալէն մեզ կը պահէ, եւ թէ որ փորձութեան մէջ իյնանք անկէց աղատելու մեզի կ'օգնէ: Աս պատուական խօսքերը զաւկըներնուս ալ սորվեցունելու ենք, չէ թէ անհոգութիւնով ու երբեմն, հապա ժիրութիւնով: Օրնողքները Աստուծոյ մեծ պատասխանատուութեան տակ են, ինչու որ անիկայ իրենց ձեռքը անմահ հոգիներ յանձներ է որ անոնք յաւիտենականութեան պատրաստեն: Եւ իր պատուական խօսքը մեր զաւկըներուն առաջնորդ ըլլալու է ինչպէս որ մեզի ալ, եւ թէ որ անոնց սորվեցունենք որ անիկայ կարդան ու սիրեն եւ անոր կանոննե-

բովը երթան, եւ նոյն ժամանակը Առւրբ  
Հոգին խնդրենք որ ան խօսքերը սրտեր-  
նուն մէջ տպաւորէ, կրնանք յոյս ունենալ  
թէ Աստուծոց մեր ջանքերը կ'օրհնէ եւ մեր  
զաւկըները դարձի կուգան ու կրփրկուին։

---

## 6

Որ երբոր եկաւ՝ եւ Աստուծոյ շնորհքը  
տեսաւ, ուրախացաւ։ Կառջ. Ժ. 23։

Ի՞առնաբաս բարի եւ Առւրբ Հոգիով  
լեցուն մարդ մըն էր, անոր համար երկնայ-  
ին զգացումներ շատ ունէր։ «Քրիստոս ը-  
սաւ որ Երկինքը հրեշտակները կ'ուրախա-  
նան երբոր մէկ մեղաւոր մը ապաշխարէ։  
ասանկ ալ Ի՞առնաբաս կ'ուրախանար թէ որ  
մէկ մեղաւորի մը դարձի գալը տեսնէր։ ուս-  
տի որչափ առաւել ուրախացաւ երբոր Աս-  
տուծոյ շնորհքը Անտիոքի մէջ տեսաւ, որ  
մէծ բազմութիւն մը հաւտաց։ Երուսաղէմի  
եկեղեցին Ի՞առնաբասը Անտիոք խրկեց որ  
երթայ նայի թէ արդեօք լսածներնուն ա-  
մենքն ալ ճշմարիտ են, եւ անշուշտ իրենք  
շատ ուրախացան երբոր եկաւ բոլոր տե-

սածներն ու լսածները անոնց պատմեց :  
 Քիչ մը առաջ մեծ հալածում մը ելեր էր  
 աս եկեղեցին դէմեւ անշուշտ շատ տըրտ-  
 մեցան երբորիրենց անդամները հալածումին  
 տեսնը անդին ասդին ցրուեցան : Հայց տես  
 թէ ասկէց ինչ հետեւեցաւ . աս նոյն հա-  
 լածեալները ամեն տեղ գացին Աստուծոյ  
 խօսքը քարողեցին , եւ իրենց ձեռքովն էր  
 որ Անտիոքի մէջ Աստուծոյ խօսքը ընդու-  
 նեցին , անանկ որ ան նոյն հալածմունքը  
 որ Արուսաղէմի եկեղեցին տրտմեցուց նա-  
 եւ անոնք մեծ ուրախութիւնով ալ լեցուց :  
 Աստուած իր թշնամիներուն չար դիտա-  
 ւորութիւնները իր ժողովուրդին աղէկու-  
 թեանը եւ յառաջադիմութեանը դարձու-  
 նելու ճամբան միշտ զիտէ : Քրիստոսի ճրշ-  
 մարտութեանը դէմ մարդոց ըբածներուն  
 ընաւ մէկէն ալ վախնալու չենք , քանզի  
 Աստուած ճշմարտութիւնը պիտի յաջողէ :

Եւ ժողովուրդը տեսնալով որ Անվաէսը  
 ուշացաւ լեռնէն իջնալու . Ահարոնին քո-  
 վը ժողովուեցան ու ըսին անոր , Ալիր մէզի

աստուածները շինէ որ մեր առջեւէն եր՝  
թան, քանզի ան Վնվսէսը, ան մեղ Եւ-  
դիպտոսի երկրէն հանող մարդը չենք դիշ-  
տեր թէ ինչ եղաւ անոր: Խչչ. 15. 1:

Խսրայէլացինները աս մեծ մեղքը գործե-  
լէն քիչ մը առաջ Եւդիպտոսի մէջ Աստու-  
ծոյ ըրած զարմանալի գործերը տեսան, ո-  
րոնցմով իրենց գերութեան տունէն իրենք  
դուրս հանեց, եւ հրաշագործութիւնով ա-  
նոնք կարմիր ծովէն անցուց, եւ գիշերը կը-  
րակէ սիւնով ու ցորեկը ամապով մը ձամ-  
բաներնին ցուցուց: Քանի մը օր առաջ  
Աինա լեռանը վրասի կրակը եւ մուխը տե-  
սան եւ լսեցին ան որոտումները, որոնցմով  
Աստուած օրէնքը տալու իջաւ, եւ իր դի-  
մացը վախով լեցուեցան: Եւ սակայն հի-  
մա անոնց ամենքն ալ կը մոռնան եւ իրենց  
ոսկիէ աստուած մը շինել կ'ուզեն որ իրենց  
առջեւէն երթայ: Անկարելի բան կ'երեւայ  
որ մարդս ասանկ անզգայ եւ չար ըլլայ,  
բայց չենք դիտեր թէ մարդուս չար սիրտը  
ինչ բաներ կընայ ընել: Երանի թէ սըր-  
տերը քննող Աստուածը մեր մէջը առ  
կռապաշտութեան մեծ մեղքը չ'տեսնէր:  
Խսրայէլացինները Աստուծոյ զօրութիւնը

որչափ որ տեսան ու իմացան, նոյնչափ ալ  
մենք տեսած ենք . գուցէ իր Հոգին սրտեր-  
նիս եկած է, եւ մեղ իր սրբութեանը ու  
կարողութեանը եւ մեր մեղքերուն համար  
իր առջեւը գողացուցած է : Եւ սակայն աս  
ասանկ ըլլալով արդեօք մենք ալ շատ ան-  
դամ կռապաշտութիւն չըրինք : Իրաւ մենք  
ուսկիէ հորթ չ'ընեցինք ու անոր երկրպա-  
գութիւն չըրինք, բայց աշխարհքը կամ  
մէկ աշխարհային բան մը կամ մէկ երկրա-  
ւոր բարեկամ մը արդեօք Աստուծմէ ե-  
ւել չ'սիրեցինք : Ծաէ որ ըրինք կռապաշտ-  
ութիւն ըրած եղանք եւ նոյն ժամուն որ  
Խարացէլացիները կը դատապարտենք պէտք  
է որ մենք բուն մեզմէ ամչնանք :

Եւ Աստուծոյ Առլը Հոգին մի տրտմե-  
ցունէք, որ անով դուք կնքուեցաք փլր-  
կութեան օրը : Ե՞կէ . Դ . 30 :

Աստուծած մարդոց փրկութեան ճամբայ մը  
պատրաստելէն եւ անիկայ ընդունելը իրենց  
շանձնելէն ետեւ բանը իրենց չ'թողուց .

թէ չէ ամենքն ալ ՞ Քրիստոսը կ'ատէին ու  
կը կորառուէին . հապա իր ողին աշխարհ խըր-  
կեց որ մարդոց իրենց մեղքերը եւ Փրկի-  
չի մը կարօտ ըլլալին իմացունէ . եւ ոմանց  
սիրտը նորէն կը ստեղծէ իր Ամենակա-  
րող զօրութիւնովը, եւ անոնք իր ողորմու-  
թեան պարդեւները կ'ընդունին եւ կ'ապ-  
րին : Իսյց աս մարդիկը նորէն ստեղծե-  
լէն ետեւ անոնք չ'ձգեր որ իրենց զօրու-  
թիւնովը կայենին, հապա “իր գործը անոնց  
ներսիդին” կը շարունակէ, մինչեւ որ բո-  
լորովին սրբուին ու երկինքին մէջի սուր-  
բերուն ընկերութեանը ընդունուելու յար-  
մարութիւն ունենան : Իսյց աս օրհնեալ  
շոգին՝ որմէն բոլորովին կախեալ ենք որ  
մեզի զօրութիւն տայ մեր երկնային ճամփուն  
մէջ հաստատ մնալու, կրնանք տրտմե-  
ցունել որ մեզմէ հեռանայ : Անիկայ. կը-  
տրտմի թէ որ կամաւ մեղք գրծենք ու թէ  
որ իր տուած խրատներուն մտիկ չընենք,  
երբոր ինքը մեզի կը խրատէ որ մեղք չ'գոր-  
ծենք որ սուրբ ըլլալու համար ըրած ջան-  
քերնուս մէջ աւելի ժիր ըլլանք, որ աւե-  
լի աղօմք ընենք, աւելի շատ խորհրդածու-  
թիւններ ընենք եւ Աստուածաշունչը միշտ  
կարդանք : Ո՞հ, որչափ վախնալու ենք որ

չըլլոյ թէ զինքը տրտմեցունենք, ինչու որ  
եթէ մեղմէ հեռանայ ալ յաւիտեանս կոր-  
սուած ենք։ Ո՞վ Առոք Հոգիդ եկուր  
հանդշէ սրտիս մէջ, եւ բնաւ ամենեւին  
իս մի թողոր։

---

## 9

Որ անոր առջեւը մէկ մարմին մը արդա-  
րացած չըլլոյ օրէնքին գործքերովը։ առ-  
առնմ, գ. 20։

Ենչ ուրախալից բան է որ Վաստուածա-  
շունչին մէջի եղած վարդապետութիւնները  
կըցուցունեն թէ ան գիրքը Վաստուծմէն է։  
Խրաւցունէ թէ որ Վաստուածաշունչին ճշշ-  
մարիտ ըլլալուն համար իր մէջը գտնուած  
վկայութիւններէն ուրիշ վկայութիւններ  
ալ չըլլոյին, անոնք բաւական էին մեղ հա-  
մողելու թէ անիկայ Վաստուծոյ խօսքն է։  
Քաէ որ մէկ մարդ մը ջանք ըներ անանկ մէկ  
կրօնք մը հնարելու որ բոլոր մարդոց ա-  
ռաքինութիւն գործել տայ, արդեօք աս  
բանը կրնա՞ր ընել թէ որ ըսէր թէ որչափ որ  
բարի գործքեր գործելու աշխատին՝ անով  
վարձքի մը արժանաւորութիւն չեն կրնար

ունենալ։ Եւ թէ իրենց արժանի եղած  
պատիժներնուն ազատելու համար պէտք է  
որ իրենց բարի գործքերը մէջ չ'սառնե-  
լով պարզապէս ուրիշի մը հաւտան։ Ոէ,  
մարդս իր խելքին հարցունելով պիտի ը-  
սէր թէ աս բանը մարդիկ համարձակ մեղք  
գործելու պիտի առաջնորդէ, անկարելի է  
որ ատ բանը անոնք բարի գործքեր գործե-  
լու շարժէ թէ որ իրենց գործքերովը եր-  
ջանկութեան արժանաւորութիւն մը չեն  
կրնար գտնել։ Ի՞այց Աստուածաշունչը հա-  
մարձակ կը զրուցէ, թէ (Օ)րէնքին գործքե-  
րովը մէկ մարմին մը պիտի չ'արդարանայ,  
թէ Փրկութիւնը միայն շնորհքէն է Ք.րիս-  
տոսի հաւտալով։ Ի՞այց ասանկով միթէ  
մարդիկ մեղք գործելու կ'առաջնորդէ։ չէ։  
Աստուծոյ կարող զօրութիւնը աս վարդա-  
պետութեանը հետն է, եւ ով որ ասոր  
կը հաւտայ, ու փրկուելու համար միայն  
Ք.րիստոսի արժանաւորութեանը կ'ապա-  
ւինի, շուտով կը սկսի սրբութիւնը սիրել  
եւ սրբութիւն գործել։ մեղքը կ'ատէ, ա-  
նոր վրայ կ'ողբայ, եւ անկէց ետ կենալու  
կ'աշխատի։ Աշխատի Աստուծոյ բոլոր  
պատուիրանքներուն հնազանդելու, սակայն  
իր բարի գործքերուն ապաւինելուն տեղը

տրտմութեան մէջ կ'կյնայ թէ պէտք եղաւ  
ծին չափ չ'հնազանդեցաւ, եւ թողութիւն  
դտնելու համար խաչին կը փաթտուի: Աս-  
տուծմէ զատ ուրիշ էակ մը կարող չէր հը-  
նարել միայն շնորհքով արդարանալու գա-  
ղափարը, եւ անոր զօրութենէն զատ ուրիշ  
զօրութիւն մը չէր կրնար ասով մարդիկ  
սրբութեան եւ հնազանդութեան կեանք  
մը վարելու շարժել:

## 10

Յձէ որ իս կը սիրէք՝ իմ պատուիրանք-  
ներս պահեցէք: Յով. ձ.Դ. 15:

Վրիստոս իր աշակերտներուն ըստաւ որ  
եթէ երկինքը երթալ կ'ուզեն՝ իր օրէնքին  
հնազանդին, որ իբրեւ իրենց բարի գործ-  
քերուն հատուցում մը յաւիտենական կե-  
նաց արժանի ըլլան: Պարզապէս կը ցուցու-  
նէ որ զինքը սիրեն, ու պատուիրանքները  
պահելը իբրեւ զինքը սիրելնուննշան տուաւ:  
Եւ ո՞վ չկրնար իմանալ աս բանին զօրու-  
թիւնը. թէ որ շատ սիրելի բարեկամ մը ունե-  
նանք արդեօք չենք ուրախանար երբոր իրեն

Հաճելի գործքեր ընենք: Ուշ որ տղայ մը իր  
ծնողքները սիրէ, անոնց հրամանները կա-  
տարելով չուրախանար: Յատկապէս՝ եթէ  
տղայ մը անհնազանդութիւն ընէ, եւ ըրա-  
ծին վրայ ճշմարտապէս զղջայ, պիտի աշխա-  
տի անոնց կամքը կատարելով առջինէն եւել  
իր սէրըցուցունելու: Քրիստոսը երկրաւոր  
բարեկամներէ եւել սիրելու ենք, մարդ-  
կային էակ մը անոր մեղի սիրածին չափ  
չկրնար մեզ սիրել. անիկայ աս աշխարհս  
եկաւ, աշխատեցաւ, չարչարուեցաւ, եւ մե-  
ռաւ որ մենք ապրինք. եւ հիմա մեղի կ'ըսէ  
Ուշ իս կը սիրէք, իմ պատուիրանքներս  
պահեցէք: Անք իրեն դէմ շատ մեղքեր  
գործեցինք, մեր մեղքերուն համար էր որ  
չարչարուեցաւ, շատ տարիներ զինքը եւ իր  
ցուցուցած սէրը զանց առինք. եւ հիմա թէ  
որ մեր յանցանքները կը տեսնենք եւ իրեն  
դէմ գործած մեղքերնուս վրայ կ'ողբանք,  
աշխատելու ենք իրեն ծառայելով եւ զին-  
քը փառաբանելով մեր կեանքը անցունել:  
Վշխատելու ենք բոլոր իր պատուիրանքները  
պահելու, չէ թէ մեր անցած մեղքերուն հա-  
տուցում մը ընելու մտքով՝ ինչու որ մեզի  
պէս մեղաւորը ի՞նչպէս կրնայ իր գործ-  
քերովը արդարանալ, հապա Քրիստոսի

Վրայ ունեցած սէրերնիս ցուցունելու իրեն  
հաճոյ ըլլալու եւ զինքը պատուելու միտ-  
քով:

## 11

Աստուած զարհուրելի է սուրբերուն ժո-  
ղովքին մէջը, ու ահաւոր է իր բոլոր չորս  
կողմը եղողներուն: Աապ. 20. 7:

Աստուած մեծ Աստուած մըն է, եւ մենք  
տկար էակներ ենք. ան սուրբ է, մենք մե-  
ղաւոր ենք. ան մեր Արարիչն ու Տէրն է,  
ուստի շատ մեծ յարգութիւնով իրեն առ-  
ջեւը ելլալու ենք: Երբոր առանձին աղօթք  
կ'ընենք, մեծ խոնարհութիւնով ընելու ենք  
մեր անարժանութեանը համար, ու նաեւ  
ան Ամենակարող Խակին վախովը լեցուած,  
որուն որ կը մօտենանք: Երբոր ընկերներ-  
նուս հետ Աստուածոյ նուիրուած տան մը մէջ  
կը ժողվուինք իրեն ծառայելու համար, կը  
վայլէ որ Աստուածպաշտական երկիւղածու-  
թիւնով մը եւ մեծ յարգութիւնով սըր-  
տերնիս լեցուի: Ուեւ որ աշխարհիս թագա-  
ւորներէն մէկուն դիմացը ելլելու ըլլայինք

անշուշտ վախ պիտի քաշէինք եւ ինքզինքնիս  
իրեն մեծ պատիւ տալու պարտաւոր պիտի  
սեպէինք, ալ որչափ առաւել թագաւորնե-  
րուն թագաւորին եւ տէրերուն Տէրոջը դի-  
մացը ելած ատեննիս: Ոտքերնուս մէջը աշ-  
խարհային խորհուրդներ եւ պարապ երեւ-  
ակայութիւններ գտնուելու չեն, ինչուոր  
Կատուած սրտերնիս կընայի, անիկայ չ'սաբ-  
ուիր եւ ծաղր չըլլար: Կարկրպագութեան ա-  
տեն պարապ եւ ոչինչ խօսակցութիւնները ը-  
նելը Կատուածոյ տունը պղծել եւ իր երկըր-  
պագութիւնը անպատիւ ընել է: Վնանկ  
գրուած է թէ՛ հրեշտակները երեսնին կը-  
ծածկեն երբոր “Ոուրբ՝ սուրբ՝ սուրբ է զօ-  
րութեանց Տէրը” կ'աղաղակեն: ալ որչափ  
խորունկ ահարկութիւնով մը մտքերնիս  
լեցուելու է, երբոր մեր Տէր Կատուածոյ եր-  
կրպագութիւնընելու կը ժողվուինք:

Ա ասն զի Կատուած իր Որդին չ'խրկեց  
աշխարհ, որ աշխարհը դատապարտէ, հա-  
պա որ աշխարհ անով փրկուի: Յոհ. գ. 17:

Այս աշխարհիս մարդիկները՝ որ բոլորովին մեղքի մէջ թաղուած էին, թէ որ Աստուծոյ Որդիին աշխարհք գալը իմանալուն ետքը անոր ճշմարիտ ըլլալուն նշանները չ'աւեսնէին, արդեօք ինչ զգացումներ պիտի ունենային եւ ինչ բաներու պիտի ըստասէին, ամենքն ալ վախով լեցուած իրենց արժան եղած պատիժին պիտի սպասէին։ Բայց Աստուծոյ Ճամբանները մեր Ճամբաններուն չեն նմանիր. թէպէտեւ ծանր դատաստանի արժանի էինք, սակայն անիկայ իր Որդին չ'իրկեց աշխարհ որ աշխարհը դատապարտէ, հապա որ աշխարհք անով փրկուի։ Աքանչելի ողորմութիւն։ Բոլոր մարդիկ Աստուծոյ դէմ ապատամբեր էին, ամենքն ալ իր օրէնքը կը կոտրէին, ամենքն ալ դէպի անոր ունեցած պարտաւորութիւննին զանց առած էին, եւ իրեն դէմ համարձակութիւնով մեղք կը գործէին. բայց Աստուծ տակաւին անոնց ողորմութիւն ընելու դիտաւորութիւն ունէր։ Եւ աս իր դիտաւորութիւնները կատարելու համար երկինքին զօրքերուն մէջէն հրեշտակ մը չ'սահմանուեցաւ, ինչու որ հրեշտակներէն մէկը կարող չէր անանկ մէծ գործ մը կատարել. հապա Աստուծած իր սիրելի Որդին իրկեց որ

մեր մեղացը համար քաւութիւն ընէ, եւ առ  
կերպով մեր փրկութեանը ճամբայ մը պատ-  
րաստուի: Արդարեւ ասիկայ խելքէ մոքէ  
վեր սէր մըն է:

## 13

Վասն զի թէ որ թշնամինեղած ատեննիս  
Աստուծոյ հետը հաշտուեցանք իր Որդիին  
մահովը, հապա որքան եւելի մեր հաշտուած  
ատենը պիտի ապրինք անոր կեանքովը: Հը-  
առն. Ե. 10:

Աստուծոյ իր սփրելի Որդինիրեն թշնա-  
միներուն համար մեռնելու տալովը ցուցու-  
ցած սէրը, սքանչելի սէր մըն է եւ գրեթէ  
անհաւատալի: Բայց որովհետեւ աս բանը  
ընելը գիտենք, առաքեալը մեզի կըցուցու-  
նէ թէ ասիկայ զօրաւոր պատճառ մըն է  
յուսալու թէ մեզի պէտք եղած բոլոր շը-  
նորհքները պիտի տայ: Ամենէն մէծ բանը  
ընողը միթէ պղտիկ բանը ընելէն ետ կը-  
քաշուի: իր թշնամիներուն այսչափ բան  
ընողը միթէ իր բարեկամներուն ապահո-  
վութեանը պէտք եղած բաները պիտի չընէ:

Ուշ որ մեղքերնիս ապաշխարած ենք, եւ  
Վրիստոսով՝ Աստուծոյ հետ հաշտուած  
ենք, բնաւ վախնալու չենք թէ Աստուած  
մեզ երեսէ պիտի ձգէ: Կըզգանք որ մեղքեր-  
նուս շատը տակաւին ներսիդինիս է, կը-  
տեսնենք որ ամեն ըրածներնուս հետ չա-  
րութիւն խառնուած է, երբեմն յանցանք-  
ներնուս զգացումը չորս կողմէն մեզ կըպա-  
շարեն. բայց թէ որ յոյսերնիս Աստուծոյ  
վրայ դնենք, կրնանք յուսալ թէ վերջա-  
պէս բոլոր հոգեւոր թշնամիներնուս վրայ  
յաղթող պիտի դտնուինք: Աստուած մեզ  
ասանկ անհուն գնով մը չ'գնեց որ վերջը  
մեզ ձգէ որ Աստանային խարէութիւննե-  
րովը կորսուինք. բոլոր մեր փորձութեան  
ժամանակները կրնանք իրեն երթալ օգնու-  
թիւն խնդրել, եւ մեզի համար իր առջի ը-  
րածները կրնանք պատճառ բերել որ հի-  
մակուան խնդրածնիս ալ տայ. եւ անշուշտ  
մեզի պիտի լսէ: Անայն յոյսերնիս իրեն  
վրայ դնելու ենք եւ պիտի փրկուինք:

Աս բանին փորձը առնողը չէ թէ միայն  
 Աշղմոսերգուն է. ո՞ր քրիստոնեայն իր սըր-  
 տին խորունկութենէն չ'զգար թէ Վատու-  
 ծոյ մօտենալը իրեն բարի է: Երբոր գոր-  
 ծած յանցանքներնիս եւ անոր առջեւը մեծ  
 մեղաւոր ըլլալնիս կըզգանք, բարի է խոս-  
 տովանութիւնով ու զղջումով իրեն մօտե-  
 նալը. բարի է իրեն առջին բոլոր մեր գոր-  
 ծած մեղքերը ճանչնալ եւ իրմէն ներում  
 խնդրելը: Երբոր մեծ փորձութիւններու մէջ  
 կ'իյնանք եւ կըտեսնենք որ մեղքին զօրու-  
 թիւնը ներսիդինիս կ'աճի, բարի է իրեն մօ-  
 տենալը, եւ բոլոր մեր կարօտութիւնները  
 իրեն իմացունելը, եւ մեզի պէտք եղած ա-  
 մեն շնորհքները եւ կարողութիւնը իրմէն  
 խնդրելը: Երբոր նեղութեան մէջ իյնանք  
 բարի է Տէրոջը մօտենալը, եւ բոլոր ցա-  
 ւերնիս իր առջին թափելը, եւ բոլոր նե-  
 ղութիւններնիս իրեն պատմելը, եւ իրմէն  
 միսիթարութիւն խնդրելը: Երբոր մահը մօ-  
 տերնիս կ'երեւայ, բարի է Վատուծոյ մօտե-  
 նալը, եւ ան մուժ ձորին մէջէն անցնելու  
 ատեննիս պէտք եղած օգնութիւնը իրմէն  
 խնդրելը: \* Կաեւ բարի է գոհութիւնով եւ  
 շնորհակալութիւնով Տէրոջը մօտենալը.  
 բարի է իրեն երկրպագութիւն ընելը եւ իրեն

օրհնութիւն երգելը իր “չպատմուելու  
պարզեւներուն” համար յարի է իրեն դու-  
հութիւն եւ փառաբանութիւն մատուցա-  
նելը աւետարանին տուած օրհնեալ յոյսե-  
րուն համար . բարի է սրտերնիս երախտա-  
դիտութիւնով լիցունելը մեղի պարզեւած  
իր անթիւ ողորմութիւններուն համար : Եւ  
երբոր կը զգանք թէ բոլոր մեր սէրն ու ե-  
րախտադիտութիւնը իրեն նուիրելու ար-  
ժանի եղածէն շատ պակաս են , որ մեղ  
այնչափ սիրեց , բարի է իրեն մօտենալը եւ  
ինքզինքնիս իր ոտքը ձգելը եւ իրեն աղաջե-  
լը , որ մեղի օգնէ պէտք եղածին պէս զին-  
քը փառաբանելու եւ սիրելու :

## 15

Կատարեալ խաղաղութեան մէջ պիտի  
պահես ան , որուն միտքը քու վրադէ , ին-  
չու որ քեզի կ'ապաւինի : Եսայ . ի.օ . 3 :

Երբոր տղայ մը անանկ տեղէ մը անցա-  
նի , որ իրեն վտանգաւոր կ'երեւայ , իր հօրը  
ձեռքէն կը բռնէ , եւ անատենը ապահով  
կ'ըլայ : Դիտէ որ իր հայրը զինքը կը սիրէ

եւ կը հաւտայ ալ թէ կարող է զինքը պաշտապանելու, եւ այսպէս նեղութիւն տուող խորհուրդներէ ազատ կ'ըլլայ: Անք ալ նոյնպէս Աստուծոյ ապաւինելու ենք, երկրաւոր հայրերուն իրենց զաւկըներուն վրայ ունեցած սէրէն աւելի մեր վրայ սէր ունի, եւ անհուն իմաստութեան եւ ամենակարող զօրութեան տէր է, ուստի անշարժելի ապաւինութիւնով կրնանք յոյսերնիս անոր վրայ դնել: Ինքը մեզ կը հրաւիրէ որ իրեն ապաւինինք, եւ մէկուն ապաւինութիւնն ալ պարապը չ'հաներ. կատարեալ խաղաղութեան մէջ կը պահէ ան ամենը որ յոյսերնին միայն իրեն վրայ կը դնեն: Ասանկներուն տկար հաւատքը կը զօրացունէ, մինչեւ որ մարմնաւոր աչքով տեսածի պէս հաստատ հաւտան թէ իր Ամենաեսքող բազուկները իրենց օգնութեանը հառելը երկնցուցած է: Ասանկ հաստատուն հաւատքով՝ ալ բանէ մը վախ չեն քաշեր. թէ եւ դժոխքին ամեն զօրութիւնները իրենց դէմ միաբանին տակաւին իրենց կողմը եղողը բոլոր իրենց դէմ եղողներէն զօրաւոր է: Կրնան Սաղմոսերգուին հետ ըսել, “Տէրը իմ լոյսուիմ փրկութիւնս է, ևս ուսկից պիտի վախնամ. Տէրը իմ կեանքիս ապաւէնն է,

ես ուսկից պիտի դողամ”։ Առաջ. թէ. 1։

16

Ներովդէս երբոր ուզեց անիկայ բերել,  
ան գիշերը Պետրոս երկու զինուորներու  
մէջ կըքնանար երկու շղթայներով կապ-  
ուած, ու պահապանները դրանը առջեւը  
բանտը կըպահպանէին։ Գալք. ձ. 6։

Պետրոս կատարեալ խաղաղութեան մէջ  
էր, ինչու որ իր միտքը Աստուծոյ վրայ էր.  
ինքը շատ մեծ փորձութեան մէջ էր, բան-  
տարդուած եւ անանկ պահպանուած էր որ  
մարդկային միջոցով փախչիլը անհնար բան  
էր, եւ հետեւեալ օրը զինքը մեռցունելու  
վախ տուեր էին. եւ սակայն հանդարտու-  
թեամբ կըքնանար։ Ասիկայ չէ թէ անզգայ-  
ութենէ էր, հապա խաղաղութիւնով եւ  
հանդարտութիւնով հանգչելու պատճառ  
ունէր. իրեն քաշածը իր Աստուածային  
Ա արդապետին ճշմարտութեանը համար  
էր, որ խոստացեր էր միշտ իրեն հետը-  
լալու։ Թէ՞ որ Քրիստոս իր հետն էր, ալ  
վախի բան չունէր. թէ որ իր թշնամի-

Ները անիկայ մեռցունէին, միայն քիչ մը ա-  
ռաջ իր երկնային բնակարանը խրկած պի-  
տի ըլլային որ յաւիտեան իր սիրելի Փրկի-  
չին քով կենայ: Եւ գիտէր որ Վրիստո-  
սի ճշմարտութիւնը՝ որուն դէմ կատղած  
էին անոր թշնամիները, անշուշտ պիտի յա-  
ջողի. եւ թէ Աստուած մինչեւ անդամ իր  
թշնամիներուն բարկութիւնովը անիկայ պի-  
տի յաջողէ: Բայց Պետրոս գիտէր ալ թէ  
աղէկ կ'ըլլար թէ որ իր կեանքը խնայուէր.  
Աստուած կարող էր զինքը դիւրաւ աղա-  
տել, եւ անշուշտ կ'աղատէր թէ որ աչքին ա-  
ղէկ երեւնար: Ասանկ խորհուրդներով  
Պետրոս հանդիստ էր, եւ իր Երկնաւոր Հօ-  
ռը ապաւինած իրեննեղութիւն տուող խոր-  
հուրդ մը չ'ունենալով քնացաւ. եւ իր  
յոյսերը պարապը չելան:

Եւ ահա Տէրոջը հրեշտակը եկաւ վրան  
կայնեցաւ, ու տանը մէջ լոյս մը ծագեց, ու  
Պետրոսին կողը մշտեց՝ արթնցուց անիկայ  
եւ ըսաւ, Շուտով ելմիր. ու շղթայները իր  
ձեռքէն վար ինկան: Պարզ, մի, 7:

Ներովդէս անշուշտ գիտէր թէ իր բան-  
 տարդեալը աղէկ պահուած է, եւ աւետա-  
 քանին թշնամիները կը խորհէին թէ առա-  
 քեալներուն մէկուն մեռնիլը պիտի տեսնեն  
 եւ պիտի ուրախանան : Ի՞այց Պետրոս Ա-  
 մենակարող Պաշտպան մը ունէր, որուն  
 ձեռքը յանձներէր ինքզինքը, որ ինքը բը-  
 նաւ չ'դադրեցաւ անոր վրայ պաշտպանու-  
 թիւն ընելէն : Ա, աեւ հեռու տան մը մէջ  
 շատերը մէկտեղ ժողվուած կ'աղօթէին :  
 Հաւանականաբար Ներովդէս ծաղը պիտի  
 ընէր եթէ լոէր թէ մէկ քանի անարդուած  
 քրիստոնեաներ Պետրոսը իր գլխուն գա-  
 լու չարիքէն աղատելու համար աշխատե-  
 լու գիտաւորութիւնով մէկտեղ եկեր են :  
 Ի՞այց անոնք մէկ անանկ զօրութիւն մը ու-  
 նէին, որ Ներովդէս երազին մէջը անգամ  
 տեսած չունէր . անոնք աղօթք ըրին, եւ ի-  
 րենց աղօթքներով Ամենակարող ձեռք մը  
 ունեցան իրենց կողմը : Ներովդէս Պետրո-  
 սը բանտին մէջ պահեր էր շղթայներով  
 կապուած, եւ զինուուրներով աղէկ պահ-  
 պանուած . բայց անոնք աղօթք ըրին եւ  
 հրեշտակ մը երկինքէն իջաւ, ու կոտը-  
 տեց Պետրոսին ձեռքերուն շղթայները, եւ  
 բացաւ բանտին դուռները ու զինքը առաւ-

տարաւ։ Տէրը միշտ իր զօրութիւնը իրեն յուսացողներուն կըցուցունէ։ Խոնարհութեամբ եւ հաւատքով մատուցուած աղօթքները լսելը կըսիրէ, եւ միշտ կընայ աղատել իր ծառաները երբոր իրեն կ'աղաղակեն։ Ամեն միջոցը իր ձեռքն է։ կընայ հրեշտակ մը խրկել անոնք աղատելու համար, եւ կընայ անոնց վրայ ելլողներուն սիրտերը դարձունել, անանկ որ մինչեւ անգամ իրենց թշնամիները անոնց հետ խաղաղութիւն ունենան։ Իսպի է ամեն առեն Տէրոջը ապաւինիլը։

18

Իսպի Աստուած ըստ անոր։ Անմիտ՝ առ գիշեր հոգիդ գեղմե ետ պիտի ուղեն։ Դ ամ ձ. մ. 20։

Վարդիկ շատ անգամ ուրիշներուն ըրած գործքերուն աղէկ կամ գէշը լլալուն վրայ սխալ դատումներ կ'ընեն։ Փեստոս Հռովմայեցի իշխանը Պօղոս առաքեալը յիմաք կոչեց, երբոր կըսէր թէ ճշմարտութեան եւ զգաստութեան խօսրեր կըխօսիմ։ Ի այց

14

ահա մարդ մը, որ Աստուած անիկայ յի-  
մար կը կոչէ եւ իր ըստ դատումին մէջը  
սխալ չ'կայ: Աս մարդուն վրայ եղած խօս-  
քերը զիտելով կ'իմանանք թէ անոր յի-  
մարութիւնը ուր տեղ էր: «Քրիստոս կ'ըսէ  
թէ անիկայ հարուստ մարդ մըն էր, եւիր  
արտերը առատ բերը տուին: իր հարստու-  
թիւնը այնչափ շատցաւ որ ալ տեղ չունէր  
իր բարիքները դնելու, այսպէս սիրու իր  
երկրաւոր դանձերուն վրայ զրաւ իր անձին  
ըսելով, Հանդչէ, կեր՝ խմէ, եւ ուրախ ե-  
ղիր: Որ յիմարութիւնը աս բաներուն մէ-  
ջը էր, որ հարստութեան ետեւէ էր՝ ամե-  
նէն մեծ բարութիւնը անիկայ սեպելով, եւ  
կը կարծէր թէ աս կերպով իր անձին փա-  
փաքները կրնայ կշտացունել: Աստուած  
անիկայ անանկ ստեղծած էր, որ շատ մեծ  
ուրախութիւններ կրնար վայլել զինքը սի-  
րելով եւ իրեն ծառայելով, իր գործքերը  
եւ իր խօսքերը սորվելով, աս աշխարհիս մէջ  
իրեն հետ հաղորդակցութիւն ունենալով,  
ուստկեց ետեւալ փառաւոր անմահութեան  
մը յշսով: Բայց աս մարդը բոլոր աս մեծ  
բարութիւնները ատեց եւ կարծեց թէ իր  
հարստութիւնները վայլելով կատարեալ  
երջանիկ պիտի ըլլայ: Աս կարծիքն ալ ը-

ըաւ թէ իր դանձերը շատ տարիներ զի՞նքը  
պիտի կշտացունեն . աս բանին մէջն ալ յի-  
մարութիւն ըրաւ , քանզի ան նոյն դի-  
շերը իր հոդին իրմէն ուղուեցաւ : Գի-  
տէր որ մարդուս կեանքը կարճ եւ անըս-  
տոյգ է , բայց անանկ գործ տեսաւ որ կար-  
ծես թէ շատ տարիներ ապրելու դրաւ է  
առեր . եւ երբոր ուղեցին որ իր հոդին տոյ  
ու իր դանձերը ձգէ եւ Աստուծոյ առջեւը  
դատաստանի կայնելու երթայ , անատենը  
իր յիմարութեան հետեւանքները իմացաւ :

## 19

Անոր պէս է ան ալ՝ որ իր անձին հա-  
մար կը դիզէ , ու Աստուծով չ'հարուստ-  
նար : Պատկ . Ժ.Բ . 21 :

**Ը** ատ անգամ ուրիշներուն բռնած ճամ-  
բռւն մ.ջ յիմարութիւն կը տեսնենք եւ ա-  
նոնք կը դատենք , չիմանալով որ մենք ալ  
նոյն դատապարտութեանը տակն ենք : Եր-  
բոր Կրիստոս անմիտ մեծատունին պատ-  
մութիւնը ըրաւ , ուղեց իմացունել որ չէ թէ  
միայն ան մարդուն ըրածը յիմարութիւն

էր, հապա ամենն ալ նոյն դատապարտութեանը տակն են երբոր իրենց անձին համար կը դիզեն ու Աստուծով չեն հարուստնար: Ան մարդը որ հոս հարստութիւն կը դիզէ կարելի է քանի մը տարի անոնք վայլէ, բայց երբոր մեռնի անշուշտ ամենքն ալ պիտի ձգէ, եւ չ' դիտեր ալթէ որ ժամուն պիտի մեռնի: Բայց ան որ Աստուծով ու հաւատքով հարուստ է, անիկայ երկինքի մէջ դանձ կը դիզէ, եւ աղէկ դիտէ որ չէ թէ քանի մը տարի, հապա հազարաւոր տարիներ յաւիտեանս յաւիտենից անոնք պիտի վայլէ: Աւատի ճշմարիտ անմիտ է ան մարդը, որ բոլոր իր կարողութիւնները եւ զգացումները աշխարհիս կորսուելու հարստութիւնները հաւքելու կուտայ, եւ երկինքի մնայուն դանձները բոլորովին զանց կ'առնէ: Երբոր աշխարհային հարստութիւններ ունենանք, անոնք մեր փափաքները չեն կրնար կշտացունել. բայց երբոր երկնային հարստութիւններ դիզելու ետեւէ ըլլանք, անոնք հիմակուընէ մեզի երջանկութիւն կուտան: Ան մարդը որ աշխարհային հարստութիւններու ետեւէ է, կարելի է չ' կրնայ անոնք ձեռք բերել. բայց մելը չ' կոյ որ երկնային հարստութիւն փըն-

տըռէ ու պարապը ելլայ : Աշխարհի հարըստութիւններու ետեւէ եղողը՝ թէ որ յաջողի ալ, յաւիտենականութենէն բաժին չունի . բայց երկնաւոր հարստութիւններու ետեւէ եղողը, իրեն համար յաւիտեան միառք եւ պատիւ կը դիզէ : Երանի թէ ես ալ ան յիմարներէն չըլլայի, որոնց բաժինը աս աշխարհս է : Հոս իմ վիճակս ինչ որ ըլլայ թող ըլլայ, միայն թէ երկինքին մէջ մէկ ժառանգութիւն մը ունենամ, ալ բան չեմ ուզեր :

## 20

Ու երբոր մօտեցաւ, քաղաքը տեսնաւուլ լացաւ անոր վրայ : Դ սուն. Ժ.թ. 41 :

Յիսուս Քրիստոս թէպէտ Աստուծոյ յաւիտենական Որդին էր, սակայն մարդկային զգացումներ ունէր, եւ ուրիշ մարդոց պէս կը տրտմէր ու կուլար երբոր ասանկ զգացումներ դրդող պարագայներու մէջ գտնուէր . բայց անիկայ ուրիշներուն վըրայ կուլար եւ չէ թէ իրեն վրայ : Բնաբանին մէջ ցուցուած ժամանակը հանդէսով

Երուսաղէմ քաղաքը կը մօտենար, ու  
բաղմութիւնը “Ովսաննա” կ’աղաղակէին:  
Քաղաքը բոլոր իր գեղեցկութիւնովը առ-  
ջեւն էր. հոն էր Աստուծոյնուիրուած տա-  
ճարը, եւ հոն Աստուծոյ մասնաւոր կեր-  
պով մը հաճեցաւ բնակելու: Հոն էր Աի-  
օն լեռը, աշխարհիս ցնծութիւնը, ուր որ  
Խսրայէլացիք՝ Աստուծոյ ընտրեալ ժողո-  
վուրդը ուրախութիւնով իրեն երկրպա-  
դութիւն կը մատուցանէին: Բայց Յիսուս  
դիտէր թէ ան քաղաքին ժողովուրդը ինչ-  
պէս իրմէն հեռացած էին, եւ թէ ինչպէս  
իրենց անօրէնութիւններուն չափի պիտի  
լեցունէին զինքը ատելով եւ խաչելով:  
Դիտէր ալ զլխունուն գալու վայերը իր-  
բեւ պատիժ իրենց մեղացը. եւ զիտէր թէ  
Աստուծոյ բարկութիւնը ինչ սոսկալի կեր-  
պով վրանին պիտի գար, ու քաղաքը տես-  
նալով անոր վրայ լացաւ: Անկը ալ Յը-  
րիստոսի առ հոգին ունենալու ենք. մենք  
ալ ողբալու եւ լալու ենք անզեղջ մեղաւոր-  
ներուն գալու դատապարտութեանը վրայ,  
ու աշխատելու եւ աղօթելու ենք, որ տ-  
պաշխարեն ու փախչին ան վտանգէն քանի  
որ ձեռքերնին ժամանակ կայ:

Ինչուոր մէկ Աստուած մը կայ, ու մէկ  
միջնորդ մը Աստուածոյ ու մարդոց մէջը՝ ՀՅի-  
սուս Քրիստոս մարդը։ Ե. Տէհ, 1. 5. :

Հիսուս Քրիստոս կատարեալ յարմա-  
րութիւն ունի դատապարտուած մեղաւոր-  
ներուն եւ արդարութիւնով բարկացած Աս-  
տուածոյ մէջ տեղը միջնորդութիւն ընելու։  
Անիկայ սուրբէ եւ Աստուածոյ սիրելի Որ-  
դին։ Թէպէտ մարդոց մեղքերուն համար  
զոհ եղաւ, բայց ինքը մեղք չ'ձանչցաւ, ուստի  
կրնայ մեր կռղմէն համարձակութիւնով Աս-  
տուածոյ մօտենալ, եւ աօրը աչքին միշտ  
հաճոյ է։ ‘Եաեւ մարդ է, մեր ընութիւնը  
առաւ եւ ամեն կերպով մեզի պէս փորձ-  
ուեցաւ, մեր բռլոր տրտմութիւնները եւ  
կարօտութիւնները դիտէ։ Թող կուտայ որ  
իրեւ եղբայր իրեն երթանք, ինքը ցուցուց  
որ մեր վրայ ունեցած սէրը մահէն ալ զօ-  
րաւոր է։ Ուստի կատարեալ վստահու-  
թիւնով կրնանք իրեն երթալ, եւ ինքը-  
զինքնիս իր ձեռքը յանձնել, բոլոր մեր  
մեղքերը կրնանք իրեն խօստովանիլ, եւ  
անոնց վրայ իր առջին ողբալ, եւ այսպէս

մեղքերնիս կը ջնջուի, քանզի ինքը միշտ  
պատրաստէ մեզի համար բարեխօսութիւն  
ընելու: Երբոր յանցանքներնուս ծանրու-  
թիւնը աղէկ տեսնենք, եւ մեղքերնիս այն-  
շափ մեծ երեւան որ կարծենք թէ թողու-  
թիւն պիտի չ'կընանք գտնել, տակաւին  
կընանք յոյս ունենալ, քանզի բարեխօս մը  
ունինք Նոր Աստուծոյ առջին Հիսուս Քր-  
իստոս արդարը:

Եւ Խորսյէլի բոլոր զաւկըները Անվ-  
սէսին եւ Ահարոնին դէմ տրտնջացին, եւ  
բոլոր ժողովուրդը ըստ անոնց, Երանի թէ  
Եղիպատոսին մէջը մեռած ըլույինք, կամ թէ  
հոս աս անապատիս մէջ: Ուստի ձ. 1. 2:

Խորսյէլի զաւկըները շատ նեղութիւննե-  
րու մէջ ինկան, բայց անոնց ամենէն ալ  
Տէրը իրենք աղատեց: Թշնամիներնուն  
ձեռքէն իրենք աղատելու համար ծովը  
բաժնեց, երկինքէն հաց իրկեց որ փորեր-  
նին կշտացունեն եւ ապառաժէն ջուր բըլ-  
խեցուց որ ծարւութիւննին անցունեն:

Տէրոջը ըրած բոլոր աս բարերարութիւն-  
ներուն վրայ երբոր իրենց ժառանգելու-  
երկրին բնակիչներէն իրենց վտանդ կ'երե-  
ւայ, անատենը կըսկսին յօյսերնին Աստու-  
ծոյ վրայէն վերցունել, անոր դէմ տրտունջ  
ընել, եւ ցանկալ որ իրենց գերի եղած քա-  
ղաքին մէջը մեռնելու իրենք թող տար:  
Ասիկայ իրենց ընդունած բոլոր ողորմու-  
թիւններնուն փոխարէն անարդ ապերախ-  
տութեան հատուցում մըն էր: Խորայէլա-  
ցիններուն ցուցուցած նոյն երկմտութիւնը  
շատ անգամ մենք ալ կըցուցունենք, եւ ան  
ալ շատ հեղ իր բարութեանը եւ շնորհը-  
ներուն վրայ Խորայէլացիններուն ունեցած  
փորձառութիւններուն չափ կատարեալ  
փորձառութիւն ունենալէն ետքը: Այսչափ  
տարիներ Տէրը իր ողորմութիւնը մեր վր-  
այէն անպակաս ըրաւ, եւ սակայն երբոր  
նեղութիւն մը կամ դժբաղդութիւն մը կը-  
տեսնենք, կըցաւինք կ'ողբանք ու տրտմու-  
թեան մէջ կը թաղուինք, իբրեւ թէ վրա-  
նիս հոգ տանող Աստուած չունինք: Ո՞եր  
մեղքերուն համար իր Արդին մեռնելու  
տուաւ, եւ իր սիրոյն ասանկ մէկ փորձը առ-  
նելնէս ետեւ, ալ երկմտութիւն մը կամ  
վախ մը ունենալու չենք:

Կաղաչեմ քու մեծ ողորմութեանդ հա-  
մեմատ ներէ աս ժողովուրդին մեղքը, ինչ-  
պէս որ ներեցիր աս ժողովուրդին Խղիպ-  
տոսէն մինչեւ հոս : Ուստի . ձ.Դ. 19 :

Առվսէս ջերմեռանդ ոգիով աղօթք ը-  
նող մարդ մըն էր, երբոր Խսրայէլացինե-  
րուն կողմէն աղօթքով Աստուծոյ բարե-  
խօսութիւն կ'ընէր, իր բերանը փաստերով  
լնցուն էր : Աստուած սպառնալիք ըրաւ որ  
անոնք իրենց անհաւատութեանը եւ ապե-  
րախտութեանը համար պիտի կորսնցունէ .  
բայց Առվսէս բարեխօսութիւն ըրաւ որ իր  
սուրբ անունին պատիւին համար ան բանը  
չընէ, որ չըլլայ թէ Խղիպտացիները ըսեն  
թէ չկրցաւ անոնք Քանանու երկիրը տա-  
նիլ : Եաւ Առվսէս Աստուծոյ ունեցած  
ստորոգելիքներն ալ անոր առջեւը բե-  
րաւ, այսինքն անոր երկայնամիտ ու անօ-  
րէնութիւններու՝ անիրաւութիւններու եւ  
մեղքերու ներող ըլլալը, որոնք Աստուած  
իրեն յայտներ էր : Խտքը աղաչեց որ իր առ-  
ջի ըրածներուն պէս, իր մեծ ողորմութիւ-  
նովը անոնց ներէ : Տէրը իր ծառային ա-

Ղօթքը լսեց ու իր ժողովուրդը չ'կորսնցուց։  
 Անկ ալ երբոր աղօթք ընելու համար  
 Աստուծոյ կը մօտենանք կրնանք ասորնման  
 փաստեր առաջ բերել։ Արնանք իրմէն  
 խնդրել որ իր անունին պատիւին համար եւ  
 իր կարողութիւնը ու շնորհքը ցուցունելու  
 եւ իր Արդիին պատիւին համար, որ մեղա-  
 ւորներուն Փրկիչն է, եւ իրեն ողորմու-  
 թեանը համար մեր մեղքերը ներէ։ Արնանք  
 իբրեւ փաստ մինչեւ հիմա մեզի համար եւ  
 ուրիշ մեղաւորներու համար ըրածը առաջ  
 բերել որ մեզի միշտ ողորմութիւն ընէ։  
 « Ամեւ շատ ասանկ փաստեր կրնանք առաջ  
 բերել երբոր մեղաւորներուն դարձի դալուն  
 համար եւ Փրկչին թագաւորութեանը տա-  
 րածուելուն համար կ'աղօթենք։ Եւ թէ որ  
 « Քրիստոսի անունովը միայն աղօթքնիս մա-  
 տուցանենք պիտի լսէ եւ պատասխանը տայ։

## 24

Ուստի դիտցիր որ քու Տէր Աստուածդ  
 չէ թէ քու արդարութեանդ համար կուտայ  
 աս երկիրը որ ժառանգես, ինչու որ դուն  
 խստապարանոց ժողովուրդ մըն ես։ Տ. (Օքն.  
 թ. 6:

Երբոր զօրապետ մը կամ աշխարհակալ  
մը իր զօրքը պատերազմի կը տանի, սովորաբար կ'ուզէ անոնք քաջութիւնով լեցունել, եւ անոնց ըրած յաղթութիւններուն վրայ խօսելով ու անցած ատեններուն ցուցուցած քաջութիւններնին գովելով անոնց հպարտութիւնը գրգռել: Ո՞վսէս Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին առաջնորդը ասանկ չըրաւ: Երբոր խօստացուած երկրին սահմաններն եկան, որ ալներս պիտի մտնեն եւ առջեւնին գտնուող ազգերը պիտի յաղթէին, Ո՞վսէս անոնք աս գործերը կատարելու կը պատրաստէ՝ իրենց անարդ անհաւատութիւնը եւ մեղքերնին առաջ բերելով: Ո՞խքերնին կը ձգէ որ իրենց զօրութիւնովը եւ իրենց իմաստութիւնովը չէր որ աներկիրը պիտի ժառանգէին, հապա իրենց Տէր Աստուածն էր որ իրենց համար պատերազմեցաւ, եւ բոլոր փառքը անոր տրուելու էր: Եւ որ չըլլայթէ Աստուած այսպէս իրենքընտրելուն համար հպարտանան, ուստի կը պատուիրէ որ յիշեն թէ իրենց արդարութեանը համար չէր որ Աստուածիրենք ասանկ սիրեց, ինչու որ իրենք խրապարանոց ժողովուրդ մըն էին: Ո՞վսէս միայն մարդկացին իմաստութիւնով ա-

ամսնկ խօսք մը չեր կրնար ընել։ Հապա  
Առւրբ Հոգիին զօրութիւնովը խօսեցաւ։  
Եւ իր ըրած խօսքերը անոնց սիրտը անանկ  
վիճակի մը հասցունելու համար էր՝ որ Տէրը  
անոնք օրհնէ։ Տէրը իրենց համար պատե-  
ռազմելու վրայ էր, բայց “Ամբարտաւան-  
ներուն եւ ինքզինքնին արդար սեպողնե-  
րուն հակառակ է, եւ իր շնորհքը խոնարհ-  
ներուն կուտայ”։

---

## 25

Յիշէ եւ մի մոռնար թէ քու Տէր Աստ-  
ուածդ անապատին մէջը բարկացուցիր։ Եւ-  
դիպտացւոց երկրէն ելած օրէդ մինչեւ աս-  
տեղը ապստամբ ժողովուրդ մը եղաք։ Ա  
Օքին. թ. 7 :

Խսրայելացիք իրենց ընդունած մասնա-  
ւոր շնորհքներնուն վրոյով հպարտ ոգի մը  
չունենալու համար, Առվտէս կը պատուիրէ  
որ Եղիպտոսէն ելած օրերնուն մինչեւ  
Վանանու սահմանները եկած ատեննին իւ-  
րենց գործած մեղքերը յիշեն։ Աս բանը  
անոնք խռնարհութեան մէջ պահելու համար

Էրեւ իրենք շարժելու համար որ Աստուծոյ  
իրենց վրայ ցուցուցած ողորմութիւնը եւ  
երկայնմտութիւնը բարձրացունեն։ Առվ  
սէսին Խորայէլացւոց տուած յորդորանքը  
մեր վրայ ալ առնենք, աղէկ է որ մեր կեան-  
քին անցած տարիներուն վրայ նացինք եւ  
տեսնենք թէ Աստուծոյ դէմ որչափ մեղք  
դործեցինք։ Բնաւ մոքերնուն հանելու  
չենք թէ ինտոր ապստամբներ էինք, թէ  
ինչպէս Աստուծոյ պատուիրանիքները կու-  
րեցինք եւ մեր ուղած ճամբան գացինք, բը-  
նաւ անօր չ'նայելով։ Հիշելու ենք թէ քա-  
նի քանի անդամ Փրկչին սիրոյն վրայ խօս-  
ուած խօսքերը լսեցինք, ու մեր վրայ ամե-  
նեւին աղդուռութեաննշան մը չ'երեւաց, եւ  
թէ ինչպէս Առւրբ Հոգիին դէմ կեցանք։  
Եւ յիշելու ենք թէ սրտերնիս նորոգուելն  
եւ Աստուծոյ որդիքը ըլլանուս իվեր քա-  
նի քանի հեղ անհաւասութեան եւ երկ-  
մտութեան մէջ ինկանք, ու արտունջներ ը-  
րինք եւ շատ ուրիշ մեղքեր ալ գործեցինք։  
Աս բաներուն յիշատակութիւնը մեղի հա-  
մարձակութիւն չ'տար որ ինքզինքնիս ար-  
դար սեպենք, եւ մեզ նորէն Վրիստոսի եր-  
թալու կը ստիալէ իրմէն թողութիւն խընդ-  
րելու համար։ Աւեւ Փրկչին պատուակա-

նուլժիւնը մեղի կը սորվեցունէ, եւ մեղի կը-  
շարժէ Աստուծոյ երկայնմտութիւնը փա-  
ռաբանելու, որուլ այնչափ մեղի համբերեց:

## 26

Եւ քու Տէր Աստուածդ պիտի ցրուե-  
քեղ ամեն ազգերու մէջ, աշխարհիս մէկ  
ծայրէն մինչեւ միւս ծայրը. եւ հոն օտար  
աստուածներու պիտի ծառայես, փայտերու  
եւ քարերու, որ ոչ դուն եւ ոչ քու հայ-  
րերըդ դիտէին: Տ. (Օքն. Իր. 64:

Ո՞ովսէս Աստուծոյ առաջնորդութիւ-  
նովը Խորայէլի Որդւոցը առջեւը դրաւ  
կեանքն ու մահը: Խռէ որ իրենց Տէր Աս-  
տուծոյն պատուիրանքներուն հնաղանդէ-  
ին, ամեն ուղած օրհնութիւննին պիտի ըն-  
դունէին. բայց թէ որ Տէրոջը ձայնին մը-  
տիկ չընէին, եւ բոլոր իր պատուիրանքնե-  
րը չկատարէին, անատենը գլխունուն շատ  
սոսկալի պատուհասներ պիտի դար: Ո՞ով  
մահ սուր եւ դերութիւն պիտի դար, եւ  
վերջապէս ամեն ազգերուն մէջը պիտի ցըր-  
ուէին: Անանկ մէծ պիտի ըլլար իրենց նե-

դութիւնները, որ սովոր սաստկութեան ա-  
տենը ծնողքները զաւակնին պիտի ուտէին。  
Եւ ասդին անդին ցրուած ժամանակնին ալ-  
տակաւին սիրտերնին դողի մէջ պիտի ըւ-  
լար եւ հոգինին ալ պիտի մարմրէր։ Խարա-  
յէլացիք Աստուծոյ չ'հնազանդեցան, եւ թէ-  
պէտշատ համբերեց՝ սակայն վերջապէս բո-  
լոր իր սպառնալիքները կատարեցան։ Խա-  
րայէլի որդոսը պատմութիւնը թէ որ աս  
մարգարէութիւններուն հետ բաղդատուի,  
յայտնի կ'երեւայ Անվտեսին Աստուծմէ-  
շարժուած մարդ ըլլալը։ Աս խօսքերուն ա-  
մեն մէկը կատարուեցան, Աստուծ ցուցուց  
թէ իր սպառնալիքներն ալ իր խօստմունք-  
ներուն պէս ճշմարիտ են։ Աստուծած ար-  
դար է եւ չարերը պիտի պատժէ, թէ եւ շատ  
ալ համբերէ։ “Խիստ վախնալու բան է կեն-  
դանի Աստուծոյ ձեռքը կյալը”։ Եբք. Ժ.  
31.

Խենդը իր սրտին մէջը ըստ, թէ Աստ-  
ուծած չ'կայ։ Ասով, Ժ.Դ., 1։

իմակ որ մարդ մը գեղեցիկ ու պինտ շի-  
 տակ բանող ժամացոյցի մը վրայ նայելու  
 ըլլայ, ու ըսէ թէ ասիկայ մէկը չէ շիներ,  
 հապա անոր զանազան կտորները դիպուա-  
 ծով մէկ տեղ եկեր ու ինքիրեննին ասանկ  
 շինուեր են, ան մարդուն խենդ կ'ըսենք:  
 Ուստի ան մարդը որ աս աշխարհս ու ա-  
 նոր մէջը եղած բոյսերուն եւ կենդանինե-  
 րուն զարմանալի կազմութիւնները, ու նա-  
 եւ անոնց ինչ բանի համար ստեղծուելուն  
 ունեցած կատարեալ յարմարութիւնը տես-  
 նելէն ետեւ, կ'ըսէ թէ Աստուած չ'կայ, եւս  
 առաւել արժանէ է խենդ կանչուիլ: Իսյց  
 մարդոց ասանկ տարակուսութեան մէջ իյ-  
 նալը, Աստուածոյ էութեանը վկայութիւն-  
 ները հասկընալու չափ կարողութիւն չունե-  
 նալնուն համար չէ, հապա անոնք միայն ի-  
 րենց սրտերնուն մէջը կ'ըսեն թէ Աստուած  
 չ'կայ: Չեն ուղեր անանկ էակի մը իշխա-  
 նութեան տակը ըլլալ որ իրենց խորհուրդ-  
 ները՝ խօսքերը եւ գործքերը կը նայի, կ'ու-  
 զեն որ իրենց ուզած ճամբան երթան, եւ  
 իրենց չար սրտերը իրենք կը համոզեն թէ  
 Աստուած չ'կայ որ իրենք հաշիւ տալու կան-  
 չէ: Իսյց մարդոց համարձակ մեղք գոր-  
 ծելու համար ինքղինքնին առ բանին հա-

մողելովնին ճշմարտութիւնը չխափանուիր. միայն թէ անոնք անանկ հաւտալը ուղելով իրենց խենդութիւնը երեւան կը հանեն. ինչու որ Աստուած դեռ կենդանի է, եւ ասանկ իրեն դէմ ապատամբողներուն ու իր անունը անպատիւ ընողներուն իր բարկութիւնովը սցցելութեան պիտի դայ:

28

Ուր որ անոնց որդը չմեռնիր, եւ կրակը չմարիր: Անդի, թա, կէ:

Աստուած կատարեալ արդարութիւն եւ անհուն ողորմօւթիւն ունեցող էակ մըն է. Երբեմն երկրաւոր ծնողքները իրենց դաւ- կըներուն գործած յանցանքներուն համար արժան եղած էն շատ աւելի պատիժ կուտան. ինչու որ պինտ շատ բարկացած են ու կիր- քով կուտան ան պատիժը եւ չէ թէ բա- նականութիւնով: Բայց Աստուած ասանկ չէ, անիկայ իր արարածները կը սիրէ, եւ թէպէտ մեղքը կ'ատէ սակայն արժան ե- ղած պատիժէն եւել պատիժ չտար: Ուս- տի երբոր Աստուածաշունչին մէջը շարե-

ըուն տրուած պատիժին վրայ կը կարդանք  
թէ անոնք անմարելի կրակով պիտի այ-  
րին եւ չ'մեռնող որդերը իրենք պիտի կը ը-  
ծեն, կը տեսնենք մեղքին ինչ գէշ բան ըւ-  
լալը, որ Աստուած անոր համար ասանկ մեծ  
պատիժ մը կուտայ: Անիկայ անհուն չա-  
րութիւն մըն է, ինչու որ պատիժը յա-  
ւիտենական է: Անեղքը անանկ գէշ  
բան է եւ իրեն հետ կցուած անէծքն ալ  
անանկ սոսկալի է, որ Աստուծոյ յաւիտե-  
նական Որդիէն զատ բնաւ ուրիշ մէկը ըր-  
կընար անիկայ քաւել եւ մեղաւորին պա-  
տիժը անոր տեղը քաշել: Ամենքս ալ մե-  
ղաւոր ենք, ուստի ամենքս ալ յաւիտենա-  
կան պատիժի արժան ենք: Բայց Քը-  
րիստոս մեր տեղը անէծքը կրեց, եւ թէ որ  
իրեն հաւտանք կրնանք անկէց աղատիլ: Ու-  
րեմն անոր մեր վրայ ցուցուցած առատ սի-  
րոյն համար ինչ մեծ պարտաւորութեան  
տակ ենք:

Հիսուս Քրիստոս մեղի օրինակ մը  
տուաւ, որ սորվեցունէ թէ ինչ հոգիով ու  
ինչ եղանակով աղօթք ընելու ենք։ Անի-  
կայ շուղեց ըսել թէ միայն իր ըսած խօս-  
քերը գործածենք, հապա որ ան կերպովը  
աղօթենք կամ թէ իր ըսած աղօթքին մէջի  
ցուցուած զգացումները եւ փափաքները ու-  
նենալով աղօթենք։ Խնքը մեղի կը սորվե-  
ցունէ որ իբրեւ հայր իրեն մօտենանք։ Անձ  
պատիւ է մեղի որ կրնանք Աստուած մեր  
հայրը կանչել. բայց մեղի համար աս շնորհ-  
քը ծախու առնողը Քրիստոս է, եւ ինքը  
կըհրամայէ որ անիկայ վայլենք։ Աւստի թէ  
որ Աստուած մեր հայրը կը կոչենք, որդիա-  
կան հոգիով պէտք է իրեն աղօթք ընելու  
մօտենանք, պէտք է որդիական սիրով ու որ-  
դիական յարգութիւնով մօտենանք։ Ա, ա-  
եւ որդիական վստահութիւնով իրեն եր-  
թալու ենք, եւ կատարեալ հաւատք ըն-  
ծայելով իր ճշմարտութեանը եւ իր խօստ-  
մունքներուն վրայ ունեցած հաւատարմու-  
թեանը։ Ա, աեւ իր կամքին կատարեալ հը-  
նազանդութիւն ցուցունելու ենք, ինչպէս  
որ հնազանդ որդի մը իր գթած հօրը կամ-  
քը ուրախութիւնով կը կատարէ։ Քրիս-  
տոս մեղի կը սորվեցունէ որ ՏԵՇ ՀԱՅՐԸ ը-

սենք, եւ չէ թէ պարզապէս իմ Հայրս։  
Կընանք ամեն մէկերնիս մեր անձին համար  
ասանկ կանչել, բայց նոյն ժամանակը զգաւ-  
լու ենք թէ անկեղծութիւնով ու ճշմար-  
տութիւնով իրեն աղաղակող ամեն մարդ-  
ոց եւ ամեն աղգերուն ալ Հայրն է։ Ուս-  
տի բոլոր ասանկ մարդիկը մեր եղբայրներն  
են, եւ ամենքս ալ նոյն Հօրը զաւկըները  
ըլլալնուս համար անոնք ամենը եղբայրա-  
կան սիրով սիրելու ենք։

---

## 30

• Քու անունդ սուրբ ըլլայ։ • Քու թա-  
դաւորութիւնդ դայ, քու կամքդ ըլլայ,  
ինչպէս որ երկինքը՝ անանկ ալ երկրիս վը-  
ըայ։ Անդը օ. 9. 10։

ԱԵՐ մեծ փափաքը Աստուծոյ փառքին  
եւ իր ճշմարտութեանը տարածուելուն  
համար պէտք է ըլլայ։ Արիստոս մեզի կը-  
սորվեցունէ նախ եւ առաջ եւ ամենէն  
շատ աս բանին համար աղօթք ընել։ Աս  
աղօթքին մէջի եօթը խնդրուածքներէն ե-  
ըեքը Աստուծոյ պատիւին եւ իր թագա-

ւորութեանը կը վերաբերին : Առաջինը  
 “Քու անունդ սուրբ ըլլայ” է . սիրելի  
 զաւակ մը իր հօրը անունին յարգութիւն-  
 ով եւ սիրով յիշուելուն վրայ կ'ուրախ-  
 անայ . անանկ ալ մենք փափաքելու ենք  
 որ մեր Երկնաւոր Հօրը անունը իր ամեն  
 արարածները սուրբ սեպեն : Երկրորդ  
 խնդրուածքն է՝ “Քու թագաւորութիւնդ  
 դայ” . թէ որ Աստուծոյ թագաւորութիւնը  
 հաստատուի , եւ ամեն մարդիկ անոր մէջը  
 մտնեն , անատենը աշխարհք կրկին իր առ-  
 ջի սրբութիւնը խաղաղութիւնը ու երջան-  
 կութիւնը կը գտնէ . ամենը Աստուծ կը-  
 սիրեն եւ անոր կը ծառայեն , ու մէկզմէկու  
 վրայ սէր կ'ունենան : Անը Երկնաւոր Հօ-  
 րը պատիւին եւ մեր ընկերներուն օգտին  
 համար պարտաւոր ենք աս բանին փափաք-  
 ելու : Երրորդ խնդրուածքն է՝ “Քու  
 կամքդ ըլլայ , ինչպէս որ երկինքը անանկ  
 ալ երկրիս վրայ” . երկինքը հրեշտակները  
 Աստուծոյ կամքը կատարելու կը փափաքին ,  
 իր հրամաններուն հնազանդելու կը վաղեն .  
 անանկ ալ մարդիկ ուրախութիւնով եւ  
 ղուարթութիւնով Աստուծոյ հնազանդե-  
 լու են : Ուէ որ աս խնդրուածքները ան-  
 կեղծութիւնով մատուցանենք , ամենէն

շատ մենք պիտի աշխատինք Աստուծոյ կամ  
քը կատարելու, իր թագաւորութեանը մէջ  
կենալու, եւ իր անունը փառաւորելու:

## 31

Ա՞ր ամեն աւուր հացը՝ ասօր մեղի  
տուր: Անտվա, օ., 11:

Կընանք մեր Արկնաւոր Հօռը երթալ եւ  
խնդրել որ բոլոր մեր կարօսութիւնները  
լեցունէ: Չէ թէ միայն մեղաց թողու-  
թիւն եւ մեր հոգեւոր պիտոյքները, հա-  
պա նաեւ բոլոր մեր մարմնաւոր պիտոյք-  
ներն ալ կընանք իրմէն խնդրել, ինչպէս  
որ փոքրիկ տղայ մը կ'երթայ իր ծնողք-  
ներին կերակուր կը խնդրէ: Ա՞ր կերա-  
կուրն ու հանդերձը եւ ամեն վայլած բաւ-  
րութիւննիս տուողը Աստուած է, եւ ար-  
ժան է որ մեր պիտոյքները իրմէն խընդ-  
րելով անկէց ունեցած կախումնիս ցուցու-  
նենք: Իայց Քրիստոս մեղի համարձակ-  
ութիւն չտար որ մարմնաւոր բաներու վե-  
րաբերեալ մեծ բաներ խնդրենք. ինքը  
մեղի հարստութիւն եւ պատիւ խնդրելու

աղօթքի օրինակ չ'տուաւ, հապա պարզա-  
պէս մեր օրական հացը խնդրելու : Պէտք  
չէ որ մենք աւելորդ բաներ խնդրենք, հա-  
պա օր ըստ օրէ մեր օրական պիտոյքը .  
ինչպէս որ առաքեալը կ'ըսէ, “Ունինք  
կերակուր ու հանդերձ, եւ անով բաւա-  
կանանանք” : Ե. Տէմ. Զ. 8: Ուստի թէ որ  
կրնանք ամեն օր մեր Արկնաւոր Հօրը եր-  
թալ, եւ բոլոր մեր կարօտութիւնները լե-  
ցունել, արդարեւ գալու ժամանակին վրայ  
հոգ տանելու բան չունինք . եւ բնաւ վախ-  
նալու չենք թէ մեր ամեն աւուր հացը չենք  
դաներ :



# ՅՈՒՆԻՍ

## 1

Եւ մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս  
որ մենք ալ կը ներենք մեր պարտական-  
ներուն։ Անդին. օ. 12։

Այս խօսքը Պուկասու աւետարանին մէջ  
այսպէս գրուած է, թէ “Անր մեղքերը  
մեզի ներէ”։ Պահի Ժ. 4։ Գործած մեղք-  
երնիս չենք կրնար հաշիւի տակ առնել։  
Թէ որ Աստուած մեր յանցանքներուն հա-  
մար մեզմէ խստութեամբ հաշիւ պահանջէր,  
տասը հաղարէն մէկին պատասխանը չէինք  
կրնար տալ։ Իսյց Հիսուս Քրիստոս ար-  
դար Աստուծմէ թողութիւն դտնելու ճամ-  
բայ մը բացաւ եւ հիմա մեծ համարձակ-  
ութիւն ունինք Աստուծոյ մօտենալու եւ  
բոլոր յանցանքներնուս համար ներում  
խնդրելու։ Իսյց չենք կրնար մեր ներսը  
անհաշտելի ոգի մը ունենալ եւ նոյն ատե-

նը մեր անձին համար յուսալ թէ թողութիւն պիտի դանենք . մէկը չ'կրնար մեր Աստուծոյ դէմ գործած յանցանքներնուս չափ մեզի դէմ յանցանք գործել : Ուստի թէ որ մեզի դէմ գործուած յանցանքներն ուն սրտով չենք ներեր, եւ մեզի վեաս հասցունողներուն սէր ու բարի կամք չենք ցուցուներ, ինտո՞ր կրնանք Աստուծոյ դէմ գործած անթիւ մեղքերնուս թողութիւն գտնելու յուսալ, եւ կարծել թէ անիկայ մեզ կը սիրէ : «Քրիստոս աս աղօթքովը մեզի կը սորվեցունէ թէ Աստուծմէ խնդրած բաներնիս մեր ունեցած ներողամտութեան չափովը պիտի ընդունինք : Արդ թէ որ աս աղօթքը ըրած ատեննիս թշնամիներնուս վրայ բարկութիւն կամ վրէժինդրութիւն ունենանք, Աստուած՝ մեզի մի ներեր, ըստած կ'ըլլանք :

Ու մեզ փորձութեան մի տանիք . հապա՝ չարէն մեզ աղատէ, ինչու որ քուկդէ թագաւորութիւնը եւ զօրութիւնը ու փառքը յաւիտեանս . Ամէն : Անդէ . օ. 13:

Վայենքնիս ալ տկար էակներ ենք, ու  
մեղք գործելու յօժար սիրտեր ունինք, եւ  
չենք կրնար փորձութեան դիմանալ. ու-  
րեմն մեր Խրկնաւոր Նօրը աղաչելու ենք  
որ մեզ փորձութեան չ'տանի, հապա չար-  
էն մեզ աղատէ : Վայենէն մեծ չարիքը մեղ-  
քըն է. մեծ եռանդով փափաքելու ենք  
որ աս բանէն աղատինք. ուրիշ չարիքնե-  
րը, ինչպէս են հիւանդութիւն նեղութիւն  
աղքատութիւն եւսյլն, կրնան մեզի մեծ  
օդուտներ ընծայել. բայց մեղքը լոկ չար-  
ութիւն է, եւ Վստուծոյ ալ զզուելի. ուս-  
տի միշտ խնդրելու ենք որ ասկէց աղատ  
մնանք : Վզօթքներնուս մէջը փառաբանու-  
թիւն ալ ըլլալու է. տիեզերքին թագա-  
ւորութիւնը Տէրոջն է, եւ մենք իր հպա-  
տակներն ենք, ու իրեն հնազանդելու  
ալ պարտական ենք : Վայեն զօրութիւննե-  
ըը իր ձեռքն են, եւ թէ որ աղէկ սեպէ  
կրնայ սրտերնուս ամենէն մեծ փափաքնե-  
րը լեցունել: Խւ բոլոր փառքը յաւիտեան  
իրենն է. թէ որ աս աշխարհիս մէջ բարի  
բան մը ընելու կարող ըլլանք, կարողու-  
թիւն տուողը ինքն է եւ փառքը իրենն է.  
ինչ որ ձեռքերնիս ունինք, իրեն պարգեւն  
է, եւ փառքը իրեն տալու ենք: Վեզի խո-

նարհութիւն կը վայլէ, բայց Տէրոջը մատոք  
եւ պատիւ յաւիտեան:

## 3

Ուստի Խորայէլի զաւկըները անատենը  
յաղթուեցան, ու Յօւդայի զաւկըները՝ իւ-  
րենց հայրերնուն Տէր Աստուծոյն ապա-  
ւինելնուն համար զօրացան: Ը Ա'նոց:  
Ճ. 18:

Տէրոջը ապաւինո՞ներէն մէկն աշ բնաւ-  
պիտի չամչնայ. աս համարին մէջը ցուց-  
ուած ժամանակը Խորայէլի որդիքը Յօւ-  
դայի զաւկըներուն ունեցած զօրքէն երեք  
անգամ եւել զօրք ունէին. բայց Խորայէ-  
լի որդիքը Տէրը երեսէ ձգեր էին, ու ոս-  
կիէ հորթեր շիներ էին անոնց երկրագ-  
ութիւն ընելու: Աակայն Յօւդայի որդիքը  
յոյսերնին Աստուծոյ խոստմունքներուն  
վրայ դրին թէ իրենց հետը պիտի ըլլայ  
թէ որ իրեն վստահութիւն ցուցունեն. ա-  
սանկուլ կատարեալ յաղթութիւն ստա-  
ցան: Աիսայն Տէրոջը ապաւինողները վա-  
խի բան չունին, իր խօսքին դրաւը տուաւ-

թէ ասանկ մարդիկները պիտի պաշտպանէ  
եւ փրկէ: Ա՛ռւզէ որ իր որդիքը իրմէն կա-  
խում ունենալնին զգան: որ ատեն որ սըր-  
աերնին բարձրացունեն, ու ինքզինքնին զօ-  
րաւոր կարծեն, ինքը ետ կը քաշուի ա-  
նոնցմէ եւ կը թողու որ իյնան որ իրենց տը-  
կարութիւնը իմանան ու նորէն գան իրմէն  
պաշտպանութիւն խնդրեն: Տայց բարի է  
Տէրոջը յուսպը եւ իր զօրութեանը ապա-  
ւինիլը եւ զինքը բռնելը, ինչպէս որ փոք-  
րիկ տղայ մը վտանգի ատեն իր մօրը ձեռ-  
քէն կը բռնէ: ասանկով բնաւ պիտի չի-  
նանք:

## 4

Դիրքերը քննեցէք: ինչու որ դուք ա-  
նոնցմով կը սեպէք յաւիտենական կեան-  
քը ունենալ: եւ բուն անոնք են որ ինծի  
համար կը վկայեն: ՀՅԱԼ. Ե. 39:

Հիսուս աս խօսքը Հրէից ըստ, որոնք  
իրեն Աստուծմէ ըլլալը չէին հաւտար: Ա-  
նոնցկըսէ թէ Առւրբ Գիրքերը առնեննա-  
յին, ու իր պահանջմունքները անոնցմով

փորձեն, ինչու որ անոնք են որ իրեն համար կը վկայեն: Աս նոյն խօսքը իրրեւ մեղի ալ զրուցուած սեպելու ենք. աղէկ քըննելու ենք Առւրբ Գիրքերը որ իմանանք թէ ինչ բաներ կը սորվեցունեն. եւ մեր կրօնական վարժապետներուն ամեն վարդապետութիւնները ու բոլոր կրօնական գիրքերը Աստուծոյ խօսքին հետ բաղդատելու ենք, եւ թէ որ անոր հետ համաձայն են՝ ընդունելու ենք, թէ որ համաձայն չեն՝ ձգելու ենք: Աստուած իր խօսքը մեղի տուաւ որ մեր կենաց առաջնորդը ու մեր հաւատքին կանոնը ըլլայ, եւ աս իր տուած խօսքը անանկ պարզ է որ ամենէն տկար մարդը թէ որ հնազանդ ողիով մը եւ ճշմարտութիւնը գիտնալու անկեղծ փափաքով մը կարդալու ըլլայ կարող է անիւ կայ հասկընալ: Եւ թէ որ մոլորութիւն մը ընդունինք կամ մեղանչական գործքի մը հետեւինք չենք կրնար ինքզինքնուս համար ջատագովութիւն ընել: Իսյց աս խօսքը, որ մեր ճամբուն լոյս ըլլալու համար տրուած է, մթեւթենէն զատ ուրիշ բան պիտի չըլլայ մեղի թէ որ ժիրութիւնով անիւ կայ չկարդանք: Եւ անիւ կայ կարդացած ատեննիս աղօթելու ենք Աաղմօս-

Երգուին հետ ըսելով, “ Ի՞աց իմ աչքերը, որ քու օրէնքներէդ հըաշքներ տեսնամ”։ Այսպէս. Ծճթ. 18։

---

## 5

Արման Պետրոս պատասխան տուաւ անոր. Տէր՝ որո՞ւն պիտի երթանք, դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս։ Յովլ. Զ. 69։

Փրկութիւն գտնելու համար Հիսուս Քրիստոսէն զատ որո՞ւն կրնանք երթալ. անկէց զատ որո՞ւն կրնանք երթալ երջանկութիւն գտնելու։ Խէ՛ որ ինքզինքնիս քննենք, կը տեսնենք որ բոլոր մեր արդարութիւնը մեղքէն զատ ուրիշ բան չէ, եւ թէ որչափ որ մեղաւոր ենք՝ նոյնչափ ալ տկար ենք։ Կարողութիւն չունինք ինքզինքնիս մեղաց իշխանութենէն աղատելու, եւ մենք մեղմէ զօրութիւն չունինք աշխարհիս՝ մարմինին եւ Այտանսային դէմ կենալու։ Ի՞այց Հիսուս Քրիստոս իր արդարութիւնը եւ զօրութիւնը մեղի կուտայ, եւ թէ որ իրեն երթանք յաւիտենական կեանք կ'ունենանք։ Խէ՛ որ զինքը ձգենք ու մեր

ընկերներէն մէկուն երթանք, ան ալ մեղի  
պէս մեղաւոր ու տկար պիտի դանենք եւ  
իր անձը աղատելու կարողութիւն չունե-  
ցող, եւ ի՞նչպէս մեղի պիտի օգնէ : Երբոր  
աշխարհ իր փորձութիւնները առջեւնիս  
դնէ, ու մեղի արդիլուած հեշտութիւններ  
վայլելու եւ մեղանչական ճամբաններու մէջ  
քալելու գրդուէ, անատենը աս պատասխա-  
նը տալու նեք ան փորձութիւններուն թէ  
Ուրիշ որո՞ւն քովը յաւիտենական կեան-  
քի խօսքեր կան : Ո՞վ մեղաւորներուն Փըր-  
կիչը, քու դիրկդ կ'իյնամ եւ կ'աղաչեմ  
պահէ իս որ քեզ չ'թողում, միայն քու  
քովդ է կեանքն ու փրկութիւնը :

## 6

Ատիկայ ինչ որ ունէր ըրաւ : Անրի .  
Ժ. Տ., 8:

Աս մէծ գովիեստը մէր Փրկիչը տուաւ-  
ան կնկանը, որ շիշ մը պատուական նար-  
դոսի եղ դլուխը թափեց : Արծաթասէր  
Հուդան դատապարտեց աս դործը իրեւ-  
անպիտան ծախք մը, բայց Հիսուս բարի

գործ մըն էր ան՝ ըստւ։ Տեսաւ որ ասիւ  
կայ իրեն վրայ ունեցած սիրոյն պառւղն է,  
եւ պարզ սիրով եղած ամեն ընծայ իրեն  
ընդունելի է։ սրտին սիրով բորբոքիլը  
արտաքին գործքերով երեւալու է։ Ուէ  
որ Փրկիչնիս կը սիրենք, աս սէրը սրտեր-  
նուս մէջը ծածկուած մնալու չէ, հապախ-  
րեն հաճոյ ըլլալու եւ զինքը պատուելու  
համար ըրած ամեն ջանքերնուս մէջ երեւ-  
ալու է։ Աս կինը բաւական չ'սեպեց միայն  
ընդհանուր գործածուած սիրոյ նշաններ-  
ով իր սէրը ցուցունելը։ Հապա սուղ ըն-  
ծայ մը բերաւ, մէկ շատ պատուական եղ  
մը՝ եւ անոր դլուխով թափեց։ Հիսուս տե-  
սաւ որ իր սէրը ցուցունելու համար ձեռ-  
քէն եկածը ըրաւ։ Ահա մեր պարտաւոր-  
ութեան կանոնը ասիկայ է։ մեր Փրկիչը  
փառաւորելու համար ինչ որ ձեռքերնուս  
կուգայ ընելու ենք։ Հիմա աշխարհիս վրայ  
չե որ մեր ընծայները տանինք իրեն մատու-  
ցանենք, բայց անոր փառաւոր գործը հոս է,  
որ իրեն շատ սիրելի է, որուն համար կընանք  
աշխատիլ։ Խնքը կ'ըսէ թէ ինչ որ իրեն  
հետեւողներուն ընենք իրեն ըրածի պէս  
կ'ըլլանք, ուրեմն շատ կերպերով մեր  
գործքերովը Քրիստոսի վրայ ունեցած

դոս մահուան քունը քնացող բարեկամ-  
ներու վրայ սուրգ ընողներուն կ'ըսէ թէ  
“մխիթարուեցէք”։ Անոնք յարութեան եւ  
յաւիտենական կենաց վարդապետութիւն-  
ներն են, ինչպէս որ Յիսուս մեռաւ եւ  
յարութիւն առաւ, անանկ ալ անոնք որ  
Քրիստոսով կը ննջեն յարութիւն կ'առ-  
նեն, քիչ մը ժամանակէն ինքը Տէրը պի-  
տի իջնայ հրեշտակապետին ձայնովը, եւ  
անառենը մեռելները յարութիւն պիտի  
առնեն։ Երբոր քրիստոնեայ բարեկամի մը  
մարմինը դերեզմանը կը դնենք, չո՞ն յա-  
ւիտեան պիտի չ'ննջէ, հապա ետքը յաւի-  
տենական կեանքի յարութիւն պիտի առ-  
նէ, մենք ալ անոնց քովը պիտի երթանք  
եւ մէկտեղ երկինքը պիտի ընդունուինք,  
եւ յաւիտեան Տէրոջը քով պիտի մնանք։  
Ասիկայ է երջանկութիւններուն կատարե-  
լութիւնը, եւ աս յօյսը ամեն փորձութիւն-  
ներինուս մէջ մեզ մեծ մխիթարութիւն է։  
Մենք անցաւոր աշխարհի մը մէջ ենք, եւ  
շատ տրտմութիւններու ալ ենթակայ։  
բայց ինչ որ գլխունուս դայ բնաւ տրտ-  
մութեան մէջ թաղուելու չենք, քանի որ  
ան յօյսը ունինք թէ շուտով աս աշխարհ-  
քը պիտի ձգենք երթանք, ու անկէց ետեւ

յաւիտեան մեր Փորկչին քով պիտի մնանք:  
 Ո՞չ թէ անանկ ապաշխարութիւն մը ընէի  
 եւ անանկ հաւատք մը ունենայի, որ առ  
 յոյսս պարապը չելլէր :

## 9

Իմ Հօրս տունը շատ բնակարաններ  
 կան. հազա թէ չէ՝ ես ձեզի կ'ըսէի. որ  
 կ'երթամ ու ձեզի տեղ կը պատրաստեմ:  
 Յահն. ձ.Դ. 2:

Երբոր Հիսուս իր աշակերտներուն ը-  
 սաւ թէ իրենցմէ բաժնուելու վրայ է, սրո-  
 տերնին տրտմութիւնով լեցուեցաւ: Բայց  
 ինքը անոնք քաջալերեց որ թէեւ անոնցմէ  
 պիտի զատուի, բայց իրենք պիտի չ'մոռնայ:  
 Երկինքը իր առջի տեղը համբառնալէն  
 ետեւ, տակաւին վրանին պիտի հոգ տանի.  
 ինքը անոնցմէ առաջ կ'երթայ իր Հօրը  
 տունը անոնց տեղ պատրաստելու: Հի-  
 սուս աշխարհիս վրայ եղած ատենը իր սկը-  
 սած գործը ձեռքէ չ'ձգեց, եւ աս գործը  
 առաջ կը տանի ու պիտի տանի ալ, մինչեւ  
 որ բոլոր իր հաւատացեալ աշակերտները

իր փառաւոր տունը երթան : Առլոր դարձի  
բերածները բնաւ երեսի վրայ չ'ձգեր, եւ  
իր Հօրը տունը մեղի բնակարաններ կը-  
պատրաստէ . այո, ինծի համար ալ թէ որ  
Ճշմարտապէս իրեն կը հաւտամ : Ա'եզի  
տանելու տեղը հոն է . մեր բնակարանը աշ-  
խարհքը չէ . հոս միայն մեր երկնային ժա-  
ռանդութեանը մտնելու պատրաստութիւն  
տեսնելու հնք . մեր Տէրը շուտով մեղ իր  
պատրաստած տեղը պիտի կանչէ , եւ պէտք  
չէ որ աս հրաւերքը ընդունելնուս ուրախ-  
անանք :

10

Եւ թէ որ երթամ՝ ու ձեզի տեղ պատրաստեմ, նորէն կուգամ եւ ձեզ քովս կ'առնեմ, որ ես ուր տեղ որ եմ՝ դոք ալ հոն ըլլաք։ Յա՞Հ. Ճ Յ. Յ. :

Քիսուս մահուան ժամուն իր աշակերտ-  
ները չ'ձգեր. չէ թէ հրեշտակ մը կը խըս-  
կէ որ անոնք իր առջին բերէ, հապա ինքը  
անձամբ կուգայ եւ անոնք կ'առնէ կը տա-  
նի: Ուրեմն մահը ճշմարիտ քրիստոնէին

վախ չ'քերելը զարմանալի բան չէ . զարմա-  
նալի բան չէ որ այսչափ մարդիկ հոգեւարք  
ինկած ատեննին կ'ուրախանան : Առ օրհ-  
նեալ յուսովը ամենէն տկար հաւատաց-  
եալը կրնայ ըսել Աաղմոսերգուին հետ  
“Ասեւ մահուան շուքին մէջը երթալու  
ժամանակս չարէն պիտի չ'վախնամ , վասն  
զի դուն իմ հետս ես , քու ցուպդ ու դա-  
ւազանդ՝ անոնք իս պիտի միսիթարեն” :  
Ատուլ . ԻԳ . 4 : Աստուծոյ որդիքը մահը<sup>1</sup>  
տեսնելնուն ինչո՞ւ համար պիտի սարսափին .  
մեր Փրկիչը եւ մեր Աարդապետը մեղ կը-  
կանչէ , պիտի գայ մեղ առնելու . մեղ իր  
թեւերուն վրայ պիտի առնէ իր պատրաս-  
տած բնակարանները տանի , եւ ինքը ուր  
որ է՝ մենք ալ միշտ հոն պիտի ըլլանք :  
Ո՞հ ինչ արժանաւորութիւն ունիմ ասանկ  
խնամքներ՝ ասանկ խոստմունքներ ընդու-  
նելու . բայց Տէր՝ դուն խոստացար , եւ ես  
կը հաւտամ ու վստահ եմ քու խօսքիդ ,  
եւ քեզ կը դովեմ :

Հովք աս Խօսքը զրուցած ժամանակը  
շատ մեծ փորձութիւններու մէջ ինկած էր,  
բայց նոյն Խօսքը աշխարհիս մեղի տուած  
ամենէն մեծ երջանկութիւններուն մէջն ալ  
կրնանք հանդարտ եւ հեղ ձայնով մը ը-  
սել: «Քրիստոնէին փափաքելի բան չէ միշտ  
աս աշխարհիս մէջ ապրիլը. թէ որ ընտ-  
րութիւնը իրեն ճգուի, մահէն ազատիլ  
պիտի չուղէ: Հոս ապրիլը մեղքի ենթա-  
կայ ըլլալ է, մեղաւորներու մէջ դանուիլ  
է, եւ իրենց մեղանչական դործքերէն նե-  
ղութիւն քաշել է. Հոս ապրիլը ցաւերու  
նեղութիւններու եւ տրտմութիւններու  
ենթակայ ըլլալ է: Բայց մեռնիլը ճշմա-  
րիտ քրիստոնէին ան երկիրը երթալ է,  
ուր տրտմութիւնը անծանօթ բան է. ամեն  
մեղքերէ եւ մեղաց մէջ կյնալու ամեն վա-  
խերէ ազատ ըլլալ է. մեզմէ առաջ գացող  
բոլոր բարի մարդոց եւ սուրբերուն հետ  
խառնուիլ է, եւ երկնային բլուրներուն վրայ  
եղող հրեշտակներուն ժողովին մէջը մըտ-  
նել է. Աստուծոյ քով երթալ է ալ յաւիտ-  
եան իրմէն չ'զատուելու: Ուստի ալ ովկ' կ'ու-  
զէ միշտ հոս ապրիլը. ովկ' չուղեր Աստուած  
փառաւորել ան սուրբ ցնծութիւններուն  
մէջը, որոնք մեռնելէն ետեւ պիտի գտննեք:

## 12

Ամեն մարմին խոտ է, եւ անոր բոլոր  
գեղեցկութիւնը դաշտերու ծաղիկի պէս է:  
Խայ. 10. 6:

Ժա՛ռ աս աշխարհէս անդինուրիշ կեանք  
մը չըլլար, շատ ցաւալի բան պիտի ըլլար  
մահուան ըրած ջարդերը տեսնել: Խնչպէս  
որ խոտը արեգակին դիմացը կը չօրնայ ու  
գաշտերուն մէջը ասօր շատ գեղեցկութիւն-  
ով բացուած ծաղիկները վաղը կը թումին,  
այնպէս ալ մարդիկ կ'անցնին ու կ'երթան:  
Անուկն ու ծերը հարուստն ու աղքատը զօ-  
րաւորն ու տկարը ամենքն ալ մեռնելու վրայ  
են, ասօրուան առողջ ու շատ յոյսեր ու-  
նեցող մարդը քանի մը օրէն գերեզմանը  
հանգչելու կը կանչուի: Չենք կրնար ըսել  
մէկ բարեկամի մը համար՝ թէեւ շատ սիրելի  
եւ պատռաւոր ըլլայ, թէ շատ օրեր կամ  
տարիներ մեզմէ պիտի չառնուի. մենք չենք  
դիտեր թէ արդեօք հետեւեալ օրուան լոյ-  
սը պիտի կրնանք տեսնել: Բայց անհուն  
ողորմութիւն մըն է մեր կեանքին ասանկ  
անստոյդ ըլլալը. մինչեւ անդամ հիմա ալ՝

մարդիկ աս աշխարհ.քը իբրեւ իրենց բնաւ  
կարանին պէս կ'ապրին, եւ կը մոռնան մահ-  
ուան դատաստանին եւ յաւիտենականու-  
թեան գալուստը, ալ որչափ առաւել ան-  
հօգութեան մէջ պիտի իյնային, թէ որ  
դիտնային թէ այսչափ ժամանակ պիտի  
ապրին : Երբոր մարդիկ իրենց գոնէ քա-  
նի մը տարի ապահով ապրելուն վստահ-  
ութիւնովը աւելի անհօգութեան մէջ կ'իյ-  
նան, որչափ դժուար պիտի ըլլար անոնք  
արթնցունելը որ իրենց վտանգն ու յան-  
ցանքները իմանան եւ Աստուծոյ հետ հաշ-  
տուին : Ո՞Շ թէ Աստուած անանկ սորվե-  
ցունէր մեղի օրերնիս համրելը, որ սրտեր-  
նիս իմաստութեան տայինք : Առաջ. Դ. 12:

## 13

Հապա թէ որ մեր աւետարանը ծած-  
կուած ալ է՝ կորսուածներուն մէջ ծած-  
կուած է ան . որ աս աշխարհիս աստուածը  
ան անհաւատներուն սիրտերը կուրցուց որ  
Քրիստոսի փառաւորեալ աւետարանին լոյ-  
սը անոնց վրայ չ'ծագէ . որ ինքն է աներեւոյթ  
Աստուծոյ պատկերը : Ը կորնել . ու . Զ Ա .

Բաղրը Աւետարանը Էստուծոյ իմաս-  
 տութիւնովը լեցուն է . անոր պատուէրնե-  
 րը անանկ մաքուր եւ սուրբ են , որ անհը-  
 նարին է կարծելը թէ անոնք մեղաւոր մար-  
 դիկներէ հնարուած խօսքեր են . եւ աս  
 պատուէրներուն հնազանդելով մարդս կըր-  
 նայ մի միայն երջանիկ ըլլալ : Անոր վար-  
 դապետութիւնները բարի են եւ իմաստու-  
 թիւնով լեցուն . հոն ցուցուած փրկու-  
 թեան ճամբան անանկ սքանչելի է , որ ըս-  
 տեղծուած էակ մը կարող չէ հնարել , եւ  
 անօգնական մեղաւորին ունեցած կարօտ-  
 ութիւններուն ճիշտ յարմար է : Բայց թէ-  
 պէտեւ ամեն անկեղծ սրտով աւետարանը  
 սորվողները կրնան կատարեալ հասկընալ  
 աս ապացոյցները՝ որոնք աւետարանին Էս-  
 տուծմէ զրուած ըլլալը կը հաստատեն , սա-  
 կայն շատերը կան որ կ'ըսեն թէ անոնց ա-  
 մենքն ալ սուտ են . եւ մարդու հնարած :  
 Պօղոս կը զըռուցէ ասոր պատճառը . թէ Էս-  
 աշխարհիս աստուածը անոնց սրտերը կուր-  
 ցուց : Իմէ որ անոր ճշմարիտ ըլլալը ըն-  
 դունէին , անատենը իր պատուէրներուն  
 հնազանդելով սուրբ կեանք մը անցունել-  
 ու պարտաւորութիւննին պիտի զգային .  
 ստեկայն անոնք մեղքը կը սիրեն . աս աշխար-

Հիս աստուծոյն կամաւոր հպատակներն են։  
 Արտերնուն մեղանչական կիրքերը եւ Աս-  
 տանային փորձութիւնները միտքերնին ամ-  
 պով կը պատեն։ ուրախութեամբ կը դար-  
 ձունեն երեսնին «Քրիստոսի փառաւոր ա-  
 ւետարանին լոյսէն եւ անիկայ բոլորովին  
 խաւար կը կոչեն, որ ազատութեամբ շրջին  
 «իրենց աչքերնուն լուսովը» եւ առանց  
 սանձի մեղաց մէջ կյնան։ Եւ թէ որ Աստ-  
 ուած իր անհուն ողորմութիւնովը սրտեր-  
 նին չ'փոխէ, անանկ պիտի երթան մինչեւ  
 որ յաւիտենականութեան առտուն իրենց  
 վրայ ծագէ։

## 14

Ա ասն զի ան ազգը եւ թագաւորութիւ-  
 նը որ քեզի չ'ծառայեր պիտի կորնչի։ աւե-  
 րելով պիտի աւերին ան աղդերը։ Եսայ։  
 Կ. 12։

Տիեզերքին Աստուածը աս աշխարհիս  
 մէջ մէկ թագաւորութիւն մը հաստատեց,  
 որն որ ինքը վճռեց թէ վերջապէս բոլոր  
 աշխարհ պիտի տարածուի։ Աս թագաւոր-

ութեանը հպատակները անոնք են, որ  
Վրիստոսի կը հաւտան եւիրեն կը հնաղան-  
դին. ով որ ապաշխարէ եւ փրկութիւն դըտ-  
նելու համար Վրիստոսի երթայ, աս թագա-  
ւորութեան հպատակը կ'ըլլայ: Աս թագա-  
ւորութեանը մէջ գտնուողները մեծ արտօն-  
ութիւններ կը վայլեն. ամեն մէկ անձ թա-  
գաւոր եւ քահանայ է Աստուծոյ. աս աշ-  
խարհիս մարդոցը աչքին աղքատ երեւան  
ալ, մէկ մեծ ժառանգութեան մը՝ յաւիտե-  
նական տպակի մը տէր են: Մինչեւ առ  
օրս աս թագաւորութիւնը քիչ հպատակ-  
ներ ունէր, բայց միշտ ասանկ պիտի չ'մը-  
նայ, պիտի տարածուի մինչեւ որ ամեն աղդ-  
իր տակը առնէ, եւ աս մեծ թագաւորու-  
թեանը չ'հնաղանդող աղգը եւ թագա-  
ւորութիւնը կործաննելով պիտի կործանի:  
Մարդիկ շատ անդամ աս թագաւորու-  
թեանը դէմ կեցան, եւ ուղեցին իր ըն-  
թացքը խափանել, բայց իրենց ջանքերուն  
ամենքն ալ պարապը գացին. անոր թագա-  
ւորը իրենցմէ շատ զօրաւոր է, եւ շուտով  
իրենց յիմարութիւնը պիտի տեսնեն ու  
պիտի ողբան. ահարկութան է Աստուծոյ հա-  
կառակ գտնուիլը: Բայց աս թագաւորու-  
թեան տարածուելուն համար աշխատող-

Ները մեծ ուրախութիւնով պիտի խնդան,  
տեսնելով որ իրենց աշխատանքը պարապը  
գացած չէ :

## 15

Քու ամեն ճամբաներուդ մէջ ճանչցիր  
զինքը, եւ անիկայ քու շաւիղներդ պիտի  
շնորհէ : Առաջի գ. 6 :

Կարճատես մահկանացուներ ենք,  
եւ շատ անդամ կը տարակուսինք թէ ինչ  
ճամբայ բռնելու ենք . շատ բաներու մէջ  
կը տարակուսինք թէ արդեօք մեղի օդտա-  
կար են, կամ թէ արդեօք մեր պարտաւոր-  
ութիւնն են : Ճայց թէպէտ կարճատես եւ  
տղէտ ենք, կրնանք անհուն բարի եւ իմաս-  
տուն էակ մը մեղի առաջնորդ ունենալ :  
Աստուած մեղի առաջնորդ եւ պաշտպան  
կ'ըլլայ . թէ որ երթանք իրմէն առաջնորդ-  
ութիւն խնդրենք ան սրտով որ մեղի ուր  
որ առաջնորդէ երթանք եւ ինքը ինչ որ  
ընտրէ ան ընենք, երբէք մեղ պիտի չ'թո-  
ղու որ արդիլեալ եւ վտանգաւոր ճամբայ-  
ներու մոլորինք : Խնքը կրնայ տեսնել թէ

ոյս ինչ Ճամբան մեզ ուր պիտի տանի, եւ  
իր աչքը յաւիտենական դարերէն ետեւ  
գալիքը կը տեսնէ: Կարելի է այն ինչ Ճամ-  
բան մտնալը մեզի հաճելի թուի, բայց ին-  
քը բոլոր երկայնութիւնը կը տեսնէ, եւ  
թէ որ իրեն ապաւինինք որ մեզ առաջ-  
նորդէ, մեզ ուղիղ եւ բարի Ճամբաներէ  
պիտի տանի: Ասիկայ Աստուծոյ կողմանէ  
մեզի մեծ շնորհք մըն է, բայց ինքը յօ-  
ժարութեամբ կը կամի մեզի առաջնորդել.  
բարի է ասանկ Աստուծով երթալը, բարի  
է որ ասանկ անհուն իմաստութեան մը մեզ  
առաջնորդելու գրաւը ունինք: Աս արտօ-  
նութիւնը կրնան վայլել ամեն անոնք, որ  
լառնարհութեամբ անիկայ կը փնտուն, որ  
շարունակ ինքզինքնին աղօթքով Աստու-  
ծոյ կուտան, եւ որոնք կ'ուզնեն թէ անիկայ  
իրենց առաջնորդէ:

Յաւիտենական կեանքին յուսովը, որ  
ինքը անսուտ Աստուածը խօսք տուաւ յա-  
ւիտենական դարերէն առաջ: Տէտ. Դ. 2:

Վարիստոնէին ունեցած յոյսը պարագ  
 յոյս չէ . Աստուծոյ խոստմունքին վրայ կայ-  
 ացած է , որ չ'կրնար սուտ խօսիլ : Աէհովան  
 ճշմարտութեան Աստուած է . եթէ առանկ  
 չըլար բոլոր տիեզերքը թշուառութիւնով  
 կըլեցուէր : Չարերը իրենց չարութիւնը ա-  
 ռաջ պիտի տանէին յուսալով որ մեղաց  
 դէմ ըրած Աստուծոյ սպառնալիքները ըր-  
 նաւ պիտի չ'կատարուին : Բարի մարդիկ վա-  
 խով եւ կասկածանքով իրենց բարութեան  
 մէջը պիտի մնային , ինչու որ պիտի չ'կրնայ-  
 ին գիտնալ թէ Աստուծոյ խոստմունքնե-  
 րը պիտի կատարուին : Բայց ասանկ չէ .  
 Աստուծոյ բերնէն ելած խօսքերուն ամեն-  
 քըն ալ կատարելապէս պիտի կատարուին .  
 ինչ որ ըստ անշուշտ պիտի ըլլայ : Ինքը  
 ճշմարտութիւն կը սիրէ , եւ բոլոր իր արա-  
 բածներէն ճշմարտութիւն կը պահանջէ .  
 սուտ խօսող պոկունքները իրեն զղուելի  
 են եւ մեծ սրտմտութիւն կը սպառնայ ա-  
 մեն ճշմարիտը չ'խօսողներուն : Ա'ատէ ամեն  
 տեսակ խարէութիւնը եւ կեղծաւորութիւ-  
 նը . ինքը սրտերը կը տեսնէ , եւ կը պա-  
 հանջէ որ բերնէ ելած խօսքերը սրտին  
 զգացումներուն եւ գիտաւորութիւններուն  
 յարմար գան : Աստուծոյ աս ստորոգելիքը

Քոլոր զինքը սիրողները ցնծութիւնով եւ վստահութիւնով կը լեցունէ . բայց մեղաց մէջ կեցողներուն միայն վախ կուտայ , ինչու որ աս Աստուածը որ քոլոր զինքը սիրողներուն յաւիտենական կեանք խոստացաւ , նաեւ յաւիտենական մահ սպառնացաւ բոլոր իրենց շար ճամբաները չ'ձգող եւ իրեն չ'զարձողներուն :

## 17

Բայց Աօղոս տակաւին սպառնալիքով եւ սպաննելու մոքով լցուած Տէրոջը աշակերտներուն դէմ , քահանայապետին գնաց : Պարծ . թ . 1 :

Աւետարանին կտտղած թշնամիները Ասեփաննոսը մեոցուցին , եւ Աօղոս մէկդի կայնած կ'ուրախանար : Բայց ոյսքանով չ'կշտացաւ . անարգուած կրօնքին դէմ ունեցած նախանձութիւնը զինքը առաջ քըշեց : Սպառնալիքով եւ սպաննելու մըտքով անոնց դէմ լցուած էր . Երուսաղէմի եկեղեցին հալածումով անդին ասդին ցիրուցան եղած էր , եւ հիմա միտքը դրաւ Պա-

մասկոսի մէջ եղած Յիսուսի աշակերտներուն փոքրիկ ընկերութեանը վրայ յարձակելու: Քահանայապետէն հրամանագիր առաւ որ անով իշխանութիւն ունենայ քրիստոնեաները կապուած Երուսաղէմբերելու: Եթէ մէկը Աօղոսին ըսէր թէ ան աւետարանը, որ Հիմա կործանելու կ'աշխատիս, շուտով գուն պիտի քարոզես, աս չարախօսութեանը վրայ ո՞րչափ պիտի բարկանար: Ա ախկոտ աշակերտներէն մէկը թէ որ լսէր թէ քիչ ատենէն Աօղոս եկեղեցիին մէջ սիւն մը պիտի ըլլոյ, իրեն հաւատքը այնչափ զըրաւոր պիտի չ'ըլլար որ աս բանը հնարաւոր կարծէր: Բայց ամեն սիրտ Տէրոջը ձեռքն է, եւ ինքը ով որ կը կամի անիկայ փրկութեան ժառանգ եւ իր թագաւորութեանը օգուտ ընող գործիք մը ընելու համար կ'ընթերէ, միտքը դրաւ առ հպարտ թշնամին յաղթելու եւ անիկայ յաղթող շնորհաց յաղթանակներէն մէկը ընելու: Աօղոս իր հալածման գրքը կատարելու քաղաքքը չ'հասած, խոնարհութիւնով երկրագութիւն ըրաւ “Ա, աղովքեցի Յիսուսին աղաքակելով, “Տէր՝ իս ինչ կ'ուղես ընել”:

Են ամենը որ շայրը ինծի կուտայ՝ ինծի պիտի դայ. եւ ան որ ինծի կուգայ, դուրս չեմ հաներ: Հյովել. օ. 37:

Խնչ պատուական քաջալերութիւն մը կայ հոս ապաշխարող մեղաւորներուն համար. «Քրիստոսի՝ դուրս պիտի չ'ձգեմ, ըստածը արդար մարդուն համար չէ. մինչեւ անդամ անոնց համար ալ չէ, որոնքընդհանրապէս Եստուծոյ պատուիրանքները պահելու կը ջանան, հապաէքեն գացողներուն համար է: Ակայ այնչափ մոլի մեղաւոր մը որ եթէ Հյիսուսի երթայ՝ անիկայ զինքը չ'փրկէ. աշխարհիս կամ իր աչքին առջին որչափ մեծ մեղաւորը լլոյ վեաս չունի, թող Պետրոսին պէս Փրկիչը ուրացած ըլլայ, եւ կամ Պօղոսին պէս հալածիչ եղած ըլլայ, տակաւին թէ որ «Քրիստոսի երթայ ողբրմութիւն կը դանէ: Իսպյցինչ է Քրիստոսի երթալը. իր սահմանած ճամբովը իրմէն փրկութիւն խնդրել է, մեր յանցանքները եւ մեր անօդնական ըլլալը զգալ, եւ մեր յոյսը միոյն իրեն վրայ դընել է: Հաւիտենական մահէն ուրիշբանի մը արժանաւորութիւն չ'ունենալիս

զգալ եւ խնդրել է որ մեղ փրկէ իր անուշնին ու խաչին պատիւին համար, որուն վըսրայ ամենէն մեծ մեղքերու քաւութիւնը բաւ: Ֆձէ որ աս կերպով Քրիստոսի երժանք, կատարեալ եւ հաստատ յոյս կ'ունենանք թէ մեղ պիտի ընդունի. իր խօսքը մեղի տուաւ եւ թէ որ աշխարհք մեղի դէմ ելլայ մենք իր խօսքին կրնանք ապաւինիլ: Բայց Քրիստոսի երժալը մեղքը ատելալ կը պարունակէ. թէ որ յուսանք թէ մեղ պիտի փրկէ եւ նոյն ժամանակը մեղքը սիրենք, ինքզինքնիս կը խօթենք եւ յոյսերնիս բոլորովին պարապ է:

## 19

Տրտմածներու պէս, ու միշտ ուրախ ենք:  
Եւ Արքնիւ. օ. 10:

Պօղոս քանի մը պատճառներ ուներ  
տրտմելու, այսինքն Քրիստոսի հաւտալուն  
համար իր կրած սաստիկ ծանք հալածանք  
ները. Բայց քրիստոնեաները աս պատճառ  
ներէն զատ ուրիշ պատճառներ ալ ունին  
շարունակ արտմելու եւ ուրախանալու: Կը-

տրտմին որ տակաւին սրտերնուն մէջ այն-  
 չափ մեղք կը դժնեն . կը տրտմին որ շատ  
 անդամ կը զգան թէ կը նեղացունեն անի-  
 կայ որն որ սրտով կը սիրեն . կը տրտմին որ  
 իրենց Փրկիքը աւելի շատ չեն փառաւորեր:  
 Կը տրտմին նաեւ որ աշխարհք շատ եւե-  
 լօք Աստուած՝ պատուեր եւ չ'սիրեր . Աստ-  
 ուած կը սիրեն անոր համար իր օրէնքին ոտ-  
 քի տակ առնուիլը եւ իր սուրբ անունին ան-  
 պատիւ ըլլալը տեսնալով կը ցաւին : Կը-  
 տրտմին եւս տեսնելով որ իրենց ընկերնե-  
 րէն եւ կարելի է իրենց ամենէն մօտ բարե-  
 կամներէն շատերը մահուան տանող ճամ-  
 բայէն կ'երթան . գիտեն որ Քրիստոսի չը-  
 հաւտացողները ինչ սոսկալի դատապար-  
 տութեան տակ պիտի իյնան , եւ իրենց ան-  
 զեղջ ընկերներուն վրայ կուլան ու կ'ողբան:  
 « Եաեւ տրտմութեան ան ընդհանուր պատ-  
 ճառներն ալ ունին , որոնք առ հասարակ ա-  
 մեն մարդոց վրայ քիչ շատ կը դտնուին ,  
 որոնք են հիւանդութիւններ բարեկամնե-  
 րու կորուստ եւայլն . բայց բոլոր աս տըրտ-  
 մութեան պատճառներուն հետ շարունակ  
 ուրախանալու պատճառներ ալ ունին :  
 Կ'ուրախանան որ ասանկ բարի եւ սուրբ  
 Աստուածոյ մը իշխանութեանը տակն են եւ

անոր ձեռքն են : Ա'ուրախանան աւետարանին մէջ յայտնուած փրկութեան ան սքանչելի եղանակին վրայ, որ անով ամեն մեղաւոր թէ որ ուզէ կը փրկուի : Ա'ուրախանան Յիսուս Քրիստոսի սիրովը ողորմութիւնովը եւ հաւատարմութիւնովը : Ա'ուրախանան՝ վասն զի կը հաւտան թէ մեղքերնիններուածէ, եւ թէ Քրիստոսի հաւտալով արդարացած են : Եւ կ'ուրախանան մեռնելնուն ետքը ունենալու ան մեծ ժառանգութիւնը տեսնալով, որ իրենց համար պահուած է :

## 20

«Ե՞ որ ան բաներով պէտք էր Քրիստոսի չարչարուիլ եւ իր փառքը մտնալ : Պահանջութիւն : 26 :

«Քրիստոսի աշակերտները չ'հասկըցան անոր ինչքանի համար աշխարհք խրկուիլը, եւ անոր մահուանը վրայ կը տրտմէին երբոր Յիսուս դիմացնին ելաւ եւ մոքերնին բացաւ որ Առւրբ Գիրքերը հասկընան, եւ տեսնեն թէ պէտք էր իրեն աս բաները քաշել :

ինէ որ Աստուած առանց աս զոհին մեղա-  
սորներուն թողութիւն տար, արդարու-  
թեան կողմանէ պակաս պիտի երեւար,  
եւիր օրէնքին բոլոր զօրութիւնը պիտի կոր-  
սուէր բայց երբոր յառիտենական Որդին  
ինքզինքը մեղաւորներուն տեղը գնելով ա-  
նոնց տեղը օրէնքին անէծքը կրեց, անատե-  
նը Աստուած կրցաւ արդար ըլլալ եւ մի-  
անգամայն ապաշխարող մեղաւորները ար-  
դարացունել: Անատենը բոլոր տիեզերքը  
անսաւ որ Աստուած իր օրէնքը կը պահէ,  
եւ թէ ամեն մեղանչողները արդարութեան  
պահանջած անէծքին տակը պիտի կյնան,  
որովհետեւ իր Որդիին չխնայեց երբոր մե-  
ղաւորներուն տեղը կայնեցաւ, հապա անի-  
կայ անիծեց անոնց համար պատրաստուած  
բարկութեան գաւաճը խմելու: Եւաեւ ան-  
ատենը բոլոր տիեզերքը տեսաւ մեղքին ինչ  
չար բան ըլլալը, որովհետեւ անիկայ քա-  
ւելու համար մեծ զոհ մը պէտք եղաւ: Աս-  
գործին մէջ Աստուածոյ ողորմութիւնն ալ-  
շատ սրանչելի կերպով մը յայտնուեցաւ,  
որովհետեւ մեղաւորներուն վրայ ունեցած  
դութը այնչափ մեծ էր, որ անոնց փրկու-  
թեան ճամբայ մը բանալու համար իր սի-  
րելի Որդին մեռնելու տուաւ: Վրիստոսի

մահովը երեւցած Աստուծոյ հանգամանք-  
ները, ամեն միտք ունեցող արարածները  
սիրով վստահութիւնով եւ սուրբ երկիւ-  
ղով մը կը լեցունեն: Փրկութեան աս եղա-  
նակը բոլոր հաւտացողներուն սրտին մէջ  
մեղքի դէմ ատելութիւն մը եւ սրբութեան  
սէր մը կը գրգռու, ինչու որ ինտօր կրնան-  
մեղքի մէջ մնալ, որովհետեւ ան եղաւ ի-  
րենց Փրկչին չարչարանաց ու մահուան-  
պատճառը. ինտօր կրնան մննել ան բա-  
նին մէջ որ իրենք այնչափ սիրողը պիտի  
նեղացունէ:

## 21

Եւ ասկէց ետքը տեսայ՝ եւ աչա շատ-  
ժողովուրդներ որոնց համրանքը չ'կար, բու-  
լոր հեթանոսներէն ու բոլոր ազգերէն եւ  
բոլոր լեզուներէն ու բոլոր ժողովուրդնե-  
րէն, որոնք ամոռուին առջեւը ու գառնու-  
կին առջեւը կեցեր էին վրանին ձերմակ լա-  
թեր ձգած, եւ ձեռքերնին արմաւենիներ:  
Հայոց 1: 9:

Հիսուս Քրիստոս պարապ տեղը չ'մե-

ուաւ . մեծ պատարագ մը մատուց , ու անով  
երկինքը նոր ցնծութիւնով յաւիտեանս  
յաւիտենից պիտի լեցուի : Աշխարհիս սկիզ-  
բէն մինչեւ հիմա շարունակ հօն ան երկ-  
նային աշխարհքը սուրբեր գացին , անոր  
արժանաւորութիւնովը ընդունելութիւն  
դանելով . եւ վերջապէս մեծ բաղմութիւն  
մը՝ որ մարդ կարող չէ համրել , հօն ա-  
թոռին առջին պիտի ժողվուին , անոր չար-  
չարանքներովը փրկուած : Աս հոգիները  
որոնք յաւիտենական թշուառութեան տակ  
մնալու դատապարտուած էին , ինքը ծախու-  
առաւ լուաց ու սրբեց , եւ անոնց ամեն մէ-  
կը ինչ երանութիւն որ սուրբ եւ փառա-  
ւորեալ հոգիները կրնան վայլել , յաւի-  
տեանս պիտի վայլեն : Հյաւիտեան բարձ-  
րաձայն օրհնութիւն պիտի կարդան անոր  
որ իր արիւնովը իրենք փրկեց . երկինքի-  
բոլոր ընակիչներուն յաւիտեանս իրենց  
ինագաւորին սիրոյն եւ շնորհացը յիշա-  
տակարան մը պիտի ըլլան : Հրեշտակնե-  
րուն զօրքերը ցնծութեան եւ փառաբանու-  
թեան նոր պատճառ պիտի դանեն փըրկ-  
ուածներուն մեծ բաղմութիւնը տեսնալով ,  
ու երկնից զօրքերը նոր ուրախութիւննե-  
րով պիտի լեցուին : Այսոր Քրիստոս առ-

իրեն տրուած բաղմութեանը վրայ նայի իր  
րեւ իր մահուան պտուղը, եւ տեսնէ իր  
չարչարանքներէն առաջ եկած ան յաւի-  
տենական երջանկութիւնը, շատ պիտի ու-  
րախանայ:

## 22

Եղբայրներ՝ իմ սիրտիս փափաքը ու ա-  
զօնքը առ Աստուած անոնց փրկուելուն  
համար է: Հոգին. ձ. 1:

Պօղոս Խորայէլացի էր, եւ թէպէտ ա-  
մեն մարդու վրայ ալ սէր ունէր, բայց՝ ինչ-  
պէս որ ուրիշ տեղ մը կ'ըսէ, տակաւին շատ  
ժամանակներ ունէր իր մարմնոյ կողմանէ ու-  
նեցած եղբայրներուն եւ աղքականներուն  
վրայ: Ամեն քրիստոնեայ կը գտնէ որ իր  
սիրելիներուն վրայ ունեցած սէրը եւ անոնց  
ամենէն մեծ օգուտին համար ունեցած փա-  
փաքները Քրիստոսի վրայ ունեցած սիրո-  
վը կը զօրանան: Խրոր մարդ մը Աստու-  
ծոյ Հոգիովը ճշմարտապէս դարձի դայ, իր  
բարեկամներուն վրայ ուրիշ աչքով մը կը-  
նայի, անոնց վրայ կը նայի իրբեւ անմահ

էակներ, եւ թէ որ ինքը՝ Վրիստոսի կը հաւ-  
տայ անոնց հետ երկինքին մէջը յաւիտենա-  
կան միաւորութիւն մը ունենալ կը յուսայ:  
Ծայց թէ որ իր բարեկամները դարձի ե-  
կած չեն, տրտմութիւնով ու նեղութիւ-  
նով կը լեցուի: Աստուծոյ խօսքին կը հաւ-  
տայ, եւ կը դողայ տեսնելով ան դատա-  
պարտութիւնը՝ որ իր սիրելիներուն վրայ  
պիտի գայ, որոնք անզեղջ կեցեր են: Աս-  
տուծոյ խօսքէն կը սղրիլի թէ անոնք յաւի-  
տենական կործանումով պիտի պատժուին  
Տէրոջը երեսէն հեռանալով. թէ անոնք  
յաւիտենական տրտմութեան մէջ պիտի  
մնան, եւ իրենց բնակութիւնը կոբառած  
հոգիներուն հետ պիտի ըլլայ, ուր տեղի  
որդերը չեն մեռնիր ու կրակը չ'մարիր: Աիր-  
տը կը ցաւի ու չ'կրնար կայնիլ իր սիրելի-  
ներուն կործանմանը վրայ նայիլ. կը յոր-  
դորէ՝ կ'աղաչէ ու անոնք կեանքին ճամբան  
դնելու կ'աշխատի: Ամենէն եւել մեծ ջերմ-  
եռանդութիւնով կ'աղաչէ անոր, որուն  
արտօնութիւնները սիրտերը փոխելն է, որ  
անոնք ապաշխարութեան բերէ:

Եւ Սամուել ըստ Յեսսէին . Այդ չափ  
են զաւկըներդ : Ան ալ ըստ Ուրիշ մըն ալ  
կայ , որ ամենէն փոքրն է , եւ ահա անիկայ  
խաշները կ'արծէ : Ա. Խառն . Ժ. 11 :

Ա'երեւայ թէ Յեսսէիր ամենէն պըղ-  
տիկ տղան բանի տեղ չ'դրաւ . երբոր Սա-  
մուել զինքը եւ իր որդիքը զոհի կանչեց , որ  
անոնցմէ մէկը Խարայէլացիներուն վրայ թա-  
գաւոր օծէ , անոնք Դաւիթը թողուցին որ  
դաշտին մէջ ոչխարները արծէ : Եւ մին-  
չեւ անգամ Սամուել մեծ զաւկին հասա-  
կին եւ դէմքին նայելով հաւտաց թէ Աս-  
տուծոյ ընտրածը աս պիտի ըլլայ . բայց  
Տէրը մարդոց տեսածին պէս չ'տեսներ . իր  
եղբայրներէն անարգուած պատանիին վրայ  
նայեցաւ , եւ անիկայ իր ժողովուրդին վր-  
րայ թագաւոր ընտրեց : Ան խոնարհ հո-  
վիւին ան ժամանակէն վեր Աստուծմէ ու  
մարդոցմէ ընդունած պատիւին պէս պատիւ  
ընդունող քիչ կը դտնուի : Եւ մինչեւ աշ-  
խարհիս վերջը իր անունը պիտի սիրեն եւ  
պատուեն իբրեւ Աստուծոյ սրտին ուղա-  
ծին պէս մարդ մը : Կնքը Խարայէլի թա-

գաւորութիւնը իր վերջին աստիճան փառացը բարձրացուց, եւ իրեն համար էր որ իր սերունդները այնչափ ժամանակ թագաւորութիւննին չկորսնցուցին։ Խսրայէլի Ասղմոսերգուն հազարաւոր սրտերու լոյս եւ ցնծութիւն տուաւ իր աղօթքները եւ օրհնութիւնները տակաւին երկինքին տակը եղող ամեն լեզուի պիտի թարգմանուին, եւ ամեն ազգ անոնցմով պիտի օրհնուի։ Աստուած Խոնարհները կը սիրէ, եւ իր թագաւորութեանը մեծ մարդիկը ցածերէն ու անարգուածներէն կ'ընտրէ։ Ավ որ Տէրոջմէն պատիւ առնէ, անիկայ իրաւցունէ պատիւ պիտի գտննէ։ Իրենց անունները պիտի յիշուին չե թէ միայն աս աշխարհիս մեջ քանի մը տարի, հապա յաւիտեանս յաւիտենից Աստուծոյ թագաւորները եւ քահանաները պիտի ճանչցուին։

## 24

Քայց ձեղի կ'ըսեմ որ մտիկ կ'ընէք. Աիրեցէք ձեր թշնամիները, ձեղի ատողներուն բարի ըրէք։ Պատկ. օ. 27։

Եսուսի աս պատուիրանքը շատ օտար

Եկած պիտի ըլլայ անոնց ականջին, որոնք  
վրէժխնդրութիւն ընելը առաքինութիւն  
կը սէպէին, եւ միշտ թշնամիներնին կ'ատէ-  
ին : Իսայց Հիսուս անանկ բաներ սորվե-  
ցուց, որ բնաւ մարդ մը սորվեցուցած չէր :  
Իր պատուէրները երկրաւոր չէին, հապա  
երկնաւոր ու Աստուածային . եւ ասոնք  
ինքը գործքով կատարեց . ինչպէս որ խօս-  
քով ըստ անանկ ալ օրինակով սորվե-  
ցուց : Արդարեւ աշխարհիս վրայ անցուցած  
իր կեանքը բոլորովին սէր էր իր թշնամի-  
ներուն վրայ : Դեռ որ թշնամիներ էինք  
Քրիստոս մեզի համար մեռաւ, զի՞նքը ա-  
տողներուն համար աշխատեցաւ՝ չարչար-  
ուեցաւ ու իր արիւնը թափեց : Քրիստոսի  
աշակերտները շատ հոգ տանելու ևն աս  
պատուէրը պահելու, որուն օրինակն ալ  
ինքը անանկ ազդու եղանակով մը տուաւ:  
Հիսուսի հետ ըլլալնիս, իր Հոգին ցուցու-  
նելով պիտի իմանանք, իրաւունք չունինք  
ամենէն մեծ թշնամիներնուս դէմ մոքեր-  
նուս չար խորհուրդ մը անցունելու . երբոք  
մեզի վեաս կը հասցունեն, պարտինք ձեռք-  
իրնուս եկածին չափ անոնք օրհնել : Ուշուր  
մեզ հալածեն եւ նախատեն անոնց համար  
աղօթք ընելու ևնք, թէ որ սրտերնուս մէջ

վրէժինդրութեան զգացումներ ծաղին, առնոնք յաղթելու ենք խորհելով ՚Քրիստոսի մեղից ցուցուցած սիրոյն վրայ երբոր մենք դեռ թշնամիներ էինք : Ուէ որ առ հասարակ ՚Քրիստոսի աս պատուերը պահուեր, աշխարհիս մէջը եղած թշուառութիւններուն կէսը բնաջինջ կ'ըլլար, եւ ամենուն մէջը բնդհանուր սէր կը մտնէր : Անոր հնազանդողները սրտերնուն մէջ անանկի խաղաղութիւն կը դանեն, որ անհաշտելի բնաւորութիւն մը ունեցողները բնաւ անոր համը առած չեն :

## 25

Եւ ռոռութ ըսաւ . Ո՞հ աղաւներ ինձի ոք քեզ ձգեմ ու քեղմէ դատնամ, ինչու որ ուր որ երթաս՝ պիտի երթամ, եւ ուր որ մնաս՝ պիտի մնամ . քու ժողովուրդդ՝ իմ ժողովուրդս է . քու Աստուածդ՝ իմ Աստուածըս է : Առաւել . Ա . 16 .

Հռութ աս խօսքը ըսած ժամանակը իր երկրին եւ իր սիրելիներուն մէջն էր, եւ հաւանական է որ հարստութիւն ալ կը վայ-

Հեր. բայց միտքը դրաւ բոլոր ասոնք ձգել,  
 եւ իր կեսուրով հետ օտար երկիր մը եր-  
 թալ, եւ իրեն հետ օտարականներու մէջ  
 աղքատութիւն քաշել: Խր կեսուրը Աս-  
 տուծոյ ժողովուրդներէն մէկն էր եւ ինքը  
 Խարացէլացւոց երկիրը գնաց Աստուծոյ օրհ-  
 նեալ ժողովուրդին: Առուժ ձգեց իր հայ-  
 քերուն երկրպատած կուռքերը, եւ Եւհո-  
 վան՝ մի միայն կենդանի եւ ճշմարիտ Աստ-  
 ուածը, իրեն Աստուած ընտրեց: Աս ընտ-  
 քութիւնը իմաստութիւնով ըրաւ, մինչեւ  
 անդամ աս կեանքիս մէջն ալ իր վարձքը  
 ընդունեց, իր ձգածէն եւել հարստութիւն  
 եւ պատիւ դտաւ, շատ թագաւորներու մայր  
 եղաւ, եւ Վեսիան ալ իրմէն եկաւ: Աս-  
 տուծոյ ժողովուրդը մեզի բաժին ընտրելը,  
 ամեն ատեն խելացութիւն է: Աս ընտրու-  
 թիւնը թէ որ աշխարհիս մէջ նեղութեան  
 եւ աղքատութեան պատճառ ալ ըլլայ, դա-  
 լու աշխարհքին մէջ յաւիտենական հա-  
 րստութիւններ եւ երջանկութիւններ կ'ըն-  
 ծայէ, մինչեւ անդամ աս կեանքիս մէջը  
 Աստուծոյ սէրը բոլոր երկրաւոր հարստու-  
 թիւններէն եւել փնտուելու է: Անիկայ ա-  
 նանկ խաղաղութիւն մը կ'ընծայէ մեզի, որ  
 ամեն մոքէ վեր է, եւ անանկ յոյս մը, որ

ամեն պարագաներու մէջ հոգիին զէնք մընէ:

26

Չարին խորհուրդները պիղծ են Տ' ըստ  
առջեւը: Աստվածութեամբ 26:

Վարդիկ երբեմն ինք յինքնին կը խարեն  
աս խորհուրդովո, որ եթէ իրենց արտաքին  
գործքերը մեղադրանքի արժանի չեն, թէ  
որ իրենց գեղի ընկերներնուն ունեցած  
պարտաւորութիւննին հաւատարմութեամբ  
կը կատարեն, Աստուծոյ առջեւը յանցաւ  
որ չեն, եւ թէ երկինքը տանող ճամշ  
բուն մլչն են: Խայց Աստուծոյ մարդուս  
բնութիւնը արտաքին գործքերէն չ' դատեր,  
մարդոցմէ մեծ յարդութիւն ընդունողնե  
րէն շատերը Աստուծոյ առջեւը սրդութիւն  
են: Ենիկոյ սրտին խորհուրդներուն ու եւ  
սեւակայութիւններուն կը նսյի եւ Այուրբ  
Հոգիէն չ' նորոգուած ամեն սրտի մէջ մի  
սյն չարութիւն կը տեսնէ: Առն շատ խորհ  
հուրդներ կը տեսնէ իր անձը փառաւորե  
լու համար, ու չէ թէ Աստուծուած, աշխար  
հային հարստութիւն գտնելու համար, ու

չե թէ հաւատքի մէջ հարստանալու։ Ետա  
խորհուրդներ կը տեսնէ աշխարհիս մէջ  
մարդուս գլխուն դալու թշուառութիւննեւ  
րուն վրայ, ու չե թէ մեղքին չարութեանը  
կամ անիկայ ինչպէս յաղթելու վրայ։ շատ  
խորհուրդներ կը տեսնէ աշխարհային հա-  
ճութիւններ գտնելու համար, ու չե թէ  
Աստուծոյ հաճոյ ըլլալու, կամ անոր շբ-  
նորհքովո երջանկանալու համար։ “Եաւ  
շատ անգամ կը տեսնէ որ սրտին խորհուրդ-  
ները շրթունքներէն ելած խօսքերուն հա-  
կառակ են, նոյն ժամուն որ պոկունքները  
բարերարութիւն եւ սէր կը խոստովանին,  
սիրտը անձնասիրութիւնով եւ գուցէ ատե-  
լութիւնով լեցուն կը գտնէ, նոյն ժամուն  
որ շրթունքները աղօթքով Աստուծոյ կը-  
մօտենան, կը տեսնէ որ խորհուրդները աշ-  
խարհային եւ մեղանչական բաներու վրայ  
կը պտըտին։ Արդարեւ չարին խորհուրդնե-  
րը Աստուծոյ անարատ եւ սուրբ աչքերուն  
առջեւը պղծութիւն են։”

իմ սիրտս . իս քննէ ու գիտցիր իմ խորհուրդներս : Այս Ռ' թ. 23 :

Խնքղինքնիս գիտնալը մեծ բանէ . եւ առկեանքիս մեջ քիչերը սրտերնին կատարելապէս կը գիտնան : Ա՞էկ մարդ մը իր բնաւորութիւնը որչափ աղէկ որ ճանչնայ , ու Վատուծոյ օրէնքը սորվի , ու սուրբ ըլլալու աշխատի , այնչափ առաւել կ'իմանայ իր սրտին ամեն բանէ եւել խարեւութիւնով ու չարութիւնով լեցուն եւ չարը բարիի տեղառնելու ալպատրաստ ըլլալը : Խնքը իրեն վրայ անանկ մեղքեր կը տեսնէ որ անհոգ մարդ մը անոնք ամենեւին բանի տեղ չ'գներ . կըզգայ որ իր սիրտը շատ անգամ խարեց զինքը , եւ թէ ան նոյն ատենը որ ինքզինքը մաքուր եւ սուրբ պատճառներէ շարժուած կըկարծէր , անձնասիրութիւնը ու մեղքը իրեն մեծ ազդուութիւն ըրեր են : Իր սրտին վրայ վստահութիւն գնելէն կը վախնայ , ուսաի Վատուծոյ կ'աղաղակէ ըսելով , “Փորձէ իս ով Վատուած , ու գիտցիր իմ սիրտս . իս քննէ , ու գիտցիր իմ խորհուրդներս” : Եւ Վատուած չէ թէ միայն կրնայ յայտնել մեզի սրտերնուս մէջի եղածները , հապա կրնայ՝ ու թէ որ իրմէն խնդրենք ,

կը կամի սրտերնիս նորէն ստեղծել։ Առարող է անիկայ մաքրել, եւ մեղ անոր խարէ ութիւններէն փրկել։ Քրիստոսով կը ընանիք բոլոր հոգեւոր կարօտութիւններնիս Աստուծոյ առջին բերել։ կրնանք մեր սրբատին վատթարութիւնը եւ խարեբայութիւնը անոր ցուցունել, եւ մշղի պէտք եղածին չափ շնորհք խնդրել։ Եւ գիտենք որ եթէ Քրիստոսի անունովը իրեն երթանք, ձայներնուր մտիկ կ'ընէ։

## 28

Տէրը չէ թէ շատուոր ըլլախնուդ համար ձեզի հաճեցաւ ու ձեզ ընտրեց. ինչու որ ամեն ժողովուրդներէն քիչուոր էք։ Ա (Օ) վ'ն, Է, 7։

Պատուած իր ըրածներուն համար մարդոց հաշիւ չ'տար, եւ չենք կրնար ըսել թէ ինչու համար այս ինչ կամ այն ինչ բանը ասանկ կամ անսանկ կ'ընես։ Խնդր իր ըրածներուն պատճառները չուղեր մեղի զրուցել, սակայն երբեմն իր ճամբաններուն իմաստութիւնը կրնանք տեսնել։ Ու թէ որ

կարող ըլլայինք իր բոլոր տեսածները տես-  
նել, անշուշտ իր իմաստութեան խոր-  
ունկութեանը վրայ աւելի պիտի զարմա-  
նայինք: Երբոր բոլոր մարդկային ցեղը մեղաց  
մէջ ընկղմած էր, Աստուած իր բարի հա-  
ճութիւնովք մէկ ժողովուրդ մը ընտրեց որ  
իրեն սեպհական ժողովուրդը ըլլայ: Ինք-  
զինքը մասնաւոր կերպով մը անոնց յայտ-  
նեց իր օրէնքը տալով, իրենց համար հը-  
րաշքներ գործելով, աշխարհիս միւս ժո-  
ղովուրդներէն մասնաւոր ծէսերով եւ օ-  
րէնքներով անոնք զատելով, եւ խոստա-  
նալով որ Վեսիան իրենց մէ պիտի դայ, որ  
բոլոր աղքերը պիտի օրհնէ: Աս բաներուն  
համար ինչ պատճառով մէկ աղք մը ընտ-  
րելը Աստուած մեղի չ'զրուցեց: բաւական  
է մեղի զիտնալ թէ ինքը աղէկ սեպեց ա-  
սանկ ընելը: Ի՞այց աս աղքը մարդոց ընտ-  
րելու եղանակուը չընտրեց: մեծ ու հզօր  
աղք մը չընտրեց, հապա ամեն ժողովուրդ-  
ներէն քիչուրը: Ասանկ զանազան ճամ-  
բաներով Աստուած իր զիտաւորութիւնը  
կըցուցունէ, մարդոց ամբարտաւանութիւ-  
նը անարգելու եւ անոնք յորդորելու, որ  
իրեն տան՝ որուն ալ որ կը վայլէ, ամեն  
փառք եւ պատիւ:

Եւ դուն խօսիս քու Տէր Աստուծոյդ  
առջեւը ու ըսես. Երբոր իմ հայրս թափա-  
ռական Ասորի մըն էր, Եղիպտոս իջաւ, եւ  
պանդխտեցաւ հոն քիչ մարդիկներով, եւ  
հոն մեծ հզօր եւ բազմամարդ ազգ մը ե-  
զաւ: Ը (Օրին. Ի. 5:

Երբոր Խսրայէլի որդիքը Տէրոջը իրենց  
տալու խոստացած երկիրը եկան, ու իրենց  
բոլոր թշնամիները յաղթուեցան, եւ իրենք  
հանդարտութիւնով ու ազատութիւնով  
տեղաւորուեցան, անատենը հրամայուեցաւ  
իրենց որ գոհութեան ընծաներով Աստու-  
ծոյ առջին գան, եւ իրենց ազգին ինչ տկար-  
ութիւնով ծագիլը, ու Աստուծոյ իրենց ըրած  
բոլոր մեծ բարութիւնները անոր առջեւը  
խոստովանին: Ասիկայ անոր համար էր որ  
հպարտութեան զգացումներուն մէջ իյնա-  
լէն զգուշանան, եւ կամ չ' խորհին թէ ի-  
րենց զօրութիւնովը կամ իմաստութիւնովը  
ասանկ մեծ ազգ մը եղան, հապա Աստու-  
ծոյ անուանը վայլած երախտագիտութիւ-  
նը եւ պատիւը մատուցանեն: Անրդիկ միշտ  
ինքինքնին բարձրացունելու յօժար են, եւ

կը կարծեն թէ իբենք իմաստութեան եւ զօ-  
րութեան տէր են, եւ թէ իրենց կարողու-  
թիւնովը մեծ բաներ կրնան ընել: Ապար-  
տութիւնը գուցէ ամեն մեղքերէն ընդհա-  
նուրն է, եւ Աստուած կ'ըսէ թէ անիկայ ի-  
րեն շատ ատելի է: Աստուած իր ժողովուր-  
դը միշտ խոնարհութեան մէջ պահելու կ'աշ-  
խատի. իր տուած կրթութիւնները յատ-  
կապէս անոնց հպարտութիւնը կործանելու  
համար են: Երբոր իրենց վայլած առատ  
օր հնութիւններովը փառաւրրուին, եւ սր-  
տերնին բարձրանայ, անոնցմէ մէկ քանին  
ձեռքերնուն կ'առնէ, որ իմանան թէ ընդու-  
նածներնուն զատ ուրիշ բան չունին: Ծակ  
որ սկսին խորհիլ թէ սրբութեան մէջ մեծ  
յառաջադիմութիւն կ'ընեն, եւ Աստուծոյ  
շնորհքէն որչափ կախում ունենալին մոռ-  
նան, ինքզինքը անոնցմէ ետ կըքաշէ որ եր-  
թան իրենց իյնալովը խոնարհութիւն սոր-  
վին:

Աստուծոյ թէ իր շնորհացը նախախնամութեանը եւ թէ իր շնորհացը մատակարարութիւնովը ըրած գործքերէն մէկը թէ որ մեզի գաղտնի երեւոյ, հոս մեր խնդիրներուն ըստ բաւականին մէկ պատասխան մը կայ, “Այս՝ ով չայր, ինչու որ քու առջիդ ասանկ հաճելի եղաւ”։ Աստուծոյ խոնարհ որդին՝ ալ ասկէց եւելը չ'փնտուեր, գիտէ թէ իր հայրը իմաստուն եւ բարի է, եւ ամենէն աղէկը անոր ուղածն է։ Հիմուսն Քը բիստոս աս խօսքը զբուցեց տեսնալով որ Աստուծ իր ինքնիշխան շնորհքովը աւետարանին ճշմարտութիւնները մանկանց կը յայտնէ եւ անոնք իմաստուններէն եւ գիտուններէն կը ծածկէ։ Չենք կրնար տեսնել թէ ինչ պատճառաւ Աստուծ իր ինքնիշխան ողորմութիւնովը մարդոցմէ ոմանք յաւիտենական կենաց կ'ընտրէ, եւ ոմանք կը թողու որ իրենց բռնած ճամբանին երթան մինչեւ որ յաւիտենական մահը գայ վրանին հասնի։ Չենք գիտեր թէ ինչու համար մէկ ընտանիքէ մը այս ինչ անձը կը կանչէ եւ ոչ թէ միւսը։ չենք կրնար իմանալ թէ ինչու համար տկարները յիմարները եւ անարդուածները կը կանչէ, ու չէ թէ հզօրները ու աղնուականներ

րը։ Ի՞այց Աստուծոյ ասանկը հաճելի երեւ-  
ցաւ, եւ օրհնեալ է իթ անունը. ան իր ուզա-  
ծը կ'ընէ, բոլոր գաղտնիքներուն ամենէն մե-  
ծը ինձի պէս մեղաւորը ընտրելն է, իր սուրբ  
հոգիովը նորոգելու եւ երկնից ժառանդ ը-  
նելու։ Ի՞այց ասանկ հաճելի երեւցաւ իր  
առջին եւ իրեն կըվայլէ բոլոր փառքը։ Աստ-  
ուծոյ մարդկային աղքին ըրած բոլոր նախա-  
խնամութիւններուն չենք կրնարխելք հաս-  
ցունել. չենք գիտեր թէ ինչու համար կը-  
թողու որ շարերը շատ ասլրին աշխարհիս  
մէջ. չենք գիտեր թէ ինչու համար կ'առնէ  
կը տանի այս ինչ շատ օգտակար մարդը եւ  
կը ձգէ ոյս ինչ բոլորովին անօգուտ մարդը.  
չենք գիտեր թէ ինչու համար մէկը կը-  
բարձրացունէ ու միւսը կը ցածցունէ։ “Ա, յո՞  
ով հայր. ինչու որ քու առջիդ ասանկ հա-  
ճելի եղաւ”։

---

## ՅՈՒՆԻՍ

1

Որ ան յոյսը ունենանք իբրեւ մէկ հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ ան վարագուրին ներսի կողմը կը մտնայ: Եբք. 9. 19:

ԵՐՐԱՌՐ նաւ մը աղէկ տեղ մը հաստատ խարիսխ նետած է, անտեն թէ որ հովեր ու մրրիկներ ելլան վեաս չունի, ունաւը եղողները ապահով կ'ըլլան. եւ հովերը որչափ որ կատղին այնչափ կը դովեն իրենք ապահով բռնող խարիսխը: Իր յոյսը Քըրիստոսով Աստուծոյ խոստմունքներուն վրայ հաստատող քրիստոնեայն ալ ասոր նման է. ինչ մրրիկներ որ ելլան, նեղութեան ալիքները որչափ որ բարձրանան, իր սիրտը խաղաղութեան մէջ է, քանզի Աստուծած իր հետն է: Կիտէ թէ ամեն բան իր օգտին համար կ'ըլլայ, ինչու որ Աստուծ

անանկ ըստւ . դիտէ թէ քիչ ատենէն պիտի հանդստանայ երկինքին մէջ , եւինչու համար հիմակուան նեղութիւններէն պիտի խռովի այնչափ , թէ եւ անոնք շատ մեծ ալ ըլլան : Ծռէ որ փորձութիւններ դան զլխուն , իր մեղքերուն յիշատակութիւնը զինքը պաշարէ , իր հակառակորդը՝ Ատանան իրեն գէմ ելլէ , եւ իր յոյսը Աստուծոյ ողորմութենէն մէկդիքաշելու ջանքը ընէ , տակաւին անիկայ պիտի չիյնայ : Իր ապաւինութիւնը յաւիտենական Ճայռին վրայ հաստատած է . իր վստահութիւնը Տէր Յիսուսուսի Քրիստոսի վրայ դրած է , եւ Աստուծոյ ըրած երդումն ու խոստմունքները իր փըրկութիւնը կը հաստատեն : Ո՞րչափ երանելի են անոնք միայն՝ որ աս քրիստոնէական յոյսը ունին :

## 2

Ա ասն զիմենք աս երեւցած բաներուն չենք նայիր , հապա չերեւցածներուն . ինչու որ աս երեւցած բաները ժամանակաւոր են , ու չերեւցածները յաւիտենական : Եւ Կոբնէ .  
Դ . 18:

Քրիստոնէիննայելուբաները ասերեւ  
 ցանները չեն. իր շատ սիրած բաները բու-  
 լորտիքը եղող տեսնուելու առարկայները  
 չեն: Արդարեւ աս բաներէն շատերը հա-  
 ճելի եւ սիրելի են իրեն, բայց սակայն ա-  
 մենէն հաճելիները եւ ամենէն սիրելիները  
 անոնք չեն: Քրիստոնեայն մեծ եւ պատ-  
 ուական գիտաւորութեան մը համար կ'ապ-  
 րի: Ինչողէս որ իր անմահ հոգիին փափաք-  
 ները անհուն են, անանկ ալ իր գլխաւոր  
 օգուտները անհուն են: Բայց իր բոլորտիքը  
 եղող տեսնուած բաները ժամանակաւոր են.  
 անոնք իրեն որչափ պատուական ալ որ եւ-  
 րեւան, քիչ մը ատեն պիտի մնան. կամ  
 անոնց ամենը շուտով պիտի անցնին եր-  
 թան, կամ ինքը անոնցմէ պիտի զատուի:  
 Բայց ան աներեւոյթ բաները, որոնց վրայ  
 է գլխաւորապէս իր սէրը եւ յոյսերը, յա-  
 ւիտենական են, անոնք ոչ պիտի փոխուին  
 ոչ ալ պիտի կորսուին. որչափ որ մեծ սէր  
 տայ անոնց, զինքը իր յոյսերէն բնաւ դա-  
 տարկ պիտի չ'հանեն: Վ, մեն ատեն աս ա-  
 ներեւոյթ եւ յաւիտենական բաներունա-  
 յելու ենք, խելքերնիս մաքերնիս մեր երկ-  
 նաւոր ժառանգութեանը տալու ենք, յա-  
 ւիտենականութիւնը միշտ աչքերնուս առ-

ջին ըլլալու . մեր հաւատոյ աչքը շարունակ  
մեր աներեւոյթ Աստուծոյ եւ Փրկչին վը-  
րայ հաստատուելու է : Ասանկով կը կարո-  
ղանանք երկնային կեանք մը վարելու աշ-  
խարհիս մէջ , ասանկով սրտերնիս աս աշ-  
խարհիս տալէն կ'աղատինք : “ աւատքով  
կ'երթանք մենք ու չէ թէ կարծիքով ” : Ը-  
կաբնեւ . 1 : 7 :

## 3

Եւ Սամուել ըսաւ , Միթէ Տէրոջը այն-  
շափ հաճելի՞ են ողջակէզներն ու զոհերը ,  
որչափ որ Տէրոջը ձայնին ականջ կախելը :  
Ահա հնաղանդութիւնը ողջակէզէն աղէկ  
է , ու Աստուծոյ մաիկ ընելը խոյերուն ճար-  
պէն : Ա թագ . Ճ. 22 :

Տէրը հրաման ըրաւ Սաւուղին որ Ամա-  
ղեկացիները բնաջինջ ընէ , եւ մարդ կամ  
անասուն ողջ չ'թողու : Սաւուղ ըստ մասին  
հնաղանդեցաւ , բայց Աստուծոյ հրամանին  
դէմ խաշներուն եւ հօտերուն ընտիրները  
պահեց , եւ Աղադ թագաւորը ողջ թողուց  
Երբոր Սամուել կանչեց զինքը իր անհր-

Նաղանդութեանը համար հաշիւ տալու, ջանաց ինքզինքը արդարացունել ըսելով, թէ չ' արջառները Տէրոջը ողջակէղ ընելու համար պահեցի: Աստուած դոհը ինքնէր դրեր, ու թէ որ հաւատքով ու սիրով մատուցանէին իր առջին ընդունելի էր. բայց անիկայ հնաղանդութեան տեղը զոհ չէր ընդուներ, աս մեղքով Աաւուղին անօրէնութիւններուն չափը լեցուեցաւ, եւ Աստուած ալ զինքը յաւիտեան երեսէ ձրգեց: Երբոր Աստուած մեղի հրաման մը կ'ընէ, ուրիշ բան պէտք չէ ընել, հապատեղնիտեղօքը անիկայ կատարել, բնաւչենք կընար մէկ պարտաւորութիւն մը կատարելով ուրիշ պարտաւորութեան մը զանցառութիւնը քաւել: Աարդիկ երբեմն կըկարծեն թէ շատ ողորմութիւն տալով, կամ մէկ մեծ բարեպաշտութեան դործ մը կատարելով, Աստուածոյ պատուիրանքներուն դէմ ըրած սովորական անհնաղանդութիւններնուն փոխարէն մը ըրած կ'ըլլան, բայց Տէրոջը այնչափ հաճելի չեն ողջակէղները ու զոհերը, որչափ որ Տէրոջը ձայնին ականջ կախելը: Եւ ան նոյն ողորմութիւնները կամ երկրպագութիւնները, որոնք անկեղծ եւ խոնարհ սրակ մը յառաջ կու-

գան հաճելի են, բայց պղծութիւն կուգայ  
իրեն, երբոր կը տեսնէ թէ իրեն հակառակ  
եւ իր օրէնքը չ'պահող սրտէ մը յառաջ  
կուգան :

## 4

Հաւատքով Արրահամ իր փորձուելու<sup>1</sup>  
ատենը Խսահակը պատարագ մատուց . Եւ  
ան որ խոստմունքը առեր էր իր մէկ հատիկ  
զաւակը կը մատուցանէր : ԵՅՅ . Ժ. 17 :

Արրահամ հաւատացեալներուն հայրը  
կը կոչուի . անիկայ իր հաւատքին զօրութիւ-  
նը շատ անդամ ցուցուց, եւ ինքը Աստուած-  
աշունչին մէջ իբրեւ բոլոր հաւատացեալնե-  
րուն օրինակ ցուցուած է : Երբոր Աստուած  
իր հաւատքը փորձեց ամենէն խիստ փորձով  
չ'տկարացաւ . Աստուած խոստացաւ որ իր  
սիրելի զաւկին Խսահակին սերունդը մեծ ազգ  
մը պիտի ըլլայ ծովին եղերքի աւաղին պէս  
շատ . եւ թէ իրմով աշխարհիս բոլոր ազգերը  
պիտի օրհնուին : Արրահամ հաւատաց աս  
խոստմունքներուն, եւ երբոր Աստուած զին-  
քը կանչեց որ իր մէկ հատիկ որդին ողջա-  
կէղ ընէ, անատենն ալ տակաւին անոնց

հաւտաց, գիտեր որ Աստուած կարող էր  
անիկայ մեռելներէն յարուցանել, եւ թէ  
մէկ կերպով մը պիտի կատարէ բոլոր իր  
խոստացածները: Հատ դժուար էր հօր մը  
աս պատուերին հնազանդիլ, ու իր մէկ հատիկ  
եւ սիրական որդին իր ձեռքովը սպաննել,  
եւ անիկայ ողջակէղ ընել: Բայց Արրա-  
համ կը հաւտար որ Աստուծոյ բոլոր պատ-  
ուիրանքները իմաստուն եւ բարի են, ին-  
քը անոր ապաւինեցաւ եւ անմիջապէս պատ-  
րաստութիւն տեսաւ իր հնազանդութիւնը  
ցուցունելու: Ո՞նք ալ Արրահամին պէս  
հաւատք ունենալու ենք, Աստուծոյ բոլոր  
ըսածներուն հաւտալու ենք թէ եւ մարդոց  
աչքին շատ օտար բան երեւայ անիկայ կա-  
տարելը: Առանց երկմտութեան իրեն ա-  
պաւինելու ենք, թէ եւ կարող չենք բոլոր  
իր ճամբաներուն խելք հասցունելու, ա-  
նանկ վստահութիւն մը ունենալու ենք իր  
վրայ, որ ուրախութեամբ հնազանդինք բո-  
լոր իր պատուիրանքներուն, եւ աս ընելով  
նիս ինչ որ պիտի հետեւի իրեն ձգելու ենք:  
Առ եւ յաւիտենականութեան մէջ ինք-  
զինքնիս եւ մեր ամեն սիրած բաները ի-  
րեն յանձնելու ենք, հաւտալով որ կարող  
է պահել եւ պիտի պահէ անոնք:

Հաւատքով Յախարը պոռնիկը անհաւասներուն հետ չկորսուեցաւ. որ ինքը ան լրտեսները խաղաղութեամբ ընդունել էր : Եբա. ձ. 1. 31 :

Հաւատքը ինչպէս փրկեց Յախարը. Խսրայելի Եստուծոյն վրայ ունեցած հաւատքը զինքը անոր ժողովուրդին հետ մէկ ըլլալու առաջնօրդեց. Հաւատաց որ անոր թշշնամիները պիտի կորսուին, եւ միաքը գրաւ անոնցմէ բաժնուիլ : Լրտեսներուն խոստմունքներուն հաւատաց, եւ դրաւ ան նշանը, որով իրենց բոլորտիքը եղողներուն ամենքըն ալ կործանելու ժամանակը ինքը եւ իր հօրը տունը պիտի աղաաէր : Եստուած ըստ մեզի որ մէկ ահարկու կործանում մը կայ իր թշնամիներուն, բայց ամեն զինքը սիրով ներըուիրեն հնաղանդողները ան կործանումէն ապահով պիտի ըլլան : Եթէ կը հաւատանք ասոր, շատ պիտի փափաքինք իր թշնամիներէն փախչելու, եւ Եստուծոյ բարեկամներուն մէջ իյնալու : Ծստ ալ մեզի, թէ ինտր կը ընանք խալսիլ գալու բարկութենէն. զըրուցեց մեզի, թէ իր Որդին Յիսուս Ք. ը-

րիստոս մեր տեղը չարչարուեցաւ, թէ իր  
արիւնովը եւ իր արդարութիւնովը պիտի  
արդարացունէ ու փրկէ բոլոր ապաշխա-  
րովները ու իրեն գացող եւ փրկութիւն  
խնդրողները։ Եթէ Աստուծոյ իր Արդիին  
վրայով մեզի ըսած խօսքերուն կը հաւ-  
տանք՝ պիտի ապաշխարենք մեղքերնիս, եւ  
Քրիստոսի պիտի երժանք փրկութիւն  
խնդրենք, եւ ինքզինքնիս իրեն պիտի յանձ-  
նենք եւ իրեն պիտի ապաւինինք, ու յա-  
ւիտենականութեան յոյսերը պիտի վայ-  
լենք, որուն պիտի արժանի ըլլանք միայն  
իր արժանաւորութիւնովը։ Եթէ կը հաւ-  
տանք Աստուծոյ իր սիրոյն վրայ ըսածնե-  
րուն, պիտի սիրենք զինքը ու պիտի աշխա-  
տինք իրեն հաճոյ ըլլալու եւ պիտի պատ-  
ուենք զինքը բոլոր իր կամքը կատարելով։  
այսպէս հաւատքը մեզ պիտի փրկէ, ինչ-  
պէս որ Քախար պոռնիկը փրկեց։

Արդս երբոր սկիզբէն մեղանչեց, հուզեւորապէս մեռաւ, անիկայ “մեռաւ մեղքի եւ յանցանքի մէջ”: Երբոր մարդիկ Սուրբ Հոգիին ազդեցութիւններովը նորէն կ'ըստեղծուին, կրկին անգամ հոգեւոր կեանք կ'առնեն, ասներսիդինին եղած կեանքը կենդանի կը մնայ եւ Քրիստոսի վրայ ունեցած հաւատքովնին կը զօրանայ: Խրենց հաւատքը որչափ որ զօրաւոր ըլլայ, այնչափ արագութիւնով կ'աճին եւ Քրիստոս Յիսուսով կատարելութեան կը հասնին: Նեժանուսները երբեմն կ'աշխատին մարմնաւոր տանջանքներով կամ նեղութիւններքաշելով սրբութիւն դժնել, բայց քրիստոնեան անանկ չ'ըներ. իր յոյսը մարմնաւոր ապաշխարանքներու կամ իրեն ըրած ջանքերուն վրայ չ'դներ, հապա Քրիստոսի կը նայի: Գիտէ որ անոր քովը առատ շնորհք կայ իր կարօտութիւնները լեցունելու համար, եւ կը հաւատայ ան խոստմունքին, թէ քովոր իրեն դացողներուն պակսութիւնը պիտի լեցունէ, եւ իրեն ապաւինելով իրմէն առատապէս շնորհք կ'ընդունի: Խնքը տկարէ, բայց Քրիստոս իր զօրութիւննէ: Երբոր փորձութեան մէջ կ'իյնայ, Քրիստոս զինքը կը բռնէ, թէ որ մեղաց մէջ

լյնայ Քրիստոսի արխանին կը նոցի որ քառէ իր մեղքը, եւ իրեն խաղաղութիւն տայ:

Հարունակ Քրիստոսի հետ հաղորդակցութիւն ընելով, օրէ օր առաւել կերպարանակցութիւն մը կ'ունենայ անոր պատկերին:

Առ հոգեւոր կեանքը որ աշխարհից մէջ հաւատքով կ'ապրի, յաւիտենական պիտի ըլլայ երկինքին մէջ որ բոլոր հաւատացեալները պիտի ժառանգեն:

Աւատացեալը աշխարհիս մէջը եղած առենքը աս յաւիտենական կենացը կըսպասէ ցնծութիւնով չէ թէ իրրեւ իր բարի զործքերուն մէկ հատուցում մը, այլ իրրեւ Յիսուս Քրիստոսի իր արիւնովը ծախու առած շնորհքը, որն որ ձրի կը պարգեւէ բոլոր իրեն ապահովողներուն:

Անձի գէմ բարկանալդ եւ ամրաբտաւանութիւններդ ականջս հասաւ: Ուստի քիթիդ կարթ եւ բերնիդ սանձ պիտի զարնեմ, եւ եկած ճամբէդ քեզ ետ պիտի դարձունեմ: Դ իւստի յ.թ. 28:

Անեքարիմ Վասրեստանի թագաւորը  
այնչափ յաջողութիւն դտաւ իր պատեքազմ-  
երուն մէջ որ ինքզինքը անյաղթելի սեպեց,  
եւ Հուգային լրան եկաւ ան ալ դիւրու-  
թեամբ իր յաղթանակներէն մէկը ընելու:  
Բայց հոս իր ընթացքին անանկ արդելք մը  
դտաւ որ առաջ երբեք պատահած չ'ունէք:  
Եզեկիան աղօթող թագաւոր մըն էր. եւ  
թէպէտ Անեքարիմէն շտա տկար էր,  
բայց իր աղօթքներովը Տէրը իր կողմէն ե-  
ղաւ, որ անիկայ Վանակարող է: Կաեւ  
Անեքարիմը ամրարտաւանութիւնով խօ-  
սեցաւ Խորայէլի Վատուծոյն դէմ, ուստի  
սորվեցաւ թէ անանկ մէկուն հետ կը պա-  
տեքազմի, որ ամենէն հզօրներէն հզօր էր:  
Վատուծ ըստ իրեն թէ զինքը դործածեց,  
իրեն յաղթած աղքերը յանդիմանելու հա-  
մար, բայց հիմա իր եկած ճամբէն զինքը ետ  
պիտի դարձունէ: Վասրեստանի թագաւորը  
տեսաւ որ երկինքի Վատուծոյն դէմ պատե-  
քազմող գանուիլը ահարկու բան էր: Չար  
մարդիկ իրենց հպարտութեան եւ փառա-  
սիրութեան դործքերը կատարելով շատ ան-  
գամ Վատուծոյ դիտաւորութիւնները տե-  
ղը կը տանին, թէպէտ իրենց մաքերնուն  
չ'անցնիր, բայց տակաւին Վատուծոյ իշխա-

նութեանը տակն են . Եւ երբոր ան կէտին  
կը հասնին որ ալ անկէց անդին թոյլտուու-  
թիւն ընելը աղէկ չ'սեպեր , անոնք իրենց  
եկած ճամբէն ետ կը դարձունէ : Բայց մէ-  
կը կարող չէ Աստուծոյ ժողովուրդին գէմ  
պատերազմիլ , եւ յաջողութիւն գտնել .  
Աստուած միշտ իր ժողովուրդին աղաղակ-  
ները կը լսէ եւ անոնք բոլոր իր թշնամինե-  
րէն կ'ազատէ :

## 8

Խրաւցունէ մարդուն բարկութիւնը քեզ  
պիտի գովէ , ու մնացած բարկութիւնը գուն  
պիտի պատես : Առաջ . Հ. 10 :

Աստուած երկինքը կը բազմի , եւ երկրիս  
բնակիչներուն մէջը կը շրջի . թէպէտ չար  
մարդիկ իր իշխանութիւնը չեն ճանչնար ,  
բայց սակայն անոր իշխանութեանը տակն  
են : Կրնան կատղիլ իրեն եւ իր ժողովուրդին  
գէմ . բայց Աստուած անոնք իր անուանը փա-  
ռաւորուելուն եւ իր ճշմարտութեանը տար-  
ածուելուն օգնողներ պիտի ընէ : Չար մար-  
դիկ Տէր Յիսուս Քրիստոսի վրայ խիստ

բարկացան եւ իր անունը աշխարհիս երեսէն բնաջինջ ընել խորհեցան։ բայց ինքը խաչելով ըրած բարկութիւննին Վատուած փառաւորեց, վասն զի Վատուծոյ դիտաւորութիւնը կատարողներ եղան, որ ամեն մարդոց փրկութեան ճամբայ մը բացուեցաւ։ Քրիստոս երկինքը համբառնալէն ետեւ իր թշնամիները սկսեցին իրեն հետեւողներուն վրայ բարկանալ, անոնք մահու շափի հալածեցին, եւ Երուսաղէմի մէջ եղող աշակերտները ամեն տեղ ցիրուցան եղան։ Բայց ուր որ երթային Վատուծոյ խօսքը կը քարողէին, եւ ասանկով աւետարանը շատ տեղ տարածելու պատճառ եղան։ անանկ որ աս կերպով Վատուած մարդոց բարկութիւնը իր թագաւորութիւնը յառաջացունելու համար գործածեց։ Բայց մարդուս բարկութիւնը դիւրաւ չի ցնար, չար մարդիկ քիչ շարութիւն գործելով չեն կշտանար։ բայց Վատուած թող չ' տար որ իր աղէկ սեպած կէտէն անդին անցնին, կամ ինքը փառաւորուելու համար թող տուած չափէն եւել բարկանան, երբոր ալ վեաս պիտի բերեն։ Վատուած անոնք կը զսպէ, ու երբեմն ալ Տարսոնացի Այօղոսին պէս իր թշնամիները բարեկամներու կը դարձունէ։ Բայց թէ որ

ասանեկ չընէ, ուրիշ շատ ճամբաներ ունի առ  
նոնք սանձելու . ամենեւ ինցաւելու չենք եր-  
բոր տեսնենք թէ ՞ Քրիստոսի թշնամինելը  
զրառանց յաղթութիւն կը գործեն, ինչու ըր  
անոնց բարկութիւնը զինքը պիտի գովէ, եւ  
մնացած բարկութիւնը ինքը պիտի պատէ:

## 9

ԱՆՐ ՏԵՐ ՅԱԲՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՔԸ  
ՃԵՐ ՀՈՂԻԲՆ ՀԵԹԸ: ՓԵԼՅ. 2Յ:

Աս էր Պաօղոս առաքեալին տուած օրհ-  
նութիւնը իր սիրելի եղբօրը եւ գործակի-  
ցին Փիլիմոնին: Աքնար անոր հարսաւթիւն  
եւ պատիւ խնդրել . կրնար առողջութիւն  
եւ երկան կեանք խնդրել . կրնար անոր երկ-  
րաւոր բարեկամներ խնդրել: Բայց աս բա-  
ները Պաօղոսի առջին մեծ յարդութիւն չու-  
նեին, եւ ասոնցման մեծ օրհնութիւն մը կը-  
փափաքէր որ իր բարեկամին դայ: Այ բա-  
ները աղէկ են հոս, եւ մեղ քիչ մը ժամա-  
նակ կ'երջանկացունեն, սակայն մնացող չեն.  
բայց մեր ՏԵՐ ՅԱԲՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՔԸ  
մեղ երջանիկ կ'ընէ հոս ալ՝ դալու աշխարհ-

քին մէջ ալ: Իր շնորհքը կեանք է, եւ իր  
սէրը կեանք ալ եւել: ինքը առ կեանք երա-  
նուս մէջ ամեն պէտք եղած բարութիւնը  
կուտայ, եւ յաւիտենական կեանք ալ կը-  
պարզեւէ մեզի որ ամեն բանէ եւել է: Պօ-  
ղոս իր բարեկամին մարմինին օր հնութիւն մը  
շխնդրեց, հապա հոգիին, մարդիկ շատ ա-  
ւելի կը խորհին մարմինին վրայ, քանի թէ  
հոգիին: Բայց թէ որ հոգին խաղաղութեան  
մէջ ըլսյ, երջանիկ կ'ըլսնք, զե՞ն չունի  
մարմինին վիճակը ինչ որ ըլսյ. հոգին ան-  
մահէ, վասնորոյ առաւել հոգ տանելու  
նիք անօր պակսութիւնները լեցունելու,  
քանի թէ մարմինին, որ մահկանացու է: Անը  
չէր Յիսուս Քրիստոսի շնորհքը առատա-  
պէս պիտի լեցունէ մեր ամեն հոգեւոց  
իմափառները: Պօղոս ասկէց մեծ օր հնու-  
թիւն մը չէր կրնար փնտուել իր բարեկամին,  
քանզի ամեն օր հնութիւն տնոր մէջնէ, առ  
է ան մեծ բարութիւնը որ թէ մեզի եւ թէ  
մեր սիրելիներուն համար փնտուելու Ենք:

ու ըստ, Ա արդապետ՝ իմ որդիս քեղիքե-  
րի, որ մունջ դեւ ունի: Անբէ: թա. 16:

Աս հայրը մեծ ցաւ կը կրէր իր որդին  
քաշած նեղութեանը համար: Ըստ ծնողք-  
ներ թէ որ իրենց մէկ սիրելի որդիին քա-  
շած նեղութիւնները իրենք քաշեն այնչափ  
չեն ցաւիր, որչափ որ անոնց ան նեղութիւն-  
ները քաշելը տեսնալով կը ցաւին: Բայց  
մասնաւորապէս աս հօրը կրած նեղութիւնը  
մեծ էր, քանզի նայեցաւ որ իր որդին դեւի  
իշխանութեան տակինկած է: ու իր նեղու-  
թեանը մէջ օգնութիւն փնտուեց ճշմարիտ  
օգնութեան աղբիւրէն: Անրդոցմէ օգնու-  
թիւն գտնելու համար թէ որ աշխարհիս բո-  
լորտիքը պտըտէր՝ պարապ էր, բայց Յիսու-  
սի վրայօք լսած էր, եւ իր զաւակը անոր բե-  
րաւ, ու պարապ տեղը եկած չեղաւ: Յի-  
սուս Քրիստոս ան նոյն դորովագութ է-  
ակըն է հիմա ալ, ինտոր որ առաջ էր աշխար-  
հիս մէջ եղած օրերը, հիմա ալ պատրաստ  
է բոլոր իրեն աղաղակողներուն ձայնին մը-  
տիկ ընելու, հիմա ալ փորձութեան մէջ  
ինկած ատեննիս մէր վրայ կը գթայ, եւ կը-  
մի իթարէ ամեն անոնք, որ հաւատքով ի-  
րեն կ'երթան, հիմա ալ ծնողքները կը նան

իրեն երթալ աս հօրը ըրածին պէս, եւ ի-  
րենց զաւկըներուն օրհնութիւն խնդրել:  
Այնու զաւկըները ամենքն ալ բնականաբար  
մեղաց իշխանութեանը տակն են. մէկ արա-  
րած մը չ'կայ որ կարող ըլլայ անոնք աս  
գերութենէն ազատելու. բայց ամեն զօրու-  
թիւններ Հիսուսի ձեռքն են, եւ ինքը պատ-  
րաստ է փրկելու: Ուստի հիմա ալ կրնանք  
երթալ իրեն ան նոյն վստահութիւնովը որ  
պիտի երթայինք թէ որ դեռ աշխարհիս մէ-  
ջընը ըլլար, եւ բարեգործութիւնընելու հա-  
մար անդին առդին շրջէր: Արնանք խնդրել  
իրմէն որ մեր զաւկըները օրհնէ եւ իրենց  
հոգեւոր հիւանդութիւնները բժշկէ, եւ թէ  
որ հաւատքով խնդրենք պարապ տեղը խընդ-  
րած չենք ըլլար:

## 11

Ուտղին հսկը շուտ մը կանչեց՝ ու ըստ,  
կը հաւատամ Տէր՝ օգնէ իմ անհաւատու-  
թեանս: Այսիւ, թա. 23:

Հիսուս բոլոր իրեն եկող օրհնութիւն  
խնդրողներէն հաւատք կը պահանջէր. հաւ-

տալու են իր զօրութեանը, եթէ կ'ուղեն որ  
յայտնուի իրենց: Դաւ ունեցող որդիին  
հայրը հաւատքով Հիսուսի եկաւ. հաւ-  
տաց որ Հիսուս կարող էր փրկել. բայց  
գիտեր ոք իր հաւատքը պէտք եղածին չափ  
զօրաւոր չէր: Իր հաւատքին անկատար ըւ-  
լալը խոստովանեցաւ, բայց չէ թէ անհոգու-  
թիւնով մը, հապաւնոր վրայ ողբալով, ար-  
ցունքով խոստովանեցաւ: Դւ բաւական շրջ-  
սեպեց իր ունեցած հաւատքը, հապաւնիկոյ  
զօրացունելու ամենէն աղեկ ճամբան գոր-  
ծածեց, այսինքն ամեն շնորհքները պարգե-  
ւող Հիսուսին ձգեց որ անիկոյ զօրացու-  
նէ, ըսելով՝ Աը հաւտամ Տէր՝ օգնէ իմ ան-  
հաւատութեանս: Ամենքս ալ հաւատքներ-  
նուս տկարութեանը վրայ ողբալու ենք.  
թէպէտ Հիսուսի կը հաւտամք, բայց մեզ-  
մէ ո՞վ կայ իրեն ապաւինող հաստատուն  
յոյսով ինչպէս որ պէտք է ունենալ: Անը  
հաւատքին տկարութիւնը մեր Փրկչին ան-  
պատռութիւնէ, եւ անոր վրայ ողբալու  
ենք երբոր իրեն կը խոստովանինք: Բայց  
մեր անհաւատութիւնովը իրեն երթալու  
ենք օգնութիւն խնդրելու, մենք մեզմէ օգ-  
նութիւն մը չենք կրնար դանել. բայց Հի-  
սուս ամեն ատեն պատրաստ է մեզի օգնելու:

Յօհապէտ մեր անհաւատութիւնովը զինքը  
անսպատիւ կ'ընենք, բայց թէ որ ապաշխա-  
րութիւնով իրեն երթանք, եւ ինքզինքնիւ  
իրեն ձգենք որ մեղի ողորմի, ձայներնուս  
կը լսէ ու հաւատքնիս կը զօրացունէ: Այսան-  
չելի է մեր Փրկչին խոնարհիլը ու շնորհքը.  
կը համբերէ բոլոր մեր մեղքերուն ու անհա-  
ւատութեանը. եւ սակայն երբորիրեն կ'եր-  
թանք մեր թշուառ վիճակովը, եւ իրմէն  
աւելի շնորհք կը խնդրենք, միշտ պատ-  
րաստ է մեր ձայնին լսելու եւ պատասխա-  
նելու:

## 12

Աւ եկաւ անոր ըսաւ. Աւրախացիր դռւն  
քերկրեալ Տէրը քու հետդէ: Պատկան. 1. • 28:

Աստուած իր մասնաւոր շնորհքները սո-  
վորաբար մարդոց մէջ մէծ յարդութիւն ու-  
նեցողներուն չ'պարզեւեր: Խարայէլի որդի-  
քը Քանանու երկիրը երթալու եւ իրրեւ  
Աստուծոյ սեպհական ժողովուրդը հոնքը-  
նակելու կանչուելէն առաջ Եղիպտացւոց  
երկիրը գերի էին: Անկէց եաեւ ալ Աստ-

ուած Խսրայէլացւոց դատաւորներուն եւ ազատիչներուն շատերը վար աստիճանի մարդոցմէն ընտրեց։ Եւ աս ատենս ալ որ իր յաւիտենական Որդիին մարմին առնելու դաղտնիքը կատարուելու վրայ էր, անարգսեպուած Ա, ազարէթ քաղաքէն մէկ աղքատ կին մը կ'ընտրէ զինքը աշխարհք բերելու միջոցը ըլլալու։ Աս կինը թէպէտեւ աղքատ եւնուաստ մէկն էր, բայց հաւատքով հարուստ էր, եւ Աստուած անոր պարզեւեց մարդկային սեռէն բնաւ մէկուն չըտրուած ան պինտ բարձր պատիւը։ Հրեշտակ մը խրկուեցաւ աս դիպուածը Վարիամին աւետիս տալու, եւ ան զինքը Շերկրեալ կոչեց։ Հրեշտակները կ'ուրախանան Աստուծոյ կամքը կատարելով, եւ երբոր Աստուծոյ Որդին աշխարհք եկաւ բնակելու, շուտով վաղեցին եղած դիպուածը Շեթէհէմի հովիւներուն իմացուցին, եւ հոս բնակած ատեննն ալ իրեն սպասաւորութիւն ընելը իրենց պինտ մէծ պատիւ մըն էր։ Ուստի դարմանք չէ որ հրեշտակները Վարիամը կանանց մէջը օրհնեալ սեպեցին, որուն տրուեցաւ անանկ մօտ աղքականութիւն մը ունենալ Քրիստոսի հետ՝ երբոր աշխարհիս մէջ էր, եւ այնշափ ատեն

անանկ մէկտեղ ընկերութիւն մը ունենալ  
անոր հետ եւ իրեն սպասաւորութիւն ընել:  
Որչափ հաստատուն հաղորդակցութիւն որ  
ունինք Քրիստոսի հետ, եւ որչափ իր կամ-  
քը կը կատարենք նոյնչափ պատիւ է մեզի:

## 13

Ու քուկին սիրտէդ ալ թուր մը պիտի  
անցնի: Պատմ., 18, 35:

Ամսնաւոր արտօնութիւնները շատ ան-  
գամ հետերնին յատուկ փորձութիւններ ալ  
կը բերեն: Արիամ շատ երանելի եղաւ  
Քրիստոսի մայրը ըլլալով. թէ որ մեծ պա-  
տիւ կը սեպուէր Առօհային նախնիքը դըտ-  
նուիլ, ալ որչափ առաւել էր անոր բուն  
մայր ըլլալը: Ծէպէտեւ Արիամ ուրա-  
խանալու էր իր վայլած արտօնութիւնովը,  
բայց պռաջուրնէ ըսուեցաւ իրեն որ Քրիս-  
տոսի հետ ասանկ աղգականութիւն ունենա-  
լովը շատ ալ նեղութիւն պիտի քաշէ: Երբ-  
որ տեսաւ որ իր որդին մարդոցմէ կ'անարդ-  
ուէր ու ատելութիւն կը քաշէր, եւ ասդին  
անդին կ'երթար իր գլուխը դնելու տեղ մը

չունենալով, եւ կը հաղածուէր Խարայէլացիներէն ու Փարփսեցիներէն եւ բոլոր ձեռքերնին իշխանութիւն ունեցող մարդոցմէն, եւ որ զինքը կ'արհամարհէլն, անտարակոյսիր սիրտը մեծ նեղութեան մէջ ինկաւ։ Բայց երբոր խաչին քովը կեցած նայեցաւ անոր վրայ որ շատ սիրելի էր իրեն, եւ որ ան ալ զինքը շատ կը սիրէր, անանկ անմեղ որդի մը, որուն նմանը բնաւմէկ մայր մը ունեցած չէ, երբոր տեսաւ անիկայ խաչին վրայ տարածուած, ու ձեռքերը եւ ոտքերը դամերով ծակուած, երբոր տեսաւ անոր քաշած անհնարին տամնջանքները եւ լսեցիր աղաղակելը՝ Վատուած իմ՝ Վատուած իմ՝ իս ինչու թողուցիր, արդարեւ անատենը իր սրտէն ալ թուր մը անցաւ։ Երանելի բանէ Քրիստոսի հետ միաւորիլը, մինչեւ անդամ թէ որ աս բանը աշխարհիս մէջ մեղ մասնաւոր նեղութիւններու ենթակայ ընէ։ Ուէ որ հոս իրեն հետ նեղութիւն քաշենք, ասկէց ետեւ իր փառքին մասնակից պիտի ըլլանք։

---

ամբարտաւան՝ Գողիադը սատկեցաւ՝ չէ թէ  
զօրաւոր թշնամիի մը սուրովը, հապա պա-  
տանիին պարսատիկով նետածքարովը, այս-  
պէս Աստուած ամբարտաւանները կըցած-  
ցունէ եւ հողին հետ մէկ կ'ընէ : Աստուծոյ  
Ճշմարտութեանը եւ կամ Աստուծոյ ժողո-  
վուրդին դէմ պատերազմելու համար պա-  
րապ բան է մարդոցմէ ամենէն զօրաւորին,  
կամ ամենէն կատարեալ պաշտպանութեան  
եւ կամ ամենէն զօրաւոր զէնքերու ապա-  
ւինիլը: Ամենակարողն է իրենց պաշտպանը,  
եւ մարդիկներուն բնաւ մէկ զօրութիւնը ա-  
նոր դէմ չ'կրնար կենալ: Ոճէ որ Աստուած  
մեր կողմն է, թէ որ իր ժողովուրդին համ-  
բանքէն ենք մարդոց մեզի դէմ ըրած բա-  
ներուն բնաւ մէկէն վախնալու բան չըւնինք:

## 24

Ան ատենը անոնց աչքերուն դպաւ՝ ու  
քսաւ. Զեր հաւատքին պէս ըլլայ ձեզի:  
Անդը. թ. 29:

Աս երկու կոյրերը մեծ շնորհք մը խընդ-  
քեցին Կորիստուէն, այսինքն որ աչքեր-

նին բանայ: Բայց աս աղաչանքը ըստին իրեն հաւտալով որ ինքը՝ Դաւիթի Արդին ան ըստասուած Վեսիան է, որուն արտօնութիւնն էր կոյրերուն աչքը եւ խուլերուն ականջը բանալը, ու մեռելները յարուցանելը: Հիսուս՝ իրմէն որչափ մեծ բաներ որ կ'ուզէին, կ'ընէր, եւ անոնք կը հաւտային որ բոլոր ուզածնին ընելու կարող էր, անիկայ կամեցաւ որ իրենց հաւատքին պէս ըլլայ իրենց, ու աչքերնին բացուեցաւ: Հիսուս երբոր աշխարհիս մէջն էր ամենուն իրենց հաւատքին չափովը կուտար: Կափառնայումի մէջ շատ մեծ գործքեր չըրաւ իրենց անհաւատութեանը համար, բայց հաւատքով իրեն եւ կողներուն ամենուն իր զօրութիւնը ցուցուց բժշկելով՝ անոնք եւ ազատելով: Հիմա ալ Հիսուս նոյն կանոնով կուտայ իր հոգեւոր օր հնութիւնները, երբոր աղօթքով իրեն կ'երթանք եւ մէկ շնորհք մը կը խընդըննք որուն կարօտ ենք, կատարեալ հաւատք ունենալու ենք իրեն անոնք տալու կարողութեանը եւ զօրութեանը վրայ: Պատուելու ենք զինքը իր խոստմունքներուն վրայ շատ հաստատ յոյս ունենալով, եւ պիտի լեցունէ սրտերնուս բոլոր փափաքները: Իր շնորհաց աղբիրը անհատնում է, եւ կըր-

նանք երթալ իրեն բոլոր մեր յանցանքնեւ  
բովզու չարութիւններովը, եւ մեծամեծ օրհա-  
նութիւններ խնդրել կորսուող հոգիններ-  
նուս համար, եւ մեր հաւատքին պէս պիտ  
տի պարզեւէ մեղի իր շնորհքները:

## 25

Խարի է դոհանեալ Տէրոջմէն, ու սաղմոս  
ըսել քու անունիդ՝ ուլ բարձրեալ: Առաջ  
դժ. 1:

Ամեն ճշմարիտ քրիստոնեայ կը զգայ որ  
բարի է Աստուծոյ աղօթք ընելը, նեղու-  
թեան ատեն իրեն աղաղակելը, եւ ամեն  
պէտք եղած շնորհքները իրմէն խնդրելը:  
Անոնք փորձը առած են թէ ինքը որչափ-  
կը մօտենայ բոլոր անոնց, որ իրեն կ'աղա-  
ղակեն, եւ թէ որչափ պատրաստ է իրենց  
խնդրուածքները կատարելու: բայց գուցէ  
ամենքն ալ դոհութիւն չեն մատուցաներ:  
Բստ բաւականին չենք զգար թէ որչափ բա-  
րի է Տէրոջը դոհութիւն մատուցանելը, եւ  
իր անունին սաղմոս երգելը, եւ սակայն  
ասկէց աւելի բնական պարտաւորութիւն:

մը չ'կայ: Աստուծոյ մեզի պարգեւած շը-  
նորհքները անհամար են. անոնք ամեն օր  
կը նորոգուին եւ ամեն բոպէ կը շարունակ-  
ուին, անոնք շատ մեծ եւ պատուական շը-  
նորհքներ են: Աստուծոյ մեզի պարգեւած  
օրհնութիւններուն արժէքը մտքերնիս չենք  
կը նար սղմեցունել, եւ միթէ պարտաւոր  
չենք շատ դոհութիւն մատուցանել: Ամե-  
նեւին չենք կը նար իր ողորմութիւններուն  
մեծութեանը համեմատութիւնովը իրմէն  
դոհանալ, բայց մեր տկար զօրութեանը շա-  
փովը իրեն փառարանութիւն մատուցանե-  
լու ենք: Կաեւ բարի է Տէրոջը սաղմօս  
երգելը իր էութեանը վրայ. պէտք է որ  
բարձրացունենք իր սրբութիւնը՝ արդարու-  
թիւնը՝ սէրն ու ողորմութիւնը: Որչափ որ  
փառարանութիւն մատուցանենք իրեն, այն-  
շափ մեր սրտերը կը լեցուին իր պատուա-  
կանութեան դգացումովը, եւ այնչափ առա-  
ւելիր պատկերին կերպարանակից կ'ըլլանք:  
Փառարանութիւնը երկնային գործ մըն է եւ  
հոռ որչափ որ Աստուած փառարանենք,  
այնչափ պատրաստութիւն կ'ունենանք երկ-  
նից մէջ եղած գործքերուն եւ վայելլու-  
թիւններուն:

Աւանըսաւ, Ես չեմ Խսրայէլի վրայ նե  
գութիւն բերողը, Հապա դուն եւ քու հօրդ  
տունը, որ Եստուծոյ պատուիրանքները ձը-  
գելով Բահաղիմին ետեւէն դացիք: Գ.  
Ամագ. Ժ.Բ. 18:

Եսիկոյ քաջ մէկ պատասխան մըն էր որ  
Եղիան տուաւ Ե. քաար չադաւորին որ  
զինքը մեռցունել կ'ու զէր: Երեք տարիէն  
եւել էր որ Խսրայէլացւոց մէջ սով կար, եւ  
բոլոր ան ժամանակը ոչ անձրեւ եկաւ եւ  
ոչ ցող իջաւ: Եղիան աս բանը առաջուց  
ըսաւ, եւ հիմա Ե. քաար չարախօսութիւն  
կ'ընէ անոր վրայ թէ ան էր Խսրայէլացինե-  
րուն նեղութիւն տուողը: Եղիան առանց  
վախի պատասխանեց թէ, Ես չեմ Խս-  
րայէլին նեղութիւն տուողը, Հապա դուն  
եւ քու հօրդ տունը: Երգարները ամեն  
երկիրներու օրհնութիւն են. Եստուածշատ  
անգամ իրենց համար կը խնայէ եւ կ'օրհ-  
նէ բոլորտիքնին եղող չարագործութիւնը  
նողները: Խայց չարերը ամեն տեղ անէծք  
են: անոնք իրենց օրինակովը եւ ջանքերովը  
ուրիշները չարին կ'առաջնորդեն, եւ Եստու-

Ճոյ մարդիկները պատժելուն պատճառը  
մեղքն է։ Չար մարդու մը վիճակը որչափ  
բարձր ըլլայ, այնչափ չարիք կը բերէ իր ազ-  
գին վրայ։ Աքաար թագաւոր էր եւ իր օ-  
րինակովը բոլոր Խսրայէլացիները խոտորե-  
ցուց, արհամարհեց Տէրոջը պատուէրները,  
եւ Բահաղիմին հետեւեցաւ ու բոլոր ազ-  
գըն ալիրեն հետը մոլորցուց, ասանկուլ Աս-  
տուծոյ բարկութիւնը անոնց վրայ գալուն  
պատճառ եղաւ, ու վերջը սոսկալի հաշիւ  
մը պիտի տար Աստուծոյ բոլոր իր ըրած  
չարութիւններուն համար։ Կոյնպէս ա-  
մեն ուրիշներուն մեղք գործել տուողը, թէ  
բարձր ըլլայ եւ թէ նուաստ, սոսկալի հա-  
շիւ մը պիտի տայ Աստուծոյ իր ըրածնե-  
րուն համար։

Եւ եղաւ որ եօթներորդ անգամին ըստ,  
Ահա ծովէն մարդու ձեռքի չափ փոքրիկ ամազ  
մը կ'ելլայ. եւ ան ըստ, Եղիր Աքաարին ը-  
սէ. Ի ծէ քուկառքդ եւ իջիր, որ անձրեւը  
քեղ չկայնեցունէ։ Կ, Յատկ. ձ. Բ. 44:

Եղիաբոլոր Խսրայէլացւոց քերնէն խօսք  
 առաւ, թէ Տէրը Աստուած է. Եւ Տահա  
 զին մարդարէները մեոցուց, ետքը գնաց եւ  
 աղօթք ըրաւ որ ան երկրին վրայ կրկին անձ  
 րեւ գայ: Եղիան մեզի պէս կիրքի տակ ին-  
 կած մարդ մըն էր, բայց ջերմեռանդու-  
 թեամբ եւ հաւատքով աղօթք ըրաւ, եւ  
 Աստուած լսեց իր ձայնը ու չար Խսրայէ-  
 լացիներուն ողորմելով անոր պատասխանեց:  
 Անք ալ նոյն ազատութիւնը ունինք Աս-  
 տուժոյ մօտենալու, եւ Եղիային պէս մեր  
 աղանչանքները մատուցանելու, եւ Աստ-  
 ուած հիմա ալ ան ատենին պէս պատրաստ  
 է հաւատքով եղած աղօթքը մտիկ ընելու:  
 Ուրեմն թէ որ աղօթքին զօրութիւնը կըր-  
 ցածնուս չափ դործ դնենք, չարութեան  
 մէջ թաղուած աշխարհիս վրայ մէծ օրհ-  
 նութիւններ իջեցունելու միջոց կրնանք ըլ-  
 լալ: Եղիա կատարեալ յոյս ունէր որ իր  
 աղօթքները պիտի լսուին, եւ կըսպասէր  
 որ պատասխան մը առնէ. շատ անդամ չենք  
 սպասէր մեր աղօթքներուն պատասխանը  
 առնելու. կը խնդրենք ու կ'անցնինք կ'եր-  
 թանք իթր թէ ընդունելու յոյս չունինք:  
 Եղիան շարունակեց իր աղօթքը. մէկ-  
 էնիմէկ պատասխան չընդունեց, հա-

պա կրկին եւ կրկին աղօթեց . մենք ալ նոյն պէս միշտ աղօթելու ենք : Աստուած երբեմն տալու օրհնութիւնը ժամանակ մը կ'ուշացունէ մեր հաւատքը փորձելու համար բայց ժամանակին պիտի հնձենք թէ որ կատարեալ յոյսով մեր աղաչանքներուն պատասխանին սպասենք :

## 28.

Եւ ինտոր Առվլսէս անապատին մէջ օձը բարձրացուց , անանկ ալ պէտք է որ Որդին մարդոյ բարձրանայ : Որ տմեն ով որ անոր հաւտայ չ'կորսուի , հապա յաւիտենական կեանքը ընդունի : Յաջ . գ . 14, 15 :

Երբոր Խորայէլացիք անապատին մէջ օձերուն խայթէն կը մեռնէին , որոնք Աստուած իբրեւ պատիժ անոնց վրայ խրկեց , հաւտալի բան պիտի չ'երեւնար որ եթէ մէկը պղինձէ օձի մը նայի , անիկայ կրնայ զինքը աղատել : Բայց ասիկայ Աստուծոյ մէկ պատուէրն էր , եւ ով որ Աստուծոյ կը հաւտար ու անոր կը հնազանդէր պղինձէ օձին կը նայէր ու կը բժշկուէր : Անք մէկ

Հագեւոր ախտ մը ունինք որ անապատին  
մէջի օձերուն խսյմէն շատ սոսկալի է . աս  
ախտը մեղքն է , եւ իր աղբուռութիւնը մար-  
մինին վրայ չէ հապա հոգիին . չէ թէ միայն  
ժամանակաւոր , հապա յաւիտենական մահ  
ալ կը պատճառէ : Անք ինքզինքնիս աս ախ-  
տէն չենք կրնար ազատել , եւ ոչ երկրա-  
ւոր դօրութիւն մը կարող է մեղի մէկ դեղ  
մը ճարել : Խայց Աստուած չ'թողուց մեզ  
որ առանց յոյսի կորսուինք . իր սիրելի  
Արդին տուաւ որ մենք փրկուինք : Հիսուս  
Քրիստոս խաչը ելաւ մեր մեղքերը քաւելու  
համար . հիմա բոլոր աշխարհք կրնայ իրեն  
նայիլ եւ ապրիլ : Աս դեղը առնելը  
դիւրին բան է . ամեն մարդ կրնայ ան-  
կեց օգուտ քաղել . մենք անօգնական մարդ-  
իկներս մեր մեղքերուն մէջը մեռած՝ եւ  
բոլորովին տկարութիւնով պատած , ուրիշ  
բան մը ընելիք չունինք , հապա միայն հա-  
ւատոյ աչքերնիս խաչին վրայի Քրիստո-  
սին վերցունելու ենք ու պիտի ապրինք  
Հաւտալու ենք Աստուածոյ իր Արդիին և  
փրկութեան մէկ հատիկ ճամբուն վրայ բո-  
լոր ըսածներուն , եւ միայն Քրիստոսի ա-  
պաւինելու ենք եւ յաւիտենական կեանք  
պիտի ունենանք :

Են որ Արդիին կը հաւտայ՝ յաւիտենաւ կան կեանքը կ'ընդունի, եւ ան որ Արդիին չ'հնաղանդիր՝ անիկայ կեանք չ'տեսնաք, հապա Աստուծոյ բարկութիւնը անօր վրայ կը մնայ: Յական, դ., 36:

Քրիստոսի հաւտացողները չե թէ միայն մահէն ետեւ յաւիտենական կեանքը ընդունելու խոստմունքը ունին, հապա մահէն առաջ ալ յաւիտենական կեանքը կ'ընդունին: Երբոր կը զգան թէ նորէն ծնած են, անատենը կ'ընդունին ան նոր հոգեւոր կեանքը, որ ալ յաւիտեանս յաւիտենից իրենց ներսը պիտի աճի: Երենց հոգիներուն կենսական շնչառութիւնը առջի քերանք տկար եւ անզօր կ'ըլլայ, բայց յաւիտեանս յաւիտենից զօրանալու վրայ պիտի ք լլան: Աերսիգինին եղած կեանքը ասովլ կը ցուցունեն՝ երբոր ուրիշ նոր աչքովլ մը կը տեսնեն մեղքին չարութիւնը, եւ Աստուծոյ փառաւոր հանդամանացը վրայ նոր իմացումնեք կ'ունենան, Քրիստոսի սիրոյն վրայ նոր ըդգացումներ կ'ունենան, եւ փրկութեան փառաւոր ճամբաննոր պայծառութիւնով մը կը

անեմնեն, որոնց լիրայ ամենեւըն զգացում  
մը չունէին, դեռ որ յանցանաց եւ մեղքի  
մէջ մեռած էին։ Քրիստոսի հաւտացող-  
ներուն ամենքն ալ յաւիտենական կենաց  
աս սկիզբը կ'ունենան։ Բայց Քրիստոսի  
չհաւտացողները կեանք պիտի չ'տեսնեն։  
անոնք մէկ հատիկ կեանք տուողէն երես-  
նին կը դարձունեն։ կորսուած մեղաւորնե-  
րը մի միայն Քրիստոսի հաւտալով կրնան  
ապրիլ, եւ թէ որ աշխարհիս մեջ եղած ա-  
տեննին աս հաւատոյ կեանքը չ'սկսին, վեր-  
ջը յաւիտենական մահով պիտի կորսուին։  
Եւ Աստուծոյ մեր Արարչին բարկութիւնը  
անոնց լիրայ կը մնայ, որուն ձեռքն ենք մենք  
ամենքս ու յաւիտեան անոր ձեռքը պիտի  
մնանք։ Ո՞ւ կրնայ Աստուծոյ բարիւթիւ-  
նը խօսքին պարունակած ահարկութիւննե-  
րը ցուցունել։ Օրհնեալ Փրկիչ՝ Աստու-  
ծոյ բարկութենէն քեզմով ազատութիւն  
գտնեմ։

եւ մեռելները յարութիւն կ'առնեն, ու աղաքատները աւետարանի քարոզութիւն կ'ընդունին։ Անդը. ձ. 5:

**Կ**ստուած մարդուս բանականութիւն տուաւ եւ չ'պահանջեր որ բանականութեան դէմ բան ընեն. չ'պահանջեր մեղմէ որ մէկ բանի մը հաւտանք առանց բաւական պատճառ տալու որ հաւտանք։ Երբոր մարդոց Անսիայ մը տալ խոստացաւ, ցուցուց որ զինքը ճանչնալունշաններէն մէկը ան էր որ Կստուածային մարդասիրութիւնով հրաշքներ պիտի գործէ։ Եւ երբոր Յիսուս Քրիստոս աշխարհք եկաւ, չ'պահանջուեցաւ որ մարդիկ զինքը ընդունին առանց յայտնի վկայութեան անոր իրօք Կստուծմէ ըլլալուն։ Իր գործքերը իրեն վկայ էին ինչու որ մէկը չէր կրնար իր ըրած հրաշքները գործել առանց Կստուածային զօրութեան։ Եւ աս իր գործքերը համաձայն էին իր աշխարհք գալու զիտաւորութեանը։ մարդիկ օրհնելու եկաւ, եւ անդին ասդին շրջեցաւ բարի գործքեր ընելով։ Իր հրաշագործութիւնները իրեն համար չէին, հապաւուրիշներուն համար, կոյրերը կը տեսնէին, խուլերը կը լսէին, կաղերը կը քալէ-

ին, եւ մինչեւ անդամ մեռելները յարութիւն կ'առնեին. ուր որ կ'երթար խեղճութշուառ մարդիկ ուրախութիւնով կը լեցուէին: Աւրեմն կարգէ դուրսքան է որ մարդիկ զինքը ցնծալով չ'ընդունեցին ու չ'բարեւեցին, եւ ուրախութեամբ իրեն չ'հնազանդեցան: Խայցինքը սուրբ էակ մըն էր, եւ մարդիկ մեղքը կը սիրէին, եւ արհամարհէցին զինքը, քանզի չէին ուզեր մեղքերնին ձգել:

## 31

Եւ աս է գատապարտութիւնը՝ որ լոյսը աշխարհ եկաւ, ու մարդիկ խաւարը լոյսէն եւելի սիրեցին. ինչու որ իրենց դործքերը չար էին: Համար. գ., 19:

Ա՞եղքը սիրող մարդիկ ճշմարտութիւնը տեսնել չեն ուզեր, չեն ուզեր իրենց պարտաւորութիւնները սորվիլ, կամ սուրբ վարք մը ունենալ, քանզի անանկները աս աշխարհէս կը դատապարտուին: Քահանայապետները կարդացողները եւ Փարփառցիները Քրիստոսը արհամարհէցին, թէ պէտեւ շատ աղէկ զիտէին թէ ինքը Ան-

սիան էր : Խնքը անանկ կը խօսէր, որուն պէտ  
մարդիկ բնաւ խօսած չունէին . լոլոր իր  
պատուիրանքները եւ վարդապետութիւն-  
ները կը ցուցունէին թէ ինքը երկին-  
քէն էր . բայց անոնց վրայ դրած բոլոր պար-  
տաւորութիւնները եւ իր խօսած բոլոր ճշ-  
մարտութիւնները անոնք կը դատապարտէ-  
ին : Խնքը հոգիով աղքատներուն երանի կու-  
տար բայց անոնք հոգիով հպարտ էին : Խնքը  
կը սորվեցունէր թէ ամեն մարդ մեղաւոր  
է , բայց անոնք ինքզինքնին արդար կը սէ-  
պէին : Խնքը կը սորվեցունէր թէ Աստուծոյ  
ընդունելի երկրպագութիւն ընելու համար  
սրտի մաքրութիւն պէտք է , բայց անոնց  
սրբութիւնը արտաքին արարողութիւննե-  
րու վրայ էր , եւ սրտերնին ամեն տեսակ  
պղծութիւնով լեցուն կը պահէին : Եւ օրի-  
նակով ալ անոնք կը դատապարտէր . իր հեղ  
խոնարհ՝ ներողամիտ եւ երկնային բարքը  
յայտնի կը ցուցունէր անոնց հպարտութիւ-  
նը՝ վրէժինդրութիւնը եւ աշխարհային-  
միտքը . ասոր համար կ'արհամարհէին զին-  
քը եւ իր վարդապետութիւնները . խա-  
ւարը կը սիրէին , ինչու որ իրենց գործքե-  
րը չար էին : «Քրիստոս արհամարհողները  
միայն կարդացողներն ու վարդիսեցիները չեն»

Հիմա ալ շատերը կան՝ որո՞նք նոյն պատ-  
ճառով՝ զինքը չեն ընդունիր։ Անզը կը-  
սիրեն եւ անոր համար աւետարանին հաւ-  
տալ չեն ուղեր, քանզի աւետարանը մեղ-  
քը թողուլ եւ սրբութեան դառնալ կը պա-  
հանջէ։

---

## ՕԳԱՍՏՈՒ

## 1

Բայց ան որ Ճշմարտութիւն կը դորձէ  
լուսին դիմացը կուգայ, որ իր գործքերը  
յայտնի ըլլան թէ Աստուծով գործուե-  
ցան: Համար. զ. 21:

Կրչեց ըլլալ որ մարդիկ Ճշմարտութիւ-  
նը լսեն, անիկայ ճանչնան ու անկէց յաղ-  
թուին, եւ սակայն լոյսը ատեն ու խաւա-  
րը սիրեն: Երբոր մարդ մը անգամ մը  
կը սկսի Ճշմարտութեան պահանջածները ը-  
նելու եւ իր սրտին զգացումները եւ իր  
գործքերը անոր համաձայնելու, ալ անա-  
տենը խաւարը լոյսէն եւել չ'սիրեր: Ան  
ատենը լոյսը գտնել եւ անոր մէջը քալել  
կ'ուղէ, անատենը կը ջանայ Ճշմարտութեան  
վրայ աւելի բան գիտնալու, եւ փափաքե-  
լու որ Ճշմարտութիւնը իր բոլորտիքը ե-  
ղողներն ալ ճանչցած ըլլային: Աւ անկէց

Նուն ճշմարտութիւնը զի՞նքը չ'դատապար-  
տեր, քանզի իր վարքը քիչ շատ անոր  
համաձայն է. անկեց ետեւ ամեն օր ա-  
նիկայ կը սորովի, կ'ուղէ որ իր գործքերը  
անով փորձէ: Իր զգացումները եւ ըրած-  
ները աւետարանին պահանջածներուն հետ  
կը բաղդատէ, եւ երբոր կը գտնէ թէ ա-  
նոնց մէջ համաձայնութիւն կայ, կ'ուրա-  
խանայ որ Եստուծով գործուած են, վա-  
սրն զի միայն Եստուծոյ շնորհքովն է,  
մարդոց ներսիդին գործող ռողիովն է, ո-  
րով մարդս կը կարողանայ սուրբ զգացում  
մը ունենալ կամ բարի գործ մը գործել:

## 2

Իս երեսէդ մի՛ ձգեր, ու քու Առւրբ  
Հոգիդ ինձմէ մի՛ հաներ: Ասով. Օ.Վ. 11:

Եմինքս ալ Եստուծոյ երեսէն իյնալու  
արժան ենք. թէ որ հիմա իր ողորմութիւ-  
նը վրաներնուս վերցունէ եւ մեզի յաւի-  
տեան մէկ բարութիւն մը չ'տայ, չենք կը ր-  
նար գանգտիլ թէ անդթութիւն եւ անի-  
րաւութիւն կ'ընէ: Ենք մեղքերուն համար

յաւիտենական մահուան արժանի ենք, եւ  
իր ողորմութիւնն ու երկայնմտութիւնը  
անսահման ըլլալուն համար է որ տակաւին  
յուսոյ երկրին մէջն ենք, եւ կրնանք աղա-  
ղակել իրեն ըսելուլ, Խո քու երեսէդ մի-  
ձգեր: Իր ներկայութիւնը երկնից ուրա-  
խութիւնն է, իր ներկայութեան զգացու-  
մը հաւատացեալին սիրտը ցնծութիւնով  
կըլեցունէ հոս աս աշխարհիս մէջ, եւ դեռ  
չմեռած երկինքը դացած կը թուի իրեն:  
Իր երեսէն ձգուիլը՝ աս աշխարհիս մէջ  
մեղաց եւ թշուառութեան ճամբուն մէջ  
լինալն է, եւ անդիի աշխարհքն ալ յաւի-  
տենական տրտմութեան մէջ մնալը: Ուս-  
տի ամեն օր աղաչենք Ապամոսերդուին հետ,  
“Իս երեսէդ մի՛ ձգեր, ու քու Առւրը Նո-  
դիդ ինծմէ մի հաներ” : Առւրը Նոդին մի-  
այն կրնայ պահել մէզ սրբութեան նւ խա-  
ղաղութեան ճամբուն մէջ, միայն իր օդ-  
նութիւնովն է որ սոսկալի մեղաց մէջ չենք  
լինար: Եթէ մեր մէջը բարի բան մը  
ըլլայ, անիկայ իր ձեռքին դործն է: Ե՞ն  
է սրտերնուս մէջ սէր բորբոքողը, ան է  
մեր հաւատքը զօրացունողը մեզի խոնար-  
հութիւն եւ զղջում սուռողը, եւ փորձու-  
թեան ատեն մէզ բռնողը, թէ որ մեզ ձը-

ո՞է՝ կորառուեցանք։ Ուրեմն զդոյշ ըլլալու  
ենք որ մեր մեղքերովը Աստուած չ' բարկա-  
ցունենք որ իր Հոգին մեղմէ հանէ, հապա-  
ռու շարունակ վրանիս մնայ:

## 3

Եւ Անրիամ ըստաւ. Ահա՛ ես Տէրոջը  
Աղախինն եմ. թող ըլլայ ինձի քու ը-  
սածիու պէս։ Դառք. Ա. 38 :

Ասիկայ ճշմարիտ հաւատքի գեղեցիկ  
օրինակ մըն է. երբոր Օաքարիային որդի  
մը ունենալու խոստմունքը եղաւ, չհաւ-  
տալիք ըրաւ, եւ իր անհաւատութեանը հա-  
մար լեզուն կապուեցաւ. բայց երբոր խո-  
նարհ Անրիամին աւելի մեծ բանի մը  
խոստմունքը եղաւ, իսկոյն հաւտաց։ Խոս-  
տացուած բանը աշխարհիս սկիզբէն վեր  
չեղած մէկ բան մըն էր, եւ Անրիամ կըր-  
նար ըսել թէ հաւտալի բան չէ որ այն-  
քան ժամանակ առաջուց խոստացուած  
ԱՄեսիան ինձի պէս աննշան եւ վար աս-  
տիճանի կնոջ մը որդին ըլլայ։ Հրէանե-  
րը կըսպասէին մէկ քաջայաղթ թագաւոր

մը իրենց Փրկիչ գալու, եւ Վարիամ  
պատճառ ունէր երկրայելու թէ արդեօք  
իրեն պէս աղքատութիւնով պիտի աշ-  
խարհք դայ : Ի՞սկ չհաւտացող սիրութ-  
թէեւ շատ տարակուսանքներ կրնայ դրտ-  
նել, թէեւ աս բանը մարդոց աչքին կրնայ  
շատ անհաւանական երեւալ, բայց սակայն  
Վարիամ աղէկ գիտէր որ իր ընդունած  
պատգամը Տէրոջմէն էր, եւ այսչափը ի-  
րեն բաւական էր : Տէրն էր ան բանը ը-  
սողը, եւ իր ամեն երկրայութիւնները դա-  
ցին, եւ ինքը սրտի մտօք ինքզինքը Ես-  
տութիւնները կատարուելուն մէկ գրքիք  
մը ըլլալու : Հիմուս Քրիստոսի մայրը  
ըլլալը իրեն մեծ երանութիւն մըն էր, եւ  
իր հաւատքովը օրհնուեցաւ, որով Տէրո-  
ջը իրեն յայտնածները բոլոր սրտով եւ  
պարզմտութեամը ընդունեց :

Վարիամ իր որդիին վերաբերեալ շատ  
գաղտնիքներ ունէր խորհիւլու : «Քիստոսի  
գալէն առաջ անոր գործին ինչ ըլլալը  
մարդարէները անդամ աղէկ հասկըցած չէ-  
ին, որոնք առաջուց անոր գալը զրուցեցին,  
ինչպէս որ կ'իմանանք Պետրոսի Առաջին  
Խուղթին Առաջին Գլուխէն . անոր համար  
հասարակութիւնն ալ անոր հանդամանք-  
ներուն վրայ շատ քիչ տեղեկութիւն ու-  
նէր : Իայց աս որդիին խոստմունքը Վա-  
րիամ երկինքէն իջած հրեշտակէ մը ըն-  
դունեց, եւ իրեն ըսուեցաւ որ անիկայ  
Իարձրեալին Արդին պիտի ըլլայ, եւ իր  
Դաւիթ Հօրը աթոռը պիտի ժառանգէ :  
Անոր ծննդեան ժամանակը Հրեշտակիները  
Ինթէհէմի հովիւներուն իմացուցին, եւ  
աստղ մը երեւցաւ երկինքը մոգերը արեւ-  
ելքէն անոր եղած տեղը առաջնորդելու  
համար . եւ անոնք եկան ու անոր երկը-  
պագութիւն ըրին, եւ պատուական ընծայ-  
ներ բերին : Օարմանք չէ որ աս բաները  
լսողներուն ամենքն ալ կը սքանչանային,  
եւ յատկապէս Վարիամ իր մայրը իր սըր-  
տին մէջ անոնց վրայ կը մտածէր : Շոլոր  
աս բաները ինք չհասկըցաւ, միեւնեւ որ  
փրկագործութեան ճամբան կատարեցաւ,

•Քրիստոսի երկինքը համբառնալովը, ու  
Սուրբ Հոգիին իջնալովը հաւատացելոց  
մտքերը լուսաւորելու։ Բայց իր որդիին  
խոստացուած Ա' Եսիան ըլլալը զգալու հա-  
մար բաւական բան գիտէր. եւ թէպէտ  
կարող չեղաւ բոլոր անոր վերաբերեալ  
բաները հասկընալ, սակայն ան զօրաւոր  
հաւատքը ունէր, որով Ա' ստուծոյ խօս-  
քին ապաւինեցաւ եւ ամեն բանին յայտ-  
նուելուն սպասեց։

## 5.

Եւ ըստ անոնց . Խս ինչո՞ւ կը փնտըռէ  
իք, չէի՞ք զիտէր թէ ինծի պէտք է որ Հո-  
րըս տունը ըլլամ։ Պ. ս-կ. 1. . 49։

Քիսուս Քրիստոս Ա' ստուծոյ. կամքը  
ընելու համար աս աշխարհս եկաւ. իր աշ-  
քին առջեւը միշտ ասիկայ էր։ Երբոր դեռ  
տասներկու տարեկան տղայ էր, տաճարին  
մէջը մնաց վարդապետներուն հետ, անոնց  
ըսածները մտիկ կ'ընէր եւ անոնց հար-  
ցումներ կ'ընէր։ Իր մայրը տրտմած զինքը  
փնտռեց եւ երբոր գտաւ քաղցրութեամբ

մը անիկայ յանդիմանեց իրենք ձգելուն  
 համար . բայց ան պատասխան տուաւ եւ  
 ըսաւ , թէ Պէտք է որ Հօրս դործին ետե-  
 սէն ըլլամ : Դիէպի իր երկրաւոր ծնողացը  
 պարտաւորութիւններ ուներ ընելու , բայց  
 իր մեծ դործը ան չէր : Երկինքէն իր Հօր-  
 մէն մէկ դործով մը խրկուեցաւ : Իր դործը  
 Աստուծոյ օրէնքին հնազանդիլ եւ մար-  
 դոց մեղքերը քաւել էր . իր սուրբ վար-  
 քովը իր անսպառ մարդասիրութիւնովը եւ  
 իր մահովը մարդկային սեռը օրհնել էր :  
 Անշտ աս իր մեծ դործը կը նայէր . եւ կ'աշ-  
 խատէր ու ամեննեւին մէկ դի չէր ձգեր ,  
 մինչեւ որ ամենը կատարուեցաւ եւ իր առ-  
 ջի տեղը համրածաւ : Հիսուս Քրիստոս  
 աս բանին մէջ մեզի օրինակ է . մենք ալ  
 մեր Հօրը դործը ընելու ենք . աս աշխար-  
 հը շնկանք մեր ուղածները ընելու , մեր  
 անձին զուարծութիւնները փնտուելու ,  
 հապա Աստուած փառաւորելու : Ո՞եր է-  
 ութեանը աս մեծ վախճանը միշտ միտքեր-  
 նիս ըլլալու է , եւ մեր Հօրը դործը կա-  
 տարելու համար ապրելու ենք :

---

Եւ իջաւ անոնց հետ՝ ու գնաց Ա,աղարէթ, եւ ինքը անոնց հնազանդ էր։ Պատմ. ք. 51։

Յիսուս Քրիստոս Աստուծոյ օրէնքին կատարեալ հնազանդութեան օրինակ մըն էր. թէպէտեւ Աստուծոյ յաւիտենական Որդին էր եւ մեծ գործ մը ունէր կատարելու՝ որ էր աշխարհիս փրկութիւնը, սակայն իր հայրը ու մայրը պատուելը չ'մոցաւ։ Անոնց հետ ատելի սեպուած Ա,աղարէթ քաղաքը իջաւ եւ անոնց հնազանդ էր։ Խնքդինքը անոնց իշխանութեանը խոնարհեցուց, թէպէտեւ ինքը հրեշտակներուն եւ մարդոց Տէրն էր։ Առաջ որդիի մը գէպի իր ծնողացը ունեցած պարտաւորութիւնները կատարեց, եւ խոնարհութեան ու որդիական հնազանդութեան առաքինութիւնները ցուցուց, եւ ետքը իր հրապարակաւ ընելու գործին սկսեց։ Անանկներ կան որ կը խորհին թէ այնչափ մեծ պարտաւորութիւններ ունին ընելու որ գէպի իրենց ծնողացը ունեցած պարտաւորութիւններնին չեն կընար կատարել։

Բայց ասանկները ՚Քրիստոսի հետեւող  
չեն, քանզի ինքը իր ան մեծ գործին մէջ  
իր հօրը եւ մօրը հնազանդութիւն ցու-  
ցուց: Ինքը շատ սքանչելի կերպով մը  
Աստուծոյ “Պատրուհ քու հայրդ եւ հայրդ”  
պատուիրանքին օրինակը առւաւ:

## 7

Վս աշխարհէն չեն, ինտոր որ ես ալ  
աշխարհէ չեմ: Յա՞շ. ձ. 1. 16:

Յիսուս ՚Քրիստոս քանի որ աս աշխար-  
հիս մէջն էր աշխարհէն չէր. բոլոր իր  
զգացումներովը եւ գործքերովը բոլորտիքը  
եղած ամբարիշտներէն անանկ տարբեր էր,  
որ անոնք իմացած պիտի ըլլան թէ իրենց  
հետ հաղորդակցութիւն մը չունէր. իր  
սուրբ վարքը կը ցուցունէր թէ ինքը եր-  
կինքէն էր ու չէ թէ աշխարհէս: Վնանկ ալ  
իր աշակերտները աս աշխարհէն չեն. եւ  
որչափ որ անոր հոգին կ'ընդունին՝ անոր  
տուած օրինակին կը հետեւին, այնչափ ա-  
ռաւել յայտնի կ'ըլլայ աս ճշմարտութիւ-  
նը. իրենց գործքերը աս աշխարհիս շար-

ժառիթներով ու կանոններովը չեն ըներ։  
 Արդիկ գործքերնուն կանոնը ընդհանրաւ  
 պէս իրենց անձին շահը կ'ընեն, եւ դիտաւու-  
 րութիւննին երկրաւոր պատիւ եւ հարը-  
 տութիւն ձեռք բերելէն զատուրիշ բան չէ։  
 Իսայց Ք. քիստոսինը եղողները իրենց կե-  
 նաց կանոնը Աստուծոյ Խօսքը կ'ընեն եւ  
 իրենց վախճանը Աստուծոյ հաճոյ ըլլալ  
 եւ զինքը փառաւորել է։ Աստուծածաշուն-  
 չին պատուէրները աշխարհի իմաստութեան  
 սկզբունքներուն անանկ հակառակ են՝ որ  
 անոնք բռնողներուն եւ ուրիշ մարդոց մէջ  
 շատ մէծ տարբերութիւն մը կ'երեւայ։ Ա, ա-  
 եւ անոնք աս աշխարհէս չեն, անոր համար  
 որ սրտերնին յոյսերնին ամենը երկնաւոր  
 բաններու վրայ են։ Թէպէտեւ աշխարհիս  
 մէջն են, սակայն իրենց ուզած բանները գըլ-  
 խաւորապէս հոս չեն, եւ իրենց գանձերը  
 հոս չեն դիղեր։ Խրենց բնակութիւնը հոս  
 չէ. միշտ հոս մնալ չեն ուղեր, կը յուսան  
 որ աս աշխարհս շուտով պիտի ձգեն եւ  
 երթան յաւիտեան վերը իրենց Տէրոջը քո-  
 վը բնակին։

---

Ով Հայր՝ անոնք որ դուն ինծի տուիր,  
կ'ուզեմ որ ուր որ ես եմ անոնք ալ իմ  
հետս ը լլան, որ իմ փառքս տեսնան որ ան  
ինծի տուիր. ինչու որ դուն իս սիրեցիր  
աշխարհը ըլլալէն առաջ : ՅԱՅՆ. ձԼ: 24:

Յիսուս Քրիստոս իր արիւնը թափեց  
մարդիկ մահուանէ աղատելու համար, բայց  
իր դիտաւորութիւնը անոնք միշտ աս մեղ-  
քով եւ անթիւ վտանգներով լեցուն աշ-  
խարհիս մէջ ձգել չէր: Ո՞նծ եւ պատուա-  
կան դիտաւորութիւններ ունի իր ծախու  
առածներուն համար. կ'ուզէ որ ինք ուր  
որ է անոնք ալ հոն ըլլան. Հօրը աղաչեց  
որ ասանկ ըլլայ, եւ Հայրը միշտ իրեն կը-  
լսէ: Հիմա աս խնդրուածքը շարունակ կը-  
կատարուի, եւ Քրիստոսի աշակերտները  
մէկիկ մէկիկ աս աշխարհը կը թողուն եւ  
իր քովը կ'երթան: Քրիստոնեայն եր-  
բոր կը մեռնի խաւարին մէջ չ'մնար, հապա  
վեր կ'երթապ. Քրիստոսի քով մնալու եւ  
անոր փառքը տեսնալու: Ը ատ անդամ  
Քրիստոնեաներուն հարկ կ'ըլլայ որ ա-  
մօթով նախատինքով եւ նեղութիւնով.

• Յրիստոսի ետեւէն երթան։ Կրիստոս  
հոս պատիւ չունի։ Բայց երբոր իր բա-  
րեկամները իր եղած տեղը կ'առնէ, անա-  
տենը իր փառքը պիտի տեսնեն։ Պիտի  
տեսնեն որ երկինքին բոլոր զօրքերը հրեշ-  
տակներն ու արդար մարդոց հոգիները ա-  
նիկայ կը փառաբանեն եւ ինքը Հօրը բո-  
լոր փառքովը պատաժ է։ Ասանկ մէկ փառք  
մը մտքերնիս չենք կրնար սղմեցունել, բայց  
թէ որ իրենն ենք մեռնելնուս ետեւ պիտի  
տեսնենք։ Պէտք չէ որ մահէն սոսկանք  
եւ հրաժարուած քրիստոնեայ բարեկամ-  
ներնուս վրայ ողբանք, ինչու որ մահը հա-  
ւատացեալներուն առ աշխարհէս ելլալ եւ  
չիսուսի եղած տեղը երթալ եւ անոր  
փառքը տեսնալ է։

Ես ալ Հօրը կ'աղաջեմ՝ եւ ուրիշ միսի-  
թարիչ մը կը խրկէ ձեզի, որ յաւիտեան  
ձեզի հետ բնակի։ Յական. ձ.Դ. 16.:

Յիսուսի աշակերտներուն սիթոր տրոտ-  
մաւթիւնով լեցուեցաւ՝ երբոր ըսաւ թէ

իրենցմէ զատուելու վրայ է։ Իր հետն էն,  
 իր զարմանալի գործքերը կը տեսնէին,  
 իր պատուական խօսքերը կը լսէին, իր գո-  
 րովագութ սէրը կը վայլէին, եւ սրտեր-  
 նին անոր կապուած էր, բայց հիմա իրենց-  
 մէ պիտի զատուէր եւ իրենք աս աշխարհիս  
 մեղացը՝ փորձութիւններուն եւ տրտմու-  
 թիւններուն մէջ պիտի ձգէր։ Բայց ա-  
 ռանց իրենց պէտք եղածը հոգալու չ'թո-  
 ղուց իրենք։ միսիթարեց անոնք խօսք տա-  
 լով որ իր բարեխօսութիւնովը չայրը ու-  
 րիշ Անիթարիչ մը պիտի խրկէ իրենց,  
 որ յաւիտեանս հետերնին պիտի բնակի։  
 Անը Փրկչին աս պատուական խոստմունքը  
 միշտ կը կատարուի. ան Ամենակարող Ար-  
 ևիթարիչը՝ իր Առւրը չողին աշխարհ խըր-  
 կեց, որ բոլոր իր ճշմարիտ աշակերտներուն  
 սրտին մէջը բնակի։ Աս օրհնեալ չողին  
 սրտերնիս կը կակուղցունէ եւ մտքերնիս  
 կը լուսաւորէ որ ճշմարտութիւնը իմանանք։  
 մտքերնուս աչքը կը բանայ՝ որ Քրիստոսի  
 անձառելի սիրոյն մեծութիւնը տեսնենք։  
 Խնդր մեղի կը ցուցունէ թէ իր խոստմունք-  
 ները որչափ մէծ եւ պատուական են, սուրբ  
 սիրով մը սրտերնիս կը վառէ եւ մեղ ցըն-  
 ծութիւնով ու խաղաղութիւնով կը լեցու-

նէ: (Օրհնեա՛լ Առւրբ Հողիդ, Եկուր ու  
իմ սրտիս մէջն ալ բնակէ:

## 10

‘Չեզի խաղաղութիւն կը թողում, իմ  
խաղաղութիւնս ձեզի կուտամ. չէ թէ ինչ-  
պէս որ աշխարհս կուտայ՝ ես ձեզի կուտամ.  
սիրտերնիդ. տակնուվրայ թող չըլայ, եւ  
չվախեայ: ՀՅովէ. Ժ.Դ. 27:

«Քրիստոսի պարզեւած օրհնութիւննե-  
րը աշխարհիս տուած օրհնութիւններուն  
պէս չեն: Վնիկայ աշխարհիս տուած կեր-  
պովը չ'տար: Եռանց ստակի եւ առանց բան-  
մը վճարելու ձրի կուտայ իր շնորհաց դան-  
ձէն: Վշխարհիս տուած չափովը չ'տար, թէ  
որ տայ առանց չափի կուտայ իր անհատնում  
հարսառութենէն: Աչալ աշխարհիս տուած շր-  
նորհքներէն կուտայ, իր պարդեւած օրհնու-  
թիւններուն հետ չար բան խառնուած չկայ,  
բոլորովին սուրբ են անձառելի ուրատիսութիւն  
կուտան անոնք ընդունովին: Ար տրտմած տ-  
շակերտներուն խաղաղութիւն տալ խոստա-  
ցաւ, չէ թէ աս աշխարհիս հետ, քանզի իմա-  
ցուց իրենց թէ աս աշխարհիս մէջ նեղաւ-

թիւն պիտի քաշեն, հապա անոնց խաղաղութիւն տոււաւ Աստուծոյ եւ իրենց խրզմանքներուն հետ։ Արդոց մաքէն վեր խաղաղութիւն մը տոււաւ անոնց, որ աշխարհիս փորձութիւններուն մէջ անոնք պահէ։ Թրկչին կտակով թողուցած աս մեծ պարգևուը միայն ան ատենը գտնուողներուն համար չէր, հապա մինչեւ աշխարհիս վերջը բոլոր իրեն հաւտացողներուն համար է։ Աներն ալ է. ին ալ է, թէ որ Քրիստոսինն եմ։ Անով՝ թէ պէտեւ տրտմութիւններով պաշարուինք, թէ պէտեւ մեծ փորձութիւններ գլխունուս դան, թէ պէտեւ շատ թշնամիներ վահնիս ելլեն, սրտերնիս տակն ու վրայ ըլլալու ու վախնալու չէ։

## 11

Աիրտերնիդ տակնուվրայ թող չըլլայ, հապա Աստուծոյ հաւտացէք՝ ինծի ալ հաւտացէք։ Յա՞նձն ձ. 1:

**Կ**առ սրանչելի է Քրիստոսի իր աշակերտացը վրայ ունեցած կարելցութիւնը։ Իր տանջուելու ժամանակը մօտեցած էր,

գիտէր իր առջին եղածները, իր քաշելոց  
ցաւերուն սաստկութիւնը աչքին առջևն  
էր: Բայց կարծես թէ իր աշակերտներուն  
վրայ ունեցած գութովը իր տանջանքները  
մոռցաւ: Վիտէր թէ իր դատապարտուիլը  
եւ մեռնիլը տեսնելնուն սրտերնին դառն  
տրտմութիւնով պիտի լեցուէր. գիտէր թէ  
պիտի ողբային իրենցմէ հրաժարելուն վրայ  
եւ գիտէր թէ աս ոխակալ աշխարհիս մէջ  
մինակ մնալունին վախով պիտի լեցուէին:  
Անոր համար իր վերջին ժամերը անոնց հետ  
շատ քաղցր եւ կաղդուրիչ խօսակցութիւն-  
ներով անցուց, որոնք Աստուածաշունչին ա-  
մենապատուական եւ սիրտ տուող մասերէն  
են: “Արտերնիդ տակնուվրայ թող չըլլայ”<sup>”</sup>  
ըստ, “Աստուծոյ հաւտացէք, ինծի ալ հաւ-  
տացէք”, տառապանքի ժամ մը կար առ-  
ջեւնին, բայց ինքը յորդորեց անոնք՝ որ  
բոլոր ան ատենը իրեն ապաւինին, տակա-  
ւին կարողութիւն ունէր եւ ամեն ատեն ու-  
նի կանոնք աղատելու: Իր կեանքը իրմէն  
առնուելու չէր, հապա ինքը կամաւ պիտի  
տար անիկայ աշխարհիս փրկութեանը հա-  
մար: Աւրեմն թէ որ իրեն հաւտային եւ իր  
խոստմունքներուն վրայ վստահէին, տակն-  
ուվրայ ըլլալու բան չունէին: Աշայն թէ

քիչ մըսպասելու էին ան մութ ամպին անցանելուն, եւ վերջը ուրախութիւնով պիտի լեցուէին։ Քրիստոսի վրայ եղած ամուր հաւատքը նեղութեան ժամանակ մեծ միսիթարութիւն է։

## 12

Դուք ալ հիմա տրտմութիւն ունիք բայց ես ձեղ նորէն պիտի տեսնեմ, եւ ձեր սիրտերը ուրախ պիտի ըլլան։ ու ձեր ուրախութիւնը մէկը ձեղմէ պիտի չ'հանէ, չ'ոչին, յօն։ 22։

Աշակերտները տրտմած էին, ինչու որ Յիսուս ըստ թէ Ձեղմէ պիտի բաժնուիմ։ եւ իրենց տրտմութիւնը սաստիացաւ երբոր անոր խաչը ելլելը եւ Թաղուիլը տեսան։ Կնատենը սրտերնին մեծ նեղութեան մէջ ինկաւ, անոր վրայ ունեցած յոյսերնին՝ թէ Խարայելի աղատիչն է, գրեթէ կտրեցաւ եւ անմիսիթաք ու յուսահատեալ սրտով ցիրուցան եղան։ Իսպահ երբոր Յիսուս յարութիւն առաւ յոյսերնին կենդանացաւ եւ սրտերնին ուրախութիւնով լեցուեցաւ։

## 23

Երբոր ինքը իր առջի եղած տեղը համբաւը  
ճաւ եւ Առւրբ ողին եկաւ ու լուսաւորեց  
միտքերնին որ փրկութեան զարմանալի  
ծամբան հասկընան, երբոր խելքերնին հա-  
սաւ իրենց Տէրոջը եւ Ա արդապետին ին-  
չու համար խաչին վրայ ան տանջանքները  
քաշելուն, երբոր կարողացան քիչ շատ իր  
անհուն սիրոյն եւ իրենց ու բոլոր իրեն  
հաւտացողներուն համար ծախու առած  
օրհնութիւններուն արժէքըգիտնալ, անա-  
տենը սրտերնին անձառելի եւ փառաւոր  
ուրախութիւնով մըցնծաց, եւ իրենց ուրա-  
խութիւնը մէկը չէր կրնար առնել իրենց-  
մէ : Ա արդիկ վրանին ելան, ատեցին հալա-  
ծեցին բանտարգեցին եւ մէկ քանիներ-  
նին ալ մեռցուցին, բայց սակայն անոնք ի-  
րենց Փրկիչովը ուրախ էին: «Կեղութիւն-  
ներ քաշելու եւ մեռնելու ժամանակնին  
կ'ուրախանային, եւ յաւիտեանս յաւիտե-  
նից անպատմելի ուրախութիւնով պիտի  
ցնծան : Աս նոյն ուրախութիւնը Քրիս-  
տոս բոլոր զինքը սիրողներուն համար ալ  
ծախու առաւ, եւ թէ որ Հիսուսի հաւտանք  
եւ իրմով ապրինք, աս ուրախութիւնները  
մերն ալ են :

13

Անատենը բոլոր աշակերտները [թողուցին անիկայ՝ ու փախան։ Առավել. հօ. 56։

Երբոր Հիսուս բռնուելէն առաջ Քրիստոսի աշակերտներուն հետ կը խօսէր, Երբոր առոր իրենց վրայ ունեցած սէրն ու կարեկցութիւնը զգացին, անանկ եկաւ իրենց թէ զինքը երեսէ պիտի չ'ձգեն։ «Քաէ եւ քեզի հետ մեռնելու հասնիմ՝ քեզ չեմ ուրանար», ըստ հաստատուն Պիետրոսը, եւ նմանապէս բոլոր միւսներն ալ։ Աստահ էին թէ իրենց Ապրդապետը չեն ձգեր, որ իրենց այնչափ սէր ցուցուց, եւ որ զինքը Աստուծոյ Որդին եւ աշխարհիա Փրկիչը կը համարէին։ Իսյց երբոր փորձութեան ժամը եկաւ հասաւ, երբոր զինքը իր թշնամիներուն ձեռքը մատնուած տեսան, երբոր կատաղի զօրքերուն զինքը յափշտակելը եւ առնել տանիլը տեսան, մոռցան խռատմունքներնին, մոռցան իր խրատները եւ իր սէրը, հաւատքնին տը կարացաւ, ու թողուցինք չենք գիտեր սըրտերնուս մէջ եղածները. կրնանք մեծ վրստահութիւնունենալ թէ մեր Փրկիչը բնաւ

պիտի չ'թողունք, բայց թէ որ մեր զօրուաթեանը ապաւինինք աղէկ գիտնանք որ փորձութեան ատեն պիտի իյնանք: Անք պէտք եղածին չափ Քրիստոսի չենք երթար. մեր զօրութիւնը միայն իրմէն է. մեր ապահովութիւնը մի միայն ինքզինքնիս իրեն յանձնել եւ իրեն միշտ աղաչել է որ մեղ իր շնորհքովը պահէ: Որչափ սքանչելի է իր շնորհքը որ իրեն բարեկամ կը կանչէ անոնք, ու բոնց հաւատքն ու սէրը այնչափ տկար է որ անշուշտ զինքը պիտի թողուն թէ որ իր Ամենակարող շնորհքովը անոնք չ'պահէ:

## 14

Անատենը Ծիսուս անոնց ըստ . Այս վախնաք՝ գացէք իմ եղբայրներուս ըսէք, որ Կալիլեա երթան, ու հոն իս պիտի տեսնան: Առաջն. Եր. 10 :

Անտարակոյս Քրիստոս տրտմեցաւ իր ամենէն մեծ կարօտութեան ժամուն իր աշակերտները զինքը ձգելնուն համար: Արտին մեծ ցաւ եղած պիտի ըլլայ երբոր տեսաւթէ որչափ տկար եւ անհաստատ էր իրենց սէրը իւ որչափ խախուտ էր իրենց հաւատքը:

Բայց բոլորն ալ իրենց ներեց . ինքը անոնք  
ընտրեր էր եւ անոնց վրայ ունեցած սէրը  
չվերցուց , թէպէտ անոնց իրեն վրայ ունե-  
ղած սէրերնին շատ տկար էր : Յարութիւն  
առնելէն ետեւ կրկին անոնք եղայր կան-  
չեց եւ ան նոյն սիրոյ անունովը խօսք խըր-  
կեց անոնց որ Վալիլեա երթան եւ հոն  
զինքը տեսնեն : Պիտէր թէ սրտերնին  
տրտմութիւնով կը լեցուէր , եւ շատ կը զեղ-  
ջային երբոր կը յիշէին իր նեղութիւննե-  
րուն մէջ անոր ցուցուցած անհաւատարմու-  
թիւննին : Բայց ինքը ուղեց անոնք միսիթա-  
րել , եւ անոնց գիտցունել թէ իրենց յան-  
ցանքը ներած է : Որչափ ուրախացած պի-  
տի ըլլան երբոր իրեն ան պատգամը քնդու-  
նեցին , երբոր գիտցան թէ տակաւին իրենք  
եղբօր պէս կ'ընդունի , եւ երբոր վստահ ե-  
ղան իր սէրը շարունակելուն : Հիսուս հի-  
մա ալ աշխարհիս մէջ եղած ատենին պէս  
կարեկից եւ ներողամիտ է . ամեն քրիստոն-  
եայ կը զգայ թէ իր համբերութիւնը շատ  
սքանչելի է : Վրդարեւ մարդկային լեզուով  
չենք կրնար խօսիլ իր ներողամիտ սիրոյն  
մէծութեանը վրայ : Ոչ թէ հոս եղած ա-  
տենիսիս՝ սրտերնուս փափաքած խորհրդա-  
ժութիւններուն նիւթը աս ըլլար . եւ եր-

կինքին մէջը պիտի սորվինք մեր պարտաւ  
կանութեանը չափ աս սէրը գովել:

15

Երկինքը՝ Աստուծոյ փառքը կը պատմէ,  
ու երկնից հաստատութիւնը անոր ձեռքին  
գործքերը կը ցուցունէ: Ատել. ԺԹ. 1:

Աստուած ինքինքը մեղի միայն Աստ-  
ուածաշունչով յայտնած չէ. անով իր ըս-  
տորոգելիքները կատարելապէս կը ցուցու-  
նէ, բայց նաև ինքզինքը ճանչուց իր ձեռքի  
գործքերովն, թէպէտ չէ թէ այնչափ կա-  
տարեալ կերպով մը: Աս իր գործքերը  
քննելու ենք՝ որ աւելի բան դիտնանք  
Աստուծոյ վրայօք, եւ մեր հաւատքը զօրա-  
նայ, տեսնելով որ Աստուծոյ ստորոգելիք-  
ները ինչպէս որ Աստուածաշունչին մէջ  
յայտնուած են, նոյնը կ'երեւայ իր գործքե-  
րուն մէջն ալ: Յայտնի է թէ Դաւիթ սո-  
վորութիւն ունէր Աստուծոյ հանգամանք-  
ները սորվելու անոր արարչագործութենէն.  
անոր գործքերուն մէկ մասին վրայ խորհե-  
լովը պարտաւորեցաւ աղաղակել, “Երկինքը

Վատուծոյ փառքը կը պատմե, ու Երկնից  
հաստատութիւնը անոր ձեռքին դորձքերը  
կը ցուցունէ": Երկինքը՝ արեգակը՝ լուսինը  
եւ աստղերը՝ արդարեւ Վատուծոյ փառքը  
կը պատմեն: Վս անհուն աշխարհները ըս-  
տեղծողը եւ անոնք պահողը Վմենակարող  
զօրութեան տէր էակ մը պիտի ըլլայ: Վն՝  
որ իրենց շարժումները անանկ կատարելա-  
պէս կարգադրեց որ հաղարաւոր տարիներ-  
է որ չխանգարուեցան, անհուն իմաստու-  
թեան տէր էակ մը պիտի ըլլայ: Վն՝ որ ա-  
նանկ դրաւ անոնք որ շարունակ երջանկու-  
թեան աղբիւր մըն են իր արարածներուն,  
շատ բարերար էակ մը պիտի ըլլայ: Վստ-  
ուած երկինքը ստեղծեց մեր պակսութիւն-  
ները մատակարարելու համար, ինքն է որ  
արեգակին մեղի լոյս եւ տաքութիւն տալ  
կուտայ, եւ գիշերը անիկայ մեղմէ կը ծած-  
կէ, որ ան խաւար եւ հանգարտ ժամանակը-  
հանգստանք: Գիշերը երկինքը անհա-  
մար աստղերով կը զարդարէ, որոնք աչքի  
հաճելի են եւ քիչ մըն ալ լոյս կուտան,  
որ բոլորովին խաւար ըըլլար: Վմեն օր Վս-  
տուծոյ փառք տալու նոք իր բարութեանը  
համար, որ երկինքին մէջի իր ստեղծուած-  
ներուն մէջը կ'երեւայ:

Խնծի դարձէք, ու ես ձեզի պիտի դառնամ՝ կ'ըսէ զօրութեանց Տէրը: Անդ, զ. 7:

Աս խօսքերը Խսրայելացւոց զբուցուած ժամանակը Աստուծմէ մոլորած էին, եւ Աստուած Թողուց որ իրենց գործքերուն պտուղը քաղեն իրենց երկիրը թշուառութեան մէջ ձգելով, եւ իրենց թշնամիներուն իրենք յաղթել տալով: Այց Աստուած իր ողորմութիւնը անոնցմէ մէկէնիմէկ չ'կտրեց. շատ երկայնմտութիւնցուցուց իրենց, եւ մարդարէներ խրկեց իրենք խրատելու եւ յորդորելու որ զղջան եւ իրեն դառնան: Շատ մարդասիրութիւնով վարուեցաւ անոնց հետ, մեծ խոստմունքներ տուաւ, որ պիտի կատարէր անոնք՝ թէ որ ապաշխարէին: Եթէ իրեն դառնային՝ ինքնալ անոնց պիտի դառնար. պիտի ներէր իրենց կռապաշտութեանը՝ ապերախտութեանը եւ բոլոր գործած մեղքերնուն, որոնցմով իր բարկութիւնը դրդուեցին, եւ կրկին իրենց Աստուածը պիտի ըլլար իրենք օրհնելու եւ աղատելու, ու անոնք ալ կրկին իր ժողովուրդը պիտի ըլլային: Աստուած

նոյն լեզուովը կը խօսի մեղի հետ ալ, որով  
խօսեցաւ հին Խարսյէլացւոց . կը կանչէ ամեն  
մարդիկ որ իրենց չար ճամբաները ձգեն,  
եւ իրեն դառնան ու իրեն ծառայեն եւ հը-  
նազանդին, եւ անատենը ինք ալ անոնց պի-  
տի դառնայ եւ իր ներողամիտ սէրն ու իր  
շնորհաց առատութիւնը պիտի ցուցունէ ա-  
նոնց : Ա նաս չունի թէ մարդ մը որչափ մե-  
ղաւոր ըլլայ . թէ եւ իր մեղքերը ծիրանիի  
պէս ըլլան, եթէ ապաշխարէ եւ կոտրած  
սրտով Աստուծմէ գայ ողորմութիւն խընդ-  
րէ, Աստուած պիտի ողորմի եւ ներէ իրեն :  
Իր ողորմութիւնը եւ գութը անսահման է  
եւ ասոր համար փառաւորեալ է իր անու-  
նը յաւիտենից յաւիտեանս :

## 17

Աստուծոյ ողորմութեանը կը յուսամ  
յաւիտեանս յաւիտենից : Առաջ. օ. թ. 8 :

Դաւիթ գիտէր թէ ինքը մեղաւոր էր .  
իմացաւ որ իր բարի գործքերուն համար  
Աստուծմէն շնորհք եւ օրհնութիւն չ'կըր-  
նար ուղել : Եթէ Աստուած իր անվը պ

արդարութեան պահանջածին պէս անորա  
նօրէնութիւններուն արժան եղածը անոր  
ընէր, յաւիտեանս ձգելու էր զի՞նքը: Իսյց  
Աստուած ցուցուց որ ինչպէս որ արդար է,  
անանկ ալ ողորմած է, եւ թէպէտ մեղա  
ռոր էր կրնար Աստուծոյ ողորմութեանը  
ապաւինիլ, եւ միտքը դրաւ որ յաւիտեա  
նըս իր ողորմութեանը յուսայ: Աստուծոյ  
ողորմութիւնը Դաւիթէն աղէկ գիտենք.  
անկէց աղէկ կը հասկընանք իր ողորմու  
թեան ճամբան: Աստուծոյ Որդին աշխարհ  
եկաւ, եւ ինքզինքը մեր տեղը տալով ար  
դարութեան մեղմէ պահանջածները կատա  
րեց, եւ իրմով Աստուած իր ողորմութիւ  
նը կը ցուցունէ բոլոր իրեն գարձողներուն:  
Ուրախութեամբ Վրիստոսով Աստուծոյ  
ողորմութեանը կրնանք ապաւինիլ փրկու  
ելու համար. մեղաւորներուն ցուցուած  
աս ողորմութիւնը անչափ է: Իսյց ումանք  
կան որ կը վախնան Աստուծոյ ողորմութեա  
նը ապաւինելու. կ'ուղեն աշխատիլ որ ի  
րենց բարի դործքերով արքայութիւն եր  
թան. իրենցմէ արդարութիւն ունենալ կը  
ջանան, որ Աստուծոյ շնորհքները իրեւ  
իրենց արդարութեան հատուցում մը ըն  
դրունին: Ասանկները շատ անպատիւ կ'ըւ

նեն Աստուած, որ ցուցուց թէ ողորմիլը իւ-  
րեն բերկրութիւնէ: Բայց ես կը փափա-  
քիմ Աստուծոյ երթալ իրբեւ խեղչ մե-  
ղաւոր մը: ուրիշ յոյս մը չունիմ այլ մի-  
այն Քրիստոսի խաչովը ցուցուած իր ո-  
ղորմութիւնն է իմ յոյս:

## 18

ՈՎ Տէր, իմ զօրութիւնս, պիտի սիրեմ  
քեզ: Առաջ. ձ.թ. 1:

**Ը**ատ բաներ կան հոս աս աշխարհիս  
մէջ որոնք կը պարտաւորինք սիրել: Աստ-  
ուած մեզ անանկ աշխարհքի մը մէջ դրաւ,  
ուր իր ձեռքի գործքերէն շատերը կը տես-  
նենք որ շատ գեղեցիկ եւ որոնք այսինչ  
շափով սիրելու ենք: **Ը**ատ բարեկամներ  
ունինք որոնք պարտաւոր ենք սիրել: Ճը-  
նողքներն ու որդիքը, եղբայրներն ու քոյ-  
քերը, երիկներն ու կնիկները մէկզմէկ սի-  
րելու պարտաւորութեան տակն են: Բռ-  
ըր քրիստոնեաները սիրելու ենք: Քրիս-  
տոսի նոր պատուիրանքը է Աէկզմէկ սիրե-  
ցէք: Բայց մէկ էակ մը կայ որ անիկայ պար-

տաւոր ենք աւելի մեծ սիրով մը սիրել, մեր  
բոլոր պարտաւորութիւններուն բովանդա-  
կութիւնը՝ մեր Տէր Աստուածը բոլոր սրբ-  
տովիսիս եւ բոլոր անձովիսիս ու բոլոր կա-  
րողութիւնովիսիս եւ բոլոր մտքովիսիս սիրել  
է: Ասղմոսերգուն միտքը գրաւ աս պարտա-  
ւորութիւնը կատարել, եւ սրտանց աղա-  
ղակեց, “Ով Տէր իմ զօրութիւնս, պիտի  
սիրեմ քեզ”: Առաք Հոգիով ամեն նո-  
րոգուած սիրտ պատրաստ է նոյնպէս ըսե-  
լու, Այս կը սիրեմ եւ միշտ պիտի սիրեմ  
քեզ, ով Տէր, իմ զօրութիւնս: Աստուած  
արժանի է մեր սիրոյն. իր ստորոգելիքնե-  
րուն ամենքն ալ սիրելի են, ինքը սուրբ ար-  
դար եւ բարի է: “Ասեւ արժանի է մեր սի-  
րոյն մեղի ըրած բաներուն համար, Երբոր  
խորհինք մեղի պարդեւած անթիւ օրհնու-  
թիւններուն վրայ, եւ թէ ինչպէս համբե-  
րեց մեր ապստամբութեանը՝ ապերախտու-  
թեանը եւ մեղքերնուս, եւ նոյն գութը  
եւ սէրը շարունակեց՝ չենք կրնար չ'աղա-  
ղակել, Այս Տէր, պիտի սիրեմ քեզ: Ա-  
մեն բանէն վեր երբոր յիշենք թէ որքան  
սիրեց մեղ որիր սիրելի Որդին մեղի համար  
մեռնելու տուաւ, սրտերնիս մեծ սիրով  
լեցուելու է:

Դառք ինտո՞ր կրնաք հաւտալ, որ իրար-  
մէ փառք կ'առնեք . եւ ան փառքը որ մէկ  
Ըստուծմէն է, չէք փնտուեր : ՀՅԱՅՆ. և . 44:

Հիսուս անարգուած՝ Արդովրեցի մըն-  
էր . իր մայրը աննշան կին մըն էր եւ հայրը  
նուաստ հիւ մը: Իրեն աշակերտները խեղճ  
աղքատ ձկնորսներ էին . իրեն հետեւող-  
ներուն մէջ հարուստ՝ մէծ՝ պատուաւոր  
մարդիկ չկային, եւ ինքն ալ անոնց աշխար-  
հային փառք մը չ'խոստացաւ : Անրդոցմէ-  
պատիւ ընդունողները չէին ուզեր իր քովը  
երթալ . յիրաւի փառասիրութիւնը անանկ  
կուրցուցած էր աչքերնին որ չէին կրնար  
իրեն հաւտալ . վասնղի մարդոցմէ պատիւ  
փնտուողը անոր պահանջմունքներուն ա-  
կանջ չկախեր, կամ պարզմտութեամբ  
չքններ անոր Ըստուծմէն ըլլալուն ապա-  
ցոյցները, քանզի իրեն հաւտալով նախա-  
տանքի եւ արհամարհանքի ենթակայ պի-  
տի ըլլայ : Անայն անոնք որ հաւտացին  
նուաստ Հիսուսին թէ աշխարհի Փրկիչն է,  
զգացին թէ Ըստուծոյ հաճելի ըլլալը բոլոր  
աշխարհային փառքերէն եւել է: Ամեն մեղք

կը կուրցունէ միտքը որ ճշմարտութիւնը չը-  
տեսնայ . պէտք է ուղենք որ Աստուծոյ կամ-  
քին հակառակ գտնուող ամեն բան ուրա-  
նանք , եւ պէտք է փափաքինք որ ամեն բա-  
նէն առաջ Աստուծոյ կամքը ինչ ըլլալը  
դիտնանք , եւ անատենը ամեն ճշմարտու-  
թեան պիտի առաջնորդուինք :

## 20

Խմ ճամբաներուս վրայ մտմտացի , ու  
իմ ոտքերս քու վկայութիւններուդ դար-  
ձուցի : Ասոյ : Ը ժ.թ . 5 :

Աստուծոյ իր ժողովուրդին համար ըրած  
մէծ գանգատներէն մէկն ալ աս է՝ “Խմ  
ժողովուրդս չ'մտմտար” : “Երյն բանը կ'ընեն  
անոնք ալ որ դեռ մեղաց մէջ են , չեն մտմր-  
տար թէ ինչ դէշ բան է մեղքը , եւ կամ ի-  
բենք ուր կը տանի . չեն խորհիր առ Աստուծ-  
ունեցած պարտաւորութիւններնուն վրայ ,  
թէ պարտաւոր են զինքը սիրելու . եւ իրեն  
ծառայելու : “Չեն խորհիր անոր իրենց վրայ  
և լնեցած իշխանութեանը վրայ , եւ ոչ ալ  
իր բարկութեանը տակն իյնալը որչափ ա-

Հարկու բան ըլլալուն վրայ : Ասղմոսեր-  
գուն կ'ըսէ թէ ինքը մտմտաց իր ճամ-  
բաներուն վրայ : Եւ ինքը նաեւ կը զբուցէ  
թէ ինչ է առ մտմտուքին արդիւնքը, “Դմ  
ոտքերս քու վկայութիւններուդ դարձու-  
ցի” : Ասղմոսերգուին օրինակին հետեւինք  
ու խորհինք մեր ճամբաներուն վրայ, ար-  
գեօք Աստուծոյ պատուիրանքներուն ճամ-  
բուն մէջ կը քալենք, թէ մեղաց ճամբանե-  
րուն մէջ . իր սէրը եւ օրհնութիւնը կը  
վայլենք, թէ ամեն օր իր բարկութեանը  
տակը կ'ապրինք . բռնած ճամբանիս մեզ  
յաւիտենական կենաց կը տանի, թէ յաւի-  
տենական մահուան : Առոք Նոգիին օգնու-  
թիւնը խնդրենք որ առ հարցումները ըրած  
ժամանակնիս խորհրդածութիւննիս շտկէ,  
եւ Աստուծոյ շնորհքովը Ասղմոսերգուին  
հասած արդիւնքին մենք ալ պիտի համնինք .  
ու ոտքերնիս Աստուծոյ վկայութիւններուն  
պիտի դառնան :

Տղայ մը թէ որ իր հայրը կը սիրէ, անոր  
 պատուիրանքներուն հնազանդիլն ալ կը սի-  
 րէ: Կը փութայ անոր կամքը կատարելու,  
 եւ հայրն ալ ասանկ զուարթութիւնով ե-  
 ղած հնազանդութիւնը կ'ընդունի իրբեւ  
 նշան իր վրայ ունեցած սիրոյն: Ի՞այց ասոր  
 հակառակը՝ թէ որ տղան ակամայ հնազան-  
 դի եւ առանց պատիժի որչափ որ կընայ ու-  
 շանայ, հայրը ասիկայ հնազանդութեան  
 տեղ չ'գներ, վասն զի սէրէ յառաջ եկած  
 չէ հապա պատիժի վախէ: Ասանկ ալ Աս-  
 տուծոյ պատուիրանքները. թէ որ զինքը  
 կը սիրենք, փութալու ենք եւ ուշանալու  
 չենք անոնք պահելու: Անք ամենքս շատ  
 անգամ անհնազանդութիւն ըրած ենք ի-  
 րեն եւ իր օրէնքները ձգած ենք. բայց թէ  
 որ հիմա անկեղծութեամբ զղջում ընենք  
 մեր անցած մեղքերուն վրայ, թէ որ զգանք  
 թէ Աստուած մեզի որչափ ողորմած եւ եր-  
 կայնամիտ է, թէ որ քիչ շատ իր սէրը կայ  
 սրտերնուս մէջ, փափաքանօք եւ ուրախու-  
 թիւնով ջանալու ենք իր պատուիրանքնե-  
 րուն հնազանդելու: Ամեն բանի մէջ մեր  
 կամքը անոր կամքին հնազանդելու է. թէ  
 որ դէպի իրեն ունեցած պարտաւորութիւն-  
 նիս պահանջեն որ մեր անձը ուրանանք,

անատենը աւելի աղէկ պատեհութիւն կ'ու-  
նենանք իր վրայ ունեցած սէրերնիս եւ հը-  
նազանդելու հաստատուն դիտաւորութիւն-  
նիս ցուցունելու, իր պատուիրանքները պա-  
հելու փութալով եւ չուշանալով։

---

## 22

Երանի է ձեզի երբոր կը նախատեն ձեզ  
եւ կը հալածեն, ուսուտ տեղը ամեն կերպ  
գէշ խօսքեր կը խօսին վրանիդ՝ ինծի համար։  
Անդիւ. 1. 11.

Նարդանքն ու նախատինքը հաճելի  
բան չէ. ցաւալի բան է հալածուիլը եւ բամ-  
բասուիլը։ Աս բաները քրիստոնեաներուն  
ալ ուրիշ մարդոց պէս ցաւալի կուդան. եւ  
սակայն ասոնք ան բաներն են, որ Քրիս-  
տոս առաջուց իր աշակերտներուն իմացուց  
թէ իրեն աշակերտութիւնընելովնին անոնց  
ենթակայ պիտի ըլլան։ Ի՞այց երանի տու-  
աւ աս բաները իրեն համար քաշողներուն.  
Երանելի են անոնք Քրիստոսի ետեւէն  
երթալնուն եւ իր չարչարանացը մասնակից  
ըլլալնուն համար։ Օառան իր Տէրոջմէն

մեծ չէ, եւ արդարութեան համար կրտծ հաւ-  
լածանքնին իրենց Տէրն ալ կրեց : Երանե-  
լի են անոնք, քանզի անանկով պատեհու-  
թիւն կունենան Քրիստոսի վրայ ունեցած  
սէրերնին յայտնելու, եւ ցուցունելու թէ  
անանկ ամուր կապուած են իրեն՝ որ հալա-  
ծանքն ու մահը կարող չեն իրենք անկեց  
զատելու : Երանելի են անոր համար որ պա-  
տեհութիւն կ'ունենան շնորհքին զօրու-  
թիւնը սրտերնուն մէջը ցուցունելու, որով  
կը կարողանան հեղութեամբ եւ համբերու-  
թեամբ հալածանք քաշել՝ բոլոր ուրիշ մար-  
դիկներուն շնմանելով : Ա երջապէս երա-  
նելի են անոր համար որ Աստուած ինքը իր  
սէրը եւ շնորհքը անոնց պարգևեւեց անոնք  
պահելու, եւ իրենց փորձութիւններովը ա-  
նոնք իր երկնոսին թագաւորութեանը  
պատրաստելու համար : Քրիստոս մարդոց  
պէս երանութիւն չ'տար, հալածման եւնե-  
ղութիւններու մէջ երանութիւն կուտայ :  
որու որ երանի կուտայ արդարեւ երանելի  
է ան՝ թէ հոս եւ թէ յաւիտենականութեան  
մէջ :

Ասկէց ետեւ ոչ ան տնկողը մէկ բան մընէ ու ոչ ան ջուր տուողը, հապա Աստուած որ աճեցուց: Ա. Կոռնիլ. գ. 7:

Երբոր Պօղոս դարձի եկաւ, ըսուեցաւ թէ ինքը ընտրուած աման մըն էր Քրիստոսի անունը կը ելու հեթանոսներուն՝ թագաւորներուն եւ Խորայէլի ժողովուրդին առջեւը: Իրեն յանձնուած պարտաւորութիւնները հաւատարմութեամբ կատարեց, Աստուած ալ իր աշխատութիւնները օրհնեց, եւ զինքը հեթանոսներէն շատերը Քրիստոսի եկեղեցիին մէջը ըերելու գործիք ըրաւ: Աս գործը անանկ ժրութիւնով կը գործէր, որ հաւատացեալներէն ոմանք սկսեցին չափէն եւել իրեն պատիւ տալ, եւ ուղեցին ինքզինքնին առաւել անոր աշակերտները անուանել քան թէ Քրիստոսի աշակերտները: Պօղոս շուտով աշխատեցաւ աս զգացումը խափանելու ։ չուղեց որ իրենք դարձի ըերելուն համար իրեն պատիւ մըտան: Ինքը եւ իր միւս ընկերները քան մըչին, հապա միայն Աստուած էր ամեն բան ընողը եւ բոլոր փառքը անոր տրուելու էր:

իմէ որ անանկ պատահի որ Եստուած շը-  
նորհք ընէ մեզ պատուելու, իր թագաւու-  
րութեանը մէջ մեզ օդտակար մարդիկ ը-  
նելով, շատ զգուշանալու ենք որ բոլոր  
փառքը իրեն տանք, որուն ալ որ կը վայլէ:  
Անք մեզմէ կարողութիւն մը չունինք մեր  
ընկերներէն մէկուն ներսիդին մէկ բարի  
խորհուրդ մը կամ բարի զգացում մը առաջ  
բերելու, ու թէ եւ Եստուած անոնք դար-  
ձի բերելու համար մեզ իրրեւ գործիք գոր-  
ծածէ, բայց ան գործը իրենն է իրրեւ թէ  
մեզ ամենեւին չ' գործածեց: Ինքը միայն  
իշխանութիւն ունի մարդոց սրտերուն վրայ  
ինչու որ Առորք Հոգին իրենն է, եւ բոլոր  
գովութիւնը իրեն տալու է, մենք խոնար-  
հութեամբ փառք տալու ենք իրեն, որ կը  
թողու մեզ իրեն համար՝ աշխատելու, եւ  
մեզի յոյս կուտայ մեր աշխատութեան պա-  
րապը չերթալուն:

Հաւատքով Առվակէս երրոր մեծցաւ՝  
չուզեց Փարաւոնի աղջկանը որդի ըսուիլ,  
աղէկ սեպեց Եստուծոյ ժողովութին հետ

շարչարուիլ, քան թէ մէկ ժամանակ մը  
մեղքի մէջ վայլել։ Եբ՝ ձ. 24, 25։

Ո՞վսէս հարստութիւններով եւ պատ-  
ռուով մեծցաւ։ Փարաւոնի աղջկանը որդե-  
գիրը ըլլալով Եգիպտոսի պալատին փառ-  
քը կը վայլէր։ Եգիպտացւոց բոլոր իմաս-  
տութիւնովը կը թուեցաւ եւ հանգիստ  
կեանք մը կրնար անցունել, թադաւորի մը  
որդիի հարստութիւնովը եւ պատուովը պա-  
տաճ, որ մարդուս ամենէն փափաքելի բա-  
ներն են։ Իսյց Վովսէս թողուց բոլոր աս  
փառքերը ու Փարաւոնին տունէն ելաւ,  
եւ խեղճ տառապեալ Խորայէլացւոց վի-  
ճակակից եղաւ, որ անատենը Եգիպտոսի  
մէջ գերի էին ու սաստիկ կ'աշխատէին։  
Ես ընտրութիւնը Եգիպտացւոց շատ տար-  
օրինակ բան մը երեւցած պիտի ըլլայ։  
Վարդու մը իր հանգստութիւնը՝ պատիւը՝  
փառքը՝ եւ արքունի ընկերները՝ աղքա-  
տութեան համար եւ գերիներու հետ ըն-  
կերանալու համար ձգելը իրենց շատ մեծ  
խենդութիւն երեւցած պիտի ըլլայ։ Իսյց  
Վովսէս մէկ անանկ աչք մը եւ տեսու-  
թեան կարողութիւն մը ունէր որ անոնք  
չ'ունէին։ Հաւատքին աչքովը Եգիպտո-

սի պալատականներուն փառքին վրայ նաշյեցաւ, եւ տեսաւ որ իրաւցունէ ոչինչ են: Կիտցաւ որ անոնք ճշմարիտ մոքի խաղաղութիւն չեն կրնար տալ հոս առաջնարհիս մէջ, եւ աս կարծը կեանքս ալ անցնելէն ետեւ յաւիտեան պիտի կորսուին: Խայց ան գերիները որոնց վիճակը ընտրեց, Աստուծոյ ժողովուրդն էին. ինքը գիտէր թէ Աստուծոյ շնորհքը աշխարհիս բոլոր գանձերէն եւել է. գիտէր ալ որ թէպէտ Եղիպտոսի թագաւորութիւնը թողուց, բայց մէկ լաւագոյն թագաւորութիւն մը պիտի շահի երկնից մէջ յաւիտեան: Հաղարաւոր տարիներ եղաւ որ առ երկնային թագաւորութիւնը կը վայլէ, ու իր ընտրութեանը վրայ չ'զղջար:

Եւ երբոր նեղութեան մէջ ինկաւ իր Տէր Աստուածը խնդրեց, եւ իր անձը իր հայրերուն Աստուծոյն առջին շատ խոնարհեցուց: Ի Անաց. 19. 12:

Պատօսքերը Հրեաստանի թագաւոր

քին Վանասեին վրայօք խօսուած են: Իր հայրերուն Աստուծոյն դէմ մեծ մեղք մը գործեց, եւ Աստուծած պատժեց զինքը, թող տալով որ Ասորիներուն թագաւորը յաղը թէ զինքը ու Խարելոն գերի տանի: Երբորասնեղութեան մէջը ինկաւ, սկսեց խորհիլ եւ աղօթք ընել. Աստուծած իր աղօթքը լսեց, ու ետքը նոր վարք մը բռնելով իր ապաշխարութեան անկեղծութիւնը կը յորդորէ մարդիկ որ Աստուծոյ աղաղակեն եւ իրմէն օգնութիւն խնդրեն: Հաջողութեան ժամանակնին զինքը կը մոռնան, եւ համարձակութեամբ մեղք գործել կը սկսին. կը խորհին թէ իրենք իրենցն են, եւ իրենց հաճութիւնները կատարելու են: Խայց երբոր գլխունուն նեղութիւն կուգայ, երբոր մեծ վախր մէջ կ'իյնան, եւ երբոր մահը աչքերնուն կը մօտենայ, անատենը կը սկսին Աստուծոյ աղաղակել: Կը տեսնեն որ շատ տկար են եղեր, եւ կ'աղաշեն իրեն որ ողորմի եւ իրենք փըրկէ: Խայց ափսոս որ քիչերը կան Վանասեին պէս բոլոր սրտով ինքզինքնին Աստուծոյ առջեւը խոնարհեցունող, եւ իրենց ետքի վարքով ճշմարտապէս ապաշխատը եւ-

Նին ցուցունող : Երբոր նեղութիւններնուն  
ազատին, բոլըր վախերնին մաքերնուն կ'ել-  
լէ . Աստուած կը մոռնան եւ նորէն մեղք-  
դործել կը սկսին : Ասանկներուն՝ նեղու-  
թիւնը անէծք է . բայց Ճշմարտապէս ինք-  
զինքնին Աստուծոյ առջեւը խոնարհեցու-  
նողներուն՝ նեղութիւնը օրհնութիւն կ'ըլ-  
լայ :

## 26

Եւ իր հօրը Աննասէին պէս չ'խոնար-  
հեցաւ Տէրոջը առջին . հապա աս Ամովիր  
իր մեղքերը շատցուց : Ը Անոց . 19 . 23 :

Ամովիր Աննասէին որդին, իր հօրը չա-  
րութեան օրերուն մէջ բռնած ճամբուն հե-  
տեւեցաւ : Աննասէն փորուած կուռքեր շի-  
ներ էր, եւ Ամովիր անոնց զոհ կը մատու-  
ցանէր : Բայց իր ապաշխարութիւնը հօրը  
պէս չ'ը բաւ : Աննասէ ինքզինքին դալէն-  
եւ Տէրոջը ծառայել սկսելէն ետեւ մեծ  
նեղութիւն իրած պիտի ըլլայ՝ տեսնալով  
իր որդւոյն չարութիւնը : Եւ շատ անգամ  
մէծ կսկիծ տուած պիտի ըլլայ իրեն աս-

խորհուրդը թէ ինք էր անիկայ մեղաց ճամ-  
բաներու մէջ քալելու կրթողը : «Օ՞սողք-  
ները շատ մեծ զօրութիւն ունին իրենց որդ-  
ոցը վրայ . եւ որովհետեւ սիրտը սկիզբէն  
իվեր եւելի չարին յօժար է քան թէ բա-  
րիին , վասն որոյ տղաքը շատ դիւրութեամբ  
իրենց ծնողացը չար օրինակին կը հետեւին ,  
քան թէ բարիին : Վ'եծ բան է մեք ընկեր-  
ին վրայ ասանկ մէկ իշխանութիւն մը ու-  
նենալը . կրնանք մեր օրինակովը անոնք մե-  
ղաց առաջնորդել , եւ հոգինին յաւիտեան-  
կործանելու պատճառ ըլլալ : «Օ՞սողքնե-  
րը շատ շնորհք խնդրելու են գէպի իրենց  
զաւկըներուն ունեցած պարտաւորութիւն-  
ներնին կատարելու համար : Իրենց բարքը  
շտկելու են . եւ թէ որ Աստուծոյ Հոգին  
հետերնին չըլլայ եւ իրենց զաւկըներուն  
սուրբ օրինակ մը ըլլալու իրենք չ'կարողա-  
ցունէ , կարելի է թէ Վանասէին պէս մեղք-  
երը շատցունող զաւակ մը ունենան վրան-  
ողբալու :

ըեսս քեզ Աստուծոյս դէմ վեր առնելու  
կը կարմբարկիմ, ինչու որ մեր անօրէնու-  
թիւնները դլուխներնէս վեր բարձրացան,  
և մեր մեղքերը մինչեւ երկինքը ելան:  
Եզ. թ. 6:

Ասոնք էին Եղոասին ըրած աղաղակները  
Խորայէլի ժողովուրդին մեղացը համար,  
որ մինչեւ անգամ Աստուծու մեծ ողոր-  
մութիւններ ընդունելուն ետեւ ալ գոր-  
ծեցին, ան որ իրենց գերութեան երկրէն  
իրենք ետ դարձուց, եւ թողուց որ տաճա-  
րը նորէն շինեն եւ իրենց երկրին մէջ հան-  
գըստանան: Ամեն ճշմարիտ ապաշխարող  
մեղաւոր Եղոասին ցուցուցած զգացումնե-  
րէն քիչ շատ կ'ունենայ, երբոր խորհի իր  
յանցանքին մեծութեանը վրայ, եւ ջանք ը-  
նէ անիկայ Աստուծոյ խոստովաննելու: Կը-  
զգայ որ յիրաւի իր մեղքերը մինչեւ երկին-  
քը բարձրացած են: Աստուծած միտքը չ'ըե-  
րելու անցուցած օրերուն մէկուն մէջ գոր-  
ծած մեղքերը անգամ չ'կրնար համրել: Աս-  
տուծոյ օրէնքը եւ փառքը բոլորովին ձըգե-  
լով անցուցած օրերուն մէկուն մէջ ըրած բո-  
լոր մեղանչական խորհուրդները, իր սրտին  
չար զգացումները, եւ իր չար գործքերը

չկրնար համբել, ուր մնաց բոլոր իր կեանքին մէջը գործած մեղքերը : Ուստի ասանկ յանցանքի մէկ մեծ բեռով մը բեռնաւոր ուած ինտո՞ր կրնայ երեսը Աստուծոյ վերցունել : Աըխորհի նաեւ Աստուծոյ իրեն պարգեւած մէծ եւ բազմաթիւ ողորմութիւններուն վրայ, ու շատ կ'ամշնայ իր մեղքերը անոր առջին խոստովանած ժամանակը : Անատենը կը զգայ իր միջնորդին պատուականութիւնը, օրուն ձեռքովը կը բնայ Աստուծոյ մօտենալ : Ամենեւին չեր կրնար համարձակիլ ողորմութիւն խնդրելու, թէ որ Հիսուս Քրիստոս իր մեղքերը քաւած չըլլար, եւ թող տուած չըլլար անոր իր անունովը երթալու եւ բոլոր պէտք եղած օրհնութիւնները խնդրելու :

Եմ մէջս կեցէք՝ ու ես ձեր մէջը . ինտոր որ ճուղը ինքիրմէն պտուղ չկրնար բերել, թէ որ որթին վրայ հաստատուած չըլլայ, ասոր պէս դուք ալ թէ որ իմ վրաս հաստատուած չըլլաք : Յակա, յ.և. 4:

Πρερπορ μεղατορύνερρ «Πρήβιστουσի կը  
 ζաւտան, իրեն հետ կը միանան եւ իրմով  
 կ'ապրին : «Πρήβισտոս անոնք իրբեւ իրեննե-  
 րը կ'ընդունի . անոնք իր անդամերը կ'ըլ-  
 լան, եւ ինքը կը սնուցանէ եւ կը պահէ ի-  
 բենց մէջը եղած ան հոգեւոր կեանքը, որն  
 որ ինքը անոնց մէջ սկսեց : Խնչպէս որ որ-  
 թէն զատուած ճուղը իր մէջը զօրութիւն  
 եւ կեանք չ'ունի, անանկ ալ անոնք իրենց  
 մէջը զօրութիւն եւ կեանք չունին, եւ թէ որ  
 «Πρήβισտոսէ զատուին՝ կը մեռնին : Խնքն է  
 ամեն օր անոնց պէտք եղած շնորհքը տու-  
 ողը . իրեն նայելով է՝ որ սրտերնուն մէջը  
 սուրբ սիրոյ բոց մը կը հրահրի . ինքն է ա-  
 նոնց տկար հաւատքը զօրացունողը : Իրմով  
 միայն կրնան աշխարհիս՝ մարմինին եւ Այ-  
 տանային փորձութիւններուն դէմ կենալ .  
 իրեն երթալով կը դգան որ մեղքերնիններ-  
 ուած է, եւ խաղաղութիւն կը գտնեն : Խն-  
 քը կը զօրացունէ բոլոր անոնց սուրբ դի-  
 տաւորութիւնները, եւ իրմով միայն յոյս  
 ունին : Որչափ սրտանց որ անոր փաթ-  
 տուին, այնչափ շուտով շնորհքի մէջ կ'ա-  
 ճին : Ը արունակ անոր հետ հաղորդութիւն  
 մը ունենալովին անոր պատկերին կերպա-  
 րանակից կ'ըլլան : Եւ աշխարհիս մէջ ու-

Նեցած աս միաւորութիւննին, Երկինքին մէջ  
ունենալու ապագայ յաւիտենական միա-  
ւորութիւններնուն գրաւն է։ Աշխարհին  
եւ գժողովքին զօրութիւնները կարող չեն  
ճռւղերը կենդանի որթէն զատել։

## 29

Յսով իմ Հայրս փառաւորուեցաւ, որ  
դուք շատ պտուղ բերէք, ու իմ աշակերտ-  
ներս ըլլաք։ Յահն. ձ. 8։

Վրիստոս՝ դեռ որ աշխարհին մէջն էր,  
իր գործը Հօրը կամքը կատարելն էր, առ  
մեծ բանով։ Յստուած կը փառաւորուէր։  
Եւ ինքը մեղաւորները կը փրկէ եւ անոնք  
կը նորոգէ, որ անոնք ալ աս դիտաւորու-  
թեանը համար ապրին։ Իմէ որ Վրիստո-  
սի աշակերտներն ենք, շատ պտուղ բե-  
րելու ենք Յստուծոյ փառքին համար։ Իմէ  
որ սուրբ Վարք մը ունենանք, թէ որ ջա-  
նանք կատարեալ համաձայնութիւն ունե-  
նալու Յստուծոյ օրէնքին հետ, թէ որ աշ-  
խատինք մեր ընկերին բարիք ընելու, թէ  
որ մեղքի վրայ ողբանք, եւ անկեց զգուշա-

նանք, Աստուած կը փառաւորենք : Այսր գիկ շնորհքին ըրած գործքերը կը տեսնան, եւ Աստուած կը փառաւորեն : Ծէ որ ՚Քրիստոսի նմանինք, թէ որ իր Հոգին ունենանք եւ իր օրինակին հետեւինք, անանկով մեր Փրկիչ Աստուծոյն աւետարանը ուրիշներուն առջին սիրելի եւ գովելի կ'ընենք . եւ մեր բարի գործքերը տեսնելով մեր Արքնաւոր Հայրը կը փառաւորեն . ասանկով ՚Քրիստոսի աշակերտները կ'ըլլանք : Կս փորձը մեզի տուաւ՝ որ իմանանք թէ արդեօք իրենն ննք, թէ արդեօք Աստուծոյ փառքին համար շատ պատւղ կը բերենք : Չէ՝ թէ որ մեր բարի գործքերովը արքայութեան արժանանալու յոյս մը կը ընանք ունենալ, աս անհնարին բան է, վասն զի Կսառածաշունչը կ'ըսէ թէ Փրկութիւնը միայն շնորհքէն է . բայց թէ որ ՚ներսիդինիս հոգեւոր կեանք մը ունինք, անիկայ մեր գործքերովը ցուցունելու ենք : Ծէ որ ՚Քրիստոսի Հոգին ունինք իր ոտքերուն քայլերուն հետեւելու ենք :

**ՉԵ** թէ դուք իս ընտրեցիք, հապա ևս  
ձեզ ընտրեցի՝ ու դրի ձեզ, որ դուք եր-  
թաք եւ պաղաբեր ըլլաք՝ ու ձեր պառուղը  
մնայ: Համար ծ. 16:

**Ա**յէ թէ մեզք Վրիստոս ընտրեցինք:  
մենք իրմէն մոլորած մեղքով կ'երթայինք,  
եւթէ որ մեզ ինքիրեննուս թողուր, մեղք  
գործելով պիտի երթայինք մինչեւ որ յու-  
սահատութեան ան խաւար աշխարհքը հաս-  
նէինք: Իսայց ինքը ողորմեցաւ եւ իր սէրը  
մեզի ցուցուց, մահուան ճամբան բռնող  
գացող բազմութենէն մեզ ընտքեց, եւ միտ-  
քը դրաւ մեզ փրկել: Իր Սուրբ Հոգին  
խրկեց մեր աչքերը բանալու, որ մեր գա-  
ցած ճամբան եւ անոր վախճանը տեսնենք:  
Վեր մեղքերը եւ անօգնականութիւնը մե-  
զի զգալ տուաւ, եւ ետքը ցուցուց որ ինքը  
կարող է եւ կամեցող մեզ փրկելու: Վեր  
աչքերը բացաւ, որ սրբութեան գեղեցկու-  
թիւնը տեսնենք, եւ անոր ետեւէն ըլլանք:  
Խր փառաւոր բնութիւնը մեզի յայտնեց, եւ  
մեզի իմացուց թէ ինքն էր ան մէկ հատիկ  
սիրելին: Ուշ որ Ճմարիտ իր աշակերտնե-

րըն ենք, իր մեղ ասանկ ընտրելովը եւ շատ պառուղ բերելու սահմանելովը եղանք։ Այս այն մեր ապահովութեանը եւ երջանկութեանը համար չէր որ մեղընտրեց, հապա Աստուած փառաւորելու համար։ Այս Տէր Յիսուս Քրիստոսի մեղի ցուցուցած շնորհքը կարող չենք խօսքով ցուցունել։ Իրն է մեր փրկութեան փառքը, սկիզբէն մինչեւ վերջը ինքը փրկեց մեղ, ինքը մեղընտրեց, ինքը մեղնորէն ստեղծեց, եւ ինքը վերջապէս մեղ վերը իր հօրը բնակարանը պիտի տանի, իրբեւ յիշատակարան իր սիրոյն զօրութեանը։ Եւ յաւիտեանս յաւիտենից քոլոր փառքն ու պատիւը իրեն պիտի մատուցանենք։



ՄԵՊՏԵՄՐԵՐ

1

Աստուծոյ զոհը կոտրած հոգին է . կոտրած ու խոնարհ սիրտը՝ ով Աստուծած չես անարդեր : Առաջ . օւ . 17 :

Ա Յ Ն Ո Ւ Ր Ա Խ Ա Մ Ա Ր մեղքերուն համար մեկ մեծ զոհ մը եղաւ . եւ ալ ասկէց ետեւ պարապ բան է խորհիլը՝ թէ մեր մեղքերուն համար քաւութիւն մը կրնանք ընել : Չենք կը ռ ա ր մեկ պատարագ մը մատուցանել Աստուծոյ իբրեւ գործած մեղքերնուս փոխարէն : Պարապ բան է Աստուծոյ սէրը կը կին ձեռք բերելու յոյսով մարմիններնիս նեղելը , խիստ ճգնութիւններ ընելը , եւ կամ անձնուրացութեան գործ մը կատարելը . իր պահանջածը ասիկայ չէ : Իր Արդին մեղաց քաւութիւն ըրաւ , եւ ուրիշ քաւութիւն մը ընելու աշխատիլը ղինքը անպատիւ ընել է : Բայց մեկ զոհ մը կայ , որն որ Աստուծած կը պահանջէ որ ի-

բեն մատուցանենիք Երբոր կ'երթանք Վ.ը-  
րիստոսի մատուցած ան մեծ զոհովը ծա-  
խու առնուած օրհնութիւնները ընդունե-  
լու : Աս զոհը կոտրած եւ ապաշխարող  
սիրտն է . Աստուած միայն աս զոհը մատու-  
ցանողներուն կ'ողորմի : Ո՞եզմէ մեկ արդա-  
րութիւն մը գործելը , խիստ ապաշխա-  
րանքներու տակ մասնելը , բոլորը պարապ-  
նն , հապա միայն ճշմարիտ զղջումն է ըն-  
դունելին . ապաշխարող սրտէ առաջ չե-  
կող պատարագներուն բոլորը Աստուծոյ  
զղուելի են :

## 2

Ինձի ասանեկ կ'երեւայ որ՝ աս ժամանա-  
կիս չարչարանքները արժանի չեն բաղ-  
դատուելու գալու փառքերուն , որ մեզի  
ոլիտի յայտնուին : Հառնչ , բ . 18 :

Պողոս աղեկ գիտէր աս ժամանակիս  
չարչարանքներուն ինչ ըլլալը : Ինք հա-  
սարակ մարդոցմէ շատ եւել բան քաշեց ,  
անոր համար աղեկ յարմարութիւն ուներ  
անոնց վրայ գատողութիւն ընելու : Եւ

ինքը զգաց թէ անոնցմէ ետեւ դալու փառքին հետ բաղդատուելու արժան չեն : Ասկեանքիս չարչարանքները որչափ սաստիկ եւ շատ աւ ըլլան, քիչ կը տեւեն, վախճանը շուտ կուգայ . բայց երկնային փառքը յառիտենական է : Ասկեանքիս չարչարանքները ուրախութիւններով խառնուած են, որոնք անոնց սաստկութիւնը կը կակողցունեն, բայց երկնային փառքերուն հետ արտմութիւնն խառնուած չ'կայ անոր շատութիւնը . քիչցունելու համար : Ասաւ խարիստ մէջ քրիստոնէին քաշած չարչարանքները գլխաւորապէս մարմնաւոր են, որոնց մէջ տեղը միտքը կրնայ խաղաղ ըլլաւ : Բայց երկնից երջանկութիւնները ըլլաւ մէկ մարմնաւոր երջանկութեան մը չեն նմանիր, անոնք հոգեւոր են եւ մեր խելքէն շատ վեր : Ասանկ զուտ՝ հոգեւոր եւ յաւիտենական երջանկութիւններ ունինք առջեւնիս, անոր համար ոչինչ սեպենք առներկայ կեանքիս անցաւոր չարչարանքները :

Ղեղմէ մէկը որ նեղութիւն քաշէ՝ աղօթք թող ընէ . մէկը որ ուրախութիւն ունենայ՝ սաղմոս թող երգէ : Յա՞ , և , 13 :

Առաջի տեղ մը կայ , ուր որ բոլոր տառապեալները միսիթարութիւն կրնան գըտնել , որ է շնորհաց աթուը : Հոն տեղը մը խիթարութիւն փնտողներուն բնաւ մէկը պարտապը չելաւ : Ա նաս չունի թէ որչափ մէծ տրտմութիւն ըլլայ , կամ ինչ բանէ որ պատճպոած ըլլայ : Թող տառապեալը իսկոյն իր Երկնաւոր հօրը երթայ՝ Փրկչին անունովը , եւ բոլոր իր ցաւերը անոր տոջին թափիէ ու իրմէն միսիթարութիւն խընդրէ , ու թող հաստատ դիտնայ որ պիտի ընդունի : Աստուած աղէկ դիտէ տրտմած սիրտերը միսիթարելու ճամբան . ինքը կը թնայ անոնց զգացունել թէ իրենց հաւատարմութիւնն էր իրենք ան նեղութեան մէջ ձգողը : Ինքը կը նայ ցուցունել անոնց ան խոստմունքին պատուականութիւնը , թէ ամեն բան Աստուած սիրողներուն օդտին համար կ'ըլլայ . կը նայ անոնք անանկ ռւրախացունել իրմով՝ որ իրենց նեղու-

թիւնները մօռնան : Օանազան կերպերով  
առատ մխիթարութիւն կրնայ տալ եւ պի-  
տի տայ բոլոր իրմէն խնդրողներուն : « Առյն-  
պէս եւ սրտերնիս ուրախութիւնով լեցու-  
ած ժամանակն ալ Աստուծոյ երթալու  
ենք . անատենը փառաբանութեան երգե-  
րով իրեն երթալու ենք : Խնքն է ամեն  
բարութիւններուն աղբիւրը , եւ ուրախա-  
ցած ժամանակնիս իրեն երախտագիտու-  
թիւն մատուցանելու ենք . անատենը բո-  
լոր ուրախութիւններնիս պիտի շատնան  
եւ մաքրուին : Ուէ որ միշտ աս կերպով  
Էստուծոյ մօտենանք , թէ տրամութիւնը  
եւ թէ ուրախութիւնը մեզ օրէ օր առաւել  
եւս պիտի մօտեցունեն իրեն , եւ մեզ իր  
երկնաւոր թագաւորութեանը մէջ մանե-  
լու պիտի պատրաստեն :

## 4

Եւ պատերազմէ հաւատքին աղէկ պա-  
տերազմը : Ա . Տէմ . Զ . 12 :

Քրիստոնեայն Քրիստոսի թագաւո-  
րութեանը կանչուած չէ հանդիսատ նստելու

եւ իրեն գործը նայելու : « Բանի որ աս աշխարհիս մէջն է՝ իր կեանքը շարունակ պատերազմով պիտի անցունէ . իր թշնամիները շատ են եւ ուժով , ու շարունակ ըդգուշութիւն ընելու է , թէ չէ կը յաղթուի : Սէ թէ միայն ինքնինքը պաշտպանելու է , հապա ձեռքէն եկածը ընելու է իր թշնամիները յաղթելու համար : Խր ամենէն զօրաւոր թշնամիներէն մէկը իր սիրտն է . երբոր նորէն կը ծնի իր ներսիդին եղած մեղքին զօրութիւնը բոլորովին չ'յաղթուիր . եւ թէպէտ իրօք սրբութեան ետեւէ է , սակայն տակաւին իր սիրտը շատ անգամ զինքը մեղաց մէջ կը ձգէ : Վրդարեւ շատ անգամ այնչափ չարութիւն կը դանէ իր սրտին մէջ , որ աղաղակելը կուգայ թէ « Հս մէկ խղճալի մարդ մընեմ , ով իս պիտի խալսէ աս մահացու մարմինէն » : Հառնէ :

Ե . 24 : Ո՞էկ ուրիշ թշնամին ալ Աստանան է , որ միշտ բոլորտիքնիս կը պտըտի դռացող առիւծի մը պէս եւ կը նայի թէ ով կը նայ կը լլել : Խր թշնամիներէն մէկն ալ աշխարհս է , որ իր գեղեցկութիւնները առջին կը թափէ , եւ կը դրդէ զինքը անբարեկամութիւնը ընելու իրեն հետ , որ Վատուծոյ դէմ թշնամութիւն է : Քայլ

թէ որ քրիստոնեայն ուղիղ կերպով պատերազմի աս պատերազմը, գիտէ թէ անշուշտ պիտի յաղթէ: Հաւատքին աղէկ պատերազմը պատերազմելու է: Հաւատքը իւրեն մէկ վահան մըն է թշնամիին բոլոր յարձակումներուն դէմ: Հաւատքով ամենակարող զօրութիւն մը կ'ունենայ ձեռքը, որով իր թշնամիները կը յաղթէ: Հաւատքը կը ցուցունէ իրեն, թէ իր կողմը եղողները իրեն դէմ եղողներէն շատեն, եւ ասով շատ կը քաջալերուի: Հաւատքը կը պահէ զինքը մինչեւ իր վերջին թշնամիին յաղթուելուն, եւ իր յաղթութեան ուրախութիւնը վերի Ախօն լեռանը վրայ կընէ:

## 5

Եկէք ինծի բոլոր հոգնած եւ բեռնաւորուածներ, եւ ես ձեզ կը հանգչեցունեմ: Անտէ. Ժ. 28:

Աս աշխարհս հոգնածներով եւ բեռնաւորուածներով լեցուն է: Հատերը կը հոգնին խաղաղութիւն եւ երջանկութիւն

դանելու : Իրենց մէջը մէկ երջանկութիւն  
մը չեն դաներ , եւ շարունակ կ'աշխատին  
հարստութիւնով զբօսանքով եւ պատուով  
փափաքներնուն հասնիլ : Այ թէպէտեւ  
շատ կը հոգնին ու կը բեռնաւորուին , բայց  
իրենց աշխատանքը պարապը դացած կը-  
դանեն : Շատերը յանցանքնին զգալով  
բեռնաւորուած են . գիտեն թէ գործած  
մեղքերնին անթիւ է , ու կը հոգնին անոնք  
քաւելու եւ արդարութիւն գործելու ու  
անով անոնք ծածկելու : Ասոնք՝ ինչ եւ  
իցէ կերպով հոգնածներն ու բեռնաւոր-  
ուածները Փրկիչը սիրով եւ ողորմութիւ-  
նով կը կանչէ ըսելով , ինձի եկէք եւ ետ-  
ձեզ կը հանգչեցունեմ : Հիսուս միայն  
կընայ վերցունել մեղաւորներուն վրայ  
ծանրացած յանցանաց բեռը : Ան բեռը ինք  
իր վրան կ'առնէ , եւ խաչափայտին վրայ  
թափած արիւնովը անիկայ կը քաւէ : Իր  
արդարութիւնովը օրէնքին պահանջածնե-  
րը կը հատուցանէ , եւ յանցանաւոր մեղա-  
ւորը իր բեռէն արձեկուած հանգստու-  
թիւն կը դանէ : Ալ անկէց ետեւ չաշխա-  
տիր իր բարի գործքերովը երկնային թա-  
գաւորութիւնը ձեռք ձգելու , հապա՞րիս-  
տոսի արդարութեանը կը նայի , անիկայ իրեն

բառական սեպելով։ Էւ անկէց ետեւ չաշխատիր լոկ աշխարհիս բարութիւններովը երջանկութիւն գտնելու, հապա իր Էստուծոյն եւ Փրկչին հետ հաղորդակցութիւն ընելով եւ յաւիտենական կենաց փառաւոր յոյսովը ճշմարիտ խաղաղութիւն կը գտնէ։ Ո՞վ թէ ամեն հոգնածներն ու բեռնաւորուածները քրիստոսի աս հրաւերքին ականջ կախէին, եւ իրեն գային ու հանգչէին։

## 6

Տէրոջը գործքերը պիտի պատմեմ, բայց որ քու առջի հրաշքներդ կը յիշեմ։ Ապող. Հ1. 11։

Էստուած իր սուրբ Գրոցը մէջ պատմած է մեղի՝ մարդոց ըրած իր սքանչելի գործքերէն մէկ քանին։ Պէտք է որ շատ անգամ կարդանիք եւ խորհինք Տէրոջը ըրած հրաշքներուն լրայ։ Անոնցմէ Էստուծուծոյ ընութեանը լրայօք շատ բաներ կրնանք սորմիլ, եւ անոնցմէ խրատ տուող

եւ քաջալերող շատ դասեր կիրանկը առնել։  
 Աստուծոյ՝ մարդոց հետ վարուած ճամբա-  
 ներուն վրայ խորհրդածութիւն ընելով,  
 առաւել եւս կը հաստատուինք իր ճշմա-  
 րիտ ըլլալուն վրայ։ Իր խոստմունքներուն  
 եւ սպառնալիքներուն բնաւ մէկը չ'կա-  
 տարուած պիտի չ'մնայ։ ասանկ եղաւ հին  
 ատեններն ալ։ կ'ըլլար որ ուշացունէր,  
 բայց երբէք զանց չըբաւ վերջապէս իր  
 ըստածները կատարելու։ «Աաեւ անիկայ  
 սուրբ Աստուծած մըն է։ մեղքը իրեն  
 զզուելի բան է, եւ մինչեւ անգամ Ար-  
 քահամին՝ իր բարեկամին սերունդները ի-  
 րեն դէմ մեղանչելեուն համար կը դատա-  
 պարտէ։ Ինքը նաեւ ողորմած եւ երկայ-  
 նամիտ է։ իր գութը Խարայէլացւոց վրա-  
 յէն չ'պակսեցուց, թէպէտ շատ մեծ մեղ-  
 քեր գործեցին իրեն դէմ, բայց միշտ պատ-  
 րաստ էր անոնք ընդունելու, երբոր իրեն  
 դառնային։ Ինքը իր պատւոյն վրայ նա-  
 խանձուտ էր, երբոր մարդիկ իրենց զօրու-  
 թեանը վրայ պարծեցան եւ իրեն փառք  
 չ'տուին, անոնք մինչեւ հողը խոնարհեցուց,  
 ինչպէս որ ըբաւ «Այարուգողոնոսոր Աա-  
 բելոնի թագաւորը։ Իր ժողովուրդը իրեն  
 պատուական է։ անոնց համար թագաւոր-  
 ները յանդիմանեց, եւ իրենց թշնամինե-

քուն անոնց հետ խաղաղութիւնը ընել տուաւ : [Յ]է որ Աստուծոյ ժողովուրդէն ենք , մարդոց մեզի ըրածներէն վախնալու չենք :

## 7

Եսոնց ամենը իմ գլխում եկաւ : Օ՞՛հնու .  
լու . 36 :

Ասանկ աղաղակեց Յակոբ Յովսէփին  
իբ ամենէն սիրելի որդիին , ու Շմաւոնին  
զատուելուն եւ հիմա ալ Բենիամինը տա-  
նել ողելնուն համար : Իայց որչափ կար-  
ճատեսէ մարդս , աս դիպուածները՝ որոնց  
վրայ Յակոբ ասանկ կուլար ու սուգ կ'ընէր ,  
իր ընտանեացը փրկութեանը համար էին .  
Յակոբ աս բանը շուտով պիտի դիտնար :  
Իր Յովսէփ որդւոյն կորուստովը , որ գրէ-  
թէ իր մէջքը կոտրեց , Աստուած Խարայէլի  
ընտանիքին վրայ ունեցած բարի դիտա-  
ւորութիւնները կը կատարէր : Յովսէփ հի-  
մա Ազիպտացւոց երկրին վրայ իշխան էր .  
եւ շատ ցորեն ժողված էր Յակոբը եւ իր  
ընտանիքը ան մէծ սովորին ատենը կերակ-  
րելու համար որ ամեն տեղ եղաւ : Իր

ՃԵՌՔՈՎԸ ԲՊԼՈՐԸ ԽԴԻԱԼՄՈՍ ԵԿԱՆ . Եւ ՀՈՆ  
ՎՄՄՈՒԾՈՅ ՍՔԱՆԾԵԼԻ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆԸ Եւ ու-  
ղորմութեանԸ մէկ քանի գործերը երեւցան  
իրենց կողմէն , որոնք ան ժամանակէն վեր  
խրատական եւ քաջալերական դասեր եղան  
ամենուն : Վ մենատենապահով կ'ըլլանք մէ  
որ ինքզինքնիս եւ բոլոր սիրած բաներնիս  
ՎՄՄՈՒԾՈՅ ՃԵՌՔԸ դնենք : Վ նանկ դիալ-  
ուածներ կրնան պատահիլ որ մեզի մութ  
կ'երեւին եւ չենք կրնար հասկընալ , բայց  
ապահով ըլլալու ենք որ ՎՄՄՈՒԱԾ ամեն  
բան շիտակ կ'ընէ , եւ թէ որ զինքը կը սփ-  
րենք բնաւ մէկ բան մը մեզի դէմ չէ , հապա  
ամեն բան մեր օգտին համար կ'ըլլայ :

## 8

Ինչու որ ևս ճեր Տէր ՎՄՄՈՒԱԾը չեմ  
փոխուիր . անոր համար դուք ով Յակո-  
բին որդիները , չսպառեցաք : Անդ . գ . 6 :

Ճաէ որ մարդ մը խեղճ երեսէ ձգուած  
տղայ մը գտնէ ու դութը անոր վրայ շար-  
ժի եւ առնէ զինքը տուն տանի , ու միտքը  
չնէ որ զաւկին պէս նայի . թէ որ ան ար-

ղան ապերախտ եւ անհնազանդ ըլլայ , ի-  
րեն ցուցուած բարերարութիւնները իր  
բարերարին վնասին գործածէ , եւ երբեմն  
նրբեմն զոջալէն ետեւ կրկին նոյն յան-  
ցանքները գործելու ըլլայ , ալ տն մար-  
դուն համբերութիւնը կը հատնի , տղուն վը-  
րայ ունեցած դիտաւորութիւնները կը փո-  
խէ ու անիկայ բոլըրովին երեսէ կը ձգէ :  
Իսայց Աստուած մարդոց պէս չէ . անիկայ  
չփոխուիր անոր համար մենք ալ չենք ըս-  
պառիր : Ո՞խքը դրած է մարդոց որդինե-  
րուն ողորմիլ , եւ աս իր դիտաւորութիւնը  
քնաւ չփոխուիր ամենուն իր շնորհքները  
կուտայ եւ կ'ողորմի ամենուն թէ եւ շատ մե-  
ղաւոր ըլլան : Անոնց ըրած ապերախտու-  
թեանը համարիր դիտաւորութիւնները չը-  
փոխեր մինչեւ որ աս աշխարհիս մեջը ունե-  
ցած փորձուելու ժամանակնին վերջանայ :  
Քրիստոս միտքը դրած է հաւտացողները  
փրկելու , եւ քնաւ մէկ բանով մը պիտի չը-  
բարկանայ եւ իր դիտաւորութիւնը չփոխէ  
ու անոնք սպառէ : Շատ անդամ իրեն դէմ  
կը մեղանչեն եւ զինքը կ'արհամարհէն , բայց  
ինքը քնաւ անոնք երեսէ չ'ձգեր : Իրենց  
մեղքերուն համար շատ անդամ անոնք կը-  
յանդիմանէ , բայց իր սէրն ու բարերա-

ըութիւնը անսոնցմէ բնաւ ետ չքաշեր։ Անոնց վրայ ունեցած իր դիտաւորութիւնները բնաւ չփոխեր, մինչեւ որ ծախու առնուին լուացուին ու սրբուին յաւիտեանտիր առջեւը կենալու։

## 9

Արդ՝ թէ ուտէք՝ թէ խմէք՝ թէ ինչ գործ ալ որ ընէք, ամեն բան Աստուծոյ փառքին համար ըրէք։ Ե. Առքնլ., ձ. 31։

Աստուծոյ մեղմէ ըրած պահաջաջմունքները շատ ընդարձակ են։ Անոնք բնաւ մէկ բանով մը ամենեւին մերը չենք։ Անք ամեն զօրութիւններն ու կարողութիւնները իրենն են, մեր մարմնոյն ամեն անդամները իրն են եւ ամենքն ալ իրեն համար դործածուելու են։ Արպահանջէ մեղմէ որ զինքը պատուենք չէ թէ միայն աղօթք եւ փառաբանութիւն մատուցանելով, չէ թէ միայն իր եկեղեցւոյն սահմանադրութիւնները կատարելով, հապա մեր ամեն դործքերով։ Թէ ուտենք՝ թէ խմենք՝ թէ ինչ բան որ ընենք Աստուծոյ փառքին համար ընելու ենք։

Արտերնուս ամենէն մեծ փափաքը Աստու-  
ած փառաւորելը ըլլալու է . բոլոր մեր  
գործքերը աս կանոնովը ընելու ենք : Իր  
փառքին համար կերած ու խմած կ'ըլլանք  
թէ որ անկէց առած զօրութիւննիս իրեն  
համար գործածելու մտքով ուտենք եւ  
խմենք , եւ զինքը մեր ամեն աւուր հացը  
տուող ճանչնանք : Արնանք իր փառքին  
համար պարապ կենալ եւ զրօսանք ընել .  
թէ որ ան մտքով ընենք՝ որ անով մար-  
միննիս ու մտքերնիս աւելի զօրանան մեզի  
ինկած պարտաւորութիւնները կատարե-  
լու : « Կախախնամութեան պարգևները  
իր փառքին համար վայլած կ'ըլլանք , թէ  
որ անոնք իր ձեռքէն ընդունածի պէս՝ ի-  
րեն երախտաղիտութիւն եւ դոհութիւն  
մատուցանենք , եւ անոնք մեր եւ ուրիշնե-  
րուն օգտին համար գործածելու ըլլանք :  
Ո՞կ խօսքով ամեն բան Աստուծոյ փառ-  
քին համար ըրած կ'ըլլանք , թէ որ մեր  
ամեն օրուան պարտաւորութիւններնիս ի-  
րեն հաճելի կերպով մը կատարել փա-  
փաքինք , եւ խնդրենք որ օրհնէ մեր ըրած-  
ներն ու վայլած բաները :

Անոր համար ալ պէտք էր անոր բոլոր ովին եղայրներուն նման ըլլալ, որին քը ողորմած ըլլայ ու հաւատարիմ քահանայապետ Աստուծոյ կողմէն, ժողովուրդին մեղքերը քաւելու համար: ԵՅՅ. Ը. 17:

Աետարանին ցուցուցած փրկութեան ճամբուն կերպը չէ թէ միայն Աստուծ փառաւորուելու համար է, հապա մարդոց զգացումներուն եւ բնութեանն ալ յարմար է: Յիսուս Քրիստոս կրնար Աստուծոյ օրէնքը կատարել եւ մարդոց մեղքերը քաւել առանց այնչափ ժամանակ առ աշխարհիս մեջ պանդխտութիւն ընելու, բայց ուղեց ամեն բանով մեզի նման ըլլալ որ հաւտանք թէ կրնայ մեզի հետ ցաւակից ըլլալ, եւ իր վրայ կատարեալ վստահութիւն դնենք: Տղայ եղաւ եւ աղայութեան փորձութիւններուն համն առաւ, եւ հիմա փոքր տղաքները կրնան իրենց գլխուն եկած փորձութիւնները եւ ունեցած կարօտութիւնները իրեն իմացունել, վստահ ըլլալով որ ինքը կրնայ իրենց նե-

զութիւնները սդալ : Աղքատութիւն քա-  
շեց, անօթի մնաց եւ ցուրտին սաստկու-  
թիւնը անձամբ կրեց. շատ մեծ նախա-  
տինքներ եւ ատելութիւններ քաշեց: Այն  
փորձութիւններով Սատանայէն փորձու-  
եցաւ ու ալ հիմա կարող է ինչ եւ իցէ կերպ-  
ով նեղութիւն քաշողներու ցաւակից ըլ-  
ալ : Չէ թէ միայն մեղի նման եղաւ, այլ  
Ըստ ամօթ չ'սեպեր մեղ իրեն եղբայր  
կանչելը: Կը թողու որ իրբեւ եղբայր իրեն  
երթանք կատարեալ վստահութիւնով որ  
ինքը անձամբ փորձը առնելովը կարող է  
փորձանաւորներուս օգնել :

## 11

Ուստի ալ համարձակութիւնով մօտիկ-  
նանք անոր շնորհացը աթոռին առջեւը.  
որ ողորմութիւն ընդունենք՝ ու շնորհք  
դժնանք՝ պէտք եղած ատենը օգնելու:  
Եբք. Դ. 16:

Հայրը բարկացուցած տղայ մը չ'համար-  
ձակիր երթաւլու իրմէն բան մը խնդրելու:  
Թէ որ շատ անգամ բարկացուցած է զին-  
քը եւ ներում ու սէր խնդրած է, երբոք

կրկին հօրը դէմ յանցանք մը դործէ, ալ  
կը վախնայ եւ կ'ամչնայ նորէն երթալու եւ  
բան մը խնդրելու : Վեր դէպի Վստուծոյ  
ունեցած դգացումներնիս ալ բնականաբար  
տառնկ է . մեր մեղքերով զինքը շատ բար-  
կացուցած ենք, ի՞նչ համարձակութիւնով  
իրեն երթալու ու շնորհք խնդրելու ենք :  
Շատ անդամ մեղքերնիս իրեն խոստովա-  
նեցանք եւ իրմէն շնորհք խնդրեցինք, ու  
ինքը երկայնմասութիւն ցուցունելով մեղի  
շատ օրհնութիւններ պարդեւեց, սակայն  
կրկին շարունակեցինք իրեն դէմ մեղանչել-  
նիս . ալ կրնանք երթալու իրմէն թողու-  
թիւն եւ ողորմութիւն խնդրելու համար-  
ձակիլ : Չէինք կրնար թէ որ իր աթոռին  
առջեւը Վմենակարող միջնորդ մը՝ մէկ մէծ  
վահանացապետ մը չունենայինք, որ մե-  
զի պէս մէծ մեղաւորներուն անդամ մեղ-  
քերը քաւեց : Կենդանի է ան եւ մեղի ալ  
կողմնակից է՝ թէ որ ճշմարտապէս իրեն կը  
հաւտանք . մեր մեղքերը իր վրան առած  
է, եւ հիմա մեղ կը հրաւիրէ համարձակու-  
թեամբ իր շնորհաց աթոռին առջեւ եր-  
թալու եւ ինչ օրհնութիւն որ պէտք է  
խնդրելու : Իր արժանաւորութիւնովը ըն-  
դունելի կը լլանք, եւ թէ որ իր անունովը

ԵՐԺԱՆՔ ամենեւին վախի բան չունինք :

## 12

Ասկէց ետեւ ապաշխարութեան արժանաւոր պտուղ բերէք : Առաջն. գ. 8:

Պոկոնքներով ապաշխարութիւնընեւը դիւրին բան է . աս բանը ֆարիսեցիները եւ Սադուկեցիները կ'ընէին երբոր կուգային Յովհաննէսին մլրտուելու , բայց Յովհաննէս խրատեց անոնք՝ որ ապաշխարութեան արժանի պտուղ բերեն : Ամենքս ալ աս խրատը վրանիս առնելու ենք . թէ որ կը սենք թէ քրիստոս կը սիրենք , մեղքերնիս ալ ապաշխարելու ենք : Բայց ապաշխարութիւնը միայն պոկոնքով չըլլար . սրտով կ'ըլլայ եւ արտաքին դործքերովնիս կ'երեւայ . իր բերած պտուղները սրբութիւն ու Վատուծոյ բոլոր պատուիրանքները սիրեւը է : Թէ որ մարդ մը Վատուծոյ դէմ ըրած իր անցած ապերախտութեանը վըրայ կը զղջայ , սկսելու է շատ ֆառարանութիւն եւ դոհութիւն մատուցանել իրեն բոլոր իր ողորմութիւններուն համար թէ որ

կը զղջայ աղօթքը ղանց առնելուն համար՝  
սկսելու է բոլոր սրտով աղօթք ընել։ Ուշ  
որ կը զղջայ իր անձնասիրութեանը, եւ իր  
ընկերին օդտին չ'աշխատելուն համար,  
սկսելու է սիրել անոնք, եւ անոնց աղէկ-  
ութեանը համար աշխատիլ։ Ուշ որ իր  
սրտին հպարտութեանը համար կը զղջայ,  
Աստուծոյ առջեւը ինքզինքը շատ խոնար-  
հեցունելու է։ Ուշ որ կը զղջայ իր Փրկիչը  
ձգելուն համար, սկսելու է քննել իր փա-  
ռաւոր բնութիւնը, եւ աշխատիլ զինքը  
մարդոց առջեւը փառաւորելու։ Այէկ խօս-  
քով թէ որ Աստուծոյ այս ինչ պատուի-  
րանքը կոտրելուն համար կը զղջայ, աշխա-  
տելու է անկէց ետեւ ան պատուիրանքին  
հնազանդելու։

## 13

Ասկէց ետեւ ան հաւատքովը արդարա-  
ցած ըլլալով, խաղաղութիւն ունինք Աս-  
տուծոյ հետ՝ մեր Տէրոջը Հիսուս Քրիս-  
տոսի ձեռքով։ Հայով. և. 1:

Երբոր Աստուծոյ դէմ գործած մեր

յանցանքներուն մեծութիւնը ճանչնանք ,  
չենք կրնար իրեն հետ խաղաղութիւն ու-  
նենալ : Որ ատեն որ իր ներկայութեանը  
ելլենք խղճմտանքը միշտ մեզ պիտի յան-  
դիմանէ , եւ պիտի վախնանք ու դողանք իր  
գիմացը : Ոչ ալ մեր բարի գործքերովը կը ը-  
նանք յանցանքնիս ծածկել , եւ իրաւունք  
մը ունենալ Աստուծմէ ողորմութիւն խընդ-  
րելու : Չէ , մենք մեզմէ կորսուած մեղաւոր-  
ներ ենք , եւ անօդնական ու կորսուած պի-  
տի մնանք թէ որ մեր զօրութենէն կամ մեր  
բարութենէն զատ ուրիշ զօրութիւն մը  
կամ բարութիւն մը չունենանք : Վրիս-  
տոս բոլոր մեզի պէտք եղածները կ'ընէ , թէ  
որ իրեն հաւտանք . հաւատքով կրնանք ար-  
դարանալ : Անր արդարութիւնը Վրիստո-  
սի հաւտալնէ , եւ անով կրնանք Աստու-  
ծոյ առջեւը ելլել , եւ իրեն ընդունելի ըլ-  
լալ : Եւ երբոր հաւատքով արդարանանք ,  
Աստուծոյ հետ խաղաղութիւն կ'ունենանք .  
անատենը կը հաշտուի մեզի հետ՝ մեր Փրկչին  
համար , որուն ապաւինած ենք , եւ մար-  
դասիրութեամբ մեր մեղքերուն թողութիւն  
կուտայ եւ մեզ կը սիրէ : Անզի զգացունել  
կուտայ թէ մեղքերնիս ներուած են , անոր  
համար սրտերնիս կը հանգչի : Եւ մեր վայ-

լած խաղաղութեան յոյսն ուռարախութիւնը ամենքն ալ Քրիստոս Հիսուսով են: Ինքը կուտայ մեր բոլոր ունեցածները, եւ յաւիտեանս բոլոր միառքը իրեն տալու ենք:

## 14

Եսանկ ալ հաւատքը՝ թէ որ հետը գործ չունենայ, ինքը մինակ մեռած է: ՀՅԱԼ: Ես 17:

Արդիկ արդարացունող հաւատքը լոկ ճշմարտութիւնը հասկընալ եւ հաւտալ չէ. Ճշմարիտ հաւատքը սիրով կը յաջողի եւ սիրութը կը սրբէ: Աենդանի հաւատքին պըտուղը բարի գործքեր են. չէ թէ հաւատացեալը իր բարի գործքերովը փրկուիլ յուսալու է. քաւ լիցի: Աատարելապէս կը հաւտայ Եստուծոյ խօսքերուն, որ կ'ըսէ թէ Օրէնքին գործքերովը մէկ մարմին մը պիտի չարդարանայ: Արտով կ'ընդունի Եստուածաշունչին Քրիստոսի համար տուած վկայութիւնը, թէ Արկինքին տակը ուրիշ անուն մը չկայ մարդոց տրուած, որ անով կընանք փրկուիլ: Իայց քանի որ մի-

այն Կրիստոսով Փրկութիւն դանել կը-  
յուսայ Հաւատքը իր սրտին մէջը կը դոր-  
ծէ, եւ զինքը անանկ վիճակի մը կը հասցու-  
նէ որ բարի գործքեր կը սկսի ընել առ  
Ըստուած եւ առ մարդիկ: Իր ընկերը կը-  
սիրէ եւ անոր բարի ընել կ'ուզէ, Ըստ-  
ուած կը սիրէ, եւ զինքը փառաւորել կը-  
փափաքի: Ծա գործքերը՝ որ Հաւատքին բը-  
նական պառազներն են, կը ցուցունեն թէ իր  
սրտին մէջ Հաւատք կայ: Ոճէ որ մարդ մը  
կ'ըսէ թէ Կրիստոսի կը Հաւտամ ու տա-  
կաւին անոր պատուիրանքներուն անհնա-  
զանդութիւն կ'ընէ, կը ցուցունէ թէ ան իր  
Հաւատքը մեռած է, որ իր սրտին մէկ ազ-  
գեցութիւն մը չըներ, եւ հետեւապէս զին-  
քը պիտի չ'փրկէ: Ծն Հաւատքը Պատանա-  
ներուն Հաւատքին նման է, որոնք կը Հաւ-  
տան եւ կը սարսափին ալ բայց բնաւ սէր  
չունին:

Ով որ բոլոր օրէնքը պահէ, ու մէկ բա-  
նով մը ծոի, անիկայ բոլոր օրէնքներուն  
գէմ գործող կ'ըլլայ: Յակ. 1., 10:

Արդիկ երբեմն իրենց բարի գործքերով փրկուիլ կը յուսան։ Բայց աս կերպով փրկուելու համար՝ բոլոր կեանքերնուն մէջը Ըստուծոյ օրէնքը կատարեալ պահելուեն։ Ուշ որ մէկ բանով մը կոտրեն իր օրէնքը, անոր անէծքին տակն են ու ալ չեն կրնար ետքէն հեազանդութիւն ընելով ինքղինքնին անկեց ազատել։ Ուշ որ մէկ մարդ մը մարդասպանութիւն ընէ, բընաւ գողութիւն ընելը եւ կամ երկրին միւս օրէնքներէն մէկը երբէք չ'կոտրելը ցուցունելով չ'կրնար ազատիլ։ ոչ ալ անկեց ետեւ բարի վարք մը ունենալու գրաւը տալով կրնայ ազատիլ։ Արդասպան է եւ իրեւ մարդասպան օրէնքին պատիժը կրելու է։ Այնպէս Ըստուծոյ օրէնքը անգամ մը կոտրողը մեղաւոր է ու մեղաւոր պիտի մընայ, թէպէտ ան մէկ անգամէն զատ երբէք օրէնքին դէմ բան մը ըրած չըլսյ։ Որ եւ իցէ անհնազանդութեան գործին պատիժը մահ է, եւ մեղաւորը պիտի մըոնի թէ որ իր բարի գործքերէն զատ ուրիշ ճար մը չ'կըռնայ գտնել փրկուելու։ Իսայց մարդկային ազգին ամէն մէկ անգամը մեղանչած է՝ չէ թէ միայն անգամ մը հապա պինտ շատ անգամ, Ըստուած ըսաւոր սրտերնին շատ չար

է : Խնտ՞որ անյօյս ճամբայ է անոնց բռնած  
ճամբան, որոնք կը ջանան իրենցմէ արդա-  
րութիւն գործելու, եւ անով Աստուծոյ  
առջեւը ելլալու :

## 16

Ան ատենիր ժողովուրդը բանակը դար-  
ձաւ, եւ Խարայէլի ծերերը ըսին . Խնչու  
համար Տէրը մեզ այսօր Փղշտացւոց առ-  
ջին զարկաւ . Տէրոջը տապանակ ուխտին  
Անելովէն քովերնիս առնենք, ու մեր մէջը  
ըլլայ որ մեզ թշնամիներնուա ձեռքէն ազա-  
տէ : Ե. Խառնէ. Դ. Յ. Յ. :

Երբոր Տէրը բարկացաւ եւ Խարայէլա-  
ցիները թողուց՝ որ Պղշտացիներէն յալ-  
թուին, անմիջապէս սկսան մէկզմէկու պատ-  
ճառ հարցունել : Աստուած շատ անդամ ի-  
րենց կողմէն պատերազմեցաւ, եւ անոնք  
դիտէին թէ կարող էր աս անդամ ալ ի-  
րենց թշնամիներէն իրենք փրկել . անոր  
համար մէկ պատճառ մը եղած ըլլալու էր  
որ իրենք ձգեց որ յաղթուին : Աստուած  
շատ անդամ ըսաւ որ իրենց մեղքերէն դաս

ուրիշ պատճառ մը չկայ իրենք երեսէ ձրագելուն . ուստի պէտք էր որ իրենց սիրտերը քննէին , եւ ապաշխարութիւնով դային ու իրենց մեղքերը խոստովանէին անոր առջին ու թողութիւն եւ ողորմութիւն խընդրէին : Իսայց աս ընելնուն տեղը տապանակ ուխտին բանակը բերել տուին , խորհելով թէ անիկայ կրնայ իրենք ազատել : Իսայց Աստուած իրենց գործած յիմարութիւնը ցուցուց իրենց , թող տալով Փոշտացւոց որ տապանակ ուխտին ալ առնեն տանին : Անշակ Խսրայէլացիները չեն եւելի արտաքին արարողութիւններու եւ արտօնութիւններու վրայ յոյսերնին դնողները , քան թէ Աստուածոյ վրայ : Տակաւին շատ մարդ կայ խորհող թէ տեսանելի եկեղեցին հետ կապուած ըլլալով եւ անոր սահմանադրութիւնները կատարելով ապահով են : Եւ թէ որ գլխունուն վտանգ մըն ալ դայ , ապաշխարութիւնով Աստուածոյ երթանուն եւ իրմէն ողորմութիւն խնդրելնուն տեղը , ան սահմանադրութիւններուն կը վաղեն որ ապահովութիւն դտնեն : Իսայց Աստուած պիտի ցուցունէ ամեն մարդոց , թէ ինչ պարապ բանէ միայն իրեն ապաւինելնուն տեղը ուրիշ բանի մը եւ մինչեւ անգամ ինք իր ձեռքու-

վը դրած սահմանադրութիւններու ապա-  
հինիլը:

17

Առւրբ ու անարատ կրօնաւորութիւնը  
Աստուծմէ ու Հօրմէն՝ աս է, որբերուն ու  
որբեւարիներուն տես երթալ իրենց նեղու-  
թեանը մէջ. անձերնին անարատ պահել  
աշխարհէն: Հայի, 1. 27:

Աստուծաշունչին սորվեցուցած կրօն-  
քին մէկ գեղեցկութիւնն է աս, որ մարդոց-  
մէ կը պահանջէ չէ թէ միայն առ Աստուծ-  
ունեցած պարտաւորութիւննին, հապանա-  
եւ առ մարդիկ ունեցած արդարութեան եւ  
մարդասիրական պարտաւորութիւններնին  
զգուշութեամբ կատարել: Աս կրօնքը բը բը ո-  
նողները մեծ գութ ունին նեղեալներուն  
վրայ, եւ տառապեալները միսիթարելուաշ-  
խատիլը իրենց շատ հաճելի գործ մըն է:  
Վրիստոնեայ չէ ան մարդը, որ իր Ապր-  
դապետին նման չ'փափաքիր բարեգործու-  
թիւն ընելու, եւ նեղութեան մէջ եղողնե-  
րը միսիթարելուեւ հոգալու: Հայուս Բը-

ըիստոս մեծ դութ ունէր բոլոր նեղեալներուն վրայ, եւ աս նոյն իր հոգին իր աշակերտներուն մէջն ալ ըլլալուէ: Ի՞սկ քը քիստոնեայն չէ թէ միայն որբերուն եւ որբեւարիներուն տես երթալու է իրենց նեղութեան ժամանակը, չէ թէ միայն իր մարդասիրական պարտաւորութիւնները հաւատարմութեամբ կատարելու է, հապա ինքզինքը աշխարհքէն անարատ պահելու է: Քրիստոնեայները քանի որ աշխարհիս մէջն են աշխարհէս հեռու ըլլալու են, աշխարհիս նման ըլլալու չեն: Ըստարատ ըլլալու են աշխարհիս սովորութիւններէն՝ սկըզբունքներէն եւ զգացումներէն. անարատ ըլլալու են աշխարհիս անձնասիրութենէն եւ հպարտութենէն: Քանի որ մարդասիրական դործքեր կ'ընեն, աշխարհիս նման՝ պատիւ առնելու համար ընելու չեն, հապա սիրով շարժուած առ Ըստուած եւ առ մարդիկ: Ըստարատ մնալու են աշխարհիս սէրէն. մէկ խօսքով ցուցունելու են թէ առ աշխարհէս չեն ինտոր որ Քրիստոս ալ առ աշխարհէս չէ:

Ինչու որ ժամանակ է որ դատաստանը  
Վատուծոյ տունէն սկսի. եւ թէ որ առաջ  
մեզմէ կը սկսի, հապա անոնց վերջը ինչ  
պիտի ըլլայ՝ որոնք որ Վատուծոյ աւետարա-  
նին չ'հնազանդեցան։ Ա. Պէտք. Դ. 17։

Վուաքեալը հոս խնդիր մը կ'առաջարկէ,  
որուն ամեն մարդ աղէկ մտադրութիւն ը-  
նելու է։ Վարդիկ աս աշխարհիս մէջ աւե-  
տարանը մէկդի կը ձգեն. եւ աս ներկայ վի-  
ճակներնուն մէջ՝ Վատուծոյ ծառայողնե-  
րուն եւ չ'ծառայողներուն մէջ մէկ մեծ տար-  
բերութիւն մը չերեւար. եւ թէպէտ հի-  
մա ապահով կ'երեւան, բայց արդեօք միշտ  
ասանկ պիտի մնան։ Շուտով աս աշխար-  
հէս պիտի ելլեն, եւ անատենը հիմակուան  
պէ՞ս պիտի մնան. վերջերնին ինչ պիտի ըլ-  
լայ։ Վատուած աս հարցմունքներուն պա-  
տասխանը տուած է. յաւիտենական մա-  
հըն է իրենց վախճանը։ Վատուած անոնց  
սրտմտութիւն եւ բարկութիւն նեղութիւն  
եւ տանջանք պիտի հատուցանէ։ Խր դի-  
մացէն պիտի վռնտուին եւ իրենց գործքե-  
րուն պտուղը յուսահատութեան աշխարհին

մէջ պիտի քաղեն, ուր տեղի որդը չ'մեռ  
նիր եւ կրակը չ'մարիր։ Իրենց մէկ հատիկ  
Փրկիչը արհամարհեցին, եւ ալ հիմա իրենց  
մեղացը համար ուրիշ զոհ չ'կայ։ Ո՛վ թէ  
մարդիկ իմաստուն ըլլային, եւ աս բանը  
հասկընային ու իրենց վախճանը խորհեին։  
Իայց որոնց է աս դատապարտութիւնը։ բու-  
լոր աւետարանին չ'հնազանդողներուն։ Քը-  
րիստոնեայ կոչուիլը եւ Հիսուս Քրիստոսը  
Փրկիչ հաւտալը բաւական չէ։ Քրիստոսի  
պատուիրանքները պահելու ենք, աւետա-  
րանին բոլոր հրամաններուն հնազանդելու  
ենք, թէ որ կ'ուղենք վերջապէս երկնից  
թագաւորութեանը ընդունողներուն մէջն  
ըլլալ։

## 19

Կարձեալ երկնից թագաւորութիւնը  
արտի մը մէջ պահուած գանձի նման է, որ  
անիկայ մէկ մարդ մը դտնելով կը ծածկէ։  
Եւ ուրախութենէն կ'երթայ բոլոր ունե-  
ցածը կը ծախէ, ու ան արտը կը գնէ։ Առաջ-  
ա. Գ. 44:

Վարիստոսի աւետարանը մեզի դանձ մը  
 կը յայտնէ որնոր ամեն մարդ կրնայ առնել:  
 Անիկայ անհուն գնով դանձ մըն է, անանկ  
 դանձ մըն է ան, որ չէ թէ միայն մարմինը  
 կ'ուրախացունէ, հապա նաեւ անմահ հո-  
 գւոյն փափաքներն ալ կըլեցունէ: Չէ թէ  
 միայն մեզի քիչ մը ատեն օգուտ կ'ընէ, հա-  
 պա յաւիտենական փառք՝ պատիւ եւ երա-  
 նութիւն կը բերէ իր հետը: Ի՞ս աշխարհիս  
 մարդիկները աս դանձը չեն տեսներ, անի-  
 կայ անոնցմէ ծածկուած է. քովէն կ'անցնին  
 ու չեն կրնաք դանել: Բայց երբոր Աստու-  
 ծոյ շնորհքը կը դբդէ մարդ մը աս դանձը  
 փնտուելու, երբոր իր աչքերը կը բացուին  
 եւ անոր ճշմարիտ արժողութիւնը կը տես-  
 նէ, երբոր կատարելապէս կը հաւտայ թէ  
 աս դանձը կրնայ իրենը ըլլալ, ուրախու-  
 թիւնով կը լեցուի եւ պատրաստ է ամեն  
 բան ձգել անիկայ ձեռք բերելու համար:  
 Ի՞ս աշխարհիս բաները շատ սիրողները, եւ  
 կամ ամեն բանէ եւել անոր հարստութեա-  
 նը՝ պատիւին եւ զքօսանքին փափաք տուող-  
 ները չեն կրնաք աս դանձը ժառանդել: Ի՞ս  
 ետարանին դանձը դանող մարդը, անիկայ  
 իրենը ընելու համար աշխարհքը եւ բոլոր  
 իր փառքերը ուրախութեամբ կը ձգէ: Ի՞ս

թեն այնչափ սիրելի եղած բոլոր մեղքերը  
կը ձգէ . բոլոր իր հպարտութիւնը եւ ան-  
ձին արդարութիւնը կը թողու : Ամեն բան  
կը ձգէ եւ ՞րիստոսի կուգայ աս գանձը  
ստանալու համար , եւ շատ մեծ շահ մը կը  
սեպէ բոլոր աս բաները կորսնցունելովը ա-  
նիկայ ձեռք բերելը : Ուէ որ աս մեծ գանձը  
ստանանք , աշխատելու ենք անոր ճշմարիտ  
արժէքը ուրիշներուն ալ ցուցունելու , որ  
անոնք ալ անիկայ դժոնեն :

## 20

Իայց արդարներուն ճամբան ծագող  
լոյսին պէս է , որ քանի երթայ կը փայլի  
մինչեւ օր հասարակ ըլլայ : Առաջ : Դ . 18 :

**Չ**'կայ աշխարհիս մէջ մէկ արդար մը որ  
բարի գործէ եւ չ'մեղանչէ . բայց ՞րիստոսի  
հաւատքովը արդարացածներ կան եւ անոր  
շնորհքովը կարող են աշխարհիս մէջ աստու-  
ածպաշտութեան կեանք մը վարելու : Ասանկ  
մարդիկ աշխարհի լոյսն են , իրենց բոլորտիքը  
եղողներուն մեծ օգուտ կ'ընեն մեղաց խա-  
ւարը փարատելով եւ ճշմարտութեան լոյսը

Ֆագեցունելով : Իրենց վարքովը Կոստուծոյ մարդոցմէ պահանջած բնաւորութիւնը կը ցուցունեն . եւ առետարանին սկզբունքները իրենց գործքերովը ցուցունելով անոր լոյսը ասդին անդին կը տարածեն : Անոնք ծագող լոյսին պէս են , որ քանի երթայ կը փայլի մինչեւ օր հասարակ ըլլայ : Անոնք շնորհքով կ'աճին . կեանքերնին որչափ որ երկըննայ , այնչափ օրէ օր սուրբ եւ Կոստուծոյ նման կ'ըլլան : « Քանի որ աս Կոստուածային կենաց մէջ առաջ երթան , իրենց օրինակը այնքան օգտակար կ'ըլլայ . եւ ասանկ պիտի երթան օրէ օր աւելի « Քրիստոսի նման եւ աշխարհիս մէջ աւելի պայծառ լոյսեր ըլլալով , մինչեւ որ « Քրիստոսով կատարեալ մարդ ըլլան , եւ երկնից կատարեալ լոյսը վայլելու երթան : Կո է բոլոր հաւատքով արդարացողներուն վախճանը . եւ աս կատարելութեանը ամենքը ալ կրնանք հասնիլ եւ հաւատքին ձեռքովը անիկայ դժոնել թէ որ հաւատքով ապրինք :

**Տէրոջը բոլոր ճամբաները ողորմութիւն  
ու ճշմարտութիւն են, իր ուխտը ու պատ-  
ռւիրանքները պահողներուն։ Ասով. 1Ե. 10։**

**Աստուած աշխարհիս մէջ սեպհական ժո-  
ղովուրդ մը ունի. ինքը անոնց հետ ուխտ  
մը բրաւ. Խոստացաւ անոնց Աստուածը ըլ-  
լալ թէ որ անոնք ալ իր ժողովուրդը ըլ-  
լան։ Կրշնորհաց գանձերը բացաւ եւ խոստ-  
մունքով ու երդումով ինքզինքը պարտա-  
ւորութեան տակ դրաւ անոնք բոլոր իրեն  
հետ ուխտի մանողներուն եւ իր պատուի-  
րանքները պահողներուն պարգեւելու։  
**Ճշմարտապէս Աստուածոյ գաւկըները եղող-  
ներուն ամենքնալ ասուխտը բրած են. չեն  
խոստանար թէ իրենք իրենց կարողութիւ-  
նովը պիտի կատարեն իրենց կողմին ինկած  
դաշնաքը. բայց Քրիստոս՝ իրենց բարեկա-  
մը եւ եղբայրը, կը կատարէ անիկայ իրենց  
տեղը եւ անոնք մէկ են անոր հետ։ Ասու-  
ծոյ ուխտը կը պահեն Քրիստոսի միջնոր-  
դութիւնը ընդունելով, եւ ինքզինքնին անոր  
յանձնելով, եւ բոլոր իրենց կարօտութիւն-  
ները իրմէն խնդրելով, անոր զօրութիւնու-****

Քը Տէրոջը օրէնքները կը պահեն։ Բոլոր  
ասանկներուն Տէրոջը ճամբաները ողոր-  
մութիւն եւ ճշմարտութիւն են, եւ Վստ-  
ուած անոնք իրեն մեծ մարդասիրութիւ-  
նովը ու գթութիւնովը կ'առաջնորդէ։ Ըսէ  
որ անոնց նեղութիւն տայ չէ թէ իր բար-  
կութենէնէ, հապա անոնցօգուտին համար.  
Թէ եւ կրակով փորձուին, սակայն Վստ-  
ուած տակաւին ողորմութիւնով եւ ճշմար-  
տութիւնով կը վարուի անոնց հետ։ Խնքը  
խոստացած է զինքը սիրողներուն որ բարի  
բանի մը կարօտութիւն պիտի չ'քաշեն, եւ  
աս իր խոստմունքը կը պահէ։ Երբէք իր  
խոստմունքը չ'կատարելիք չըներ, եւ մենք  
պարտաւոր ենք անոր հաւտալ թէ եւ չենք  
իմանար ինչպէս ընելը։ Հնա ապաւինելու  
ենք, եւ ասկէց ետեւ պիտի նմանանք։ Եր-  
բոր արքայութիւն երթանք պիտի տես-  
նենք թէ Տէրոջը ճամբաները մեղի ողոր-  
մութիւն եւ ճշմարտութիւն եղան, եւ ա-  
նոր համար յաւիտեանս զինքը պիտի փա-  
ռաւորենք։

Ասոր համար մենք ալ Աստուծմէ կը գուհանանք անպակաս, որ մեզմէ Աստուծոյ խօսքը լսելով ընդունեցիք, չեթէ մարդոց խօսքին պէս, հապա Աստուծոյ խօսքին պէս ինչպէս որ ճշմարիտ է, որ յաջողուած ալ է ձեր մէջը որ հաւտացիք : Ա. թէն. բ. 13:

**Պ**օղոս պատճառ ունէր թռեսաղոնիկեցիներուն համար Աստուծոյ դոհութիւն տալու, որ ան կերպով ընդունեցին իրենց քարոզած խօսքը, ինչու որ հաստատ տեսաւթէ իր աշխատանքը պարապը չ'գնաց : Իւրենց քարոզուած խօսքը իրրեւ ճշմարտապէս Աստուծոյ խօսքը ընդունելովնին, իւմաստուն եղան փրկուելու, եւ այսպէս Աստուծ անոնց մէջ փառաւորուեցաւ : Հատմարդիկ Աստուծաշունչը կը կարդան կամ մտիկ կ'ընեն, ու շատ քիչ ազդուութիւն կ'ընդունին, եւ գլխաւոր պատճառը առ է որ անիկայ բոլոր սրտովնին իրրեւ Աստուծոյ խօսքը չեն ընդունիր : Թէ որ ամեն մարդ ճանչնար թէ Աստուծաշունչը յաւիտենական Աստուծոյ խօսքն է որ իրենց կը խօսի, այնշափ անհոգութիւն չէին կը ք

նար ցուցունել անոր խօսքերը կարդացած  
կամ մաիկ ըրած ժամանակնին։ Ուշ որ ա-  
նիկայ Աստուծոյ խօսքը տեպելով անոր ա-  
կանջ կախէին, անատենը երբոր ասանկ  
խօսքեր լսէին, այսինքն թէ “Աղանջող  
անձը պիտի մեռնի”։ կամ “Ուշ որ չապաշ-  
խարեք ամենքնիդ ալ պիտի կորսուիք”։  
“Հիսուս Քրիստոս աշխարհք եկաւ մեղա-  
ւորները փրկելու համար”, աս Ճշմարտու-  
թիւնները մէկ ականջներնուն պիտի չ’մըտ-  
նէր ու միւսէն ելլէր։ Գ անալու ենք միշտ  
ան զգացումը ունենալ Աստուծաշունչին  
վրայ, թէ Աստուծոյ խօսքն է որ մեղի կը-  
խօսի, եւ անիկայ իրեւ Աստուծոյ խօսքը  
ընդունելու ենք, որ անատենը մեր հոգի-  
ներուն յաւիտենական կեանք ըլլայ։

## 23

Տէրոջը ողորմութիւնովն է ոք չ’սպա-  
ռեցանք, վասն զի իր գթութիւնը չ’պակ-  
սիր։ Ուղ. Պ. 22։

**Չենք կրնար Աստուծոյ ողորմութեանը**  
**մեծութիւնը կատարելապէս իմանալ, մինչեւ**

որ մեր մեղացը մեծութիւնը չ'զգանք : Առւրբ  
 Հոգին միայն կրնայ կարողութիւն տալ առ  
 բանը ընելու , վասն զի մենք մեղմէ ընաւ չենք  
 տեսներ մեր յանցանքներուն շատութիւնը :  
 Ու որ մեղքերնիս համրել ուզենք դլխու-  
 նուս մաղէն շատ են . բայց Աստուած մեր  
 դործած բոլոր յանցանքները դիտէ : Իս-  
 լոր պիղծ եւ անձնասիրութեան զգացում-  
 ներնիս , բոլոր չար խորհուրդներնիս , բոլոր  
 պարապ եւ մեղանչական խօսքերնիս , ինքը  
 աղէկ դիտէ : « Յանի անգամ իր պատուի-  
 րանքները կոտրելնիս , քանի անգամ արդիլ-  
 ուած գործքեր գործելնիս աչքին առջեւն  
 են . եւ բոլըր աս բաները զինքը պինտ շատ  
 նեղացուցած են : Ամենէն մոքը մեղքը ի-  
 րեն շատ զզուելի է . ուստի ինտոր մեծ ո-  
 ղորմութիւն ցուցուց մեզի որ այսչափ ժա-  
 մանակ մեղ իր բարկութիւնովը չ'զարկաւ :  
 Վենք իր ձեռքն ենք , եւ մէկ խօսքով կը-  
 նայ մեղ յաւիտենական մահուան խրկել .  
 Բայց տակաւին մեզի կը համբերէ եւ ամեն  
 օր իր օրհնութիւնները կը պարզեւէ , վա-  
 սըն զի իր գթութիւնը անհատնում է : Ամեն  
 օր եւ ամեն ժամ Աստուծոյ մեծ ողորմու-  
 թեանը փառաբանութիւն կարդալու ենք .  
 եւ յաւիտեանս պիտի տեսնենք որ իրեն

բաւական դոհութիւն չենք կրնար տալ,  
վասն զի իր ողորմութիւնները յաւիտեանս  
կը մնան :

## 24

Ինչու որ մենք Քրիստոսի մասնակից ենք  
դանք, միայն թէ ան հաստատութեան սկիզ-  
բը մինչեւ վերջը պինտ բռնենք : Եբբ, Դ. 14:

**Ը**ստ սքանչելի արտօնութիւններ են  
Ճշմարիտ քրիստոնէին տրուած արտօնու-  
թիւնները . եւ շատ բարձր պատիւններ են  
իրեն շնորհուած պատիւնները : Հիսուս Քր-  
իստոս՝ Աստուծոյ Որդին անոնք իրեն հետ  
մէկ ըրաւ . իրենց մէջը կը բնակի եւ անոնք  
բռլոր իրեն ունեցածներուն մասնակից են :  
Ասիկայ շնորհաց մէկ գաղտնիքն է, բայց  
Աստուած մեզի յայտնեց, եւ թէպէտ չենք  
կրնար կատարեալ հասկրնալ, սակայն կը ք-  
նանք հաւտալ՝ սքանչանալ եւ փառարանել :  
Թէոր ճշմարիտ հաւատացեալ ենք Քրիս-  
տոսի բոլոր լիութեանը մասնակից ենք, եւ  
բնաւ պակսութիւն մը չունինք : Անք թը բ-  
ռւառ մեղաւորներ ենք, բայց իրեն հաւ-

տալով իր արդարութեանը մասնակից կ'ըւ-  
լանք, եւ անով հագուած կրնանը առանց  
երկիւղի Աստուծոյ առջեւը ելլել։ Վենք  
տկար եւ յանցաւոր ենք, բայց ինքը մեղ իր-  
սրբութեանը հաղորդ կ'ընէ. մեր մէջը կը-  
ընակի, եւ մեղքին զօրութիւնը կը յաղթէ  
ու մեղ իրեն նման կ'ընէ։ Վասնակից ենք  
ան սիրոյն, որով Հայրը զինքը կը սիրէ։  
Վեղ իրենները եւ իրեն նմաններ կը կո-  
չէ, եւ Հայրը մեղի սիրով կընայի։ Իր ժա-  
ռանգութեանը մասնակից ենք. մենք իրեն  
հետ ժառանգակից ենք, եւ իր փառքին ալ  
մասնակից պիտի ըլլանք։ Ինքը կ'ուղէ որ իր  
հետը ըլլանք եւ իր փառքը տեսնենք, եւ  
ինքը խոստացաւ որ մենք իր հետը իր աթո-  
ռը նստինք։

## 25

Բայց յուսոյ Աստուածը ձեղ լեցունէ  
քոլոր ուրախութիւնով եւ խաղաղութիւ-  
նով, որ առատանաք յուսով՝ Հոգւոյն։  
Արբս զօրութեամբը։ Հասն, ԺԵ, 13։

ՅՍԱԸ մարդուս ընական է, յոյսն է զին-

քը իր ներկայ նեղութիւններուն մէջ մսի-  
 թարողը, եւ զինքը աշխատութեան շարժո-  
 ղը: Իսայց Ճշմարիտ քրիստոնէին մէկ ար-  
 տօնութիւն մըն է յուսով առատանալը.  
 յուսոյ Աստուածը փառաւոր յոյսեր կը-  
 գնէ անոնց առջին, եւ աս յոյսերով անոնք  
 շարունակ ուրախութեան մէջ են: Ուէ որ  
 նեղութեան եւ տառապանաց մէջ ըլլան,  
 աչքերնին ան աշխարհքը կըդարձունեն,  
 ուր ընաւ տրտմութիւն չ'կայ, եւ ուր քիչ  
 ատենէն երթաւ կը յուսան: Ուէ որ բոլոր-  
 տիքնին եղած չարութիւնները իրենց նե-  
 ղութիւն տան, կ'ուրախանան յոյսով որ  
 շուտով երկինքին մէջի կատարուած սուրբ-  
 երուն ընկերութեանը պիտի խառնուին ։  
 Ուէ որ իրենց մեղանչականութիւնը զգա-  
 լով տրտմութեան մէջ իյնան, մէկ լաւա-  
 գոյն վիճակի մը համնելու յոյս ունին; որ  
 աւ անկէց ետեւ յաւիտեանս մեղքէ պիտի  
 ազատին: Վերջապէս ինչ փորձութիւն որ  
 գայ գլխունուն, կը յուսան քիչ ատենէն  
 յաւիտեանս անկէց ազատիլ, եւ կատար-  
 եալ ու յաւիտենական երջանկութիւն վայ-  
 ել: Իսայց աս փառաւոր յոյսերով առա-  
 տանալու համար, նախ հաւատքով առա-  
 տանալու է. թէ որ հաւատքով տկար ըլ-

Հանք, մեր մեղքերը աչքերնիս պիտի խառարեցունեն, ու երկրայութիւններով եւ վախերով պիտի լեցուինք: Իսսց թէ որ ան կենդանի հաւատքը ունենանք որ մեղքը բիստոսի հետ հաստատ կը միաւորէ, որ բոլոր յօյսերնիս իր վրայ գնենք, շարունակ կը նանք յօյսով ուրախանալ:

## 26

Եկէք ու Տէրոջը դառնանք, ինչու որ ան զարկաւ եւ մեղ ինքը պիտի բժշկէ, ան վիրաւորեց եւ ինքը մեղ պիտի կապէ: ՈՒԽԵ. օ. 1:

Կ ստուծոյ իր ժողովուրդին հետ ըրած ուխտին մէկ մասը ասէ՝ որ եթէ մեղանչեն եւ դինքը ձգեն, իրենց յանցանքներուն գաւազանով այցելութեան պիտի դայ, եւ իրենց անօրէնութիւններուն հարուածքով: Թէ որ անոնք բոլորովին երեսէ չ'ձգէ, կը յանդիմանէ մեղքերնուն համար: Եւ ըրած յանդիմանութիւնը պարապը դացած չըլլար, երբոր տառապեալ անձին սրտանց աղաղակել կուտայ, թէ Ես Տէրոջը պիտի

քառնամ : Երբոր Աստուած կը տեսնէ թէ  
 իր զաւկըները իրենց բարեկամներէն մէկը  
 եւ կամ երկրաւոր բան մը իրենց կուռքը  
 կ'ընեն, հաւատարիմ է իր խոստմունքին  
 որ կ'ըսէ “Ձեր բոլոր կուռքերէն ձեղ պի-  
 տի սրբեմ”, եւ ան սիրելի բաներնին ձեռք-  
 երնուն կ'առնէ որ նորէն բոլոր սրտեր-  
 նին իրեն տան : Աստուած շատ անդամ չէ  
 թէ միայն առանձին մարդիկ, հապա ժո-  
 ղովքներ ու ամբողջ եկեղեցիներ կը յան-  
 դիմանէ իրմէն մոլորելնուն համար : Ա այ  
 ան եկեղեցիին, ուսկէց Առւրբ Հոգին իր  
 ներգործութիւնները ետ քաշած է եւ եկե-  
 ղեցւոյն անդամները լոկ քրիստոնեայ անու-  
 նով մը ձգած է, արտաքին կրօնական արա-  
 րողութիւններու եւ անպտուղ սահմանա-  
 դրութիւններու ապաւինելու, կենդանի հա-  
 ւատքէ՝ հոգեւոր ուրախութիւններէ եւ  
 խաղաղութենէ զրկուած : Թէ որ եկեղե-  
 ցիի մը անդամները ինքզինքնին առ վիճա-  
 կին մէջը գտնեն, սրտանց ըսելու են Դատ-  
 նանք մեր Տէբոջը երթանք . եւ թէ որ լա-  
 լով ու ապաշխարելով իրեն երթան, իրենց  
 պիտի դառնայ եւ իրենք վերստին պիտի  
 ապրեցունէ :

Եւ անոր աշակերտները գացին՝ ու մարմինը վերցուցին, եւ թաղեցին. ու գացին Յիսուսին պատմեցին։ Առաջ. ձ. Դ. 12։

Երբոր Յիսուսի կարապետը՝ Յովհաննէս Վկրտիչը անդուժ Ներովդէսին ձեռքովը գլխատուեցաւ, անոր աշակերտները մեծ տրտմութեան մէջ ինկան։ Խնչ ապահովութիւն եւ ինչ պաշտպանութիւն կրնային յուսալ, երբոր իրենց առաջնօրդը ըսպաննուեցաւ անկիրթ իշխանի մը ձեռքով անառակ աղջկան մը աղաչանքովը։ Իսյց մէկ միսիթարիչ մը ունէին, որուն կրնային երթալ պատմել բոլոր իրենց ցաւերն ու երկիւղները, ու գացին եւ պատմեցին Յիսուսին։ Յիսուս հիմա ալ ան ժամանակուան պէս պատրաստ է տրտմութեան պատմութիւններ մտիկ լնել, եւ սգաւորները միսիթարել. ինտոր որ Յովհաննէս Վկրտչին աշակերտները գացին, անանկ ալ մենք կը ընանք բոլոր մեր վիշտերովը իրեն երթալ։ Թէպէտեւ չենք կրնար անոնց պէս մարմնաւոր աչքով զինքը տեսնել, սակայն ինքզինքը անանկ յայտնած է մեզի, որ հաւա

առյաջքով կրնանք տեսնել զինքը եւ դիտ-  
նալ ալ որ քաղցրութեամբ մեր աղաղակ-  
ներուն տկանջ կը կախէ: Վ, մեն նեղութեան  
ժամանակնիս թէ որ իրեն երթանք մեղի  
կարեկից կ'ըլլոյ եւ մեղ կը մխիթարէ:  
Ուստի միշտ երբոր փորձութեան մը մշջ  
կյնանք, երթանք եւ Յիսուսի պատմենք,  
եւ ինքը մեզ պիտի մխիթարէ եւ ուրախա-  
ցունէ:

## 28

Աակայն Տէրը կամեցաւ զինքը ծեծելով  
անիկայ տառապանքի մշջ ձգել: Խայ.  
օդ. 10:

Աստուած ողորմութեանց հայրն է եւ  
չնորհաց Աստուածը: Անիկայ մարդոց որ-  
դիքը կամաւ չնեղեր եւ չտառապեցուներ.  
եւ սակայն մարգարէն կ'ըսէ, կամեցաւ  
Տէրը անիկայ ծեծելու: Հոս յիշուած ան-  
ձը մեղաւորաց Փրկիչն է, Աստուծոյ միա-  
ծին Որդին: Աստուած անոր հաւներ էր,  
արարածներէն մէկը անոր չափ չէր սիրեր,  
եւ սակայն կամեցաւ զինքը ծեծելու, եւ ա-

Նիկայ տառապանաց մեջ ձգեց : Օարմանալի խօսք մըն է աս , բայց առանց պատճառուի չէր՝ որ Աստուած կամեցաւ իր սիրական Որդին ծեծելու : Իր Որդին մեղաւորներուն տեղը անցաւ եւ ինքզինքը անոնց կողմանէ չարչարուելու տուաւ . աս ընելով յաւ վիտենական երջանկութիւն պատրաստեց քաղմաթիւ Հոգիներու որ մարդ կարող չէ համրել : Աստուած գիտէր որ իր Որդիին քաշած չարչարանացը փոխարէն շատ մեծ հատուցում մը պիտի ընդունի . գիտէր թէ աս բանով բոլոր տիեզերքը զարմանքով սիրով եւ փառաբանութեամբ պիտի լեցուի . ուստի ասոր համար կամեցաւ Տէրը զինքը ծեծելու : Հաւիտեանսս պիտի զարմանանք եւ փառաւորենք աս մեծ շնորհքին խոր Հուրդը որ Հայրը մեր բոլոր անօրէնութիւնները իր սիրական Որդւոյն վրայ դրաւ :

Առաքեալները Հիսուսի քով ժողվուեցան , եւ պատմեցին անոր բոլոր բաները ինչ որ ըստին՝ եւ ինչ որ սորվեցուցին : Ու Հիսուս ըստ անոնց , Եւէք դուք առան-

Ճին անապատ տեղ մը՝ եւ քիչ մը հանդ~  
չեցէք։ Անդի՞ւ օ., 30, 31։

**Ը** ատ քաղցր հանգստութիւն մը ա~  
ռած պիտի ըլլան առաքեալները, երբոր  
Ծիսուս հրաւիրեց անոնք իրեն հետ առան~  
ձին անապատ տեղ մը երթալու։ Խր հրա~  
մանովը անդին ասդին տարածուեր էին իր  
խօսքը քարոզելու եւ իր կամքը կատարելու,  
եւ հիմա եկան բոլոր ըրածներնին եւ սոր~  
մեցուցածներնին իրեն պատմելու։ Անոնց  
հոգնելուն կարեկից եղաւ եւ սիրով կան~  
չեց անոնք որ առանձին տեղ մը հանդչին։  
Խնքն ալ անդադար կ'աշխատէր, բայց կը~  
գթար իր աշակերտացը վրայ եւ անոնցմէ  
իրենց տկար բնութեանը կարող եղածէն  
եւել բան չէր պահանջեր։ Անք ալ առա~  
քելոց նման բոլոր խօսածներնիս եւ ըրած~  
ներնիս շատ անգամ երթալու Ծիսուսի  
պատմելու ենք։ Աս ընելովնիս շատ բաներ  
պիտի գտնենք որ բուն մեր խղճմտանքները  
պիտի դատապարտեն, բայց բոլորն ալ Ք.ք.  
րիստոսի խօստովանելու ենք։ Ը ատ աղէկ  
կ'ըլլայ թէ որ կարողանանք ըսել թէ Քոյոր  
ըրածներնիս իր կամքը կատարելու եւ զինքը  
փառաւորելու դիատաւորութիւնով էր։ Ան~

ատենը մեզ մեր աշխատանացը վոսյ պիտի  
տի հանգչեցունէ իր ներկայութեանը եւ  
սիրոյն աղղումովը։ Յատկապէս Ք.քիստու-  
սի պաշտօնեայները ամեն օր ըրած դործ-  
քերնին եւ սորվեցուցած բաներնին երթա-  
լու իրեն պատմելու են։ Ուէ օր իրեն հետ  
աս հաղորդակցութիւնը ընեն, ինքը իրենց  
դործքերը պիտի առաջնորդէ եւ մահացու  
մոլորութիւններ սորվեցունելէն անոնք պի-  
տի պահէ։ Խրենց աշխատանքներն ալ պի-  
տի օրհնէն, եւ անոնք բարեաց պատճառ  
պիտի ընէ։

## 30

Առևնձ եղայ ու բերանս չ'բացի, վասն  
զի դուն ըրիր։ Ատու. 1թ. 9։

Երբոր աշխարհային մարդ մը նեղու-  
թեան մէջ լինայ շատ տրտունջ կ'ընէ։  
Թէ օր ձեռքէն գայ Աստուծմէ արդարու-  
թիւն կը պահանջէ, եւ կը դանդտի իրը թէ  
իրեն հետ խստութեամբ կը վարուի։ Բայց  
երբոր Աստուծոյ որդոցմէն մէ կը նեղութեան  
մէջ լինայ, ամենեւին տրտունջ մը չըներ՝

Քարհելով թէ Աստուած է ընողը։ Դիմուածով փորձութիւն գալ չըլլար, ամենքըն ալ անմիջապէս Աստուածոյ կարգադրութիւնով կ'ըլլան. անոնց ամենքնալ Աստուածոյ ձեռքին գործիքներն են, որոնցմով իր դիտաւորութիւնները կը կատարէ։ Ուստի վրանիս ինչ արամութիւն որ գայ, անիկայ Աստուածոյ ձեռքէն եկածի պէս ընդունելու ենք։ Թէ որ մեր ամենասիրելի բարեկամները մեռնին տրտնջալու չենք, ինչու որ Աստուած է ընողը։ Վեզի պէս մեղանչական եւ անարժան արարածներուն չ'վայլեր որ Աստուածոյ մեզի ըրած բաներէն մէկուն համար գանգտինք. միթէ իր ձեռքէն բարի ընդունինք ու չար չընդունինք։ Ինքը աւ մենիմաստ եւ ամենաբարի է, ինքը դիտէ թէ որն աղէկ է եւ բոլոր իր ըրածները բարի են։ Ուստի ալ մենք որ սյսօր կանք ու վաղը չըկանք եւ բան մըն ալ չենք դիտեր, ասդրստամբելու ենք իր մեզի ըրածներուն դէմ։ Ինչ քաղցր բան է ամեն բան Աստուածոյ հրամանովը ըլլալը դիտնալ եւ հնաղանդութեամբ մեր անձը անոր ձեռքը յանձնել, ու իր կամքէն զատ ուրիշ կամք մը չ'ձանչնալ։

# ՀԱԿՏԵՄՐԵԲԻ

## 1

Յիսուս երբոր լսեց՝ ըսաւ, Ան մեռնելու  
հիւանդութիւն չէ, հապա Աստուծոյ փառ-  
քին համար, որ Աստուծոյ Որդին անով՝  
փառաւորուի: Յաջ: Ժ. 1. 4:

ԱԿՈ, արտօմութեան մէջ էր Շեթէ-  
հէմցի ան փոքր ընտանիքը: Դաղարոս հիւ-  
անդ էր, եւ Արթան ու Վարիամը սրտեր-  
նին կոտրած կը վախնային որ չըլայ թէ-  
մեռնի: Խրենց նեղութեանը մէջ Յիսուսի  
լուր հասցուցին թէ Դաղարոս հիւանդ է,  
հաւտալով որ ինքը կարող է եւ կ'ուղէ ալ  
անիկայ բժշկել: Յիսուս անմիջապէս չը-  
գնաց. արտօմութիւննին մէկէնիմէկ ուրա-  
խութեան չփոխեց: Անոնցմէշատ աղէկ դի-  
տէր ինքը թէ որ բանն աղէկ է, անատենը  
լացին բայց ետքը շատ ուրախացան անով՝  
որ իրենց այնչափ ցաւ տուաւ: Յաւիտեանս

պիտի ուրախանան որ նեղութեան մէջ ինչ  
կան իրենք, վասնդի իրենց նեղութիւնը Աս-  
տուծոյ փառքին համար եղաւ, եւ Աստու-  
ծոյ Որդին անով այնչափ փառաւորուեցաւ :  
Աստուած իր որդոցը ինչ փորձութիւն որ  
Խրկէ իր փառքին համար է, եւ որ անով  
իր Որդին փառաւորուի : Աստուծոյ մեղք  
ըրածներուն թէ որ ուրախութեամբ հնա-  
զանդինք, թէ եւ անոնց պատճառը հիմա-  
շղիտնանք, վերջը պիտի դիտնանք եւ փառք  
պիտի տանք Աստուծոյ՝ որ մեր նեղութիւն-  
ներովը Քիստոսի անունը փառաւորուե-  
ցաւ :

## 2

Ծնորչք ամենուն վրայ, որո՞ք որ մեր  
Տէր Յիսուս Քրիստոսը անկեղծութեամբ  
կը սիրեն : Առև. օչ. 24:

Պօղոս առաքեալ Եվիեսացւոց գրած  
թուղթը աս բարեմաղթութիւնովը կը վեր-  
ջացունէ : Ծնորչք խնդրելը Աստուծոյ ո-  
ղորմութիւնը եւ անոր մէջը պարունակուած  
ամեն օրհնութիւնները խնդրել է, վասն

որս շնորհք խնդրելով՝ մեղաց թողութիւն  
 Աստուծոյ առջեւը արդարութիւն խղճմբ-  
 տանքի խաղաղութիւն Հիսուս Քրիստոսի  
 հետ հաղորդակցութիւն եւ անապական ու  
 անկորուստ ժառանգութեան գրաւ խնդրած  
 եղաւ։ Պօղոս Առւրբ Հոդիէն ինտոր որ կը-  
 շարժուէր անանկ կը խօսէր, եւ աս իր բա-  
 րեմաղթութեանը մէջ դժնուած օրհնու-  
 թիւնները անշուշտ պիտի գան բոլոր Տէր  
 Հիսուս Քրիստոսը անկեղծութեամբ սի-  
 րողններուն վրայ։ Հատերը կան Քրիստո-  
 սի անունով կանչուած որոնք իր պատուի-  
 րանքնները պահելով զինքը չեն սիրեր. բայց  
 Աստուած՝ որ ինքն է ամեն շնորհք պարզե-  
 ւողը, արտաքին երեւոյթններով չխարուիր։  
 Ենիկայ սիրտերը կը նայի, եւ իր շնորհքը  
 միայն Տէր Հիսուս Քրիստոսը անկեղծու-  
 թեամբ սիրողններուն կուտայ։ Պօղոս Քը-  
 րիստոնէական սիրոյ եւ միութեան ճշմարիտ  
 հոգին ունէր, կը սիրէր բոլոր Տէր Հիսուս  
 Քրիստոսը անկեղծութեամբ սիրողնները՝  
 անոնք ինչ անուն որ ունենային։ Աղյնպէս  
 եւ մենք սիրելու ննք բոլոր անոնք որ ան-  
 կեղծութեամբ Փրկիչը կը սիրեն, թէեւ  
 արտաքին երեւոյթններով մեղմէ շատ տար-  
 բեր ըլլան։

Ի՞սպաց միշտ ես քեզի հետ էի . դուն իմ  
աջ ձեռքէս բոնեցիր : Աաղմ . ՀԳ . 23 :

**Յ**ատ անգամ Աստուծոյ որդւոցը դար-  
մանալու պատճառ մը կ'ըլլան Տէրոջը դը-  
թութեան ճամբաները որոնցմով իրենք  
առաջնորդուեցան : Քրիստոնեաներուն շա-  
տերը կրնանշատ անանկ ժամանակներ միտ-  
քերնին բերել որ քիչ մնաց պիտի սահեր  
ոտքերնին , եւ թէ որ Աստուած իրենք ը-  
բռնէր յաւիտեանս պիտի կորսուէին : Յատ  
գերազանց քաջալերութիւն եւ մխիթարու-  
թիւն մըն է որ միշտ Աստուծոյ հետն ենք .  
թէ որ ասանկ չըլլար ինտոր կրնայինք դըւ-  
խունուս եկած բոլոր փորձութիւններուն  
դէմ կենալ : Աշխարհքը մեզ կը հբաւիրէ  
եւ Աստանան աղէկ դիտէ թէ ինտոր վը-  
րանիս յարձըկելու է մեր ամենէն ապահով  
եղած ատեննիս , եւ թէ ինտոր առջեւնիս  
պատուական բաներ գնելու է որ մենք մեղք  
դործելու դրդուինք , եւ մեր խարեւայ սըր-  
տերն ալ ան բաներուն շատ յօժարին :  
Անը մի միայն ապահովութիւնը ինքզինք-  
նիս Աստուծոյ ձեռքը յանձնելն է . թէ ոք

իրեն ապաւինիք ինքը մեր ձեռքերէն պիտի բռնէ, ինտոր որ գորովագութ հայր մը իր տկար օրդւոյն ձեռքէն կը բռնէ: Վիշտ Վստուծոյ հետն ըլլալնուս համար շատ ըղդուշութիւն ընելու ենք որ մեղք չ'զորձենք: չըլլայ որ բարկացունենք զինքը եւ անհնազանդութիւն ընենք, վասն զի միշտ իր հետն ենք:

## 4

Ուրեմն ան ժամանակը ի՞նչ պտուղ ունէիք ան բաներովը՝ որոնցմով հիմա կ'ամբը չնայք: ինչու որ ան բաներուն վերջը մահէ: Հայութ. 9. 21:

Երբորմէկ մարդ մը Առըրբ ողիին աղդեցութիւնովը նորէն կը ծնանի, իր առջի վարքին վրայ կը նայի ու իր յիմարութեանը վրայ շատ կը զարմանայ: Խնքնիրեն կը հարցունէ թէ ի՞նչ պտուղ կը քաղէր ան բաներէն, որոնց վերջը մահէ: Ա'ամշնայ եւ կը զարհուքի երբոր կը խորհի իր առջի միմակին վրայ, որ մեղքով լեցուն էր եւ Վստուծմէ օտարացած: Երանելի բան կ'ըւ-

զոյ թէ որ բոլոր աշխարհային մարդիկ՝ որոնք  
աշխարհքին եւ աշխարհիս բաներուն եւ-  
տեւէն են, Աստուած եւ երկինքը արհա-  
մարհած ժամանակին զգուշութեամբ ինք-  
նիրեննուն հարցունեն, թէ ինչ պիտի ըլ-  
լայ իրենց բոլոր աշխատանքներուն վերջին  
պտուղը : Աստուած ըսաւ որ ան բաներուն  
վերջը մահէ . չէ թէ միայն մարմնաւոր մահ,  
վասն զի անիկայ ամենուն ալ է, հապա հո-  
գիին յաւիտենական մահը : Իսայց թէպէտ  
եւ Աստուած ասանկ ըսաւ, սակայն մար-  
դիկ փափաքով ան բաներուն ետեւէն կ'ըլ-  
լան, որոնցմէն դիտեն թէ աս վեղի պտու-  
ղը պիտի քաղեն : Ահ թէ մարդիկ բանա-  
կանութեան ցուցուցած ճամբան երթային  
եւ աւելի յաւիտենական կենաց ետեւէ ըլ-  
լային, քան թէ յաւիտենական մահուան :

## 5

Ամենայն զգուշութեամբ պահպանէ քու  
սիրտդ, վասն զի կենաց ակունքը հոն են :  
Առաջին Դ. 23 :

Աստուծոյ որդիքը աս աշխարհիս մեջը

հոդ մը ունին, որուն աշխարհիս մարդիկը  
ծանօթ չեն. ասիկայ սրտին պահպանու-  
թիւնն է: Աշխարհային մարդուն հոգը չէ  
սրտին մէջ ինչ դառնալը, անիկայ միայն կը  
նայի որ իր արտաքին վարքը իր ընկերներուն  
առջին բարի սեպուի: Ինչ եւ իցէ չար  
կիրք որ իրեն վարքին մէջ երեւալովը աշ-  
խարհիս առջեւը ունեցած պատիւին չ'դրա-  
չիր, կ'ուզէ որ իր սրտին մէջ ման: Բայց  
քրիստոնէին ամենէն մեծ հոգը աս է որ իր  
սիրտը Աստուծոյ առջեւը բարի ըլլայ, դիտէ  
որ Աստուծոյ աչքը միշտ հոն է, եւ կ'աշ-  
խատի ըոլոր ան չար կիրքերը տնկեց դուրս  
ձգել՝ որոնք անոր սուրբ եւ անարատ աչ-  
քերուն պիղծ կ'երեւան: \*Ա, աեւ դեպի իր  
ընկերներուն ունեցած պարտաւորութիւն-  
ները կատարելու համար կ'աշխատի իր սիր-  
տը պահպանել: Դիտէ որ սրտին մէջն են  
կենաց ակերը, եւ թէ եթէ սիրտը բարե-  
պաշտութիւնով եւ սիրով լեցուելու ըլ-  
լայ, արտաքին դործքերն ալ արդար եւ  
Աստուծոյ պահանջմունքներուն համաձայն  
կ'ըլլան: Ինչ պարագ ջանքեր են անոնց  
ջանքերը, որոնք կ'աշխատին մարմնաւոր  
խստութիւններով սրբութեան հասնիլ,  
քանի որ սրտերնին չարէն պահելու չեն

աշխատիր : Տէ՛ր շնորհք տուր ինծի որ ա-  
մեն օր սիրտս պահպանեմ :

## 6

Ինչու որ Ինտո՞ր կրնամ իմ ժողովուր-  
դիս վրան գալու չարիքները տեսնել , եւ  
կամ ինտո՞ր կրնամ տեսնել իմ ազգական-  
ներուս կործանումը : Ես՝ բ . 6 :

Եսթեր շատ բարձր վիճակի մը մէջ էր .  
իր ցած վիճակէն ելաւ ու հարուստ եւ զօ-  
րաւոր Արտաշէս թագաւորին թագուհին  
եղաւ : Իսյց թէպէտեւ այնչափ բարձր  
վիճակի մը հասաւ , սակայն իր եղբայրնե-  
րը ու ազգականները չ' մոռցաւ : Եւ երբոր  
ան ջարդուելու սպառնալիքը եղաւ անոնցի  
ինք ծոմ բռնեց ու լացաւ , եւ անոնց կողմէն  
իր թագաւորին բարեխօսութիւն ըրաւ : Ա-  
նոնց աս սպառնալիքը ըլլալուն համար ան-  
հանդիստ էր եւ ձեռքէն եկածը ըրաւ որ  
անոնք փրկէ : Ու որ Աստուծոյ Որդիքն  
ենք , ցած վիճակէ մը ելած եւ թագաւո-  
րութեան մը ժառանգորդ եղած ենք : Իսյց  
մոռնալու չենք որ մեր ազգականներէն

Եւ ընկերներէն շատերը մեր առջի ան նոյն  
նուաստութեան վիճակին մեջն են, եւ թէ  
առջեւնին սոսկալի կործանում մը կայ, չէ թէ  
միայն Խսթերին աղգականներուն սպառնա-  
լիք եղած մարմնաւոր մահը, հապա հոգի-  
ին յաւիտենական մահը. Աստուծոյ յաւի-  
տենական բարկութիւնն ու անէծքը, յա-  
ւիտենական կրակով վառուած բնակու-  
թիւն մը առանց յոյսի: Անոնք չեն գի-  
տեր գլխունուն դալու չարիքը, բայց մենք  
գիտենք, եւ սրտանց շատ տրտմելու ենք  
անոնց ան ցաւալի վիճակին վրայ: Ըստ  
ու ստեղ ստեղ ազօթելու ենք անոնց փրր-  
կութեանը համար. ձեռքերնուս եկած  
ջանքը ընելու ենք անոնք համողելու հա-  
մար որ դալու բարկութենէն փախչին,  
վասն զի ինտո՞ր կրնանք մեր աղգականնե-  
րուն յաւիտենական կործանումը տեսնել:

Ամ ոչխարներս իմին ձայնս կը լսեն, ես  
ալ անոնք կը ճանչնամ, եւ իմ ետեւէս  
կուգան: ՀՅԱՃ, յ. 27:

Հիսուս · Քրիստոսի իր ժողովուրդին  
 Հետ ունեցած կապակցութիւնը պէս պէս  
 նմանութիւններով կը ցուցուի Աստուածաւ  
 շունչին մէջ : Աէկ շատ հասարակօրինակը  
 հովիւն ու իր ոչխարներն են : Քրիստոս  
 քարի հովիւի մը նման իր ժողովուրդը կը-  
 պահպանէ եւ անոնք իրենց թշնամիներէն  
 կը պաշտպանէ, եւ իրենց բոյր պակսու-  
 թիւնները կը լեցունէ: Անոնք ալ ոչխարնե-  
 րունման տգէտ՝ անզօր եւ իրենց թշնամի-  
 ներէն ինքզինքնին պաշտպանելու եւ կամի-  
 րենց հանդիպած վտանգներէն ետ կենալու  
 բոլորովին անկարող են : Անոնք իրենց հո-  
 վիւին նայելու են, որ ան տայ իրենց պէտք  
 եղած հոգեւոր անունդն ու ապահովութիւ-  
 նը : Քրիստոսի հօտէն եղող իր ճշմարիտ  
 ոչխարները իր ձայնին կը լսեն, ուր որ կան-  
 չէ կ'երթան, ուր որ Աներթաք՝ լսէ, չեն  
 երթար, անոր ձայնը ուրիշ առաջնորդներու  
 ձայններէն կ'որոշեն եւ միայն իր ետեւէն  
 կ'երթան : Աս աշխարհիս մէջ ուրիշնե-  
 րըն ալ կրնան Քրիստոսի հօտին խառնու-  
 վիլ եւ ուրիշներուն աչքին իրեններուն պէս  
 մը եւալ, քայց. Հիսուս իրենները կը ճանչ-  
 նայ, եւ ահա ժամանակը կուդայ որ տան  
 ճշմարտապէս իրենները եղողները բոլոր

տիեզերքին պիտի ճանչցունէ : Ծէ որ ուզենք գիտնալ թէ արդեօք իրաւցունէ Քրիստոսի հօտին մէջն ենք, մենք մեզի հարցունելու ենք թէ արդեօք իր ետեւէն կ'երթա՞նք . աս է իր ոչխարներուն նշանը՝ որ ինքը անոնց վրայ դրաւ : Ար ձայնին կը հնազանդի՞նք արդեօք, եւ իր քայլերուն կը հետեւի՞նք :

## 8

Ու ես ալ անոնց յաւիտենական կենանքը կուտամ, որ յաւիտեանս պիտի չ'կորսուին, եւ մէկը անոնք իմ ձեռքէս պիտի չ'կրնայ իւլել : Յոմը . ձ. 28:

Վեծ արտօնութիւն է Քրիստոսի հօտին անդամը լլալը : Աէ թէ միայն հիմակուան պէտք եղած օրհնութիւնները կուտայ իր ոչխարներուն, հապա յաւիտենական կեանք ալ կուտայ : Ասիկայ անոնց համար պատրաստուած բարիք մընէ, որուն սկզբնաւորութիւնն ու ճաշակը Քրիստոսի երթալնուն պէս կը վայլեն, բայց անոր կատարեալ արժէքը յաւիտենականութեան

վեջ միայն կարող պիտի ըլլան զգալ :  
 Ճշմարտապէս Քրիստոսինը եղողները՝ իր  
 ձայնին մտիկ ընողները եւ իր ետեւէն  
 գացողները վախի բան չունին . անոնք ըլլա-  
 նաւ պիտի չկորսուին : Փռքրիկ տղայ մը իր  
 մօրը գիրկը ապահով կ'ըլլայ . բայց հիւան-  
 դութիւնը ցաւը եւ մահը հոն կուգան իրեն,  
 եւ իր մայրը կարող չէ զինքը աղատել . եւ  
 կամ իր մօրմէն զօրաւոր մարդ մը կրնայ ա-  
 նոր գիրկէն զինքը յափշտակէլ եւ իր մայրը  
 իրեն պաշտպանութիւն մը չկրնար ընել :  
 Բայց քրիստոնեայն ասանկ չէ , մէկը երբէք  
 պիտի չկրնայ իր Փրկիչն ձեռքէն զինքը  
 խլել : Վատանան իր ետեւէն կ'իյնայ եւ կը  
 ջանայ իր հոգին կորանցունել , եւ կամ աշ-  
 խարհքը կ'աշխատի զինքը կորուստի հրա-  
 պուրել , բայց քանի որ իր յոյսը Քրիստոսի  
 վրայ դրած է բնաւ պիտի չկորսուի : Վա-  
 հով է ինք թէ եւ բոլոր աշխարհք եւ դժոխք  
 իրեն գեմ պատերազմին :

Խմ այրս՝ որ անոնք ինձի տուաւ , ա-  
 մենէն մեծ է , եւ մէկը չկրնար իմ աօրս  
 ձեռքէն խլել : Հովհաննես , մ . 29 :

Աստուածաշունչը լեցուն է հաստատ  
 միսիթարութիւններով ամեն անոնց համար  
 որ Քրիստոս իրենց ապաստանարանը ը-  
 րած են : Հիսուս ուղեց որ բոլոր հնարա-  
 ւոր եղած վստահութիւնը եւ յոյսը տայ  
 իր աշակերտներուն : Չէ թէ միայն իրեն  
 անոնք փրկելու կարող ըլլալը ցուցուց ր  
 հապա որ Աստուած իր Հայրը անոնք իրեն  
 տուաւ որ փրկուին , եւ մէկը կարող չէ  
 անոնք Հօրը ձեռքէն խլել : Ինչ գերա-  
 զանց ճշմարտութիւն մըն է աս բոլոր ճըշ-  
 մարտապէս յոյսերնին Քրիստոսի վրայ  
 դնողներուն : Ճամանակ կ'ըլլայ որ մեղք-  
 ին իշխանութիւնը եւ իրենց հոգեւոր  
 թշնամիներուն զօրութիւնն ու բաղմու-  
 թիւնը իրենց անանկ մեծ կ'երեւայ որ կը-  
 վախնան թէ վերջապէս պիտի կորսուին :  
 Բայց չէ , ասիկայ անկարելի բան է . Աս-  
 տուած Ամենակարողը բոլոր ճշմարտապէս  
 Քրիստոսի ետեւէն գացողներուն յաւի-  
 տենական կեանքի գրաւ տուաւ : Ո՞իտքը  
 դրաւ որ անանկները փրկուին , եւ մի թէ  
 կատարելու չէ իր միաքը դրածը , արդեք  
 կայ սյնչափ զօրութիւն ունեցող մէկը որ  
 անոր դիտաւորութիւնները խափանէ : Ու-  
 թեմն երթանք Քրիստոսի մօտենանք եւ

իր ձայնին մտիկ ընենք ու իր ետեւէն եր-  
թանք, որ գիտնանք թէ մենք ալ անոնց-  
մէն ենք որոնց յաւիտենական կեանք  
պարզեւեց:

## 10

Չեր հետը գործակից ենք, ու կ'աղա-  
շենք որ պարապ տեղը Աստուծոյ շնորհքը  
չընդունիք դուք: Բ. Առքիլ. օ. 1:

Պօղոս իր պաշտօնը մեծ սեպեց, զգաց  
որ Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ ըլլալը  
շատ մեծ պատիւ մըն էր. բայց Քրիստոս  
իրեն հետեւողները լոկ ծառայ չ'կոչեր, հա-  
պա բարեկամ: Աւ հոս Պօղոս կ'ըսէ իրեն  
ևս միւս առաքեալներուն համար, թէ Ք. լ.  
րիստոսի հետ ընկերացած են ան աշխա-  
տութեանը մէջ եւ իր հետը գործակից են:  
Անծ արտօնութիւն մըն է Քրիստոսի հետ  
աս կերպով կապակցութիւն ունենալը, առ-  
պաշտօնին մէջն են բոլոր աւետարանը քա-  
րոզողները թէ որ ճշմարտապէս Քրիս-  
տոսի բարեկամներն են: Խրենց աշխատան-  
քը ան նոյն բանին համար է, որուն հա-  
մար ինքը երկինքէն աշխարհ եկաւ մեռնե-

լու, որ է մեղաւորներուն փրկութիւնը՝ Խնքը հիմա ինչ փափաք որ ունի, անոնք ալ նոյն փափաքը ունին. եւ իրենց զանքերը ան նոյն վախճանին կը նային, որուն համար ինքը հիմա երկինքին եւ երկրի մէջ կը դործէ : Ենոնք նաեւ կցորդ պիտի ըլլան անոր յաղթութիւններուն ու անոր պըսակին : Բայց միայն աւետարանին պաշտօնեայները չեն Քրիստոսի հետ դործակից ըլլալու պատիւը վայլողները : ամենէն վար քրիստոնեայն որ Քրիստոսի կամքին պէս կ'ուզէ իր վիճակին ինկած պարտաւորութիւնները կատարել եւ անոր թագաւորութիւնը յառաջանալուն համար աղօթք կ'ընէ եւ ձեռքէն եկած աղէկութիւնը կ'ընէ մարդոց, ան ալ Քրիստոսի հետ ընկերէ : Երանի թէ մէկ աս պատիւը ունենայի, ալ անկէց եւելը չէի փնտռեր :

## 11

Ենոր համար արթուն կեցիք, եւ միտք երնիդ բերէք՝ որ երկու տարի գիշեր ու ցորեկ չ'դադրեցայ ամեն մէկը արցունիքով իւրատելու : Գարձ. 1. 31 :

Երբոր Պօղոս սկսեց Վրիստոսի ծառայել, իր բոլոր սրտովը կը ծառայէր. անհոգութեամբ չէր ծառայեր իր Ա արդապետին: Գիտէր թէ աս աշխարհիս մէջ Վրիստոսի համար աշխատելու ժամանակը որչափ երկան ալ որ ըլլայ կարձէ: Գիտէր ան հոգիներուն արժէքը, որոնց համար Վրիստոս մեռաւ, եւ եռանդով անոնց փրկութեանը համար կ'աշխատէր: Թէ որ իր տուած խրատներէն մէկը զանց առնէին անոնք չէր ձգեր, հապա ետեւնուն կ'իյնար սիրով աղաչանքներ ընելով: Ու նաեւ իր յորդորանքները երեսանց ու տկար չէին, հապա սրտանց եւ անոնք համողելով: Անոնք կը խրատէր արցունքով, որ կ'երեւայ թէ անոնց ցաւալի վիճակը իրեն ինչ զգացում կուտար, ուստի կընար ըսել թէ անոնց ամենուն արիւնէն ալ անպարտ էր: Ասանկ աշխատելու են Վրիստոսի բոլոր պաշտօնեայներն ալ մարդոց փրկութեանը համար. ասանկ անդադար եւ լալով խրատելու են մարդիկ որ դալու բարկութենէն փախչին: Աս կերպով բոլոր քրիստոնեաներն ալ Վրիստոսի համար ըրած ծառայ-

ութիւններնուն մէջ ժիր ըլլալու են . եւ  
աս կերպով ամեն մարդ կորսուող հոգիննե-  
րուն արժէքը զգալու է : Վրիստոս Երու-  
սաղէմի մեղաւորներուն վրայ լացաւ , եւ ար-  
դարեւ մենք ալ լալու եւ ողբալու ենք մեղքի-  
եւ մեղաւորներու վրայ :

## 12

Ինչու որ՝ օրէնքովը է մեղք ճանչնալը :  
Համաձայն, գ. . 20 :

Դժուար բան է մարդոց որ իրենց ճըշ-  
մարիտ բնութիւնը՝ սյսինքն մեղաւոր ըլ-  
լալնին սորվին : Չեն ուզեր հաւտալ թէ  
իրաւ Աստուածաշունչին ցուցուցածին պէս  
չար են . սրտերնին խարերայ է եւ իրենք  
կուրութիւնով չեն տեսներ իրենց չափա-  
ղանց մեղանչականութիւնը : Աս համարը  
միայն Առւրբ Նոդին կընայ սորվեցունել ,  
եւ Աստուծոյ օրէնքին սրբութիւնը ցու-  
ցունելով կը սորվեցունէ : Թէ որ մարդ մը  
Աստուծոյ պահանջմունքներուն կատար-  
եալ սրբութիւնը խմանայ , հարկաւ խելքը  
կը հասնի որ իր արդարութիւնովը չ'կընար  
փրկուիլ : Երբոր զդայ թէ բոլոր պատուի-

բանքները սրտին խորհուրդներուն եւ ըդ-  
դացումներուն ալ կը վերաբերին, հարկաւ  
իր մեղաւոր ըլլալը կը տեսնէ: Երբորինք-  
զինքը ուրիշ մարդոց հետ բաղդատէ, դիւ-  
րին կ'ըլլայ ինքզինքը մէկ մէծ մեղաւոր մը  
չկարծելը: բայց երբոր Ոուրբ Աստուծոյ  
հետ բաղդատէ ինքզինքը, իր ինտոր մոլի  
ըլլալը անատենը կը սորվի: Աստուծոյ օ-  
րէնքին սրբութիւնը անոր սուրբ բնութեա-  
նը մէկ օրինակն է, եւ թէ որ մարդ մը անոր  
բոլոր տարածութիւնն ու հոգեւորութիւնը  
հասկընայ, հարկաւ կ'իմանայ որ անոր սուրբ  
պահանջմունքները անթիւ անդամ կոտրել  
է: Աս կերպով օրէնքով կ'ըլլայ մեղք  
ձանչնալը: Եւ որովհետեւ մեր մեղանչակա-  
նութիւնը գիտնալով Փրկչի մը կարօտու-  
թիւննիս աղէկ կ'իմանանք, աս կերպով  
օրէնքը մեղի վարժապետ կ'ըլլայ եւ մեղ  
Քրիստոսի կը տանի:

**Տ**եսանք որ Աստուծոյ օրէնքը ասանկ  
 սուրբ՝ արդար եւ բարի է, ուստի ալ ինչ  
 պարագ բան է մեղաւորներուն անով ար-  
 դարանալու յոյսը : Ինիւրաւոր անգամ  
 արդէն անիկայ ոտքի տակ տռած ենք . ա-  
 ղէկ ալ հարկըցանք թէ ոչ խօսքով ոչ  
 գործքով եւ ոչ խորհուրդով օր մը անգամ  
 կրնանք պահել բոլոր անոր պահանջմունք-  
 ները, ուրեմն ինտոր կրնանք ալ ասկէց ե-  
 տեւ առանց կոտրելու պահել եւ անկէց զատ  
 անցած մեղքերնուս համար ալ անիկայ պա-  
 հէլով քաւութիւն ընել : Ասիկայ անհնա-  
 րին բան է, եւ թէ որ մեր գործքերէն զատ  
 ուրիշ փրկուելու ճամբայ մը ըռլար յաւի-  
 տենական յուսահատութեան մէջ թաղ-  
 ուելու էինք : Իսայց օրհնեալ է Աստուած  
 որ Ճիշդ մեղի պէս մեղաւորներու յարմար  
 արդարութեան ճամբայ մը կայ . աս ճամ-  
 բան Աստուած հնարեց որ իր անհուն իմաս-  
 տութիւնը կը ցուցունէ : Տէր Հիսուս Քը-  
 րիստոս որ մեր մեղքերը իր մարմինովը խա-  
 չափայտին վրայ կրեց, մեր արդարութիւնն  
 է . եւ թէ որ իրեն հաւտանք թէ որ հա-  
 ւատքով իրեն հետ մէկ ըլլանք թէ որ զին-  
 քը սիրենք եւ իրեն ծառայենք, իրմով պի-  
 տի արդարանանք : Անիկայ միշտ Աստուծոյ

Հաճոյ է եւ բոլոր իրեն ապաւինողները եւ  
իրենը եղողները իրմով կ'արդարանան եւ  
կը փրկուին :

## 14

Աստուած մեր ապաւէնը եւ զօրութիւնն  
է, նեղութիւններուն մէջը խիստ օգնական  
կը դանուի : Առաջ . Խօֆ . 1 :

**Վ**ատ քաղցր բան է միայն Աստուծոյ  
ապաւինիլը եւ զինքը մեր ապաւէնը եւ զօ-  
րութիւնը ընելը : Վատ զօրաւոր թշնամի-  
ներ կ'ունենանք որոնք ժամանակ ժամանակ  
վրանիս կը յարձակին եւ անանկ կ'երեւայ  
թէ մեզ պիտի յաղթեն . բայց մենք ապա-  
ւէն մը ունինք, որուն թէ որ դիմենք ապա-  
հով կ'ըլլանք : Տնէ որ Աստուած մեր ա-  
պաւէնը ընենք անշուշտ մեզ կը պաշտ-  
պանէ, անիկայ Ամենակարող է, մէկը կա-  
րող չէ մեզ իր ձեռքէն խլել : Տնող մեր  
թշնամիները կատղին եւ մեր կորուս-  
ուր փնտըռեն, բայց ով կրնայ մեզի վը-  
նաս մը հասցունել երբոր Ամենակարող  
զօրութիւնը մեր պաշտպաննը լլայ . մեր աս  
ապաւէնը միշտ մեզի մօտ է : Տնող մեր թըշ-

նամիները շատ խորամանկ ըլլան եւ սպա-  
սեն որ յանկարծ վրանիս յարձակին, բայց  
չեն կրնար վրանիս դալ երը մեր Ապաւէնը  
եւ Օջրութիւնը քովերնիս ըլլայ. ամեն  
խռովութեան ատեն կրնանք իսկոյն իրեն  
դիմել եւ ապահով ըլլալ: Վերազանց պար-  
գեւ մըն է Աստուծոյ որդի ըլլալը, որոնց  
թող կուտայ որ իր թեւերուն շուքին տակը  
հանդչին, եւ որոնց խռոտացած է հետերնին  
ըլլալ, իրենք պաշտպանել եւ յաւիտեանս  
փրկել: Ոչ Աստուած ինչ մեծ խօնարհու-  
թիւնով մեղի կը խօնարհի. կրնայ արդա-  
րութեամբ մեղ թողուլ որ թշնամիներնուս  
ձեռքէն չաղատինք եւ մեր տկարութիւնովը  
իյնանք: Բայց չէ, թէպէտեւ մեղաւոր  
ենք, բայց ինք սիրով մեղի կը ներէ, մեղ  
կը պաշտպանէ եւ բոլոր իրեն ապաւինող-  
ները յաւիտեան կը փրկէ:

Վեղի կանչեցին ու աղատեցան, քեղի  
յուսացան ու չամչցան. Ասդմ: Ի՞՞ս. 5:

Քեզ որ մարդ մը իր կարողութեանը եւ

վարպետութեանը ապաւինելով բանի մը  
ձեռք զարնէ, ու հաւտայ թէ պիտի յաջողի  
յուսալով թէ իր իմաստութիւնն ու զօրու-  
թիւնը բաւական են անիկայ դլուխ հանե-  
լու, ու թէ որ վերջը չ'յաջողի խայտառակ  
ու ամօթով կ'ըլլայ: Ասանկ ալ իր բարե-  
կամներուն շատութեանը եւ կարողութեանը  
ապաւինով մարդը, անոնց ձեռքը զօրու-  
թիւն եւ իշխանութիւն ըլլալուն համար կը  
խորհի թէ անոնց պաշտպանութիւնը վը-  
տանգի ատեն բաւական է: Ի՞այց թէ որ իր  
նեղութեան ժաման զինքը երեսէ ձգեն,  
եւ կամ զօրութիւննին զինքը աղատելու  
չափ եղած չըլլայ, սխալմամբ անոնց վըս-  
տահելուն համար ամօթով կ'ըլլայ: Ի՞այց  
Տէրոջը ապաւինողներէն մէկը երբէք խայ-  
տառակ չեղաւ, անիկայ իր ժողովուրդին  
միայն իրեն ապաւինիլը կը սիրէ: Անոնք ի-  
րեն ապաւինելու կը հրաւիրէ, եւ խոստա-  
ցած է որ անոնց յշուը պարապը պիտի չեր-  
թայ, անոնք որ անկեղծութեամբ իրեն կ'ա-  
պաւինին զինքը կը պատուեն, իր անու-  
նին համար պիտի փրկէ: Երբէք պիտի  
ըսել չ'տայ չարին թէ Եհա Տէրը կարող չէ  
իրեն ապաւինողները պաշտպանել: Ուստի  
թէ որ Տէրոջն ենք ամենեւին վախի բան

չունինք : Խռող չարերը վրանիս յարձակինք  
բայց մենք Տէրոջը ձեռքն ենք եւ հոն ա-  
պահով ենք : Խէ որ իրեն կանչենք՝ կ'ա-  
զատինք, թէ որ իրեն ապաւինինք՝ պիտի  
չամշնանք :

## 16

Ո՞ր վախնար ոչխարներու պղտիկ հօտ-  
ինչու որ ձեր այլրը ուզեց՝ որ ձեղի թագա-  
ւորութիւնը տայ : Պատմ. ձ.Բ. + 32 :

Վրիստոսի աշխարհիս մեջ ունեցած հօ-  
տը մինչեւ հիմա միշտ փոքր է : Խրօք եւ  
ճշմարտապէս իր ետեւէն դացողներուն  
թիւը իրեն չ'հնազանդողներուն եւ զինքը  
արհամարհողներուն բազմութեանը քով  
սկիզբէն իվեր քիչ է : Խէ որ լոկ մարդ-  
կային միտքի վրայ դատէինք, պիտի կար-  
ծէինք թէ թշնամիները վերջապէս պիտի  
յաղթեն եւ աստկար հօտը կործանեն, մա-  
նաւանդ թէ բարձր աստիճանի մարդիկ ա-  
նոր դէմ հաստատ թշնամութիւն ունին :  
Խնտոր կընայ ասանկ մեկ փոքր եւ տկար  
գունդ մը յուսալ թէ վերջապէս բոլոր իր

Վրան յարձակող թշնամիները պիտի յաղ-  
թէ : Ի՞է որ իրենց յոյսը մարդկային զօր-  
ութեան վրայ ըլլար , արգարեւ պիտի յու-  
սահատէին . բայց իրենց սյորը ուղեց որ  
թագաւորութիւնը տայ իրենց : Խնչ որ  
ուղէ կը կատարէ . անիկայ իր գործն է , իր  
ուղելովը միտքը դրաւ ու պիտի կատարէ :  
Վրիստոսի եկեղեցիին վրայ ամենեւին վախ  
մը ունենալու չենք : Թաղ սուտ բարեկամ-  
ները կործանում սպառնան , թող թշնա-  
միները յայտնի իր վրայ յարձակին , բոլոր  
աս բաներուն վրայ տակաւին ան ամենը՝ որ  
հոգիով եւ ճշմարտութեամբ Վրիստոսի  
հետ միացած են , ապահով պիտի կենան ,  
ու վերջապէս թագաւորութիւնը եւ թա-  
գաւորութեան մեծութիւնը Շարձրելոյն  
սուրբ ժողովուրդին պիտի տրուի , վասն զի  
Տէրոջը բերանը խօսեցաւ :

Ա'ուղեմ որ գիտնաք եղբայրներ , թէ  
իմ վրայովս եղած բաները եւել եւելոք ա-  
ւետարանին յառաջադիմութեանը համար  
եկաւ : Փէլէու . Ա . 12 :

Աւետարանին թշնամիները Պօղոսը հա-  
 յածեցին եւ բանտարգեցին, որ անանկով  
 ճշմարտութեան ընթացքը խափանեն: Բայց  
 Քրիստոսի աւետարանին հակառակութիւն  
 ընելը պարագ բան է: Պօղոս Փիլիպեցւոց  
 կ'ըսէ թէ իրեն հանդըպած բաները աւե-  
 տարանին յառաջադիմութեանը արդելք  
 չեղան, հապա մանաւանդ անոր օգնութիւն  
 ըրին. անոնցմով եղքսյրները զօրացան,  
 եւ իր կապերովը Քրիստոսի լուրը անդին  
 ասդին տարածեցաւ: Խւ միշտ ասանկ կ'ըլ-  
 լայ. Աստուած աղէկ դիտէ մարդոց բար-  
 կութիւնը զինքը փառաւորելու միջոց ընե-  
 լու կերպը: Խւ երբոր թող կուտայ որչա-  
 քերը իր ճշմարտութիւնը խափանելու հա-  
 մար ճամբաներ հնարեն, անոնց ուղածնե-  
 րը կատարելու համար չէ, հապա անոնց  
 խայտառակութեանը եւ իրեն փառքին հա-  
 մար, իրենց չար դիտաւորութիւններովը իր  
 ճշմարտութիւնը առաջ տանելով՝ որ կոր-  
 ծանել կ'ուղէին: Աստանան երեմն մեծ  
 բարկութիւնով կուգայ եւ կը դրգուէ բո-  
 լոր իր ծառաները Քրիստոսի աւետարա-  
 նին վրայ յարձակելու. անանկ ատեններ  
 մեծ յօյս ունենալու է թէ ան իր հանած  
 վրդովմաւնքը շատ չքշեր: Ամենեւին վախ-

Նալու կամ թուլնալու չենք, հապա ամեն  
բան Տէրոջը յանձնելով հանդարտու-  
թեամբ սպասելու ենք, մինչեւ որ խաւա-  
քէն լցո ծագեցունէ:

## 18

Ի՞սկ թէ որ քրիստոնեայի մը պէս տան-  
ջուի թող չամչնայ, հապա աս անունովը  
թողԱստուծոյ փառք տայ: Ա.Պէտք. Դ. 16:

Վարդիկ քանի որ մեղքը կը սիրեն եւ  
մեղանչական կեանք մը կ'անցունեն, Տէր  
Ծիսուս Քրիստոսի ոտքին քայլերուն հե-  
տեւիլ ուղողները նեղութիւն քաշելու են-  
թակայ են: Իրենց սուրբ օրինակը չարա-  
գործներուն մեղքերը կը յանդիմանէ եւ  
իրենց բարի վարքը շատ անհաճոյ է իրենց  
մեղքերը շարունակել ուղողներուն: Աս-  
տուած մարդոց բարկութիւնը երբեմն կը-  
զապէ որ իր ժողովուրդը խաղաղութիւ-  
նով եւ հանդարտութիւնով ապրի, եւ եր-  
բեմն թոյլտուութիւն կ'ընէ չարերուն որ  
իրենց շարութիւնը ընեն, եւ իր ժողո-  
վուրդը իր անունին համար չարչարուած

տաեննին զի՞նքը փառաւորեն։ Աւետարանին  
Ճշմարտութիւնները դեռ ընդհանրապէս  
չտարածուած տեղերու քրիստոնեայները  
ստէպ ստէպ Քրիստոսի անունին համար  
նեղութիւն կը քաշեն։ Իայց մէկն ալ Ք.ք.  
քրիստոսի անունովը քաշած նեղութիւննե-  
րուն համար ամչնալու չէ։ Թէպէտեւ ա-  
նարդուի նախատուի եւ իր անունը դէշ  
ելլէ, սակայն ամչնալու չէ, հառար աս ա-  
նունովը Աստուծոյ փառք տալու է։ Յիւ-  
սուս Քրիստոսի սպասաւորութեան ան-  
բարձր պատիւը վայելլուն համար է որ իր  
անունը դէշ կ'ելլէ։ իր Աարդապետին նը-  
ման ըլլալուն համար է որ կ'անարդուի եւ  
կը հաբածուի։ Ուստի արդարեւ փառք տա-  
լու է Աստուծոյ իր վայբած շնորհքներուն  
համար, եւ չէ թէ չարերուն տուած նա-  
խատինքներովը ամչնալու է։

Աւ ըստ անոնց։ Ինչու ատանկ վախ-  
կոտ էք, տակաւին հաւատք չունիք։ Առէն-  
գ., 40։

Յիսուս իր աշակերտներուն հետ նաւի  
մը մէջ էր, եւ ահա մեծ փոթորիկ մը ե-  
լաւ։ Խնք անատենը կըքնանար եւ անոնք  
վախով լեցուեցան ու արթնցուցին զինքը  
աղաղակելով, “Ա արդապետ հոգդ չէ՞ որ  
ահա մենք կը կորսուինք”։ Հովը եւ ծովը  
դադրեցունելէն ետեւ յանդիմանեց անոնք  
իրենց վախկոտութեանը եւ թերեհաւա-  
տութեանը համար։ Ա մեն ատեն ապահո-  
վութիւն է Վրիստոսի եղած տեղը ըլլալ։  
Թէ որ աշակերտներուն հաւատքը զօրաւոր  
ըլլար աս բանը կը զգացին։ Ուէ որ փոթո-  
րիկներ ելլան բոլորտիքնիս, բնաւ վեաս շունի  
թէ որ միայն Վրիստոս մեզի հետ ըլլայ։  
Խնչ նեղութիւն որ գայ դլխունուս, ինչ  
թշնամիներ որ մեզի հակառակութիւն ընեն,  
թէ որ միայն Վրիստոսի դործին մէջն ըլլանք  
եւ զինքը մեր կողմը ունենանք, ամենեւին  
վախի բան չունինք։ Աշակերտները բաւա-  
կան հաւատք ունեին՝ որ իրենց նեղութեան  
ժամուն Վրիստոսի գացին, աս բանը աղէկ  
ըրին, ամեն նեղութեան ժամանակ իրեն եր-  
թալու ենք, եւ ինքը մեղ կը մխիթարէ։  
Աշակերտները երբոր ան կատաղի ալէ-  
կոծութենէն ահուղողի մէջ էին, մտքեր-  
նուն չանցուցին թէ ան փոթորիկը իրենց

Ա արդապետին զօրութիւնը փառքով  
յայտնուելու համար, եւ իրենց ուրախու-  
թիւնն ու անոր վրայ ունեցած վստահու-  
թիւննին աճեցունելու համար ելաւ: “Երիշ-  
պէս եւ իր ժողովուրդին վրայ ալէկոծու-  
թիւններ կը խթկէ որ իր զօրութիւնը ցու-  
ցունէ անոնց, անոնք պաշտպանելով եւ  
ազատելով եւ մարդոց բարկութիւնովը  
փառաւորուելով:

## 20

Ինչու որ ապաւէն մը՝ ամուբ աշտարակ  
մը եղար ինծի թշնամիին երեսէն: Ատղմ.  
ԿԲ. Յ:

Դաւիթ շատ անդամ Աստուծմէ պաշտա-  
պանութիւն խնդրած էր. շատ անդամ տե-  
սած էր որ մարդոց օգնութիւնը պարապ բան  
էր: Անոնք որ իր բարեկամներն ըլլալու էին  
իր վսան ելան, եւ իրքեւ վայրենի անա-  
սուն զինքը որսացին: Իսայց թէպէտ իր երկ-  
րաւոր բարեկամները զինքը երեսէ ձգեցին  
հօս ինքը կը զրուցէ թէ Աստուծ իրենինչ  
ըրաւ. “Ապաւէն մը՝ ու ամուբ աշտարակ

մը եղար ինծի թշնամիին երեսէն” : Խնչ  
որ փնտըռեց Աստուծոյ քով դտաւ, եւ  
բոլոր իր կարօտութիւնները լեցուեցան :  
Աստուած Դաւիթիօքերը ինչ որ էր հի-  
մա ալ նոյնն է, եւ բոլոր զինքը փնտըռող-  
ներուն ապաւէն եւ ամսւր աշտարակ մը պի-  
տի ըլլայ : Աստուծոյ մէկ սքանչելի շնորհ-  
քըն է որ մեզի պէս մեղաւորներուն ասանկ կլը-  
խոնարհի . ամեն վտանգի եւ փորձութեան  
ժամանակ իրեն երթալու ենք, եւ ապահով-  
ութիւն կը դտնենք : Արդարեւ անիկայ ա-  
մուր աշտարակ մըն է ամենուն, որոնք յոյս-  
երնին իրեն վրայ կը դնեն . մէկը կարող  
չէ զինքը յաղթել : Երբոր աս աշտարակին  
մէջն ըլլանք մեր թշնամիներուն վրանիս  
նետած նետերը եւ մեզ յաղթելու համար  
ըրած բոլոր ջանքերնին պարապը կ'երթայ :

Տէրն է մեր պաշտպանը, եւ անիկայ Ամե-  
նակարող է :

## 21

Ով իմ անձս՝ միայն Աստուծոյ սպասէ,  
վասն զի անկէց է իմ յոյսս : Ոտով. ԿՐ. 5:

Աստուած կը փառաւորուի երբ որ մայն

իրեն սպասենք : Արդիկ շատ անգամ լու-  
տուծմէ ունեցած կախումնին միայն խօսքով  
կը ճանչնան, եւ իրենց պէտք եղած օրհնու-  
թիւնները աղօթքով իրմէն կը խնդրեն, եր-  
բոր սրտով իրենց կարողութենէն եւ ջանք-  
երէն եւ կամ երկրաւոր միջոցներէ կախ-  
ուած են : Ի՞այց երբոր սրտով զգանք թէ  
ամեն բարութիւն Աստուծմէ կուգան, երբոր  
մեր անօգնականութիւնը եւ բոլոր երկրա-  
ւոր միջոցներու տկարութիւնը զգանք, եր-  
բոր աս հոգիով Աստուծոյ սպասենք, իր  
օրհնութիւնները մեղի կուտայ : Այս ինչ  
շնորհքին կարօտութիւն ունինք, Աստու-  
ծոյ սպասենք . հաւատք չունինք, իմաս-  
տութիւն չունինք, աչքերնիս միայն Աս-  
տուծոյ վերցունենք : Աչքերնուս առջին  
գործուած մեղաց շատութեանը վրայ կ'ող-  
բանք, միայն Աստուծմէ օգնութիւն խընդ-  
րենք : Վրիստոսի ճշմարտութիւնը յայտ-  
նի վտանգի մէջ է, անոր պաշտպան կեցող-  
ները քիչուոր, եւ անոր դէմ հակառակու-  
թիւն ընողները զօրաւոր եւ շատուժը են,  
եւ աս բաները տեսնելով կը վախնանք եւ  
կ'ողբանք ուրեմն Աստուծոյ սպասենք եւ  
պիտի տեսնենք որ զինքը պարապ տեղը չենք  
փնտըուեր :

Պատասխան տուաւ Յօհաննէս՝ եւ ը-  
աւ. Ա արդապետ մէկը տեսանք որ քու-  
անունովդ դեւեր կը հանէր, ու արդիլե-  
ցինք անիկայ. ինչու որ՝ մեր հետը չ'պտը-  
տիր: Դ առէ, թա 49:

Քրիստոսի աշակերտները շատ անդամ  
Քրիստոս անոնք ընտրելէն ետեւ ալ մարդ-  
կային բնութեան տկարութիւնները ցու-  
ցուցին. մէջերնին վէճ ըրին թէ որերնին  
մէծ են: Աս համարին մէջն ալ յիշուած է  
թէ Քրիստոսի անունովը դեւեր հանող-  
ներուն մէկը արդիլեցին իրենց հետը ըր-  
պտըտելուն համար: Քրիստոսի վրայ ու-  
նեցած սէրերնուն հետ մէկ տեղ պատիւ առ-  
նելու փափաք մըն ալ ունէին: Իրենց ա-  
նանկ կուգար՝ թէ Քրիստոսի հետ անանկ  
կից հաղորդակցութիւն մը ունենալնուն հա-  
մար իրաւունք ունէին ըոլոր ինքը դաւանող-  
ներուն առաջնորդութիւն ընել: Իսյց  
Քրիստոս յանդիմանեց իրենք աս հոգին  
ունենալնուն համար: Իրեն դէմ չեղողնե-  
րուն ամենքն ալ իր կողմէն կըսեպէր: Հի-  
մա ալ շատերը կան որ առաքեալներուն հոս

ցուցուցած բնութենէն են: Իրենց չ'հետեւողները Քրիստոսի հետեւող չեն սեպեր. կ'ուղեն բոլոր ուրիշները արդիլելինչ եւ իցէ կերպով բարեգործութիւն ընելէն իրենցմէ ըռլալնուն համար: Քրիստոսի անունը քարողելէն արդիլել կ'ուղեն իրենցմէ ըռլալնուն համար: Ասիկայ Քրիստոսի հոգին չէ. ան բոլոր զինքը սիրողները կ'ընդունի զէն չունի ինչ անունով որ կանչուին, եւ մենք ալ անանկ ընեւլու ենք:

## 23

Դարձաւ չեխեց անոնք՝ ու ըստ, Զէք դիտէր թէ ո՞ր հոգիինն էք դուք: Ո՞ւի, թէ 55:

Այսարացւոց մէկ գեղէն ընդունեցին Յիսուսը եւ իր աշակերտները, որովհետեւ երեսնին Երուսաղէմ երթալու դրեր էին: Վշակերտները աս բանիս վրայ բարկացան եւ իրենց Ա արդապետէն հրաման ուղեցին որ Երկինքէն կրակ իջեցունեն եւ մեղաւորները սատկեցունեն: Անտարակօյս

կարծեցին թէ ասիկայ ՞ք քիստոսը պատու-  
 ել է, եւ գուցէ խորհեցան թէ իր փառքը  
 վինտըուելնին էր իրենք առ բանը ըսելու  
 շարժողը: Իսյյօ Հիսուս չեխեց անոնք ըսե-  
 լով, Չէք զիտեր թէ որ հոդիինն էք դուք:  
 Այսէր իր աշակերտներուն ներսիդին գլա-  
 նել ուղած բնաւորութիւնը, մարդիկ փըր-  
 կելու համար եկած էր եւ չէ թէ կործու-  
 նելու, եւ իր հոդին ունեցողներն ասանկ  
 կ'ընեն: Անը Փրկիչը ան զիտաւորութիւ-  
 նը չունէր որ իր կրօնքը սուրով տարածէ-  
 եւ պաշտպանէ: Թէ որ մարդիկ իրեն հե-  
 տեւողներուն դէմ հակառակութիւն ընեն,  
 անոնք անոնց համար աղօմք ընելու են  
 եւ դարձի բերելու աշխատելու են, ու  
 չէ թէ բռնութիւնով անոնք քրիստո-  
 նեայ ընելու են: Իսյյօ ՞ք քիստոսի գալէն  
 իվեր անանկ մարդիկներ եղան, որոնք թէ-  
 պէտ քրիստոնեայ կ'ըսուէին, բայց տա-  
 կաւին մահու չափ հալածանքներ ըրին ան  
 քրիստոնեաներուն դէմ որոնք իրենց հաւ-  
 տացածին պէտ չէին հաւտար: Իսյյօ ա-  
 սանկները մէջերնին բնաւ Քրիստոսի գո-  
 գին չունին, եւ ոչ ալ իր օրէնքներուն  
 կը հնաղանդին: Ար հրամանը՝ սիրել եւ  
 օրհնել է, ու չէ թէ անիծել եւ սպանել:

Որ մէկ ըլլան, ինչպէս որ մենք մէկ ենք:  
ՀՅԴՀ. ԺԼ. 22:

ՀՅԴՀ իսուս Քրիստոսի Հոգին սէր է.  
կ'ուզէ որ աս Հոգին բոլոր իրեն հետեւող  
ները ունենան: Տժէպէտ կ'ուզէ որ բոլոր  
մարդիկ իրար կարեկցութիւնով սիրեն, բայց  
մէկ ուրիշ մասնաւոր սէր մը ունենան մէկ-  
զմէկու վրայ, անանկ զօրաւոր սէր մը որ  
անոնք մէկ ընէ, ինչպէս որ Հայր Աստուած  
եւ ՀՅԴՀ իսուս Քրիստոս մէկ են: Աս սէ-  
րը եւ միութիւնը դրսուանց միակերպ ըլ-  
լալէն չէ, թող տարրեր անուններ ունե-  
նան, թող արտաքին բաններու վրայ տար-  
քեր դատումներ ունենան, սակայն սրտով  
մէկ ըլլալու են: Աս միութիւնը Քրիստո-  
սի վրայ մեծ սէր մը ունենալէն առաջ կու-  
գայ, որ անով բոլոր իր պատկերին կերպա-  
րանակից եղողները սիրելու առաջնորդ-  
ութինք: Աս միութիւնը ունեցողներուն ա-  
նանկ մեծ բան կ'երեւոյ սրտին կրօնքը, որ  
բոլոր արտաքին ձեւերն ու արարողութիւն-  
ները անոր քովը ոչինչ կ'երեւան: Ասիկայ  
կը պարունակէ ան խոնարհութիւնը, որով

մէկը միւսը իրմէն եւել կը յարգէ : Ուր որ  
Վրիստոսի ողին շատ կայ, հոնաս միու-  
թիւնը կ'ըլլայ . թէ որ Վրիստոսի աշա-  
կերտները ըլլալ կ'ուզենք, իրեն հետեւ-  
ողներուն վրայ առ սէրը ունենալու ենք :  
Աս բանին համար ինքը մեծ եռանդով ա-  
զօթք ըրաւ, եւ մենք ալ ասոր համար ա-  
զօթք ընելու եւ աշխատելու ենք :

## 25

Ո՞ի Խորհիք թէ ես երկրի վրայ Խաղաղ-  
ութիւն ձգելու եկայ . Խաղաղութիւն ձր-  
գելու չեկայ, հապա թուր : Անդիւ յ. 34:

Ճիսուս Վրիստոս Խաղաղութեան իշ-  
խան է, իր կրօնքը սիրոյ կրօնք է . կ'ու-  
զէ որ ըոլոր իրեն հետեւողները մէկ ըլլան-  
հայց քանի որ աշխարհս մեղքով լեցուն է  
եւ մարդիկ սրբութիւնը կ'ատեն, Վրիս-  
տոսի սուրբ կրօնքը անմիարանութեան  
պատճառ պիտի ըլլայ : Աշխարհս՝ չար ըլ-  
լալուն համար հակառակութիւն պիտի լնէ  
ծշմարտութեամբ Վրիստոսի հնազանդող-  
ներուն : Անրդու մը իր ընտանիքը շատ ան-

դամ հակառակ պիտի կենան իրեն, եւ ինքը մէջերնուն դուրս պիտի ընեն, անոր համար որ իրենք մեղքը կըսիրեն, ու ան հաւատքով եւ սրբութիւնով կեսնք մը կ'անցունէ: Քրիստոս իմացուց իր աշակերտներուն թէ աս բաները գլխունուն պիտի գայ: Խեղակետեւ խաղաղութիւնը քրիստոնէին շատ սիրելի բան է, սակայն Վստուծոյ Ճշմարտութիւնը տեելի սիրելի ըլլալունէ: ամեն փորձանքի մէջ Վստուծոյ հնազանդելուն է: Որչափ որ կրնաք, կ'ըսէ առաքեալը, ամեն մարդոց հետ խաղաղութեամբ վարուեցէք: Քրիստոնեայն աշխատելուն է ամենուն հետ սիրով վարուելուն: Բնքը ըլլալուն չէ իր բռլորտիքը եղողներուն հետ ունեցած միարանութեան կապը քակողը, հեղու երկայնամիտ ըլլալուն է: Խայց երբոր խաղաղութիւն ընելով ճշմարտութիւնը ձգել, կամ աւետարանին հրամաններուն չ'հնազանդիլ պէտք կ'ըլլայ, անատենը յայտնի է իր պարտաւորութիւնը՝ որ Վստուծոյ հնազանդելուն է, թէեւ ասանկ ընելովք աշխարհք խոռվութիւնով լեցուի: Քրիստոնեայն Քրիստոսի մօտենալուն է, ամեն բանի մէջ իրեն հնազանդելով, եւ աշխարհանին բոլոր ճշմարտութիւնը դաւա-

Նելու է, ու անատենը թէ որ բաժանմունք-  
ներ եւ հակառակութիւններ ելլան, յան-  
ցանքը իրը չէ: Իրեն դէմ հակառակութիւն  
ընողները հաշիւ պիտի տան:

## 26

«Բու գործքերդ տեսայ որ դուն կեն-  
դանիի անուն ունիս՝ ու մեռած ես: Հյոյտ.  
Կ. 1:

Ասիկայ Սարդիացւոց եկեղեցին համար  
Փրկչին տուած պատգամին մէկ մասն է:  
Իսյց հիմա ալ շատերը կան՝ որ աս նոյն  
յանդիմանութեանը արժանի են, եւ աղէկ  
կ'ըլլայ որ բոլոր քրիստոնէական եկեղե-  
ցիները եւ բոլոր քրիստոնեայ կոչուած մար-  
դիկ ինքզինքնին քննեն եւ տեսնեն թէ Փըր-  
կչին Սարդիացւոց եկեղեցին ըսած խօսքը  
արդեօք իրենց ալ կը դպչի՞: Թէ որ «Բարիս-  
տոնեայ կոչուած ենք կենդանիի անուն ու-  
նինք, աս անունը կը ցուցունէ թէ մենք  
Աստուած փառաւորելու եւ զինքը սիրելու  
եւ իրեն հնազանդելու պարտաւորութիւն-  
ներնուս մէջ կենդանի ենք, թէ մեղքին

չարութիւնը իմացած ենք եւ անկէց կը փախա  
չինք: Կը ցուցունէ թէ Աստուծոյ Որդւոյն  
վրայ հաւատք ունինք եւ իր կամքին համա-  
ձայն ենք: Իայց թէ որ յանցանաց եւ մե-  
ղաց մէջ մեռածներուն նման ենք, յայտ-  
նի կ'ընենք թէ միայն կենդանիի անունու-  
նինք: Թէ որ աշխարհքը եւ աշխարհին բա-  
ները կը սիրենք, թէ որ առաւել մեր հան-  
գըստութիւնը կը փնտըռենք քան թէ Քը-  
րիստոսի փառքը, թէ որ մեք ուղածները կ'ը-  
նենք եւ Աստուծոյ կամքը զանց կ'առնենք,  
թէ որ իրեն աղօթքը ընելը չենք սիրեր եւ  
ուրախութիւնով իր սուրբ խօսքը չենք սոր-  
վիր, թէ որ Քրիստոսի հետ միացածնե-  
րուն ընկերութեանը չենք մտներ, յայտնի  
կը ցուցունենք թէ կենդանիի անուն ունինք  
ու մեռած ենք:

Իայց դուն իմ որդեակս՝ դօրացիր ան-  
շնորհքովը որ Քրիստոս Հիսուսով է: Ի-  
Տէ. 1.

Ամեն քրիստոնեայ ատեն ատեն ինք զի՞ն-

Քը շատ տկար եւ անօդնական կը տեսնէ .  
 զօրաւոր թշնամիներ ունի , որոնք կարող  
 չել յաղթել : Աստանան միշտ իր կործառ  
 ումը կը փնտըռէ , եւ ինքը կարող չել առ  
 զօրաւոր հակառակորդին ձեռքէն փախչիլ .  
 Երբեմն աշխարհք իրեն դէմ կ'ելլէ , եւ  
 ինքինքը անկարող կը դժնէ դէմ դնելու :  
 Բայց Պօղոս հոս կ'ըսէ թէ ինտոր կրնանք  
 զօրանալ , այսինքն Տէր Հիսուս Վրիստո-  
 սով եղած շնորհքովը : Աս շնորհքին ա-  
 ռատութիւնը լեզուով չ'պատմուիր , անիւ-  
 կայ անհատնում է . ամեն պակսութիւն-  
 ներնիս անկէց կրնանք դժնել : Եւ որովհե-  
 տեւ կրնանք առ շնորհքին մօտենալ , անոր  
 համար մեր թշնամիներուն առջեւը տկա-  
 րանալու հրաման չունինք : Անզի հրամայ-  
 ուած է որ զօրաւոր ըլլանք , չէ թէ մեզմէ  
 հապա Վրիստոս Հիսուսով եղած շնորհ-  
 քովը : Թէ որ Աստանան մեզ ուղէ փոր-  
 ձել Աստուծոյ մեզ փրկել ուղելուն վրայ  
 երկմտելու , կամ անոր խոստմունքներուն  
 չ'հաւատալու , եւ կամ մեր մեղքերուն համար  
 յուսահատութեան մեջ իյնալու , բոլոր իր  
 ջանքերուն դէմ դնելու ենք Հիսուս Վր-  
 իստոսով եղած շնորհքովը : Աս շնորհքը  
 ունենալու ենք , անոր հաւատալու ենք եւ

բոլորովին անոր ապաւինելու ենք : Ասաշա  
խարհիս ոչ դրդումները եւ ոչ թշուառու-  
թիւնները կրնան մեզի բան մը ընել, թէ որ  
Վրիստոս Հիսուսով եղած շնորհքովը լեց-  
ուինք :

## 28

Ուստի սիրելիք՝ որովհետեւ աս խոստ-  
մունքը մենք ունինք, մեր անձերը մարմինի  
ու հոգիի ամեն կերպ պղծութենէն մաք-  
րենք, սրբութիւն գործելով Աստուծոյ  
վախովը : Տ. Կարնել. 1. 1 :

Աստուծոյ վերջին խոստմունքը որ Պօղոս  
յիշեց՝ ասէր, թէ Ձեզ պիտի ընդունիմ, եւ  
ես ձեզի Նայր պիտի ըլլամ, ու դուք ինձի  
տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք՝ կ'ըսէ,  
Ամենակալ Տէրը : Աս խօսքը ինչ աղէկ յոր-  
դորանք մըն էր անոնք սրբութեան կանչե-  
լու : Ի՞նչ, Աստուծ մեզի՝ մեղանչական  
որդերուս խոստացաւ թէ ինքը մեզի Նայր  
եւ մենք իրեն որդի՝ պիտի ըլլանք : աս բանը  
մեզի՝ բոլորովին անարժաններուս համար  
է : Ուրեմն ինտոր եռանդով աշխատելու

Անք օրէ օր ամեն մեզք ձգելու, որ մեր գը-  
թած այրը չբարկացունենք: Խնտոր շա-  
րունակ պրութիւն դործելու նայելու ենք,  
որ ան վրանիս եղած սուրբ անունը անպա-  
տիւ չընենք: Տէր Ամենակալ Աստուծոյ  
զաւկըները արդեօք իր մեծ թշնամիին ծա-  
ռայելու են, եւ կամ սրտերնին ու զօ-  
րութիւննին աշխարհիս ունայնութիւննե-  
րուն տալու են: Առոնալու են երկնային  
ծնունդով ծնած ըլլալնին, եւ աս աշխար-  
հիս որդւոցը պէս ապրելու են: Ծուտով  
մեր Երկնաւոր այրը բոլոր իր զաւկըները  
իր տունը պիտի կանչէ . շատ չանցած  
մեզմէ առաջ գացող եղբայրներնիս ու բոյ-  
րերնիս պիտի տեսնենք, եւ անոնց ու սուրբ  
հրեշտակներուն հետ Աստուծոյ առջեւը  
պիտի կայնինք: Աւեմն ամեն օր պատրաս-  
տութիւն տեսնենք ան սուրբ ժողովին մէջ  
ընդունուելու:

Աէ որ անոնք ամենը սպասաւորող հոգի-  
ներ են, որ կը խրկուին սպասաւորութեան  
անոնց համար, որոնք որ փրկութիւն պիտի  
ժառանգեն: Եբբ. 1. 14:

Երբոր մէկ մեղաւոր մը ապաշխարէ եւ  
Վստուծոյ դառնայ , երկնից բոլոր հրեշ-  
տակները անոր վրայ կ'ուրախանան : Եւան-  
դադար հաղորդակցութիւն կ'ընեն անոր  
հետ մինչեւ որ Վստուծոյ աթոռին առջեւի  
ան փառաւոր ընկերութեանը գայ խառն-  
ուի : Վնոնք շատ բարձր աստիճանի մէջ են .  
Ճիշտ Վստուծոյ առջեւն են , սրբութիւնով  
կատարեալ են , եւ սակայն վար կ'իջնան  
փրկութեան ժառանգներուն սպասաւորու-  
թիւն ընելու : Չկայ մէկ հաւատացեալ մը ,  
թէ եւ շատ նուաստ եւ անարդ ըլլայ աշ-  
խարհիս առջեւը , թէ եւ շատ աղքատ եւ  
տգէտ ըլլայ , որուն երկինքի սպասաւոր-  
ները ուրախութիւնով սպասաւորութիւն  
չընեն : Վնոնք անմահ հոգիի մը արժէքը  
աղէկ դիտեն . անոնք կը զգան թէ ինչ մեծ  
պատիւ է Քրիստոսի ընտրածներէն մէկն  
ըլլալը , իր արիւնովը փրկուած , եւ անանկ-  
ներուն ուրախութիւնով կուգան իրենց  
երկնային ճամբորդութեանը մէջ օգնե-  
լու : Անձ պատիւներ են Հիսուսի հաւ-  
տացողներուն տրուած պատիւները . առ  
կեանքիս մէջ բոլոր երկինք վրանին հոգ կը  
տանին : Հիսուս իրենց Ա արդապետը եր-  
կինքի փառաւոր զօրքերը կը խրկէ որ իրենց

ապաստորութիւն ընեն : Ենդադար անոնց  
վրայ հոգ կը տանի , եւ բոլոր իրենց պակ-  
սութիւնները կը լեցունէ : Ուրեմն թէ որ  
հրեշտակները մեզ կը հոգան , աղեկնայինք  
ինքզինքնիս եւ զգոյշ ըլլանք , որ վերջա-  
պէս անոնց հետ մէկտեղ ըլլանք երկինքին  
մէջ :

## 30

Ըստ նեղութիւններով պէտք է մեզի  
Վստուծոյ թագաւորութիւնը մտնալ :  
Կազմ . Ժ.Դ . 21 :

Քիսուս Վրիստոս երբէք մարդիկ իր  
աշակերտները ըլլալու չ'հրաւիրեց աշխար-  
հային հանգստութիւն եւ երջանկութիւն  
խոստանալով : Բայտ անոնց որ ինքը իր  
դլուխը գնելու տեղ մը չունի . եւ թէ բա-  
ւական է ծառային իր տէրոջը պէս ըլլալ :  
Ինք աշխարհիս ասելի էր , եւ իմացուց իր  
աշակերտներուն որ իրենք ալ աշխարհի ա-  
տելի պիտի ըլլան : Եւ յիրաւի Վրիստոսի  
գալէն մինչեւ աս օրս հաւատացեալները  
շատ նեղութիւնով Վստուծոյ թագաւորու-

թիւնը մտան: Ամեն դարի մէջ եւ ամեն երկիր ուր որ չար մարդոց ձեռքը դօբութիւն կար, Աստուծոյ ժողովուրդը հալածեցին ու հազարաւոր մարդիկ արիւնաժամանակ մահուաւամբ երկինքը գացին: Եւ ուր տեղ որ եւ կեղեցին խաղաղութիւն կը վայլէր, չո՞ն ալ Աստուած աղէկ սեպեց նեղութիւն խրկել որ իր զաւկըները երկինքը մանելու կատարեալ ըլլան: Տէրը ով որ սիրէ կը չեխէ, եւ անանկով սրտերնին աշխարհէս եւ աշխարհային բարութիւններէն կը կարէ: Աս կերպով իրենց սէրը զլխաւորապէս իր վրայ հաստատել կուտայ, որ ինքն է մի միայն անփոփոխ Աստուածը, եւ կը յորդորէ անոնք որ իր ներկայութեանը ան սուրբ երջանկութիւնը փնտընեն: Քրիստոնեաները նեղութեան մէջ Աստուծոյ փառք տալու են, որովհետեւ անով աւելի աղէկ կը պատրաստուին երկնային թագաւորութիւնը մտնելու:

Եւ անով պիտի օրհնուին ամեն աղգերը, երանութիւն պիտի տան անոր: Ասով, ՀՅ.

Ա աշխարհիս մէջ բնաւ պիտի չկըր-  
 նանք կատարեալ հասկընալ թէ որչափ  
 պարտականութիւն ունինք Քրիստոսի:  
 Արնանք քիչ շատ զգալ՝ աս խորհրդածու-  
 թիւնը ընելով թէ ինչ պիտի ըլլար աշ-  
 խարհիս վիճակը թէ որ Քրիստոս անի-  
 կայ փրկելու չ'գար: Որովհետեւ ամենքն  
 ալ մեղանչեցին եւ Աստուծոյ անէծքը վրա-  
 նին բերին, ամենքը անոր պատիժը պիտի  
 կրէին: յաւիտենական թշուառութեան  
 մէջ: Եւ մինչեւ անգամ աս աշխարհին ալ  
 դժոխիքի պիտի դարձունէին, ինչու որ բան  
 մը պիտի չ'գտնուէր իրենց չար կիբքերը  
 զսպելու: Ոչ կիրակի ոչ Աստուծաշունչ  
 ոչ բարի մարդու օրինակ եւ ոչ սրբութեան  
 քաշող բան մը պիտի ըլլար աշխարհիս մէջ՝  
 անոնց չար յօժարութիւնները սանձելու, եւ  
 անսանձ մնալովնին ըրած չարութիւններնին  
 խափանելու: Իոլոր աշխարհիք հեթանոս-  
 ներուն մէջը դտնուած ամենէն խաւար եւ  
 ամենէն անգութ ազգին նման պիտի ըլլար,  
 թէ որ Քրիստոս անոր փրկադործութեանը  
 ձեռք չ'զարնէր: Իայց օրհնեալ է իր անու-  
 նը որ չ'թողուց մեզ մեր մեղքերովը կոր-  
 սուելու. ինքը մեր թագաւորը եւ Փրկիչը  
 եղաւ, եւ բոլոր վայլած օրհնութիւններնիս

ինք ծախու առաւ եւ մեղի պարզեւեց : Եւ  
ժամանակ պիտի գայ՝ որ բոլոր աշխարհնք  
վինքը պիտի ճանչնայ, եւ իրեն պիտի ծա-  
ռայէ ու իրմով պիտի օրհնուի :



# ՆՈՅԵԱՐԵՐ

## 1

Պատուէ քու Տէր Աստուածդ քու ըստացուածքովէ եւ քու արմտեացդ առաջին պտուղովը : Աստի , դ . 9 :

Աստ աշխարհիս հարստութիւններուն փափաքը միշտ մարդս մեղաց կ'առաջնորդէ ։ Տայց հոս մէկ սկզբունք մը կայ , որ անիկայ մեղի մեր ստացուածքները գործածելու կանոնը ընելու ենք : Արնանք աշխատութիւնով եւ կամ ուրիշ օրինաւոր միջոցով մը աշխարհային բարիք ձեռք ձգել , եւ թէ որ Աստուած մեր աշխատութիւնները օրհնէ , շնորհակալութեամբ կրնանք վայլել ինչ որ մեղի պարդեւէ : Տայց յիշելու ենք որ բոլոր ստացուածքնիս Աստուծոյ է , եւ անով զինքը պատուելու ենք : Աստուած մեզմէ չպահանջեր որ հին Նրէից պէս դոհեր եւ մեր առաջին պտուղները իր տա-

Ճարը տանինք, հապա մեր ստացուածքովը  
ինքը պատուելու շատ ճամբայներ դրաւ  
առջեւնիս : Այստ աղքատ կայ քովերնիս,  
եւ թէ որ անոնց նեղեալ պարագաներնուն  
պակսութիւնները հոգանք, մեր ստաց-  
ուածքովը Տէրը պատուած կ'ըլլանք : Անը  
ստացուածքովը մեր ընկերներուն ինչպէս  
որ մարմնաւոր պակսութիւնները անանկ ալ  
հօդեւոր պակսութիւնները կրնանք հոգալ:  
Կրնանք Աստուածաշունչ եւ ուրիշ բարի  
գիրքեր առնել, եւ անոնք չունեցողներուն  
տալ, եւ կամ կեանքի ճամբան չ'զիտցող  
տգետները կրթողներուն օդնութիւն ընել:  
Աս կերպով որչափ շատ ստացուածք որ ու-  
նենայ մարդ մը, կրնայ անիկայ իր Աստուա-  
ծը եւ Փրկիչը պատուելու համար գործա-  
ծել: Թէ որ մեր նպատակը աս բանը ընենք,  
հարստանալու ջանք ընողներուն փափաքը  
մեր ներսիդին ալ պիտի չըլլայ:

Եւ ան ըստաւ. Ալ մէյ մըն ալ քու ա-  
նունդ Յակոբ չըսուի, հապա Խորայէլ  
ըսուի, ինչու որ Աստուծոյ հետ ու մարդոց

Հետ ըմբշամարտեցար եւ ուժը հասաւ :  
Օհնով . 1. 1. . 28 :

Աս խօսքը հրեշտակին ձեռքովը Յակո-  
վին ըսուեցաւ , որուն հետը ըմբշամարտու-  
թիւն ըրաւ օրհնութեան մը համար , երբոք  
իր սրգողած Խսաւ եղբայրը դիմաւորելու  
վրայ էր : Յակով ըմբշամարտութեանը մէջ  
յաղթեց եւ օրհնութիւնը ինք առաւ , եւ  
խաղաղութեամբ իր եղբայրը դիմաւորեց :  
Խսրայէլ անունը բոլոր Աստուծոյ որդւոցը  
տրուած է . անոնք հոգեւոր ու ճշմարիտ  
Խսրայէլ կը կոչուին : Կրնանք ըսել թէ ա-  
նոնք Աստուած կը յաղթեն . աղօթք ըբած  
ժամանակին ըմբշամարտութիւն կ'ընեն աշ-  
խօր հետ , “ Այս զօրութիւնը մէջ կը բերեն ” ,  
երբոք առջին կ'ելքն աղօթք ընելու , եւ իր  
տուած խոստմունքներուն համար կը ստիպ-  
ուի անոնց ականջ կախելու , եւ իրենց ու-  
ղածը տալու : Աստուծոյ եւ մարդոց կը յաղ-  
թեն , վասն զի Աստուծոյ զօրութիւնը ի-  
րենց կողմնէ , որ մարդոց սիրտերը կը դարձ-  
ունէ իրենց խնդրուածքները կատարելու :  
Այսկայն Աստուծոյ կամքին համաձայն բա-  
ներ խնդրելու են , եւ հաւատքով ու խո-  
նարհութիւնով եւ զերմեռանդութիւնով

խնդրելու են . եւ աս կերպով ըլլալու են  
Ճշմարիտ Խսրայէլի աղօթքները : Վստուած  
ինտոր քաղցրութեամբ կը խոնարհի եւ կը  
խոստանայ մեր ձայնին մտիկ ընելու . եւ որ-  
չափ ապերախտութիւն ըրած կ'ըլլանք , թէ  
որ շարունակ իրեն աղօթք չընենք , թէ մեզի  
համար եւ թէ ուրիշներուն համար հոգեւոր  
օրհնութիւններ խնդրելով :

## 3

Եւ Ենովք Վստուծոյ հետ քալեց , եւ  
չէր դտնուեր , ինչու որ Վստուած առաւ  
անիկայ : «Օ՞հնու . Ե . 24:

Վսիկայ երեք հարիւր վաթսունուհինդ  
տարի ապրող մարդու մը վարքին պատմու-  
թիւնն է . եւ սակայն շատ իմաստալից զըր-  
ուցուածք մըն է : Վս իր յիշատակը շատ  
յարդի յիշատակ մըն է . չկայ մարդկային  
դովասանութիւն մը Առորք Հոգիին շունչ-  
ովք զրուած տսանկ մէկ վկայութեան մը  
հաւասար : Վստուծոյ հետ քալեց . կրնայ  
երկու հոգի մէկտեղ քալել մինչեւ որ մէկ-  
զմէկու հետ չմիաբանին : Վստուծոյ հետ  
քալելով , անոր հետ հաղորդակցութիւն

կ'ընէր . իր սիրուր անոր առջին շիտակ էր .  
 Աստուծոյ սիրած բանը կը սիրէր , եւ ա-  
 տած բանը կ'ատէր . Աստուած ինքը ուր որ  
 առաջնորդէր հոն կ'երթար : Անանկ պինտ  
 կապակցութիւն մը ունէր Աստուծոյ հետ ,  
 որ Աստուած ինքը չ'թողուց որ աս մեղաց  
 աշխարհին մէջ քալէ , ու անիկայ իր քովը  
 առաւ : Ենովք շատ մեծ արտօնութիւն մը  
 ընդունեց . բայց նոյն երջանկութիւնը մենք  
 ալ կրնանք վայլել : Ենովքին պէս կրնանք  
 Աստուծոյ հետ քալել , իր մեզմէ պահան-  
 ջածը աս է . աս աշխարհիս մէջը պարտաւո-  
 րութիւններ ունինք ընելու , եւ զուարթու-  
 թեամբ կատարելու ենք անոնք Աստուծոյ  
 կամքին հնագանդելով : Իայց աշխարհային  
 գործքերնուս մէջ զբաղած օրերնիս ստէպ  
 ստէպ Աստուծոյ ներկայութեանը ելլելու  
 ենք : Ամեն ատեն սեպելու ենք թէ Աստու-  
 ծոյ առջին ենք , եւ զգուշանալու ենք որ  
 իր կամքին համաձայն ապրինք . եւ անա-  
 տենը երբոր յարմար տեսնէ Ենովքին պէս  
 մեղ իր քովը կ'առնէ : Իայց չէ թէ Ե-  
 նովքին պէս առանց մահ ճաշակելու . վասն  
 զի մահը պիտի ըլլայ մեղ երկինքը տանող  
 դեսպանը , ուր յաւիտեան Տէրոջը քով  
 պիտի կենանք :

Իսյց մենք ամեննիս բաց երեսով Տէրութը փառքը որպէս թէ Հայելիի մէջ տեսնելով, նոյն պատկերին կը նորոգուինք փառքէն ի փառք, ինչպէս Տէրոջը հոգիէն ըստ Արքան. Գ. 18:

Աւետարանը Աստուծոյ կատարելութիւններուն մէկ փառաւոր յայտնութիւննէ: Հոն կը տեսնենք որպէս թէ Հայելիի մէջ իր ստորոգելեաց անդրադարձութիւնը: Իր սրբութիւնը արդարութիւնը ողորմութիւնը եւ իր սէրը աւետարանին մէջ յայտնի կ'երեւի: Հին սուրբերը մուժ եւ անկատարժանօթութիւնն մը ունէին անոր վրայ, բայց մենք որ Հիսուս Քրիստոսով յայտնուած բոլոր լոյսը եւ զիտութիւնը կը վայլենք, իր կատարելութիւններուն փառքը քիչ շատ կը տեսնենք: Թէ որ Աստուծոյ բնութեանը վրայ աղեկ տեղեկութիւն մը ունենալ ուղենք, աւետարանը սորվելու ենք. թէ որ աս բանը շարունակ ընենք, նոյն պատկերին պիտի փոխուինք: Որչափ որ զարմանքով կը նայինք իր սրբութեանը դեղեցկութիւններուն վրայ, որոնք մեղի յայտնեց, այնչափ

աւելի իրեն կերպարանակից կ'ըլլանք: Ասի-  
կայ է Առւրբ Հոգիին դործի դրած միջոցը,  
որով սրտերնիս կը սրբէ, եւ մեղ Աստուծոյ  
թագաւորութեանը կը պատրաստէ: Աւրեմն  
թէ որ կը փափաքինք մեղքէ աղատ և սուրբ  
ըլլալու՝ ինչպէս որ Աստուած սուրբ է, ժը-  
րութեամբ սորվինք իր սուրբ խօսքը: Կատ  
իսորհինք իր ընութեանը վրայ՝ ինչպէս որ  
Քրիստոսով յայտնուեցաւ, եւ աղաչենք  
որ Առւրբ Հոգին դայ ու մեղ նոյն պատկե-  
րին փոխէ:

## 5

Ամուր ըռնենք ան յոյսին դաւանութիւ-  
նը առանց շարժելու. ինչու որ ինքը հա-  
ւատարիմ է՝ որ խօսք տուաւ: Եթէ, ձ. 23:

Քրիստոնեայները շտտ փորձութիւն-  
ներ ունին իրենց հաւատքին դաւանութե-  
նէն խախտելու: Աշխարհային մարդիկ ծաղը  
կ'ընեն եւ կ'ատեն, եւ կամ մինչեւ անգամ  
կը հալածեն անոնք ան բանին համար: Աս-  
տանան անոնք կը փորձէ Աստուծոյ հաւա-  
տարմութեանը վրայ երկմտելու, կամ կը

ցուցունէ անոնց թէ ինչ մեծ փորձութիւնն  
ներու կրնան հանդըպիլ բռնած ճամբաներ-  
նուն մէջ, կամ ինչ դժուարութիւններու  
դէմ դնելու են իրենց երկնային ճամբորդ-  
ութեանը մէջ: Եւ կամ բուն իրենց սիրտե-  
րը իրենք կը յորդորեն ջանքերնին մէկ դի  
ձգելու, եւ աշխարհային ճամբայներու  
գառնալու: Ճայց երանելի է մինչեւ վերջը  
դիմացողը. մեր դաւանութիւնը փառաւոր  
դաւանութիւն մըն է, անիկայ ամուր բռո-  
նենք առանց շարժելու: Վանկ դաւանու-  
թիւն մըն է որ կեանք՝ զօրութիւն եւ յա-  
ւիտենական երջանկութիւն կուտայ մեղի.  
անիկայ ձգելու համար եկած ամեն փորձու-  
թեան դէմ կենանք: Օձէ որ ասանկ ամուր  
բռնենք մեր յոյսին դաւանութիւնը, մեր  
ըրած վստահութեանը համար պիտի չամըչ-  
նանք: Հաւատարիմ է ան որ խօսք տուաւ.  
բոլոր ան խօսքերը, որոնց վրայ վստահու-  
թիւննիս դրած ենք, բոլոր տիեզերքը պիտի  
տեսնայ թէ անփոփոխ ճշմարտութիւններ  
են եղեր: Ճոլոր իր խոստմունքները պիտի  
կատարէ. պիտի օդնէ մեղի մեղաց եւ Վա-  
տանային յաղթելու, եւ վերջապէս յաղ-  
թութեան պսակը պիտի տայ մեղի երկինքը:

Ա ասն զի մեղի ճիշդ ասանկ քահանոյա-  
պետ մը կը վայլէր, սուրբ՝ անմեղ՝ անա-  
րատ՝ մեղաւորներէն զատուած՝ ու երկին-  
քէն ալ բարձրցած։ Եբք. 1. 26։

Ա ովկիսական տնտեսութեան մէջ քա-  
հանայապետական պաշտօնը շատ բարձր  
պաշտօն մըն էր. ժողովուրդին համար պա-  
տարագներ եւ զոհեր կը մատուցանէր։ Էր-  
բոր քաւութեան ան մեծ օրը գար, ժողո-  
վուրդին կողմանէ միջնորդութիւն կ'ընէր,  
անոնց տեղը ինքը Արբութիւն սրբութեան-  
ցը մտնելով եւ քաւութեան արիւնը մա-  
տուցանելով։ Խայց ասանկ զոհերը մեղքչե-  
ին կրնար վերցունել. հաղարաւոր ցուլեր  
ու նոխաղներ բաւական չէին մեր մեղքերը  
քաւելու։ Խայց աս զոհերը ան մեծ զոհին  
Խորհրդաւոր նշանն էին որ պիտի մատուց-  
ուէր, եւ ան քահանայները ան մեծ քա-  
հանայապետին օրինակն էին որ պիտի գար։  
Հիսուս եկաւ եւ ինքղինքը զոհեց մեր մեղ-  
քերուն քաւութեանը համար։ Անիկայ ան-  
փոփոխ քահանայութիւն մը ունի. պէտք  
չէր որ հին քահանաներուն պէս առաջ ի-

ըեն համար քաւութիւն ընէր, հապա ինքը  
սուրբ՝ անմեղ՝ եւ անարատ էր: Ինքը Վա-  
հանայապետ եւ միանդամայն զոհ ալէ.  
մեր յանցանքները արարած մը պատարա-  
գելով չ'վերցուց, հապա ինքը անձամբ ե-  
կաւ իբրեւ Աստուծոյ սուրբ Որդին, եւ իր  
արիւնը մեղի համար թափեց: Ասկէց պրզ-  
տիկ բանով մը մեղքերուն քաւութիւն  
չէր կրնար ըլլալ. եւ ուրիշ էակ մըն ալ չէր  
կրնար մեղի Վահանայապետ ըլլալ: (Օրհ-  
նեալ է, եւ յաւիտեանս օրհնեալ ըլլայ  
ինքը որ աս դործիս ձեռք զարկաւ եւ մեր  
փրկութեանը ճամբայ մը բացաւ:

## 7

Իսյց ասիկայ մէկ պատարագ մը մատուց  
մեղքերու համար, ու մշտնջենաւորապէս  
Աստուծոյ աջ կողմը նստաւ: Խճճ. ձ. 12:

**Հ**րէից քահանաները ամեն օր պատարագ  
կը մատուցանէին, վասն զի իրենց անզօր ու-  
անկատար պատարագները չէին կրնար մեղք  
վերցունել: Իսյց մեծ Վահանայապե-  
տը մէկ պատարագ մը մատուց, որ բաւա-

Պան է բոլոր աշխարհիս մեղքերը քաւելու,  
ինքզինքը մատուցանելով պատարադ մա-  
տուցանելը ալ յաւիտեանս վերջացուց: Աս  
է Աստուծոյ ընդունելի ան մէկհատիկ քա-  
ռութիւնը, ուստի ալ ուրիշ մեղաց պա-  
տարադ չ'կայ: Պարապ բան է մտածելը թէ  
մեր գործքերովը, կամ այս ինչ եւ այն ինչ  
պատարագներով, չարչարանք քաշելով եւ  
կամ ինչ եւ իցէ գործքով մեղաց քաւ-  
ութիւն կրնայ ըլլալ: Ծիսուս ՚Քրիս-  
տոս ան Տէ՛ պատրիարքը մատուց: Ուէ որ  
Հոգիներնուս փրկութիւնը փնտրուենք, իրեն  
երթալու ենք որ իր արիւնովը ծախու ա-  
ռած օրհնութիւնները մեղի տայ: Ուէ որ իր  
ըրած քաւութեանը չապաւինինք ու իր ար-  
իւնը արհամարհենք, թէ որ մենք մեղմէ բան  
մը ընել ուղենք մեղքերնիս քաւելու հա-  
մար, եւ յաւիտենական կեանքը իրբեւ իր  
ձրի պարգեւը չընդունինք, ալ յոյս չ'կայ  
մեղի, եւ մեր անօրէնութիւններուն պտու-  
ղը յաւիտեան պիտի քաղենք:

թէ որ մարդ մը մարդասպանութիւն  
կամ գողութիւն ընէ, ամեն մարդ անիկայ  
մեծ մեղաւոր մը կը ճանչնայ : թէ որ մարդ  
մը սուտ խօսի կամ խաբէքայութիւն ընէ,  
եւ կամ իր աղգականներուն հետ անվայել  
կերպով վարուի, դիւրաւ կը տեսնուի թէ  
մեղաւոր է : թէ որ մարդ մը բոլոր կրօնա-  
կան պարտաւորութիւնները զանց առնէ,  
եւ յայտնի մեղք դործէ, պայծառ կ'երե-  
ւայ թէ մեղաւոր է : Իայց թէ որ մարդ մը  
քնութեամբ քաղցր ըլլայ, եւ բոլոր իր աղ-  
գականներուն ու բարեկամներուն հետ սի-  
ըով վարուի, թէ որ ամեն բանի մէջ իր ըն-  
կերին հետ արդարութեամբ վարուի ու  
բոլոր զգուշութիւնով ճշմարտութեան ե-  
տեւէ ըլլայ, եւ թէ որ կրօնական արտաքին  
պարտաւորութիւններուն ամենքն ալ պա-  
հէ, շատ դժուար բան է իր մեղաւոր ըլլա-  
լը տեսնել, թէ եւ ինք դիտնայ թէ չէր չի-  
սում : Քրիստոսի վրայ ճշմարիտ եւ կենդա-  
նի հաւատք չունի : Իայց երբոր Առւրբ-  
նոգին իր սիրտը իջնայ, իրեն կը ցուցունէ  
իր ան մեծ անհաւատութեան յանցանքը :  
Առւրբ Հոգին կրնայ զգացունել մար-  
դիմկներուն, թէ մարդոց դէմ դործած բո-  
լոր մեղքերնին Քրիստոսի վրայ ըրած ան-

Հաւատութիւններնուն քով պղտիկ նն։  
 Աստուծոյ Որդին իր երկնային աժմոռը ձգէ  
 աշխարհք գայ, եւ չարչարանաց կեանք մը  
 անցունելէն ետեւ՝ իր արիւնը խաչին վր-  
 բայ թափէ որ մագիկիկ փրկուին, եւ ան մար-  
 դիկը աս փրկիչը ատեն եւ աս արիւնով  
 ծախու առնուած փրկութիւնը չընդունին։  
 աս բանը՝ Ուրբ Հոգիէն սորված անձը մե-  
 զաց վերջին ծայրը եւ յաւիտենական մահ-  
 ուան արժանի չարութիւն մը կը սեպէ։

## 9

Որովհետեւ մեր Աստուածը մաշող կը-  
 րակէ։ Ե. Է. Ժ. Տ. 29։

Ճաէ որ մեղաւորները Աստուծոյ բնու-  
 թիւնը գիտնային, պիտի սարսըփէին իր  
 բարկութեանը եւ անէծքին տակը ըլլալնուն  
 համար։ Անիկայ անհուն սրբութիւն ունի  
 եւ անհուն զզուանքով մեղքէ կը դարշի,  
 ինք ըստ որ ով որ մեղք գործէ պիտի մեռ-  
 նի. պիտի չժողու ամենէն փոքր մեղքը որ  
 առանց պատիժէ անցնի. բոլոր անօրէնու-

թիւն գործողներուն մաշող կրակ մը պիտի  
ըլլայ: Ասսուրք Աստուծոյն դէմ ամենքս ալ  
մեղանչեցինք . անժիւ անդամ իր օրէնքը  
ոտքի տակ առինք , արդարութեամբ բար-  
կացած է մեղի , ուրեմն իր բարկութենէն  
ինտօր պիտի աղատինք : Վիշտ մեր բոլոր-  
տիքն է ու մենք իր ձեռքն ենք , ինտօր պի-  
տի աղատինք աս մաշող կրակէն : Յիսուս  
Քրիստոս ինքզինքը մեղաւորներուն ապա-  
ւէնը կ'ընէ . ինք իր արիւնը թափեց ու կը-  
հրամայէ մեղի որ անով լուացուինք ու սրբ-  
քուինք : Կը հրաւիրէ մեղ որ բոլոր մեղքեր-  
նիս ձգենք , եւ իր արդարութիւնովը Աս-  
տուծոյ առջեւը ելլենք : Ծէ որ աս բանը  
ընենք Աստուծոյ հաճոյ կ'ըլլանք , ինչպէս  
որ իր սիրելի Արդին իրեն հաճոյ է : Իսյց  
թէ որ աս Փրկիչը վար զարնենք եւ մեր  
արդարութեանը ապաւինելով Աստուծոյ  
առջեւը ելլանք , զինքը մաշող կրակ պիտի  
դտնենք:

Ինչու որ ինքը այս ձեղ կը սիրէ , որ  
դուք իս սիրեցիք՝ եւ հաւացիք թէ ես  
Աստուծմէ ելայ : Յակ , ձ.օ . 27 :

Աստուած բոլոր իր Որդին սիրող եւ  
 պատուողները կը սիրէ . իրեն շատ հաճելի  
 բան է անիկայ փառաւորելը, եւ կ'ուզէ որ  
 ամեն մարդ իր Որդին պատուէ, ինչպէս որ  
 չայրը կը պատուեն : Անոնք որ Յիսուս  
 Քրիստոսը կը սիրեն եւ անոր կը հաւտան,  
 չայր Աստուած անոնք կը ճանչնայ թէ իր  
 որդիներն են եւ սիրով կը նայի վրանին, ու  
 բոլոր մեղքերնուն կը ներէ . Աստուծոյ հա-  
 ճոյ ըլլալու ճամբան միայն ասիկայ է : Ան-  
 դաւորները իր քովը՝ կրնար առնել, թէ որ  
 Քրիստոսինը ու անով թողութիւն գտած  
 չըլլան : Բոլոր Փրկիչը արհամարհողները  
 Աստուծոյ բարկութիւնը պիտի կրեն, վա-  
 սըն զի իր սիրելի Որդին անպատիւ ըսին ։  
 Փրկութեան ճամբան գիտցող մեղաւորնե-  
 րը թէ որ հոգիներնուն փրկութիւնը՝ փըն-  
 տրուեն Աստուծոյ դատապարտութիւնը պի-  
 տի ընդունին, չէ թէ միայն բոլոր կեանքեր-  
 նին իր օրէնքին անհնաղանդութիւն ընեւ-  
 լով անցունելնուն համար, հապա եւս ա-  
 ռաւել իր սիրելի Որդին անարդելնուն ու  
 արհամարհելնուն համար : Խնտ՞որ կը նանք  
 աղատիլ թէ որ աս մեծ փրկութիւնը ատենք :

Յիսուս պատասխան տուաւ . Խմ թադաւորութիւնս աս աշխարհէս չէ . թէ որ աս աշխարհէս ըլլար իմ թագաւորութիւնս , իմ սպասաւորներս կը կուռէին՝ որ ես ըստէաններուն ձեռքը չ'մատնուիմ . ուստի իմ թագաւորութիւնս ասկէց չէ : Հայէ, ձ.թ. 36:

Վրիստոնեայ անունով մարդիկ ժամանակ ժամանակ աշխատեցան երեւելի աշխարհային թագաւորութիւն մը հաստատել : Եկեղեցիին աս տեսակ պաշտօնեանները զօրութիւն՝ հարստութիւն եւ պատիւ ձեռք ձգեցին . ջանացին քրիստոնէութիւնը սուրով տարածել , եւ հերետիկոս սեպածներնին հալածեցին ու մեղոցուցին : Բայց Վրիստոսի հաստատել ուղած թագաւորութիւնը ասանկ չէ . ինք աշխարհիս վրայ եղած ատենը դլուխը դընելու տեղ չունէր , եւ բնաւ դիտաւորութիւն չունէր որ մարդիկ իր աշակերտները ըլլալով հարստութիւն եւ պատիւ ստանան : Եթ առաջին աշակերտները աղքատներէն ընտրեց , “ու զօրաւորները եւ աղնուականները չկանչուեցան” : Աս թագաւորութիւն-

ըս հոգեւոր է, ասիկայ մարդոց սրտերուն  
մէջ հաստատուած է, ու իր տուած պա-  
տիւներն են արդարութիւն ու սրբութիւն  
եւ ցնծութիւն Առւրբ ոգիով։ Ասթագա-  
ւորութիւնս աշխարհային զօրութիւնով  
տարածուելու չէ, “Ա’նը զէնքերը մարմնա-  
ւոր չեն, հապա հոգեւոր”, կ’ըսէ առաքեա-  
լը։ “Ա, աեւ աս թագաւորութեանս անդամ-  
ները իրենց թշնամիները մարմնաւոր պա-  
տիմներով պատժելու չեն. “Ա ուժինդրու-  
թիւնը իմն է, ու ես պիտի հատուցանեմ”»՝  
կ’ըսէ Տէրը։ «Քրիստոսի թագաւորու-  
թեան հակառակորդները յաւիտենական-  
ութեան մէջ պատիմնին պիտի ընդունին,  
եւ իր աշակերտներն ալ հոն պիտի ընդու-  
նին իրենց պատիւն ու վարձքը։

## 12

Եւ կը քարկոծէին Ատելիաննոսը, որ  
կ’աղօթէր ու կ’ըսէր, Տէր Հիսուս՝ ընդու-  
նէ իմ հոգիս։ Գառչ. 1. 58:

Տէր Հիսուս Քրիստոսի վրայ ունեցած  
սիրոյն եւ հաւատարմութեանը համար էր որ  
32

Ատեփանսոս կը մեռնէր : Բայց իր Փրկչին  
վրայ ունեցած վստահութիւնովը աս փոր-  
ձութեան ժամուն մէջ չ'տկարացաւ : Ան-  
պէտեւ հիմա իր թշնամիներուն ձեռքն էր ,  
բայց տակաւին կը հաւատար թէ ՞ Քրիստոս  
կարող է զինքը փրկել , եւ հաւատքով հո-  
գին անոր ձեռքը յանձնեց , երբոր իր կատ-  
ղած թշնամիները զինքը կը քարկոծէին :  
Վատուած երբեմն թոյլտուութիւն կ'ընէ որ  
չար մարդոց իր ծառայներուն գէմ ըրած  
խորհուրդները յաջողին . բարի գիտաւորու-  
թիւններով իրենց մարմինները անոնց ձեռ-  
քը կը ձգէ : Բայց հոգիին վեաս մը չեն կը բ-  
նար հասցունել . հոգին միայն ժամ մը ա-  
ռաջ Փրկչին քով կրնան խրկել : ՞ անի  
որ ան չար մարդիկը իրենց կատաղութիւնը  
Ատեփաննոսին վըստ կը թափէին ինքը մեծ  
խաղաղութեան մէջ էր : Ենոնք իրենց չա-  
րութիւնը կը կատարէին , բայց ան ինքզին-  
քը իր Տէրոջը եւ Ալորդապետին ձեռքը  
յանձնեց , որով ապահով եւ երջանիկ էր :  
Անէ որ կարենանք հաւատքով ինքզինքնիւ  
Տէր Յիսուս Քրիստոսի ձեռքը յանձնել ,  
ալ մարդոց մեղի ըրածներէն չենք վախնար :  
Անհընչ եղանակով որդայ թող դայ , մի-  
այն խոնարհ հաւատքով հոգինիս Քրիս-

տոսի յանձնելու ենք ու ապահով կ'ըլլանք:

## 13

Ոմանք չարչարուեցան՝ ու չընդունեցին  
աղատուիլ, որ ան լաւագոյն յարութեանը  
հասնին: Եբք. ձ.Վ. 35:

Առաքեալը աս խօսքերը հաւատքին դօ-  
րութեանը վայ խօսած ժամանակը ըստ :  
Աստուծոյ ծառաները անով զօրացած ամե-  
նամեծ չարչարանքներու դիմացան, ու չըն-  
դունեցին աղատուիլ, որ եթէ Տէրոջը ճամ-  
բաները արհամարհէին կընային խալսիլ:  
Բայց աչքերնին աներեւոյթ բաներու վրայ  
էր, հաւատքը իրենց լոյս էր, անոնք ան բա-  
ներուն կընայէին որ մինչեւ ի մահ հա-  
ւատարմութիւն ընելովներէն՝ պիտի ձեռք ձը-  
դէին, եւ ասանկով ան անցաւոր հանդստու-  
թիւնը աչքերնուն ոչինչ կ'երեւար, որ կըր-  
նային դանել իրենց թշնամիներէն՝ հա-  
ւատքնին ուրանալով: Անրմիննին կը տան-  
ջուէր քաշած չարչարանքներովնին, բայց  
անոնք անկէց ետեւ գալու լաւագոյն յա-  
րութեան մը կընայէին: Աւ ըրածնին խե-

լացութիւն էր. Հիմա ու հարիւրաւոր տարիներ եղաւ որ անոր պտուղը կըքաղեն երկնային փառաց մէջ: Ա' նք ալ սորվինք հաւատքին աչքովը ներկայ ու դալու բաներուն վրայ նայելու: Երբոր մեր Փրկիչը արհամարհելու եւ կամ դէպի իրեն ունեցած պարտաւորութիւններնուս մէկը ձգելու փորձուինք, ան լաւագոյն յարութիւնը մըտքերնիս բերենք որն որ գտնել կը յուսանք: Երկրաւոր հրապուրանաց զօրութիւնը կոտըրտենք ան երանութեանը վրայ խորհելով՝ որ Քրիստոսի հետեւողներուն պատրաստուած է երկինքին մէջը:

## 14

Աս մորթուած գառը արժանի է մէծութիւն առնել՝ ու իմաստութիւն՝ եւ զօրութիւն՝ ու պատիւ՝ եւ փառք ու օրհնութիւն: Յայտ. Ե. 12:

Ասիկայ Յովհաննէսին ան բազմութենէն լսած փառաբանութիւնն է, որոնց համբանքն էր բիւրք բիւրուց եւ հաղարք հաղարաց: Ան մորթուած Կառը յաւիտեանս

յաւիտենից փրկուածներուն փառաբանու-  
թեանը առարկան պիտի ըլլայ: Ե՞ն հիմա  
բարձրացած է փառքով եւ պատիւով ։ ։ ։  
որ աջ կողմը, սակայն դեռ վրան են իր ըս-  
պաննուելուն նշանները: Տակաւին կը յի-  
շէ իր ցածութեանը եւ չարչարանաց օրե-  
րը, եւ երկնից բոլոր բնակիչներն ալ կը յի-  
շեն անոնք: Չ'կրնար մէկ փրկուած հոգի  
մը երկինքը մտնել առանց նախ եւ առաջ  
մորթուած Կառին վրայ նայելու եւ անոր  
փառաբանութիւն կարդալու: Եւ աս փա-  
ռաբանութիւնը պիտի չ'դադրի. Փրկուած  
մեղաւոր մը երբէք պիտի չ'մոռնայ որ իր  
փրկութիւնը ան մորթուած Կառէն ըն-  
դունեց: Եւ քանի որ բարձրանայ երկնա-  
յին երանութիւններու մէջ, այնչափ պիտի  
զգայ թէ որչափ պարտականութիւն ունի  
իր Փրկչին: Եւ աւելի բարձր անուշ ձայ-  
նով փառաբանութիւն պիտի կարդան ը-  
սելով, “Ետ մորթուած դառը արժանի է  
մեծութիւն առնել, ու իմաստութիւն՝ եւ  
զօրութիւն՝ ու պատիւ՝ եւ փառք ու օրհ-  
նութիւն”:

---

Ծիսուս նորէն ըսաւ անոնց . Ես կեր-  
թամ՝ ու իս պիտի մինտըռէք , եւ ձեր մեղ-  
քերուն մէջը պիտի մեռնիք , ինչու որ ուր  
որ ես կ'երթամ , դուք չէք կրնար գալ:  
Ծակ . բ . 21 :

Հիսուս Նրէաներուն ողորմելու եկաւ,  
ու անոնք զինքը չընդունեցին : Անոնք խր-  
բատեց ու հրաւիրեց եւ աղաչեց անոնց ,  
բայց ամենը զուր տեղը . իր խօսքերը ար-  
համարհելնուն վրայ հաստատ կեցան , եւ  
զինքը իրենց Փրկիչ չընդունեցին : Անատե-  
նը իմացուց անոնց թէ իրենց ցուցուցած  
ողորմութիւնը ու համբերութիւնը յաւի-  
տեան պիտի չ'մնայ : Անոնց մէ հրաժարելու  
վրայ էր . նեղութեան ժամերնուն պիտի  
մինտըռէին զինքը , բայց պիտի չ'դժնէին :  
Անղքերնուն մէջը պիտի մեռնէին , եւ ըը-  
նաւ պիտի չ'կրնային իր ներկայութեանը  
երթալ : Հիմա ալ Քրիստոս մեղաւորնե-  
րուն հետ՝ Նրէից հետ վարուածին պէս կը-  
վարուի . ողորմութեան պարգեւները անոնց  
կըցուցունէ , եւ մէծ երկայնմտութիւնով  
կը հրաւիրէ անոնք՝ որ իրեն գան ու փըր-  
կաւին : Բայց թէ որ իր շնորհքը արհամար-

Հեղնին շարունակեն, ալ անոնք կը թողու  
որ իրենց ընտրած ճամբան երթան, եւ մեղ-  
քերնուն մէջը մեռնին։ Ի՞ոլոր գործած մեղ-  
քերնին վրանին բեռնաւորուած՝ դատաս-  
տանի պիտի կայնին Աստուծոյ առջին։ Ի՞նչ  
ահեղ դատապարտութիւն մը պիտի ըլլայ  
անոնց դատապարտութիւնը, որ բոլոր մեղ-  
քերնուն վրայ Փրկիչը արհամարհել մըն  
ալ եւելցուցին։ Ասոնք Վարիստոսի եղած  
տեղը պիտի չ'կընան երթալ։

## 16

Այս սիրտ մը պիտի տամ ձեզի, եւ ներ-  
աերնիգ նոր հոգի մը պիտի դնեմ, ու ձեր  
մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ,  
եւ մարմնեղէն սիրտ պիտի տամ ձեզի։ Ա-  
ռէի. 1. օ., 26։

Աստուած աս կերպով կը վարուի մար-  
դոց բոլոր մեղանչական որդւոցը հետ, ո-  
րոնք իրենները ընելու կ'ընտրէ։ Իրենց մե-  
ղացը մէջ վրանին կը նայի եւ կը տեսնէ  
թէ ինչպէս կը սիրեն մեղքը, եւ ինչպէս  
հաստատուած են անիկայ շարունակելու։

Կը տեսնէ թէ սրտեքնին որչափ կարծրըցած է, եւ դէպի իրենց ցուցուցած ողորմութիւնը ու սէրը անոնց որչափ քիչ աղդուռթիւն կ'ընէ: Կը տեսնէ թէ որչափ քիչ կը նային իր խրատներուն եւ սպառնալիքներուն, եւ սակայն անոնց ողորմելու դիտաւորութիւնը չ'փոխեր: Ա Կոքը կը դնէ անոնք փրկել, ու նոր սիրտ եւ նոր հոգի կուտայ անոնց, ալ անկէց ետեւ մեղք սիրելէն կը դադրին, ու կը սկսին Աստուած եւ սրբութիւնը սիրել: Կը հանէ անոնցմէ իրենց ան քարեղէն եւ անզգայ սիրտը, որ բոլոր իր սէրէն եւ ողորմութենէն ամենեւին պիտի չ'շարժէր, եւ անոնց մարմնեղէն սիրտ կուտայ, որ ան կը նայ մեղքին դէշութիւնը զդալ եւ անոր վրայ ողքալ, եւ Աստուածոյ բարութիւնը տեսնալով կը հալի: Թէ որ փրկուած ենք Աստուածոյ զօրութիւնս ովզ եւ շնորհքովզ փրկուեցանք, թէ որ հիմա մեղաւոր չենք, թէ որ զղջումի զգացումներ կան ներսիդինիս, Աստուածոյ սըրտերնիս փոխելուն համար է, ու իրեն կը վայլէ բոլոր փառքը:

Եւ իմ Հոգիս ձերներսիդին պիտի դնեմ,  
ու պիտի ընկեմ՝ որ իմ օրէնքներուս մէջը  
քալէք, եւ իմ իրաւունքներս պահէք ու  
անոնք կատարէք։ Եպէլ. 1.9. • 27 :

Ոէ թէ միայն մարդուս դարձի գալուն,  
հապաւբոլոր իր ապագայ հնազանդութեանն  
ալ փառքը Աստուծոյ կը վայլէ։ Յէ որ Տէր-  
ոջը օրէնքներովը քալենք ու անոր իրաւ-  
ունքները պահէնք իր Հոգին մեր ներսիդին  
դնելովն է, եւ մեղի անանկ ընել տալովն է։  
Ասանկով մեծ յոյս կ'ունենանք, վասն զի  
թէ որ միայն մեր զօրութեանը ապաւինե-  
լու ըլլայինք, յուսահատութեան մէջ պի-  
տի իյնայինք։ Բայց Աստուած խոստացաւ  
թէ քանի որ մենք ահով ու դողով կը ջա-  
նանք մեր փրկութիւնը ձեռք ձգել, ինք ալ  
ներսիդինիս աշխատի։ Խոստացաւ իր Հո-  
գին մէջերնիս դնելու, վասն որոյ կընանք  
իրեն երթալ, եւ աս իր խոստամունքը մէջ  
բերելով իրմէն զօրութիւն խնդրել ներսի-  
դինիս եղած մեղքը յաղթելու։ Բայց ա-  
զէկ նայինք որ աս Հոգիին դէմ չ'որ-  
ծենք եւ մեղմէ չ'հեռացունենք, որով

Հետեւ մեր բոլոր յոյսը անոր վրայ է :  
 Երբոր մեղ Տէրոջը օրէնքներուն տանի՝  
 իր առաջնորդութեանը հետեւելու ենք . եւ  
 երբոր մեր անձը խոնարհեցունենք իր առ-  
 ջին մեր մեղքերը ապաշխարելով, մեր ներ-  
 սիդին յաջողած գործին բոլոր փառքը ի-  
 րեն տալու ենք :

## 18

Քննենք ու փորձենք մեր ճամբաները,  
 ու Տէրոջը դառնանք : Ո՞ւ . զ., 40 :

Երբոր կը զգանք թէ Տէրոջը բարկու-  
 թիւնը կը կրենք, երբոր ինքզինքը մեղմ-  
 ծածկէ որ իր երեսին լոյսը չ'տեսնանք, եր-  
 բոր չ'կրնանք մօտենալ իրեն աղօթք ընելու,  
 եւ կամ ինքը մտիկ չընէ մեր աղաչանքնե-  
 րուն, տնատենը հաստատ գիտնալու ենք որ  
 մեր մեղքերը մեղ իրմէն հեռացուցին, ու  
 քննելու եւ փորձելու ենք մեր ճամբանե-  
 րը ու Տէրոջը դառնալու ենք : Պէտք է որ  
 շատ անդամ զզանք մեր մեղացը վրայ, ու  
 կրկին եւ կրկին ներում խնդրենք : Ու մեր  
 ճամբանիքն ալ քննելու ենք . գիւրաւ կը-

մոռնանք մեր մեղքերը, կամ անհոգութեամբ մեղք կը դործենք, եւ կամ մեր սըրտին խաբեբայութենէն գրեթէ առանց ըզդալու կը մեղանչենք. անոր համար մեր ճամբաները քննելու ենք, եւ աս գաղտնի կամ մոռցուած մեղքերը գտնելու ենք եւ լուտուծոյ խոստովանելուութողութիւն խընդրելու ենք: «Այելու ենք թէ ինչ բաներով իրմէն մոլորեցանք, եւ վերստին դառնալու եւ զինքը փնտըռելու ենք ապաշխարութիւնով: Ծաէ որ ասանկ Տէրովը դառնանք եւ բոլոր սրտով զինքը փնտըռենք, մեզի պիտի դժոնուի եւ իր թողութիւն տալուն մէկ նշանը պիտի տայ, ու կրկին մեզ իր սիրով պիտի կենգանացունէ:

## 19

Եւ ահա այսօր ես բոլոր երկրիս գացած Ճամբան կ'երթամ: {Ես. Ի՞. 14.

Ո՞եռնիլը միշտ ահեղ բան է, բայց աւելի ահարկու եղած ըլլալու է առջի մարդոց, դեռ որ լոյսն ու անմահութիւնը աւետարանով յայտնուած չէր: Հայց հոս Հեսու

շատ հանդարտութեամբ կը խօսի իր մահա-  
ռւանը վրայ որ մօտ էր . ինք մեզի պէս  
տեղեկութիւն չունէր ան լաւագոյն յա-  
րութեանը եւ Քրիստոսի զինքը սիրող-  
ներուն համար պատրաստած օժեւաննե-  
րուն վրայ : Ի՞սպան իր հաւատքը զօրաւոր էր ,  
կրցաւ իր չ'գիտցած բաններուն սպասել ա-  
պաւինիլ եւ յուսալ Աստուծմէ , մինչեւ որ  
յաւիտենականութեան լուսովը գիտցաւ :  
Իր վերջին ժամերը Աստուծոյ ճշմարտու-  
թիւնը եւ հաւատարմութիւնը վկայելով՝  
անցուց , եւ Խսրայէլի ժողովուրդը յորդո-  
րելով՝ որ անոր հնազանդին ու անոր ծա-  
ռայեն : Խնչպէս որ բոլոր իր կեանքը՝ անանկ  
ալ իր վերջին ժամերը Աստուծոյ իրեն  
յանձնած գործքովը անցուց , եւ այսպէս  
պատրաստուեցաւ հրաժարուելու երբոր իր  
ժամանակը հասաւ : Երանելի բան է թէ որ  
մահը մեղ մեր Ա արդապետին գործին ըդ-  
բաղած գտնէ : Երանելի բան է Հետուին  
պէս մահուան ձայնին հնազանդելու կարող  
ըլլալը , եւ իրեն պէս հանդարտութեամբ  
զատուիլը : Ա մենոր զգուշութիւն ընենք ու  
աղօթենք որ աս երանութիւնը մերն ալ  
ըլլայ :

Այսօր երկինքը ու երկիրը վկայ կը բըռ-  
նեմ ձեզի, որ կեանքն ու մահը, օրհնու-  
թիւնն ու անէծքը ձեր առջեւը դրի: Ը-  
բն. 1. 19:

Այսպէս խօսեցաւ Առվակս Խորայէլա-  
ցւոց երբոր անոնցմէ զատուելու վրայ էր.  
Եւ ցուցուց թէ դէպի իրենց ունեցած բո-  
լոր պարտաւորութիւնը կատարեց: Հաւա-  
տարմութեամբ առջեւնին դրաւ կենաց  
եւ մահուան ճամբան, յորդորելով անոնք  
որ կենաց ճամբան ընտրեն: Քաէ որ կրկին  
մահուան ճամբան ընտրէին, արիւննին ի-  
րենց գլուխնին պիտի ըլլար եւ ինքը ալ  
անպարտ էր: Խրանելի բան է Քրիստոսի  
պաշտօնեայ եղողի մը թէ որ կարենայ ա-  
սանկ երկինքը ու երկիրը վկայ կոչել թէ  
ինքը հաւատարմութեամբ կատարեց իր  
պարտաւորութիւնը, թէ իր ձեռքին տակը  
եղող ժողովուրդին յայտնի ցուցուց կենաց  
ճամբան, եւ յորդորեց անոնք որ անոր մէջը  
քալեն, եւ անոնք մահուան տանող ճամ-  
բէն դգուշացուց որ անկէց ետ կենան: Ա-  
սանկ մէկը Պօղոս առաքեալին պէս կընայ

ըսել թէ բոլոր մարդոց արիւնէն ազատ է ։  
Իսյց իրենց պարտաւորութիւնը զանց ը-  
նողները, եւ փրկութեան ճամբան ժողով-  
ուրդին յայտնապէս չ'սորվեցունողները ահ-  
արկու հաշիւ մը պիտի տան, երբոր իրենց  
ժողովուրդին հետ Վրիստոսի առջին դառ-  
տաստանի կայնին :

## 21

Ուստի կեանքը ընտրէ որ ապրիս դուն  
եւ քու սերունդը։ Տ. Օրին. 1. 19.

Անոնք որ Վրիստոսով եղած փրկու-  
թեան ճամբան գիտեն, եւ կամ Եստու-  
ծոյ խօսքը քովերնին ունին ու կրնան կար-  
դալ, Վովսէսին Խարայելացւոց ըսածը՝ ա-  
նոնց համար ալ է, թէ կեանքն ու մահը,  
օրհնութիւնն ու անէծքը առջեւնիդ է։ Եւ  
անոնց ամենուն ալ Եստուած ինքը կուտայ  
աս յորդորանքը՝ ըսելը, Ուստի կեանքը ընտրեցէք, որ դուք եւ ձեր սերունդը ապ-  
րի։ Ըստ օտար բան է կեանք ընտրելու  
համար ստիպուելու կարօտ ըլլալս, բայց  
անսինկ է։ Վարդիկ մեղքը կըսիրեն եւ ա-

նոր ետեւէն պիտի երթան, թէ եւ դիտնան  
ալ թէ անիկայ յաւիտենական մահուան կը-  
տանի: Աըլքեն կենաց պարդեւներուն ու  
երջանկութեանը վրայօք, կը տեսնեն թէ  
որչափ փափաքելի բան է Կոտուծոյ հնա-  
զանդողներուն ընդունելու յաւիտենական  
վարձքը, եւ դիտեն ալ թէ ինչ սոսկալի  
դատապարտութիւն պիտի ընդունին թէ որ  
մեղաց մէջ մնան, եւ սակայն սրտերնին ա-  
նանկ կապուած է մեղաց հեշտութիւննե-  
րուն հետ, որ անոնցմէ մէկն ալ կենաց ճամ-  
բան պիտի չընտրէ՝ մինչեւ որ Կոտուածիր  
ոգիովը սրտերնին չ'փոխէ: Թէ որ կենաց  
ճամբան ընտրած ենք, միշտ փառք տանք  
Կոտուծոյ: Իր ան մեծ շնորհքով էր որ  
սրտերնիս նորոգեց:

Եւ ահա ճամբուն վրայ երկու կոյրնըս-  
տած էին. երբոր լսեցին թէ Հիսուս կ'անց-  
նի, կանչուըստեցին ու ըսին, Աղօրմէ մեղի  
Հիսուս Որդի Դաւթի: Անդէ. 1. 30:

Կ' մարդիկը Վրիստոսի կը հաւտային:

թէ ինքն էր ԱԿսիան, եւ աղաղակեցին ի-  
րեն ըսելով, Յիսուս Որդի Պատմի: Ար-  
հաւտային թէ աչքերնին բանալու կարող  
է, եւ վստահ էին թէ կը կամի բանալու:  
Չեկան ու աս բանը իրմէն չ'խնդրեցին,  
հապա աղաչեցին որ ողորմի իրենց: Օդա-  
ցին թէ արժանաւորութիւն մը չունեին ան-  
բանը ընդունելու, բայց կրնային աղաչել  
որ իր ողորմութեանը համար խնդիրքնին  
կատարէ: Եյաեւ մեծ եռանդով ու ձանձ-  
բացունելու չափ աղաչեցին. թէպէտ շա-  
տերէն չեխ լսեցին, սակայն չ'դադրեցան  
աղաղակելէն՝ ըսելով, Ողորմէ մեզի Յի-  
սուս Որդի Պատմի: Խնչպէս որ աս կոյ-  
րերը Յիսուսի դացին, անանկ ալ բոլոր  
մեղաւորները իրեն երթալու են իրենց հո-  
գեւոր կարօտութիւնները խնդրելու: Ե-  
նանկ հաւատքով, անանկ խոնարհութիւ-  
նով եւ անանկ ձանձրացուցիչ թախան-  
ձանքով հոգիներնուն փրկութիւնը խնդրե-  
լու են: ԱԿղաց թողութեան հետ բաղկա-  
տելով, որն որ ամենքս ալ խնդրելու ենք  
Քրիստոսէն, շատ փոքր բան մըն է մարմի-  
նին աչքերուն բացուիլը: Ուրեմն անդա-  
դար աղաղակենք իրեն, Ողորմէ մեզի Յի-  
սուս Որդի Պատմի:

Եւ Յիսուս Խղճալով անոնց վրայ, աշ-  
քերնուն դպաւ՝ ու շուտ մը տեսան, եւ ա-  
նոր ետեւէն դացին։ Առաջ. Ի. 33, 34։

Յիսուս նեղեալներուն միշտ կարեկցու-  
թիւն կըցուցունէր, եւ իրեն եկաղ ողոր-  
մութիւն խնդրողներուն մէկը պարապ ետ  
չէր դառնար։ Հիմա ալ աննոյն կարեկից  
Փրկիչնէ. թէ որ ան կոյրերուն պէս իրեն  
երթանք մեզի ալ կ'ողորմի։ Մեղաւորը լա-  
լովիսիս՝ ան կոյրերէն շատ եւել նեղութեան  
մէջ ենք. անոնք միայն իրենց մարմնաւոր  
աչքերը բանալու համար անոր դացին. մենք  
մէր հոգեւոր կուրութիւնը վրաներնուս  
վերցունելու համար անոր պիտի երթանք,  
ու մոքերնիս լուսաւորելու համար որ Աս-  
տուածային Ճշմարտութիւնը հասկընանք  
եւ հոգինիս փրկուի։ Մնենք յաւիտենական  
կենաց պարգեւը ընդունելու համար իրեն  
պիտի երթանք, որ եթէ չ'պարգեւէ մեզի  
յաւիտեան պիտի կորսուինք։ Մն մեզի մօտ  
է ինչպէս որ կոյրերուն մօտէր, եւ ինքը դի-  
տէ բոլոր մեր կարօտութիւնները. թէ որ  
հաւատքով եւ զզջումով իրեն երթանք,

մեզ պարապ ետ պիտի չ'խրկէ : Ենիկայ Եւ-  
մենագութ է . ան նոյն ողորմածութիւնը  
որ զինքը աշխարհք բերաւ մեռնելու , տա-  
կաւին իր վրան է : (Օրհնեալ է Եստուած ,  
որ ասանկ ողորմած Փրկիչ մը ունինք : Բայց  
բնաւ պիտի չ'գթայ անոնց , որոնք կ'ուղեն  
իր ողորմութիւնները ընդունիլ իբրեւ ի-  
բենց բարի գործոցը հատուցումը ու չէ թէ  
անոր ձրի ողորմութեան պարզեւը :

## 24

Եմեն ճուղ որ իմ վրաս է՝ ու պտուղ  
չբերեր , կը կտրէ անիկայ : Հոգւ . Ժ. 2:

Քիսուս ՞ Քրիստոս ինքզինքը որթի մը  
կը նմանցունէ , եւ իբեն հետեւողները ա-  
նոր ճուղերուն : Բայց բազմաթիւ մարդիկ  
կան աշխարհիս մեջ որ Քրիստոսի աշա-  
կերտները ըլլալ կը դաւանին , որոնք գործ-  
քով չեն ցուցուներ թէ իրօք իբենն են :  
Խնտոր որ ճուղը որթին նման է , անանկ ալ  
իր աշակերտները իբեն նման պիտի ըլլան ,  
իր հոգին ունենալու են եւ իր տուած օրի-  
նակին հետեւելու են : Ենոնք իբեն պէս

Աստուծոյ սիրովը եւ իր փառքին նախանձովը լեցուած ըլլալու են, խոնարհ եւ ինքնինքնին ուրացող, ձեռքերնուն եկածին չափ իրենց ընկերին թէ հոգւոյն եւ թէ մարմնոյն օգուտ ընելու ժիր: Ասոնք են բոլոր իր աշակերտներէն ուզած պտուղները, եւ ամեն ճշմարիտ ճուղ որ որթին վրայ հաստատուած է, ասանկ պտուղներ կը բերէ: Անոնք որ քրիստոնեայ կ'անուանին, ու քրիստոնէի պտուղ չեն բերեր, անունին իրենց օգուտ մը չըներ: Աստուծած կը տեսնէ անոնք, եւ ինտոր որ այդեպանը անպտուղ ճուղերը կը կտրէ, անանկ իր ճշշմարիտ աշակերտներուն մէջէն անոնք պիտի հանէ: Արտերնիս ու վարքերնիս քննելու եւ նայելու ենք թէ արդեօք քրիստոնէի պտուղ կը բերենք, որ չըլայ թէ անպտուղ ճուղերու պէս կտրուինք:

25

Եւ ամենը որ պտուղ կը բերէ կը մաք-  
րէ անիկայ, որ շատ եւելօք պտղաբեր ըլ-  
լայ: ՀՅԱՀ. Ժ. 2:

Հմուտ այդեպանը ստեղպ ստեղպ իր այ-

գին կը մաքրէ, կտրելով բոլոր եւելի անպիտան ճռւղերը, որ շատ պտուղ ըլլայ։ Ասանկ ալ Աստուած իր հոգեւոր այգին կը մաքրէ. կ'ուզէ որ շատ պտուղ բերեն իր փառքին համար, ուստի բոլոր ան բաները՝ որ աս նպատակիս կատարուելուն չեն օդներ ու արգելք կ'ըլլան, կը կտրէ։ Աստուած շատ ճամբաներով կը մաքրէ իր որդուոցը սիրտը, աս բանը ընելու համար շատ անդամ նեղութիւն կը գործածէ։ Կը տեսնէ որ սէրերնուն մեծ մասը աշխարհային վայելչութիւններու կամ երկրաւոր բարեկամներու տուած են, եւ առ Աստուած ունեցած հաւատքներնին ու սէրերնին շաճիր. անոր համար կը նեղէ անոնք իրենց շատ սիրած բաներնին ձեռքերնուն առնելով, եւ այսպէս կը յորդորուին կրկին իրեն մօտենալու, առաւել եւս իր փառքին համար ապրելու։ Աս ճամբան միշտ կը գործածէ, հաւատարմութեամբ կը նեղէ անոնք իրենց օգտին համար. չ'ժողուր որ մեղաց մէջ մնան, հապա իրենց բոլոր կուռքերէն իրենք պիտի սրբէ որ Աստուած փառաւորեն։ Երանի թէ իրեն մաքրած ճռւղերէն ըլլայինք, որ շատ պտուղ բերէինք, ու չէ թէ կտրածներէն։

Վիայն թէ Աստուծոյ շնորհօքն եմ՝ ինչ  
որ եմ. եւ անոր շնորհքը որ իմ վրասէ,  
պարապ բան մը չեղաւ, հապա անոնցմէա-  
մենէն աւելի ես աշխատեցայ. եւ չէ թէ  
ես, հապա Աստուծոյ շնորհքը՝ որ ինձի հետ  
էր: Ե Կո՞չնե՞ւ ԺԵ. 10:

**Պ**օղոս Յիսուս Քրիստոսի մէկ հաւա-  
տարիմ եւ յաջողակ ծառան էր: Ըստ  
կ'աշխատէր եւ Աստուած իր աշխատանք-  
ները յաջողութիւնով պսակեց. իր ձեռ-  
քովը շատ հոգիներ դարձան, ու եկեղեցի-  
ներ եղան: Խայց ասով միթէ կը պարծե-  
նա՞ր, եւ կամ կը խորհէր թէ ասանկով  
արժանաւորութիւն մը ունեցաւ երկինք  
մտնելու. քաւ լիցի: **Չ**'մոռցաւ իր ինտոր  
մեղաւոր ըլլալը, եւ ինտոր ամբարտաւա-  
նութեամբ Քրիստոսի դէմ պատերազմի-  
լը: **Չ**'մոռցաւ Փրկչին ինտոր ողորմութիւ-  
նով իր դէմը ելլելը, երբոր կատղած ա-  
նոր ժողովուրդին վրայ կ'երթար, եւ սի-  
րով իր չար սիրտը յաղթելը: **Չէ.** կը-  
ճանչնար թէ Աստուծոյ շնորհօքն էր՝ ինչ որ  
էր: Անոնց ամենէն եւել աշխատիլը Աստու-

ծոյ իրեն պարգեւած շնորհքով էր . միւս  
ներէն բարի ըլլալուն համար չէր , եւ առ  
կողմանէ ամենեւին արժանաւորութիւն մը  
չունենալը գիտէր : Խնք չէր հապա իր վրան  
եղած Աստուծոյ շնորհքն էր . եւ հիմա ան-  
տարակոյս երկինքին մէջն ալ փառաբա-  
նութիւն կը կարդայ Աստուծոյ շնորհացը ,  
որն որ աշխարհիս մէջ եղած ատենը իրեն  
մեծ ուրախութիւն էր անիկայ փառաւորե-  
լը : Ամեն քրիստոնեայ Պօղոսին հետ ըսե-  
լու է , Խնչ որ եմ՝ Աստուծոյ շնորհօքն  
եմ : Ու որ հիմա ան առջի մեղաւորը չենք ,  
Աստուծոյ իր անհուն շնորհքով սրտերնիս  
փոխելէն եղաւ : Աս բանիս համար անդա-  
դար փառք տալու ենք իրեն մեր անարժա-  
նութիւնը զգալով մինչեւ գետինը իր առ-  
ջին խոնարհելով :

Ան որ կ'ըսէ թէ Աս անիկայ ճանչցայ ,  
ու անոր պատուիրանքները չ'պահէ՝ սուտ  
է , եւ անոր մէջը ճշմարտութիւն չ'կայ :  
Ե Յահ , Ը . 4 :

Աստուած եւ իր Արդին Յիսուս Քրիս-  
 տոսը ճանչնալը յաւիտենական կեանք է:  
 Աս ճանաշումը ուրիշ մէկը չ'կրնար ունե-  
 նալ, հապա միայն անոնք՝ որ Ճշմարտապէս  
 հաւտացած են, եւ որոնց միտքը Աստուծոյ  
 Հոգիովը լուսաւորուած է: Աս կերպով  
 զինքը ճանչցողները կը սիրեն զինքը եւ իր  
 պատուիրանքները կը պահեն: Գիտեն թէ  
 ինքը որչափ սուրբ է, որչափ բարի է, եւ  
 որչափ արժանի է սիրուելու, եւ անոր հա-  
 մար զինքը կը սիրեն: Ալ տեսնեն թէ ասանկ  
 Աստուծոյ մը դէմ մեղանչելը շատ ատելի  
 բան է, եւ անկեց կը զգուշանան: Ալ տես-  
 նեն որ իր պատուիրանքները սուրբ՝ ար-  
 ժար եւ բարի են, եւ ուրախութիւնով իր  
 կամքը կը կատարեն: Ան որ կ'ըսէ թէ Ես  
 անիկայ կը ճանչնամ, ու անոր պատուի-  
 րանքները չ'պահեր, անոր մէջը Ճշմարտու-  
 թիւն չ'կայ: Աստուծոյ պատուիրանքները  
 շատ յայտնի գրուած են իր սուրբ խօսքին  
 մէջ. մեղմէ ինչ որ կը պահանջէ ամենքն ալ  
 մեղի ցուցուց: Իմէ որ ուղենք գիտնալ թէ  
 Աստուծոյ վրայօք փրկող տեղեկութիւն  
 մը արդեօք ունինք, սրտերնիս ու վարքեր-  
 նիս աս Առւրա Գրքին պահանջմունքներուն  
 հետ բաղդատելու ենք: Եւ ուրիշներուն

ալ վարքը քննելով կրնանք տեսնել թէ  
ան որ Աստուծոյ պատուիրանքները չ'պա-  
հեր զինքը չ'ձանչնալք :

## 28

Երբորհոգիս ներսիդիս մարեցաւ, Տէրը  
միշեցի, եւ իմ աղաջանքս քեղի քու-  
սուրք տաճարդ հասաւ : Համար, բա, 7 :

**Յ**ովիսան ուզեց Տէրոջը առջեւէն փախ-  
չի, եւ պարապ տեղը խորհեցաւ թէ եթէ  
խրայէլացւոց երկրէն ելլայ հեռու տեղ մը  
երթայ Ամենատես Աստուծմէ կրնայ փախ-  
չի : Իսյց տեսաւ որ գաղանի տեղ մը չ'կայ  
ուր անօրէնութիւն գործողները կարենան  
ինքզինքնին պահել : Երբոր կը փախչէր,  
Աստուած ծովին վրայ գէմը ելաւ, եւ ալէկո-  
ծութիւն ընելով զինքը սարսափեցուց : Եր-  
բոր կէտը Յովիսանը կը լեց, անատենը իր մէծ  
նեղութեանը մէջ Տէրը յիշեց : Անատենը  
ասիկայ իրեն մխիթարանք եղաւ թէ չ'կար-  
անանկ խաւար կամ ծածուկ տեղ մը որ Տէ-  
րը անիկայ չ'տեսնար, եւ կամ անկէց ձայն  
չ'լսէր : Ար հանդստութեան օրերը Տէրոջ-

մէն փախաւ, բայց աս խորունկ արտօնութեանը մէջ Տէրոջը աղաղակելը իրեն ուրախութիւն էր. եւ Աստուած իր ձայնին լսեց: Ոչ, ինտոր ողորմած եւ երկայնամիտ է մեր Աստուածը. իր արարածները թէ պէտեւ հանգստութեան ժամանակ զինքը կը մոռնան, եւ մինչեւ անդամ կ'ուզեն իր երեսէն փախչիլ, սակայն երբորնեղութեան մէջ իյնան եւ իրեն աղաղակեն մտիկ չընելիք չըներ: Ենոնց վրայ նեղութիւն կը խրկէ՝ որ իրեն դառնան, եւ միշտ պատրաստ է մտիկ ընելու ապաշխարող մեղաւորին աղաղակը: Ուրեմն դգոյշ ըլլանք որ աս դթած Աստուծոյն դէմ մեղանչելով զինքը չ'նեղացունենք:

## 29

Եւ մարդիկ ու անասուններ քուրձ թող հագնին, եւ սրտի մտօք Աստուծոյ աղաղակեն. թող ամեն մէկերնին իրենց չարձամբէն, եւ իրենց ձեռքը եղած անօրէնութիւններէն դառնան: Յուն. Դ. 8:

Երբոր Ամնուէի թաղաւորը Աստու-

ծոյ ան քաղաքին դէմ ըրած սպառնալիքը  
լսեց, անմիջապէս հրաման հանեց որ բոլոր  
ժողովուրդու ապաշխարէ: Վիտէր թէ ա-  
նոնք շատ մեղաւոր էին, եւ թէ իրենց մեղ-  
քերուն համար եղած պիտի ըլլայ՝ որ Աստ-  
ուած անոնց բարկացաւ ու աս սպառնալի-  
քը ըրաւ: Վիտէր ալ թէ Աստուած դըր-  
սուանց տրտմելով չխարուիր, եւ թէ քուրձ  
հագնելը եւ տրտմութեան ձայնով Աստու-  
ծոյ աղաղակելը բաւական չէր: Հապա ի-  
րենց չար ճամբայներէն դառնալու էին, ա-  
տելու էին իրենց մեղքերը, որով Աստուծոյ  
բարկութիւնը վրանին բերին: Ճշմարիտ  
ապաշխարութիւնը աս է, այսինքն անցած  
մեղաց վրայ ողբալ եւ անոնցմէ հեռանալ,  
թէ որ Աստուծոյ ամեն մեղքերու դէմ ը-  
րած արդար դատաստանէն փախչիլ կ'ու-  
զենք, սրտի մաօք իրեն աղաղակելու ենք,  
ու բոլոր չար ճամբայներնուս դառնալու  
ենք, եւ միայն Աստուծոյ հաճոյ եղած բա-  
ները ընելը նայելու ենք:

Աւ իր սրտմութեան բարկութենէն կը դառնայ, ու չենք կորառիր։ Հովհաննես, գ., 9։

**Ա**յնուեացիները ճշմարիտ Աստուծոյ բնութեանը վրայօք շատ քիչ տեղեկութիւն ունեին. չէին գիտեր իր ողորմութեան մեծութիւնը։ Իր վրայօք գիտցածնին միայն բնութեան աղօտ լուսովը սորվածնին էր. չէին գիտեր թէ արդեօք պիտի մտիկ ընէ իրենց աղաղակներուն, եւ ըրած ապաշխարութիւնովնին պիտի շարժի։ Իսայց գիտէին թէ պարտաւոր էին իւրենց չարութիւններուն համար ապաշխարութիւն ընել, եւ թէ եթէ չապաշխարէին անշուշտ պիտի կորառէին։ Այ ուրիշ բան չէին գիտեր, հապա միայն ասիկայ թէ դուցէ կը համոզուի իր սրտմտութեան բարկութենէն դառնալու, եւ կ'աղատին։ Ո՞ի միայն աս հաւանականութիւնը կար իրենց մեղքերուն համար տրտմած ժամանակնին իրենց քաջալերութիւն ու յոյս տուող։ **Ճ**'շմարիտ Աստուծոյ վրայովը մենք ասանկ տգէտ չենք. իր վրայովը ըրած յայտնութիւնը ունինք, եւ գիտենք թէ իր ողորմութիւնը անհունէ, եւ անօրէնութիւններու՝ յանցանքի ու մեղաց ներող Աստ-

ուած է: Խնք խոստացած է ճշմարիտ զեղ-  
ջի եկողին թողութիւն տալ, թէ որ Վրիս-  
տոսի անունովը իրեն երթան: Ուստի մեղ-  
քերնիս որչափ որ շատ ըլլայ, կրնանք ո-  
ղորմութիւն յուսալ, թէ որ ճշմարիտ ա-  
պաշխարութիւնով իրեն երթանք:



ՊԵՂԱՏԵՄՄԱՅԵՐ

1

Ո՞վ դուք ինձի մտիկ ըրեք որ արդարութեան ետեւէ էք, ու Տէրը կը փընտըռուէք : Եսայ օք. 1:

Ասոնք Աստուծոյ ճշմարիտ ժողովուրդին հանգամանքներուն մէկ երկու հատն են, արդարութեան ետեւէ ին, Տէրը կը փընտըռուն : Խնդզինքնին կատարեալ սրբութեան հասած չեն սեպեր, անոնք հին Փարիսեցիներուն պէս գոհութիւն չեն տար Աստուծոյ թէ ուրիշ մարդիկներուն պէս մեղաւոր չեն . եւ կամ իրենց ընկերին չեն ըսեր, Անէկ դի կեցիր, վասն զի ես քեզմէ սուրբ եմ : Խնդզինքնին մեղաւոր կը ճանչնան, եւ ասիկայ իրենց նեղութիւնն ու ամօթն է: Բայց թէպէտեւ մեղաւոր են, չեն ուղեր մեղք դործել . անիկայ չեն սիրեր, սրբութիւն կը փնտըռուն: Խրենց ջանքը ար-

դարութեան հասնիլ է . կ'ուղեն Աստուծոյ  
եւ Հիսուս Քրիստոսի նման ըլլալ : Ուէ-  
պէտեւ ստիպուած են իրենց սրտին տկար-  
ութիւնը եւ մեղանչականութիւնը զգալու .  
որոնք միշտ կը թողուն իրենք մեղաց մէջ  
իյնալու , սակայն Տէրը կը փնտըռեն : Եւ  
աս բանը տկար փափաքով մը չեն ըներ,  
հապա եռանդով կ'աշխատին մեղքը յաղ-  
թելու եւ սրտերնուն մէջը ամեն սուրբ ըզ-  
գացում սնուցանելու , շարունակ եւ ջերմե-  
ռանդութեամբ Աստուծոյ աղաչելով : Ուող  
բոլոր ասանկները Տէրոջը մտիկ ընեն . իր  
սուրբ խօսքովը անոնց կը խօսի . հոն կը-  
զըուցէ թէ ինչ բան պարտաւոր են ընելու :  
Ուող զգուշութեամբ իրեն մտիկ ընեն , եւ  
իրենց ցուցուցած ճամբան երթան , ու իրենց  
արդարութեան անօթութիւննին ու ծար-  
ութիւննին պիտի անցնի :

Ան վէմին նայեցէք , որմէն կտրուեցաք ,  
եւ ան փոսին , ուրկէց փորուեցաք : Եսայ .  
օ. Ե. 1:

իմէ որ ճշմարտապէս Ք. բիստոսի կը-  
 հաւտանք, մեծ պատուոյ հասած ենք. Ե՞-  
 մենակարող Տէր Աստուծոյ զաւկըներն ենք.  
 յաւիտենական թագաւորութեան մը ժա-  
 ռանդներ ենք, եւ շուտով հրեշտակաց հա-  
 ւասար պիտի ըլլանք: Երդ՝ կարելի է թէ  
 տկար եւ մեղանչական օրտերնիս ատեն  
 ատեն հպարտանայ առ բարձր պատիւնե-  
 րով, եւ Աստանան փորձէ մեղ խորհելու  
 թէ մեր վրայ մէկ բարի բան մը ըլլալուն  
 համար է որ Աստուած մեղ ընտրեց ու իր  
 զաւկըները ըլլալու կանչեց: Երբոր ասանկ  
 փորձուինք հպարտութեան զգացումներ  
 ունենալու, ան վէմին նայելու ենք ուս-  
 կից կտրուեցանք, եւ ան փոսին ուրկէց փոր-  
 ուեցանք: Ի՞նչ էինք մենք Աստուծոյ մեղ  
 իր թագաւորութեանը կանչած ժամանակը,  
 և եղած թշուառ մեղաւորներ: Արտերնուա  
 ոչ մէկ խորհուրդը եւ ոչ մէկ դիտաւորու-  
 թիւնը բարի էր իր առջին. մահուան ճամ-  
 բան ընտրեր էինք, եւ կուրութեամբ անի-  
 կայ բռներ կ'երթայինք: Անանկ մեծ մե-  
 ղաւորներ էինք՝ որ իր յաւիտենական բար-  
 կութեանը արժանի էինք, եւ թէ որ մեղ  
 յաւիտենական կորուստի տար, մեղի պէ-  
 շարերուն արժան եղածը ընդունած կ'ըւ

ԸՄԻՆՔ : Եւ մինչեւ անգամ՝ իր խօսքովը  
ու իր նախախնամութիւնովը եւ իր ողբիւ-  
ովը մեղ իրեն դառնալու կանչելէն ետեւ,  
որչափ ժամանակ դէմ կեցանք իր ողբոյն  
եւ անկեց երես դարձուցինք : Արդարեւ չէ  
թէ մեր գործած մէկ արդարութեան գոր-  
ծերնուս համար էր, հապա իր ողորմու-  
թիւնովն էր որ մեղ իր թագաւորութեա-  
նը բերաւ : Անը փրկութեան փառքը մի-  
այն իրեն ըլլայ յաւիտեանս :

## 3

Ես եմ՝ ես եմ ձեզ միսիթարովը • դուն  
ով ես, որ մահկանացու մարդէն՝ եւ խոտի  
պէսը լլալու մարդոց որդիներէն կը վախնաս  
Եսայ, օ՛՛ւ . 12 :

Ճշէ որ տղայ մը բարերար եւ զօրաւոր  
հօր մը քովը եւ անոր պաշտպանութեանը  
տակն ըլլայ, իրեն պէս ուրիշ տղէ մը չը-  
վախնար : Բայց մեր Արկնաւոր Հայրը մե-  
ղի ասկեց շատ աւելի զօրաւոր պաշտպան  
մընէ : Անիկայ Ամենակարող է, կարող չէ  
մէկը իրեն դէմ կենալ եւ յաջողիլ, մէկ

թսօսքով կրնայ բոլոր իր թշնամիները յաւիտենական հարուածքով զարնել։ Ասանկ մեկ բարեկամ մը ունինք, ուստի ալ ինչու վախնանք մարդոց մեզի ըրածներէն։ Երբեմն աշխարհիս մեծերը եւ զօրաւորները անանկ բարկութիւնով Աստուծոյ ժողովուրդին վրան կը յարձակին, որ իրը թէ անոնք պիտի ոչնչացունեն, ու հաւատքով տկար եղողները ահով ու դողով կը լեցուին։ Իսյց աս վախնալովնին Աստուծած անպատիւ կ'ընեն, անտարակոյս երկնից զօրքերուն մեծ զարմանք եղած պիտի ըլլայ՝ թէ յաւիտենական Աստուծածը իրենց ապաստանարան ունեցողները մահկանացու մարդէն եւ խոտի պէս ըլլալու մարդոց որդիներէն վախնան։ Երանի թէ երբէք Աստուծած ասանկ անպատիւ չընէինք. մարդիկ եւ սատանաները մեզի ինչ որ ընեն՝ մենք իրմով անվախ ըլլանք։ Այսպէս ընելով պիտի տեսնենք որ չէ թէ միայն մեղ պիտի պաշտպանէ, հապալա պիտի միսիթարէ ալ։ Երսիրտը գթութիւնով լեցուած է մեր վրայ, եւ իրեն ապաւինողները միսիթարելու ճամբան աղէկ գիտէ։

Եւ հիմա Տէր՝ նայէ անոնց տուած վախ-  
երուն, եւ շնորհէ քու ծառաներուդ որ բո-  
լոր համարձակութիւնով քու բանդ խօսինք:  
Կառջ. Դ. 29:

Աս աղօթքը ըրին առաքեալները ա-  
տեանէն արձակուելնուն ետքը, ուր որ կան-  
չեցին իրենք Հրէից իշխանները եւ վախ  
տուին որ Հիսուսի անունը չ'սորմեցունեն  
ու չ'քարողեն: Անոնք թշնամիներնուն կոր-  
ծանում չ'խնդրեցին, չաղաչեցին որ անոնց  
ձեռքէն աղատին, չ'խնդրեցին որ հալա-  
ծում՝ բանտէ ու մահուանէ աղատ մնան,  
հապա խնդրեցին որ կարող ըլլան հալած-  
ման մէջ տեղը հաւատարիմ ըլլալ իրենց  
Տէրոջը եւ Ա արդապետին, եւ իրենց յանձ-  
նուած պարտաւորութիւնները կատարել:  
Դիմէին մարդկային բնութեան տկարու-  
թիւնը, կը ճանչնային բուն իրենց սրտին  
խարեբայութիւնը, վասն որոյ յոյսերնին  
անոնց լրայ չ'զրին, հապա դացին Տէրոջմէն  
օգնութիւն եւ զօրութիւն խնդրեցին: Առ  
իրենց աղօթքներնին լսուեցաւ, ու հաւա-  
տարիմ մնացին մինչեւի մահ: Ամեն փորձ-

ութեան ատեն մեր ալ գլխաւոր փափաքը  
աս ըլլալու է : Ամեն չարիքներէն աւելի  
վախնանք մեր օրհնեալ Փրկչին անհաւա-  
տարմութիւն ընելէն . եւ ամեն փորձու-  
թեան ժամանակ Աստուծոյ երթանք եւ  
աղաւնքի իրեն որ մեզ իր շնորհաքը պահէ :

## 5

Արթուն կեցիք , հսկեցէք , ինչու որ ձեր  
հակառակորդը Աստանան գոռացող առ-  
իւծի մը պէս կը պատրաստ թէ թէ  
ով կընայ կը լլել : Ե. Պէտք . 12 . 8 :

Աստ անգամ քրիստոնէին կեանքը  
պատերազմ կը կոչուի . շարունակ պատե-  
րազմ մը ունինք ընելու սրտերնուս մէջ ,  
բոլորովին յաղթելու աշխատելով հոն ե-  
ղած մէղքը , որ այնչափ ժամանակ մեր վրայ  
տիրեց : Բայց մեր թշնամին միայն սրտեր-  
նիս չէ , Աստուած մեզի յայտնեց թէ Աս-  
տանան մեզի զօրաւոր եւ արթուն թշնամի  
մըն է : Աս ինկած հոդիին վրայ քիչ տե-  
ղեկութիւն ունինք , բայց ինքզինքնիս անկէց  
պաշտպանելու չափ բան դիտենք : Ար խո-

բամանկ հնարքներովը մեր նախահայրը եւ  
նախամայրը մեղաց մէջ ձգեց, եւ անկէց  
ի վեր իր բանը գործը մարդիկ փորձելն է,  
եւ կ'աշխատի անոնք յաւիտենական մահ-  
ուան դրդելու : Այսանաւորապէս չստուծոյ  
որդւոցը շատ թշնամի է . երբոր կը տեսնէ  
թէ իր թագաւորութենէն բոլորովին պիտի  
փախչին, վրանին շատ կը կատղի . գոռա-  
ցող առիւծի մը պէս մէջերնին կը պարտի,  
եւ կը փնտըռէ թէ ով կրնայ կը լւել : Ուս-  
տի ասանկ մէկ թշնամի մը ունենալնիս տես-  
նելով առաքեալին խրատը բռնենք ու ար-  
թուն կենանք եւ հսկենք . միշտ ինքնինքնիս  
պաշտպանենք որ չըլլայ թէ իր խորաման-  
կութիւններովը մոլորինք : Եւ աղօթքով  
հսկենք . անիկայ մեզմէ զօրաւոր է, եւ թէ  
որ միայն մեր կարողութեանը ապաւինելու  
ըլլայինք, յուսահատութեան մէջ պիտի  
իյնայինք թէ պիտի չկընանք ձեռքէն ա-  
զատիլ : Իսայց Հիսուս, որ մեր զօրութիւնն  
է, անկէց շատ զօրաւոր է :

Ճշմարտութիւնով ու արդարութեան զը-  
րահները հագնելով : Եղեւ . 9 . 14 :

Այս հոգեւոր պատերազմին մէջ ա-  
ռանց զըրահի չենք . աս զէնքերը մարմնաւոր  
չեն հապա հոգեւոր , եւ Վ.ստուծով զօրա-  
ւոր բերդերը քակելու զօրութիւն ունին :  
Անգքերնիս ճշմարտութիւնով ամուրցու-  
նելու ենք . մեր յոյսը եւ զօրութիւնը յա-  
ւիտենական ճշմարտութիւնն է : Ես աշ-  
խարհիս մարդիկը խաբերայ ունայնութիւն-  
ներու կը հետեւին , բայց մենք հաստատ  
գիտենք թէ մեր հաւատք ընծայած եւ յոյս-  
երնիս դրած բանը Վ.ստուծոյ ճշմարտու-  
թիւնն է : Եւ նայելու ենք որ բնաւ մէկ  
բանով մը մոլորութեան կամ ստութեան  
մէջ ինկած չըլլանք , հապա Վ.ստուծոյ բո-  
լոր ճշմարտութիւնը իր խօսքովը յայտնու-  
ածին պէս բռնած ըլլանք : Եւ առ ալ նայե-  
լու ենք որ մեր խօսքերը ու գործքերը ճըշ-  
մարտութեան համաձայն ըլլան : Որովհե-  
տեւ Տէր Յիսուս Քրիստոսի ծառայել կը  
դաւանինք , գործքերնիս մեր դաւանու-  
թեան դէմ չըլլան . ինչպէս որ հաւտացինք  
անանկ բռնենք ճշմարտութիւնը : Ու պը-  
կունքներնուս ալ զգուշանաւու ենք որ ճու-

մարտութենէն զատ ուրիշ բան չ'հանենք  
բերաններնուս։ Այսպէս յարմարութիւն  
կ'ունենանք մեր հոգեւոր թշնամիներուն  
հետ պատերազմելու։ Ա, աեւ արդարու-  
թեան զըահը հագնելու ենք։ ափսոս որ  
մենք մեղմէ արդարութիւն մը չունինք, բայց  
կրնանք Փրկչին արդարութիւնովը հագու-  
իլ, եւ միայն անոր ապաւինիլ Աստուծոյ  
առջեւը ելած ժամանակնիս։ Բայց աս ալ  
նայելու ենք որ մեր ընկերները վարքեր-  
նուս մէջ գէշ բան մը չ'տեսնեն։ Չարին  
երեւոյթէն անդամ փախչելու ենք։ եր-  
բոր մեղաց մէջ իյնանք մեր թշնամիները  
վրանիս յաղթութիւն կը ստանան։

Աւ ամեն բանին վրայ առէք հաւատքին  
վահանը, որ անով կարող ըլլաք չարին  
ամեն կրակոտ նետերը մարելու։ Ե՞ւն.  
օ., 16. :

Պարիստոննէին պատերազմին մէջ հա-  
ւատքը զարմանալի զօրութիւն ունեցող  
դէնք մընէ։ Աարդիկ եւ ստանաները ի՞նչ

Հարողութիւն ունին հաւատքով զօրաւոր  
եղողը յաղթելու : Անիկայ երբոր մեղք  
գործելու փորձուի, հաւատքով Աստուած  
ներկայ կը տեսնէ եւ անոր առջեւը մեղք  
չկրնար գործել : Իմէ որ իր մեղքերուն  
շատութեանը վրայ խորհած ժամանակը  
յուսահատութեան մէջ իյնալու փորձուի,  
հաւատքով իրեն համար խաչուած Փրկիչը  
կը տեսնէ՝ որ պատրաստ է մեղաւորներուն  
դլխաւորը ընդունելու : Երբոր Աստանան  
վրան յարձակի, հաւատքով Քրիստոսի  
շնորհքին առատութիւնովը անոր դէմ կը  
դնէ : Հաւատքը երկնից ցնծութիւնները  
եւ փառքերը իրեն յայտնի կը ցուցունէ,  
եւ այսպէս կարող կ'ըլլայ աշխարհիս դըր-  
դումներուն դէմ դնելու : Իմէ որ միայն հա-  
ւատքով տկար ըլլանք թշնամիններնիս կըր-  
նան մեղ յաղթել, ինչու որ հաւատքով  
կրնանք պէտք եղած զօրութիւնն ու շը-  
նորհքը Քրիստոսէն առնել եւ անյաղ-  
թելի ըլլալ : Ուրեմն ամեն օր աղաչնիք  
Տէրոջը որ մեր հաւատքը աճեցունէ :

Եւ փրկութեան սաղավարտը առէք, ու  
ոգիին սուրը, որ Աստուծոյ խօսքն է: Եւ-  
մէս. օ. 17:

Աեր պատերազմին մէջ չէ թէ միայն  
ինքզինքնիս պաշտպանելու ենք, հապա մեր  
թշնամիներուն վրայ յարձակելու ենք: Ա-  
տանան թագաւորութիւն մը հաստատեց  
աս աշխարհիս մէջ, որն որ երկան ատեն է  
որ ձեռքն է: Բայց մենք ան թագաւորու-  
թեան հպատակները Վրիսաւոսի թագաւո-  
րութեանը մէջ խօժելու աշխատելու ենք:  
Աս յարձակումը ընելու զէնքերնիս ոգի-  
ին սուրն է, որ է Աստուծոյ խօսքը: Ա-  
տանային թագաւորութիւնը խաւարի թա-  
գաւորութիւն է, եւ անոր հպատակները խա-  
ւարի մէջ են: Բայց Աստուծոյ խօսքը ճըշ-  
մարտութեան լոյսը ունի վրան. աշխատե-  
լու ենք որ մարդիկ աս լոյսը տեսնեն: Աս  
ճշմարտութիւնը աչքերնուն առջին բանա-  
լու ենք, եւ աշխատելու ենք որ անով խիղ-  
ճերնին արթնայ: Աստուծոյ խօսքը միայն  
կրնայ անոնց իրենց վիճակին թշուառու-  
թիւնը զգացունել [թէ Ատանային թագա-

ւորութեանը հպատակներ են, եւ համոզել անոնք որ Վրիստոսի թագաւորութեանը հպատակ ըլլան։ Են միայն կրնայցուցւնել անոնց թէինչ ապաստանաբաններու վրայ յոյսերնին դրած են, եւ այսպէս անոնք Վատանային իշխանութենէն աղատել։ Երանի թէ յոյսերնիս Ըստուծոյ խօսքէն զատ ուրիշ բանի մը վրայ չըգնէինք թէ մեր ապահովութեանը համար, եւ թէ մեր ընկերին փրկութեանը համար։

## 9

Խնչ պիտի հատուցանեմ Տէրոջը, անոր բոլոր ինձի ըրած բարութեանը փոխարէն։ Ապամ. Ռժ. 12։

Երբոր մէկէն բարութիւն մը ընդունինք, ընականապէս կ'ուզենք անոր փոխարէն մը ընել, այսինքն ընդունած բարերարութիւններնուս փոխարէն բարերարութիւն մը ընել։ Իսայց երբոր Ըստուծոյ բոլոր մեզի ըրածներուն վրայ խորհինք, դէպի իրեն ունեցած պարտաւորութիւններնուս մէծութիւնը տեսնալով կը ստիպուինք աղաղա-

կելու, “Խնչ պիտի հատուցանեմ ջերոջը,  
անոր բոլոր ինծի ըրած բարութեանը փո-  
խարէն”: Վեզի ցուցուցած ողօրմութիւն-  
ները անթիւ են. ծնած օրերնուս իվեր մեզ  
իր բարութիւնովը լեցուց: Բայց քրիստո-  
նեաները՝ իր շնորհքովը նորոգուելնուն հա-  
մար, շատ մեծ պարտաւորութեան տակ են  
Ըստուծոյ դէմ: Վարդկայցին լեզուով կարող  
չենք ստորագրել Յիսուս Քրիստոսի ձեռ-  
քովը ընդունած օրհնութիւններնուս եր-  
կայնութիւնն ու լայնութիւնը բարձրու-  
թիւնն ու խորութիւնը: Խրմով ամեն բանի  
ժառանգ եղանք, եւ աիեղերքին մեջ մեզի  
պէտք եղած ամեն բարութիւն մեր ժառան-  
գութիւնն է: Եւ արդ՝ ինչ պիտի հատու-  
ցանենք մեր Ըստուծոյն եւ Փրկչին, ափ-  
սոս որ իրեն ըրած փոխարինութիւննիս մի-  
այն ապերախտութիւն եւ յանցանք է: Վեր  
ըրած ամենալաւ ծառայութեանը համար իր-  
մէն թողութեան կը կարօտինք, եւ մեր ա-  
մենամեծ սէրը՝ իրեն հատուցանել արժան  
եղած սիրոյն հետ բաղդատելով ոչինչ է:  
Բայց կոտրած եւ ապաշխարող սիրտ մը  
կը նանք իրեն մատուցանել, եւ աս պատա-  
բագը չ'մերժեր:

Աւրեմն միտք բերէք անիկայ, որ ասանկ  
համբերութիւն կրեց մեղաւորներուն իրեն  
դէմ հակառակ կենալէն, որ չոլլայ թէ ձեր  
անձովը աշխատիք ու թուլնաք: Եբք. ձ. բ.  
3:

Հիսուս Քրիստոս երբոր իր աշխարհիս  
մէջ ունեցած գործը կը գործէր, մեղաւոր-  
ներէն շարունակ ատելութիւնու հակառակ-  
ութիւն կը քաշէր: Եր սիրտը անոնց վրայ  
սիրով լեցուն էր, բայց անոնցը իրեն դէմ  
թշնամութիւնով, անիկայ անոնք օրհնելու  
կ'աշխատէր, անոնք զինքը կործանելու: Եր-  
բոր հիւանդները կը բժշկէր եւ մեռելները  
կը յարուցանէր, անոնք զինքը մեռցունել  
կը նայէին: Երբոր իր ողորմութիւնով խեղ-  
ձերուն ու մեղաւորներուն բարերարութիւն  
կ'ընէր, կը նախատէին զինքը թէ մեղաւոր-  
ներուն բարեկամն է: Երբոր դեւեր կը հա-  
նէր, ինչեղզերուզին՝ դեւերուն իշխանին  
ձեռքովն է կ'ըսէին: Բայց Հիսուս մեղա-  
ւորներուն իրեն դէմ ըրած աս հակառակու-  
թիւններուն համար արդեօք թուլցան. չէ,  
շարունակեց իր սիրոյ աշխատութիւնները

առանց դադրելու մինչեւ որ իր գործը լմբնացուց։ Այնչեւ անգամ խաչին վրայ ցուցուց թէ իր ձեռք զարկած ան մեծ գործին մէջ տակաւին թուցած չէր, վասն զի իր դահիճներուն փրկութեանը համար աղօթք ըրաւ, եւ իր շնորհօքը աւազակին սիրտը նորոգեց։ Իարի մարդիկ ինքզինքնին Վատուծոյ կամքին կերպարանակից ընելու, եւ կամ իրենց ընկերին բարութիւն ընելու աշխատած ժամանակնին, շատ անգամ չարերուն ձեռքէն հակառակութիւն կը քաշեն, եւ աս պատճառաւ երբեմն թուշալիք կ'ընեն։ Իսյց թող բոլոր անոնք Քրիստոսը յիշեն, որ մեղաւորներէն անանկ հակառակութիւններ քաշեց։ Եւ ամենքնիս ալ յիշենք մեզիցուցուցած երկայնմտութիւնը, որ մեղաւորը կերներնուս ըրածովը համբերութիւննիս չըհատնի։

Եւ ձեզի նեղութիւն քաշողներուդ մեղի հետ հանգիստ՝ մեր Տէր Հիսուսի երկինքէն յայտնուելու ատենը իր զօրաւոր հրեշտակներովը։ Ե. թէն. Ա. 7:

Ժամանակ պիտի ըլլայ որ աշխարհիս բո-  
լոր անկարգութիւնները պիտի վերնան։ Հոս  
Վստուծոյ ժողովուրդը հանգստութիւն չու-  
նի, շատ անգամ նեղութիւն կը քաշեն. չա-  
րերը կը յաջողին, անոնք կ'անարգուին ու  
երեսէ կը ձգուին։ Վարդոց տուած հարստա-  
հարութիւններէն եւ աչքերնուն առջին ե-  
ղած մեղքերէն կը նեղուին։ Ալ վշտանան ի-  
րենց տեսած եւ լսած չարութիւններէն, եւ  
Վաղմութերգուին. պէս կը ցանկան որ աղաւ-  
նիի թեւեր ունենային եւ փախչէին ու հան-  
գիստ ըլլային։ Եւ վերջապէս պիտի հան-  
գըստանան. երբոր Տէր Յիսուս յայտնուի  
երկինքէն աշխարհս դատելու, հանգստու-  
թիւն պիտի տայ իրեն համար նեղութիւն  
քաշողներուն։ Եւ որչափ փառաւոր պիտի  
ըլլայ ան հանգիստը. հոն ալ իրենք նեղող  
պիտի չըլլայ, չար մէկը պիտի չ'կրնայ ի-  
րենց երանաւէտ ընակարանը մտնել իրենք  
տառապեցունելու։ Խրենց հանգիստը յա-  
ւիտենական պիտի ըլլայ, իրենց Վստուծոյն  
եւ Փրկչին քով յաւիտեանս պիտի հանգ-  
չին, յաւիտեան հանգստութիւն պիտի ու-  
նենան բոլոր սուրբ Էակներուն. ընկերու-  
թեանը մէջ։ Պիտի հանգչին Վստուծոյ սուրբ  
երկրպագութիւն եւ ծառայութիւն ընելով.

աս կենացս նեղութիւններուն վրայ որչափ  
անուշ պիտի գայ աս հանգիստը : Հ ատահա-  
գամ խորհինք անոր վրայ , եւ անոր յոյսը  
մեզ կենդանացունէ աւելի ջերմեռանդու-  
թիւնով մեր Ա արդապետին ծառայելու :

## 12

Որ Աստուած ըլլայ ամենը՝ ամեն բանի  
մէջ : Ա կոքնիւ . Ժ. 28 :

Ամեն բանին վախճանը աս է . անանկ  
կ'երեւայ թէ Աստուած աս չար աշխարհիս  
մէջ չէ , մեծ մարդոց խորհուրդներուն մէջ  
չէ : Չարերուն ամեն մէկուն բռնած ճամբան  
անանկ է որ իբրեւ թէ իբրենք պիտի ըլլան  
ամենը եւ ամենուն մէջը : Բայց Աստուած  
միտքը դրաւ որ միշտ ասանկ չ'մնայ , բոլոր  
տիեզերքին մէջ պիտի բնակի . եւ որոշեց որ  
առ իր դիտաւորութիւնը անհուն ողորմու-  
թեան ճամբով մը կատարէ : Կրնար աս աշ-  
խարհս եւ անոր մեղաւոր բնակիչները մէկէն  
կործանել , եւ իր զօրութիւնովը դադրեցու-  
նել իբրեն դէմ եղած ապստամբութիւննե-  
րը : Բայց ողորմեցաւ մեզի , մեզ հրաւիրեց

որ դառնանքը ու իրեն հետ խաղաղութիւն  
ընենք : Իր սիրելի Որդին տուաւ, որ մեզի  
փրկութեան ճամբայ մը բանայ, եւ մեր ցե-  
ղէն շատերը իր շնորհացը յաղթանակները  
պիտի ընէ, որոնց բերկութիւնը պիտի ըլ-  
լայ յաւիտեանս զինքը մեծացուցանելը : Ի-  
րեն չհազանդողները իր բարկութիւնովք  
պիտի փշրէ, աշխարհիս բոլոր ապստա մը  
ները յուսահատութեան բանտը պիտի նե-  
տէ, եւ բոլոր զինքը սիրողները իր վերին  
թագաւորութեանը պիտի հաւքէ, ուր պիտի  
տիցնծան Աստուած ամենը ու ամենուն մէ-  
ջը տեսնալով : Ու որ կ'ուզենք վերջապէս  
ան երջանիկ ընկերութեանը խառնուիլ, աս  
աշխարհիս մէջն եղած ատեննիս բոլոր սրբ-  
տերնիս Աստուծոյ տանք, եւ բոլորակնիս  
եղածները յորդորենք անոր հնազանդելու  
եւ զինքը սիրելու, իրրեւ իրենց ամենը եւ  
ամենուն մէջը :

Փորձեցէք ձեր անձը՝ թէ ան հաւատքին  
մէջն էք .քննեցէք անձերնիդ .չէք դիտեր  
լիք զինքնիդ, որ Վարիստոս Հիսուս ձեր մէ-

ջըն է . միայն թէ անպիտան որ չըլլաք : Եւ  
Առընթեւ . ձ.գ. . 5 :

**Պօղոս Առոնթացւոց եկեղեցին զրու-**  
ցեց աս խօսքերը որ չըլլայ թէ անոր ան-  
դամները կարծեն՝ թէ քրիստոնեայ մկրտ-  
տուելնուն համար եւ ինքզինքնին Քրիստո-  
սի հետեւողները ըլլալ խոստովանելնուն  
համար էր որ քրիստոնեայ էին : Արտա-  
քին արարողութիւնով եւ կամ արտաքին  
գաւառնութիւնով մը չէին կրնար Քրիս-  
տոսի հետ մէկ ըլլալ , հապա պէտք է սիր-  
տը անոր հետ մէկ ըլլայ : Պօղոս անոնք չը-  
դատեց . մարդկային էակ մը կարող չէր ա-  
նոնց ներսիդին հասկընալ , հապա իրենք  
ինքզինքնին քննելու եւ փորձելու էին թէ  
արդեօք ան հաւատքին մէջն են : Ո՞ենք ալ  
կորնթոսի քրիստոնեայներուն պէս անձեր-  
նիս քննելու ենք . մեր սիրտերը անոնց սիր-  
տերուն պէս խաբերայ են , եւ փորձելու  
ենք անձերնիս որ յաւիտենական կեանք  
դտնելու սուտ յոյսով մը խարուած չըլ-  
լանք : Ո՞եր անվախճան երջանկութեան  
գործը փոքր բանի մը տեղ դնելու չենք :  
Արտաքին խոստովանութիւնով չենք կրնար  
փրկուիլ , հապա Քրիստոս Յիսուս մեր մէ-

Չը ըլլալու է, եւ մեր ամենէն մեծ սիրոյ  
առարկան, մեր միակ յոյսն ու վստահու-  
թիւնը ինքն ըլլալու է: Ա՞չջերնիս ըլլալու  
է՝ իր առաջինվա մեղ իրեն կերպարանակից  
ընելու: Ա՞ն մէջը ըլլալը յայտնելու ենք  
աննոյն իր ցուցուցած քաղցրութիւնը՝ հե-  
զութիւնը՝ համբերութիւնը եւ առ Աստ-  
ուած ու առ մարդիկ ունեցած սէրը մենք  
ալ ցուցունելով: Օ, է որ աս կեանքիս մէջ  
ասանկ միանանք իրեն հետ հաւատքով, յա-  
ւիտենական կենաց մէջ իրեն հետ պիտի  
թագաւորենք:

## 14

Վահացէք Տէրոջմէն, ինչու որ բարի է.  
ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է:  
Ասով. Ժ. 1:

Կ ատ պատճառներ ունինք միշտ դո-  
հութիւն եւ փառաբանութիւն տալու: Վահ-  
ացութիւն տալու ենք իրեն բոլոր մեր հո-  
գիովը եւ բոլորակինիս եղածներովը իր բը-  
նութեանը եւ մեղի ըրածներուն համար:  
Ինքը բարի է, բոլոր իր ճամբայները ողոր-

մութիւն՝ ու ճշմարտութիւն են. բոլոր իր  
գործքերը իր բարութիւնը կըցուցունեն։  
Եւ աս բարի Վատուածը Առ Վատուածն է։  
իր բարութիւնը մեռէ. ուստի արդարեւ ան-  
դադար գոհութիւն տալու ենք իրեն։ Յժէ որ  
գոհութիւն տալը զանց առնենք, քարերը  
պիտի աղաղակեն մեր ապերախտութեանը  
համար։ Խայց աս Վատուածոյն դէմ ամենքս  
ալ մեղանչեցինք, սակայն իր ողորմութիւնը  
յաւիտեան է. աշխարհ դալերնուս ի վեր  
մեզի ողորմեցաւ։ Հատ անգամ զինքը  
մեր մեղքերովը բարկացուցինք, բայց իր ո-  
ղորմութիւնը հատած չէ. իր առատ ողոր-  
մութիւնովը մեզի Փրկիչ մը պատրաստեց։  
Եւ թէպէտ այնչափ ժամանակ աս Փրկի-  
չը արհամարհեցինք, սակայն իր ողորմու-  
թիւնը մնաց։ Իր ողորմութիւնովը իր առ-  
գին խրկեց մեր սիրտերը նորոգելու եւ մե-  
զի Պրիստոսի հաւտացունելու։ Եւ հիմա  
ալ թէպէտեւ կը յուսանք թէ զինքը կը սի-  
րենք, սակայն ամեն օր մեր մեղքերովը սին-  
քը կը նեղացունենք, եւ ամեն օր կը տես-  
նենք թէ իր ողորմութիւնը անհատնում է։  
Երդարեւ յաւիտեանս յաւիտենից պիտի  
ուրախանանք իրեն գոհութիւն տալով, ին-  
չու որ իր ողորմութիւնը յաւիտեան է։

Ու Փարաւօնը եւ իր զօրքը Կարմիր ծովին մէջը թափողէն, ինչու որ անոր ողորմութիւնը յաւիտեան է։ Ասով. Ռէ. 15.

Սաղմոսերգուն ասիկայ Աստուծոյ մէծ ողորմութեանը օրինակ բերաւ։ Փարաւօն երկար ժամանակ անդթութեամբ Աստուծոյ ժողովուրդը նեղեց. Աստուած շատ երկայնմտութիւն ցուցուց իրեն ու շատ խրատեց, բայց ամենը պարապը դնաց, սիրով չ'կակուղցաւ։ Ու հիմա որ Խրայէլի ժողովուրդը Եղիպատոսէն ելեր կ'երթային Աստուծոյ հրամանին պէս, անոնց ետեւէն ինկաւ ու միտքը դրաւ անոնք սպաննելու։ Բայց Աստուած իր ողորմութիւնովը Խրայէլացիները փրկեց, Փարաւօնը եւ իր զօրքը Կարմիր Շոռվին մէջ կործաննելով։ Չարերուն դէմ ասանկ սոսկալի պատիժներ տալով Աստուած ամեն ատեն իր ողորմութիւնը ցուցուց, եւ միշտ ասանկ պիտի ընէ։ Անզաւորներուն շատ երկայնմտութիւն կ'ընէ՝ անոնց կ'ողորմի. բայց թէ որ իր ողորմութիւնները միշտ մերժեն չ'թողուր որ ապրին ու իրենց չարութիւնովը իր ժողովուր-

գին երջանկութիւնը խանգարեն։ Դժոխքը  
հաստատեց ու բոլոր զինքը չ'սիրողները՝ ի-  
րեն չ'ծառայողները յաւիտեան հոն պիտի  
խրկէ, ինչու որ իր ողորմութիւնը յաւի-  
տեան է։ Պիտի չ'ժողուանոնց որ իր զաւ-  
կըներուն նեղութիւն տան ու փորձեն, հա-  
պա ողորմելով բոլոր սուրբ էակներուն, շա-  
րը խաւարին մթութեանը մէջ յաւիտեան  
պիտի կապէ։

## 16

Ա՞նք Սոտուած սիրենք, ինչու որ ա-  
ռաջ անիկայ մեզ սիրեց։ Ե. Յոհան. Դ. 19:

Ա՞նք Քրիստոսը չընտրեցինք, հապա  
Քրիստոս մեզ ընտրեց, մենք զինքը չ'փըն-  
տրուեցինք, հապա ան մեզ փնտոեց։ Աըր-  
տերնուս մէջը սիրոյ բորբոք մը տեսնելուն  
համար չէր՝ որ մեզ ընտրեց, չէ, մենք մեղ-  
քի եւ յանցանքի մէջ մեռած էինք. սրտեր-  
նիս անձնասիրութիւնով ու ամեն կերպ չա-  
րութիւնով լեցուն էր։ Օ ինքը ձգած էինք  
ու կուրութեամբ եւ անհոգութեամբ յա-  
ւիտենական մահուան տանող ճամբան

բոներ կ'երթայինք։ Վեր մեղքերուն եւ  
թշուառութիւններուն մեջ մեր վրայ նայ-  
եցաւ, եւիր սէրն ու դութը վրանիս շար-  
ժեցաւ. մեզ սիրեց ու միտքը դրաւ մեզ  
փրկելու։ Խնքը մեր կոյր աչքերը բացաւ որ  
մեր յանցանքներն ու վտանգը տեսնենք.  
մեր կարծր սիրտերը կակուղցուց որ զգա-  
ցողութիւն ունենանք։ Խնքը ցուցուց մեզի  
Գողգոթային վրայ մեզի համար ըրածը, եւ  
թէ ինչպէս ինքը առաջ մեզ սիրեց, որ մենք  
ալ զինքը սիրեցինք։ Եւ արդ՝ ինտոր սէր  
ունենալու ենք իր վրայ. բոլոր սրտերնիս  
ու հոգինիս իրն ըլլալու են։ Եւ մինչեւան-  
դամ ասանկ ալ ըլլայ, ինչ ոչինչ հատու-  
ցում մը ըրած պիտի ըլլանք իր մեզի ցու-  
ցուցած անհուն սիրոյն փոխարէն։ (Օրհ-  
նեալ Փրկիչ քեղ ասկէց եւել չ'սի-  
րելնուսներէ, եւ քու շնորհքովդ քու վր-  
րադ ունեցած սէրերնիս զօրացուր ու ա-  
ճեցուր, որ երթալու յաւիտեան զօրանայ։

Եւ մենք հաւտացինք ու ճանչցանք՝ որ  
դուն ես Ք.քիստոսը Աստուծոյ Որդին։  
Յակ. Զ. 70։

Պետրոս առաքեալ հոս անանկ կը խօսի  
 որ կ'երեւայ թէ կատարեալ վստահութիւն ունի իր վրայ, եւ իր խօսքէն անանկ կը հասկըցուի թէ անատենը իր հաւատքին վրայ ամենեւին երկրայութիւն մը չունէր: Եւ իր վստահած բանը ամենօրհնեալ ճշգնարտութիւն մըն էր. կը հաւատար թէ չիսուս՝ իր Ա արդապետը, որուն աշակերտն էր եւ որուն համար ամեն բան ձգեր էր, իրօք Քրիստոսն է, ան (Օ)ծեալը՝ որ աշխարհիս մեղացը համար քաւութիւն պիտի ընէր, եւ որ բոլոր աշխարհիս վրայ պիտի թագաւորէր: Հաստատ գիտէր թէ անիկայ Աստուծոյ Որդին է, եւ ուստի անոր քովը յաւիտենական կեանք կար. եւ թէ անոր բոլոր խօսքերը եւ բոլոր խոստմունքները յաւիտենական ճշմարտութիւններ էին: Քրիստոսի մահէն առաջ իր աշակերտները անոր վրայով մեր հիմակուան գիտցածնուս չափ բան չէին գիտեր: Հիմա կատարելապէս բացատրուած է մեզի անոր աշխարհ գալուն գիտաւորութիւնները, եւ բոլոր ան մեծ օրհնութիւնները, որ մեզի համար ձեռոք բերաւ: Ուստի մենք ալ անոնց չափ պատճառ ունինք հաւատալու թէ չիսուսը Քրիստոսն է, կենդանի Աստուծոյ

Որդին : Ուրեմն ուրախանանք աս Ճշմար-  
տութեանս վրայ, եւ մեր հաւատքին հա-  
մաձայն կեանք վարենք : Խրեն ծառայելու  
ժիր ըլլանք, եւ մարդոց մեզի դէմ բանե-  
ցուցած հնարքներէն չ'վախնանք, քանզի  
Հիսուս՝ մեր Ա արդապետը կենդանի Աս-  
տուծոյ Որդին է : Եւ քանզի Քրիստոսի  
աշակերտներ կանչուած ենք, մեր աս բար-  
ձրը անունին արժան գործելու ջանք  
ընենք :

## 18

Չեզի դպչողը իր աչքին բիբին կը դըպ-  
չի : Օչոք. Բ. 8:

Ա արդուս աչքին բիբը մարմինին ու-  
րիշ մասերէն շատ դիւրաւ կը զգայ . քիչ  
մը դպչելով շուտով ու սաստիկ կըցաւի :  
Ես բանը Աստուած իր ժողովուրդին վրայ  
ունեցած խնամքին ու ցաւակցութեանը օ-  
րինակ կը բերէ : Աէկը չ'կրնար անոնց դըպ-  
չիլ վեաս մը հասցունելու համար, առանց  
Աստուծոյ զգալուն . մարդ մը իր աչքին բի-  
բը ինտոր որ կը նայի անիկայ ալ անոնք ա-

նանկ կը նայի: Աս խօսքերը Աստուծոյ առջի ժողովուրդին խօսուած ժամանակը առնելք մեղանչեր էին, եւ իրենց մեղքերուն համար սաստիկ յանդիմանութիւն մը լսած էին. բայց անոնց վրայ անանկ սէր մը ունէր, որ բնաւ մէկ բանով մը չէր կրնար պաղել: Եւ որովհետեւ Աստուծոյ անփոփոխ է, հիմա ալ ան նոյն զդացումները ունի իր ժողովուրդին վրայ, եւ Աստուծոյ որդիքը ամեն գարի մէջ աս պատուական խօսքերուն տուած միսիթարութիւնը կրնան վայլել: Ո՞ւնէ թէ որ իր ճշմարիտ աշակերտներն ենք, իր աչքին բիրին պէս իրեն սիրելի ենք. պիտի չ'թողու որ բանէ մը մեզի վնաս մը գայ: Թէ որ չարմարդիկ մեզի հակառակութիւն ընեն, Աստուծոյ դէմ կ'ընեն, անիկայ կը տեսնէ եւ կը զգայ անոնց խորամանկութիւնները: Ո՞ւնք կրնանք հանդարտութեամբ եւ ապահով կենալ, վայն զի Աստուծոյ մենք ինչ որ կը զգանք ան ու նոյնը կը զգայ մեր նեղութիւններէն, եւ մեր թշնամիները իր ձեռքն են ու մենք ապահով ենք: Պիտի պահէ ու պաշտպանէ մեզ, եւ բնաւ պիտի չ'թողու որ մեզի օդուտ եղածէն եւել փորձութիւն կրնանք: Ասիկայ ահարկու ճշմարտութիւն մընէ անոնց

որ կ'ելլեն հակառակութիւնընելու եւ Աստուծոյ ժողովուրդը հալածելու, թէ Աստուծոյ աչքին բիբին կը դպչին։ Չ'կրնարմէկ էակ մը աս բանը առանց պատիժի ընել. անիկայ Ամենակարող զօրութիւն ու վրէժինդրութիւն ունի, եւ անոնց արժանեղածը պիտի հատուցանէ։

## 19

Անչու որ իմ խորհուրդներս ձեր խորհուրդները չեն, եւ ձեր ճամբաները իմ ճամբաներս չեն կ'ըսէ Տէրը։ Խառայ. օ.Ե. 8:

Հեթանոսները միշտ կը կարծեն թէ իրենց երեւակայած Աստուածներուն բընութիւնը իրենց բնութեանը նմանէ. եւ մինչեւ անգամ Աստուծոյ բնութիւնը որոշ յայտնուած տեղերը մարդիկ կը կարծեն թէ Աստուած իրենց պէս մէկնէ։ Ի՞սայց օրհնեալ է իր անունը որ գիտենք թէ մեղի նման չէ. իր խորհուրդներն ու ճամբայները մերինին պէս չեն։ Թէ որ Աստուծոյ խորհուրդները մեր խորհուրդներուն նման ըլ-

լային, պիտի չ'խոնարհեր իր ապստամբ տը-  
րարածները փրկելու. իրեն գէմ մեղան-  
շած տեղերնին անոնք պիտի սպաննէր: Ուէ  
որ իր ճամբաները մեր ճամբաներուն նման  
ըլլային, իր բարկութեան շունչովը յաւի-  
տենական հարուածքով պիտի զարնէր ան  
մեղաւորները, որոնք կը համարձակին իր Որ-  
դին ատել, եւ անոր ձեռքովը եղած շնոր-  
հաց պարգեւները բանի տեղ չ'դնել: Փըր-  
կութիւն պիտի չ'տար մեղաւորներուն, ո-  
րոնք միշտ անիկայ կ'արհամարհեն, եւ եր-  
կայնամիտ պիտի չըլլար անոնց, վասն զի ա-  
մեն օր եւ ամեն ժամ իր օրէնքները կը կոտ-  
ըեն եւ իրենց անօրէնութիւնները անոր վը-  
րէժինդրութիւնը կը դրդեն: Իսյց երկին-  
քը երկրէս որչափ որ բարձր է, իր խոստ-  
մունքներն ու ճամբայներն ալ այնչափ մե-  
րինէն բարձր են: Եւ ուրախանանք ու փառք  
տանք ասանեկ ըլլալուն համար, անիկայ սուրբ  
է, անփոփոխ՝ ճշմարիտ է, ողորմութիւնով  
ու գիտութիւնով լեցուն է: Ո՞՛չ մեղմէ որ-  
չափ տարբեր է:

---

Քեզ պիտի չ'թողում ու երեսէ պիտի  
չ'ձգեմ։ Օջրացիր ու սրտոտ եղիք։ ՀՅԵ.։  
Ա. 5, 6։

Հետու մեծ գործ մը ունէր առջեւը, եւ  
անանկ գործ մըն էր որ մարդս ահուդողի  
մէջ կը ձգէր։ Խսրայէլի ժողովուրդը պիտի  
առաջնորդէր ու տանէր Քանան երկիրը  
ժառանգելու, եւ իրենցմէ շատ զօրաւորու  
մեծ ազգերու հետ պատերազմելու։ անանկ  
աղդեր՝ որ անշուշտ իրենք կը յաղթէինթէ  
որ իրենց կողմէն մարդկային զօրութենէն  
վեր զօրութիւն չ'ունենային։ Տայց Աստ-  
ուած քաջալերութիւն տուաւ Հետուին աս  
խոստմունքով, թէ “Քեզ պիտի չ'թողում  
ու երեսէ պիտի չ'ձգեմ”։ Աս մեծ քաջա-  
լերութիւնով Հետու զօրացաւ ու սիրտ ա-  
ռաւ, ինչու որ Աստուած իր կողմը ըլլալովը  
մէկը կարող չէր զինքը յաղթել։ Աստու-  
ծոյ աս՝ Քեզ պիտի չ'թողում ու երեսէ  
պիտի չ'ձգեմ, խոստմունքը բոլոր իր ժողո-  
վուրդին ալ է։ Ու որ անանկ մեծ եւ փոր-  
ձիչ պարտաւորութիւններ ընել պէտք ըլ-  
լայ, որ բնականաբար կարող պիտի չըլլան

կատարել, Աստուած անոնց հետը պիտի ըլլայ, ու իրենց զօրութիւն պիտի տայ: Երբոր դառն նեղութիւններու մէջ իշխան, Աստուած իրենք ձեռքէ պիտի չ'թողու, թէ որ երկրաւոր բարեկամներնին իրենք երեսէ ձգեն, Աստուած պիտի չ'ձգէ: Աս վստահութիւնով ուրախութեամբ ճամբայներնիս երթանք, միայն աղէկ նայինք որ իրմէն չ'մոլորինք, ու ինքը միշտ մեր հետը պիտի ըլլայ:

## 21

Ես եմ՝ ես եմ՝ որ քու յանցանքներդ ինձի համար կը ջնջեմ, ու քու մեղքերդ չեմ յիշեր: Եսոյ, 109. • 25:

Ովէ աս դժութեան խօսքերը զրուցողը • ովէ կընայ ջնջել մեր մեղքերուն շատութիւնը: Աստուած ինքն է, ան Աստուածը՝ որուն դէմ մեղանչեցինք, ան Աստուածը՝ որուն դէմ գործած մեղքերնիս լեռան պէս բարձրացան: Աս Աստուածը՝ որուն հասուցում մը չենք կընար ընել մեր անցեալ մեղքերուն համար, իր ողորմու-

թեան մեծութիւնովը մեզ կը քաջալերէ  
ըսելով, Պիտի ջնջեմ քու մեղքերդ չնծն  
համար : Անք բան մը չունինք՝ որով իր  
գթութեանը արժանանանք, բոլորովին ա-  
նարժան ենք իր սիրոյն, եւ իրմէն մեր մեղ-  
քերուն թողութիւն գնելու ձեռքերնիս  
բան մը չունինք, բայց Աստուած անոնք ի-  
րեն համար ձրիապէս կը ջնջէ, եւ անոնք  
չ'յիշեր : Աղքերնիս այնչափ մեծ են որ  
չենք կրնար մոռնալ, անոնք կը յիշենք եւ  
կուլանք ու կ'ողբանք : Ահ անոր շնորհքին  
լայնութիւնը ու երկայնութիւնը, բարձր-  
ութիւնը եւ խորունկութիւնը . բայց աս  
խօսքերուն տուած միսիթարութիւնը ար-  
դեօք մենք ալ կրնանք վայլել . Աստուած  
աս խօսքերը մեղի ալ կ'ըսէ՞ : Այս՝ թէ որ  
իր ժողովուրդն ենք . թէ որ ճշմարիտ ա-  
պաշխարութիւն ընենք, եւ Քրիստոսի ա-  
պաւինինք, աս խօստմունքները մերն ալ  
կ'ըլլան :

որ մենք անոր ձեռքովը Աստուծոյ արդար-  
ները եղած ըլլանք : Տ. ԱՊՐԻՆԻԼ . 1. , 21 :

Հիսուս Քրիստոս սուրբ՝ անմեղ՝ անա-  
րատ եւ մեղաւորներէն զատուած էր . բո-  
լոր երկնային կօրքերը իրեն երկրապատու-  
թիւն կ'ընէին . Աստուծոյ սիրելի Որդին էր,  
եւ այսրը իրեն շատ հաւնած էր : Աակայն  
աս սուրբ էակը մեղաւոր սեպուեցաւ . խա-  
չափայտին վրայ բեւեւեցաւ յետին չարա-  
գործի մը . պէս, եւ այսրը զինքը երեսէ  
ձգեց ու աշխարհիս մեղքերը անոր վրայ  
դրաւ : Եւ բոլոր աս բաները մեզի համար  
եղաւ, մեզի՝ իրեն թշնամիներուս եւ յաւի-  
տենական մահուան արժանի մեղաւորնե-  
րուս համար : Վեզի համար մեղաւոր սեպ-  
ուեցաւ . մեր մեղացը արժան եղած պատի-  
ժը ինք իր վրան առաւ՝ որ իր ձեռքովը Աս-  
տուծոյ արդարները եղած ըլլանք : Հիսուս  
չէ թէ միայն մեր մեղքերը վերցուց, հապա-  
իր արդարութիւնն ալ մեզի կուտայ : Վենք  
մեզմէ արդարութիւն մը չունինք . մեր ար-  
ժանաւորութիւնովը Աստուծոյ առջեւը  
չենք կրնար ելլալ, վասն զի ամենքս ալ չար  
մեղաւորներ ենք, հապա Քրիստոսի անու-  
նովը կրնանք երթալ, եւ իր արդարութիւ-

նովը կրնանք ընդունուիլ : Առանունով եկողներուն բնաւ մէկը պիտի չ'վոնառուի :

## 23

Աւ քու երկրիդ մէջը բռնութիւն, ու քու սահմաններուդ մէջը աւար ու կոտուրած պիտի չ'լսուի, հապա քու պարիսպները գրկութիւն ու քու դուռներդ գութիւն պիտի կանչես : Եսայ . ս . 18 :

Աս աշխարհս շատ պիտի փոխուի երբոք Ծիսուս Քրիստոս ամեն տեղ ճանչցուի ու ընդունուի : Հիմա աշխարհս անդժութիւնով լեցուն է . գրեթէ ամեն երկիր բռնութիւնով շատ մեռածներ կան : Պարզիկ մարդոց վրայ կը յարձակին , եւ իրենց չարութիւնը կատարելու համար , եւ կամ դրսուանց բարութիւն մը շահելու համար , մէկզմէկ կը նեղեն կամ կը սպաննեն : Ան երկիրները ուր ճշմարիտ քրիստոնէութիւնը շատ տարածուած է , մարդիկ շատ մեծ խաղաղութիւնով ու հանգստութիւնով կ'ապրին , բայց աւար ու կործանում չեղած տեղ չ'կայ : Աւետարանին լցուը ամե-

Նեւին չ'ծագած երկիրներուն մէջ անձնաւ  
սիրութիւնը՝ անգութիւնը եւ բռնութիւնը  
տիրած է եւ անանկ գէշութիւններ կ'ըլ-  
լան որ առանց սարսափելու չենք կրնար  
անոնց վրայ խորհիլ։ Իսյց միշտ ասանկ  
պիտի չ'մնայ. ամեն մարմին Աստուծոյ վրր-  
կութիւնը պիտի տեսնէ. անատենը բռնու-  
թեան ու կործանման տեղը խաղաղու-  
թիւնն ու սէրը պիտի անցնի։ Անատենը  
մարդիկ պարիսպներ պիտի չ'քաշեն իրենց  
ընկերին գէմ՝ որ ապահով մնան, հապա  
փրկութիւնը պիտի ըլլայ իրենց պարիսպն  
ու պատենէշը։ Աստուծ կրնայ ընել աս  
մեծ փոփոխութիւնը, եւ ամեն օր աղօթք  
ընենք որ իր թագաւորութիւնը գայ։

## 24

Երկինք ու երկիր պիտի անցնին, ու իմ  
խօսքերս պիտի չանցնին։ Առաջ. 19. 35։

Բնականաբար տեւողական սեպած բա-  
ներնուս առաջինը երկինքն ու երկիրն են  
որ գրեթէ վեց հազար տարի է որ հաստատ  
ու անփոփոխ մնացին։ Իսյց յաւիտեան

պիտի չ'մնան . Երկինքը մադաղաթի պէս  
պիտի գլորուի , եւ երկիրս բոլոր մէջը ե-  
ղածներովը պիտի այրի . բայց Տէրոջը խօս-  
քը յաւիտեան պիտի մնայ : Իր բերնէն ե-  
լած խօսքերուն ամենքն ալ յաւիտենական  
ճշմարտութիւններ են . բոլոր իր խօստ-  
մունքները եւ բոլոր իր սպառնալիքները  
պիտի կատարուին : Խնքը ըստ թէ ԲՎ որ  
ապաշխարութիւն ընէ եւ Քրիստոսի հաւ-  
տայ պիտի փրկուի . եւ ամեն ապաշխարող  
ու հաւտացող անձ աս խոստմունքին միսի-  
թարութիւնը կրնայ վայլել , եւ վստահ  
ըլլալ թէ՝ թէ եւ երկինք ու երկիր անց-  
նին , իր փրկութիւնը հաստատ է : Խնքը ըստ  
թէ Չարերը եւ բոլոր Աստուած մոոցող  
ազգերը դժոխքը պիտի երթան , եւ թող  
չարը դողայ աս խօսքին վրայ . վասն զի բնաւ  
պիտի չանցնի : Ըստ թէ Աշխարհք Տէրոջը  
գիտութիւնովը պիտի լցուի , եւ աս օրհ-  
նեալ յոյսը պիտի վայլենք ինչու որ պիտի  
կատարուի : Տէրը ճշմարտութեան Աստ-  
ուած է , եւ թող բոլոր աշխարհք աս բա-  
նիս համար ցնծայ :

Անզի զաւակ ծնաւ, մեզի որդի տրուեցաւ, եւ իշխանութիւնը անոր ուսմին վըրայ պիտի ըլլայ, եւ անոր անունը՝ Օարմանալի Խորհրդական, Հզօր Աստուած, Յաւիտենական Հայր, Խաղաղութեան Խշան պիտի կանչուի: Եսոյ. թ. 6:

Ճեթեհէմի մանուկին Սարիամին որդւոյն պէս պարագայներ ունեցող զաւակ մը երբէք աշխարհք չեկաւ. Եկած ժամանակը բոլոր աշխարհք ինեղաց: Եւ ասիկայ զարմանք չէ, վասն զի երկինքի զօրքերը առոր ովլ ըլլալը դիտէին: Վեօդնական մանուկի մը պէս աշխարհք ծնաւ, բայց “Աստուած էր մարմին առած”: Եր անունը Օարմանալի էր. ասսնկ զարմանալիք մը տիեղերքը տեսած չունէր, Աստուած մարդացած: Խոնարհեցաւ ու վրան մարդկութեան կերպարանք հագաւ. Եւ զարմանալիդիտաւորութիւնով մը՝ աշխարհիս մեղքն երը վերցունելու, մեղաւորներուն տեղը կայնեցաւ: Հզօր Աստուծմէ վար էակ մը կարող չէր կատարել իր ձեռք զարկած առ մեծ դործը: Եւ իբրեւ Խշան խաղաղու-

թեան՝ աշխարհ՝ եկաւ, եկաւ բարկացած  
Աստուծոյ մը եւ անոր յանցաւոր արարած  
ներուն մէջ խաղաղութիւն ընելու: Եզկաւ  
յանցաւոր հօգիններուն խիղճի խաղաղու-  
թիւն տալու, եւ մարդոց մէջ ալ խաղա-  
ղութիւն ձգելու: Առորբերը երկինքին մէջ  
յաւիտեանս ուրախութիւնով պիտի տօնեն  
աս մեծ զիպուածը, որ է Քրիստոսի ծը-  
նունդը:

## 26

Եշ Շանը մարմին եղաւ, ու մեր մէջը ըը-  
նակեցաւ, (ու անոր փառքը տեսանք չօր-  
մէն մէկ հատիկի փառքին պէս) շնորհքով  
ու ճշմարտութիւնով լեցուն: Յով, ը. 14:

♦օրը մէկ հատիկին մարմին առնելը մէկ  
խորհուրդ մըն է՝ որն որ հրեշտակիները փա-  
փաքեցան հասկընալ: Անծ խոնարհիլ մը  
եղած կ'ըլլար, թէ որ առանց Աստուածու-  
թեան փառքը ձգելու առեն ատեն աշ-  
խարհք գար մեզի ողօրմելու: բայց աս բա-  
նը միայն չըրաւ: Կատարելապէս մեր գոր-  
ծը վրան առաւ, մեր բնութիւնը հագնեւ-

լով մեղի հետ մէկ եղաւ, մարդոց որդւոցը  
հետ համրուեցաւ, եւ մարդկային տրտմու-  
թիւններուն ամենքն ալ ճաշակեց : Իսյց  
թէպէտեւ խոնարհ մարդու մը կերպարան-  
քըն առած էր, սակայն իր Աստուածային  
բնութեան փառքը վրան կըփայլէր . շնորհ-  
քով եւ ճշմարտութիւնով լեցուն էր, որուն  
նմանը լոկ մարդոց մէջ չ'կար : Իր պոկունք-  
ներէն յաւիտենական ճշմարտութիւն կ'ել-  
լար եւ բոլորտիքը եղողները իրմէն ճշմար-  
տութիւն կը սորվէին . եւ իր բոլոր կենացք  
մէջ անհուն շնորհաց դանձ մըն էր : Ամենէն  
նուաստ մարդոց կը խոնարհէր, նեղեալները  
կը քաջալերէր, ապաշխարողները կը միսի-  
թարէր, եւ ամենքը կը զարմանային իր  
բերնէն ելած ան պատուական խօսքերուն  
վրայ :

Խնչու որ ասոնք թեւսաղոնիկէին մէջ ե-  
ղողներէն շատ աղնիւ մարդիկ էին, որ Աս-  
տութոյ խօսքը բոլոր սրտանց ընդունեցին .  
ամեն օր դիրքերը կը քննէին թէ աս քա-  
ները ասանկ են : Պարծ . Ժ. 11 :

Պօղոս թեսաղոնիկեցիներուն ալ ու  
 Բերիացիներուն ալ նոյն աւետարանը քա-  
 րողեց, բայց իր քարողութեան արդիւնքը  
 շատ տարբեր եղաւ աս երկու տեղերը:  
 Թեսաղոնիկէի մէջ աղմուկ մը ելաւ ու ժո-  
 ղովուրդը բարկանալով քաղաքէն դուրս  
 ըրին զինքը, բայց Բերիային մէջ շատ  
 բաղմութիւն հաւտաց: Ճշմարտութիւնը  
 երկու տեղն ալ մի եւ նոյն էր, սակայն  
 սրտերնին մէկզմէկէ շատ տարբեր էր: Թե-  
 սաղոնիկեցիները նախապաշարմունքով ու  
 հպարտութիւնով լեցուն էին, ծերերուն  
 ձգած աւանդութիւնները կը սիրէին, վա-  
 սըն զի անոնք հրաման կուտային իրենք իւ-  
 րենցմէ արդարութիւն գործելու: Եռաք-  
 եալներուն վարդապետութիւնները յան-  
 ցանքնին ցուցուցին իրենց, ու սրտի եւ վար-  
 քի սրբութիւն կը պահանջէին: Իրենք ա-  
 սո՞ր դէմ էին, անոր համար առաքեալնե-  
 րուն պահանջած բաներուն ականջ չ'կա-  
 խեցին, ու ոչ ալ քննեցին թէ ըսածնին ար-  
 դեօք ճշմարիտ է թէ չէ: Բայց Բերիացի-  
 ները մտիկ ըրին ըսածներնուն, ու քննեցին  
 անոնք ան մէկհատիկ փորձով՝ այսինքն  
 Առւրբ Գիրքերով, որ տեսնեն թէ անոնց  
 բրած վարդապետութիւնները ճշմարիտ է-

ին։ Մարդոց իշխանութիւնովը բան չէին ընդուներ, հապա ամեն օր Առւրբ Գիրքերը քննելով ան բանը որ Աստուծոյ խօսքին համաձայն կը գտնէին՝ կ'ընդունէին։ Ասնոյն փորձով մենք ալ փորձենք բոլոր լսած վարդապետութիւններնիս, եւ թէ որ Առւրբ Գրոց համաձայն գտնենք, սիրով անոնք ընդունենք։

Հապա մէկղի կեցանք ամօթալի ծածուկ բաներէն, որ խորամանկութիւնով չ'վարուինք, եւ խարդախութիւն չընենք Աստուծոյ խօսքին մէջ. հապա ճշմարտութիւնը յայտնելով, անձերնիս ամեն մարդոց միտքին ընծայենք Աստուծոյ առջեւը։ Տ. Արքան. Դ. 2 :

**Պ**օղոս հոս կը ստորագրէ աւետարանին սպասաւորութիւնը ընդունելուն արդիւնքները։ Առւտ կրօնքներ սորվեցունողները շատ չարութիւն կ'ընեն մարդոց. անոնք խորամանկ ու խարեւայ են, քովերնուն հնարած պատմութիւններով մարդիկ կը խա-

բեն: Ասանկ ալ քրիստոնէութիւնը ապա-  
կանողն երը . անոնք խարդախութիւն կ'ընեն  
Աստուծոյ խօսքին մէջ , ծուռ մեկնութիւն-  
ներ կուտան անորուեւումանք ալ Առւրբ Դիբ-  
քը անգամ կ'առնեն ժողովուրդին ձեռքէն  
որ չըլլայ թէ ստութիւննին ու խարեբայ-  
ութիւննին յայտնուի : Իսյց ճշմարտու-  
թիւնը սիրով ընդունողը ասանկ չըներ , եւ  
Աստուծոյ վախովը կը ջանայ ճշմարտութիւ-  
նը եղածին պէս մարդոց սորվեցունելու: Ա-  
սանկ մարդիկ իրենց գիտցածը չեն ծածկեր,  
լցու կը սիրեն , կը ցանկան որ իրենց վարդա-  
պետութիւնները լսողները փորձեն Առւրբ  
Գիբքերով , որ գիտնան թէ արդեօք իրօք  
Աստուծոյ պատգամներուն պէս կը խօսի՞ն  
թէ չէ : Աւ ճշմարտութիւնը չէ թէ միայն  
խօսքով , հապա վարդով ալ կը ցուցունեն.  
անոր սկզբունքներով կ'երթան , եւ ասանկ  
խոնարհ ու սուրբ վարդով անձերնին ամեն  
մարդոց մտքին կ'ընծայեն Աստուծոյ առ-  
ջեւը:

դուխտներ են երկրի վրայ : Եշէր, ձԱ. 13:

Էսիկայ առջի սուրբերուն հաւատքին մէկ  
արդիւնքն է . աս աշխարհիս մէջ իրենց բը-  
նակարանին պէտ չապրեցան , խօստովանե-  
ցան որ օտարներ ու պանդուխտներ են հոս  
ժամանակ մը պանդխտութիւն ընելու աշ-  
խարհիս մէջ , մինչեւ որ դէպի ան իրենց փըն-  
տրուած լաւագոյն երկիրը ըրած ճամբորդու-  
թիւննին լմնայ : Ա՞նք ալ անոնց ունեցած  
զգացումը ունենալով անանկ ընելու ենք .  
Հոս անցունելու ժամանակնիս շատ կարծ  
է , եւ ինչո՞ւ համար աս աշխարհիս բարու-  
թիւնները դիզելու ետեւէ պիտի ըլլանք ,  
իբրեւ թէ ասիկայ պիտի ըլլայ մեր միշտ  
մնալու ընակութիւնը : Ա՞ր Երկնաւոր Այ-  
րը աս ճամբորդութիւնը ըրած ժամանակ-  
նիս բարութիւններ կուտայ մեղ ուրախա-  
ցունելու համար , եւ անոնք գոհութիւնով  
վայլելու ենք . սակայն զգուշութիւն ը-  
նելու ենք որ մեր գացած բնակարանին վը-  
րայ ունեցած խորհուրդներնիս իրենց ը-  
քաշեն : Շատ ընկերներ կը դանանք մէկ-  
տեղ ճամբորդութիւննիս ընելու , եւ իբրեւ  
ճանապարհորդակից սիրելու ենք անոնք .  
բայց մեր նպատակը ճամբորդութիւններ-

նուս մէջ մէկզմէկու օգնելը պիտի ըլլայ, եւ  
թէ որ մեղմէ առաջ իրենց երկնաւոր բընա-  
կարանը երթան, ցաւելու չենք աս բանիս  
վրայ, հապա ուրախանալու ենք ան յշյ-  
սով՝ որ երբոր մեր ճամբորդութիւնն առ-  
լմննայ նորէն պիտի տեսնենք անոնք։ Շատ  
շուտով մեր ճամբորդութեանը վախճանին  
կը հասնինք. օրերը ամիսներն ու տարինե-  
րը կ'անցնին կ'երթան, մեր վերջին ժամը  
շուտով կը հասնի, եւ անատենը՝ թէ որ  
պատրաստ գտնուինք, մեր երկնաւոր բնա-  
կարանը պիտի մտնենք։

## 30:

“Եպյեցէք ինչպէս շիտակ պիտի երթաք-  
անմիտներու պէս չէ. հապա իմաստուններու  
պէս։ Եթէն. և. 15։

Ոժէ որ մէկը թագաւորութեան մը. ժա-  
ռանդ ըլլայ, որն որ կը յուսայ շուտով ձեռք  
ձգել, ու իր ժամանակը յարդի ու քարի  
կտորտուքներու հետ խաղալով անցունելու  
ըլլայ, ան մարդուն խենդ կ'ըսենք։ Ոժէ որ  
կառավարներու ու վարժապետներու տակ

դրուած ըլլար, որ զինքը իրեն հասնելու ան  
բարձր վիճակին յարմարցունեն, ու անօնց  
տուած կրթութիւններուն միտք տալուն  
տեղը ամենաչնչին բաներով զբօսանիք ընե-  
լու ըլլար, զինքը իմաստուն պիտի չ'սեպէ-  
ինք : Յժէ որ Շրիստոսի Ճշմարիա աշա-  
կերտներն ենք, թագաւորութեան մը ժա-  
ռանդներ ենք . քիչ մը ժամանակ տրուած է  
մեզի որ վայելուչ կերպով մը պատրաստու-  
թիւն տեսնենք եւ յարմարութիւն մը ու-  
նենանք ան մեր ժառանդութեանը հասնե-  
լու ու անոր փառքերը վայլելու : Խայց աս  
ժամանակը շատ կարծ է, ու շուտով պիտի  
հասնինք մեր թագաւորութեանը : Ուրեմն  
շիտակ երթանք, չէ թէ անմիտներու պէս,  
հապա իմաստուններու պէս, մտքերնիս ըլ-  
լան ան մեծութիւնները, որոնց պիտի հաս-  
նինք : Աս աշխարհիս ոչինչ հոգերովք ինք-  
զինքնիս չ'ըեռնաւորենք, ու սրտերնիս ան-  
ցաւոր հաճութիւններու չ'տանք : Հյումար  
եղած կ'ըլլանք՝ թէ որ մեր սէրը եւ կամ մը-  
տաղրութիւնը ըստ մեծի մասին առ աշխար-  
հիս բաներուն սանք : Գ անք ընենք մէկ ա-  
ւելի կատարեալ պատրաստութիւն մը ունե-  
նալու մեր գալու ժառանդութեանը, աչ-  
քերնիս մեր երկնային պսակէն ասդին չառ-


նենք : Փութանք ան փառաւոր օրուանը  
հասնելու, երբ մեր փորձի օրերը պիտի լը-  
մըննան, ու թագաւորներ եւ քահանաներ  
պիտի ըլլանք Աստուծոյ յաւիտեանո :

## 31

Ան որ աս քաները վկայեց՝ ըստ, Շու-  
տով կուգամ ես. Ամեն. Եկոր Տէր Յի-  
սուս Քրիստոս : Հայոք. Ի՞ն. 20:

Ամեն տարի իր վերջանալուն միտքերնիս  
կը ձգեթէ Տէ Տէրոջը դալը կը մօտենայ : Շու-  
տով պիտի դայ երկինքին ամպերովը պա-  
տաճ, զօրութիւնով ու մեծ փառքով : Շու-  
տով դատաստանին աժոռոը պիտի զրուի,  
եւ բոլոր մարդկային աղջը իր առջին պիտի  
ժողվուին իրենց վերջին վճիռները ընդու-  
նելու : Առաւել շուտ պիտի դայ Տէրը ա-  
մեն մէկ մարդոց մեռնելու ատենը . շատ  
շուտ պիտի դայ մեղ ասկէց կանչելու, կամ  
փառքով իր քովը մնալու, եւ կամ յու-  
սահատութեան աշխարհքը երթալու : Երա-  
նի անոր որ կրնայ սրտանց ըսել, “Ամեն.  
Եկոր Տէր Յիսուս Քրիստոս” : Երանի

անոր որ կը զգայ թէ երկնից փառքերը աշ-  
խարհիս փառքերէն շատ մեծ են, եւ հօն  
տեղի ընկերութիւնը եւ իր Փրկչին ներ-  
կայութիւնը հոս տեղի իր ամենասիրելի բա-  
րեկամներուն ընկերութենէն շատ աղեկ է:  
Երանի անոր, որուն համար Առւրբ Հոգին  
ալ իր հոգւոյն հետ կը վկայէ թէ ինքը Աս-  
տուծոյ որդին է, եւ մեծ վստահութիւն ու-  
նի որ երբոր Տէրը դայ զինքը իր աջ կող-  
մը կանչելու նստեցունելու համար պիտի ըլ-  
լայ անոր դալը: Գիշերը մէկդի գնացուցու-  
րեկը մօտեցաւ. մեր ճամբորդութիւնը շու-  
տով պիտի լմննայ. շուտով Ա արդապետնիս  
պիտի դայ ու մեզ ասկէց կանչէ: Ամեն.  
Եկոր Տէր Յիսուս Քրիստոս:





Տղահրամանական Ախուցելը:

Երես. Տառ. Ախուցւ.

Ուղիղ:


1	3	ՄԵԿ	ՄԵԿ
33	12	ՀԿՈՐԾԱՆԵՐ	ՀԿՈՐԾԱՆԵՐ
36	15	Ը Ա Տ Ո Ւ Ծ Ո Յ	Ը Ա Տ Ո Ւ Ծ Ո Յ
38	13	Հ Ա Յ	Հ Ա Յ
49	3	Կ Ռ Ա Մ Ա Ն	Կ Ռ Ա Մ Ա Ն
53	14	Ժ Պ Ա Բ Ե Ն	Ժ Պ Ա Բ Ե Ն
59	2	Ն Ե Ր	Ն Ե Ր
62	11	31	13
142	12	Բ	Ե
165	--	561	165
171	1	13	12
187	21	Օ	Օ
234	1	Թ Ո Ղ Ո Ւ	Թ Ո Ղ Ո Ւ
270	3	Կ Ր Ա Ե Վ Ե Լ Ե Խ Ե Ն	Կ Ր Ա Ե Վ Ե Լ Ե Խ Ե Ն
285	1	Ր Ա Մ Ա Լ Ո Ւ	Ր Ա Մ Ա Լ Ո Ւ
287	8	Կ Ր	Կ Ր
293	3	Ե Ր Ո Ւ Ն	Ն Ե Ր Ո Ւ Ն
303	9	Փ Ո Ր Ճ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր	Փ Ո Ր Ճ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ե Ր
320	23	Կ Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Ե Ն	Կ Ր Ա Պ Ա Տ Ո Ւ Ե Ն
327	12	Ա Ղ Ա Խ Ա Ն Ք Բ Ն Ե Ր Ը	Ա Ղ Ա Խ Ա Ն Ք Բ Ն Ե Ր Ը

ԵՐԵՎԱՆԻ ՏՐԱԴԱԿԱՆ

ԱՆՎԵՐ:

331	10	մեջ	մէջ
334	11	կը սեպէին	կը սեպէին
361	14	անունըս	անունը
366	10	5	59
376	17	դալէն.	դալէն
403	14	դործքերովնիս	դործքերովնիս
449	1	11	Ե-ԵԼ ՃՐ-ՄԵ-Կ
523	1	սրտմութիւն	սրտմութիւն
525	--	325	525
545	15	Ճ.Օ.	Ճ.Օ.





✓ 1815-1816 1817

